

ՑԵՂԱՍՊՈՒՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 6, No 2, 2018



**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
6 (2)**

Երևան 2019

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, պատմագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պագմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիոսահաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”)

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic Universtiy, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор истории, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусахаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазманя, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ կյուրերն արտահայտում են հեղինակների մտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

«Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Նարինե Ս. Հակոբյան

Համիրյան կոտորածները և կիլիկիահայությունը (1895-1896 թթ.)..... 9

Սուրեն Ա. Մանուկյան

Հանցակցությունը որպես համախմբող գործոն.

Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ24

Ռոբերտ Ա. Սուրիսյան

Հասան Չելեբի. Սերասպրիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ53

Ինեսա Գ. Ստեփանյան

Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքուստի

հիմնական իրազործողների հարցի շուրջ 69

Նարեկ Մ. Պողոսյան

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և

ցեղասպանության փոխադարձ կապն ու դրսևորումը

Հայոց ցեղասպանության օրինակում 88

Հարություն Տ. Մարության

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը,

զարգացումները, մերօրյա միճակը (Մաս 2)..... 103

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 143

CONTENT

ARTICLES

Narine S. Hakobyan <i>The Hamidian Massacres and the Cilician Armenians (1895-1896)</i>	9
Suren A. Manukyan <i>Complicity as Factor for Coherence: On the Issue of Motives of the Kurdish Involvement in the 1894-96 Massacres of Armenians</i>	24
Robert A. Sukiasyan <i>Hasan Celebi: A Station on the Deportation Route of Sebastia</i>	53
Inessa G. Stepanyan <i>On the Issue of the Main Perpetrators of the Armenian Genocide and the Jewish Holocaust</i>	69
Narek M. Poghosyan <i>Relationship Between the Crime Against Humanity and Genocide and its Manifestation on the Example of the Armenian Genocide</i>	88
Harutyun T. Marutyan <i>Formation, Development and Current State of the Armenian Genocide Victims Remembrance Day (Part 2)</i>	103
ABOUT THE AUTHORS	143

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Нарине С. Акопян <i>Гамидовская резня и киликийские армяне (1895-1896).....</i>	9
Сурен А. Манукян <i>Соучастие в преступлении как связующий фактор: о мотивации вовлечения курдов в массовую резню армян в 1894-1896 гг.</i>	24
Роберт А. Сукиасян <i>Хасан Челеби. Об одном перевалочном пункте на пути депортации из провинции Себастья.....</i>	53
Инесса Г. Степанян <i>К вопросу об основных исполнителях Геноцида армян и Еврейского холокоста ..</i>	69
Нарек М. Погосян <i>Взаимосвязь между геноцидом и преступлением против человечества, его проявление на примере Геноцида армян</i>	88
Арутюн Т. Марутян <i>Формирование и трансформация дня памяти жертв Геноцида армян (Часть 2)</i>	103
ОБ АВТОРАХ	143

**ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(1895-1896 թթ.)**

Բանալի քառեր՝ Արևմտյան Հայաստան, համիդյան կոտորածներ, Կիլիկիա, Ադանայի նահանգ, Հալեպի նահանգ, իսլամացում:

Հոդվածը նվիրված է 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ժամանակ Կիլիկիայի շրջանում Օսմանյան կայսրության վարած հակահայկական քաղաքականությանը: Չնայած խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ ժամանակակից հայաստանյան պատմագրությունը հակված է այն տեսակետին, որ Կիլիկիան գերծ է մնացել համիդյան սարսափներից, սակայն այդ դեպքերի մանրագնին հետազոտությունն այլ բան է վկայում: Մույն աշխատանքում հարցը քննարկվում է՝ հիմնվելով երկու կարևոր սկզբունքի վրա: Նախ՝ պատմական «Կիլիկիա» հասկացությունն ընդգրկում է ոչ միայն օսմանյան Ադանայի վիլայեթը, այլ նաև Հալեպի վիլայեթի որոշ շրջաններ: Երկրորդ՝ թուրքերի հակահայկական քաղաքականությունը դիտարկվում է ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի առումով: Հիմնվելով տարբեր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա՝ քննության են առնվում այդ տարիներին կիլիկիահայության դեմ ուղղված հալածանքները, մասնավորապես դրանց կազմակերպման, իրականացման, ինչպես նաև պետությունների ներգրավվածության հարցերը: Սկզբնաղբյուրների մանրամասն և ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում թուրքական իշխանություններն Ադանայի վիլայեթում կոդուպուտ և սպանություններ են իրականացրել Հաճընի շրջակա հայկական գյուղերում: Ավելին, դրանք ավելի մեծ ուժգնությամբ են դրսևորվել Հալեպի վիլայեթում՝ Այնթապում, Մարաշում ու դրանց շրջակա գյուղերում: Կոտորածներին ակտիվորեն մասնակցել են տեղական իշխանությունների, կանտնավոր բանակի, ոստիկանական ուժերի ներկայացուցիչները, մուսուլման մոլեռանդ հոգևորականները, բանտերից ազատ արձակված հանցագործները, տեղացի մուսուլմաններից բաղկացած անկանոն ջոկատները և անգամ հարկահավաքները: Տեղի են ունեցել նաև բռնի իսլամացման դեպքեր:

Կիլիկիայում հակահայկական քաղաքականության դրսևորումների բազմաթիվ օրինակների քննարկումը որոշ մտահոգությունների տեղիք է տալիս այդ դեպքերի վերաբերյալ ավանդական մեկնաբանությունների հետ կապված: Այս հոդվածը փաստում է, որ չնայած Ադանա քաղաքում և որոշ շրջաններում հակահայկական քաղաքականության համեմատաբար մեղմ դրսևորումներին՝ Կիլիկիայում համիդյան քաղաքականությունը ինչպես հետապնդած նպատակներով, այնպես էլ իրագործման մեթոդներով նույնական էր 1895-1896 թթ. ամբողջ Օսմանյան կայսրությունում տարվող հակահայկական քաղաքականությանը:

Օսմանյան տիրապետության տակ հայտնվելու ժամանակներից սկսած՝ պատմական Կիլիկիան վարչական տարատեսակ փոփոխությունների է ենթարկվել: XIX դարի 90-ականներին այն ընդգրկում էր Ադանայի նահանգը (վիլայեթ) և Հալեպի նահանգի

մի մասը (Մարաշի և Այնթապի շրջանները)¹: Կիլիկիայի մեծագույն մասը զբաղեցնում էր Ադանայի նահանգը, որը բաղկացած էր Ադանայի, Մերսինի, Իչելի ու Պայասի սանջակներից, 15 կազաններից և 1.632 գյուղերից²: Իսկ Հալեպի վիլայեթը կազմված էր Հալեպի, Մարաշի, Ուրֆայի սանջակներից, 26 կազաններից ու 3.450 գյուղերից³: Թեև Ուրֆան դուրս էր Կիլիկիայի սահմաններից, սակայն Կիլիկիային բավական մոտ գտնվելը և ընդհանուր պատմական զարգացումը հաշվի առնելով՝ Ուրֆայի դեպքերը ևս քննարկում ենք Կիլիկիայում կատարվող իրադարձությունների համատեքստում: Ինչ վերաբերում է մինչև կոտորածները Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակին, ապա պատմաբան Գրիգոր Գալուստյանը նշում է. «Կիլիկիոյ բնակչութիւնը Սիսուանի մէջ 1885-ին կը տրուի իբրեւ 15.000 տուն կամ 75.000 հոգի: Այս թիւը հաւանաբար Հայոց թիւն էր»⁴: Ըստ որոշ տվյալների Ադանայի վիլայեթում ապրում է 403.440 բնակիչ, որից 168.990-ը քրիստոնյաներ են, որոնց մեջ առաջին տեղը թվաքանակով զբաղեցնում են հայերը՝ 97.450⁵: Մեկ այլ աղբյուրում տրված է հայկական վեց նահանգների ազգաբնակչության համեմատական ցուցակը, որը, ինչպես նշվում է թերթում, 1880 թ. վեց պետությունների կողմից ներկայացվել է Բարձր դռանը: Այդ ցուցակում ընդգրկված է նաև Հալեպի նահանգը, որի համաձայն՝ միայն Հալեպի նահանգի հայության թիվը կազմում էր 80.000⁶:

Համիդյան կոտորածները սկսվելուց քիչ անց դրա նկատմամբ սարսափը տարածվեց նաև Կիլիկիայում: Թերևս տեղին է մեջբերել Գևորգ Սարաֆյանի գրքից էինեջի Ն. Մանուկյանի դիտարկումը, որի համաձայն. «Մահուան ու ջարդի այդ ուրուականը, ամբողջ Տաճկահայաստանի քաղաք ու գիւղերը տարածունիլ էտք, սրարշաւ հասած էր Կիլիկեան Հայաստանի հայաշատ քաղաքներու եւ գիւղերու դռները»⁷: Այս առումով

1 Կիլիկիայի վարչական բաժանման մասին մանրամասն տե՛ս Համբարձում Առաքելեան, *Ձէյթուն, տրեղագրական, ազգագրական եւ վարչական* (Թիֆլիզ, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1896), 34:

2 Տե՛ս Kemal H. Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 210-211; «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքի համաձայն ևս՝ «Ադանայի վիլայեթը վարչականապէս բաժանուած է 4 սանջակի կամ գավառի (Ադանայի, Իչ-իլի, Քոզանի և Ջերեյի-Բերեթէթի)», տե՛ս *Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ*, Մատենադարան «Արաքս»-ի (Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894), 38, իսկ Գալուստեանի աշխատության մեջ նշվում է. «Ատանայի նահանգը կը պարունակէ հինգ գաւառներ: 1. Ատանա, որ ունի Գարա Իսալու, եւ Համիտիլէ գաւառակները, 2. Մերսին, որ ունի Տարսոն գաւառակը, 3. Ճէպլի Պերեթէթ, որ ունի Իպահիլէ, Բայաս, Օսմանիլէ, Խասա եւ Պահճէ գաւառակները, 4. Գօզան-Սիս, որ ունի Գարս-իւ-Գատրիէ, Հաճին եւ Պիլան-քէյ (Ֆէթէ) գաւառակները, 5. Իչիլի կամ Սելեւկիա (Սիլիֆթէ), որ ունի Արմենակ, Մուրթ, Կիլիսար եւ Անամուր գաւառակները», տե՛ս Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ձէյթուն* (Ե. Ե. Լոնկ Այլընտ Սիթի, «Կոչնակ», 1988), 16:

3 Տե՛ս Karpat, *Ottoman Population 1830-1914*, 210-211; Առաքելեան, *Ձէյթուն*, 35-36; Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 31: 1910-1913 թթ. վիլայեթից անջատվում և անկախ սանջակներ են դառնում նախ՝ Ուրֆան, ապա՝ Մարաշը: Տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (New York and London: New York University Press, 1983), 30:

4 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 16:

5 *Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ*, 19:

6 «Հայկական վեց նահանգների ազգաբնակչութեան համեմատական ցուցակը», *Մշակ* (Թիֆլիս), 10 լուսնիսի 1895, թիւ 66, 3:

7 Գէորգ Սարաֆեան, *Պարսկութիւն Անթապի հայոց*, Ա հատոր (Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1953), 606:

հետաքրքիր է հասկանալ, թե ինչ էր կատարվում Կիլիկիայում այդ նույն ժամանակ:

Հալեպի վիլայեթում սպանություններ են տեղի ունեցել Հալեպում, Այնթապում⁸, Մարաշում⁹, Ուրֆայում¹⁰ ու դրանց շրջակա գյուղերում, Բիրեջիկում¹¹, ինչպես նաև Քիլիսում¹²: Իսկ Ադանայի վիլայեթում կողոպուտ և սպանություններ են տեղի ունեցել Հաճընի շրջակա հայկական գյուղերից Բանլըզում, Քեոթինում¹³:

Ընդհանուր առմամբ Կիլիկիայի՝ Հալեպ և Ադանա նահանգների վերոնշյալ բնակավայրերում սպանություններն ու ավերածությունները տեղի են ունեցել 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում:

8 Այնթապում կոտորածը տեղի է ունեցել 1895 թ. նոյեմբերի 6-ին: Տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Ասորեսի հայոց*, 901:

9 Մարաշի կոտորածը տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին՝ Այնթապի կոտորածից տասներեք օր հետո, չնայած այնտեղ դեռևս հոկտեմբերի վերջերին էին սկսվել հուզումները, որոնց ընթացքում սպանվել էր 50 հոգի, և վիրավորվել 300-ը: Տե՛ս Edwin Bliss, *Turkey and the Armenian Atrocities: A Reign of Terror. From Tartar Huts to Constantinople Palaces. Centuries of Oppression-Moslem and Christian-Sultan and Patriarch-Broken Pledges Followed by Massacre and Outrage* (New York: Edgewood Publishing, Hibbard & Young, 1896, Reprinted, Fresno: Meshag Publishing, 1982), 457.

10 Ուրֆայում թուրքերի կողմից առաջին հարձակումը տեղի ունեցավ 1895 թ. հոկտեմբերին: Քանի որ հայկական թաղամասն առանձնացված էր ու գտնվում էր բլրի վրա, ուստի հայերին հաջողվեց դիմադրել և չթողնել թուրքերին մտնել հայկական թաղամաս: Չնայած դրան՝ թուրքերը կոտորեցին շուկայի մոտակայքում և թուրքական թաղամասում գտնվող մի շարք հայերի: Այնուհետև տեսնելով, որ հայերի դիմադրությունը հնարավոր չէ կոտրել, թուրքական կառավարությունը դիմեց խորամանկության՝ հայտարարելով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերը և թուրքերը լցված են վրեժխնդրությամբ միմյանց նկատմամբ, անհրաժեշտ է զինաթափել երկու կողմերին՝ հետագա բախումներից և արյունահեղություններից խուսափելու համար: Այս համոզվելով, որ հայերն անզեն են և այլևս չեն կարող դիմադրել, անցան հարձակման: Մանրամասն տե՛ս Bedros Der Bedrossian, *Autobiography and Recollections*, trans. Tamar Der-Ohannessian, ed. Vahan Janjigian (Philadelphia, 2005), 26-28; Նիկողոս Գազանճեան, *Յուշագրություն Եդեսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսանարարը եւ եղեռնը* (Երեւան, «Չանգակ-97», 2004), 37-63:

11 Բիրեջիկում կոտորածը տեղի էր ունեցել 1896 թ. հունվարի 1-ին: Տե՛ս Augustine Williams and M. S. Gabrielian, *Bleeding Armenia: It's History of Horrors* (Chicago: Publishers' Union, 1896), 395-396.

12 1895 թ. նոյեմբերի 6-ին տեղի ունեցավ Այնթապի կոտորածը: Այդ նույն ժամանակ թուրքերը պատրաստվում էին հարձակվելու Քիլիսի վրա, սակայն անհայտ պատճառներով կոտորածը հետաձգվեց: Քիլիսում հայերի կոտորածը տեղի ունեցավ 1896 թ. մարտի 8-ին: Տե՛ս Ալիշան Պայրամեան, *Կիլիզա. հայկական Քիլիս, Պատմական Ուրուագիծ (վաղ միջնադարէն մինչև 1922 թ.)* (Երևան, «Չանգակ-97», 2001), 184:

13 Այս գյուղերի բնակչությունը, պաշարվելով 5.000 մուսուլմանների և չերքեզների կողմից, մասամբ կոտորվում է, մասամբ՝ կրոնափոխ լինում, իսկ որոշ մասին էլ հաջողվում է ապաստան գտնել Հաճընում: Տե՛ս Յակոբ Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիղերը* (Lou Անճէլըս, Քալիֆօրնիա, 1942), 68-72: Քրդերի կողմից հարձակման է ենթարկվել նաև Շահր քաղաքը, որի 800 բնակիչներին նույնպես հաջողվում է փախչել Հաճըն: Տե՛ս Johannes Lepsius, *Armenia and Europe: An Indictment*, trans. Harris Rendel (London: Hodder and Stoughton, 1897), 313.

Հայերի դեմ ուղղված հալածանքների կազմակերպվածության հարցը և տարբեր խմբերի մասնակցությունը դրանց

Համիդյան կոտորածների նախապես կազմակերպված լինելու մասին Լեփսիուսն իր «Հայաստանը և Եվրոպան» գրքի նախաբանում գրում է. «Այս տարվա մայիսին՝ Անատոլիա¹⁴ և Սիրիա կատարած իմ ճամփորդության ընթացքում, ես չհանդիպեցի մի մուսուլմանի, ով վերջին մի քանի ամիսներին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված կոտորածի և թալանի վերաբերյալ իր դատողություններում չգար այն ակնհայտ եզրակացության, որ այդ ամենը կազմակերպած էր կառավարության կողմից և արտահայտում էր սուլթանի կամքը»¹⁵:

Համիդյան կոտորածների վերաբերյալ Լեփսիուսի ընդհանրական դիտարկումը կիրառելի է նաև Կիլիկիայի պարագայում: Կիլիկիայում դեպքերի ուսումնասիրությունը հաստատում է դրանում պետության ներգրավվածությունը, ավելին՝ հենց վերջինիս կողմից դրա կազմակերպված լինելը¹⁶:

«Արմենիա» թերթի Կիլիկիայի թղթակիցը ևս նշում է. «Այս կողմեր խղճամիտ թիրքեր այժմ բաց է ի բաց կը յայտնեն որ այս ամեն աղիտից, սարսափելի ջարդերու և ատերմանց ու ասարառութեանց բուն իսկ թելադրիչը Սուլթան Համիտն էր, այն 19-րդ դարու սուկալի դահիճն քրիստոնեայ Հայոց»¹⁷: Կոտորածներին ակտիվորեն մասնակցել են տեղական իշխանությունների, կանոնավոր բանակի, ոստիկանական ուժերի ներկայացուցիչները, մուսուլման մոլեռանդ հոգևորականները, բանտերից ազատ արձակված հանցագործները, տեղացի մուսուլմաններից բաղկացած անկանոն ջոկատները և անգամ հարկահավաքները: Սպանություններին մասնակցել են նաև թուրք կանայք, ովքեր քաջալերում էին իրենց տղամարդկանց, ինչպես նաև սպանվողների ձայնը խեղդելու համար երգում էին տոնական երգեր¹⁸:

Կոտորածների իրականացման կարգը բոլոր վայրերում գրեթե նույնն էր: Զինված ամբոխը իշխանությունների աջակցությամբ հանկարծակի հարձակվում է հայերի վրա, կողոպտում, այնուհետև «ոչխարի պես կոտորում»¹⁹: Խոշոր բնակավայրերում ջարդը տևել է երեք օր, իսկ փոքր բնակավայրերում՝ մեկ օր: Այսպես, Տիգրան Յ.

14 Անատոլիան տարածվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք, տե՛ս *Հայ ժողովրդի պայքարություն*, հատոր I (Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, 1971), 9:

15 Lepsius, *Armenia and Europe*, 15.

16 Կիլիկիայում տեղի ունեցածը համիդյան կոտորածների անբաժան մասն է: Համիդյան կոտորածներն իրենց հերթին ազգային հարցում Արդուլ Համիդի որդեգրած հետադիմական քաղաքականության հետևանքն էին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացված Հայոց ցեղասպանության հետ դրա առնչության մասին պատմագրության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Մեր տեսակետն այս հարցում այն է, որ համիդյան կոտորածները համարել Հայոց ցեղասպանության սկիզբ այնքան էլ համոզիչ չէ: Համիդյան կոտորածների վերաբերյալ մեր տեսական եզրակացություններն առավել մանրամասն կներկայացվեն հատուկ տեսական հարցերին նվիրված մեկ այլ հոդվածում, ինչպես նաև մեր առենախոսության մեջ:

17 Զարեհ, «Կիլիկիա», *Արմենիա* (Մարսել), 20 յունուարի /1 փետրուարի 1896, թիվ 52, 2:

18 Lepsius, *Armenia and Europe*, 21.

19 Նույն տեղում, 15:

Տարագճյանը նշում է, որ Կ.Պոլսից Բիրեջիկի և այլ հայաբնակ քաղաքների քաղաքապետներին հեռագիր է ուղարկվել հետևյալ բովանդակությամբ. «Քսանչորս ժամ ջարդելն ետք խաղաղութիւն ըրէք»²⁰: Բազմաթիվ վայրերում (Այնթապ, Բիրեջիկ, Ուրֆա) կառավարությունը զինաթափում էր հայերին՝ զինելով մուսուլման բնակչությանը²¹:

Մարաշում իրականացված կոտորածին օսմանյան բանակի արաբական զորքը ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունեցել, այլ նաև ղեկավարել է հարձակումը: Այս մասին է փաստում ամերիկացի մի միսիոներ, ով նշում է, որ Մարաշի վրա հարձակումը գլխավորել է օսմանյան բանակի արաբական զորքը²²: Կոտորածին օսմանյան բանակի արաբական զորքի մասնակցության հանգամանքի մասին է փաստում Նատմի Թոփալյանը, ում վկայությամբ. «Մարաշի Ֆոտնուս ավանում հարձակումը սկսել էին օսմանյան բանակի արաբական զորքերը: Մյուս զորաբաժանումները քաշվել էին մոտակա բլուրները: Իսկ զինվորներին հետևում էր տեղացի մուսուլմաններից բաղկացած ամբոխը, որոնց հիմնական նպատակը թալանելն էր»²³: Այնթապում կանոնավոր բանակը ևս իր մասնակցությունն է ունեցել կոտորածին՝ սկսելով և ավարտելով այն շեփորի ազդանշանի ներքո²⁴: Մինչդեռ թուրքական կառավարությունը կանոնավոր բանակի ատկայությունը, ինչպես ժամանակին համիդիե գնդի ստեղծումը, բացատրում էր հայերի պաշտպանության անհրաժեշտության հանգամանքով:

Քիլիսում կայմական ու պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող այլ մարդիկ ջարդի իրականացման գործողությունները նախապատրաստելուց հետո տարբեր պատրվակներով մեկնել էին քաղաքից՝ ջարդի պատասխանատվությունն իրենց վրա չվերցնելու համար²⁵: Անտիոքի Քեսաբ գյուղում ևս կանոնավոր զորքը շրջապատեց հայերին և ստիպեց զինաթափ լինել՝ հակառակ դեպքում սպառնալով սրի քաշել²⁶:

Կոտորածներին քրդական ջոկատների ակտիվ ներգրավվածության մասին հիշատակումներ կան միսիոներների և ականատես-վերապրողների գրեթե բոլոր վկայություններում: Օրինակ՝ թուրքերի և քրդերի կողմից իրականացված վայրագությունների մասին պատկերացում կազմելու համար մեջբերենք ականատես-վերապրողի հետևյալ տողերը. «Տաճիկ խուժանը եւ կիրթ ու մարգուած զինուորը մարտիններով, դաշոյններով, սրեալ երկաթեայ տապար եւ երկաթեայ ծոածայր պաստօններով զարդարուած կը յարձակէին հայոց տուներու վրայ, կանանց մեռեալներուն և վիրա-

20 Տե՛ս Տիգրան Յ. Տարագճեան, *Հօրս յիշատակները* (Թորոնթօ, 1995), 10:

21 George H. Filian, *Armenia and Her People: or, The Story of Armenia by an Armenian* (Hartford, CT: American Publishing Co., 1896), 287.

22 Մակրամասն տե՛ս Stanley E. Kerr, *Personal Experiences with American Near East Relief, 1919-1922* (Albany: State University of New York Press), 1973, 5.

23 Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny* (Massachusetts: Baika, 1986), 5.

24 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 478.

25 Համբարձում Պերպերեան եւ Խորէն Աւագ քնյ. Ներսէսեան, *Յուշամարեան Քիլիսի հայոց (սկիզբէն մինչեւ 1968 թուականը)* (Պէյրութ, «Սեան», 1969), 70-71:

26 «Կոտորածներ եւ անկարգութիւններ Թիւրքիայի մէջ», *Արմէնիա* (Մարսել), 29 նոյեմբերի/11 դեկտեմբերի 1895, թիվ 38, 3:

տրեալներու հոնչինը եւ աղաղակները, մանկաց եւ տղայոց սարսափը երկինք եւ երկիր կը դողացնէին»²⁷:

Կոտորածներին մասնակցել են նաև մուսուլման հոգևորականները: Դ-ա են փաստում բազմաթիվ վկայություններ: Այսպես, օրինակ, Հալեպում Պորտուգալիայի հյուպատոսը Կ.Պոլսում Իտալիայի դեսպանին գրում է, որ Ուրֆայից եկած մի քանի անձանց ցուցմունքների համաձայն՝ Ուրֆայում կոտորածը սկսել է մոլլա Սեիդ Ահմեդը՝ մորթելով մեկ հայի՝ ծիսական ռուսնավորի տողեր արտասանելով, որը մուսուլմանները կարդում են մատաղ անելիս: Դեսպանը նաև նշում է, որ այդ նույն Սեիդ Ահմեդը դեռևս դեկտեմբերի 26-ին Կալա Բուսնայի հրապարակում հավաքել է երևելի մուսուլմանների և կոչ արել կոտորել, բնաջնջել բոլոր հայերին²⁸: Այն, որ կոտորածի մեկնարկը տվել է կրոնական Սեիդ Իտալիը, փաստում է նաև Ուրֆայի ջարդերի ակնաստես-վերապրող Նիկողոս Գազանճյանը՝ նշելով, որ վաղ առավոտյան խուժանը հավաքվել էր Ուլու Շամի մզկիթում, և Սեիդ Իտալի կրոնականն արտասանում էր իր գրգռիչ ճառը. «Օ՛ն, Գուրանը այսպես կը հրամայէ. «Ով որ կեատուր մը մեռցնէ, անիկա արքայութեան մէջ 40 յաւերժահարսեր պիտի ունենայ՝ իբրև վարձատրութիւն իր բարի գործին»: Ձեր փափաքը կատարուած է: Մեր սուլթանը ազատ կը ձգէ ձեզ, որ այս անօրէններուն հաշիւը մաքրէք ...»²⁹:

Իսկ Ջելալ անունով շէյխը Ուրֆայում հանուն իր կրոնի միայնակ մորթում է 100 մանկահասակ տղա երեխայի³⁰:

Հայերի բռնի իսլամացման դեպքեր

Բռնի իսլամացումը ևս հակահայկական քաղաքականության դրսևորումներից էր: Բիրեջիկում իրենց հարազատների դիակների մոտ և սպառնալիքի ներքո իսլամ ընդունեց 4.300 հոգի³¹, իսկ հրաժարվողներին սպանեցին: Այս ամենի հետևանքով Բիրեջիկում ոչ մի քրիստոնյա չմնաց, իսկ եկեղեցին վերածվեց մզկիթի³²: Ուրֆայում իսլամացվել է 500³³, Ադանայում և նրա շրջակայքում՝ 900 հայ³⁴: Այսպես, Ուրֆայում տեղի ունեցածի մասին մասնավորապես կարդում ենք. «...Արինն ու կոտորածը կը սկսին առանց արգելքի: Առջի օրուան պէս՝ տուները կը մտնեն եւ, երբ կը հանդիպին ներքնասենեակները պահուրտածներու, կ'ըսեն. «Իսլամացի՛ր, բան չենք ընէր»: Բայց իսլամութիւն ընդունի կամ ոչ, կը պառկեցնեն եւ սուրով ու տապարներով մարմինը կտոր կտոր կ'ը-

27 Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի յուշերը* (Երևան, «Աստարես», 2013), 193:

28 Մկրտիչ Ներսիսյան, Ռուբեն Սահակյան, *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և կրթության ժողովածու* (Երևան, «Հայաստան», 1991), 147:

29 Գազանճեան, *Յուշագրութիւն Եղևախոյ 1895-ի ջարդէն*, 56:

30 Hans-Lukas Kieser, "Ottoman Urfa and Its Missionary Witnesses," in *Armenian Tigranaker/Diarbekir and Edessa/Urfa*, ed. Richard G. Hovhannisian (Costa Mesa, California: Mazda Publishers, 2006), 406.

31 Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ, Отдѣль II (Москва, 1898), 120.

32 Մանրամասն տե՛ս Filian, *Armenia and Her People*, 292-294:

33 Братская помощь, 120.

34 Նույն տեղում:

նեն: Եթե պատահի, որ խուժանը չկարենայ տուն մտնել եւ մտածէ, որ ներսը մարդ կայ՝ տունը կրակի կու տայ ու կ'անցնի»³⁵:

Բռնի իսլամացման հարկադրանքը չընդունելը սովորաբար ավարտվում էր մահով: Սակայն պետք է նշել, որ եղել են դեպքեր, երբ իրենց գոյությունը պահպանելու համար հայերն իրենք են առաջարկել կրոնափոխ լինել: Այդպիսի դեպքեր են գրանցվել, օրինակ՝ Ջիրիսում³⁶ և Էհնեշում³⁷:

Վայրագությունների այլ ձևեր

Ուշագրավ է, որ Կիլիկիայում հակահայկական քաղաքականությունն ուղեկցվել է նաև հայ երևելիների ձերբակալություններով: Այսպես, հայ մեծահարուստների և այլ ազդեցիկ մարդկանց ձերբակալությունների դեպքեր են գրանցվել Հալեպում, Այնթապում³⁸, Մարաշում, Քիլիսում³⁹: Վայրագություններ են արվել նաև թույլ և անպաշտպան խմբերի՝ երեխաների, աղջիկների և կանանց նկատմամբ: Բռնաբարությունների ձևերից մեկն էլ մանկահասակ աղջիկների փորը ճեղքելն էր⁴⁰: Մարաշում գրանցվել է հայ կանանց և աղջիկների հրապարակային անարգման դեպք: Անթիվ երեխաներ մահացան սովից, և նրանց մարմինները հոշոտեցին շները⁴¹: Ուրֆայում առաջին հարձակման ժամանակ թուրքերն այլանդակեցին բազմաթիվ կանանց: Կանանցից խլելով նորածին երեխաներին՝ նետում էին գետը⁴²: Ալբիստանի Յարփուզ, Ինդերունի Կոկիսոն շրջաններում ևս կանանց և աղջիկներին անարգեցին և անպատվեցին, շատերին սպանեցին կամ ստիպեցին կրոնափոխ լինել, իսկ գեղեցիկ կանանց և աղջիկներին Ալբիստանի և Յարփուզի բեյերն ու չերքեզների ղեկավարը որպես ավար կիսեցին միմյանց միջև և տարան իրենց հարեմները⁴³:

35 Գազանճեան, *Յուշագրություն Եդեսիոյ 1895-ի ջարդէն*, 59:

36 Կոտորածներից մի քանի տարի հետո հայերը վերադառնում են իրենց դավանանքին: Մանրամասն տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 604:

37 Էհնեշում հայերը (գյուղի հայ բնակչության թիվը մոտավորապես 400 էր) հասկանալով, որ իրենց գյուղում ևս կոտորածն անխուսափելի է, որոշում են դիմել ինքնապաշտպանության, բայց գիտակցելով այդ որոշման իրականացման անհնարիությունը՝ հետևում են Ջիրիսի օրինակին՝ որոշելով դավանափոխ լինել: Երանք խնդրագիր են ուղարկում Ուրֆայի գավառապետին, ով էլ իր հերթին ընդառաջում է էհնեշցիների խնդրանքին և թուրք զինվորներ ուղարկում, որպեսզի պաշտպանեն նրանց: Սակայն մինչ այդ թուրքերն ու քրդերը թալանել էին տները, սպանել հայ երիտասարդների: Ինչպես նշվում է Գևորգ Սարաֆյանի գրքում. «Ահա այդ նսեմացնող միջոցով Էհնեշի հայությունը քիչ զոհով կ'ազատի 1895-ի ջարդերէն» (տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 605-608): Բայց հարկ է նշել, որ հետագայում՝ 1909 թ. կոտորածի ժամանակ, էհնեշցիք իրենց համար դիմադրության՝ ինքնապաշտպանության շտրիկ վերկվեցին կոտորածից (մանրամասն տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 605-618):

38 Հայք (Նիո Եորթ), 1 մայիսի 1896, թիւ 5, 71:

39 Պերպլերեան, Ներսէսեան, *Յուշանարեան Քիլիսի հայոց*, 87:

40 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 749:

41 Lepsius, *Armenia and Europe*, 277.

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում:

Թուրքական բանակը քրդերի և չերքեզների ուղեկցությամբ թալանեց և կողոպտեց նաև Փալասի երեք հայկական գյուղերը, ավերեց ագարակները, ժողովրդի մի մասը աննարդկային կտտանքներից սպանվեց, իսկ մյուս մասը հազիվ փախուստի դիմեց դեպի Չոք-Մարզվան⁴⁴:

Միս քաղաքում թուրքերը հայերից մեկի երեսը մուր են քսում, ապա նստեցնում ավանակի վրա և քաղաքում պտտեցնում, այնուհետև այնքան են ծեծում, որ հասցնում են կիսամեռ վիճակի⁴⁵: Չոք-Մարզվանի Օգերլի հայաբնակ գյուղում տեղացի թուրքերը հարձակվում են հայերի վրա, գնդակահարում երկու հայի, ևս երեքի սպանում դաշույնով և փայտով: Ինչպես նշում է թղթակիցը, այս դեպքը տեղի էր ունեցել կառավարության պաշտոնյաների ներկայությամբ⁴⁶: Պելենում մեծերի հրամանով մուսուլման տղաները ծեծում են հայ դպրոցական երեխաների⁴⁷:

Թուրքերը նաև հպարտանում էին հայերի հանդեպ իրենց կատարած վայրագություններով: Այսպես, ամերիկացի մի միսիոներ, ով չի նշում իր անունը, մեջբերում է մի թուրքի խոսք, ով պարծենում էր, որ սպանել է 147 հայի⁴⁸:

Ֆրանսիացի դիվանագետների գեկուցագրերը պարզորոշ վկայում են, որ լայն տարածում էր գտել նաև ստրկավաճառությունը: Այդ հարցի շուրջ 1896 թ. նոյեմբերի 10-ին դեսպան Կամբոնին հավաստի տեղեկություններ է հաղորդում Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս Պոնյոնը. «Ես հենց նոր տեղեկացա, որ Դիարբեքիրում, Ուրֆայում և այն վայրերում, որտեղ կոտորածներ են արձանագրվել, առևանգված երիտասարդ հայ աղջիկները մի քանի ամսից ի վեր գրեթե հրապարակայնորեն վաճառվում են Հալեպի Բար-Ներաբի թաղամասում: Անհնար է նշել վաճառված երիտասարդ աղջիկների սույնիսկ մոտավոր թիվը... Ի դեպ, գրեթե հավաստի է, որ իշխանությունը, որին հայտնի է քրիստոնյա ստրուկների վաճառքը, ոչինչ չի անում դրան ընդդիմանալու համար»⁴⁹:

Դրա հետ մեկտեղ իշխանությունները, մի կողմից կազմակերպում էին այս վայրագությունները, մյուս կողմից աշխատում էին խնամքով թաքցնել դրանք, ինչպես նաև պատասխանատվությունը բարդել հայերի վրա: Այսպես, օրինակ՝ Ուրֆայում և շատ այլ վայրերում հայերին ստիպեցին հոչակագիր ստորագրել և ջարդերի պատասխանատվությունը վերցնել իրենց վրա⁵⁰: Բացի դրանից, թուրքական կառավարությունն ամեն կերպ նվազեցնում էր զոհերի թիվը, օրինակ՝ Մարաշում 1.393-ի փոխարեն ներկայացնում էր 30, Այնթապում 1.000-ի փոխարեն՝ 100⁵¹:

44 Անահ, «Չոք-Մարզուանի հերոսական կռիւները», *Հւշակ* (Լօնդօն), 15 յունվարի 1896, թիւ 1, 3:

45 Աներկիւղ, «Քաղաքական վերջին դէպքերը», *Հւշակ*, 1 դեկտեմբերի 1895, թիւ 22, 180:

46 *Նույն տեղում*:

47 *Նույն տեղում*:

48 St' u Kerr, *Personal Experiences*, 5:

49 St' u Վարուժան Պողոսյան, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) (Երևան, «Գիտություն», 2005), 34:

50 Kieser, “Ottoman Urfa and its Missionary Witnesses,” 405.

51 Lepsius, *Armenia and Europe*, 69.

Մարդկային, նյութական և մշակութային կորուստներ

Համիդյան կոտորածների տարիներին Կիլիկիայի հայաբնակ գավառները, քաղաքներն ու գյուղերն ունեցան նյութական, ինչպես նաև մշակութային անդառնալի կորուստներ: Զգալի հարված հասցվեց հայկական եկեղեցիներին, վանքերին ու կրթական հաստատություններին: Այսպես, Նաոմի Թոփալյանի վկայությունը տեղեկություն է տալիս այն մասին, թե ինչպես էին զինվորների կողմից կրակի մատնվել Մարաշում գտնվող աղջիկների քոլեջը և Մարաշի հոգևոր ճեմարանը⁵²: Մեկ այլ վկայությունից՝ Տեր Ղևոնդ քահանայի, պարզ է դառնում, որ այրել են Մարաշում գտնվող Ս. Գևորգ եկեղեցին իր շրջակա բոլոր տներով, Սուրբ Կարապետ եկեղեցին ամբողջությամբ, Սուրբ Սարգիս եկեղեցին⁵³: Նույն աղբյուրն ահա այսպես է նկարագրում տեղի ունեցածը. «...Երբ մեր բնակարանին տանիքն էի, տեսայ արգ Պաշը ամերիկեան միսիոնարանց Աստուածաբանական վարժարանը կ'այրէր... Տեսարանը ահռելի էր, խեղճ հայերուն տուները կը մտնէին, ինչ որ կայ տան մէջ, կահ կարասի եւ գոյք, ամէնը կը կողոպտէին, կը յափշտակէին, տան տէրը կը սպաննէին, կը մեռցնէին, կը խողխողէին: Աշխարհիս ընդհանուր ազգաց տարեգրութեան եւ պատմութեան մէջ երբեք նախընթաց չունեցող ոճրագործութիւն մը: Ընել տուողն ալ ոչ թէ վայրագ եւ խաժամով ամբոխը, այլ Օսմանեան անխիղճ եւ անաստուած տէրութիւնն էր»⁵⁴:

Եկեղեցիների ավերումը բազմաթիվ վայրերում զուգակցվել է հայության ոչնչացմամբ: Այսպես, օրինակ՝ Ուրֆայում մոտ 3.000 հայեր ապաստան գտան եկեղեցում⁵⁵: Եվ չնայած նրանց դիմադրությանը՝ մուսուլման խուժանին հաջողվեց կրակի մատնել եկեղեցին և այնտեղ ապաստանած բնակչությանը⁵⁶: Բիրեչիկում թուրքերը հայոց եկեղեցին թալանելուց, կողոպտելուց և ամեն ինչ ջարդուփշուր անելուց հետո սպանում են վարդապետին, այնուհետև դիակը եկեղեցու տանիքից ցած նետում⁵⁷: Մուսուլմաններից կազմված ամբոխը հարձակվել է նաև Աստիոքի հայկական եկեղեցու վրա⁵⁸: Մերսինում Ֆրանսիայի հյուպատոս Սումմարիպայի՝ Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին հաղորդած տեղեկությունից իմանում ենք, որ «Միսիոնում զինված բնակիչները, որոնց հետևել են բնակավայրի զինվորները և զափթիե-

52 Տե՛ս Getsoyan Topalian, *Dust to Destiny*, 5:

53 Տե՛ս Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տէր Ղևոնդ քահանայի յուշերը*, 202:

54 *Նույն տեղում*, 192: Այս վկայության մեջ բավական մանրամասն են ներկայացվում ինչպես մշակութային, այնպես էլ նյութական կորուստները:

55 Տե՛ս Արամ Սահակեան, *Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները* (Պէյրութ, «Ատլաս», 1955), 411-412:

56 Տե՛ս Գազանճեան, *Յուշագրութիւն Եղևսիոյ 1895-ի ջարդէն*, 59-62:

57 Տե՛ս Տարագճեան, *Հօրս յիշատակները*, 12:

58 *Armenians at the Twilight of the Ottoman Era, News reports from the International Press*, compiled and ed. Vosgan Mekhitarian, Vahan Ohanian. Volume 1 (New York: Genocide Documentation & Research Center, 2011), 258.

ները, մուտք են գործել հայկական եկեղեցի, ոտնահարել սուրբ գրքերը, պղծել սուրբ սափորները, հանել քահանայի գլխարկը, որը լցրել են աղբով և մերկացրել նրա կնոջը»⁵⁹: Իսկ Ենիջե-Կալեում կրակի մատնեցին անգամ ֆրանցիսկյանների վանքը⁶⁰: Միս քաղաքում էլ այրեցին հայերին պատկանող ագարակները⁶¹:

Որոշ վայրերում կոտորածը, կողոպուտն ու թալանը վերջացնելուց հետո մուսուլման ամբոխը կրակի էր մատնում այն ամենը, ինչ չէին կարողանում իրենց հետ տանել: Այսպես, թուրքերն ամբողջությամբ կրակի են մատնում Էնգերլի և Օջալի գյուղերը: Իսկ Նաջարի գյուղում կողոպուտի ենթարկվեց հայերին պատկանող 75 տուն: Եվ այդ ամենը տեղի է ունենում կանոնավոր բանակի ներկայությամբ⁶²:

«Դրոշակ» թերթի թղթակիցը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Այնթապում թուրքերի կողմից իրականացված թալանի և ավերածությունների մասին. «... 10.000-ի չափ պաշիպոզուկներ շրջապատած էին Պապիկեանց տունը (քաղաքին նշանաւոր հայ ընտանիքն է), որոնց առաջնորդներն էին Պէյի օղան գտնուած մարդիկը: 600-ի չափ մարդիկ, բոլորը զինուած նաճախներով, կը կոտորէին Ալայ Պէյի թաղին դռները: 800-ի չափ մարդիկ ալ Տափախանէի թաղը պաշարեր էին, որոնք նույնպէս զինուած էին ատրճանակներով ու կացիներով: Չորս ժամուան մէջ ասարտեցին այս թաղերը, մէջը գտնուած հայերն ալ սպաննեցին: Պապիկեանց տունը այրեցին, Պապիկեան Աբրահամ երիտասարդն ալ մէջը հրոյ ճարակ ընելով»⁶³: Ինչպես նշում է ակննատես-վերապրող Մելքոն Տեր Մելքոնյանը. «Հայը տարիներ շարունակ կը տքնէր, կը չարչարուէր եւ իր արդար աշխատանքին փոխարէն խնայողութիւն մը կ'ապահովէր իր ապագային համար: Եվ ահա, օր մը, թուրքը կուգար եւ կը տանէր տարիներու տքնաջան աշխատանքին պտուղը...»⁶⁴:

Ինչպես նշում է «Արմէնիա» թերթի՝ Կիլիկիայի թղթակիցը. «Կիլիկիոյ մէջ չմնաց, ո՛չ մէկ քաղաք, ո՛չ մէկ գիւղ որ թալուած ու այրուած չըլլայ. Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Մալաթիա, Կիւրին, Էլպիստան իրենց շրջանակներով աներեցան բոլորովին...»⁶⁵:

Համիդյան կոտորածների հետևանքով Կիլիկիայում հայ գոհերի ճշգրիտ թվաքանակը դժվար է որոշել: Այդուհանդերձ, պահպանված տեղեկությունների համաձայն՝ մարդկային կորուստների պատկերը հետևյալն է. Մարաշում՝ մոտավորապես

59 Տե՛ս Պողոսյան, *Հայոց ցեղասպանության առաջին փուլը*, 30:

60 «Կոտորածներ եւ թշուառութիւններ Թիւրքիաի մէջ», *Արմէնիա*, 9 դեկտեմբերի/21 դեկտեմբերի 1895, թիւ 41, 3:

61 «Կիլիկիա», *Արմէնիա*, 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

62 Warner, Gabrielian, *Bleeding Armenia*, 389.

63 Տե՛ս Գարօ, «Կոտորածներ, Նամակներ Կիլիկիայից, IV», *Դրոշակ (Վիեննա)*, 15 մայիսի 1896, թիւ 13, 102:

64 Տե՛ս Մելքոն Տեր Մելքոնեան, *Կեանքի եւ մահուան միջև*, Բ տպագրութիւն (Պէյրութ, «Մշակ», 1974), 15:

65 «Կիլիկիա», *Արմէնիա*, 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

1.000 սպանված, 500-ից ավելի վիրավոր⁶⁶, Բիրեջիկում՝ 3.400 սպանված⁶⁷, Հալեպում՝ 1.000⁶⁸, Ուրֆայում՝ 8.000⁶⁹, Այնթապում զոհերի թիվն էր 283, իսկ վիրավորներինը՝ 150⁷⁰, Բիլիսում՝ 216⁷¹, Մերսինում՝ 15 սպանված, 40 հոգի վիրավոր⁷²: Հալեպի վիլայեթում ընդհանուր առմամբ՝ 23.652 սպանված⁷³: Իսկ Ադանայի վիլայեթում, ինչպես նշվում է «Կիլիկիոյ մէջ վաւերական տեղեկագրում», 1895-1896 թթ. ջարդերը համատարած բնույթ չեն կրել. «*Բայց պարեղ եւս պակաս եղած չեն՝ կողոպուտի, սպաննութեան, կրօնաւիրութեան դեպքեր, որոնց ընդհանուր հաշուելիչորը եղած է 86 մեռեալ, 146 վիրատրեալ, 5 առեւանգեալ, 114 կրօնաւիրիս, 125 բանտարկեալ, ընդամենը 576 անձ, իսկ նիթական վնասը եղած է 1,392.590 Օսմն. ոսկեդրամ*»⁷⁴:

Վերոնշյալ թվերը փաստում են, որ Կիլիկիայի հիմնական մասը կազմող Ադանայի նահանգում սպանություններն ու հակահայկական բռնությունների մյուս դրսևորումներն իրենց ծավալով չեն կարող համեմատվել Օսմանյան կայսրության հայաշատ մյուս բնակավայրերում իրականացված զանգվածային կոտորածների հետ, և համիդյան կոտորածները Կիլիկիայում և մասնավորապես նշված նահանգում Օսմանյան կայսրության այլ շրջանների համեմատությամբ «թույլ են արտահայտված», ինչն էլ մեր կարծիքով թերևս մասնագիտական գրականության մեջ ընդունված այն տեսակետի արտացոլումն է, համաձայն որի՝ Կիլիկիան հիմնականում զերծ է մնացել համիդյան կոտորածներից⁷⁵: Սակայն եթե Կիլիկիան ընդունում ենք իր պատմական սահմաններով, ապա հարկ է նշել, որ չնայած Ադանա նահանգը զերծ մնաց զանգվածային

66 Տե՛ս Գալուստեան, *Մարտշ կամ Գերմանիկ*, 747: Այստեղ ևս սպանվածների ընդհանուր թվի հետ կապված տարբեր տվյալներ են հանդիպում: Այսպես, Մարաշից մի միսիոների հաղորդած տեղեկությունների համաձայն, սպանված մարդկանց թիվը 3.500-ից պակաս չէր կարող լինել, նույնիսկ հասնում էր 4.000-ի: Տե՛ս Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 460-461.

67 *Братская помощь*, 56.

68 Հայկազ Մ. Պողոսյան, *Ձեյթունի պայամությունը 1409-1921 թթ.* (Երևան, «Հայաստան», 1969), 331:

69 Տե՛ս G. R. Berridge, *Gerald Fitzmaurice (1865-1939), Chief Dragoman of the British Embassy in Turkey* (Leiden, Boston: Martinus Nijhoff Publishers, 2007), 27: Տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում Ուրֆայի զոհերի թվի վերաբերյալ. ըստ միսիոներուի Կորինա Շաթրքի տեղեկության՝ 3.500-4.000, «Ուրֆայի կոտորածն», *Հայք* (Նի Շորք), 1 մարտի 1896, թիւ 3, 42:

70 Տե՛ս Գարո, «Կոտորածներ, Եամակներ Կիլիկիայից, III», *Դրօշակ*, 15 մայիսի 1896, թիւ 13, 102: Այնթապում ևս սպանվածների թվի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում, բայց ավելի հաճախ հանդիպում է 300 թիվը: Տե՛ս նաև Rendel J. Harris and Helen B. Harris, *Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia* (London: James Nisbet & Co., 1897), 32; Սարաֆեան, *Պայամություն Անթեպի հայոց*, 923: Հանդիպած աղբյուրների մեջ միայն Լեփսիոսն է տալիս 1.000 թիվը (Lepsius, *Armenia and Europe*, 306):

71 Lepsius, *Armenia and Europe*, 14.

72 «Կոտորածներ Կիլիկիայի մէջ», *Արմէնիա* (Մարսել), 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

73 Lepsius, *Armenia and Europe*, 328:

74 Բիզանդի Եղիպեան, *Ադանայի հայոց պայամություն* (Անթիլիաս-Լիբնան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970), 175:

75 Տե՛ս Ռուբեն Գասպարյան, *Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.)* (Երևան, «Գիտություն», 2005), 37:

կոտորածներից⁷⁶, այդուհանդերձ այդտեղ ևս եղել է հստակ նպատակային դրսևորված հակահայկական քաղաքականություն: Իսկ Հալեպի նահանգում (Հալեպ, Այնթապ, Մարաշ, Ենիշե-Կալե, Ալբիստան, Քիլիս, Չեյթուն, Ուրֆա, Բիրեջիկ) տեղի են ունեցել նաև սպանություններ, որոնց ընդհանուր թիվը, ինչպես արդեն նշել ենք, կազմել է 23 652⁷⁷: Այսպիսով, հողվածի շրջանակներում հետազոտված կյուրը թույլ է տալիս ևս մեկ անգամ փաստել, որ Կիլիկիան ևս անմասն չի մնացել համիդյան զանգվածային կոտորածներից:

Narine S. Hakobyan

THE HAMIDIAN MASSACRES AND THE CILICIAN ARMENIANS (1895-1896)

SUMMARY

Key words: Western Armenia. Hamidian massacres, Cilicia, Adana province, Aleppo province, Islamization.

This paper is devoted to the investigation of the anti-Armenian policy of 1895-1896 in Cilicia region of the Ottoman Empire. While current Armenian historiography credits the claim that Cilicia avoided the Hamidian massacres, a thorough investigation of this event reveals another thing yet to be learned. The paper leads the discussion on the topic based on two important and somehow neglected principles. First, the notion of “Historical Cilicia” is not only the Ottoman vilayet of Adana, but also some parts of Aleppo province. Second, the Ottoman anti-Armenian policy is being viewed in terms of both content and patterns of implementation. Based on the information provided by various primary sources, the paper discusses the main elements of the persecutions against the Cilician Armenians, particularly those related to the planning, organization, implementation, and involvement of the state. A detailed analysis of primary and secondary sources proves that from October 1895 to January 1896 the Turkish authorities carried out both killings of the Armenians and plunder of their properties in Adana province, particularly in the villages adjacent to Hadjin. Moreover, the same policy with more intensity was carried out in the towns of Ainteb, Marash and the surrounding villages of Aleppo province. The anti-Armenian policy included different forms of violence, such as killings, forced conversion into Islam, pillage and

76 Ադանա նահանգի Մերսին, Տարսոն, Ադանա քաղաքները սպանություններից զերծ մնացին ամերիկյան և ֆրանսիական ռազմանավերի ժամանման շնորհիվ: Նահանգում ջարդը սկսելու սպառնալիքը կրկնվել է 3 անգամ, բայց նավերի հրամանատարի շնորհիվ վալին չկարողացավ այն սկսելու հրաման տալ: Սակայն Ադանայի շրջակա 20 գյուղերում, Փայասի շրջակա 16 գյուղերում կողոպուտն ու թալանը դրսևորվեցին մեծ ուժգնությամբ: Վալին նույնիսկ նախաձեռնեց նահանգով շրջագայություն, և յուրաքանչյուր գյուղից նրա հեռանալուց հետո անմիջապես սկսվում էր թալանը: Չնայած դրան՝ նա ավելի վստահորեն էր համոզում ֆրանսիական «Լիևուս» ռազմանավի հրամանատարին, որ կարգը ոչ մի տեղ չի խախտվել: Տե՛ս *Братская помощь, 1898, 141-142.*

77 Johannes, *Armenia and Europe*, 328:

marked with an active participation of local Ottoman officials, regular army, gendarmerie, criminals released from the prisons, local Muslims irregulars and even tax collectors.

The character and scale of anti-Armenian actions raise concern about the traditional narrative on the events in Cilicia. This article argues that the atrocities against the Armenians in Cilicia, even with some “weak” manifestation in Adana, were identical to those carried out in the whole Ottoman Empire in terms of pursued goals and methods of implementation.

Нарине С. Акопян

ГАМИДОВСКАЯ РЕЗНЯ И КИЛИКИЙСКИЕ АРМЯНЕ (1895-1896)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Западная Армения, гамидовская резня, Киликия, провинция Адана, провинция Алеппо, исламизация.

Статья посвящена антиармянской политике осуществляемой в Киликии в 1895-1896 гг. В то время как нынешняя армянская историография считает, что Киликия избежала Гамидовской резни, тщательное расследование этого вопроса показывает совсем иное. Работа обсуждает проблему на основе двух важных принципов. Во-первых, понятие “Историческая Киликия” включает в себя не только османскую провинцию Адана, но и часть вилайета Алеппо. Во-вторых, антиармянская политика Турции рассматривается как с точки зрения содержания, так и формы реализации. Основываясь на различных первоисточниках, рассматриваются случаи преследования киликийских армян в те годы, в частности, вопросы, связанные с их организацией и осуществлением, а также участие в них государственных структур. Детальный и тщательный анализ источников показывает, что с октября 1895 года по январь 1896 года турецкие власти осуществляли как убийства армян, так и грабеж их имущества в провинции Адана, особенно в армянских деревнях, прилегающих к Хаджин. Более того, такая же политика, хотя и более интенсивная, проводилась в городах Айнтаб, Мараш и окрестных селах провинции Алеппо. Антиармянская политика отмечалась активным участием местных турецких чиновников, регулярной армии, жандармерии, преступников, освобожденных из тюрьмы, нерегулярных действий местных мусульман и даже сборщиков налогов включая в себя различные формы насилия, такие как убийства, насильственное обращение в ислам, грабежи.

Многочисленные обсуждения по поводу характера и масштаба антиармянских действий вызывают обеспокоенность в связи традиционным повествованием о событиях в Киликии. В статье утверждается, что зверства против армян в Киликии, даже с некоторым «слабым» проявлением в Адане, были идентичны тем, которые совершались во всей Османской империи с точки зрения преследуемых целей и методов осуществления.

REFERENCES

- Anah, Չօք-Մարզուանի հերոսական կռիւները [Heroic Battles of Chok-Marzvan]. *Hnchak* (London), 15 January 1896, no. 1.
- Anerkiugh, Քաղաքական վերջին դէպքերը [The Last Political Events]. *Hnchak* (London), 1 December 1895, no. 22.
- Araqelian, Hambardzum. Զէյթուն, տեղագրական, ազգագրական եւ վարչական [Zeitun: Topography, Ethnography and Administration]. Tiflis: Hovhannes Martirosian tparan, 1896.
- Կիլիկիա [Cilicia]. *Armenia* (Marseille), 21 February/29 March 1896, no. 61.
- Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ [Cilicia: An Attempt of Geographical Description]. Saint Petersburg: I. Libermann tparan, 1894.
- Հայկական վեց նահանգների ազգաբնակչութեան համեմատական ցուցակը [Comparative List of the Populations of the Armenian Six Provinces]. *Mshak* (Tiflis), 10 June 1895, No 66.
- Garó, Կոտորածներ, Նամակներ Կիլիկիայից, IV [Massacres, Letters from Cilicia, IV]. *Droshak* (Vienna), 15 May 1896, no. 13.
- Gasparyan, Ruben H. Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.) [Armenian Massacres in Cilicia (90-s of XIX century – 1921)]. Yerevan: Gitutyun, 2005.
- Ghazanchian, Nikoghos. Յուշագրութիւն Եդեսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսամարտը եւ եղեռնը [Memoirs From the Massacre of Edessa in 1895 to the Self Defence and the Genocide in 1915]. Yerevan: Zangak-97, 2004.
- Հայր [Haik] (New York), 1 May 1896, no 5.
- Kalousdian, Krikor H. Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988.
- «Ուրֆայի կոտորած» [Massacre of Urfa]. *Haiq* (New York), 1 March 1896, no 3.
- Կոտորածներ եւ թշուառութիւններ Թիւրքիայի մէջ [Massacres and Disasters in Turkey]. *Armenia* (Marseille), 9 December/21 December 1895, no. 41.
- Կոտորածներ եւ անկարգութիւններ Թիւրքիայի մէջ [Massacres and Unrests in Turkey]. *Armenia* (Marseille), 29 November/11 December 1895, no 38.
- Nersisyan, Mkrtich G. and Sahakyan, Ruben G. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու [Armenian Genocide in Ottoman Empire: Collection of Documents and Materials]. Yerevan: Hayastan, 1991.
- Ter Melqonyan, Melqon. Կեանքի եւ մահուան միջև [Between Life and Death], Second Edition. Beirut: Mshak, 1974.
- Payramian, Alishan A. Կիլիկիա. հայկական Քիլիս, Պատմական Ուրուագիծ (վաղ միջնադարէն մինչև 1922 թ.) [Ciliza, Armenian Kilis: Historical Sketch (from Early Medieval Period to 1922)]. Yervan: Zangak-97, 2001.
- Perperean, Hambardzum and Nersesean, Khoren. Յուշամատենան Քիլիսի հայոց (սկիզբէն մինչև 1968 թուականը) [Houshamadian of Armenian Kilis: From the Beginning to 1968]. Beirut: Sevan, 1969.

Poghossian, Hakob P. Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը [The History of Hadjin and the Surrounding Villages of Gozan-Tagh]. Los Angeles, CA: Compatriotic Union of Hadjin, 1942.

Poghosyan, Haykaz M. Չեյթունի պատմությունը 1409-1921 թթ. [The History of Zeitun, 1409-1921]. Yerevan: Hayastan, 1969.

Poghosyan, Varuzhan. Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ [The First Stage of the Armenian Genocide by the Assessment of French Historiography and Public Opinion (XIX Century – Beginning of the Twentieth Century)]. Yerevan: Gitutyun, 2005.

Sahakyan, Aram. Դիւագւսական Ուրֆան և իր հայորդիները [Heroic Urfa and its Armenian Sons]. Beirut, 1955.

Sarafian, Kevork A. Պատմություն Անթապի հայոց [Armenian History of Aintab (Two Volumes)], Volume 1. Los Angeles, California, 1953.

Taragjian, Tigran Y. Հօրս յիշատակները [My Father's Memoirs]. Toronto, 1995.

Ter-Ghevondyan, Vahan. Մարաշի Տէր Գեւոնտ քահանայի յուշերը [Memoirs of Der Ghevont Priest from Marash]. Yerevan: Antares, 2013.

Հայ ժողովրդի պատմություն [The History of the Armenia People], Volume 1. Yerevan: Haykakan SSH Gitut'yunneri akademiya, 1971.

Yeghiayan, Puzant. Ադանայի հայոց պատմություն [History of Armenians of Adana]. Antelias-Lebanon: House of the Armenian Catholicosate of Cilicia, 1970.

Zareh, Կիլիկիա [Cilicia]. *Armenia* (Marseille), 20 January/1 February 1896, no 52.

Братская помощь пострадавшим въ Турціи армянамъ, Отдѣлъ II [Fraternal Help for the Suffering Armenians in Turkey], Volume II. Moscow, 1898.

**ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԽՄԲՈՂ ԳՈՐԾՈՆ.
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1894-96 ԹԹ.
ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ ՔՐԴԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Բանալի բառեր՝ 1894-96 թթ. հայկական կոտորածներ, քրդեր, համիդիե, հանցակցություն, Հայոց ցեղասպանություն:

Հոդվածում քննության են առնվում քրդական համիդիե հեծելազորի ստեղծման խնդիրը, նաև 1894-96 թթ. հայկական կոտորածներին քրդերի մասնակցության ձևերը, չափերը և պատճառները՝ օգտագործելով քրեագիտության և սոցիալական հոգեբանության մեջ կիրառվող «համախմբման, միասնության տեսությունները»: Ընդունված է քրդերին համարել հայ բնակչության դեմ օգտագործվող կոյր գործիք Օսմանյան կայսրության ձեռքում: Սա լայնորեն տարածված կարծիք է ոչ միայն հայ պատմագրության, այլև ընդհանրապես ցեղասպանագիտության մեջ: Իհարկե, այն հիմնավոր է, սակայն չի կարող լինել կոտորածին քրդերի լայնածավալ մասնակցության միակ բացատրությունը: Զանգվածային սպանություններին քրդերի ներգրավմամբ Օսմանյան կայսրությունը լուծում էր ևս մեկ, թերևս ոչ պակաս կարևոր խնդիր: Քրդերին դարձնելով հանցակից, ներառելով նրանց Արևմտյան Հայաստանի հայերին էթնիկ գտման ենթարկելու թուրքերի նախագծի մեջ՝ Բարձր դուռը մշտապես անհնազանդ և անհանգիստ քրդերին ամուր կապում էր կայսրության քաղաքականության և ճակատագրի հետ:

Հայ-քրդական՝ երկար դարեր ձգվող հարաբերություններում մշտապես եղել են խնդիրներ, որոնք առավել ցայտուն և ընդգրկուն արտահայտվեցին 19-րդ դարում, և որոնց զարգացումն ու խորացումը բերեցին նախ՝ համիդյան կոտորածներին, ապա՝ Հայոց ցեղասպանությանը քրդերի ակտիվ մասնակցությանը:

Այլ ժողովուրդների օգտագործումը զանգվածային ոչնչացումների և ցեղասպանությունների իրականացման ժամանակ համընդհանուր ֆենոմեն է: Այսպես, Հոլոքոստի տարիներին նացիստները լայնորեն ներգրավում էին Եվրոպայի ժողովուրդների ներկայացուցիչներին օկուպացված տարածքներում հրեաների ոչնչացման գործընթացում: Լեհերը, լիտվացիները, ուկրաինացիները, հոլանդացիները և բազմաթիվ այլ ժողովուրդներ ներքաշվեցին սպանության այս հորձանուտի մեջ՝ խրախուսվելով նացիստական հանցագործների կողմից կամ փորձելով օգտագործել պահը՝ տեղի հրեա բնակչության հետ սեփական հին հաշիվները մաքրելու համար¹:

1 Michael Curtis, *Verdict on Vichy: Power and Prejudice in the Vichy France Regime* (New York: Arcade Pub., 2002); Peter Davies, *Dangerous Liaisons: Collaboration and World War Two* (Harlow: Pearson Education, 2004); *Collaboration and Resistance During the Holocaust: Belarus, Estonia, Latvia, Lithuania*, ed. David Gaunt, Paul A. Levine, and Laura Palosuo (Bern: Peter Lang, 2004); Gerhard Hirschfeld, *Nazi*

Հայոց ցեղասպանության ընթացքում նույն գործառույթը վերապահված էր քրդերին, ինչպես նաև չերքեզներին: Նրանք դարձան երիտթուրքերի գործիքներից մեկը, որով իրականացվեց հայերի բնաջնջումն Օսմանյան կայսրությունում: Սակայն քրդերի այս դերակատարությունը սովորաբար ներկայացվում է որպես լոկ կայսրության ձեռքում կույր գործիք լինելու հետևանք: Սա տարածված կարծիք է ոչ միայն հայկական պատմագրության, այլ նաև ցեղասպանագիտության մեջ ընդհանրապես²: Իհարկե, այս կարծիքը հիմնավոր է, և կայսրությունն օգտագործում էր քրդերին, սակայն, ամենայն հավանականությամբ, դա քրդերի՝ նման մեծ չափերի հասնող մասնակցության միակ բացատրությունը չէ: Հայկական կոտորածները շոշափելի, զգալի օգուտներ էին բերում քրդերին, ովքեր ոչ պակաս շահագրգռված էին կատարվող ոճրագործությամբ:

Եվ բացի դրանից, օսմանյան պետությունը լուծում էր ևս մեկ, միգուցե ոչ պակաս կարևոր, քան քրդերի միջոցով հայերի աճող ազդեցությունը կոտրելու խնդիր: Քրդերին մեղակից դարձնելով այս մեծ ոճրին՝ Կ. Պոլիսը նրանց կապում էր կայսրության ռազմակառքին՝ քրդական երբեմնի կիսաանկախ վիճակը ներառելով ընդհանուր պետական քաղաքականության և ճակատագրի մեջ: Այս հանցագործության մեջ ներգրավելու միջոցով քրդական ինքնությունը համապետական ինքնության մեջ ձուլելու վարկածի քննարկումը լինելու է հողվածի առանցքային խնդիրը:

Քրդական խնդիրն օսմանյան քաղաքականության մեջ 19-րդ դարում

19-րդ դ. Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթները բազմաթիվ ժողովուրդների բնակության խճանկար էին, երբ խմբերից ոչ մեկը չուներ բացարձակ մեծամասնություն: Ամենայն հավանականությամբ, իրենց քանակով հայերն այս տարածքներում երկրորդ էթնիկ խումբն էին քրդերից հետո³: Թուրքերը, ինչպես

Rule and Dutch Collaboration: The Netherlands under German Occupation, 1940-1945 (Oxford, New York and Hamburg: Berg Publishers, 1988); *The Unknown Black Book: The Holocaust in the German-Occupied Soviet Territories*, ed. Joshua Rubenstein, Ilya Altman (Bloomington, IN: Indiana University Press, 2010).

2 Leo Kuper, *Genocide: Its Political Use in the Twentieth Century* (New Haven and London: Yale University Press, 1981), 109; Michael Mann, *The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing* (New York: Cambridge University Press, 2005), 114-115; Taner Akcam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan books, 2006), 180; Taner Akcam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 147, 397; Eric D. Weitz, *A Century of Genocide: Utopias of Race and Nation* (Princeton: Princeton University Press, 2005), 6.

3 Stephan H. Astourian, *The Silence of the Land: Agrarian Relations, Ethnicity, and Power, Question of Genocide, Armenians and Turks at the End of the Ottoman Empire* (ed. by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, and Norman M. Naimark) (New York: Oxford University Press, 2011), 58; *The Armenian Question before the Peace Conference 1919, A Memorandum Presented Officially by the Representatives of Armenia to the Peace Conference at Versailles, on February 26th, 1919* <https://archive.org/details/armenianquestion00pari/page/n4>, դիտվել է 17.04.2019; *Armenia and Kurdistan* (London: H.M. Stationery Office, 1920).

նաև այլ ավելի փոքր խմբեր, օրինակ՝ վրացիները, լազերը, թուրքմանները, ասորիները և հակոբիկյանները, զգալիորեն զիջում էին այս երկու գերիշխող խմբերին⁴:

Դարեր շարունակ հիմնականում հայերով բնակեցված այս շրջանների ժողովրդագրական պատկերը հետզհետե փոխվել էր: Քրդական բնակչության կշիռն ավելացել էր, ինչը նաև ուղղորդված ժողովրդագրական ինժեներիայի արդյունք էր: Օսմանյան կայսրությանը ձեռնտու էր գրեթե նույնաքանակ երկու մեծ խմբի հետ գործ ունենալ իր արևելյան սահմանների մոտ, քանի որ միշտ հնարավորություն էր ստեղծվում, նրանց միջև հակասություններն օգտագործելով, թուլացնելու երկու համայնքն էլ, ինչից Կ.Պոլիսը միշտ օգտվում էր:

19-րդ դարում հայ-քրդական հարաբերություններն ապրում էին լարվածության աճի մի շրջան, երբ միահյուսվում էին տարբեր խնդիրներ և հակասություններ, բախվում էին իրարամերժ շահեր և արժեհամակարգեր: Հիմնական լարումն անցնում էր հետևյալ գծերով՝ կրոնական իրողություններից բխող լարվածություն, տնտեսական մրցակցություն և հողային հարց, աշխարհաքաղաքական զարգացումների նկատմամբ վերաբերմունք, ինչպես նաև տարբերվող պատկերացումներ կայսրության ապագայի վերաբերյալ:

Արևմտյան Հայաստանը գտնվում էր քրդական փաստացի իշխանության տակ, ու թեև օսմանյան իշխանությունները շարունակ քայլեր էին ձեռնարկում՝ ուժեղացնելու պետության վարչական կառավարման աստիճանն այս տարածքներում, սակայն մինչև 19-րդ դարի 40-ական թթ. այն պարզ անվանական էր: Քրդական վերնախավը մշտապես փորձում էր օգտվել օսմանյան պետության տնտեսական և քաղաքական իրավիճակի բարդություններից, պատերազմներում պարտություններից՝ մեծացնելու համար արդեն իսկ գոյություն ունեցող ինքնիշխանությունը:

Կայսրության հանդեպ քրդերի խնդրահարույց հավատարմությունը պարզ տեսանելի էր ամբողջ 19-րդ դարում Օսմանյան կայսրության դեմ բռնկվող քրդական հուզումներում: Առաջինը 1805 թ. ապստամբեց Սուլեյմանիայի բարբան ցեղի առաջնորդ Աբդուրրահման փաշան, դրան հետևեցին 1812 թ. նրա որդի Ահմեդ փաշայի, 1815 թ. Վանի և Բայազեթի փաշայությունների քրդերի ապստամբությունները⁵, 1818 և 1820 թթ. զազաների և 1822 թ. հակակառավարական ելույթները, հատկապես զորեղ էին Ռևանդուզի, Հեքյարիի, Սինջարի և Դիարբեքիրի՝ 1828-39 թթ., Բադրխանի՝ 1843-1848 թթ. ապստամբությունները, 1854 թ. Եզդինշիրի ապստամբությունը, Վանի, Մուշի և Բիթլիսի շրջաններում մոթեկանի, ուաշքոթանի և սալիքի ցեղերի հակակառավարական ելույթները 1878 թ. աշնանը և Օբեյդուլլայի՝ 1880 թ. ապստամբությունը⁶:

4 Donald Bloxham, *The Great Game of Genocide, Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford: Oxford University Press, 2005), 39.

5 Василий Никитин, *Курды* (М.: Прогресс, 1964), 285.

6 Կարո Սասունի, *Քյուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները /ԺԵ դարն մինչև մեր օրերը/* (Պեյրուք, «Համազգային», 1969), 84; Hakan Özoğlu, “Nationalism” and Kurdish Notables in the Late Ottoman–Early Republican Era,” *International Journal of Middle East Studies* 33, no. 3 (2001): 390.

Մինչև 1850-60-ականները օսմանյան իշխանությունները քրդական ելույթներին ի պատասխան պատժիչ գործողություններ էին իրականացնում, որոնք աչքի էին ընկնում սանձարձակ բռնություններով և դաժանություններով: Երզնկայում (4-րդ բանակ) և Մոսուլում (5-րդ բանակ) տեղակայված գինվորական ուժերն իսկական սարսափի խորհրդանիշ էին դարձել քրդերի համար⁷: Յուրաքանչյուր ելույթից հետո մեծ աշիրեթապետությունները մասնատվում էին ու թուլանում, և հների փոխարեն առաջ էին քաշվում նորերը, որոնք իրենց բարձրացումով պարտական էին միայն սուլթանին: «Շարք մի շրջաններ, որոնք մեկ գորավար ցեղապետի կենթարկվելին, բաժանվեցին քանի մը ցեղապետներու միջև, որոնք իրենց նոր իրավունքներից ոգևորված, մեկը մյուսին դեմ կը լարվեին: Այս լարված դավադրական ցանցը իրական շահ մը կապահովեր թրքական կառավարութեան, որ ինքզինքը սկսած էր ապահով զգալ քրդական նոր բռնկումները»⁸: Այսպիսով, կայսրությունը մշտապես փորձում էր գտնել նոր դասավորվածություն՝ սեփական շահերը տվյալ տարածքներում առավելապես ապահովելու համար:

Կայսրության նկատմամբ քրդերի հավատարմության պակասը դրսևորվեց նաև 19-րդ դ. տեղի ունեցած երեք ռուս-թուրքական պատերազմների ժամանակ (1828-29 թթ., 1853-56 թթ. և 1877-78 թթ.) իրենց պահվածքում: 1828-29 թթ. պատերազմի ժամանակ նրանք «դավաճանեցին» Օսմանյան կայսրությանը՝ ոչ միայն բոլոր միջոցներով խուսափելով մասնակցությունից⁹, այլև նույնիսկ թշնամու՝ ռուսների հետ բանակցությունների մեջ մտան¹⁰: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ, ցանկանալով մոբիլիզացնել կայսրության մուսուլմանական բնակչությանը, սուլթանը ջիհադ հայտարարեց, բայց այն առանձնապես չազդեց քրդերի վրա. նրանք կամ բացահայտ խուսափում էին ռազմաճակատում դուրս գալ ռուսների դեմ, կամ էլ առաջին իսկ լուրջ բախումից հետո դիմում էին փախուստի և նույնիսկ զենքն ուղղում թուրքական զորքի դեմ¹¹:

Հայկական բնակչությունը նույնպես որոշակի համակրանք էր դրսևորում Ռուսական կայսրության նկատմամբ, սակայն երկու փոքրամասնությունների այս նույն վերաբերմունքը լրիվ տարբեր հետևանքներ ունեցավ: Քրդերի այս «դավաճանական» պահվածքի արդյունքում Օսմանյան կայսրությունը սկսեց սիրաշահել քրդերին՝ փորձելով նրանց սեփական խաղի մեջ ներգրավել: Իր հերթին հայերի «անհավատարիմ» կեցվածքը հանգեցրեց լայնամասշտաբ կոտորածների, իսկ ավելի ուշ նաև բնաջնջելու քաղաքականության:

7 Սասունի, *Քյուրք ազգային շարժումները*, 124:

8 Նույն տեղում, 97:

9 Michael Eppel, "The Demise of the Kurdish Emirates: The Impact of Ottoman Reforms and International Relations on Kurdistan during the First Half of the Nineteenth Century," *Middle Eastern Studies* 44, no. 2 (2008): 247.

10 Василий Потто, *Кавказская война*, т. 4 (М.: Центрполиграф, 2007), 41, 54; Վահան Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին* (Երևան, «Հայաստան», 1989), 72:

11 Նույն տեղում, 118:

1860-ականներին տեղի է ունենում քրդերի նկատմամբ օսմանյան կառավարության վերաբերմունքի կտրուկ շրջադարձ¹²: Լեոն գրում է. «Օսմանյան կառավարությունը փոխանակ պատժող և ճնշող հանդիսանալու, ինչպես եղել էր մինչ այդ, ընդգրկում էր սիրաշահել-գրավելու քաղաքականությունը և այդպիսով ոչ միայն անվասա դարձնելու այս ռազմիկ տարրը, այլև պատերազմի դեպքում իր կողմն ունենալու համար: Իսկ սիրաշահելու ամենալավ միջոցներից մեկն էր՝ թույլ տալ քրդերին, որ շահագործեն հայ երկրագործ ժողովրդին, ինչպես իրենք կկամենան»¹³:

Քրդերի նկատմամբ վերաբերմունքը մեղմելուն զուգահեռ, կոշտանում է հայերի հանդեպ դիրքորոշումը: Դրիմի պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ հայերն ունեին ռուսական կողմնորոշում: Այս պարագայում կայսրությանը սպառնացող երևույթն արմատախիլ անելու համար պետք էր ավելի սրել հայ-քրդական հարաբերությունները: Դրա միջոցներից մեկը քրդերի մեջ այն տեղեկատվության տարածումն էր, թե հայերը, բրիտանացիների և ռուսների հետ համագործակցելով, ցանկանում են տիրել Արևմտյան Հայաստանին, թագավորություն ստեղծել այնտեղ՝ քշելով քրդերին¹⁴:

Հակահայկական, ինչպես նաև ընդհանրապես հակաքրիստոնեական քաղաքականությունը լիովին համապատասխանում էր 19-րդ դարի վերջում սուլթան Աբդուլ Համիդի որդեգրած պանիսլամիզմի քաղաքականության հետ¹⁵: Այն փաստացի ոչ թե կրոնական, այլ քաղաքական ծրագիր էր¹⁶: Քրդական ազնվականության փոխարեն առաջին պլան են դուրս գալիս հոգևոր առաջնորդները՝ շեյխերը, որոնք նախկինում լոկ ցեղապետի խորհրդականներ էին, իսկ այժմ իրենց ձեռքում էին կենտրոնացրել ցեղերի տնտեսական ներուժը և քաղաքական իշխանությունը¹⁷: Ընդգծվում էր առաջին հերթին քրդերի իսլամական, կրոնական ինքնությունը, ինչը, ըստ հայտնի թուրքագետ Ցուրխերի, միակ միջոցն էր 1877-78 թթ. աղետալի պատերազմից հետո առաջարկելու արևմտյան լիբերալ գաղափարներին համարժեք հավասարակշիռներ¹⁸:

Սուլթանը սկսեց Արևմտյան Հայաստան ուղարկել մոլլաների և սեյիդների, որոնք մզկիթներում բորբոքում էին քրդական զանգվածների կրոնական աստվածությունը հայերի հանդեպ: Այնուհետև նա բարձրակարգ շքանշաններ ու զինվորական կոչումներ շնորհեց քուրդ ցեղապետներին: Այսպես, օրինակ, սուլթանը Բադրխանի որդուն՝

12 Օրինակ, Բեդրխանն ու նրա տոհմը ոչ միայն չպատժվեցին բարձրացված ապստամբությունը ճնշելուց հետո, այլև նույնիսկ շնորհների արժանացան:

13 Լեո, *Թուրքիայի յեղափոխության գաղափարաբանությունը*, հ. Ա (Փարիզ, տպագրություն Պահրի եղբայր, 1934), 41; Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 122:

14 Eppel, “The Demise of the Kurdish Emirates,” 256; Լեո, *Ասլայից* (Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925), 36; *Մշակ* (Թիֆլիս), 5/17 օգոստոսի 1880 թ., 3:

15 Christopher J. Walker, *Armenia: The Survival of a Nation* (New York: St. Martin's Press, 1980), 133.

16 Wilfrid Scawen Blunt, *My Diaries* (New York, 1932), 190 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 133.

17 Özoğlu, “Nationalism” and Kurdish Notables,” 384.

18 Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey* (New York: Oxford University Press, 1961), 174–82; Stanford J. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*. Vol. 2 (Cambridge: Cambridge University Press, 1977), 172–272 հղված է ըստ Erik-Jan Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building. From the Ottoman Empire to Atatürk's Turkey* (London & NY: I.B.Tauris & Co Ltd, 2010), 68, 74.

Բահրի բեյին, սուլթանական գվարդիայի հրամանատարի աստիճան և երկրորդ կարգի «Մեջիդիե» շքանշան, ինչպես նաև ֆերիկի (գեներալի) կոչում շնորհեց՝ նրան ուղարկելով Արևմտյան Հայաստան «հատուկ հանձնարարությամբ»¹⁹:

Կայսրության «քրդական քաղաքականության» հաջորդ դրսևորումը համիդիե ջոկատների ստեղծումն էր:

Համիդիե ջոկատների ստեղծումը

1890 թ. նոյեմբերին թուրքական թերթերում պաշտոնական հաղորդում հրապարակվեց հիմնականում քրդերով²⁰ համարված ռազմական ստորաբաժանումներ ստեղծելու մասին, որոնց շնորհվեց սուլթան Աբդուլ Համիդի անունը՝ Hamidiye Asiret Suvari Alaylari (համիդյան ցեղային հեծելազորի զորագնդեր), բաժանվեց համազգեստ ու զենք²¹: Համիդյան հեծելազորի կազմավորման գաղափարը մեծապես ոգեշնչված էր ռուսական կազակական ջոկատների օրինակով²²: Գաղափարի հեղինակը Շաքիր փաշան էր, ով հետագայում դառնալու էր Անատոլիայում բարենորոգումների իրականացման գերագույն կոմիսար, իսկ գնդերի կազմավորման գործը հանձնարարվեց Արևմտյան Հայաստանում տեղակայված չորրորդ բանակի մուշիր (մարշալ) Ջեքի փաշային²³: Հեծելազորի հիմնական նպատակը պետք է լիներ ռուսական ու պարսկական սահմանների պաշտպանությունն ուժեղացնելը²⁴, ինչը միանգամից առաջացրեց ռուսական կողմի դժգոհությունը և բերեց Ռուսաստանի դեսպանի բողոքին առ այն, որ դա կարող է լինել խաղաղության խաթարման պատճառ²⁵:

Համիդիե ջոկատների մեջ ներգրավվածությունն օժտում էր որոշակի առանձնանորիններով՝ կառավարության հովանավորությամբ, օրենքի առաջ որոշակի անձեռնմխելիությամբ, նրանց նվիրաբերում էին հողեր, համիդիեների անդամների ընտանիքներն ազատվում էին հարկերից, ինչպես նաև համիդիեում ներգրավվածն ազատվում էր կանոնավոր բանակային ծառայությունից²⁶: Քրդերը փաստացի դարձան օսմանյան

19 *Մշակ*, 10 (22) սեպտեմբերի 1880 թ., 3:

20 Շատ փոքր թվով ներգրավվեցին նաև այլ մուսուլման ժողովուրդներ՝ կարափափախներն ու չերքեզները, թույլատրվեց կազմել առանձին գնդեր՝ իրենց առաջնորդներով: Տե՛ս Ա-դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները* (Երևան, «Կուլտուրա», 1912), 249:

21 Edwin M. Bliss, *Turkey and the Armenian Atrocities. A Reign of Terror* (Philadelphia: Hubbard Publishing co., 1896), 97; Turkey, No 1 (1892), *Great Britain. Foreign Office. Further Correspondence Respecting the Conditions of the Population in Asiatic Turkey* (London: Printed for Her Majesty's Stationery Office (H.M.S.O.), 1892), 16.

22 Mesut Uyar and Edward J. Erickson, *A Military History of the Ottomans: from Osman to Atatürk* (Oxford: Praeger Security International, 2009), 240.

23 Владимир Минорский, *Курды, Заметки и впечатления* (Петроград: тип. В. Ф. Киршбаума, 1915), 11.

24 Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134.

25 *Հւշակ* (Լոստոն), 12 դեկտեմբերի 1890 թ., 4:

26 Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellions, 1880–1925* (Austin, Texas: University of Texas Press, 1989), 9; Архив Внешней политики России (АВПР), ф. Миссия в Персии, 1913, д.69, л.169-170 հղված է ըստ Ստեփան Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը* (Երևան, «Հայաստան», 1991), 88:

բանակի մաս: Իսկ այն հանգամանքը, որ մեկ համիդիեական ջոկատ ամեն տարի պետք է պահակային ծառայություն իրականացնել մայրաքաղաքում, ավելացնում էր նրա հեղինակությունը²⁷:

Հրամանի համաձայն՝ յուրաքանչյուր հեծելազորային գունդ պետք է իր շարքերում ունենար 512-ից 1.052 զինվոր: Մոտավորապես չորս տարում ձևավորվեցին շուրջ երեսուն գնդեր²⁸ 43.730 հեծյալ զինվորներով: 1908 թ. գնդերի թիվը հասավ 65-ի²⁹: Գնդերը հաճախ միավորում էին նույն աշիրեթի անդամներին, և դրանք գլխավորում էին աշիրեթների պետերը, որոնք ստանում էին զինվորական կոչումներ³⁰: Համիդիե գնդերի համալրման ընթացքում օգտագործվեց մի հնարք, որը մեծ տարածում գտավ Հայոց ցեղասպանության տարիներին. խոսքը բանտերից հանցագործներին ազատ արձակելու և նրանց սպանությունների մեջ ներգրավելու մասին է³¹: Օրինակ, Վանի գավառում հայտնի ավազակ Թ-աֆյուրը համիդիե մի գունդ ստեղծեց՝ այն համալրելով բանտերից ազատ արձակված մարդասպաններով³²: Նույնը կրկնվեց նաև Ամասիայում, որտեղ բանտերից ազատ արձակված ոճրագործ չերքեզներից 1.500-հոգանոց համիդիե գունդ կազմվեց³³:

Համիդիե գնդերի ստեղծումը ցույց էր տալիս, որ սուլթանը վերջնականապես որոշել էր հենվել այս տարածաշրջանում քրդական ցեղերի վրա: Դա պատահական չէր. Հայկական հարցի ակտիվացումից հետո Կ.Պոլիսը տենդագին փնտրում էր այն համայնքը, որի քաղաքական լոյալությունը հնարավոր կլիներ շահել: Մինչ այդ 19-րդ դարի ամբողջ ընթացքում անընդհատ կրկնվող քրդական ապստամբությունները ճնշելու քաղաքականությանը եկավ փոխարինելու քրդերին սիրաշահելու և օսմանյան համընդհանուր իսլամական համայնքի մեջ նրանց համաձուլելու ռազմավարությունը:

Որպես այս քաղաքական տեղաշարժի արտացոլում՝ սուլթանի հրամանով Արևմտյան Հայաստանի և Քրդստանի ազդեցիկ քուրդ ցեղապետերը (նաև որոշ արաբ, կարափափախ և թուրքմեն առաջնորդներ) հրավիրվեցին մայրաքաղաք³⁴: 1891 թ. գարնանը քուրդ ցեղապետերը սուլթանի իրադեհի³⁵ հիման վրա Տրապիզոնից հատուկ շոգենավով տեղափոխվեցին Կ.Պոլիս՝ նշելու Սելանիկ տունը: Ճանապարհ-

27 George H. Hepworth, *Through Armenia on Horseback* (New York: E.P.Dutton & Company, 1898), 229.

28 *Great Britain. Foreign Office. Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey: 1892-1893* (London, 1896). Turkey, No. 3 (1896), հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134.

29 Uyar and Erickson, *A Military History of the Ottomans*, 240.

30 *Great Britain. Foreign Office, Turkey*, No 1 (1892), 16.

31 Դրա մասին տե՛ս, օրինակ՝ Մուրեն Մանուկյան, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք (VIII): Պալմություն, քաղաքականություն, մշակույթ* (Երևան, «Չանգակ-97», 2012), 342-349:

32 Arshak Safrastian, *Kurds and Kurdistan* (The Harvill Press Ltd: London, 1948), 66-67.

33 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 91:

34 Uyar and Erickson, *A Military History of the Ottomans*, 203-204.

35 Իրադեհ (թուրքերեն՝ կամք, ցանկություն) – Օսմանյան կայսրությունում այսպես էր անվանվում սուլթանի անունից հրապարակվող հրամանագիրը:

հին նրանց հանգստի, սննդի, հագուստի և մնացած բոլոր կարիքներն ապահովվեցին սուլթանի անձնական միջոցներով: Կայսերական թիկնապահները «Դիանա» շոգենավով ընդառաջ գնացին ցեղապետերին և նրանց արժանավայել մեծարելով՝ հասցրին մայրաքաղաք: Այնտեղ քրդական զգեստներ հագած, մեկական սրով ու խենչավով զինված՝ նրանք կառքերով շրջում էին քաղաքի գանազան մասերում, հյուրասիրվում թանկագին օտարերկրյա հյուրերի նման³⁶: Նրանց ընդունեց անձամբ սուլթանը և ընծաներ ու իրենց ստորաբաժանումների համար տարբերանշաններ շնորհեց, որոնք կրում էին հերթական համար և տողեր Ղուրանից³⁷:

Համիդիե գնդերի կազմակերպումը պետք է ավարտին հասցնեք քրդերին թուրքական պետականությանը կապելու գործընթացը: Նախկինում անհնազանդ քրդերը պետք է դառնային օսմանյան միասնականության կարևոր երաշխիքներից մեկը, առավել ևս, որ Աբդուլ Համիդ II-ը քայլեր ձեռնարկեց երկրի զարգացումը պանիսլամիզմի գաղափարական հենքի վրա խարսխելու ուղղությամբ: Այս ընթացքում նաև թուլացվում էին խոշոր և անհնազանդ աշիրեթները, տրոհվում ու մանրացվում: Համիդիե գնդերի հրամանատարներ էին նշանակվում ազդեցություն չունեցող, աննշան մարդիկ, ինչն առաջացնում և ուժեղացնում էր քրդական առաջնորդների ներքին հակամարտությունը³⁸: Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանլիսի, Խնուսի, Վարդովայի շրջաններում հասնանցի, ջիրբանցի, ջըռըքցի, բըլըքցի քրդերը իրար հետ կռվում էին համիդիեում ղեկավար դիրքի «աստիճանի մեծության, փառասիրության» համար³⁹:

Համիդիե գնդերը գրագետ սպաներով ապահովելու նպատակով 1892 թ. Կոստանդնուպոլսում և 6-րդ բանակային կորպուսի կենտրոն Բաղդադում բացվեցին «աշիրեթային դպրոցներ»⁴⁰: Այս միջոցառումների մի ամբողջ համակարգի նպատակներ էին հռչակվում քոչվոր քրդերին քաղաքակրթելը և նրանց հորդաները կարգապահ դարձնելը⁴¹: Մակայն դա նույն, ավելի համապարփակ և համընդգրկուն խնդրի փուլերից մեկն էր: Դպրոցներում ուսանող քուրդ և արաբ աշակերտներին Թուրքիայի նկատմամբ հավատարմություն էին ներարկում⁴²:

Իհարկե, եղան նաև անխուսափելի շեղումներ: Բազմաթիվ անհնազանդ ցեղեր դարձան էլ ավելի անկախ ու ինքնագլուխ՝ հաճախ հրաժարվելով կառավարությանը հարկեր մուծելուց⁴³: Մի շարք ցեղեր էլ (օրինակ՝ Դիարբեքիրում և Բիթլիսում) իրենց հերթին չընդգրկվեցին համիդիեի համակարգի մեջ, իսկ Դերսիմում մերժումները

36 Պոդոպյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 89:

37 *Great Britain. Foreign Office, Turkey, No 1 (1892), 19, 37; Hepworth, Through Armenia on Horseback, 226.*

38 Սասունի, *Քյուրդր ազգային շարժումները*, 157:

39 *Հւշակ*, 20 նոյեմբերի 1894 թ., 102:

40 Минорский, *Курды*, 11.

41 *Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году* (Москва: Разсвѣтъ, 1896), 163.

42 Минорский, *Курды*, 11.

43 Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 212:

համատարած էին⁴⁴: Թուրք-իրանական սահմանամերձ շրջանների մի շարք քրդական ցեղեր համիդիե գնդերի մեջ չմտնելու համար տեղափոխվեցին Իրան⁴⁵:

Սակայն ընդհանուր առմամբ համիդիե ջոկատների համակարգի ստեղծումը թույլ տվեց Օսմանյան կայսրությանն ուժեղացնել քրդական ցեղերի կապը կենտրոնական իշխանության հետ, և որպես դրա ամրապնդման հաջորդ քայլ՝ նրանց թույլատրվեց բացահայտ ու անթաքույց թիրախավորել հայկական բնակչությանը: Իհարկե, հայկական բնակչության կողոպուտը և ճնշումը քրդական ցեղերի կողմից նոր երևույթներ չէին, սակայն հիմա դա օրինականացվում էր պետական իշխանության իրավունքով, որի մաս էին կազմում արդեն քրդական զինված ջոկատները: Ինչպես գրում է այս տարիներին Օսմանյան կայսրությունով ճամփորդած Ջորջ Հեփվորդը, «քրդերը շատ ոգևորված էին սուլթանի գործողություններով և ավելի քան հպարտ՝ համագգեստ կրելու համար»⁴⁶:

Այսպիսով, համիդիեների ստեղծումը քրդերին որոշակիորեն մոտեցրեց Օսմանյան կայսրությանը, նրանց ընդգրկեց պետական ծառայության մեջ և բանակին մատակարարեց նոր կանտնավոր «խաֆիֆ սուվարի» թեթև հեծելազորով⁴⁷:

Հայկական բնակչության նկատմամբ բռնաճնշումները՝ որպես համիդիե հեծելազորի գործառույթներից մեկը

Ստեղծումից հետո համիդիե գնդերը ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում ստանձնեցին ռազմառոտիկանական գործառույթ: Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, ապօրինի տուրքերը, կողոպուտը, թալանն ու տարատեսակ կամայականություններն ընդունեցին աներևակայելի մեծ ծավալ: Ցանկացած դիմադրություն «հավասարազոր էր սուլթանի դեմ խոտվության»⁴⁸ և բերում էր արյան մեջ դաժան ճնշման⁴⁹: «Նրանց կողմից կատարված վայրագություններն աննկարագրելիորեն սարսափելի էին: Որևէ մեկի նկատմամբ ողորմածություն չեն ցուցաբերում... Յուրաքանչյուր տարբեր չափի ավերածություններ ամենուրեք իրականացվել են թուրքերի օժանդակությամբ, իսկ երբ թուրքական կառավարությունն իսկապես ձգտել է կանխել հարձակումները, դա արել է հեշտությամբ»⁵⁰:

44 Ahmad Madhar Kamal, *Kurdistan during the First World War*, trans. Ibrahim Ali Maher (London: Saqi Books, 1994), 55 հղված է ըստ Zardykhan Zharmukhamed, "Ottoman Kurds of the First World War Era: Reflections in Russian Sources," *Middle Eastern Studies* 42, no.1 (2006): 73.

45 АВІР, Полятархив, 1889-1894, հղված է ըստ Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 212-213:

46 Hepworth, *Through Armenia on Horseback*, 225.

47 Минорский, *Курды*, 11.

48 *Положение армян*, 161.

49 John A.R. Marriott, *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy* (Oxford: Oxford University Press, 1951), 399.

50 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 98.

Այսպիսով, բացահայտվում էր համիդիե ջոկատների ստեղծման ևս մեկ նպատակ, որը սահմանապահ գործունեությունից պակաս կարևոր չէր կայսերական արքունիքի համար: Լեոն այս առումով գրում է. «Որքան և այս ձեռնարկությունը քողարկվում էր պատերազմական ընդհանուր նկատառումներով, ոչ ոքի համար գաղտնիք չէր մնում, որ համիդիե գնդերի կազմակերպման ամենագլխավոր, եթե ոչ միակ, շարժառիթն է նրանց միջոցով հայերին զսպելը»⁵¹: Էրզրումում գլխավոր հյուպատոս Ա. Դեննետը նույնպես հաղորդում էր, որ համիդիե գնդերի կազմակերպման նպատակն է քրդերին օգտագործել՝ կայսրության արևելյան նահանգներում քրիստոնյա բնակչության ազատագրական միտումները ճնշելու համար⁵²: Սա ընդհանուր տեսակետ էր նաև անգլիացի ու ֆրանսիացի քաղաքական գործիչների ու դիվանագետների շրջանում: Օրինակ, 1895 թ. հուլիսի 26-ին Չեստերում տեղի ունեցած միտինգի ժամանակ Վ. Գլադստոնը հայտարարում էր. «Սուլթանը և Կ.Պոլսի կառավարությունը ֆորմալ ձևով հավաքագրեցին ոչ մի ռազմական կարգապահություն չունեցող մարդկանց, նրանցից կազմեցին կեղծ հեծելազորային գնդեր և այնուհետև արձակեցին նրանց՝ լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը»⁵³: Ավելին, դա չէին թաքցնում նաև իրենք՝ քրդերը: Թուրքիայում Բրիտանիայի հյուպատոս Հենսթոնն Էրզրումից գրում էր, որ քրդերից շատերը «բացահայտորեն հաստատում են, որ նրանք նշանակվել են՝ ճնշելու հայերին, և որ նրանք հավաստիացում են ստացել, որ պատասխանատվության չեն կանչվի դատարանի առջև քրիստոնյաների դեմ գործած ցանկացած բռնության համար»⁵⁴: Ընդհակառակը, դատարանները բացահայտ պաշտպանում էին հայերի դեմ իրականացվող կամայականությունները: Համիդիե զինվորը փաստացի միապետ էր իր գործերում: Չկար որևէ օրենք, որը նա ստիպված կլիներ հարգել, նա ուներ անսահմանափակ իրավունքներ, կարող էր անել ինչ-որ ցանկանար, իսկ եթե տեսականորեն քաղաքացիական կամ ռազմական դատարանը կանչեր նրան պատասխանատվության գողության կամ սպանության համար, Չեքի փաշան կազատեր նրան⁵⁵:

Բերենք անպատժելիության մի քանի օրինակ: «Դրոշակը» հաղորդում է. «Մուշում թափառական քիլուտերը օր ցերեկով օսմանեան զօրանոցէն մարթինի հրացան կ'տանան և շուկայէն զոռոգութեամբ անցնելով՝ առանց քաշուելու կ'ըսեն. «այս բոլորը ֆլլահներու (հայերու) համար է»: Իսկ Ալաշկերտում. «քրդերն ու թուրքերը, կառավարությունէն ստացած արտոնություններէն սիրտ առնելով, անասելի գազանություններ կընեն: Քրդական անկանոն գորքերը գյուղէ ի գյուղ շրջելով բարբարոսություններ ի գործ կը դնեն, կհափշտակեն տներու մեջ եղած-չեղածը, զարնելով ու անարգելով

51 Լեոն, *Անցյալից*, 103:

52 АВПР, ф.30, оп.517, д.1571, л.5, հղված է ըստ Բայբորդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 207:

53 *Facts about Armenia: Sassoon as reported by a native, Mr. Gladstone's speech, and Dr. Dillon's article on Armenia* (New York: E. Scott, 1895), 17-18.

54 FO 424-169, 21, FO 424/169, 30 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134; Peter Balakian, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response* (New York: Harper Perennial, 2004), 50; *Great Britain. Foreign Office, Turkey*, No. 1 (1892), 23.

55 Hepworth, *Through Armenia on Horseback*, 232.

կհեռանան»⁵⁶: Մոտ երկու տասնյակ քրդեր, հարձակվելով Դերսիմի Շորտա գյուղի վրա, կողոպտում են, մի քանիսին վիրավորում և մեկ հոգու սպանում: «Տեղական կառավարությանը լուր է տրվում... Իզուր են ջանում խեղճ հայերը, քանի որ կառավարությունը չի կարող քրդերի վրա բռնություն բանեցնել: Մանավանդ, երբ սպանվողը հայ էր, բողոքներին երբեք կարևորություն չէր տրվում...»⁵⁷:

Իշխանությունները հայկական գյուղերում հետևողականորեն տեղակայում էին համիդիե գնդեր՝ նաև հայերին տնտեսապես հյուծելու նպատակով: Բացի բացահայտ թալանից, քրդական հեծելազորի հրամանատարները հաճախ դրամով վարկավորում էին մշտապես կարիքի մեջ գտնվող հայերին՝ որպես երաշխիք ընդունելով նրանց անասունները, տներն ու բերքը, աստիճանաբար դառնում էին այդ գյուղերի տերերը՝ աղաներ: Չկարողանալով պարտքերը վերադարձնել՝ հայերը ստիպված էին կատարել տարբեր տեսակի աշխատանքներ, իրենց լավագույն ձիերին հանձնել քրդերին և նույնիսկ տալ իրենց աղջիկներին⁵⁸: Տնտեսական կյանքը դժվարացնում էր նաև անվտանգության ցածր մակարդակը: Նույնիսկ մոտ բնակավայրերի միջև հաղորդակցությունը խիստ դժվարացել էր, անվտանգ երթևեկելը համիդիե հեծելազորի պատճառով անհնար էր դարձել⁵⁹:

Վիլայեթների իշխանություններն աշխատում էին հնարավորինս գործ չունենալ համիդիեների հետ, և սա իր հետ բերում էր ոչ միայն հայերի դժգոհությունը: 1900թ. գարնանը Վասպուրականի հարյուրավոր թուրք գյուղացիների կողմից մի բողոք ուղարկվեց Վանի վալիին համիդիեների վայրագությունների մասին: Երբ կառավարությունը հրաժարվեց քայլեր ձեռնարկելուց դրանք կանխելու ուղղությամբ, Վանի թուրքերը պատրաստեցին նաև Բարձր դռանն ուղղված մի հանրագիր՝ նույն պահանջներով՝ դրանք չկատարելու դեպքում ցանկանալով ստանալ այլ բնակչության վայրեր գաղթելու հնարավորություն: Հայդերա աշիրեթի պետերը, համիդիե հրամանատար Հուսեյն փաշան, Հաջի Խեյմուր և Էմին փաշաները տեսնելով, որ խնդիրը բարդանում է, հանգստացրին թուրքերին՝ խոստանալով դադարեցնել նրանց դեմ գործողությունները⁶⁰: Որոշ տեղերում հուսահատության եզրին հասած տեղական բնակչության և համիդիե գնդերի միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ: Օրինակ, 1900 թ. արաբական շամմար ցեղը զինված հակահարված տվեց Իբրահիմ փաշայի համիդիե գնդերին⁶¹:

Այսպիսով, անմիջապես բացահայտ գործադրվեց քրդական համիդիե ջոկատների ստեղծման մեկ այլ նպատակ՝ մշտական ճնշման տակ պահել հայկական

56 «Լուրեր Տաճկահայաստանից», *Դրոշակ* (Վիեննա), փետրվար 1892 թ., 5:

57 *Հւշակ*, 12 դեկտեմբերի 1890 թ., 6-7:

58 АВГПР, ф. Посольство в Константинополе, 1907, д. 4087, лл. 76-79 հղված է ըստ Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 92:

59 Նույն տեղում:

60 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 232-233:

61 Նույն տեղում, 234:

բնակչությանը՝ հնարավորինս թուլացնելով նրանց նաև տնտեսապես: Քրդերին նաև տրվում էին կայսրության հետ լավ հարաբերություններ պահելու, նրա կողմից հովանավորվելու առավելությունները: Հանցանքները քողարկելու, դրանք չնկատելու և փաստացի օրինականացնելու քաղաքականությունը Կ.Պոլսի կողմից քրդերին հանցակցության միջոցով կայսրությանն առավել ամուր կապերով միացնելու առաջին փորձն էր:

Հայկական կոտորածները և քրդերի դերակատարումը

1894-96 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցան հայ բնակչության զանգվածային, լայնամասշտաբ կոտորածներ, որին զոհ գնացին կայսրության մոտ 200-300 հազար հայ քաղաքացիներ: Կոտորածները նախաձեռնվեցին որպես պատասխան Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսից հետո միջազգային դիվանագիտական օրակարգ մտնելու և հայերի հետևողական պահանջների Աբդուլ Համիդ II-ին՝ ի կատար ածել այդ պայմանագրից բխող Օսմանյան կայսրության պարտավորությունները⁶²: Սակայն ո՛չ օսմանյան կառավարությանն ուղղված խնդրագրերը, ո՛չ եվրոպական տերություններին հղած բողոքներն ու պահանջները կյանքի կոչելու իրենց իսկ կողմից հայտարարված բարենորոգումները, օգուտ չտվեցին: Օսմանյան կառավարությունը ձգձգում էր բարենորոգումների իրականացումը, իսկ Արևմուտքն այս հարցն օգտագործում էր ընդամենը որպես տնտեսական ու քաղաքական նպատակներով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց:

1894-96 թթ. կոտորածները սուլթանի կողմից հայերին պատժելու փորձ էին՝ բարեփոխումներ պահանջելու և եվրոպական տերություններին դիմելու չտեսնված հանդգնության համար⁶³: Բացի դրանից, նվազեցվում էր հայկական ժողովրդագրական կշիռն Արևմտյան Հայաստանում: Հարյուր հազարավոր հայեր ոչնչացվեցին, տասնյակ հազարավորներն էլ արտագաղթեցին երկրից, քանի որ զրկվել էին գոյության համար անհրաժեշտ ամեն ինչից: Կոտորածները նաև հարվածեցին հայերի տնտեսական աճող ներուժին:

Քրդերն իրենց հերթին ակտիվորեն մասնակցեցին այս ջարդերին:

62 Համաձայն 1878 թ. հուլիսի 1-ին ստորագրված Բեռլինի պայմանագրի հոդված 61-ի. «Բարձր դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը»: Այսպիսով, համիդիե ջոկատների ստեղծումը ուղղակիորեն Բեռլինի դաշնագրի խախտում էր, քանի որ այն ոչ թե ապահովում էր հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից, այլ ընդհակառակը՝ ստեղծում էր քրդերի կողմից հարուցվող խնդիրների ևս մեկ օջախ:

63 Vahakn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (New York: Berghahn Books, 2003), 146.

Սասունի կոտորածը

Դեռ 1891-94 թթ. Սասունում սուլթանը փորձեց քրդերին ներքաշել հայերի կոտորածների մեջ: Կառավարության հրահանգով Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան հորդորում էր քրդական ցեղապետերին ու շեյխերին, որպեսզի նրանք աշիրեթներին ոտքի հանեն կիսասանկախ կարգավիճակ ունեցող Սասունի հայկական բնակավայրերի դեմ: 1891-1894 թթ. ընթացքում սասունցիները համառորեն դիմադրում և մի քանի պատասխան հակահարված էին հասցնում: Այսպես, 1893 թ. հունիսին նրանք հետ մղեցին քուրդ ցեղապետ Հուսեյնի ջոկատի հարձակումը, ով ձերբակալվեց եվրոպական տերությունների ճնշման ներքո, սակայն շուտով ազատ արձակվեց, իսկ հետո սուլթանի ձեռքից ստացավ շքանշան, փաշայի տիտղոս և գեներալի կոչում⁶⁴: Հաճախ Սասունում բնակվող քրդերը միանում էին հայերին, եկվոր քրդերի դեմ պայքարում՝ իրենց երկրամասից քշելու համար⁶⁵: Հայերին օգնելու կամ կոտորելու հողի վրա նույնիսկ ներքրդական արյունալի բախումներ են տեղի ունենում Մանազկերտում և Մուշում⁶⁶:

1894 թ. ամռանը Սասունը պաշարման օղակի մեջ վերցվեց: Չորրորդ զորաբանակի հրամանատար Չեքի փաշան Բիթլիսի կուսակալի մոտ հատուկ խորհրդակցություն հրավիրեց օսմանյան բարձրաստիճան կառավարական և զինվորական ներկայացուցիչների ու բազմաթիվ քրդական ազդեցիկ ցեղապետերի մասնակցությամբ (բազարանցոց, որշկոտանցոց, խարըկանցոց, Փէնջարի, Ծովասարի վրա բնակվող խարզանցոց Բշերեկի մեծ աշիրեթապետը, Բելիկցոց պետերը, Խոյթի Բոնալիփի բոլոր իշխանները, մողըկանցի, խէչանցի գլխավորները, բազըկանցոց, ժանրդանցոց, խըկանցոց, խեյանցոց և Սլիվանիկի բոլոր ցեղապետերը և հյուսիսային բերդերու համիդիների Բեհմեդդին փաշան), որի ընթացքում հաջողվեց հայերի դեմ գործողություն իրականացնելու շուրջ համախմբել քրդական տարբեր ցեղերի, և որոշվեց Սասունի շարժումները խեղդել արյան մեջ: Հրաման տրվեց բոլոր քուրդ ցեղերին անհապաղ հավաքվել և հարձակվել Սասունի վրա: Միայն Բուլանըլիսի հայդարանցիք 300 հեծյալներով ներկայացան⁶⁷: Հայ գործիչներից ոմանք՝ Դամադյանը, Ռուբեն Շիշմանյանը (Երզնկացի քեռին), փորձեցին քրդերի հետ փոխըմբռնման եզրեր գտնել և նրանց չեզոք դիրքս ապահովել, բայց ապարդյուն⁶⁸:

Չեքի փաշայի 12- հազարանոց բանակը ստացավ կառավարությունից օժանդակ ուժեր Դիարբեքիից, Բիթլիսից, Մուշից, Էրզրումից, Խարբերդից, անգամ Հալեպից ու

64 *Turkey, N 1 (1896)*, Part 1 (London: H.M.S.O., 1896), 2, հղվում է ըստ *Հայոց պայքարություն*, հ. III. Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես – XIX դ. վերջ), գիրք առաջին (XVII դ. երկրորդ կես – 1918 թ.) (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Չանգակ-97», 2010), 516:

65 АВІР, Посольство в Константинополе, д. 3176, л. 24-25, *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов*, ред. М. Г. Нерсисян (Ереван: Айастан, 1983), 25; «Վերջին լուր», *Հնչակ*, 25 հուլիս 1892 թ., 62:

66 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 105:

67 «Սասնոյ ապստամբութիւնը եւ կոտորածը», *Դրօշակ*, նոյեմբեր 1894, 2; Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 375:

68 Բայբորդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 217:

Բաղդադից, որին միացան նաև համիդիե գնդերը՝ Բեհաեդդին փաշայի, Մահմադ էլ Աղասիի և այլ հրամանատարների գլխավորությամբ⁶⁹: Սասունը դարձավ այն վայրը, որտեղ փորձարկվելու էին համիդիե գնդերի մարտունակությունը և նրանց նվիրվածությունը սուլթանին:

Սասունի հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց, սակայն ուժերն անհավասար էին: Թուրքական և քրդական զորքերն ավերեցին շրջանի 40-ից ավելի հայկական գյուղեր, կոտորեցին ավելի քան 10 հազար մարդ: Հազարավոր երեխաներ և կանայք առևանգվեցին քրդերի և թուրքերի կողմից: Քրդերի և զորքերի դաժանություններն աննկարագրելի էին⁷⁰: Սպանությունները զանգվածային էին և առանց տարբերակելու զոհերի սեռն ու տարիքը: «Նրանք բոլորը անողոք սպանվեցին մղձավանջային արարածների, սև հագած զինվորների և սպիտակներով քրդերի կողմից: Չինվորները, քրդերը և գապթիները⁷¹ հետապնդում էին հայերին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին, և խոցում ու սպանում առանց տարիքի կամ սեռի խտրության, բոլոր նրանց, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը»⁷²:

Հրամայված էր ոչնչացնել ամենքին և ամեն ինչ: Անկախ այն բանից, մարդիկ հավատարի՞մ են եղել, վճարե՞լ են հարկերը, թե՞ ոչ: Գյուղերից մեկի քահանան և երևելիները գնացին թուրք սպայի հետ հանդիպման՝ վճարած հարկային անդորրագրերով՝ որպես իրենց հավատարմության ապացույց և առհավատչյա, ողորմություն հայցելով, սակայն գյուղը շրջապատված էր, և բոլորին սրախողխող արեցին⁷³:

Այս գործողությունների համար Ջեքի փաշան սուլթանից շքանշան ստացավ, իսկ քրդական չորս ցեղապետերը կառավարության կողմից պարգևատրվեցին մետաքսյա դրոշներով⁷⁴:

Մայիսյան բարենորոգումների ծրագիրը և քրդերը

Սասունի կոտորածները միջազգային լայն արձագանք ստացան: Մամուլը լիքն էր տեղեկություններով, հոդվածներով. եվրոպական քաղաքներում նույնիսկ հանրահավաքներ կազմակերպվեցին՝ Թուրքիային դատապարտելու համար⁷⁵: Այն նաև առիթ հանդիսացավ, որպեսզի մեծ տերությունները վերջապես անդրադառնան Բեռլինի՝ 1878 թ. կոնգրեսի 61-րդ հոդվածից բխող իրենց պարտավորություններին: Կ.Պոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի դեսպաններն ընդհանուր առմամբ համաձայնություն են տալիս Մեծ Բրիտանիայի կողմից հիմնականում Հայոց Պատրիարքարանի առաջարկ-

69 Turkey, N 1 (1896), Part 1 (London: H.M.S.O., 1896), 2.

70 *Геноцид армян в Османской империи*, 25-57; «Սասնոյ սպատամբութիւնը եւ կոտորածը», *Դրօշակ*, նոյեմբեր, 1894 թ., 2-4:

71 Ժանդարմները:

72 Turkey, no. 1 (1895), part 1, p. 171 հղվում է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 141:

73 “The Armenian Crisis in Turkey,” *Woman’s Journal*, April 6 (1895): 106, հղվում է ըստ Balakian, *Burning Tigris*, 56.

74 *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, գիրք 1 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981), 519:

75 Լեո, *Անցյալից*, 104:

ների հիման վրա մշակված բարենորոգումների մի ծրագրի, որը և 1895 թ. մայիսի 11-ին սուլթանի կառավարությանը ներկայացվեց:

Ծրագրում հայաբնակ վեց վիլայեթներում (Էրզրում, Բիթլիս, Վան, Սվլազ, Մամուրեթ-ուլ-Ազիզ (Խարբերդ), Դիարբեքիր) վարչական, ֆինանսական և դատաստանական կազմակերպության մեջ, բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ առանձին գլուխներից բացի, կար 9-րդ գլուխը, որը կոչվում էր «Վերահսկողություն քրդերի վրա»: 24-րդ հոդվածում նշվում էր, որ յուրաքանչյուր նահանգում պետք է ստեղծվի մի առանձին պաշտոն՝ Աշիրեթ-Մեմսուրի թափառական քրդերին հսկելու համար: Պաշտոնյան օժտվում էր լայն լիազորություններով և պահակախմբով: «...Եթե նրանք որևէ չարագործություն անեն գյուղացիների սեփականության դեմ կամ որևէ զրկանք հասցնեն գյուղացիներին, այդ օրից սկսած կարգելվի նրանց որևէ տեղափոխություն կամ քոչ»⁷⁶: Փորձ էր արվում նաև քրդերին նստակյաց կյանքի և երկրագործության ընտելացնելու՝ նրանց որոշ հողեր հատկացնելով. «...այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատվելը չի կարող որևէ վնաս հասցնել նստակյաց ազգաբնակչության բարեկեցության և խաղաղությանը»⁷⁷: 10-րդ գլուխը վերաբերում է հենց «Համիդիե հեծելագործ»-ին: Ըստ առաջարկի՝ այն կարող է «գործածվել և բանակել միայն կանոնավոր զորքի գնդերի հետ միասին... Սովորական ժամանակներում, երբ համիդիե հեծելագունդը ծառայության մեջ չէ, չպետք է կրի ո՛չ նշանազգեստ և ո՛չ էլ զենք»⁷⁸:

Սակայն այս ծրագիրը մյուսների նման չիրագործվեց, քանի որ Աբդուլ Համիդը Հայկական հարցի վերաբերյալ բոլոր հնարավոր քննարկումները կանխելու համար հայտարարեց, որ չի ցանկանում սահմանափակվել իր կայսրության միայն մի մասում, այսինքն՝ հայկական վեց վիլայեթներում վարչական բարենորոգումներ իրականացնելով, այլ դրանք ուզում է տարածել կայսրության բոլոր վիլայեթների վրա⁷⁹: Նա 1895 թ. օգոստոսին թուրքական կառավարության ծրագիր առաջ քաշեց, որը փաստացի մայիսյան բարենորոգումների ծրագրի մերժում էր⁸⁰:

Հայկական կոտորածների բնույթը և հետևանքները

Կառավարության թողտվության պայմաններում քրդական ասպատակությունները շարունակվում էին: Փաստացի քրդերին տրված էր գործողությունների բացարձակ ազատություն: Բերենք ընդամենը մեկ օրինակ Բուլանըլի Շեյխ-Աղուբ գյուղի վրա նրանց կատարած հարձակումից և թալանից: Համիդիե հեծյալները գալիս մտնում էին հայ գյուղացիների տները և վերցնում էին այն ամենը, ինչ ցանկանում էին: Եթե տան տերը ուզում էր հետ ստանալ գողացվածը, ապա պարտավոր էր վճարել և թալանած

76 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ Ջոն Կիրակոսյան (Երևան, «Հայաստան», 1972), 144:

77 Նույն տեղում, 143:

78 Նույն տեղում, 144:

79 Նույն տեղում, 148:

80 Turkey, N 1 (1896), *Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty's Consular Officers in Asiatic Turkey* (London: H.M.S.O., 1896), 98-100.

ապրանքը հետ գնել քրդերից: 1894 թ. ամռանը համիդիները գյուղից երկու հարյուր ոչխար ընտրեցին ու տարան: Գյուղացիները բողոքեցին, և կառավարությունը երեսունի չափ զինվոր և ոստիկան ուղարկեց՝ ոչխարներին հետ բերելու համար, սակայն համիդիները կրակ բացեցին նրանց վրա, և զինվորները չհամարձակվեցին պատասխան կրակ բացել՝ պատճառաբանելով, որ հրաման չունեն կրակելու, իսկ եթե կրակեն, և նրանցից մեկը սպանվի, փրկություն չի լինի⁸¹:

Երբ 1895 թ. սեպտեմբերի 18-ին հայերը փորձեցին բարենորոգումների խափանման հարցը նորից բարձրաձայնել և Կ.Պոլսում մի քանի հազարանոց թափորով շարժվեցին դեպի Բարը Ալի հրապարակ՝ իրենց հետ տանելով պահանջագրեր ապօրինություններին վերջ դնելու վերաբերյալ, նրանց ճանապարհը կտրող թուրքական ոստիկանությունը հրահրեց արդեն իսկ պատրաստված, մահակներով զինված թուրք և քուրդ խուժանի հարձակումը ցուցարարների վրա⁸²: Մի քանի օրվա ընթացքում Կ.Պոլսում կոտորվեց 2.000 հայ: Կ.Պոլսի ջարդերն ազդանշան էին գավառներում հայերի զանգվածային կոտորածների: Դրանք նաև ցույց տվեցին, որ եվրոպական տերությունները չեն պատրաստվում որևէ քայլ ձեռնարկել՝ սահմանափակվելով ձևական բողոքի նոտաներով:

Հայկական ջարդերը ներառեցին բոլոր վեց վիլայեթները՝ Սվազը, Խարբերդը, Դիարբեքիրը, Էրզրումը, Վանը և Բիթլիսը, ինչպես նաև Անկարայի (Կեսարիան շրջակայքով), Հալեպի, Տրապիզոնի վիլայեթները և Իզմիրի անկախ սանջակը: Հայաբնակ միակ վիլայեթը, որ զերծ մնաց ջարդերից, Ադանան (բացառությամբ Պայասի և Չոք-Մարգվանի՝ Դորթոլի) էր: Տեղի ունեցավ մեծ և փոքր չափերի հասնող *սոգրոմ*ների մի ամբողջ շարք Օսմանյան կայսրության տարածքով մեկ: Սպանություններն իրականացվում էին ամենադաժան ձևերով՝ ոչ միայն սառը զենքով, այլ նաև կենդանի այրելով և խեղդամահ անելով⁸³:

Մեծ տերությունները միայն նոյեմբերի կեսերին համաձայնության եկան՝ համատեղ գործողություն իրականացնելու, և դեկտեմբերի 12-16-ը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմանավերը մտան Դարդանել: Սա ժամանակավորապես դադարեցրեց հայկական կոտորածների առաջին փուլը:

1896թ. օգոստոսի 14 (26)-ին Կ.Պոլսում մի խումբ հայ երիտասարդներ գրավեցին «Բանկ Օտոմանը»՝ փորձելով միջազգային հանրության ուշադրությունն ուղղել դեպի հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները և ստիպել սուլթանին միջոցներ ձեռնարկել կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներ իրականացնելու ուղղությամբ: Սակայն դրամատան գրավումն ընդամենը առիթ դարձավ՝ մայրաքաղաքում հայերի կոտորածները վերսկսելու համար, որոնց մի քանի օրվա ընթացքում զոհ գնաց ավելի քան 10 հազար մարդ: Կոտորածները դուրս եկան մայրաքաղաքի սահմաններից և տարածվեցին Արևմտյան Հայաստանի սահանգներում:

81 «Պոլսանըզ Շելխ-Աղուպ գիլի բնակչաց կրած հարստահարությանց նկարագրութենէն մի թերթ», *Հւշակ*, 15 հունիսի 1895 թ., 67:

82 Edwin Pears, *Life of Abdul Hamid* (London: Constable & Company Ltd, 1917), 253-254.

83 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 121-163.

Քրդերն ակտիվորեն մասնակցեցին կոտորածների և թալանի բոլոր փուլերին Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Այսպես, Ուրֆայում կոտորածները սկսվեցին քուրդ շեյխ մոլլա Սայիդ Ահմեդի կողմից մի հայ տղամարդու ծիսական սպանությունից, երբ վերջինիս պատկեցրին գետնին և գլուխը կտրեցին⁸⁴:

Խնուսում բոլոր չարագործություններ անողները համիդիե խմբերն էին, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 150-400 հոգուց, որոնք մերթընդմերթ, միացած կանոնավոր զորքին, ցերեկով հարձակումներ էին գործում: Յուրաքանչյուր գյուղի թալանը տևում էր 3-4 օր: Ընդ որում այդ ամենն անում էին բացահայտ՝ հայտարարելով. «Շաքիր փաշան թագավորի անունից հրաման է տվել քրդերին, թե հայերի գլուխներ կտրեք և նրանց ունեցվածքը կողոպտեցեք»: Իսկ քրդերի գործողությունների դեմ հայերի գանգատին կայմակամը պատասխանում է. «Ձեր վրա քրդերի հարձակման ժամանակ մի՛ դիմադրեք, որովհետև թագավորի հրամանն է»⁸⁵:

Մի ականատես էլ վկայում է Խարբերդից. «Մենք մեկ շաբաթ կամ տաս օր շրջապատված էինք դաշտում այրվող գյուղերի պատներով: Աստիճանաբար կրակի և դաժան չարագործների պատը մոտեցավ քաղաքին: Հարձակումը նախատեսվում էր կիրակի, նոյեմբերի 10-ին, քաղաքում որոշ խմբեր հարձակում գործեցին, բայց զինվորները քշեցին նրանց: Ներխուժող քրդերը, ռեզիստները (քրդերի տեսքով քողարկված թուրք զինվորները) դրան պատրաստ չէին: Երկուշաբթի՝ նոյեմբերի 11-ին, հարձակումը սկսվեց Հուսեյնի գյուղում (քաղաքից մի փոքր հեռավորության վրա գտնվող գյուղ), որտեղ 200 մարդ սպանվեց, և շատերը վիրավորվեցին, ապա շարժվեցին դեպի Սինամուղ կիրճ (քարքարոտ մի բարձունք՝ հին ամրոցի ավերակներով), իսկ հետո՝ քաղաքի արևելյան հատված⁸⁶:

Նոյեմբերի 5-ին տեղի ունեցած Բալուի դաժանությունները նկարագրվում էին հետևյալ կերպ. «Շուկան և 50 կամ 60 տներ թալանվել են զինվորների և քրդերի կողմից: Հետո կառավարական տեղալը (բրոքեր) հրամայեց, որ մարդիկ խանութներ բացեն երեք մեղիջիղների (արծաթե դուլար) տուգանքի սպառնալիքով: Ասաց, որ ամեն ինչ անցել է, և այլևս ոչ մի վտանգ չի սպառնում: Քրդերը նորից եկան, բայց քշվեցին դեպի գյուղեր, որոնք թալանեցին: Շեյխը և նրա որդին քարոզում էին քրիստոնյաների դեմ... Շեյխի որդին ասաց, որ ծարավ է հայերի արյան համար, և հապաղելն անմտություն է: Նա հայտարարեց, որ պետք է անձամբ 43 մարդ սպանի: Նոյեմբերի 11-ին քրդերը հանկարծակի հայտնվեցին և սկսեցին սպանել: Միայն երկու հայեր դիմադրեցին: Մահացածների թիվը գնահատվում է 1200-2000: Մատուռը ավերվեց, տնակն ու դպրոցը վերածվեցին քարակույտերի: Վերապրածները մահանում են սովից: Ոչ մի նպաստ չի թույլատրվում: Բալուի շուրջ քառասունչորս գյուղեր ամբողջովին թալանված են, մոտ յոթը՝ հրդեհված: Իտոյմաթից 20-30 կանայք եկել են բացարձակապես մերկ: Շատերը խոշտանգված են»⁸⁷:

84 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 108:

85 Նույն տեղում, 110:

86 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 428-429.

87 Նույն տեղում, 441:

Մարդինից մի ականատես նշում էր, որ Դիարբեքիում խռովությունը սկսվեց նոյեմբերի 1-ին՝ ուրբաթօրյա աղոթքից հետո, և «...դրսից եկած քրդերը ձիավարելով թալանեցին և կրակի տվեցին շուկայի խանութները և հարևանությամբ գտնվող տները»: Ավելի ուշ. «...քրդերին դուրս քշեցին քաղաքից և քաղաքի դարպասները փակեցին նրանց առջև, նրանք ուշադրությունը տեղափոխեցին դեպի գյուղեր: Մեկը մյուսի հետևից գրավվեցին, թալանվեցին և շատ դեպքերում այրվեցին, կոտորածներն ընդհանուր առմամբ կախված էին գյուղերի կողմից դիմադրության աստիճանից»: Դիարբեքիից մինչև Բիթլիսի նահանգի Սիրտի սահման քրիստոնյաների բոլոր գյուղերն ավերվեցին: Քրդերը համառորեն պնդում էին, որ քրիստոնյաների կոտորածի հրաման կար, սակայն Մարդինի քրիստոնյաները կաշառել են կառավարությանը՝ թաքցնելու այն և պաշտպանելու հայերին: Երբ քրդերը հասկացան, որ կառավարությունն ու քաղաքը միասնական պաշտպանական միավոր են կազմել, նրանք նահանջեցին և հարձակման ալիքը տարածեցին արևելք՝ ճանապարհին վերցնելով Նիսիբիսը և մոտ քսան քրիստոնյա գյուղեր: Վերջիններից շատերը նույնպես այրվել են: Միոյատը, ինչպես նաև Մարդինը դիմադրեց բոլոր հարձակումներին⁸⁸: Նկատվում էր մարտավարական որոշակի նմանություն: Քրդերին չէին թողնում քաղաք մտնել, կամ առաջին իսկ հարձակումից հետո նրանք դուրս էին մղվում քաղաքից և նրանց՝ սպանելու ամբողջ ձգտումը տեղափոխվում էր շրջակա գյուղերի վրա:

Քրդերն ակտիվորեն մասնակցեցին Վանում հայերի դիմադրությունը կոտրելուն: Քաղաքի վրա հարավից հարձակվել էին Նորատուզից, Խոշաբից, Աղբակից եկած քուրդ ամբոխն ու համիդիե հեծյալները: Իսկ հյուսիսային կողմից գրոհում էին չամսիկցի, թակուրացի, մուկուրցի, մըլանցի քուրդ համիդեականները՝ Սաադեդդին փաշայի հրամանատարությամբ: Արևմտյան կողմից թուրքերին միացել էին Ոստանից, Գավաշից, Կարճկանից և Շատախից եկած քրդական հրոսակալամբերը⁸⁹: 1896 թ. հունիսի 3-8-ը տեղի ունեցած Վանի ինքնապաշտպանության թեժ մարտերն ավարտվեցին պայմանավորվածությամբ, որ ինքնապաշտպանության կազմակերպիչները կթողնեն Թուրքիան և թուրքական զորքերի ուղեկցությամբ կհեռանան Իրան: Մոտ հազար տղամարդ՝ Վանի երիտասարդության սերուցքը, սահմանի մոտ կոտորվեց քրդական ցեղերի ակտիվ մասնակցությամբ⁹⁰: Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ նահանջող զինվորներին շրջապատում և կոտորում են Խանասորի դաշտում դարանակալած Շարաֆ բեկի⁹¹ հրամանատարության տակ գտնվող քրդական հրոսակալամբերը, իսկ

88 Նույն տեղում, 475-476:

89 *Հայ ժողովրդի պայքարություն*, հ. 3, գիրք 1, 560:

90 Balakian, *The Burning Tigris*, 61; Ռաֆիկ Հովհաննիսյան, «Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 7 (1976), 58-66:

91 1897 թ. հուլիսին ՀՅԴ Կովկասի շրջանային բյուրոյի որոշմամբ իրականացվում է Խանասորի արշավանքը, որը վրեժխնդրության գործողություն էր Վանից նահանջած զինվորների ոչնչացման համար: Թիբախը մագրիկ ցեղն էր: Թեև ցեղապետ Շարաֆին հաջողվում է փախչել, սակայն ցեղը մեծ կորուստներ է տալիս (մանրամասն տե՛ս Համլետ Գևորգյան, *Նիկոլ Դուման* (Երևան, «Հրագրան», 2002), 58-107, Հովիկ Գրիգորյան, *Հայ ազապագրական պայքարի մարտավարությունը 1895-98* (Երևան, «Նոյան տապան», 2002), 62-58, Միքայել Վարանդեան, *Հ. Յ. Դաշնակցության պայքարություն* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1992), 149-156:

Պետոյի և Մարտիկի գլխավորությամբ սահանջող խումբը Չուխ-Կետուկում և Գարահիսար լեռան լանջերին ոչնչացվում է համիդեականների կողմից⁹²:

Խոսելով քրդերի մասնակցության մասին՝ պետք է շեշտել, որ այն զանգվածային էր և չէր սահմանափակվում միայն համիդիե ջոկատների կամ զենք կրելու ընդունակ տղամարդկանց մասնակցությամբ: Օրինակ, Մարաշից ականատեսը նկարագրում է. «...ամենասարսափելին քուրդ և թուրք կանանց ոգևորված լու-լու-լու գոչուններն էին, որոնցով նրանք քաջալերում էին իրենց տղամարդկանց հարձակման»⁹³:

Նման զանգվածային մասնակցությունը չի կարելի բացատրել միայն կայսրության շահերին համապատասխան քրդերին օգտագործելու հանգամանքով: Քրդերը գործում էին առաջին հերթին սեփական հետաքրքրությունների ծիրում: Ջարդի օրերին սուլթանը և իր կառավարությունը քրդերին ներշնչում էին, որ բնաջնջելով հայությանը՝ նրանք կարող են դառնալ և՛ Քրդստանի, և՛ Արևմտյան Հայաստանի լիիրավ տերը⁹⁴: Դիլլոնը դա համարում է գոյություն ունեցող ծրագիր, որ առաջարկվել է կայսրության որոշ բարձրագույն պաշտոնյաների կողմից՝ դուրս մղել հայերին սահմանային շրջաններից և նրանց փոխարինել մահմեդականներով⁹⁵: Համիդյան կոտորածների հետևանքով տասնյակ հազարավոր հայեր հեռացան Արևմտյան Հայաստանից, իսկ նրանց լքված գյուղերն արագորեն լրացվեցին քրդերով և չերքեզներով: Ա-Դ-ն գրում է, որ Հայոց Ձորում քրդերը հաստատվեցին գլխավորապես 1896 թ. կոտորածներից հետո: Խոշաք և Ոստան գավառակներում. «...կես դար առաջ ապրում էին բավականին մեծ թվով հայեր, այժմ... նրանց տեղը բռնել են... քուրդ տարրերը»: Մշո դաշտի 21 գյուղերում 1889 թ. 117, իսկ 20-րդ դարի սկզբում արդեն 554 քրդական տնտեսություն կար: Բազմաթիվ շրջաններ՝ ժամանակին հայերով բնակեցված, կա՛մ ամայացել են, կա՛մ դարձել քրդաբնակ ու թուրքաբնակ բնակավայրեր⁹⁶: 1893 թ. օգոստոսի 20-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարարին Թիֆլիսից գրված նամակում շարադրվում է. «45 թուրքահայ ընտանիք անցնում են սահմանը և հաստատվում Կարսի մարզում, և պատճառաբանում դա թուրքական իշխանությունների քաղաքականությամբ, երբ հայերը բռնի կերպով դուրս են մղվում սահմանային գոտուց, և իրենց հողերի վրա բնակեցվում են քրդերը»⁹⁷:

Կոտորածները նաև տնտեսական շահ ապահովեցին քրդական որոշ ցեղերի համար: 1890-ական թվականների ջարդերից հետո օսմանյան կառավարությունը երկրից հեռացած հայերի հողերը և գույքը փոխանցեց քրդերին: Հայերի համատարած հողագրկումը բերում էր նրանց տեղում քրդական վերնախավի տիրույթների ընդլայնման և նորերի առաջացման⁹⁸:

92 «Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից», *Դրոշակ*, 15 օգոստոսի 1896 թ., 139:

93 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 451, 452.

94 Սասունի, *Քյուրյր ազգային շարժումները*, 159:

95 *Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне* (Москва: Разсвѣтъ, 1896), 6.

96 Ա-Դ-ն, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 183, հղված է ըստ *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 6 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981), 276:

97 АВІР, Полятархив, д. 3431, л. 307-308, հղված է ըստ *Геноцид армян в Османской империи*, 23:

98 Քրդերի հարձակումների և կամայականությունների հետևանքով հայկական գյուղերի դատարկ-

Թեև 1890-ական թթ. քրդերը հիմնականում ներգրավվեցին հայերի կոտորածներում, սակայն առանձին ցեղապետերի (օրինակ՝ Ջեզիրեից հյուսիս բնակվող քրդական ցեղերի առաջնորդ Մուստաֆա աղան, Մոկսի քրդերի ցեղապետ Մուրթուլլա բեյը, Հուսեին փաշան ադիլջևագում, Հաջի խանը Նորդուզում, Իբրահիմ փաշան Շեիրիվերանում և այլն⁹⁹) գլխավորությամբ գործող ցեղեր չմասնակցեցին կոտորածներին և երբեմն հայերին վերցրին իրենց պաշտպանության տակ:

Ռիչարդ Տերմենը դա բացատրում է այն հանգամանքով, որ. «...բազմաթիվ քրդական պետեր գիտակցում էին, որ հայերի ոչնչացումը իր հետ կրեթի հողագործության և արդյունաբերության լրիվ անկում, ինչի պատճառով նրանք ոչ միայն չէին կոտորում իրենց շրջաններում ապրող հայերին, այլև հակառակը, նրանց պաշտպանում էին զինվորական քրդերից»¹⁰⁰: Քրդերը միշտ էլ թալանել են քրիստոնյա գյուղերը, բայց երբեք ոչ այդպիսի չափերով և վայրագությամբ, քանի որ միշտ գիտակցել են, որ քրիստոնյաներին ամբողջությամբ քայքայելը հակասում է իրենց իսկ շահերին, քանի որ այդպես իրենք սպանում են ոսկե ձվեր ածող սագին¹⁰¹:

Համիդյան կոտորածներին մասնակցած ոճրագործները չէին պատժվում: Ավելին, սուլթանը մերժեց Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայ բնակչության դահիճ, հայգերանլի ցեղի առաջնորդ Հուսեին փաշային դատի տալու դեսպանների պահանջը¹⁰²: Ընդհակառակը, նա պարգևատրվեց ոսկե մեդալով: Սուլթանական պարգևների ու շքանշանների արժանացան նաև ջարդերի ժամանակ «աչքի ընկած» այնպիսի քուրդ ֆեոդալներ, ինչպիսիք էին Էմին փաշան, Հաջի Խեյմուր փաշան, Դարվազ խանը և ուրիշներ¹⁰³: Սակայն միաժամանակ որոշ ցուցադրական պատժամիջոցներ իրականացվեցին՝ Եվրոպայի աչքում պատասխանատվությունը կառավարության վրայից հանելու համար: Մի քանիսից թալանած ավարը հետ վերցվեց և չնչին գներով վերադարձվեց հայ տերերին: Կառավարությունը հրահանգում է Ալա բեկին անձամբ գնալ այն քրդերի վրա, որ ավերել են Մասունը: Ալա բեկը 200 ձիավորով նախ՝ գնաց ջիբրաջի ցեղերի վրա, բայց նրանք հրաժարվեցին որևէ բան վերադարձնելուց: Ալա բեկը դիմեց հասնանցոց ցեղին, որոնց առաջնորդ Ֆաթի փաշան բերվեց Խնուս և բանտարկվեց՝ հետագայում 400 ոսկի կաշառքով միայն ազատվելով: Ցեղապետերի մի մասն էլ, ինչպես օրինակ՝ Աղամի աղան, ազատվեցին, քանի որ սպառնացին, որ կբացահայտեն դեսպաններին, որոնք սուլթանի դրդմամբ մասնակցել են հայկական կոտորածներին¹⁰⁴:

ման և քրդերի ձեռքն անցնելու բազմաթիվ դեպքերի մասին տե՛ս օրինակ՝ *Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне*, 37-42:

99 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 227-228:

100 Ричард Термен, *Отчет о полевой поездке 1907 в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах* (Тифлис: тип. Штаба Кавк. воен. окр., 1909), 51.

101 *Great Britain. Foreign Office*, no. 2, 288 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 170-171:

102 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 230:

103 АВГР, Посольство в Константинополе, 1897, д. 3516, лл. 1-4, 9, 11, 12, հղված է ըստ Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 231:

104 «Սասունի կոիւր», *Դրօշակ*, հունվար, 1895 թ., 6-7:

Հանցակցությունը որպես համախմբման մակարդակի բարձրացման գործոն

Հանցակցությունը հաճախ դառնում է խմբի անդամների միջև կապերի ամրապնդման կարևորագույն գործոն: Մասնակցելով ծանր հանցագործության իրականացմանը՝ հանցագործները ձեռք են բերում համախմբվածության ավելի ամուր մակարդակ, սկսում են նույնականացնել միմյանց և դառնում են առավել մտերիմ: Սա բավականին հիմնավորված պնդում է քրեագիտության և սոցիալ-հոգեբանության որոշ տեսությունների մեջ¹⁰⁵:

Հայտնի քրեագետ, Սենթ Լուիսի Միսսուրիի, հետազայում Արիզոնայի համալսարանների պրոֆեսոր Մքոթ Դեբերն իր առաջարկած էսկալասիայի հիպոթեզում նշում է, որ խմբի համախմբվածությունը (cohesiveness) և հանցավորությունը կարող են փոխադարձաբար ամրապնդվել: Բռնությունը և սպառնալիքը կարող են մեծացնել համախմբումը, ինչն իր հերթին հանգեցնում է հետագա բռնության ավելացման: Այսպիսով, նա նկատում է, որ հանցավորությունն ավելացնում է հանցախմբի միասնությունը, համերաշխությունը՝ նրա անդամներին միավորելով միասնական թշնամու դեմ, ընդգծելով փոխադարձ կախվածությունը միմյանցից¹⁰⁶:

Պատահական չէ, որ այս գործիքը կիրառվում է գաղտնի կամ հանցավոր շատ խմբերի կողմից նոր անդամների անդամակցության ժամանակ, երբ կարիք է լինում ապահովել նոր գործընկերների ոչ միայն ներառումը սեփական համակարգ, այլ նաև նրանց կապի ամրապնդումն արդեն իսկ գոյություն ունեցող համայնքի հետ:

Այս պարագայում, օրինակ, կարելի է հիշել 19-րդ դարի վերջին Ռուսաստանում գործող «Ժողովրդական պատիժը» կազմակերպության կողմից իրականացված մի գործողություն, որը պատմության մեջ մնաց որպես «ուսանող Իվանովի սպանություն»: Հեղափոխական կազմակերպության ստեղծող և առաջնորդ Մերգել Եւչանը հեղափոխության վերջնական նպատակներին հասնելու ճանապարհին ծայրահեղ միջոցների կիրառման կողմնակից էր: Արտերկրում ծանոթանալով հայտնի հեղափոխական գաղափարախոսներ Մ. Բակունինի, Ե. Օգարյովի և Ա. Գերցենի հետ՝ նա 1869 թ. ստեղծում է գաղտնի, անլեգալ գործող մի խմբակ, որի հիմքում խիստ կարգապահությունն էր և իր մենիշխանության վրա հիմնված բռնապետությունը¹⁰⁷: 1869 թ. նոյեմբերի 21-ին Եւչանը կազմակերպում է Պետերբուրգի Պետրովյան ակադեմիայի ուսանող Ի. Իվանովի խմբակային սպանությունը, որն իրականացվեց իր սեփական իշխանության դեմ ընդվզման բացառման, նաև խմբի մյուս անդամներին կազմակերպության հետ ավելի ամուր կապով միացնելու համար¹⁰⁸:

105 Karine Descormiers and Raymond R. Corrado, "The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites," *Deviant Behavior* 37, no. 11 (2016): 1357; Scott H. Decker, "Collective and Normative Features of Gang Violence," *Justice Quarterly* 13 (1996): 243–264; James D Vigil, "Group Processes and Street Identity: Adolescent Chicano Gang Members," *Ethos* 16 (1988): 421–445.

106 Decker, "Collective and Normative Features of Gang Violence," 263.

107 Елена Перевалова, "С. Г. Нечаев и «нечаевское дело» в оценке газеты «Московские ведомости»,» <http://www.mediascope.ru/1596>, դիտվել է 11.10.2018:

108 П. Аврич, Бакунин и Нечаев, <https://history.wikireading.ru/277709>, դիտվել է 15.10. 2018:

Այս համախմբման համար կատարված ծիսական սպանության (երբեմն իրական, երբեմն սիմվոլիկ) գաղափարը լայնորեն տարածված էր նաև ինիցիացիայի՝ ներքսածության¹⁰⁹ ընթացքում: Ներքսածությունն ինքն իր գործողությամբ հենց համախմբվածության մեծ աստիճան հաղորդելու հիմնական նպատակ ունի: Է. Հոբսբաումը նշում է. «...մարդուն հատուկ խմբի մեջ ինիցիացիային շրջապատող հանդիսավոր արարողությունը կոչված էր ցույց տալու իր բացարձակ տարբերությունը մյուս խմբերից և ամենաուժեղ հնարավոր կապերով նրան կապել տվյալ խմբի հետ: Այն ներառում էր խորհրդավոր վախ ներշնչելու, թեկնածուին փորձելու բաղադրիչ, որը ծանոթացնում էր նրան խմբի գաղտնիքներին և իր բարձրակետին էր հասնում ինչ-որ հատուկ ձևով՝ հանդիսավոր հայտարարության, սովորաբար երդման և որոշ արարողության միջոցով, որն իր հերթին խորհրդանշում էր խմբի մեջ թեկնածուի ներառումը»¹¹⁰:

Գաղտնի կազմակերպություններում ներքսածության ծեսերն ունեն կենտրոնական դեր¹¹¹, ինչպես նաև դրանք կարևոր են հանցավոր խմբերի համար:

Այսպես, կանադական Սայմոն Ֆրեյզերի համալսարանի գիտնականներ Ռայմոնդ Քորրադոն և Կարինե Դեսքորմյերսը երիտասարդական հանցախմբեր ներքսածության, ներգրավման ծեսերի հետազոտության ընթացքում ուսումնասիրեցին հանցավոր խմբերի 54 մասնակիցների ներգրավման գործընթացի համատեքստը և բնույթը: Հարցազրույցները և հետազոտությունն իրականացվել էին Կանադայի, Բրիտանական Կոլումբիա նահանգի Վիկտորիա և Բրնսաբի բնակավայրերում 1998-2012 թթ.: Այդ ընթացքում բացահայտվեց ներքսածության երեք ձև՝ սեփական անձի նկատմամբ իրականացվող բռնության գործողություն (ego violent event), հանցագործության իրականացում և մյուսների հանդեպ ընդգծված բռնություն: Հանցախմբի անդամները պարտավոր էին որոշակի հանցավոր, բռնության գործողության միջով անցնել՝ հանցախումբ ներգրավվելու համար¹¹²: Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Իրվինգ Սպերգելը նշում է. «Ըստ հանցախմբի սովորության, խմբավորման անդամ դառնալու ծեսերը տարբեր են լինում՝ սկսած մեծ քանակի ալկոհոլ օգտագործելուց, թմրանյութերի օգտագործումից կամ վաճառքից, խմբի այլ անդամների հետ կովելուց, խանութից գողություն կատարելուց մինչև հակառակորդ բանդայի անդամին գնդակահարելը: Կանանցից կարող են պահանջել սեռական հարաբերություն ունենալ խմբի տղամարդկանցից մեկի հետ

109 Ներքսածություն բառը կիրառվում է որպես initiation բառի թարգմանություն, որպես խմբի մաս կազմելու համար որոշակի ծեսի, գործողությունների մի համակարգի նկարագրություն: Հայերեն բառերի համար շնորհակալ ենք Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս Դավիթ Իսաջանյանին:

110 Eric J. Hobsbawm, *Primitive Rebels: Studies in Archaic Forms of Social Movement in the 19th and 20th Centuries* (New York: Norton, 1959), 154 հղվում է ըստ Joel Best and Mary M. Hutchinson, "The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse," *Justice Quarterly* 13 (1996): 395.

111 Georg Simmel, *The Secret Society*, in *The Sociology of Georg Simmel*, ed. by K.H. Wolff (New York: Free Press, 1950), 345-76 հղված է ըստ Best and Hutchinson, "The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse," 395.

112 Descormiers and Corrado, "The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites," 1341.

կամ մենամարտել կանանց խմբավորման առաջնորդի կամ հիմնական անդամներից մեկի հետ¹¹³:

Լուս Անջելեսի հանցախմբերն ուսումնասիրող Ս.Դեկերը նաև ավելացնում է, որ նոր անդամներն ունեին ընտրություն՝ կամ՝ ենթարկվել ծիսական ծեծի, կամ՝ «զնալ առաքելության»: Գնալ առաքելության նշանակում էր, որ նոր անդամները պետք է ներգրավվեին բռնության գործողության մեջ, սովորաբար հակառակորդի հանցախմբերի անդամների դեմ¹¹⁴: Հանցախմբի նոր անդամներից կարող էին պահանջել մասնակցել զինված կողոպուտի, մեքենայից կրակոցներ արձակելու գործողության, հարձակումների, բռնաբարության կամ նույնիսկ սպանության, թմրամիջոցներ տեղափոխելուն: Նման գործողությունների թիրախ կարող էին դառնալ ինչպես մրցակից հանցախմբերի անդամները, այնպես էլ անմեղ մարդիկ¹¹⁵: Թեև Բեսթը և Հաթչինսոն իրենց հետազոտության մեջ պնդում են, որ պատահական անցորդների նկատմամբ բռնությունն ընդամենը քաղաքային առասպել է¹¹⁶, սակայն հանդիպում են նաև նման օրինակներ:

Նման օրինակ կարող է լինել 2007 թ. սեպտեմբերին Լոնդոնում Յասին Աբդիրահմանի սպանությունը: 22-ամյա երիտասարդը հարձակման ենթարկվեց բեյսբոլի փայտերով, կտորած շերտով և դանակներով զինված դիմակավորված երիտասարդների խմբի կողմից և հետագայում հիվանդանոցում մահացավ ստացված վնասվածքներից: Ավելի ուշ պարզվեց, որ նա թիրախավորվել էր որպես MDP կոչվող հանցախմբի անդամակցության ծիսակարգի՝ ներքսածության մաս:

Ըստ վկաներից մեկի՝ Մոհամեդ Ավեյսի. «...հանցախմբին անդամակցելու համար պետք էր վնաս հասցնել ինչ-որ մեկին՝ ապացուցելու համար խմբի անդամ դառնալուն արժանի լինելը»: Եվ զոհ դարձած Յասինը պատահական զոհ էր, ընդամենը թիրախավորվեց որպես ինիցիացիայի՝ ներքսածության մաս¹¹⁷:

Իհարկե, ցեղասպանագիտության մեջ այս ասպեկտն ուսումնասիրված չէ, սակայն կարծում ենք, որ այդ ոլորտի զարգացումը հեռանկար ունի: Այս հոդվածում քրդե-

113 Irving A. Spergel, *The Youth Gang Problem: A Community Approach* (New York: Oxford University Press, 1995), 91, հղված է ըստ Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 390.

114 Scott H. Decker and Barrick Van Winkle, *Life in the Gang: Family, Friends, and Violence* (Cambridge: Cambridge University Press, 1996), 255 հղված է ըստ Descormiers and Corrado, “The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites,” 1343.

115 Նույն տեղում, 347-348:

116 Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 383–404 հղված է ըստ Descormiers and Corrado, “The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites,” 1343.

117 “Armed Gang Kill Innocent Student as Part of ‘Gang Initiation,” <https://www.dailymail.co.uk/news/article-481350/Armed-gang-kill-innocent-student-gang-initiation.html>, դիտվել է 13.10.2018; Paul Cheston, “12-year-old Boy Who Took Part in Gang Killing of Innocent Student,” <https://www.standard.co.uk/news/12-year-old-boy-who-took-part-in-gang-killing-of-innocent-student-6762073.html>, դիտվել է 13.10.2018; Andy Bloxham, “Teenager Responsible for Notting Hill Carnival Stabbing was Spared Jail Two Years ago,” <https://www.telegraph.co.uk/news/uknews/crime/8913959/Teenager-responsible-for-Notting-Hill-Carnival-stabbing-was-spared-jail-two-years-ago.html>, դիտվել է 13.10.2018; “Student’s Killer Posed on Website,” http://news.bbc.co.uk/2/hi/uk_news/england/london/8010810.stm, դիտվել է 13.10.2018:

րի ներգրավման մի շարք պատճառների շարքում առաջարկում ենք քննել նաև այս վարկածը, քանի որ Օսմանյան կայսրությունն ուներ բոլոր հնարավոր ռեսուրսները՝ հայերի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու սեփական միջոցներով, ինչը բազմիցս արել է քրդական ապստամբությունների ժամանակ: Հնարավոր է, որ տվյալ մարտավարությունը կիրառվել է, քանի որ նշված ժամանակահատվածում Կ.Պոլիսը տեսանելի ջանքեր էր գործադրում՝ լուծելու մի հստակ խնդիր՝ ներգրավելու տերության արևելյան վիլայեթներում մեծ կշիռ ունեցող քրդական ցեղերին օսմանյան միասնական քաղաքականության մեջ, և «համատեղ գործած հանցագործությունը» համախմբման լավագույն լուծումներից էր:

Հայկական կոտորածներին քրդերի ներգրավման պատճառները

Օսմանյան կայսրությունը, քրդերին ներգրավելով հայերի դեմ իրականացվող շարունակական բռնաճնշումների, ունեցվածքի թալանի և զանգվածային սպանությունների մեջ, համիդիե հեծելազորային ջոկատներ ստեղծելով, մի քանի խնդիր էր լուծում:

Նախ՝ այն ընդհանուր առմամբ լուծում էր Պարսկաստանի հետ սահմանի պաշտպանության խնդիրը՝ այն ավելի ամրապնդելով: Սակայն հոչակված նպատակից բացի, վերոնշյալը թույլ տվեց լուծել այլ, միգուցե ավելի կարևոր խնդիրներ:

Համիդիե գնդերն ավելի ուժեղացրին ճնշումը հայկական ազգաբնակչության նկատմամբ: Դա կարևոր էր՝ կասեցնելու համար 19-րդ դարի հայկական ազգայնականության վերելքը, որը լիովին տեղավորվում էր ժամանակի եվրոպական ազգայնականության ալիքի մեջ: Մեկը մյուսի հետևից Եվրոպայում ստեղծվում էին ազգային պետություններ, և հենց ազգային չափորոշիչն էր դառնում հանրության համախմբման գլխավոր ցուցիչը և գրավականը: Այս երևույթը տեղի էր ունենում նաև Օսմանյան կայսրության տարբեր ազդեցիկ էթնիկ (արաբական, քրդական) խմբերի բուրժուազիայի ձևավորման ձևով¹¹⁸: Հենց այս շրջանում են ծնունդ առնում հայկական առաջին կուսակցությունները և որպես առաջնային նպատակ՝ կարևորվում է հայկական բարեփոխումներ իրականացնելու գաղափարը: Այս զարգացումները չափազանց վտանգավոր էին կայսրության համար: Մեկը մյուսի հետևից տարբեր ժողովուրդների մոտ ազգայնականության ծաղկումը բերում էր փոքրամասնությունների անկախությանը և անջատմանն օսմանյան պետությունից: Քրդական մշտական ճնշումը կոչված էր վիժեցնելու այդ գործընթացն արևելյան նահանգներում՝ հետևողականորեն թուլացնելով հայկական համայնքի ներուժը:

Սրա հետ սերտորեն կապված է քրդերի կողմից հայկական տնտեսությանը հասցվող հարվածների քաղաքականությունը՝ երկակի հարկահանությունը, հայ գյուղացիների անպատիժ թալանը, հայկական հողերի փոխանցումը քրդերին, ամբողջական գյուղերի դատարկումը և այնտեղ քրդերի և չերքեզների բնակեցումը, ինչը հետզհետե հյուծում էր հայկական տնտեսական հնարավորությունները:

118 Fatma M. Göçek, *Rise of the Bourgeoisie, Demise of Empire: Ottoman Westernization and Social Change* (New York: Oxford University Press, 1996), 134–37, համեմատության համար տե՛ս Simon Payaslian, *The History of Armenia, From the Origins to the Present* (New York: Palgrave Macmillan, 2007), 117.

Վերջապես քրդական համիդիե գնդերի ստեղծման շնորհիվ նրանց ներառելով պետական ծառայության մեջ և տալով ցանկացած հանցանք իրականացնելու ազատություն՝ Օսմանյան կայսրությունը բացառում էր հայ-քրդական հնարավոր դաշինքը, ինչի հավանականությունը սարսափեցնում էր Բարձր դռանը, առավել ևս, որ այս շրջանում հայկական շրջանակներն ակտիվ աշխատանք էին տանում այդ ուղղությամբ՝ փորձելով քաղաքակրթելու միջոցով քրդերի հետ խաղաղ համակեցության եզրեր գտնել: Դրա վիժեցման ձևերից մեկն էլ քրդերին հայկական անկախ պետականության ստեղծման ուրվականով սպառնալն էր:

Քրդերին ներգրավելով հայերի սպանության մեջ և նրանց ձեռքերով սև գործն անելով՝ Կ.Պոլիսը հնարավորություն էր ստանում հետագայում ամբողջ մեղքը բարդելու «վերահսկողությունից դուրս եկած վայրի քոչվորների» վրա¹¹⁹՝ խուսափելով արտաքին աշխարհի քննադատությունից և հեղինակության կորստից:

Օսմանյան կայսրության համար ոչ կանոնավոր ուժերի օգտագործումը՝ «սև աշխատանքը» կատարելու համար, ավանդական քաղաքականություն էր,¹²⁰ և համիդիեների օգտագործումը 1894-96 թթ. սրա վառ դրսևորումն էր: Կան դեպքեր, որ ջարդերի ժամանակ պատասխանատվությունն ամբողջությամբ քրդերի վրա բարդելու նպատակով թուրքական զորքերը հաճախ գործում էին քրդական տարազով¹²¹:

Սակայն կարևորագույն խնդիրը հավանաբար քրդերին Օսմանյան կայսրության հետ կապելու հրամայականն էր: Քրդերը երբեք հավատարիմ չեն եղել կայսրությանը, նրանք միշտ խնդիրներ են առաջացրել իշխանությունների համար, որոնք միշտ նրանց դեմ գորք են ուղարկվել և արյուն թափել¹²²: Վ. Ֆ. Մինորսկին նշում է, օրինակ, որ նույնիսկ երբ քրդերը հրաժարվում էին հայերի ջարդերին մասնակցելուց, դա անում էին, քանի որ դրա մեջ տեսնում էին միայն կառավարության շահը: Ըստ նրա՝ քրդերը երբեք աչքի չեն ընկել թուրքական հայրենասիրությամբ¹²³: 19-րդ դարի ամբողջ ընթացքում գրեթե անդադար տեղի էին ունենում քրդական ապստամբություններ և հուզումներ, որոնց ընթացքում քրդական ապստամբ առաջնորդներն արտաքին ուժերի օժանդակությանն էին ապավինում: Համիդիե հեծելազորի մեջ ներգրավելով քրդական վերնախավին՝ Կ.Պոլիսը սկսում էր քրդերի մեջ տարածել օսմանյան հայրենասիրությունը՝ ներգրավելով նախկին ազատատենչ ու չենթարկվող ժողովրդին կայսերական կառավարման համակարգ: Արդյունքները տապալորիչ էին: Մի քանի տարում համազգեստ ստացած քրդական բազմաթիվ ցեղեր դարձան կայսեր ամենահավատարիմ հպատակները:

119 British Foreign Office Archive, FO 424/178, p. 299 cited in Robert Graves, *Storm Centres of the Near East: Personal Memories, 1879-1929* (UK: Hutchinson and co., 1975), 145-47.

120 Մանրամասն տե՛ս James J. Reid, *Crisis of the Ottoman Empire* (Stuttgart: Steiner, 2000):

121 Bravley E.A. Hodgetts, *Round about Armenia* (London: Sampson Low, Marston and Company, 1896), 100; АВГР, Посольство в Константинополе, д. 3135, д. 3176, л. 70-77, 79-82, *Геноцид армян в Османской империи*, 32, 45:

122 Herworth, *Through Armenia on Horseback*, 225:

123 Минорский, *Курды*, 30:

Կայսրության հետ քրդերի կապերի ամրապնդման առումով շատ կարևոր էր նրանց հանցագործության մեղսակից դարձնելը: Նրանք թուրքերի հետ դառնում էին միասնական սախագծի՝ հայերից Արևմտյան Հայաստանը մաքրելու մասը: Ցեղասպանագիտության մեջ դա հայտնի ֆենոմեն է, երբ ոճրագործ վարչակարգերը կարիք են զգում սեփական քաղաքականության համար հնարավորինս լայն համակիրների հենարան ստեղծել և ներգրավում են հասարակության տարբեր շերտերի զանգվածային կոտորածների մեջ¹²⁴: Միաժամանակ նրանք ամուր թելերով կապում են¹²⁵ ցեղասպանության մասնակիցներին իշխանությունների հետ: Օսմանյան կայսրությունն ակտիվորեն ներգրավեց քրդերին սպանությունների մեջ՝ ոչ միայն նրանց որպես հայերին ոչնչացնելու գործիք օգտագործելու համար, այլև քրդերին կայսրության մեծ հանցանքին մեղսակից դարձնելով՝ ավելի ամուր կապեր ստեղծելու համար:

Suren A. Manukyan
PhD

COMPLICITY AS FACTOR FOR COHERENCE.
ON THE ISSUE OF MOTIVES OF THE KURDISH INVOLVEMENT
IN THE 1894-96 MASSACRES OF ARMENIANS

SUMMARY

Key words: Armenian massacres of 1894-96, Kurds, Hamidiye, complicity in crime, Armenian Genocide.

The paper is an attempt to cover the issue of the creation of Hamidian cavalry and the forms, scale, and causes of Kurdish participation in the massacres of Armenians in 1894-96. Using cohesion theories known in criminology and social psychology, an attempt is made to utilize them to explain some new motivations for the involvement of the Kurds in the process of violent settling of the Armenian issue. The role of the Kurds is usually interpreted as being a blind instrument in the hands of the Empire against the Armenian population. This is a prevalent concept not only in Armenian historiography but also in genocide studies. Unquestionably, this has ground, but it probably cannot be an entire explanation for such large-scale Kurdish participation. The Armenian massacres brought tangible and significant benefits for the Kurds, who were personally engaged in the ongoing crime. Furthermore, by encouraging the Kurds in the murder campaign,

124 *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, ed. Dinah L. Shelton (Detroit: Macmillan Library Reference, 2004), 792.

125 Տարբեր խմբերում ներգրավելու՝ ինիցիացիայի, այդ խմբի ամբողջությամբ պահպանելու համար հանցագործության օգտագործման մասին տե՛ս, օրինակ՝ Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 383-404:

the Ottoman Empire solved another, crucial purpose. Turning Kurds into a complicity of crime by affiliation with the Turks to a joint project of ethnic cleansing of Western Armenia, Sublime Porte strongly bonded the troublesome, usually disloyal Kurds with the policy and fate of the Empire.

Տյւրէն Ա. Մանուկյան
кандидат исторических наук

**СОУЧАСТИЕ В ПРЕСТУПЛЕНИИ КАК СВЯЗУЮЩИЙ ФАКТОР.
О МОТИВАЦИИ ВОВЛЕЧЕНИЯ КУРДОВ В МАССОВУЮ РЕЗНЮ АРМЯН
В 1894-1896 ГГ.**

РЕЗЮМЕ

Ключевые слова: резня армян 1894-1896 гг., курды, гамидие, соучастие в преступлении, Геноцид армян.

В статье рассматриваются проблемы создания курдской кавалерии Гамидие, формы, размеры и причины участия курдов в массовых убийствах армян в 1894-1896 гг. Посредством применения теории повышения сплоченности, известной в криминалистике и социальной психологии, автор пытается объяснить некоторые новые мотивации вовлечения курдов в процесс насильственного разрешения армянского вопроса. Обычно курдов представляют слепым инструментом в руках империи, использованным против армянского населения. Это мнение сложилось не только в армянской историографии, но и вообще в геноцидологии. Конечно, подобное представление обосновано, однако это не может быть единственным объяснением столь широкомасштабного участия курдов в резне. Массовое истребление армян положительно сказалось на курдах, которые сами были не менее заинтересованы в преступлении. Кроме того, вовлекая курдов в процесс массовых убийств, Османская империя решала другую, возможно, не менее важную проблему. Превратив курдов в соучастников преступления, включив их в совместный с турками проект этнической чистки Западной Армении от армян, Высокая Порта связывала беспокойных и не всегда лояльных курдов с политикой и судьбой империи.

REFERENCES

A-Do, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները [The Vilayets of Van, Bitlis and Erzerum]. Yerevan: Kultura, 1912.

Հայոց պատմություն [Armenian History]. Vol. III. Issue I. Yerevan: Zangak-97, 2010.

Bayburdyan, Vahan. Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին [Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire in the 19th and the beginning of the 20th century]. Yerevan: "Hayastan," 1989.

Gevorgyan, Hamlet. Նիկոլ Դուման [Nikol Duman], Yerevan: "Hrazdan," 2002.

Grigoryan, Hovik. Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-98 [The Tactics of Armenian Liberation Movement in 1895-98]. Yerevan: Noyyan tapan, 2002.

Հայ ժողովրդի պատմություն [History of Armenian People]. Yerevan: HSSH GA hrat., 1981.

Hovhannisyanyan, Rafik. Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը [1896 Van Self-Defense], *Lraber hasarakakan gitutyunneri* 7 (1976): 58-66:

Kirakosyan, John (ed.). Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) [Armenia in the Documents of the International Diplomacy and Soviet Foreign Policy (1828-1923)]. Yerevan: "Hayastan," 1972.

Leo, Անցյալից [From the Past]. Tiflis: Khorhrdayin Kovkas, 1925.

Leo, Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը [The Ideology of the Turkish Armenian Revolution]. Vol. I. Paris: Pahari eghbarts publishing, 1934.

Manukyan, Suren. «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ» [The Issue of the Usage of the Criminals in the Perpetration of the Armenian Genocide]. *Merdzavor Arevelk (VIII): Patmutyun, Qakhaqakanutyun, Mshakuyt.* Yerevan: Zangak-97, 2012.

Poghosyan, Stepan. Քրդերը և Հայկական հարցը [The Kurds and the Armenian Question]. Yerevan: Hayastan, 1991.

Sasuni, Karo. Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերությունները /ԺԵ դարն մինչև մեր օրերը/ [The Kurdish National Movements and Armenian-Kurdish Relations (from 15th Century to Our Days)]. Beirut: Hamazgayin, 1969.

Հւշակ [The Bell]. London, 1890.

Դրոշակ [The Flag]. Vienna, 1895.

Մշակ [The Farmhand]. Tiflis, 1880.

Varandean, Mikayel. Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն [History of the AR Dashnaksutyun]. Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1992.

Архив Внешней политики России (АВПР), Политархив [Archive of the Foreign Policy of Russia (AVPR), Political Archive], 1889-1894.

Архив Внешней политики России (АВПР), Политархив, фонд Посольство в Константинополе [Archive of the Foreign Policy of Russia (AVPR), Political Archive, section Embassy in Constantinople].

Архив Внешней политики России (АВРП), Политархив, фонд Миссия в Персии [Archive of the Foreign Policy of Russia (AVRP), section Mission in Persia], 1913.

Avrich, Paul. Бакунин и Нечаев [Bakunin and Nechayev], <https://history.wikireading.ru/277709>.

Minorskiĭ, Vladimir. Курды: Заметки и впечатления [The Kurds, Notes and Impressions]. Petrograd: Типография В. О. Kirshbauma, 1915.

Nersisyan, Mkrtich (ed.). Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов [Genocide of Armenians in the Ottoman Empire. Compilation of Documents and Materials]. Yerevan: “Hayastan,” 1983.

Nikitin, Vasiliy. Курды [The Kurds]. Moscow: Progress, 1964.

Perevalova, Yelena. С. Г. Нечаев и «нечаевское дело» в оценке газеты «Московские ведомости» [S. G. Nechayev and the Case of Nechayev in the Assessment of the Newspaper “Moskovskiye vedomosti”]. <http://www.mediascope.ru/1596>.

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году [The Plight of the Armenians in Turkey before the Interference of the Great Powers in 1895]. Moscow: Razsvet, 1896.

Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне [The Plight of Turkish Armenia and Turkish Cruelties in Sasun]. Moscow: Razsvet, 1896

Potto, Vasiliĭ. Кавказская война [The Caucasus War]. Vol. 4, Issue 2. Saint-Petersburg, 1889.

Termen, Richard. Отчет о полевой поездке 1907 в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах [Report on Field Tour to Van, Bitlis and Diarbekir Vilayets in 1907]. Tiflis: Shtab Kavkazskogo voennogo okruga, 1909.

ՀԱՍԱՆ ՉԵԼԵՔԻ.

ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԻ ԿԱՅԱՆԻ ՇՈՒՐՁ

*Բանալի բառեր*¹ Հայոց ցեղասպանություն, վեց վիլայեթներ, Սեբաստիա, Խարբերդ, Հասան Չելեքի, տեղահանություն, տղամարդկանց կոտորած, թալան, օտար ականատես:

Հայոց ցեղասպանության իրագործման հիմնական բաղադրիչներից մեկի՝ բռնի տեղահանությունների միջոցով հայ բնակչությունն արմատախիլ արվեց սեփական բնաշխարհից և ոչնչացվեց սիրիական անապատների ճանապարհին: Այս ճանապարհի երկայնքով *Թեշ-քիլայթը մահաուսե*-ի կողմից կազմակերպվել էին հստակ և առանձին գործառույթներ իրար մեջ բաժանած անցումային կայաններ, որտեղ իրականացվում էին նախապես մշակված գործողություններ՝ թալան, տարատեսակ բռնություններ և ոչնչացում:

Հոդվածում քննարկվում են այդ կայաններից մեկում՝ Հասան Չելեքիում տեղի ունեցած գործողությունները՝ հայկական քարավանների թալանը և ոչնչացման գործընթացը՝ հիմնվելով գլխավորապես հայկական արխիվային¹, գրքային², մամուլի³, հուշերի հավաքածուների⁴, գիտական ամսագրերի⁵ ու հետազոտությունների⁶ տեղեկությունների և

1 Archives De La Bibliothèque Nubar, Fonds Aram Andonian (այսուհետև՝ BNu/Fonds A. Andonian), Matériaux pour l'histoire du genocide, Dossier 49, *Massacres et déportations à Sebaste* (14 pièces, 190 ff. rv.), AA/MHG/P.i.1/2-49; Ա. Հ., *Սեբաստիա*, Հայկանույշ Չառացյան, «Սրվազ», Վարդանուշ Գասանյան, «Պարություն Վարդանուշ Գասանյանի սիվասցի», Հեղինե Պեկեան, «Անսախալի հայ տարագրեալները», BNu/Fonds A. Andonian, P.J.1/3, fi le 6, Amasia: Սեպուհ Լուսարայան, «Մի կյանքի պարություն», ՀՅԹԻ, Ձեռագիր հուշագրությունների բաժին, գ. 127, գ.128, գ.129; Սուրեն Սարգսյան, «Պարություն կարմիր, սև էջեր, սալանայական գործեր, եղենդ», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, թղթապանակ 121/2; Օհաննես Ալեքսանդրեանի հուշերը 1915 թ. եղենի մասին (ձեռագիր), Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 439, ց.3, գ.115:

2 Կարապետ Գարիկեան, *Եղեննապարում. Փորոն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, (Պոպըն, «Հայրենիք», 1924); Փայլածու Գաբունյան, *Ցաւակ* (Նի Եօրք, «Արմենիա», 1922); Եղուարդ Ա. Բագույան, *Եղեննաքաղ որաներ* (Պէրոթ, «Shirak Press», 1968); Գաբրիել Միմոնեան, *Յուշամարեան պոնտական Անսախոյ* (Վենետիկ, ա.հ, 1966); Վահան Համբարձումյան, *Գիւղաշխարհ. Պարունական, ազգագրական ուսումնասիրություն* (Փարիզ, «Տարոն», 1927); Սարգիս Ս. Տէմիրճեան, *Չորս տարուան քառասանք, Եղոկացի (Թորաթ) օր. Թէփերիկ Չարգեանի արտոյի կեանքէն* (Նի Եօրք, «Հայկ», 1920); Լևոն Վարդան, «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան», *Հայկազեան հայագիտական հանդէս* ԺԵ (1995), 499-519:

3 Շահէն Տէրաթեան, «Արինի ճամբէ. Դէպի Գողգոթան», *Հայրենիք* 11 no. 298 (1950); 1 no. 323 (1953); Վահան Չուգարճեան, «Բզքտուած Սեբաստիան», *Երիտասարդ Հայաստան* (Շիրակ), 11 հոկտեմբեր 1919:

4 Վերծին Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականաքեւ վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011); *Հուշագրական ծառանգություն*, ՀՀՈ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, հատոր 14, (Երևան, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ», 2011); Լևոն Մեսրոպ, *Աղէր եւ վերածնունդ* (Փարիզ, «Արաքս», 1952):

5 Յակոբ Քոսեան, «Գանտիտա Գոյումճեան. Աքոթի ճամբան (1915)», *Հանդէս ամսօրեայ* 1 no. 12 (2015), 345-483:

6 Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete history* (London, New York: I.B. TAURIS,

գիտական արդյունքների վրա, որոնց տրամադրած տվյալները համադրվել են օտար ականատեսների⁷ և օսմանյան փաստաթղթերի⁸ հաղորդած տվյալների հետ: Հողվածում ներկայացվել են Հասան Չելերի կայանում տեղի ունեցած հիմնական գործողությունների ուրվագիծը, դրանց հաջորդականությունը: Այդ գործողությունները պայմանականորեն բաժանվել են երեք համակարգված փուլերի. թալան և կանանց նկատմամբ բռնություններ, տղամարդկանց հայտնաբերում և ձերբակալում, տղամարդկանց բանտարկություն և սպանել:

Հասան Չելերի գյուղը և ճանապարհային կայանը տեղակայված էին Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառի Արդա սանջակում՝ Արաբկիր քաղաքից մոտ 52 կմ հարավ-արևմուտք՝ Մալաթիա-Սեբաստիա ճանապարհին⁹: Գյուղն ուներ թուրքական և քրդական 200 տուն բնակչություն¹⁰: Այն հաջորդում էր Սեբաստիա և Խարբերդ վիլայեթների սահմանագլխին տեղակայված Քոթթու խան անունը կրող կայանին՝ նախատեսված որպես թալանի և կոտորածի կայան, ոչնչացման համար թիրախավորելով գլխավորապես հասարակական դիրք զբաղեցնող տղամարդկանց: Հասան Չելերիում արդեն հիմնական թիրախ էին չափահաս տղամարդիկ՝ անկախ հասարակական դիրքից: Տարագրության այս փուլերն անցած հատուկենտ ծպտված տղամարդկանց, կանանց և երեխաների համակարգային ոչնչացման կամ ուծացման համար արդեն նախագծված էին հաջորդող՝ Հեքիմ Խան, Հասան Պատիկ, Ֆոնջլար կայանները:

Տեղահանությունների երթուղիների համատեքստում Հասան Չելերին հանգուցային կայան էր ինչպես Սեբաստիա քաղաքի 15 քարավանների և վիլայեթի այլ բնակավայրերի հայերի, այնպես էլ հարակից շրջանների տարագրյալների համար: Կայանը մի քանի հիմնական երթուղիների մաս էր կազմում: Դրանցից մեկը՝ նախատեսված Սեբաստիա քաղաքի և շրջակա բնակավայրերի համար, սկսվում էր Սեբաստիա քաղաքում և ձգվում դեպի Թեջիր խան, Մաղարա, Կանգալ, Ալաջա խան, Քոթթու խան, իսկ արդեն Խարբերդի վիլայեթում հասնում Հասան Չելերի, շարունակվում դեպի Հեքիմ խան, Հասան Պատրիկ, Ֆոնջլար և ձգվում հարավ: Սեբաստիայի վիլայեթի հյուսիս-արևմտյան մասի և հարակից շրջանների համար նախատեսված մյուս երթուղին անցել է Սամսուն, Մարգվան, Ամասիա, Եվդոկիա, Շարգըշլա, Կան-

2011); Սեպուհ Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918)* (Կ.Պոլիս, Հայաստան գրատան հրատ., 1921):

7 Երուսաղ Քասունի, *Քննական ակնարկ «Միջրների հերոլդ»-ի 1915-1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանության և վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն* (Պեյրուֆ, Մ.Ա.Հ.Ա.Ե. միութեան հրատարակչական գրասենեակ, 2012):

8 Clark University, Digital Commons, The Krikor Guerguerian Archive, “03 Captain Fazil Bey III,” https://commons.clarku.edu/pd_fazil_bey/3, դիտվել է 06.05.2019:

9 Թադևոս Խ. Հակոբյան, Ստեփան Տ. Մելիք-Բախշյան, Հովհաննես Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատոր 3 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1991), 370:

10 Տե՛ս Ա. հ., *Սեբաստիա*, 124:

գալ, Քյոթու խան հետագծով և նաև Հասան Չելեբի կայանով: Վերոնշյալ երկու երթուղիներին միացել է նաև երրորդ երթուղին, որը սկսվելով մերձսևծովյան բնակավայրերից՝ Օրդուից և Կիրասունից, շարունակվել է դեպի Շապին Գարահիսար, Սուշեհիր, Չառա, Հաֆիզ, Սերաստիա քաղաք, միավորվել Կանգալ, Քյոթու խան երթուղուն և հասել Հասան Չելեբի կայան: Ինչպես մյուս կայանների պարագայում, այստեղ նույնպես հայերի դեմ գործողություններին ներգրավված էին օսմանյան պետական և երիտթուրքական կուսակցական մարմինները:

Անցնող քարավանների թալանի ու սպանությունների պատասխանատուները *Թեշքիլաթը մահուտե*-ի ներկայացուցիչներն էին, ժանդարմերիան, տեղական իշխանությունները և այլ պետական կառույցների պաշտոնյաներ:

1914 թ. մարտի 27-ից Արդայի կայանակամի պաշտոնը զբաղեցրել է Վասիֆ բեյը, ում 1915 թ. հուլիսի 23-ին փոխարինել է Ասիմ բեյը¹¹: Կայանի հանցագործություններն իրականացվել և առաջնորդվել են ժանդարմների պաշտոնով ծպտված անձանց կողմից: Նշված ժամանակահատվածում Արդա սանջակի ժանդարմերիայի հրամանատարը Ալի Չավուզն էր, որը նաև կառավարել է Հեքիմ խան անցումային կայանի գործողությունները: Հասան Չելեբիում բուն գործողություններն իրականացնողներից էին Մուխթար Միրզան, որի գործունեության ոլորտի մասին տեղեկություններ չկան, և առևտրական Ուլաշոլու Իբրահիմօղլու Հյուսեինը: Վերջիններս պատասխանում էին սպանությունների և մեծ ծավալներով ապրանքների գողության համար: Նրանք նաև կասկածվում էին բռնաբարությունների մեջ¹²: Հյուսնի էֆենդին՝ Աջըրդաղի վիճակագրական ծառայության պետը, մասնակցել է Հասան Չելեբի – Հեքիմ խան կայանների միջև տեղի ունեցած բռնաբարություններին և թալանին¹³: Դատելով կայանում տեղի ունեցած գործողությունները վերահսկող և իրականացնող անձանց կազմից՝ կարող ենք եզրակացնել, որ այդ գործողությունների կազմակերպումը և իրագործումը տեղի են ունեցել պետական և կուսակցական մարմինների կարևորագույն օղակների ներգրավմամբ:

Առաջին փուլ. թալան և կանանց նկատմամբ բռնություններ

Հասան Չելեբի հասնելուն պես տարագրյալների քարավաններին տեղավորում էին մոտակա լեռների ստորոտներում՝ ձորի մեջ, գետի եզրերին¹⁴: Քարավանների՝ ճամբար խփելուց հետո գյուղի բնակչությունը հազարի հասնող խմբերով առևտուր անե-

11 Այս փոփոխությունն անսպասելի էր, քանի որ այն իրականացվեց սանջակի տարածքով հայ տասնյակ քարավանների անցման կարևոր շրջափուլում: Ըստ Ռայմոնդ Գևորգյանի՝ տեղի ունեցածը կարող էր պայմանավորված լինել Վասիֆ բեյի՝ հրամանների կատարման անբավարար խստությամբ, սակայն հեղինակն ավելի հավանական է համարում, որ խնդիրը քարավաններից ձեռք բերված գողոնի «անարդար» վերաբաշխումն էր, տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide*, 418:

12 Տե՛ս Guerguerian, “03 Captain Fazil Bey III,” 235:

13 Տե՛ս նույն տեղում, 246:

14 Տե՛ս ՀԱԱ ֆ. 439, ց. 3, գ. 115, տե՛ս նաև՝ Րազուպեան, *Եղեռնաքաղ որսններ*, 72; Քուեան, «Գանարիտա Գույունենան», 400; Տէրտէրեան, «Արիւնի ճամբէս», 72; Լուսարարյան, *Մի կյանքի պարմություն*, 164; Գաբրանեան, *Յասակ*, 65:

լու պատրվակով մտնում էր տարագրյալների շարքեր: Այցելությունների հիմնական նպատակը, ըստ վերապրողներից մեկի, հետախուզական բնույթ էր կրում՝ թալանի թիրախները պարզելու համար¹⁵: Կայանի շուրջ ծավալվող գործողությունների այս փուլում ուշադրության կենտրոնում էին հայտնվում կանայք և աղջիկները, որոնց զգուշացնում էին սպանդի սպառնալիքի մասին և փրկության դիմաց պահանջում ոսկի ու գոհարեղեն¹⁶: Սերաստիայի չորրորդ քարավանից մի հղի կնոջից պահանջել են ոսկի, սակայն, կասկածելով, որ վերջինս կարող էր կույ տված լինել այն, ճեղքել են նրա որովայնը՝ այդպես էլ չհայտնաբերելով փնտրածը¹⁷: Գործընթացն ուղեկցվել է կանանց ու աղջիկների բռնաբարություններով¹⁸ ու հափշտակություններով¹⁹: Այս վտանգներից պաշտպանվելու համար կանայք փորձել են ծալտվել՝ դեմքներին հող, ցեխ, մոխիր քսելով, սակայն ապարդյուն²⁰: Այսպիսով, այս փուլի բնորոշ հատկանիշները թալանը և կանանց նկատմամբ կիրառված բռնություններն են, որոնք շատ հաճախ զուգահեռ էին տեղի ունենում: Այս գործողությունները ոչ միայն շահութաբեր էին դրանք իրականացնողների համար, այլև թուլացնում և սպառում էին քարավանի վերապրելու միջոցները:

Երկրորդ փուլ. տղամարդկանց հայտնաբերում և ձերբակալում

Երկրորդ փուլում սկսվել է կայանի հիմնական գործառույթի իրականացումը՝ տղամարդկանց առանձնացումը: Ըստ հրահանգի՝ հարկավոր էր հայտնաբերել քարավանի բոլոր տղամարդկանց և ձերբակալել: Գործընթացը կազմակերպվում էր ժանդարմերիայի և գյուղի քուրդ բնակչության համագործակցությամբ: Զինված քրդերը²¹, ժանդարմների հրամանով և գործակցությամբ²², խուզարկել են քարավանները²³ և ձերբակալել²⁴, ըստ տարբեր աղբյուրների, 8²⁵, 10²⁶, 9-12²⁷ տարեկանից մինչև

15 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պայրմություն*, 164:

16 Տե՛ս նույն տեղում:

17 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 171-172:

18 Տե՛ս Տերտերեան, «Արիևի ճամբէս», 78:

19 Տե՛ս Պեկեան, «Անասիայի հայ տարագրեալները», տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 227, 234:

20 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 171-172:

21 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 171, տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիևի ճամբէս», 72; Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 227, 237:

22 Տե՛ս Տերտերեան, «Արիևի ճամբէս», 72:

23 Տե՛ս Սիմոնեան, *Յուշանամական*, 670, տե՛ս նաև՝ Հուշագրական ժառանգություն, 191:

24 Տե՛ս Քուեան, «Գանադիպա Գոյումենեան», 400, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պայրմություն*, 168; Բագուպեան, *Եղեռնաքաղ որաներ*, 74; Գաբտանեան, *Յասակ*, 65; Հուշագրական ժառանգություն, 212:

25 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 184:

26 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

27 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 223:

75²⁸, 80²⁹ տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդկանց: Գործողություն իրականացնողներն անցնում էին բոլոր ընտանիքների առջևով, մտնում վրաններ և փնտրում տղամարդկանց³⁰: Թաքնված տղամարդկանց բացահայտելու նպատակով խոշտանգում էին կանանց³¹, ապա, գնդակահարության սպառնալիքով, տղամարդկանց կանանցից գատում³²: Գիտակցելով տղամարդկանց սպառնացող վտանգը՝ տարագրյալները դիմում էին թաքնվելու տարբեր հնարքների: Կանայք փորձում էին թաքցնել տղամարդկանց կտորեղենների³³, վերմակների³⁴, կառքերի³⁵ ու կարպետների տակ կամ նստում էին նրանց վրա³⁶: Ժանդարմներին և քրդերին մոլորեցնելու համար, թե իբր իրենց ամուսիններին արդեն ձերբակալել են, կանայք ցուցադրաբար ողբում էին, ինչը որոշ դեպքերում արդյունավետորեն կանխում էր խուզարկումները³⁷:

Տղամարդկանց թաքնվելու ամենատարածված հնարքներից մեկը կանանց հագուստով ծալվելն էր³⁸: Ոմանք փոքր երեխաների գրկած³⁹ նույնիսկ ձևացնում էին, թե իբր կերակրում են⁴⁰: Այս եղանակով կայանից փրկվել են պրոֆեսորներ Ռուբեն Ռագուպյանը, Սենեքերիմ Դալոնջյանը, Համբարձում Պլեջյանը⁴¹ և անգամ հոգևորականներ⁴²: Որոշ հուշագրություններում արձանագրված են տղամարդկանց փախուստի հաջողված դեպքեր⁴³: Կան նաև դեպքեր, երբ տղամարդիկ մտածել են փախուստի մասին, սակայն չեն փախել, ապա ձերբակալվել և սպանվել են⁴⁴: Պահպանված են նաև տղամարդկանց թաքնվելու փորձերի մասին տեղեկություններ: Հասան Չելեբիի լեռնային լանդշաֆտը թաքնվելու հնարավորություններ էր ընձեռում, ինչից օգտվելով՝

28 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 178:

29 Տե՛ս նույն տեղում, 181:

30 Տե՛ս նույն տեղում, 178, տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

31 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

32 Տե՛ս Չուգարզեան Վահան, «Բզբոտուած Սերաստիան», *Երիտասարդ Հայաստան* (Շիրակո), 11 հոկտեմբեր 1919:

33 Տե՛ս Համբարձումյան, *Գիղաշխարհ*, 234; տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիւնի ճամբէս. Դէպի Գողգոթան», 72:

34 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 191:

35 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 177, տե՛ս նաև՝ Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

36 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պարմություն*, 170-171:

37 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 178, տե՛ս նաև՝ Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

38 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 198, 200, տե՛ս նաև՝ Գասմանեան, «Պարմություն Վարդանուշ Գասմանեանի», 172; Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 95:

39 Տե՛ս Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի*, 96:

40 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

41 Տե՛ս Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի*, 96:

42 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 191, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիղաշխարհ*, 223:

43 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

44 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72-73: Ալեքսանդրեան, ՀԱԱ, ֆ.439, ց.3, գ.115:

տղամարդիկ թաքնվում էին շրջակայքի ձորակներում⁴⁵: Սակայն քրդերի կողմից հայտնաբերվելուց հետո թաքնվածները հանձնվում էին ժանդարմներին⁴⁶: Սուրբ Սարգիս եկեղեցու քարավանից տղամարդկանց ազատ արձակելու համար պահանջվել է հինգ ոսկի լիրա կաշառք, որը չտրամադրելու դեպքում վերջիններիս սպառնում էր բանտարկություն⁴⁷:

Կաշառքի արդյունավետ կիրառման դեպքերից⁴⁸ բացի (օրինակ, երբ մի քանի կին, քուրդ մյուդիիրին կաշառելով, ազատել են մի քանի տասնյակ տղամարդկանց⁴⁹)՝ կային դեպքեր, երբ կաշառքի մուծումը չէր փրկում ձերբակալվածներին⁵⁰, կամ կաշառք էր գանձվում արդեն սպանված բանտարկյալներին ազատելու համար⁵¹: Ակնկալվող գումարից քիչ տրամադրվող կաշառքը նույնպես բավարար չէր ձերբակալվածների կյանքը փրկելու համար⁵²:

Ըստ Հայկանույշ Չառացյանի վկայության, Սուրբ Սարգիս եկեղեցու թաղի տղամարդկանց ոտքերը կապել և պայտել էին, ձեռքերը՝ գամել⁵³, իսկ կանանց կանգնեցնում էին խարույկի շուրջ և նրանց աչքի առջև ստորացուցիչ կերպով ծեծում և այրում էին տղամարդկանց⁵⁴, իսկ կանանց պարտադրում հետևել այդ տեսարանին⁵⁵:

Չնայած գործողությունների անթաքույց հանցավոր բնույթին՝ օտար ականատեսի ներկայությամբ փորձեր էին կատարվում դրանց տալու պաշտոնական ձև: Օրինակ՝ մի քրդի բազկին կարել էին կարմիր կտոր և տվել արտոնություն թալանելու ու կեղեքելու որպես ժանդարմ⁵⁶:

Տղամարդկանց գատումից և բանտարկությունից հետո որոշ դեպքերում քարավանին ստիպում էին շարունակել ճանապարհը⁵⁷: Եղել են նաև դեպքեր, երբ քարավանը պահել են մի քանի օր և շարունակել խուզարկությունները, ձերբակալություններն ու թալանը⁵⁸: Հասան Չելեբին լքելուց հետո քարավանի վրա էին հարձակվում քրդեր և

45 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 176:

46 Տե՛ս Տերտերեան, «*Արիւնի ճամբէս*», 75:

47 Տե՛ս Չառացյան, «*Սըվազ*», տե՛ս նաև՝ Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 199:

48 Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200, տե՛ս նաև՝ *Անբասարանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան*, 179; Տերտերեան, «*Արիւնի ճամբէս*», 73:

49 Գասմանեան, «*Պատմություն Վարդանուշ Գասմանեանի*», 172:

50 Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 171, տե՛ս նաև՝ Տերտերեան, «*Արիւնի ճամբէս*», 72:

51 Տե՛ս Համբարձումյան, *Գիւղաշխարհ*, 237:

52 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 191:

53 Տե՛ս Չառացյան, «*Սըվազ*», 114:

54 Տե՛ս նույն տեղում:

55 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200:

56 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

57 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 178: *Հուշագրական ժառանգություն*, 191, 212:

58 Տե՛ս Տերտերեան «*Արիւնի ճամբէս*», 72-78, տե՛ս նաև՝ Քոսեան, «*Գանդիպա Գոյումճեան*», 400-403:

կողոպտում արքայազններին ու գյուղում մնացած սայլերը⁵⁹: Սեբաստիայի Սուրբ Գևորգ թաղի քարավանի կանաչ գյուղը լքելիս լսել են սպանությունների աղաղակներ և փորձել են վերադառնալ ամուսինների մոտ, ինչը նրանց արգելվել է, իսկ դիմադրողները սպանվել են⁶⁰: Հայտնի է նաև դեպք, երբ քարավանն ընդդիմանալով մնացել է գյուղում⁶¹:

Վերը նշված բացառություններով և ամեն քարավանի առանձնահատկություններով հանդերձ, կարող ենք պնդել, որ այս փուլի հիմնական գործառույթը տղամարդկանց առանձնացումն ու ձերբակալումն էր, ինչն ուղեկցվել է թալանով՝ ուղղակի կամ կաշառքի միջոցով:

Երրորդ փուլ. տղամարդկանց բանտարկություն և սպանո

Ըստ Հասան Չելեբիի կառավարչի՝ կայան հասած քարավանների տղամարդկանց սպանությունները նախատեսված էին կայսրության բարձրագույն *իրապրևու*⁶² և շելխու-իսլամի շարիական *ֆեթվայու*⁶³:

Ձերբակալված տղամարդկանց բանտարկում էին գյուղի հրապարակում գտնվող շինություններում, որտեղ նաև տեղակայված էր կառավարչի գրասենյակը, որը համակարգում էր կայանի գործառույթները: Ըստ վկայությունների կարելի է տարբերակել երկու առանձին շինություններ. մեկը՝ պանդոկանման⁶⁴, մյուսը՝ ընդարձակ, խարխուլ գոմ⁶⁵: Ըստ հուշագիրներից մեկի՝ շինությունները կարող էին տեղավորել 40-50 մարդ, սակայն այնտեղ միանգամից բանտարկում էին 150-ից ավելի տղամարդկանց⁶⁶: Սրահների տարողունակությունը և մարդկանց քանակի խիստ անհամապատասխանությունը ստեղծում էին կյանքի համար վտանգավոր պայմաններ՝ հանգեցնելով շնչահեղձության, ուշաթափության և մահվան: Հատկանշական է, որ բանտարկության համար նախատեսված շինությունների հսկողությունը վստահված էր երկու անգեն պահակների⁶⁷: Բանտարկվածներն օդի պակասից շնչահեղձ էին լինում⁶⁸: Ըստ Սեբաստիայի Պեքմեզ-Սոխախ թաղի քարավանի մեջ եղած Սեպուհ Լուսարարյանի՝ տղամարդկանց բանտարկության պայմաններն այնքան անտանելի էին, որ բանտարկյալներն աղերսում էին գնդակահարություն, միայն թե դուրս գային

59 Տե՛ս Ջառացյան, «Մըվազ», 114:

60 Տե՛ս Չուգասըզեան, «Բզբրուած Սեբաստիան»:

61 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնասպարում*, 181:

62 Իրատէ - կայսերական հրամանագիր:

63 Ֆեթվա - կրոնական բարձրագույն անձի վճիռ: Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնասպարում*, 186:

64 Տե՛ս ՀԱԱ ֆ.439, ց.3, գ.115, տե՛ս նաև՝ Գաբրուանեան, *Ցաւակ*, 65:

65 Տե՛ս Գասմանեան, «Պատմություն Վարդանուշ Գասմանեանի», 172, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174; Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

66 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնասպարում*, 180, տե՛ս նաև՝ Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

67 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174:

68 Տե՛ս նույն տեղում, 172-173:

շնչելու⁶⁹: Եղել է դեպք, երբ տղամարդիկ այս պայմաններում, առանց սննդի և ջրի, ոտքի վրա մնացել են մեկ օր⁷⁰: Ջուր տալու և ուշքի բերելու նպատակով նվաղողներին հատ-հատ հանում էին դուրս: Բացի այդ, արձանագրված է դեպք, երբ բանտարկյալներին դուրս բերելուց հետո հաց և ջուր է բաժանվել⁷¹: Գրանցվել են նաև բանտարկվածների կողմից դռները կոտրելու և դիմադրություն ցույց տալու փորձեր⁷²: Ըստ մեկ վկայության՝ ուշագնացների թիվը երբ աճել է, բոլորին հանել են դուրս և նստեցրել բանտի պատի տակ⁷³: Որոշակի ժամանակ պահելուց հետո տղամարդկանց դուրս էին բերում՝ ներկայացնելու կառավարչին: Թեև ժանդարմները փորձում էին բանտարկյալներին հերթով դուրս բերել, նրանց խտության և ճնշվածության պատճառով մարդկային խմբերն անկանոն դուրս էին պրծնում⁷⁴ և շտապում մոտակա առվակի (իրականում արտաքնոցի) կեղտոտ ջուրը խմելու⁷⁵: Բանտարկված տղամարդկանց դուրս բերելուց հետո նրանց տանում էին մոտակա շինության՝ կառավարչական շենքի մոտ, որտեղ պետք է ներկայանային զինված քրդերով շրջապատված կառավարչին⁷⁶:

Կառավարչի հետ հանդիպումը, փաստորեն, արքայալների՝ մահից խուսափելու վերջին հնարավորությունն էր: Այդ հնարավորությունից օգտվելով՝ տղամարդիկ աղերսում էին փրկություն⁷⁷: Այս եղանակով են փրկվել Սեբաստիայի Պեքմեզ-Մոխախ թաղի քարավանի տղամարդիկ: Կառավարիչն առաջարկել է խմբի ավագներին՝ Ազգային հիվանդանոցի տեսուչ Մանուկ Էֆենդի Հեքիմյանին, նրա եղբայր Միհրանին և ևս մի քանի մարդու յուրաքանչյուրի համար վճարել հինգական ոսկի փրկագին: Այս պայմանավորվածության արդյունքում փրկագնով ազատվել է 18-20 մարդ, ևս 15-20 տղամարդկանց ազատ են արձակել առանց փրկագնի⁷⁸:

Գրանցվել է դեպք, երբ կեսգիշերին հաղորդվել է, թե իբր խղճահարությունից դրդված՝ Հասան Չելեբի գյուղի կառավարիչը հրամայել է տղամարդկանց ազատ արձակել և ի պատասխան պահանջել փրկագինը, որ իր ընտրած 2-3 հայերի միջոցով պետք է հաջորդ օրը ստանար: Տարագրյալները, իրար աջակցելով, հավաքել են գումարը և փոխանցել⁷⁹: Սակայն հաջորդ օրվա երեկոյան մի խումբ զինված քրդեր մի քանի փուլով կրկին բանտարկել են նրանց⁸⁰:

69 Տե՛ս նույն տեղում, 172:

70 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 212:

71 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

72 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 180:

73 Տե՛ս Գաբտանեան, *Ցառակ*, 66:

74 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 181:

75 Տե՛ս նույն տեղում:

76 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

77 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 181, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

78 Տե՛ս նույն տեղում:

79 Տե՛ս նույն տեղում, 165:

80 Տե՛ս նույն տեղում, 169-170:

Առավել մեծ թվով ներում է շնորհվել Սեբաստիա քաղաքից մեկնած վերջին քարավանների տղամարդկանց՝ ներկայացնելով դա որպես կայսերական ներում⁸¹, որը, սակայն, չէր տարածվում որոշ աչքի ընկնող տղամարդկանց վրա⁸²: Ըստ Հովհաննես Ալեքսանդրյանի վկայության, որը չի տալիս եղելության մանրամասները, իր քարավանից բանտարկված շուրջ 50 տղամարդու ազատ են արձակել⁸³: Փրկության այս վերջին հնարավորությունից հետո տղամարդկանց այլ վայր տեղափոխելու պատրվակով հանել են, գույգ-գույգ կապել⁸⁴ և առաջնորդել դեպի նախապես պատրաստված սպանդի տեղանք՝ լեռ, ապա հարթավայրի միջով՝ ձորի եզր⁸⁵: Տղամարդկանց ոչնչացման գործընթացի այս փուլը հիմնականում տեղի էր ունենում կեզգիշերից հետո⁸⁶: Խմբին ուղեկցում էին զինված ժանդարմներ և պահապան զինվորներ⁸⁷, երբեմն՝ նաև զինված գյուղացիներ⁸⁸: Նախանշված վայրին մոտենալիս ուղեկցող ժանդարմներն օդ էին կրակում, այսպիսով նշան տալիս տեղանքում դարանակալած և հարձակման սպասող քրդերին⁸⁹: Ազդանշանին հաջորդում էր քրդերի հարձակումը, որոնց խմբերում ներառված էին նաև կանայք⁹⁰:

Խմբին առաջնորդում են դեպի անդունդի եզրի ժայռերի մոտ, մերկացնում են, թալանում, դանակահարում, կացնահարում⁹¹ կամ գնդակահարում⁹² և վերջում շարտում են ձորը⁹³: Նման մի դիպվածի ժամանակ, երբ Սեբաստիայի Պեքմեզ-Սոխայի թաղի քարավանից մնացել են 8-10 գույգ իրար կապված երիտասարդներ, մոտեցել է մի զինվորական համազգեստով ձիավոր և իր մոտ կանչելով թրքախոս ջարդարարներից մեկին՝ հիշեցրել անչափահասներին խնայելու հրահանգի մասին և պատանիներից ստանալով իսլամանալու խոստում՝ ազատել նրանց⁹⁴: Սպանությունների այս վերջին փուլը տևել է 3-4 ժամ⁹⁵ և ուղեկցվել մարմնի մասնատումներով, գլխատումներով

81 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 186:

82 Տե՛ս նույն տեղում:

83 Տե՛ս ՀԱԱ ֆ.439, ց.3, գ.115, 23:

84 Տե՛ս Գամանեան, «Պատմություն Վարդանուշ Գամանեանի», 172:

85 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174; Գաբտանեան, *Ցաւակ*, 66; *Հուշագրական ժառանգություն*, 212:

86 Տե՛ս Քօսեան, «Գանդիլիս Գոյունճեան», 401, տե՛ս նաև՝ Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 175; Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

87 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66, տե՛ս նաև՝ *Հուշագրական ժառանգություն*, 212:

88 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

89 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 175, 181:

90 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 175:

91 Տե՛ս Սարգսյան, «Պատմության կարմիր, սև էջեր», 91, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիւղաշխարհ*, 223; *Հուշագրական ժառանգություն*, 212:

92 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

93 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 175:

94 Տե՛ս նույն տեղում, 176:

95 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

և այլ ծայրահեղ դաժանություններով⁹⁶: Սպանություններն իրագործած քրդերը գողացել են ընդհուպ մինչև սպանվածների արյունոտված հագուստները և դրանք հագած կամ ձեռքներում բռնած՝ վերադարձել գյուղ⁹⁷: Ըստ այս փուլը վերապարծի բառացի վկայության՝ մի զինված քուրդ հայտարարել է, որ բոլոր տղամարդկանց՝ որպես իսլամի թշնամիներ, պիտի խողխողենին, իսկ ով վճարեր մեկ⁹⁸ կամ երկու ոսկի⁹⁹՝ գնդակի գինը, կգնդակահարվեր: Երբ առավոտյան Գոչխասրի քարավաններից մեկի կանայք ցանկություն են հայտնել այցելելու իրենց ամուսիններին գումար և սնունդ տալու համար, նրանց հաղորդել են, որ տղամարդիկ սպանվել են լեռան հետևում և կանանց ծեծելով վռնդել են¹⁰⁰:

Եղել են զանգվածային սպանությունից մազապուրծ եղած և կացնահարումից¹⁰¹ կամ այլ խոշտանգումներից ծանր վիրավորվածներ, որոնք հետագայում միացել են քարավանին¹⁰²: Ըստ մեկ վերապրողի՝ հետևում են մնացել նաև այլ ծանր վիրավորներ, որոնք ի վիճակի չեն եղել դուրս գալու դիակների տակից¹⁰³, սակայն փրկվածները չեն համարձակվել վերջիններիս իրենց հետ տեղափոխել¹⁰⁴:

Հայտնի է նաև կանանց զանգվածային բանտարկության դեպք, երբ Սամսոնի քարավաններից մեկի տղամարդկանց սպանությունից հետո հավաքել են շուրջ 100 կանանց և բանտարկել մի տան մեջ, խուզարկել և թալանել: Ինչպես վերը նկարագրված գործընթացում, կանանց նույնպես կուտակել են նրանց քանակի հետ անհամատեղելի փոքրիկ սենյակում՝ առանց բնական կարիքների գոհացման թույլտվության: Կառավարական մի պաշտոնյա կանանց առաջարկել էր ազատել բանտարկությունից, եթե վերջիններս իսլամ ընդունեն¹⁰⁵: Ընդունողներին ազատել են, իսկ հրաժարվողներին՝ շուրջ 35 հոգի, որոնցից 6-7-ը՝ կաթոլիկ մայրապետներ, իջեցրել են ձոր, որպեսզի սպանեն, սակայն չեն սպանել՝ պատճառաբանելով սուլթանական ներումով¹⁰⁶: Գյուղի կառավարչի հետ քարավանի գեղեցիկ կանանցից մեկի հետ ամուսնանալու պայմանով քարավանին տրվել են Մալաթիա անվտանգ հասնելու երաշխիքներ¹⁰⁷: Մինչ այդ

96 Տե՛ս Գասմանեան, «Պարսկություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

97 Տե՛ս նույն տեղում, 172, տե՛ս նաև՝ Պեկեան, «Ամասիայի հայ ցարազրեալները»; Գաբունեան, Ցաւակ, 66:

98 Տե՛ս Լուսարարյան, Մի կյանքի պարսկություն, 175:

99 Տե՛ս Ակունի, Միջին մը հայերու շարդի, 96:

100 Տե՛ս Ա. հ., Սեքսադիա, 124:

101 Տե՛ս Գաբիկեան, Եղեռնապարտում, 179, տես նաև՝ Սարգսյան, «Պարսկության կարմիր, սև էջեր», 91; Համբարձումյան, Գիւղաշխարհ, 223; Բազուպեան, Եղեռնաքաղ որաներ, 81; Սվազյան, Հայոց ցեղասպանություն, 326:

102 Տե՛ս Հուշագրական ժառանգություն, 212:

103 Տե՛ս Գաբիկեան, Եղեռնապարտում, 184:

104 Տե՛ս Գասմանեան, «Պարսկություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

105 Տե՛ս Գաբունեան, Ցաւակ, 67:

106 Տե՛ս նույն տեղում, 67-68:

107 Տե՛ս նույն տեղում, 68-70:

այս կանանց քարավանը արդեն լքել էր կայանը, և խումբը վերադարձել է իջևանած վայր, ապա միացել հաջորդ քարավանին¹⁰⁸:

Հասան Չելեբի կայանում տեղի ունեցած սպանությունների ծավալներն ամփոփելու համար ներկայացնենք ձերբակալված և սպանված տղամարդկանց քանակի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած տվյալները: Ըստ Կարապետ Գաբրիլյանի՝ Սեբաստիա քաղաքի 15 քարավաններից յուրաքանչյուրից այստեղ սպանվել է 300-500 տղամարդ¹⁰⁹: Պեքմեզ-Սոխախի թաղի քարավանից, որի մեջ էր Կարապետ Գաբրիլյանը, կայանում սպանվել է 300 մարդ¹¹⁰ և 300-ից ավելի՝ Սեբաստիայից դուրս եկած երրորդ քարավանից¹¹¹: Նույնքան էլ սպանվել են Սեբաստիայի Սարը-Շելյս թաղի քարավանից¹¹²: Մայր եկեղեցու թաղի քարավանից բանտարկվել է մինչև 500 մարդ¹¹³, որոնցից շուրջ 300-ը¹¹⁴ սպանվել է: Սամսոնի քարավաններից մեկից, որի մեջ էր Փայլածու Գաբրուսյանը, ձերբակալվել և սպանվել է 100-ից ավելի տղամարդ¹¹⁵: Ըստ մի քանի վկայության՝ նույնչափ սպանվել են Ամասիայի քարավաններից մեկից¹¹⁶: Ըստ մի անստորագիր վկայության՝ Գոչխար գյուղից սպանվել են 100-200¹¹⁷, Ամասիայի մեկ այլ քարավանից, ըստ Հեղինե Բեկյանի՝ 200 հոգի¹¹⁸:

Մայր եկեղեցու թաղի քարավանի պարագան

Հասան Չելեբի կայանում հատուկ թիրախավորվել են նաև Սեբաստիա քաղաքի հարուստները¹¹⁹: Սրա ցցուն դրսևորումներից են օգոստոսի առաջին օրերին կայան ժամանած Սեբաստիայի Մայր եկեղեցու թաղի քարավանի հետ տեղի ունեցած դեպքերը: Այս թաղը Սեբաստիայի հայաբնակ մեծ թաղերից էր, և հարուստ գերդաստանները մեծ մասամբ այստեղից էին: Այստեղ էին բնակվում հայ բարերարները, քահանաները, ուսուցիչները, ազգային գործիչները, և բնական է, որ նման համբավ ունեցող թաղի քարավանը պետք է հատուկ թիրախավորման ենթակա լիներ¹²⁰: Քարավանի շուրջ 500 տղամարդկանց բանտարկել են և ազատ արձակելու համար պահանջել 500 ոսկի, ինչը բավարարվել է: Այնուհետև, առանց ելքի հրամանին սպա-

108 Տե՛ս Լուսարայան, *Մի կյանքի պատմություն*, 177:

109 Տե՛ս Գաբրիլեան, *Եղեռնասպալում*, 170:

110 Տե՛ս նույն տեղում, 179:

111 Տե՛ս նույն տեղում, 190:

112 Տե՛ս նույն տեղում, 186:

113 Տե՛ս նույն տեղում, 184:

114 Տե՛ս նույն տեղում, 185:

115 Տե՛ս Գաբրուսյան, *Յաւակ*, 66:

116 Տե՛ս Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

117 Տե՛ս Ա. հ., *Սեբաստիա*, 124:

118 Տե՛ս Պեկեան, «Ամասիայի հայ տարագրեալները», 0008 շրջ.:

119 Տե՛ս Ակունի, *Միտոն մը հայերու ջարդի*, 96, տե՛ս նաև՝ Լևոն Մեսրոպ, *Աղէր եւ վերածնունդ*, 272:

120 Տե՛ս Գաբրիլեան, *Եղեռնասպալում*, 183-184:

սերու՝ քարավանը ճամփա է ընկնել¹²¹: Գումարը ստանալուց և տղամարդկանց որոշ մասին բաց թողնելուց հետո կառավարիչը նորից է փորձել ձերբակալել նույն տղամարդկանց, սակայն տեսնելով, որ քարավանն արդեն մեկնում էր, հետ է կանգնել այդ քայլից¹²²: Հասան Չելեբիից դուրս գալուց 2-3 ժամ անց քարավանը կրկին կանգնեցրել են, սկսել են թալանել և ձերբակալել տղամարդկանց: Շատերին հաջողվել է թաքնվել: Ձերբակալել են 400-ից ավելի տղամարդկանց և բանտարկել մոտակայքում գտնվող մի խանում¹²³՝ կրկին պահաջելով կաշառք՝ երկուական ոսկի: Շատերը վճարել են գումարով, մնացածը՝ թանկարժեք առարկաներով, ինչից հետո մոտ 100 տղամարդու ժամանակավորապես ազատ են արձակել: Մնացածին՝ շուրջ 300 տղամարդու, վերը նկարագրված եղանակներով սպանել են մոտակա ձորում¹²⁴:

Մերի Գրեֆենի ներկայության հանգամանքը

Մերի Գրեֆենը 1902 թ. Սերաստիայում գործունեություն ծավալած նշանավոր ամերիկացի միսիոներուհի է, ով գրառվել է կրթական և հասարակական հայանպաստ գործունեությամբ, տնօրինել է Սերաստիայի աղջկանց վարժարանը¹²⁵: Գրեֆենը Կարինում պայքարել է բռնկված տիֆի համաճարակի դեմ¹²⁶: Հայ բնակչության զանգվածային տարագրության սկզբին վերադարձել է Սերաստիա և փորձել աջակցել հայ աքսորյալներին¹²⁷: Տեսնելով դպրոցի ուսուցիչների և աշակերտների բռնագաղթը՝ դիմել է կուսակալ Մուամմերին և ստանալով խմբերին ուղեկցելու և խնամելու արտոնություն¹²⁸, քարավանների կարիքները հոգալու համար միացել է նրանց¹²⁹:

Հուլիսի 11-ին Մերի Գրեֆենի քարավանը հասել է Հասան Չելեբի: Կայանում գտնվող նախորդ քարավանը քրդերը քարկոծելիս են եղել, սակայն Մերի Գրեֆենի հայտնվելուց հետո նման վերաբերմունքի դրսևորումները դադարել են դադարել է¹³⁰: Կայանի կառավարիչն անձամբ է ներկայացել Գրեֆենի քարավան և հավաքել տղամարդկանց՝ ասելով, թե կայմակամը ցանկություն է հայտնել արձանագրել նրանց անունները, որից հետո տղամարդիկ շուտով պիտի վերադառնային¹³¹:

121 Տե՛ս նույն տեղում, 184:

122 Տե՛ս նույն տեղում, 184-185:

123 Խան - իջևանատուն:

124 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնապատում*, 185:

125 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 208:

126 Տե՛ս նույն տեղում, 208-209:

127 Տե՛ս նույն տեղում, 100:

128 Տե՛ս նույն տեղում, 209:

129 Տե՛ս նույն տեղում, 398:

130 Տե՛ս Տեմիրճեան, *Չորս տարուան տատապանք*, 12-13:

131 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

Հաջորդ օրը տարված տղամարդկանցից մեկը վերադարձել է և պատմել, որ բոլորը հարկադրված էին հանձնել իրենց ամբողջ ունեցվածքը¹³²: Գրանկից հետո ձերբակալությունները վերսկսվել են. ձերբակալվել են նախորդ գիշերը խույս տված տղամարդիկ: Այս ձերբակալումից հետո Մերի Գրեֆենը դիմել է կառավարչին և ամերիկյան կառավարության անունից սպառնացել՝ պահանջելով ազատել տղամարդկանց¹³³: Նրան ի պատասխան՝ կառավարիչն ասել է, որ տղամարդիկ հետ են ուղարկվել Սերաստիա, սակայն ճանապարհին հանդիպած գյուղացիները հաղորդել են, որ նրանք սպանվել են¹³⁴: Այսպիսով, օտար ականատեսի ներկայությունը զսպել է այն դաժանությունները և հախուռն թալանը, ինչին ենթարկվել էին նախորդ քարավանները: Բացի այդ, փորձ է կատարվել տղամարդկանց ձերբակալությանը տալ «օրինական» տեսք: Արդյունքում՝ այս փուլի ընթացքում քարավանի մի հատվածը խուսափել է բռնություններից, իսկ տղամարդկանց սպանություններն իրականացնելու համար կայանի պատասխանատուները ստիպված են եղել դիմել այնպիսի մեթոդների, որոնցով սպանությունների մասին տեղեկությունն առժամանակ կթաքցվեր օտար վկայից:

Եզրակացություններ

1. Օսմանյան փաստաթղթերի և վերապրողների վկայությունների վերլուծությունը բերում է այն համոզման, որ կայանի գործունեությունը կազմակերպված է եղել քաղաքական և կրոնական բարձրագույն իշխանությունների ցուցումներով:

2. Հասան Չելեբի կայանում տեղի ունեցած գործողությունները կարելի է բաժանել երեք փուլի, ըստ որոնց՝ կայանի առաջին գործառույթը թալանը և կանանց նկատմամբ կիրառվող բռնություններն էին, որին հաջորդում էին տղամարդկանց հայտնաբերումն ու ձերբակալումը, ապա կայանում (կամ դրանից ոչ հեռու) տղամարդիկ զանգվածաբար բանտարկվում և սպանվում են:

3. Հասան Չելեբի գյուղում իրականացված գործողությունների համակարգային բնույթը, դրանց ծավալը և արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ այն Սերաստիա վիլայեթի և հարակից շրջանների չափահաս հայ տղամարդկանց ոչնչացնելու հիմնական կայանն է եղել:

4. Ոչնչացումը դյուրացնելու և մեղքի բաժինը կիսելու համար գործողություններում ներգրավվել է նաև քուրդ բնակչությունը, որին շահագրգռել են հարստացմամբ: Սպանությունները քրդերի միջոցով կատարելն ազատում էր նաև սպանությունների իրագործման համար անհրաժեշտ ծախսերից: Սպանությունները հիմնականում իրականացվում էին ծայրահեղ դաժանությամբ՝ սառը զենքով: Գնդակահարության միջոցով արագ մահվան համար նույնիսկ պահանջվում էր կաշառք:

5. Քարավաններից մեկում օտար ականատես, ԱՄՆ քաղաքացի միսիոներուի Մերի Գրեֆենի ներկայությունը ոչ լիարժեք, սակայն որոշակի կերպով ոճրագործների համար զսպող հանգամանք է եղել:

132 Տե՛ս նույն տեղում, 57:

133 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 191:

134 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

HASAN CELEBI: A STATION ON THE DEPORTATION ROUTE OF SEBASTIA

Key words: Armenian Genocide, six vilayets, Sebastia, Kharberd, Hasan Celebi, deportation, massacre of men, robbery, foreign witnesses.

SUMMARY

The paper examines one of the transitional stations – Hasan Chelebi – used during the deportations of the Armenian population of Sebastia in the context of the Armenian Genocide. Using mainly Armenian archival, press sources, collections of memoirs as well as secondary sources, and by combining them with the information provided by foreign witnesses and the Ottoman documents the paper presents the outline of the main functions and the sequence of the transitional station, the behavior of the victim and perpetrator groups and the implemented actions. Based on the systematic nature of the actions the paper reveals the main mission of the station, which is the extermination of the male population of Sebastia vilayet and the surrounding areas. The Kurdish population of the surrounding areas of Hasan Chelebi took part in the extermination and looting. The presence of the foreign witness Mary Graffam in the deportation caravan had a somewhat restraining influence. The testimonies of the survivors demonstrate that the actions undertaken at the station were implemented under the instructions of the higher political and religious authorities.

Роберт А. Сукиасян

ХАСАН ЧЕЛЕБИ. ОБ ОДНОМ ПЕРЕВАЛОЧНОМ ПУНКТЕ НА ПУТИ ДЕПОРТАЦИИ ИЗ ПРОВИНЦИИ СЕБАСТИЯ

Ключевые слова: Геноцид армян, шесть вилайетов, Себастиа, Харберд, Хасан Челеби, депортация, массовые убийства мужчин, грабеж, иностранные очевидцы.

РЕЗЮМЕ

В статье рассматривается одна из перевалочных станций, использовавшихся во время депортации армянского населения Себастии в контексте Геноцида Армян – перевалочная станция Хасан Челеби. Используя в основном армянские архивные материалы, источники в прессе, сборники воспоминаний и вторичные источники, в сочетании с информацией, предоставленной иностранными очевидцами и османскими документами, в статье дается описание основных функций и порядка работы перевалочной станции, поведения жертв и преступников и предпринятых ими

действий. Основываясь на систематичности характера проводимых мероприятий, в статье раскрывается основная задача станции: уничтожение мужского населения Себастьянского вилайета и прилегающих территорий. Курдское население близлежащих районов Хасан Челеби участвовало в уничтожении и разграблении. Присутствие иностранного очевидца Мэри Грэффэм в караване депортации оказало некоторое сдерживающее влияние. Рассказы выживших жертв свидетельствуют о том, что действия, предпринятые на станции, осуществлялись по указанию высших политических и религиозных деятелей.

REFERENCES

Aknuni, Sepuh. *Միլիոն մը հայերու ջարդի անբողջական պատմությունը (1914-1918)* [*Complete History of Massacres of Millions of Armenians (1914-1918)*]. Constantinople: Hayastan gratun, 1921.

Chugasëzean, Vahan. «Բզրոնած Սեբաստիան» [Torned Sebastia]. *Eritasard Hayastan* (Chicago), 11 October 1919.

Gabikyan, Karapet. *Եղեռնապատում. Փոքրն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիայի* [*Eghernapatum of the Poqr Hayiq and the New Big Capital Sebastia*]. Boston: Hayreniq, 1924.

Gabtanean, Paylat'su. *Ցաւակ* [*Pain*]. New York: Armenia, 1922.

Gasmanyanyan, Vardanush. *Պատմություն Վարդանուշ Գասանյանցի սիվասցի* [*History of Vardanush Gasmanyanyan from Sivas*]. BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

Hakobyan, Tadevos, Meliq-Bakhshyan, Step'an and Barseghyan, Hovhannes. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3* [*Vocabulary of Toponyms in Armenia and Neighboring Territories*]. Yerevan: Yerevan State University, 1991.

Hambarts'umyan, Vahan. *Գիղաշխարհ. Պատմական, ազգագրական ուսումնասիրություն* [*Village World: Historical, Ethnographic Study*]. Paris: Taron, 1927.

Հուշագրական ժառանգություն [*Legacy of Memoirs*]. HCHU Himnadrami gitakan usumnasirutyunner, Vol. 14. Yerevan: Foundation on Research of Armenian Architecture, 2011.

Lusararyan, Sepuh. *Մի կյանքի պատմություն* [*A History of One Life*]. Armenian Genocide Museum-Institute, Section of Handwritten memoirs, file 127, 128, 129.

Օհաննես Ալեքսանդրեանի հուշերը 1915 թ. եղեռնի մասին [*Memories of Ohannes Aleksanyan on 1915 yeghern*]. National Archives of Armenia, section 439, f. 3, file 115:

Mesrop, Levon. *Աղէր և վերածնունդ* [*Catastrophe and Renaissance*]. Paris: Araks, 1952.

Pekean, Heghine. *Ամասիայի հայ փախազրեակները* [*Armenian Exiles of Amasia*]. Nu/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

Qasuni, Yervand. *Քննական ակնարկ «Միշրների հերըլդ»-ի 1915-1918 թթ. հայ ժողովրդի գեղասպանության և վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն* [A Critical Overview of Testimonies on 1915-1918 Armenian Genocide and Renaissance by Missionary Herald]. Beirut: M.A.H.A.E., 2012.

Qosean, Hakob. «Գանտիտա Գոյումճեան. Աքսորի ճամբան (1915)» [Gantita Guyumchean: An Exile Route (1915)]. *Hande's amso' rea* 1 no. 12 (2015), 345-483:

Ragupean, Eduard. *Եղեռնաբաղ դրաներ* [Reaped by Yeghern]. Beirut: Shirak Press, 1968.

Sargsyan, Suren. *Պատմության կարմիր, սև էջեր, սաքսասյակյան գործեր, եղեռնը* [Red, Black Pages of History, Demon Affairs, Yeghern]. Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia, Archives, file no. 121/2.

Simonean, Gabriel. *Յուշանարեան պոնտական Ամասիոյ* [Memory Book of Pontus Amasia]. Venice, 1966.

Svazlyan, Verjine. *Հայոց գեղասպանություն. ակնմարտի վերապրողների վկայություններ* [Armenian Genocide: Testimonies of Witness Survivors]. Yerevan: Gitut'yun, 2011.

Temirchyan, Sargis. *Չորս տարուան տառապանք, Եդրկացի (Թոքսար) օր. Թեփերիկ Չալրգեանի քսորի կեանքէն* [Four Years of Sufferings, Teperik Chalgean's (from Tokat) Exile Life]. New York: Hayk, 1920.

Terteryan, Shahan. «Արիւնի ճամբէս. Դէպի Գողգոթան» [My Bloody Way: To Golgotha]. *Hayreniq* 11 no. 298 (1950), 1 no. 323 (1953).

Vardan, Levon. *Անբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան* [Accusatory Reports of Sebastia]. *Haykazyan hayagitakan handes* (1995): 499-519.

Zarat'syan, Haykanush. *Սրվազ* [Sivas]. BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԵԻՑ ՀՈԼՈՔՈՍԻԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Բանալի քառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հրեից հոլոքոստ, իրագործողներ, հասարակություն, բանակ, հանցագործներ, ոստիկանություն, գաղտնի կազմակերպություն, Թեշ-քիլաթը մահուսա, գերմանական Էսէս:

Հողվածում Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի համեմատության շրջանակներում ներկայացվում են երկու ցեղասպանությունների իրագործման մեխանիզմները: Առանձին-առանձին ներկայացվում են ցեղասպանական ծրագրում ներգրավված բոլոր խմբերը: Առաջինը հասարակությունն է, որի ներգրավվածությունը ցեղասպանության իրականացմանը հնարավորություն էր տալիս իշխանություններին՝ խնայելու սեփական ուժերը և ցեղասպանական գործողությունները քողարկելու ժողովուրդների բախումների անվան ներքո: Հատկանշական է, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ, անկախ դրդապատճառներից, մեծ է եղել տարբեր ժողովուրդների, իսկ հրեաների պարագայում նաև պետությունների, ցուցաբերած աջակցությունը համապատասխանաբար՝ օսմանյան և նացիստական իշխանություններին: Ներկայացված երկրորդ խումբը բանակն էր, որի մասնակցությունը կարևոր էր հատկապես հայ տղամարդկանց գինաթափումը և հավաքագրումն իրականացնելու, իսկ հոլոքոստի պարագայում՝ հրեաներին հայտնաբերելու համար: Գործում էր մեկ ամբողջական համակարգ, որը ներառում էր իրար շաղկապված մի քանի ռազմական կամ կիսառազմականացված կառույցներ: Քննարկվում է նաև ոստիկանության մասնակցությունը, որը, լինելով օրենքի պաշտպան, ինքն էր խախտում օրենքը, ինչպես նաև օգտագործում այդ նույն օրենքը՝ արդարացնելու իր գործողությունները: Օգտագործվում էին նաև բանտերից ազատ արձակված հանցագործները, որոնք մի կողմից համալրում էին ռազմականացված ինստիտուտների շարքերը, մյուս կողմից օգտագործում էին իրենց փորձառությունը սպանություններ իրականացնելու գործում:

Գաղտնի կազմակերպությունները (Թեշքիլաթը մահուսա¹ և գերմանական Էսէս) դարձան երկու ցեղասպանությունների գլխավոր իրագործողները, որոնք ոչ միայն օժանդակեցին ցեղասպանության ծրագրի իրագործմանը, այլև ստանձնեցին դրա իրագործման պատասխանատվությունը: Ակնհայտ է, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործել է ամբողջական, փոխկապակցված համակարգ:

Ցեղասպանությունները, անկախ իրենց իրականացման ժամանակաշրջանից, դրդապատճառներից, իրագործման մեխանիզմներից և հետապնդման նպատակներից, հանգեցնում են մեծաթիվ մարդկային, տնտեսական և/կամ դրանցից բխող այլ կորուստների: Սա նշանակում է, որ նման ընդգրկուն հանցագործություն իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ: Դրանք են՝ հասարակության անհատ անդամներ, պետական համա-

1 Թուրքերեն Teşkilât-ı Mahsusa, որ թարգմանաբար նշանակում է հատուկ կազմակերպություն: Այսուհետ կօգտագործենք՝ Թեշքիլաթը մահուսա կամ Հատուկ կազմակերպություն:

կարգի տարբեր կառույցներ, ռազմականացված կամ կիսառազմականացված կազմակերպություններ և այլն, ինչն էլ հանցագործությանը հաղորդում է զանգվածային բնույթ: Ցեղասպանության իրագործման զանգվածայնության վառ նկարագրություն է Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Հալի Մենթեշեի այն խոստովանությունը, որ Անատոլիայում շատ քիչ են թուրքերը, ովքեր արքայի հետ կապ չունեն²:

Գոյություն ունի մեծաքանակ գրականություն՝ նվիրված զանգվածային սպանություններին ու ցեղասպանություններին, որոնց մեծ մասը վերաբերում է դրդապատճառների վերհանմանը և առաջնորդներին, ովքեր կազմակերպում և լեզվախմբացնում են զանգվածային սպանությունները և ցեղասպանությունը: Կան մի շարք աշխատություններ, որոնք քննության են առնում փաստացի սպանություններն իրագործողներին և նրանց՝ ցեղասպանության իրագործման մեջ ներգրավվելու խնդիրները³: Ցեղասպանության իրագործման մեխանիզմների ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր հետազոտող, փորձելով բացահայտել դրանց իրականացման պատճառները, նախևառաջ պետք է քննարկի «գործիքակազմը» և գործադրված մեթոդները: Քանի որ ուսումնասիրության առումով առաջ քաշված խնդիրները չափազանց ընդգրկուն են, տվյալ հոդվածում անդրադարձ է կատարվում լոկ ցեղասպանության իրականացման «գործիքակազմի» մաս կազմող՝ հասարակության շարքային անդամներին և պետական կառույցների որոշ ստորաբաժանումների:

Ցեղասպանությունների իրագործմանը հասարակության լայն ընդգրկվածություն հնարավոր է լինում ապահովել դեռևս նախապատրաստական փուլում՝ թիրախավորված խմբի դեմ ուղղված քարոզչության միջոցով:

Ցեղասպանություններում քարոզչության դերի մասին ցեղասպանագետներ Ֆրենք Չոքը և Քուրթ Յոնասոնը հայտնում են այն տեսակետը, որ ցեղասպանություն կատարելու համար հանցագործը նախ՝ պետք է հակաքարոզչություն իրականացնի՝ թիրախավորված խմբին արժեզրկելու, ապամարդկայնացնելու համար՝ դրանով իսկ

2 Арсен Авакян, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* (Ереван: НАН РА Музей-Институт Геноцида Армян, 2013), 121.

3 Փաստացի սպանություններ իրագործողների մասին տե՛ս, օրինակ, Christopher Browning, *Ordinary men. Reserve Policie Battalion 101 and the Final Solution in Poland* (London: Penguin Books, 2001); Daniel Goldhagen, *Hitler's Willing Executioners. Ordinary Germans and the Holocaust* (New York: Vintage Books, 1996); Dona J. Maier, "Women Leaders in the Rwanda Genocide: When Women Choose To Kill," *Universitas* 8 (2012-2013): 1-20; Reva N. Adler, Cyanne E. Loyle and Judith Globberman, "A Calamity in the Neighborhood: Women's Participation in the Rwandan Genocide," *Genocide Studies and Prevention: An International Journal*, 2, no. 3 (2007): 209-232; Kerrilee Hollows and Katarina Fritzon, "Ordinary Men" or "Evil Monsters"?: An Action Systems Model of Genocidal Actions and Characteristics of Perpetrators," *Law and Human Behavior*, 36, no. 5 (2012): 458-467: Հայոց ցեղասպանության համատեքստում տվյալ խնդրի վերաբերյալ տե՛ս Ավաքյան, *Геноцид армян*; Հասմիկ Գրիգորյան, *Հանգվածները և զանգվածային բնույթունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017); Սուրեն Մանուկյան, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII (2012), 342-350:

օտարելով տվյալ խմբին գերադասվող խմբից⁴: Այդուհանդերձ, հեղինակները նշում են, որ նույնիսկ այսպիսի անմարդկային և անողոք քարոզչությունից հետո զանգվածային սպանություն իրագործելու համար պահանջվում են հարկադրանք և կենտրոնացված վերահսկողություն⁵:

Այնուամենայնիվ, քարոզչությունը գուցե անհրաժեշտ, սակայն միակ գործիքը չէ. կարևորագույն հարցը մնում է այն, թե ինչպես է մարդը, անկախ այն բանից հասարակության շարքային անդամ է, թե՞ պետական համակարգի ներկայացուցիչ, դառնում մարդասպան, հատկապես ցեղասպանություն իրագործող: Մշակութաբան, ցեղասպանագետ Հասմիկ Գրիգորյանն իր ուսումնասիրության մեջ, անդրադառնալով «ովքե՞ր են ցեղասպանություն իրագործողները, և որո՞նք են նրանց դրդապատճառները» հարցադրումներին, նշում է, որ դրանք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել Հրեից հոլոքոստի օրինակով⁶: Եվ հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ տվյալ հոդվածում փորձել է տրված հարցը քննարկել Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի համեմատական վերլուծության ճանապարհով:

Քննարկվող հարցադրումների վերաբերյալ առկա են երկու հիմնական մոտեցումներ, որոնք առաջ են քաշել ամերիկացի պատմաբաններ, Հրեից հոլոքոստի պատմության մասնագետներ Քրիստոֆեր Բրաունինգը և Դանիել Գոլդհագենը⁷: Հեղինակների տեսակետերն առանձին գլխով մանրամասն քննության են առնված Հ. Գրիգորյանի վերոնշյալ աշխատության մեջ: Հեղինակը վերլուծում է ամերիկացի հետազոտողների իրարամերժ մոտեցումները Հոլոքոստի իրագործմանը ներգրավվելու հարցի շուրջ, այսինքն, երբ այն պայմանավորված է իրավիճակային հանգամանքով, առանց որևէ գաղափարախոսական նախատրամադրվածության (Ք. Բրաունինգ), և երբ այն պայմանավորված է գաղափարախոսությամբ՝ հակահրեականությամբ (Դ. Գոլդհագեն):

Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այս բանավեճի արդյունքում գիտնականների մի մասը ցեղասպանության իրագործումը կապում էր գաղափարախոսության հետ, իսկ մյուս մասը հերքում էր այն⁸: Եթե, օրինակ, Բենիամին Վոլենտինոն կարծում էր, որ գաղափարախոսությամբ առաջնորդվում են հիմնականում առաջնորդները կամ վերնախավի անդամներ⁹, ապա Թիմոթի Վիլյամսն այն կարծիքին էր, որ ցեղասպանությունների իրագործման հիմքում ընկած է երկու գլխավոր դրդապատճառ՝ «ատելություն» և «գաղափարախոսություն», որոնք թեև տարբեր հասկացություններ են, բայց երբեմն հաջողությամբ փոխազդում և լրացնում են

4 Frank Chalk and Kurt Jonassohn, *The History and Sociology of Genocide, Analyses and Case Studies* (New Haven & London: Yale University Press, 1990), 28.

5 Նույն տեղում:

6 Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 14:

7 Browning, *Ordinary men*; Goldhagen, *Hitler's Willing Executioners*.

8 Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

9 Benjamin Valentino, *Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century* (Ithaca New York: Cornell University Press, 2004), 31, հղվում է ըստ Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

միմյանց. «Մինչ *հնագույն արեւլություն* հասկացությունը որպես դրդապատճառ լայնորեն մերժվում է ակադեմիական շրջանակներում, ցեղասպան վերնախավը գործածում է որոշ գաղափարներ՝ թիրախային խմբի նկատմամբ ատելություն սերմանելու համար՝ դրանով իսկ գաղափարապես օրինականացնելով ցեղասպանության գործընթացը և իր վրայից թոթափելով մեղադրանքի հնարավոր սպառնալիքը»¹⁰:

Ընդհանուր առմամբ ներկայացնելով շրջանառության մեջ գոյություն ունեցող մոտեցումները ցեղասպանությունների հասարակության տարբեր շերտերի մասնակցության դրդապատճառների վերաբերյալ՝ փորձենք ներկայացնել ցեղասպանությունների իրականացման ամբողջական շղթան՝ առանձին-առանձին անդրադառնալով դրա բաղկացուցիչ օղակներին: Քանի որ յուրաքանչյուր խումբ կարող է դառնալ նաև որպես առանձին ուսումնասիրության թեմա, այստեղ համառոտ ներկայացվում են լոկայն հիմնական սոցիալական խմբերը, որոնք ակտիվորեն մասնակցել են և՛ Հայոց ցեղասպանության, և՛ Հրեից հոլոքոստի իրագործմանը՝ մասնավորապես անդրադարձ կատարելով որոշ ընդհանրությունների և տարբերությունների, որոնք կարող են հող նախապատրաստել հետագա համեմատական ուսումնասիրությունների համար:

Հասարակության անդամներ (հարևան կամ այլ ժողովուրդներ): Պատմագիտության, մասնավորապես ցեղասպանագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ ցեղասպանություն իրագործած երկրի ժողովուրդը, հասարակությունն ունեն մեղքի իրենց մեծ բաժինը¹¹: Այդ նույն ժողովուրդը կարող է աջակցել և ներգրավվել ցեղասպանական ծրագրի իրականացման մեջ, կարող է փրկել թիրախային խմբի ներկայացուցիչներին նույնիսկ իր կյանքին սպառնացող վտանգի առկայության պարագայում կամ անկողմնակալ մնալ կատարվող իրադարձություններից:

Հասարակության անդամների մասնակցությունը դրսևորվում է ինչպես համակարգված՝ ռազմականացված կառույցներում գործելով, այնպես էլ իրավիճակի դրդմամբ՝ անհատապես:

Հայոց ցեղասպանությանը հասարակության մասնակցության ձևերի հարցն իր ժամանակին քննարկվում էր պետական մակարդակով և ցեղասպանական ծրագրի կարևոր տարրերից էր, որի մասին փաստում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «10 պատվիրաններ» անունով փաստաթուղթը, որը ստեղծվեց՝ ավելի հեշտացնելու իշխանությունների գործը, քանզի էապես խորացրեց հայերի նկատմամբ մուսուլման բնակչության հակակրանքը և ատելությունը¹²:

Թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ Հրեից հոլոքոստի դեպքում հիմնական շարժիչ ուժը իշխանությունների ծավալած քարոզչությունն էր, որն իրականացվում էր մի քանի ուղղություններով:

10 Timothy Williams, “The Complexity of Evil: a Multi-Faceted Approach to Genocide Perpetration,” *Zeitschrift für Friedens-und Konfliktforschung* 3, no. 1 (2014): 76, հղվում է ըստ Գրիգորյան, *Չանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

11 Միկոլայ Հովհաննիսյան, *Արաբական երկրների պայքարություն*: Հատոր II, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918 (Երևան, «Չանգակ-97», 2004):

12 Vahakn Dadrian, “The Secret Young-Turk Ittihadist Conference and Decision for the World War I Genocide of the Armenians,” *Holocaust and Genocide Studies* 7, no. 2 (1993): 173-201.

Առաջին հերթին աշխատանք էր տարվում հասարակ ժողովրդի կամ պոստնեցիալ մարդասպանների շրջանում: Այստեղ գործում էր հետևյալ ծրագիրը. գոհ խումբը դառնում էր մեղադրանքների թիրախ, արժեզրկվում էր և օտարվում ընդհանուր հասարակական արժեքային համակարգից: Սա հայերի և հրեաների նկատմամբ այլ ժողովուրդների մեջ առկա հակակրանքը խորացնելու, ատելություն սերմանելու նպատակ ուներ: Առաջացած հակահայկական և հակահրեական մթնոլորտում ավելի դյուրին կլիներ պետության քաղաքացիներին ուղղորդել իշխանությունների հետ համագործակցության և ներքաշել զանգվածային սպանություններ իրականացնելու անմիջական գործընթացի մեջ:

Քարոզչության հիմք էին ծառայում մի շարք հանգամանքներ: Օրինակ՝ քաղաքական, որն իթթիհատականները շահարկում էին Հայոց ցեղասպանության պարագայում՝ հայերին մեղադրելով պատերազմի ժամանակ Ռուսաստանին աջակցելու և Օսմանյան կայսրությանը դավաճանելու մեջ¹³: Հակահայ քարոզչության համար օսմանյան իշխանություններն ակտիվ շահարկում էին նաև 1915 թ. կայսրության մի շարք վայրերում հայերի ինքնապաշտպանական մարտերը՝ դրանք ներկայացնելով որպես ըմբոստություն օսմանյան վարչակարգի դեմ¹⁴: Ջանքեր էին գործադրվում նաև կայսրության այլ ժողովուրդների մեջ առկա հակահայ տրամադրությունները բորբոքելու ուղղությամբ:

Հայոց ցեղասպանությանն ակտիվ մասնակցություն ունեցան քրդերը, չերքեզները, ինչպես նաև որոշ վաչկատուն արաբական ցեղեր¹⁵: Քրդերը և չերքեզները գործում էին ոչ միայն հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsusa)¹⁶ շրջանակներում, այլ նաև սեփական նախաձեռնությամբ: Չերքեզներն ակտիվ էին հատկապես Ռասուլ-Ալ-նում ապաստանած հայերին բնաջնջելու գործում¹⁷: Արևմտյան Հայաստանի տարածքում հատկապես մեծ էր քուրդ բնակչության մասնակցությունը հայերի բնաջնջմանը: Քրդերին հայերի դեմ օգտագործելու նպատակով երիտթուրքական կառավարությունը հրահրում էր հայերի և քրդերի միջև առկա հողային «վեճը», որն ավելի էր թեժացել 1908թ. սահմանադրության հռչակումից հետո¹⁸: Քրդերի մեծ մասը ներգրավված էր սկզբում «համիդիե» խմբերում, այնուհետև՝ դրա հիմքով ստեղծված Թեշվիլյաթը մահուսայի շարքերում:

13 Ահմեդ Ռեֆիկ, *Երկու կոմիսյոնե՝ երկու ոճիր* (Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ, 1997), 51:

14 Մաթոյան Տիգրան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստը. համեմատական փորձ* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 140:

15 Նույն տեղում, 110:

16 Teşkilât-ı Mahsusa-ն Օսմանյան կայսրության զինված ուժերի ստորաբաժանում էր, որը զբաղվել է հակահետախուզությամբ: Ենթարկվում էր կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշային: Հիմնական գործառույթը հայերի տեղահանությունները և ջարդերն իրականացնելն էր: Ավելի մանրամասն տե՛ս «Հատուկ կամ գաղտնի կազմակերպություններ» ենթագլխում:

17 Մաթոյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստը*, 110:

18 Մանրամասն տե՛ս Վահան Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում* (Երևան, «Հայաստան», 1989):

Հասարակության մասնակցության հիմնական շարժիչ ուժ էր նաև սեփական շահը, որը դրդում էր այլ ժողովուրդների մասնակցել իրենց հարևանների կոտորածներին և տիրանալ նրանց ունեցվածքին: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս պարագայում ևս կարմիր թելով տարվում էր կրոնական գործոնը: Ակտիվ շրջանառվում էր այն թեզը, համաձայն որի՝ անհավատ հայերը տիրացել են մահմեդական ժողովրդի ունեցվածքին: Որոշ շրջաններում, ինչպես օրինակ՝ Տիգրանակերտի նահանգում, կրոնավորների կողմից հայտարարվում էր. «Գյավուրների ունեցվածքը, կյանքը և կինը հալալ է իսլամին»¹⁹:

Հասարակության ներգրավմանը նպաստեցին կառավարության կողմից քուրդ և մուսուլման բնակչությանը տրված թալանի, կողոպուտի արտոնությունները: «Գյուղերում մուսուլման բնակչությունը բավարարված է նրանով, որ հարստացել է հայերի հաշվին», - Բեռնում գեկուցել էր Շվեյցարիայում Ռուսաստանի պատվիրակը՝ ավելացնելով, որ հայ փախստականներն իրենց ավելի լավ են զգում նոր հաստատված վայրերում, քան նախկինում²⁰:

Այսպիսով, օսմանյան իշխանությունների ջանքերով ի հայտ եկան բոլոր նպաստավոր շարժառիթները՝ հասարակությանն անմիջական մասնակից դարձնելու համար:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության, որում ներգրավվեցին Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովուրդները, Հոլոքոստի ժամանակ ընդունված է համարել, որ գերմանացիներին օժանդակում էին հարևան երկրները և ժողովուրդները: Կարծիք կա, որ հատկապես մեծ էր աջակցությունը Գերմանիայի օկուպացրած տարածքներում: Օրինակ՝ Մերձբալթիկայում հակահրեական միջոցառումների ժամանակ մեծ օգնություն են ցուցաբերել լիտվացի կամավորականները, լատվիական օժանդակ ուստիկանությունը, ուկրաինացի ազգայնականները և այլն²¹: Մերձբալթիկայում գործող հիմնական ուժը Վալտեր Շոախլեքերի ղեկավարած «А» այնզացխումբն էր, որի անդամների թիվը կազմում էր մոտ 990 հոգի²²: Այստեղ գերմանացիներին մեծ աջակցություն ցուցաբերեցին ինչպես տեղաբնիկները, այնպես էլ այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Ռուս պատմաբան Իլյա Ալտմանը շեշտում է, որ հասարակության մասնակցությունը Մերձբալթիկայում աննախադեպ էր. «Հատկապես այս տարածքներում էր, որ հրեաների նկատմամբ նացիստական ցեղասպանությունն առաջին անգամ զանգվածային բնույթ ստացավ»²³:

Հիմնվելով մի շարք վկայությունների վրա՝ Ալտմանը հանգում է այն եզրակացության, որ Մերձբալթիկայում հրեաների սպանություններն իրականացրել են ոչ այնքան

19 Թ. Մկրտիչեան, *Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրդերու գազանութիւնները* (Գահիրե, 1919), 47:

20 Авакян, *Геноцид армян*, 122:

21 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 110-111:

22 Григорий Смирин, “Холокост: кто и как убивал евреев в Латвии,” <https://baltnews.lv/uzvara/20150318/1013645714.html>, դիտվել է 13.11.2018:

23 Илья Альтман, “Холокост и Еврейское Сопротивление на Оккупированной Территории СССР, Уничтожение евреев в Прибалтике,” http://jhistory.nfurman.com/shoa/hfond_100.htm, դիտվել է 13.11.2018:

գերմանացիները, որքան տեղի ժողովուրդները²⁴: Իսկ ինչ վերաբերում է հասարակության անդամների մասնակցության դրդապատճառներին, ապա դրանք դեռևս վերջնականապես հստակեցված չեն: Որոշ դեպքերում դա եղել է քսենոֆոբիայի²⁵ արդյունքում, վրեժխնդրության պատճառով, որի հիմքում իբրև թե հրեաների համագործակցությունն էր խորհրդային իշխանությունների հետ, հրեաների ունեցվածքի հանդեպ նախանձը կամ շատ դեպքերում՝ հակահրեական դրսևորումների անպատժելիության արդյունքում ստեղծված ամենաթողության մթնոլորտը²⁶:

Գերմանացիներին մեծ օգնություն էին ցուցաբերում նաև ուկրաինացի ազգայնականները, ինչպես նաև ուկրաինական օմանդակ ոստիկանությունը²⁷:

Մեծ էր աջակցությունը նաև մահմեդական ժողովուրդների կողմից: Մահմեդականների հետ գերմանացիների սերտ համագործակցությունը պայմանավորված էր Գերմանիայի համար չափազանց կարևոր մի քանի գործոններով՝ միջուկային զենքի արտադրությամբ, հրթիռաշինության ոլորտում համագործակցությամբ և իսլամական ծայրահեղականության հետագա ակտիվացմամբ, որոնք, սակայն, չիրականացան 1945թ. Երրորդ ուսլիսի փլուզման հետևանքով²⁸: 1942 թ. Էսէս-ի²⁹ կազմում սկսեցին ձևավորվել առաջին մահմեդական ջոկատները³⁰: 1944 թ. Հիտլերի մտերիմ ընկեր, գերմանական գաղտնի գործակալ, Երուսաղեմի մուֆտի³¹ ալ-Հուսեյնի օրհնությամբ կազմավորվեց Էսէս-ի մահմեդական «Նոր-Թուրքեստան» («Ново-Туркестан»)՝ ջոկատը: Նույն թվականին 11.000 արբանացիներից կազմվեց «Սկանդերբերգ» («Скандерберг»)՝ ջոկատը, որի առաջին առաքելությունը եղավ Պրիշտի-նայի 300 հրեաներին համակենտրոնացման ճամբար ուղարկելը³⁴:

24 Նույն տեղում:

25 Քսենոֆոբիա կամ այլատյացություն՝ ատելություն օտար, անծանոթ, արտասովոր և ուրիշների համար անընկալելի երևույթների նկատմամբ: Այն կարող է հանգեցնել մի շարք ազգային, կրոնական կամ սոցիալական տարբեր ներկայացուցիչների միջև պայքարի:

26 Альтман, “Холокост и Еврейское Сопротивление”.

27 Круглов Александр, “Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.,” *Голокост і сучасність* 5 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip5/vip5_3.htm#15_gu, դիտվել է 13.11.2018:

28 Шимон Бриман, “Мусульмане в СС,” *Голокост і сучасність* 4 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip4/vip4_3.htm#14_gol, դիտվել է 13.11.2018:

29 Էսէս (գերմ.՝ SS (էսէս), Schutzstaffeln-ի՝ պահնորդական ջոկատներ), արտոնյալ ռազմականացված կազմակերպություն ֆաշիստական Գերմանիայում:

30 Бриман, “Мусульмане в СС”.

31 Մուֆտին (արաբ.՝ մուֆտի, աֆտի – կարծիք արտահայտել) իսլամի սուննի ուղղության մեջ բարձրագույն հոգևոր անձն է, ով կարող է կրոնական ու կրոնաիրավական հարցերում պարզաբանումներ տալ ու հարկ եղած դեպքում ընդունել յուրօրինակ որոշումներ:

32 Կազմավորվել է նացիստական Գերմանիայի զինված ուժերի արևելյան «Թուրքմենստանի լեգեոն»-ի շրջանակներում: Լեգեոնում ներգրավված էին Կենտրոնական Ասիայի թրքալեզու ժողովուրդները՝ ուզբեկներ, թուրքմեններ, թաթարներ, դազախներ և այլն:

33 Վաֆֆեն-Էսէս-ի 21-րդ լեռնահրաձգային դիվիզիա (գերմ.՝ Waffen-Gebirgs-Division der SS “Skanderbeg” (albanische Nr.1)):

34 Бриман, “Мусульмане в СС”.

Հրեաներին իրենց երկրներից արտաքսելու կամ հենց իրենց տարածքում սպանելու գործում նացիստական Գերմանիային օգնել են մի շարք երկրներ՝ Հունգարիան, որտեղից ավելի քան 400.000 հրեաների արտաքսեցին Աուշվից (Օսվենցիում)³⁵, Նորվեգիան, որի 1.800 հրեաներից 800-ին ևս ուղարկեցին Աուշվից, Ռումինիան, Խորվաթիան, Սլովակիան և Ֆրանսիան³⁶:

Ամփոփելով պետք է նշենք, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ, անկախ դրդապատճառներից, մեծ է եղել տարբեր ժողովուրդների, իսկ հրեաների պարագայում նաև պետությունների, ցուցաբերած աջակցությունը համապատասխանաբար՝ թուրքական և նացիստական իշխանություններին: Կարևոր է այն հանգամանքը, որ հասարակության ներգրավվածությունը հնարավորություն էր տալիս իշխանություններին խնայելու սեփական ուժերը, ինչպես նաև հետագայում ցեղասպանական գործողությունները ներկայացնել որպես քաղաքացիական պատերազմ կամ ժողովրդի միջև բախումներ:

Բանակ. Օսմանյան կայսրության բանակը մշտապես ներգրավված է եղել իշխանությունների ցեղասպանական գործողություններում: Բանակը մասնակցություն է ունեցել թե՛ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին, թե՛ 1909 թ. Ադանայի և Հալեպի կոտորածներին և իհարկե Մեծ եղեռնի տարիներին հայերի տեղահանությունների և բնաջնջման գործընթացին: Օրինակ, Ադանայի կոտորածների ընթացքում այդ դեպքերի մասին մի թուրք զինվոր իր նամակում գրում է. «Արդեն 40 օր է, ինչ մենք դուրս ենք եկել Էդիրնեից (Ադրիանապոլիս), ուղղվել դեպի Գալիպոլի, այնտեղից՝ Մերսին, ապա՝ Ադանա: Այստեղ մենք սպանել ենք 30.000 այդ անհավատ շներից, որոնց արյունով են ողողվել Ադանայի փողոցները»³⁷:

Օսմանյան բանակին աջակցություն են ցուցաբերել քրդական ավազակախմբերը, չերքեզները, Կովկասից գաղթած մուհաջիրները³⁸: Այս մասին փաստում են վերապրածների վկայությունները: Վանից Մահիլ Մկոյանը և Նիո Խաչոյանը պատմում են, որ 1915 թ. ապրիլին՝ այլուր գյուղի շրջափակումից հետո, երբ բնակչությունը հավատացել էր հակառակորդի այն խոստմանը, որ զենքերը հանձնելու դեպքում կոտորածներ չեն լինի, թուրքական զորքը և քրդերը հրկիզել են ողջ գյուղը³⁹: Մուշի գավառակի

35 Համակենտրոնացման ճամբար և մահվան ճամբար (գերմ.՝ Konzentrationslager Auschwitz), որ գործել է 1940-1945 թթ. օկուպացված Լեհաստանի Օսվենցիում քաղաքում: Գերմանացիներն անվանել են Աուշվից, իսկ լեհերը՝ Օսվենցիում:

36 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 118:

37 Dadrian Vahakn, "The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities," *Journal of Political and Military Sociology* 20, no. 2 (1992): 274.

38 Մուհաջիրները մուսուլման գաղթականներ են: Մինչև 630 թ. Մեքքայի գրավումը մուհաջիր էին կոչվում այն մուսուլմանները, ովքեր, հեթանոսների հալածանքներից փրկվելով, լքել են հարազատ քաղաքը և գաղթել են սկզբից՝ Եթովպիա, իսկ հետո՝ Մադինա: Մուհաջիր են անվանում նաև այն մուսուլմաններին, ովքեր հավատը փրկելու համար գաղթել են այլ երկրներից:

39 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, փաստաթղթերի ժողովածու, հատոր I, Վանի նահանգ, կազմ.՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 118:

Խսազրույից Դավիթ Գրիգորյանը պատմում է, թե ինչպես են մուհացիրները նախ՝ թալանել իրենց, իսկ հետո՝ սեփականացրել տեղի հայ բնակչության ունեցվածքը⁴⁰:

Հանրահայտ է, որ չնայած Հայոց ցեղասպանության տարիներին օսմանյան բանակային ուժերն առավելապես կենտրոնացած էին տարբեր ռազմաճակատներում, այնուամենայնիվ նրանք ևս անմասն չմնացին ծրագրի իրականացման գործընթացից: Չմոռանանք, որ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Էնվերը օսմանյան բանակի գլխավոր հրամանատարն էր:

Բանակային ստորաբաժանումների մասնակցությունը մեծապես նպաստում էր ծրագրի արդյունավետությանը, որը պայմանավորված էր բանակային ստորաբաժանումների կողմից քաղաքացիների մասնակցության կազմակերպումով⁴¹: Բանակային ուժերն այքի ընկան հատկապես 1915-1916 թթ. օսմանյան բանակ զորակոչված 18-45 տարեկան շուրջ 100.000 հայ տղամարդկանց ոչնչացման գործում⁴²:

Հայոց ցեղասպանությանն օսմանյան բանակի ներգրավվածության վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Թուրքական բանակի մեղսակցությունը փաստարկված է գերմանական և եվրոպական բազմաթիվ աղբյուրներով, ինչպես օրինակ՝ դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենի, շվեդ միսիոներուհի Ալմա Յոհանսոնի, ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի և այլոց վկայություններում: Դրա մասին է փաստում նաև բանակային ստորաբաժանումների մասնակցության վերաբերյալ Էնվերի հատուկ հրամանը, որն ուղղված էր հայ արական սեռի բնակչության ոչնչացմանը՝ 5 տարեկան երեխաներից սկսած մինչև մեծահասակներ: Եթե դիտարկենք հրամանում ներառված երեք կետերը, պարզ է դառնում, որ Էնվերի նպատակը հայ ժողովրդին տղամարդկանցից՝ պայքարող ուժից զրկելն էր: Այս հրամանը հստակ և մասնավոր ամրագրում էր բանակի գործառույթները, որոնք պետք է իրականացվեին և հաստատվեին համապատասխան զեկույցներով՝ հրամանը ստանալուց 48 ժամվա ընթացքում⁴³:

Օսմանյան բանակը գործում էր հիմնականում ճակատային հատվածում, որտեղ անմիջական հարվածի տակ էր Վանի, Մուշի և Բիթլիսի հայությունը: Վանում, չնայած հայ բնակչության կազմակերպած ինքնապաշտպանությանը, Ջևդեթի ղեկավարած զորքը ծավալուն կոտորած իրականացրեց, որի հետևանքով դրան ականատես գերմանացի սպայի վկայությամբ ոչնչացվեց շուրջ 200 գյուղ, և սպանվեց 26.000 բնակիչ⁴⁴:

Բանակի հետ էր համագործակցում նաև Հայոց ցեղասպանության իրագործմանն ակտիվ մասնակցություն ունեցած Թեշքիլաթը մահուսան: Հատուկ կազմակերպության շարքերը համալրած բանտերից ազատ արձակված հանցագործները մարզ-

40 Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հատոր II, Բիթլիսի նահանգ, կազմ.՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 246:

41 Dadrian, "The Role of the Turkish Military," 265:

42 Մաթոսյան, Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ, 106:

43 Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեթի փաշա (Երևան, «Արևիկ», 1990), 232-233:

44 Авакян, Геноцид армян, 123:

վում էին ռազմական նախարարության օգնությամբ⁴⁵, իսկ Թեշքիլաթը մահուսայի ջոկատներն իրենց հերթին առաջնորդվում էին բանակի գործող կամ պահեստի սպաների կողմից⁴⁶:

Անդրադառնանք նաև գերմանական բանակին, որը ևս մեծ դերակատարություն ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրեա և սլավոն բնակչության ոչնչացման գործում: Գերմանական բանակի դերակատարությունը պայմանավորված էր հակահրեական գործողությունների նկատմամբ բարձրագույն հրամանատարության դրական վերաբերմունքով⁴⁷:

Գերմանական բանակն ակտիվ մասնակցություն էր ունենում հասկապես բնակչությանը բնակավայրերից գնդակահարության վայրեր տեղափոխելու և վերահսկողություն սահմանելու գործում: Ստորև տրվում է գերմանական զինված ուժերի գերագույն հրամանատարության՝ 1942 թ. դեկտեմբերի 16-ի հույժ գաղտնի հրամանը. «...բանակն իրավունք ունի և պարտավոր է ավազակախմբերի դեմ պայքարում կիրառել ցանկացած միջոց... նույնիսկ կանանց և երեխաների նկատմամբ, եթե դա նպաստում է հաջողությանը...»⁴⁸:

Հրեից հողորստի դեպքում ևս գերմանական բանակն ակտիվ համագործակցում էր նացիստական գաղտնի կազմակերպության՝ Էսէս-ի (պահնորդական ջոկատներ) հետ: Եթե մինչև 1940 թ. Էսէս-ի անդամները կամավոր հիմունքներով էին հավաքագրվում, ապա դրանից հետո գորակոչվածները կազմում էին բոլոր ծառայողների մեկ երրորդը⁴⁹:

Այսպիսով, երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործում էր մեկ ամբողջական համակարգ, որը ներառում էր իրար շողկապված մի քանի ռազմական կամ կիսառազմականացված կառույցներ:

Բանտերից ազատ արձակված հանցագործներ: Ինչպես իրավամբ նշում է թուրքագետ Արսեն Ավագյանը, մեկուկես միլիոն մարդու բնաջնջումը բավականին մեծ խնդիր էր, որպեսզի հնարավոր լիներ լուծել միայն Թեշքիլաթը մահուսայի ուժերով⁵⁰: Թերևս հենց այդ բարդությամբ էր պայմանավորված, որ Հատուկ կազմակերպության շարքերը համալրվեցին քրեական հանցագործներով: Բեհաէդդին Շաքիրն այս առնչությամբ գրել է. «Ես կը կարծեմ, որ մեզի յարմար մարդիկը գտած եմ. ըսե՛մ, թե՛ ուր գտայ, – բանտերու մեջ... Եթե՛ ասոնք արձակել տալով մեզի ենթարկենք եւ խումբերու բաժնենք, կը կարծեմ որ շատ լաւ մասնատր կազմակերպութիւն մը ստեղ-

45 Ռեֆիկ, *Երկու կոմիսյոն՝ երկու ոճիր*, 33:

46 Vahakn Dadrian, *The Role of the Special Organization in the Armenian Genocide during the World War* (Oxford and Providence: Berg Publishers, 1993), 19.

47 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հողորստը*, 107-108:

48 *Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками*, сборник материалов, том 3, ред. Роман Руденко (М.: Госюриздат, 1958), 347.

49 *СС в действии. Документы о преступлениях СС*, пер. А. Лягушкина, В. Размерова (М.: Светотон, 2000), 15.

50 Авакян, *Геноцид армян*, 120.

ծած կըլլանք»⁵¹: Այս մասին կան բազմաթիվ վկայություններ: Օրինակ՝ Յոզեֆի կառավարիչ Ջեմալը ռազմական դատարանում վկայում է, որ բանտերի կալանավոր ոճրագործներն օգտագործվել են՝ հայերի կոտորածներն իրականացնելու համար⁵²:

Այսպես, Հատուկ կազմակերպության շարքերը համալրվեցին այդ նպատակով բանտերից ազատ արձակված հանցագործներով, որոնք իրենց փորձառությունը պետք է հաղորդեին կազմակերպության մյուս անդամներին: Որոշ տվյալներով 1915 թ. մարտի սկզբներից սկսած՝ բանտերից ազատ են արձակվել՝ 249 հանցագործներ Անկարայի կենտրոնական բանտից, ևս 65-ը՝ Յոզեֆի բանտից, որոնցից 51-ը՝ մարդասպան⁵³:

Նացիստներն իրենց ծրագրերն իրականացնելիս ևս օգտագործել են բանտերից ազատ արձակված հանցագործների: Համակենտրոնացման ճամբարները հսկող Տոտենկոպֆի⁵⁴ ստորաբաժանումներում ներգրավված են եղել բանտերից ազատ արձակված 6.000 հոգի, որոնք աչքի են ընկել իրենց դաժան արարքներով: Մեկ այլ օրինակում Չաքսենհաուզեն համակենտրոնացման ճամբարի պարետը Աուշվից համակենտրոնացման ճամբարի կառուցման ժամանակ՝ 1940 թ. մայիսին, առաջին պարետ Ռուդոլֆ Հեսին տրամադրել է 30 հանցագործ⁵⁵:

Պետք է նշել, որ երկու ցեղասպանությունների հեղինակներն էլ, հանցագործներին բանտերից ազատելով, նպատակ ունեին ոչ միայն գաղտնի կառույցները համալրելու, այլև հաշվի էին առել նրանց փորձառու մարդասպան լինելու կարևոր հանգամանքը: Սա կարևոր էր նաև նրանով, որ, այսպիսով, զինվորական ուժերը չէին զբաղվի հայ և հրեա բնակչության ցեղասպանության իրագործումով՝ խնդրի լուծումը թողնելով փորձառու մարդասպաններին, իսկ ամբողջ ուժերը կկենտրոնացնեին պատերազմի վրա:

Ոստիկանություն և ժանդարմերիա: Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի իրականացման գործում կարևոր դերակատարություն են ունեցել նաև ոստիկանությունը և ժանդարմերիան:

Արսեն ավագյանը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ ոստիկանության ներգրավվածության աստիճանը գնահատում է հետևյալ կերպ. «Եթե օսմանյան բանակի անմիջական մասնակցությունը ոչնչացմանը սահմանափակ էր, ապա ժանդարմերիան ամենասակտիվ մասնակցությունն է ունեցել ինչպես հայ ժողովրդի տեղահանության, այնպես էլ ոչնչացման բուն գործընթացում»⁵⁶:

51 Բիֆաթ Մելլան Չատե, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծայրերը եւ իթթիհարի հայաջինջ ծրագիրները* (Երևան, ԿՓՀ Ֆաքսիմիլ հրատ., 1990), 116:

52 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ492-Մ494, հղվում է ըստ՝ Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պարմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին*, հատոր II, գիրք I (Երևան, «Հայաստան», 2011), 454:

53 Նույն տեղում:

54 Գերմ. «Totenkompf» նշանակում է «Մեռած գլուխ»: Հիմնական գործառույթը համակենտրոնացման ճամբարներում հրեաների ոչնչացումն էր:

55 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 104:

56 Авакян Арсен, *Геноцид 1915 г.: Механизмы принятия и исполнения решений* (Ереван, «Гитутюн», 1999), 102.

Ոստիկանության և ժանդարմերիայի գործողությունները ղեկավարում էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան: Նրանց հիմնական պարտականությունը հայ տարագիրների քարավաններն ուղեկցելն էր, սակայն շատ դեպքերում ոստիկանությունը ստանձնում էր նաև դահիճի պարտականությունը: Հարկ է նշել, որ Թալեաթի հրահանգով վարչական աշխատողները բոլոր հայերին պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով պետք է խումբ-խումբ օրը երկու անգամ ոստիկան-զինվորների հսկողությամբ որոշված տեղն ուղարկեին⁵⁷: Ոստիկանները, համաձայն հրահանգների, պետք է հայերին հանձնեին իրենց սպասող Հատուկ կազմակերպության անդամներին կամ խմբերին՝ չեթեներին,⁵⁸ և վերադառնալիս, իսկ չեթեներն էլ իրենց հերթին պետք է սպանեին հայերին մինչև վերջին մարդը⁵⁹:

Գրան գուգահեռ կամ դրանից առաջ ոստիկանությանը կարգված էին հայկական թաղամասերի խուզարկությունը և զենքերի առգրավումը: Չենքերի հավաքագրումն ուղեկցվում էր խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններով, թալանով, սպանություններով: Ձերբակալվածների նկատմամբ գործի էր դրվում «բաստինադո»⁶⁰ պատժանքը. բարակ ճիպոտով հարվածում էին զոհի կրունկներին⁶¹: Ինչպես նշում է ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն. «Գրանցված են դեպքեր, երբ զենք թաքցնելու մեղադրանքով մերկացնում էին կանանց և ծեծում դավար ճիպոտներով: Նման ծեծի էին ենթարկում նույնիսկ հղի կանանց...»⁶²:

Բացարձակ անպատժելիության պայմաններում ոստիկաններն ու ժանդարմներն ամենատարբեր բռնությունների և նվաստացումների էին ենթարկում հայ կանանց և աղջիկներին՝ մերկացնելով, ծաղրուծանակի ու սեռական բռնությունների ենթարկելով: Հայոց ցեղասպանության վերապրող Հ. Խաչատրյանն իր հուշերում պատմում է, թե ինչպես են ոստիկանները դոմաշենցիների արքայի ճանապարհին 15 հայ կանանց և աղջիկների ստիպել մերկ պարել, իսկ այնուհետև սեռական բռնությունների են ենթարկել⁶³:

Ոստիկանական ուժերի մասնակցությունը Հայոց ցեղասպանության ծրագրի իրագործմանը դրսևորվեց հիմնականում երկու տարբերակով՝ ոստիկանների և ժանդարմերիայի հրամանատարների կողմից կոտորածի և բռնագաղթի կազմակերպումով, ինչպես նաև հայ տղամարդկանց ձերբակալություններին, ժողովրդի տեղահանություններին, կողոպուտին, սպանություններին մասնակցությամբ⁶⁴:

57 Պողոսյան, Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 460:

58 Չեթեն՝ թուրքական ոչ կանոնավոր զորքի զինվոր, որը զբաղվում էր թալանով և սպանություններով: Չեթեներ՝ ավագակալի խմբեր:

59 Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 460:

60 Կտտանքի տեսակ է, որ կիրառվում է հատկապես Արևելքում:

61 Հենրի Մորգենթաուն, *Դեսպան Հենրի Մորգենթաունի պատմությունը*, թարգմ. Լիլիթ Թութալյան (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 230:

62 Նույն տեղում:

63 ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թալ. 158:

64 Գրիգորյան, *Չանգվածները և զանգվածային բռնությունները*, 111:

Ինչ վերաբերում է գերմանական ոստիկանությանը, ապա պետք է նշել, որ 1936 թ. ոստիկանության կանոնավոր գործերը և անվտանգության ոստիկանության գործերն անցել էին Էսէս-ի ղեկավար Հիմլերի ենթակայության տակ⁶⁵: Սա նշանակում է, որ ոստիկանությունն ամբողջովին «նվիրվել» էր հրեաների ոչնչացման գործին: Ոստիկանությունն իրականացնում էր գոհերին հայտնաբերելու, հսկելու, ուղեկցելու գործառնությունը:

Նյուրնբերգյան դատավարության փաստաթղթերի ժողովածուում նշվում է, որ գրեթե չկան Գերմանիայի ոստիկանության կամ արևմուտքի օկուպացված տարածքների վերաբերյալ գերմանական ոստիկանության ղեկավարության կամ նրանց անմիջական ենթակաների կողմից տրված հստակ հրամաններ: Սակայն դա չի ազատում ոստիկանությանը պատասխանատվությունից, քանզի այն եղել է ազգային-սոցիալիստական գաղափարախոսության անմիջական կրողը և հետևորդը, գործել է բացառապես նացիստական կառավարության նպատակների իրագործման համար⁶⁶:

Ոստիկանությունն իրականացնում էր զանգվածային ձերբակալություններ՝ առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու կամ հիմնավորման՝ դրանով իսկ խախտելով մարդու իրավունքները: Իսկ արդեն կալանավայրերում ձերբակալվածներին ենթարկում էին դաժան ծեծի և փորձությունների՝ ընդհուպ հասցնելով մահվան ⁶⁷:

Հրեաների ոչնչացմանը մասնակցություն ունեցավ ոչ միայն գերմանական ոստիկանությունը, մասնակցում էին նաև հարևան երկրների ոստիկանական ուժերը: Հատկապես ակտիվ գործեցին Սլովակիայի և Հունգարիայի ժանդարմերիաները⁶⁸: Այս ոստիկանությունների աջակցությունը պայմանավորված էր երկու կառավարությունների փոխհամագործակցությամբ: Ըստ դրա՝ գերմանական կայսրությանը օգնություն ցուցաբերելու դիմաց Գերմանիան պարտավորվել էր ապահովել Սլովակիայի անկախության և տարածքային ամբողջականության անվտանգությունը⁶⁹:

Այսպիսով, դիտարկելով նաև ոստիկանական ուժերի մասնակցությունը ցեղասպանությունների իրագործմանը, պարզ է դառնում, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործել է ամբողջական, փոխկապակցված համակարգ: Լինելով օրենքի պաշտպան՝ ոստիկանությունն ինքն էր խախտում օրենքը, ինչպես նաև օգտագործում այդ նույն օրենքը՝ արդարացնելու իր գործողությունները:

Հատուկ կամ գաղտնի կազմակերպություններ: Հաշվի առնելով այն կարևոր փաստը, որ թե՛ Օսմանյան կայսրությունը և թե՛ նացիստական Գերմանիան գտնվում էին պատերազմական իրավիճակում, նրանց անհրաժեշտ էր այլընտրանքային ուժի կիրառում, որը լիովին կլծվեր բռնությունների իրականացման բուն գործընթացին: Ինչպես նաև հետագայում կազատեր իշխանություններին հայ և հրեա ժողովուրդների բնասջման պատասխանատվությունից:

65 СС в действии, 9.

66 Нюрнбергский процесс, *Сборник материалов*, том 1, второе издание, ред. Константин Горшенин, Роман Руденко, Иона Никитченко (М.: Госюриздат 1954), 226.

67 Նույն տեղում:

68 Մաթոնյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 109-110:

69 *Нюрнбергский процесс*, 336:

Իթթիհատականները և նացիստներն այդ հարցի լուծումը գտան համապատասխանաբար Թեշքիլաթը մահսուսայի և գերմանական Էսէս-ի ստեղծման միջոցով: Սրանք երկուսն էլ, չնայած իրենց կիսառազմական բնույթին, գործում էին կուսակցական մարմինների կարգադրությամբ: Սա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ հայերի և հրեաների բնաջնջման ծրագրի հեղինակները պատկանում էին իթթիհատական և նացիստական կուսակցությունների շրջանակներին: Բեհաեդդին Շաքիրը, Նազըմը, Զիա Գյոքալփը կենտրոնական կոմիտեի անդամներ էին՝ հայտնի իրենց պանթուրքիստական գաղափարներով և հայատյացությամբ: Էսէս-ի բարձրագույն ղեկավարն ու նրա տեղակալներ Հայդրիխը, Կալտենբրունները նացիստներ էին և հակահրեաներ⁷⁰:

Այսպես, օսմանյան գործող իշխանությունների հետագա ծրագրերը քննարկելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեում 1914 թ. մայիսին հրավիրվում է խորհրդակցություն: Այն վարում էր «Երեքի գործադիր կոմիտեն»⁷¹, որի կազմում էին կուսակցության նշանավոր գործիչներ Բեհաեդդին Շաքիրը, դոկտ. Նազըմը և կրթության նախարար ալի Շուքրին: Հենց այդ ժամանակ էլ կուսակցության քարտուղար Բեհաեդդին Շաքիրն ընդգծում է ավելի կենտրոնացված ռազմական ուժի անհրաժեշտությունը: Շաքիրն առաջարկում է ստեղծել մի օղակ, որն անմիջականորեն կպատկանի կուսակցությանը և կիրականացնի իշխանությունների կողմից մշակված ծրագրերը. «... ներկայ պարագային ո՛չ բանակէն, ո՛չ ալ ժողովուրդէն կրնանք օգուտ մը սպասել: Մեզի մասնաւոր ուժ մը, մեր գործունէութեան անկախութիւնը պաշտպանելիք ուժ մը, զինեալ ուժ մը պէտք է: Այս ուժը ուզուած կողմը զրկելու իրաւունքն ալ մեզի պատկանելու է...»⁷²:

Արդեն իսկ լավ պատկերացնելով այդ օղակի կարգավիճակը և գործառույթները՝ նա այդ մասին զեկուցում է նաև կուսակցական ընկերներին: Արդյունքում ձևավորվում է Հատուկ կազմակերպության քաղաքացիական մասնաճյուղը, որը ղեկավարում էր Բեհաեդդին Շաքիրը:

1914 թ. օգոստոսի 2-ին՝ Գերմանիայի հետ գաղտնի պայմանագիր կնքելու օրը, Իթթիհատի կենտկոմը լսում է Հատուկ կազմակերպության հարցը և որոշում այն ծառայեցնել համախառնական և համաթուրքական նպատակների իրականացմանը⁷³: Թեշքիլաթի ղեկավար մարմնում տեղեր հատկացվեցին կուսակցական, վարչական-նստիկանական աշխատողներին, ինչպես նաև բանակային գործիչներին⁷⁴:

1913-1914 թթ. մշակվեց համապարփակ ծրագիր Թեշքիլաթը մահսուսայի և կառավարության համագործակցության վերաբերյալ, իսկ գործում ընդգրկվեցին Թալեաթը, Ջավիդը, Իբրահիմը, ալի Շուքրին, Բեհաեդդին Շաքիրը, Նազըմը, Հասան

70 Նույն տեղում, 98:

71 Հատուկ հանձնաժողով, որ ստեղծվել է 1915 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանությունը և կոտորածը կազմակերպելու համար:

72 Բիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը*, 113-114:

73 Պողոսյան, Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 450:

74 Նույն տեղում:

Ֆեհմին, աղա օղլու Ահմեդը, Չիա Գյոքալփը և այլք⁷⁵:

Թեշքիլաթը մահուսայի արևելյան նահանգների բաժանմունքը գտնվում էր կենտրոնական կոմիտեի անմիջական հսկողության ներքո, իսկ հայերի տեղահանության և ջարդերի ժամանակ կոմիտեի հսկողության տակ էին անցել նաև կազմակերպության այն ստորաբաժանումները, որոնք ուղարկվել էին կովկասյան ռազմաճակատ⁷⁶:

Թեշքիլաթը մահուսայի անդամների ընդհանուր թիվը կազմել է 30-34 հազար, որի զգալի մասը բանտերից ազատ արձակված հանցագործներ են եղել: 1914 թ. նոյեմբերին Բալքքեսիրի⁷⁷ տեսուչ Մուսայից Միդիաստ Շյուքրիին հղած նամակում գրված է. «... սրանից մեկ շաբաթ առաջ ներքին գործերի մինիստրությունից մի հրաման եկավ, որ իմ լիվայի⁷⁸ մեջ գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մարդկանցից մոտ երկու հարյուր հոգի հավաքեն և ուղարկեն Կովկասում չեթեություն⁷⁹ անելու համար...»⁸⁰:

Հրեից հոլոքոստի պարագայում ցեղասպանության ծրագրի գործադրումը՝ հրեաների հայտնաբերումը, տեղափոխումը և սպանությունը, վստահված էր գաղտնի կազմակերպությանը: Այս դեպքում դրանք Էսեւ-ի տարբեր ստորաբաժանումներն էին: Էսեւ-ի գործերը ստեղծվեցին ֆաշիստական կուսակցության երկու հիմնական ռազմական կազմակերպությունների՝ գրոհային (ՍԱ) և պահնորդական ջոկատների (Էսեւ) հիման վրա: Այլ տվյալներով Էսեւ-ը ստեղծվել է 1925 թ., երբ ՍԱ-ի անդամներից Հիտլերը ստեղծեց մի ջոկատ, որի նպատակը նացիստական կուսակցության անդամների անվտանգությունն ապահովելն էր⁸¹: Պահնորդական ջոկատներն ավելի մեծ ճանաչում են ձեռք բերում 1929 թ., երբ Հիտլերն Էսեւ-ի ղեկավար (ռայխսֆյուրեր) է նշանակում Հայնրիխ Հիմլերին: Այդ ժամանակ Էսեւ-ի անդամների թիվը կազմում էր ընդամենը 280, իսկ 1933 թ.՝ արդեն 52.000 հոգի⁸²:

1934 թ. Հիտլերի հատուկ որոշմամբ Էսեւ-ն իր մատուցած ծառայությունների համար նացիստական կուսակցության համակարգում բարձրացվում է անկախ կազմակերպության կարգավիճակի⁸³: Ավելի ուշ՝ 1938 թ., բացի «Կայսերական անվտանգության գլխավոր վարչությունից», ստեղծվում են նաև Էսեւ-ին ենթակա ստորաբաժանումներ՝ «Վաֆֆեն-էսեւ»-ը, որի թվաքանակը պատերազմի վերջում արդեն հասել էր 580.000-ի⁸⁴:

75 Նույն տեղում:

76 Dadrian, *The Role of the Special Organization*, 7:

77 Բալքքեսիր (թուրք.՝ Balıkesir), Բուրսայի նահանգի Գարասի գավառի կենտրոնը:

78 Լիվա կամ սանջակ՝ համարժեք է գավառին:

79 Թալան և ավազակային հարձակումներ իրականացնել:

80 *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի*, կազմ.՝ Ավետիս Փափազյան, լամբ.՝ Ռուբեն Սահակյան (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988), 99:

81 *CC в действии*, 14.

82 Նույն տեղում:

83 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 97:

84 Նույն տեղում, 102:

Հարկ է նշել, որ այս դեպքում ևս Էսէս-ի գորքերը համալրվեցին բանտերից ազատ արձակված հանցագործներով: Ինչպես արդեն նշել ենք Թեշքիլաթը մահուսայի պարագայում, այստեղ ևս հաշվի էին առնվում հանցագործների փորձառությունը և անգթությունը:

Ինչպես տեսանք, երկու ցեղասպանությունների ժամանակ էլ գործի էր դրվել ամբողջ ուժային համակարգը, ինչպես նաև ստեղծվել էին հատուկ կազմակերպություններ, որոնք լիովին լծվել էին հայերի և հրեաների բնաջնջման ծրագրին:

Այսպիսով, ուսումնասիրելով համեմատության մեջ դրված երկու ցեղասպանությունների իրականացման «գործիքակազմը», գալիս ենք այն եզրակացության, որ թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ Հրեից հոլոքոստի ժամանակ գործադրվել են մի շարք ուժեր և որ ամենակարևորն է՝ երկու գաղտնի կազմակերպություններ, որոնք ըստ էության ցեղասպանական ծրագրի գլխավոր դերակատարներն էին և պատասխանատուները:

Inessa G. Stepanyan

ON THE ISSUE OF THE MAIN PERPETRATORS OF THE ARMENIAN GENOCIDE AND THE JEWISH HOLOCAUST

SUMMARY

Key words: Armenian Genocide, Jewish Holocaust, perpetrators, society, army, police, criminals, secret organizations, Teşkilati Mahsusa, Nazi SS.

The article presents and compares the means and methods used to carry out the Armenian Genocide and the Jewish Holocaust. All social groups, involved in the genocidal process, are presented separately. Among them the society, whose involvement has enabled the authorities to save their own forces and hide the genocidal act under the guise of national clashes. It is noteworthy that in the case of both genocides, regardless of the motives, there was a huge support coming from different nations to the Turkish and Nazi authorities. In the case of Jews there was also a support coming from the states.

The next group presented was the army, whose participation was crucial in the process of disarmament and recruitment of the Armenian abled-bodied men, as well as in searching for Jews during the Holocaust. There was a one comprehensive system that included several military or semi-militarized structures connected to each other.

The role of police was presented as being a law defender himself, violated the laws and used that same law to justify its actions. It was evident that a complex and interconnected system was functioning during the both genocides. Also criminals released from the prisons, on the one hand, filled up the ranks of the paramilitary institutions, and on the other, carried out the killings more easily and with experience. Another important feature here was that the armed forces would be free from the problems of the Armenian and Jewish population and would concentrate all their forces on the war.

The focus of the article is on secret organizations (Teşkilat-i Mahsusa and Nazi SS) that became the main perpetrators of the two genocides and not only supported but also took the main responsibility of the implementation of the genocidal program.

Инесса Г. Степанян

К ВОПРОСУ ОБ ОСНОВНЫХ ИСПОЛНИТЕЛЯХ ГЕНОЦИДА АРМЯН И ЕВРЕЙСКОГО ХОЛОКОСТА

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост евреев, исполнители, общество, армия, полиция, преступники, секретные организации, Тешкилят-и-Махсуса, немецкий СС.

Представлены механизмы осуществления Геноцида армян и Холокоста евреев посредством сравнения двух геноцидов. Выделены все компоненты, включенные в геноцидальную программу.

Общество, участие которого дало возможность властям сохранить свои собственные силы и скрыть геноцидальные действия под прикрытием народных столкновений. Независимо от мотивов, в обоих случаях, турецким и нацистским властям была оказана большая поддержка со стороны населения, а в случае евреев также со стороны государств.

Армия, участие которой имело решающее значение для разоружения и мобилизации армянских мужчин, а также для поиска евреев в случае Холокоста. Сработала одна целая система, которая включала несколько связанных друг с другом военных или полумилитаризованных структур.

Полиция, которая будучи правозащитником, сама нарушала закон, используя его для оправдания своих действий. В случае двух геноцидов функционировала комплексная взаимосвязанная система.

Преступники, освобожденные из тюрем, с одной стороны пополняли ряды военизированных структур, а с другой – применяли свой опыт в осуществлении убийств.

Секретные организации (Тешкилят-и-Махсуса и немецкий СС) стали главными исполнителями двух геноцидов, которые не только поддержали, но и взяли на себя ответственность за осуществление программы геноцида.

REFERENCES

Antonyan, Aram. *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոլորիտները և Թալատի փառաբանումը* [The Great Crime: The Latest Armenian Massacres and Talaat Pasha]. Yerevan: “Arevik” hrat., 1990.

Bayburdyan, Vahan. *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում* [Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire]. Yerevan: “Hayastan”, 1989.

Grigoryan, Hasmik. *Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* [Masses and Mass Violence: Participation of the Muslim Population of the Ottoman Empire in the Armenian Genocide]. Yerevan: Gitut’yun, 2017.

Mat’osyan, Tigran. *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. Համեմատական փորձ* [The Armenian Genocide and the Jewish Holocaust. Attempt of Comparision]. Yerevan: HH GAA Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, 2005.

Morgent’au, Henri. *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը* [The Story of Ambassador Henry Morgenthau], trans. Lilit’ T’ut’khalyan. Yerevan: HH GAA Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, 2012.

R’efik, Ahmed. *Երկու կոմիտե՛ երկու ոճիր* [Two Committees, Two Crimes]. Yerevan: HH Gitut’yunneri azgayin akademia, Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, Arevelagitut’yan institut, 1997.

Hovhannisyanyan, Nikolay. *Արաբական երկրների պատմություն. հ. 2, Օսմանյան փրկապետության շրջան. 1516-1918* [History of the Arab Countries, Vol. II, Period of Ottoman Occupation]. Yerevan: Zangak-97, 2004.

Mkrtich’ean, T’. *Տիգրանակերտի նահանագի ջարդերը և քիւրդերու գազանությունները* [The Pogroms of Tigranakert Province and the Atrocities of Kurds], Gahiré, 1919.

Poghosyan, Step’an and Poghosyan, Karo. *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին* [History of the Armenian Question and the Armenian Genocide, The Armenian Question in 1908-14]. Yerevan: “Hayastan”, 2011.

Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի [The Armenian Genocide According to the Young Turks’ Trial Documents], compiled by Avetis P’ap’azyanyan. Yerevan: Haykakan SSH GA hrat., 1988.

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հ. I. Վանի նահանգ [The Armenian Genocide in Ottoman Turkey. Testimonies of the Survivors. Documents, Vol. I, Van Province], compiled by Amatuni Virabyan, Gohar Avagyan, ed. Amatuni Virabyan. Yerevan: Hayastani azgayin arkhiv, 2012.

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հ. II. Բիթլիսի նահանգ [The Armenian Genocide in Ottoman Turkey. Testimonies of the Survivors. Vol. II, Bitlis Province], compiled by Amatuni Virabyan, Gohar Avagyan, ed. Amatuni Virabyan. Yerevan: Hayastani azgayin arkhiv, 2012.

Zaté, Rifat’ Mévlan. *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհայի հայաջինջ ծրագիրները* [The Dark Folds of the Ottoman Revolution and Ittihadist’s Program of Annihilation of Armenians]. Yerevan: KP’H Faqsimal hrat., 1990.

Avakian, Arsen. *Геноцид 1915 г.: Механизмы принятия и исполнения решений* [Genocide of 1915: Mechanisms for Making and Executing Decisions]. Yerevan: Gitutiun, 1999.

Avakian, Arsen. *Геноцид Армян: Механизмы принятия и исполнения решений* [Armenian Genocide: Mechanisms of Making and Executing Decisions]. Yerevan: NAN RA, Muzei-Institut Genotsida Armian, 2013.

Al'tman, Il'ia. “Холокост и Еврейское сопротивление на оккупированной территории СССР, Уничтожение евреев в Прибалтике” [Holocaust and Jewish Resistance in the Occupied Territory of the USSR, The extermination of the Jews in the Baltic States] http://jhistory.nfurman.com/shoa/hfond_100.htm.

Briman, Shimon. “Мусульмане в СС” [Muslims in the SS], *Kholokost i souchastnost'*, № 4 (2002) http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip4/vip4_3.htm#l4_gol.

Kruglov, Aleksandr. “Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.” [How many Jews were exterminated in Kiev in the fall of 1941], *Kholokost I souchastnost'*, № 5 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip5/vip5_3.htm#l5_gu.

Нюрнбергский процесс. Сборник материалов [The Nuremberg Process. Documents, Vol. 1. 2nd edition], ed. Konstantin Gorshenin, Roman Rudenko, Iona Nikitchenko, Moscow: Gosiurizdat, 1954.

Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками [The Nuremberg trial over the main German war criminals, V. 3], ed. Roman Andreevich Rudenko, Vol. 3, Moscow: Gosiurizdat, 1958.

Smirin, Grigorii. “Холокост: кто и как убивал евреев в Латвии” [Holocaust: Who and How Killed Jews in Latvia], *Baltnews.lv*, 18.03.2015, <https://baltnews.lv/uzvara/20150318/1013645714.html>.

СС в действии. Документы о преступлениях СС [SS in Action. Documents on the Crimes of SS], trans. A. Liagushkina, V. Razmerova. Moscow: Svetoton, 2000.

**ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊՆ ՈՒ ԴԻՄԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՒՄ**

Բանալի բառեր՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ցեղասպանություն, Ռաֆայել Լեմկին, Հերշ Լաուտերպախտ, Նյուրնբերգյան դատավարություն, խմբին ոչնչացնելու մտադրություն, Հայոց ցեղասպանություն:

Հոդվածում քննարկվում են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության առանձնահատկությունները և փոխադարձ կապը: Մարդկության դեմ ուղղված հանցագործություն (Crime against humanity) եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված և միջազգայնորեն սահմանվել Նյուրնբերգյան դատավարության կանոնադրության մեջ, երբ նացիստական պատերազմական հանցագործները կանգնած էին դատարանի առաջ: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ էլ իրավագետ Ռաֆայել Լեմկինն առաջարկեց դատավարության փաստաթղթեր ընդգրկել ցեղասպանություն (Genocide) եզրույթը, որը ստեղծելիս վերջինս նկատի էր ունեցել նաև Հայոց ցեղասպանությունը: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Լեմկինը հաջողության չհասավ, և միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրագործվել է թե՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն և թե՛ ցեղասպանություն: Ուստի հոդվածում վերլուծվում է այս երկու հանցագործությունների դրսևորումը Հայոց ցեղասպանության օրինակում: Ի հայտ է բերվում Հայոց ցեղասպանության նշանակությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության և ցեղասպանության հայեցակարգի ստեղծման հարցում:

Ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ հասկացություններն իրենց վերջնական ձևակերպումը ստացան 1940-ական թթ.: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները սերտորեն կապված են ցեղասպանություն հանցագործության հայեցակարգի հետ, սակայն ավելի ընդգրկուն են, քանի որ սերտորեն են քաղաքացիական բնակչության լայն զանգվածների վրա հարձակումները, իսկ ցեղասպանություն հանցագործությունը սահմանափակվում է ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերի ոչնչացմամբ: Այս երկու հանցագործությունների հայեցակարգերի ձևավորման համար իր ժամանակին առկա են եղել որոշակի պատմական նախադրյալներ, որոնց մեջ կարևոր է հասկանալ, թե ինչ դեր է ունեցել Հայոց ցեղասպանությունը:

Ստորև քննարկելու ենք ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների փոխկապակցվածությունը և դրանց դրսևորումը Հայոց ցեղասպանության օրինակում: Հետազոտության մեջ խնդիր ենք դրել՝ ցույց տալու պաշտոնական Թուրքիայի քաղաքականությանը սպասարկող ժխտողականների կողմից առաջ քաշվող այն թեզերի սնանկությունը, թե 1915 թ. Օսմանյան կայսրությունը հայերի նկատմամբ որևէ հանցագործություն չի իրագործել:

Ցեղասպանություն (genocide) եզրույթի համեմատությամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություն (crime against humanity) եզրույթը շրջանառության մեջ է դրվել ավելի վաղ՝ առնվազն XVIII դարի կեսերից: Արտահայտության հեղինակն ամենայն հավանականությամբ Վոլտերն է: Այն հաճախ էր օգտագործվում Ֆրանսիայում (երբեմն՝ crimes de lèse humanité): Իսոսելով համընդհանուր դատապարտման ենթակա գործողությունների մասին, ինչպիսիք են, օրինակ, գողությունը և սպանությունը՝ Վոլտերն ասում էր, թե մարդկության դեմ կատարված հանցագործությունները պետք է պատժվեն: Իտալացի իրավաբան, մեծ փիլիսոփա Չեզարե Բեկարիան, ընդհակառակը, գտնում էր, որ չափից ավելի խիստ պատիժները կարող են վիրավորանք լինել մարդկության դեմ, մարդկության դեմ հանցագործություն: Եզրույթը միաժամանակ օգտագործվում էր նաև Անգլիայում¹:

«Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» արտահայտության՝ տարիներ շարունակ կիրառման մասին է վկայում նաև այն, որ Ֆրանսիայի Ազգային ժողովի քննարկումների ժամանակ հեղափոխական Մաքսիմիլիան Ռոբեսպիերը Լյուդովիկոս 16-րդ թագավորին անվանում էր «criminel envers l'humanité», այսինքն՝ մարդկության դեմ հանցագործություն կատարած անձ²: Հետագայում՝ 19-րդ դարում, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, անտարակույս, կապված էին ստրկության և ստրկավաճառության հետ³:

Այս եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվեց 1915թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված: Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում նշվում էր. «Գրեթե մեկ ամիս է, ինչ Հայաստանում քրդերը և թուրքերը օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ օժանդակությամբ զանգվածային ջարդերի են ենթարկում հայերին: Նման ջարդեր են տեղի ունեցել սպրիլին (նոր տոմարով) Էրզրումում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանին հարակից շուրջ հարյուր գյուղերի բնակիչներ սպանվել են: Այդ քաղաքում հայկական թաղամասերը շրջափակված են և հարձակումների են ենթարկվում քրդերի կողմից: Միևնույն ժամանակ կոստանդնուպոլսյան օսմանյան կառավարությունը հետապնդումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը: Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ

1 William Schabas, *Unimaginable Atrocities: Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals* (Oxford: Oxford University Press, 2012), 51-52.

2 William Schabas, *Genocide in International Law: The Crime of Crimes* (Cambridge: Cambridge University Press, 2009), 20.

3 Schabas, *Unimaginable Atrocities*, 52.

ուղղված Թուրքիայի այդ նոր հանցագործությունները՝ դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր դռանը, որ իրենք պատասխանատվության են ենթարկելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին»⁴:

«Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը, ինչպես վերևում նշեցինք, միջազգայնորեն սահմանվեց Նյուրնբերգյան դատավարության ժամանակ: Այս եզրույթն ընտրվել է ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Ռոբերտ Ջեքսոնի կողմից, ով Նյուրնբերգյան դատավարության ժամանակ ԱՄՆ-ի գլխավոր դատախազն էր և ամերիկյան պատվիրակության ղեկավարը Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ ձևակերպվել է միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությունը: Ջեքսոնն այդ հարցով խորհրդակցել էր միջազգային իրավունքի մասնագետ Հերշ Լաուտերպախտի հետ⁵: Լոնդոնի կոնֆերանսի վերջին օրերին՝ 1945 թ. հուլիսին, ամերիկյան կողմից գլխավոր բանակցող Ռոբերտ Ջեքսոնն առաջարկեց դաժանությունները, հալածանքները և տեղահանությունները որակել որպես մարդկության դեմ կատարվող հանցագործություններ: Նա կոնֆերանսի ընթացքում նշում էր, որ այդ գաղափարի հեղինակն անգլիացի իրավագետ Հերշ Լաուտերպախտն է, ով Քենդրիջի համալսարանի հանրային իրավունքի ամբիոնի նախագահն էր⁶: 1945 թ. Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունները տալիս են այդ եզրույթի սահմանումը: Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության 6-րդ հոդվածը, որն ընդունվել էր 1945 թ. օգոստոսի 8-ի Լոնդոնի կոնֆերանսում, սահմանում էր՝ տրիբունալը կունենա իրավասություն երեք կարգի՝ պատերազմական, խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ⁷: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունը Միջազգային ռազմական տրիբունալի 6-րդ հոդվածի c կետում (Article 6(c) of the Charter of the International Military Tribunal) սահմանվում էր հետևյալ կերպ. «Պատերազմից առաջ կամ պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակչության սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, տեղահանությունը և նրանց դեմ գործադրված այլ անմարդկային գործողություններ կամ քաղաքական, ռասայական, կրոնական շարժառիթներով հալածանքները, կամ դրանց հետ կապված ցանկացած հանցագործություն ենթակա են տրիբունալի իրավասությանը՝ անկախ այն բանից, այդ գործողությունները տվյալ պետության ներքին օրենսդրության խախտո՞ւմ են, թե՞ ոչ»⁸:

4 Վիգեն Քոչարյան, *Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում* (Երևան, հեղ. հրատ., 2014), 8:

5 David Luban, “A Theory of Crimes Against Humanity”, *Yale Journal of International Law*, vol. 29, no. 3 (2004): 86.

6 Schabas, *Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals*, 51.

7 Dinah L. Shelton, *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, vol. 1 (New York: Thomson Gale, 2005, vol. 1), 211.

8 Nuremberg Charter (Charter of the International Military Tribunal), London, 8 August 1945, <https://ghum.kuleuven.be/ggs/events/2013/springlectures2013/documents-1/lecture-5-nuremberg-charter.pdf>, ղիսվել է 07.05.2017:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ իրավագետ Ռաֆայել Լեմկին էլ առաջարկում էր դատավարության փաստաթղթեր ընդգրկել ցեղասպանություն (genocide) եզրույթը: Եթե Լաուտերպախտը «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը կիրառելու առաջարկության հեղինակն էր, ապա Լեմկինը ցեղասպանություն (genocide) եզրույթի ստեղծողն էր: Ցեղասպանություն (genocide) եզրույթը նա կազմել էր 1944 թ. հրապարակված «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ: Այն կազմված էր հունարեն *genos* (ոռսա, ցեղ) և լատիներեն *cide* (սպանել) բառերից⁹: Միջազգային բնույթի առաջին փաստաթուղթը, որում օգտագործվում էր «ցեղասպանություն» (genocide) եզրույթը, 1945 թ. հոկտեմբերի 18-ի Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի մեղադրական եզրակացությունն էր¹⁰, որում ցեղասպանությունը դեռևս չէր ճանաչվում որպես առանձին սահմանված հանցագործություն: Եվ միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան¹¹:

Զարմանալի զուգահեռությամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություն և ցեղասպանություն հասկացություններն առաջ քաշող Լաուտերպախտն ու Լեմկինը սովորել են Լվովի Յան Կազիմիրի համալսարանում, որը շատ հայտնի էր իր իրավունքի դպրոցով: Եվ որևէ փաստ չկա, որ նրանք միմյանց ճանաչում էին Լվովում ուսանելու տարիներից¹²: Նրանց երկուսին էլ համալսարանում ուսուցանել է քրեական իրավունքի պրոֆեսոր Ջուլիուս Մակարնիչը, և նրանք մեծ հետաքրքրություն ունեին քրեական իրավունքի նկատմամբ¹³: Միջազգային իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունեցած այս մարդկանց ճանապարհները հավանաբար խաչվեցին 1940-ական և 1950-ական թթ., երբ Լեմկինը Ցեղասպանության կոնվենցիայի անխնայ քարոզիչն էր, իսկ Լաուտերպախտը Արդարադատության միջազգային դատարանի դատավոր էր¹⁴:

Նրանց գաղափարները համաշխարհային արձագանք ունեցան: Ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ հասկացությունները զարգացել են կողք կողքի և կապվում են անհատի ու խմբի սպանության հետ¹⁵: Բրիտանացի իրա-

9 Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress* (Washington, D.C.:Carnegie Endowment for International Peace, 1944), 79.

10 Indictment presented to the International Military Tribunal in Nuremberg, 18 October, 1945, 12, http://www.cvce.eu/content/publication/2003/10/31/6b56300d-27a5-4550-8b07-f71e303ba2b1/publishable_en.pdf, դիտվել է 10.05.2017:

11 Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա, http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf, դիտվել է 06.05.2017:

12 Ana Filipa Vrdoljak, "Human Rights and Genocide: The Work of Lauterpacht and Lemkin in Modern International Law," *The European Journal of International Law* 20, no. 4 (2010):1168.

13 Michael G. Karnavas, Book Review – East West Street: On the Origins of Genocide and Crimes Against Humanity, by Philippe Sands, <http://michaelgkarnavas.net/blog/2016/12/29/book-review-east-west-street/>, դիտվել է 10.05.2017:

14 Schabas, *Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals*, 51.

15 Philippe Sands, *East West Street: On the Origins of "Genocide" and "Crimes Against Humanity"* (London: Weidenfeld & Nicolson, 2016), 378.

վունքի պրոֆեսոր և միջազգային իրավունքի մասնագետ Ֆիլիպ Սանդսը *The Atlantic* պարբերականին տված հարցազրույցում առանձնացնում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության միջև եղած տարբերությունները. «Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կենտրոնանում են մեծ թվով անհատների սպանության վրա: Մեծ թվով անհատների համակարգված, զանգվածային սպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է: Ցեղասպանությունն այլ ուղղություն ունի: Ցեղասպանությունը բնորոշվում է ոչ թե որպես անհատների սպանություն, այլ խմբերի ոչնչացում: Այլ կերպ ասած՝ մեծ թվով անհատների ոչնչացում, ովքեր կազմում են մի խմբի մաս: Այս ձևով երկու հասկացությունները տարբեր նպատակներ ունեն: Մեկը նպատակ ունի պաշտպանել անհատին, իսկ մյուսի նպատակն է պաշտպանել խումբը»¹⁶:

Լատուերպախտը կենտրոնացած էր անհատի վրա՝ որպես պարբերական սպանությունների թիրախ: Իսկ Լեմկինը կենտրոնանում էր խմբի վրա՝ որպես թիրախ, այսինքն՝ որոշակի խմբի անդամ անհատների սպանությունների վրա, որոնք կատարվում էին խումբը ոչնչացնելու դիտավորությամբ¹⁷: Լեմկինն այն տեսակետն էր առաջ քաշում, որ մարդիկ սպանվում կամ վնասվում են, քանի որ ազգային, կրոնական կամ էթնիկական խմբի անդամներ են: Իսկ Լատուերպախտի կարծիքով մարդիկ անհատական են, և նրանք պետք է պաշտպանվեն անհատապես, այլ ոչ թե որպես որոշակի խմբի անդամներ: Լատուերպախտի համար վտանգավոր էր Լեմկինի՝ խմբերի պաշտպանության գաղափարը, որը կստիպեր ստեղծել այնպիսի պայմաններ, թե Լեմկինը փորձում է պաշտպանել բոլորին, այսինքն՝ մի խմբին մեկ այլ խմբից¹⁸:

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության հայեցակարգերն առաջ քաշող հեղինակների՝ Լեմկինի և Լատուերպախտի տարակարծությունների պատճառով այս երկու հանցագործությունների փոխհարաբերություններն այդպես էլ մնացին խնդրահարույց: Եվ քանի որ այս հասկացություններն ունեն բազմաթիվ ընդհանուր հատկանիշներ, եղան մասնագետներ, օրինակ՝ չեխ իրավաբան Էգոն Շվեյլը, ովքեր խորհուրդ տվեցին դրանք միավորել¹⁹, սակայն ցեղասպանության հայեցակարգի կողմնակից Ռաֆայել Լեմկինի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգի հիմնական պաշտպան Հերշ Լատուերպախտի միջև ընթացած պայքարն արհեստականորեն բաժանեց նման հանցագործությունների միասնական հայեցակարգը՝ վտանգելով դրանց հետագա կանխարգելումը և դատապարտումը²⁰:

16 Robert Coalsen, "What's the Difference Between 'Crimes Against Humanity' and 'Genocide'?" Bosco Ntaganda has been charged with the first. Here's what it means," <https://www.theatlantic.com/international/archive/2013/03/whats-the-difference-between-crimes-against-humanity-and-genocide/274167/>, դիտվել է 10.05.2017:

17 Karnavas, "Book Review – East West Street."

18 Coalsen, "What's the Difference Between 'Crimes Against Humanity' and 'Genocide'?"

19 Filipa, "Human Rights and Genocide," 1192.

20 Վլադիմիր Վարդանյան, *Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները* (Երևան: ԵՊՀ հրատ., 2017), 54:

Հատկանշական է, որ ցեղասպանություն հանցագործությունը նկարագրելու համար համապատասխան եզրույթ փնտրելիս Լեմկինը դիտարկել էր նաև «Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» (Crime against humanity) եզրույթը և այն համարել ոչ նպատակահարմար: Նա գտնում էր, թե «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթն անորոշ է և ոչ ճշգրիտ. այդ եզրույթի ամնչությունը պատերազմի հետ բացառում է դրա կիրառումն այն զանգվածային սպանությունների նկատմամբ, որոնք կատարվել են ոչ պատերազմական պայմաններում՝ որպես օրինակ բերելով հրեաների և մյուս փոքրամասնությունների նկատմամբ հանցագործությունները Գերմանիայում նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը 1939 թ.²¹: Խնդիրն այն է, որ սկզբնական շրջանում այս հանցագործությամբ էին բնորոշում պատերազմի ընթացքում տեղի ունեցած գործողությունները: «Նյուրնբերգյան տրիբունալը կոչվում էր ռազմական տրիբունալ: Բացի ռազմական նվաճողական պատերազմի նախապատրաստությունից, նացիստները պատժվեցին նաև պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար, որոնք տեղի էին ունեցել ագրեսոր պետության կողմից սեփական քաղաքացիական բնակչության նկատմամբ ագրեսիվ պատերազմի ժամանակ կամ կապված պատերազմի հետ: Այսպիսով, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ըստ էության, պատերազմական հանցագործություններ են կամ պատերազմի ժամանակ տեղի ունեցած հանցագործություններ»²², – նշում էր Լեմկինը:

Նա կարծում էր, որ, ի տարբերություն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ցեղասպանություն հանցագործությունը կարող է իրագործվել ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև խաղաղ պայմաններում²³: Մյուս կողմից՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը չափազանց տարողունակ էր ու համընդգրկուն. որոշակի խմբի անդամների սպանությունն այն բազմաթիվ հանցանքների ձևերից մեկն էր, որն ընդգրկվում է «մարդկության դեմ ուղղված հանցագործության» սահմանման մեջ²⁴:

Լեմկինը հույս ուներ, որ Նյուրնբերգյան դատավարության ընթացքում «ցեղասպանություն» հասկացությունը կընդգրկվի հիմնական պատերազմական հանցագործների դեմ մեղադրական եզրակացության մեջ²⁵: Սակայն նրա հաջողությունը լիակատար չէր, չնայած նրան, որ եզրույթն օգտագործվում էր մեղադրական եզրակացություն-

21 Dan Eshet, “Totally Unofficial: Raphael Lemkin and the Genocide Convention” in *The Making History Series* ed. Adam Strom & the Facing History and Ourselves Staff (Brookline: Facing History and Ourselves, 2007), 19.

22 *American Jewish Historical Society* (hereinafter AJHS), P-154, Raphael Lemkin Collection, Box 6, Folder 9, Notes on Relation of the Genocide Convention and the Nuremberg Law, Notes relating to the Resolution on Genocide of November 21, 1947, 1.

23 *AJHS*, P-154, Raphael Lemkin Collection, Box 6, Folder 9, Notes on the relation of the Genocide Convention and the Nuremberg Law, Memorandum, undated, 1.

24 Eshet, *Totally Unofficial: Raphael Lemkin and the Genocide Convention*, 19.

25 Marc Daniel Segesser, Myriam Gessler, “Raphael Lemkin and the International Debate on the Punishment of War Crimes (1919–1948),” *Journal of Genocide Research* 7 (4): 463.

ների և դատավարության ավարտական փաստարկումների մեջ, «ցեղասպանությունը» չէր ճանաչվում որպես առանձին սահմանված հանցագործություն: Լեմկինը դժգոհ էր Նյուրնբերգյան դատավարությունից, որ ցեղասպանության փոխարեն որպես առանձին հանցագործություն էր ճանաչվում մարդկության դեմ ուղղված հանցագործությունը:

Հետագայում Լեմկինի վրդովմունքն իր արտահայտությունը գտավ ՄԱԿ-ի տեղեկագրի (United Nations Bulletin)՝ Նյուրնբերգյան դատավարության քննադատությանն ուղղված հոդվածում: Նա պնդում էր, թե Նյուրնբերգյան դատավարությունը հիմնականում զբաղվել է մարդկության դեմ ուղղված հանցագործություններով, որոնք տեղի են ունեցել նվաճողական պատերազմների ժամանակ, իսկ ցեղասպանությունն ընդգրկում է այդպիսի հանցագործությունները խաղաղ պայմաններում²⁶: Լեմկինի ակնկալիքներն արդարացան միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին, երբ ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում մինչ այժմ գոյություն չունի հատուկ միջազգային կոնվենցիա: Այս հանցագործությունը մնում է ներառված միջազգային դատարանների և տրիբունալների կանոնադրություններում: Թերևս մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասով հատուկ կոնվենցիայի բացակայությունը պայմանավորված է կառավարությունների մտահոգությամբ, որ իրենց քաղաքական ղեկավարները և ռազմական, հետախուզական, ոստիկանական ուժերում բարձրաստիճան պաշտոնյաները և ամենից առաջ պետության գլուխները կարող են պատասխանատվության ենթարկվել նման կոնվենցիայի դրույթներով, եթե այն գոյություն ունենա²⁷:

Մեծ թվով անձանց համակարգված սպանությունը հանցագործություն է, մարդկության դեմ ուղղված հանցագործություն, բայց դրա՝ ցեղասպանություն հանցագործություն լինելը կախված է մարդասպանների մտադրությունից: Ցեղասպանություն հանցագործությունը բաղկացած է երկու տարրից՝ մտադրությունից և գործողությունից: Մտադրվածությունը հնարավոր է անմիջապես ապացուցել հայտարարությունների կամ հրամանների առկայության դեպքում: Բայց ավելի հաճախ մտադրությունը երևում է համակարգված գործողությունների առկայությունից: Ինչ էլ որ լինի հանցագործության շարժառիթը (հողի հափշտակում, ազգային անվտանգություն, տարածքային ամբողջականություն և այլն), եթե հանցագործները գործողություններ են իրականացնում խմբին կամ խմբի մի մասին ոչնչացնելու մտադրությամբ, ապա մենք գործ ունենք ցեղասպանություն հանցագործության հետ²⁸:

26 William Korey, *An Epitaph for Raphael Lemkin* (New York: Jacob Blaustein Institute for the Advancement of Human Rights, 2001), 27.

27 Cherif Bassiouni, “Crimes Against Humanity: The Case for a Specialized Convention,” *Washington University Global Studies Law Review*. 9, no. 4 (2010): 584.

28 Ցեղասպանության իրավական սահմանումը տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.preventgenocide.org/genocide/officialtext-printerfriendly.htm>, դիտվել է 05.05.2017:

Ստացվում է, որ մարդկության դեմ ուղղված հանցագործություններից ցեղասպանության տարբերակող հատկանիշը ցեղասպանության մտավոր տարրն է, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական խմբին մասնակի կամ ամբողջությամբ ոչնչացնելու մտադրությունը: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում նման մտադրություն չի պահանջվում²⁹: Խմբին ոչնչացնելու մտադրության առկայությունը ցեղասպանությունն առանձնացնում է մյուս միջազգային հանցագործություններից, և այդ պատճառով այն համարվում է առանձնակի ծանրության հանցագործություն և հիշատակվում է որպես հանցագործությունների հանցագործություն (cime of crimes)³⁰:

Ինչ վերաբերում է մարդկության դեմ ուղղված հանցագործությանը, ապա այն պահանջում է ապացույց, որ հանցանքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության դեմ լայն տարածում գտած կամ համակարգված հարձակումների մաս (committed as part of widespread or systematic attack against a civilian population)³¹:

Ցեղասպանություն հանցագործության տարրերը բավարարում են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների պահանջները, և ցեղասպանությունն ի սկզբանե համարվում էր մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ կատարված ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերին ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու դիտավորությամբ³²: Յուրաքանչյուր ցեղասպանություն կարող է լինել մարդկության դեմ ուղղված հանցագործություն, բայց մարդկության դեմ ուղղված ոչ բոլոր հանցագործությունները կարող են լինել ցեղասպանություն:

Չնայած այն տեսակետներին, թե ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության ծանր տեսակ է, այնուհանդերձ սրանք լիովին առանձին հանցագործություններ են³³, ինչի ապացույցն է այն հանգամանքը, որ հատուկ միջազգային տրիբունալները, որոնք ստեղծվել էին՝ հետաքննելու Ռուանդայի և Հարավսլավիայի իրադարձությունները, ցեղասպանությանը և մարդկության դեմ ուղղված հանցագործությանը վերաբերվել են որպես լիովին առանձին հանցագործությունների³⁴: Սակայն, ինչպես արդեն նշվեց, սա չի ենթադրում, որ միևնույն ժամանակ չեն կարող տեղի ունենալ և՛ ցեղասպանություն, և՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Այսպես, օրինակ, Ռադիսլավ Կրաստիչ գործով Հարավսլավիայի տրիբունալի դատական պալատը նրան դատապարտեց ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործության և պատերազմական հանցագործությունների համար: Դատարանը

29 Yusuf Aksar, *Implementing International Humanitarian Law: From the Ad Hoc Tribunals to a Permanent International Criminal Court* (London and New York: Routledge, 2004), 205.

30 Robert Cryer, Håkan Friman, Darryl Robinson and Elizabeth Wilmshurst, *An Introduction to International Criminal Law and Procedure* (Cambridge: Cambridge University Press, 2010), 203.

31 Bassiouni Cherif, *Crimes against Humanity: Historical Evolution and Contemporary Application* (Cambridge: Cambridge University Press, 2011), 458.

32 Cryer et al, *An Introduction to International Criminal Law*, 234.

33 John Quigley, *The Genocide Convention: An International Law Analysis* (The Ohio State University: Ashgate Publishing Limited, 2006), 13.

34 Նույն տեղում:

Կրտսիչին դատապարտեց քառասունվեց տարվա ազատազրկման երեք մեղադրանքներով՝ առանց տարբերակելու, թե քանի տարի է տրվում այդ հանցագործություններից յուրաքանչյուրի համար³⁵:

Պաշտոնական Թուրքիայի քաղաքականությանը սպասարկող ժխտողականները գտնում են, որ ոչ միայն Հայոց ցեղասպանություն տեղի չի ունեցել, այլև Թուրքիան երբևէ հայերի նկատմամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ չի կատարել³⁶: Տարատեսակ կեղծ փաստարկներ բերելով՝ նրանք պնդում են, որ ընդամենը տեղի է ունեցել հայերի տեղահանություն՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից³⁷: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրագործվել է թե՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, որի արդյունքում տեղի է ունեցել քաղաքացիական բնակչության ոչնչացում, և թե՛ ցեղասպանություն:

Ինչպես արդեն նշել ենք, մարդկության դեմ ուղղված հանցագործություն եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված: Ուշագրավ է, որ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովն Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին առաջարկել էր համատեղ հայտարարության մեջ ընդգրկել «Բրիտանոնության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը, սակայն Ֆրանսիայի արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեն չէր համաձայնվել այդ եզրույթի կիրառման հետ: Նա մտավախություն ուներ, որ այդ ձևակերպումը կարող էր վիրավորական լինել Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային տիրապետության տակ գտնվող մահմեդականների համար: Ուստի նա առաջարկեց «Բրիտանոնության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը փոխարինել «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» տարբերակով, որն ընդունվեց Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների կողմից և տեղ գտավ համատեղ հայտարարության մեջ³⁸:

Բրիտանացի պաշտոնյաներն օգտագործում էին «Կապույտ գրքում» առկա փաստերը՝ ներկայացնելու, որ Օսմանյան կայսրությունում հայազգի քաղաքացիների կոտորածները մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են: «Կապույտ գրքի» համաձայն. «Կ.Պոլսում գտնվող թուրք նախարարները և նրանց գործընկերներն անմիջականորեն և անձամբ պատասխանատու են, սկզբից մինչև վերջ, 1915 թ. Մերձավոր Արևելքն ավերած հսկայական հանցագործության համար»³⁹:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո փորձ կատարվեց՝ պատժելու առա-

35 Նույն տեղում:

36 Morillon Report Regarding Turkey's Progress Towards Accession no. 217, November 15, 2000, http://www.mfa.gov.tr/morillon-report-regarding-turkey_s-progress-towards-accession_br_no_217---november-15_-2000.en.mfa, դիտվել է 12.05.2017:

37 Edward J. Erickson, "The Armenian Relocations and Ottoman National Security: Military Necessity or Excuse for Genocide?" *Middle East Critique* 20, no. 3 (2011): 297.

38 Antonio Cassese, *Cassese's International Criminal Law* (Oxford: Oxford University Press, 2013), 84.

39 Michelle Tusan, "Crimes against Humanity": Human Rights, the British Empire, and the Origins of the Response to the Armenian Genocide," *The American Historical Review* 119, no. 1 (2014): 62.

ջին համաշխարհային պատերազմի օսմանյան ռազմական հանցագործներին: 1919-1920 թթ. Օսմանյան կայսրությունում նախնական ռազմական տրիբունալ էր ստեղծվել՝ հույների և հայերի ցեղասպանությունն իրագործած ռազմական հանցագործներին պատժելու համար: Արդեն 1919 թ. հունվարին Օսմանյան կայսրությունում բրիտանական հանձնակատար, ծովակալ Սոմերսեթ Գուգ-Քալթորփը խոսում էր «մարդկության դեմ հանցագործությունների մեղավորներին դատելու» մասին⁴⁰: Քալթորփը պնդում էր, որ հայերի կոտորածների համար՝ որպես պատերազմական հանցագործությունների մեղավորներ գերմանացի սպաները նույնպես պետք է պատասխանատվություն կրեն. «Եթե դաշնակիցները որոշեն դատարան բերել նրանց, ովքեր վերջին պատերազմի ժամանակ մեղավոր են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրականացման հարցում, ես ցանկանում եմ նշել, որ Լիման ֆոն Սանդերսի անունը պետք է հիշատակվի»⁴¹:

Եվ 1919 թ. գարնանը օսմանյան կառավարությունը բրիտանական հետևողական ճնշման տակ ձերբակալեց ավելի քան 100 բարձրաստիճան կասկածյալների, այդ թվում՝ բարձրաստիճան այրերի՝ նախարարների, նահանգապետների և զինվորականների⁴²: Իսկ 1919 թ. մայիսի 26-ին բրիտանացիները ձերբակալեցին քառասունմեկ կասկածյալի, ավելի ուշ մի քանիսը ևս ձերբակալվեցին, և վերջիվերջո 1920 թ. օգոստոսին բրիտանացիների կողմից հարյուր տասնութ ռազմական հանցագործներ էին ներկայվել Մալթա՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրագործման համար դատարանի առաջ կանգնելու»⁴³: Փորձ կատարվեց Մալթայում ստեղծել միջազգային տրիբունալ, սակայն թուրքերը խճճեցին հետաքննությունները և խեղաթյուրեցին վավերագրական ապացույցները, այնպես որ նրանց կատարած աշխատանքից ոչ մի բան չէր կարող օգտագործվել միջազգային դատական ատյանի կողմից⁴⁴: Ի վերջո, Մեծ Բրիտանիան թուրք ռճագործներին փոխանակում է անգլիացի ռազմագերիների հետ⁴⁵: Այդպես էլ միջազգային տրիբունալ չձևավորվեց, սակայն եթե այն ստեղծվեր, ապա բոլոր հիմքերն առկա էին նրանում մարդկության դեմ ուղղված հանցագործություն հասկացությունը վերջնականապես միջազգայնորեն ամրագրելու համար, իսկ այդ խնդրի լուծումն անկատար չէր մնա մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը՝ Նյուրնբերգյան դատավարության իրականացումը:

40 Jonathan Gary Bass, *Stay the Hand of Vengeance: The Politics of War Crimes Tribunals* (Princeton and Oxford: Princeton University Press, 2000), 131.

41 Tusan Michelle, *Smyrna's Ashes: Humanitarianism, Genocide, and the Birth of the Middle East* (Berkeley, Los Angeles and London: University of California Press, 2012), 131.

42 Նույն տեղում, էջ 130:

43 Tianshu Zhang, "The Forgotten Legacy: Chin's Post-Second World War Trials of Japanese War Criminals, 1946–1956," in *Historical Origins of International Criminal Law: Volume I*, ed. Morten Bergsmo, Wui Cheah Ling, Yi Ping (Brussels: Torkel Opsahl Academic EPublisher, 2014), 275.

44 Allen Daniel Butler, *Shadow of the Sultan's Realm: The Destruction of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East* (Washington: Potomac Books Inc, 2011), 211.

45 Մելինե Անույան, *Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունը (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 67:

Վերջիվերջո Ստամբուլում երիտթուրքերի դատապարտման չորս դատական գործընթացների արդյունքում երեք ցածր դասի պաշտոնյաներ մահապատժի ենթարկվեցին «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» համար, և առաջին անգամ այդ եզրույթն օգտագործվեց միջազգային վարույթներում՝ Հայոց ցեղասպանությունը նկարագրելու համար⁴⁶: Այս քրեական դատավարությունները հանգեցրին միջազգային իրավունքում նոր իրավական հայեցակարգի՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման: Ստամբուլյան քրեական դատավարությունների շարքը կատարեց այն քրեաիրավական պյան դերը, որի հիման վրա «մարդկության դեմ ուղղված հանցագործություններ» նոր եզրույթը ներառվեց նոր ձևավորվող միջազգային քրեական իրավունքում⁴⁷:

1920 թ. օգոստոսին ստորագրված Սևրի պայմանագրով ևս նախատեսվում էր մարդկության դեմ հանցագործությունների համար պատասխանատու անձանց քրեական հետապնդում: Սակայն Սևրի պայմանագիրն այդպես էլ չվավերացվեց և փոխարինվեց Լոզանի պայմանագրով, որը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին դրույթներ չէր նախատեսում⁴⁸:

Օսմանյան կայսրությունն իր հայ բնակչության նկատմամբ իրականացրել է նաև ցեղասպանություն հանցագործությունը, ինչն ակնհայտ է հայկական բնակչությանը՝ որպես առանձին խմբի ոչնչացնելու դիտավորությունից: Հատկանշական է, որ Ռաֆայել Լեմկինը ցեղասպանություն եզրույթը ստեղծելիս նկատի է ունեցել նաև Հայոց ցեղասպանությունը⁴⁹: Նա իր «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագրի» «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում հատուկ անդրադարձել է Օսմանյան կայսրությունում հայերին ոչնչացնելու դիտավորության առկայությանը⁵⁰: Իսկ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վերաբերյալ իր անտիպ ուսումնասիրություններից մեկում նշել է. «Թուրքերը, ովքեր մասնակցում էին 1.2 մլն հայերի ոչնչացմանը, մեղավոր են ցեղասպանության համար, նրանք գործել են հայ ազգին ոչնչացնելու մտադրությամբ»⁵¹:

46 Tusan, *Smyrna's Ashes*, 130.

47 Dadrian Vahagn, Akçam Taner, *Judgment At Istanbul: The Armenian Genocide Trials* (New York/Oxford: Berghahn Books, 2011), 3.

48 Ավելի մանրամասն տե՛ս Cherif Bassiouni, *Crimes against Humanity in International Criminal Law* (The Hague/London/Boston: Kluwer Law international, 1999), 67-68.

49 1949 թ. CBS հեռուստաընկերության ծրագրերից մեկին տված հարցազրույցում Ռաֆայել Լեմկինը նշում է. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև այն շատ անգամ տեղի ունեցավ: Այն տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ կոշտ վերաբերմունքի արժանացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատժվեցին»: “Lemkin&Les Arméniens,” <https://www.youtube.com/watch?v=WutF5OVgaNk>, դիտվել է 01.06.2017:

50 Տե՛ս *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 85-98.

51 *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, The Convention for the Prevention and Punishment of Genocide, undated, 2.

«Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածում նշված են այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Կոնվենցիան առնչվում է մեծ թվով անձանց հետ, և խմբի մասնակի ոչնչացման դեպքում սպանված անձանց թիվը տվյալ տարածքում ապրող ամբողջ խմբի մեջ պետք է լինի էական: Էական դրակումը խմբի նշանակալի հատվածն է, ինչպիսիք են մտավորականությունը և ղեկավարությունը, որի ոչնչացումը հանգեցնում է խմբի քանակական և որակական ուժերի զգալի կրճատման⁵²: Այսպես, Հայոց ցեղասպանության դեպքում հատուկ դիտավորության մասին են վկայում ոչ միայն հայության էական հատվածի՝ 1.5 մլն բնակչության ոչնչացումը, այլև հայության մտավորականության և ղեկավար հատվածի սպանությունը:

Լեմկինն իր անտիպ թղթերից մեկում հատուկ ընդգծում է. «1.2 մլն հայեր ոչնչացվեցին: 1916 թ. նրանք ներկայացնում էին հայ ժողովրդի զգալի մասը, բայց ոչ ամբողջ հայ ժողովուրդը: Այս խոսքերն արդեն հաստատում են երկրորդ հոդվածը («Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի)՝ ցույց տալու համար, որ հանցագործները մտադիր են եղել ոչնչացնել խմբին: Ոչնչացումը նշանակում է այնպիսի գործողությունների իրականացում, որոնք հանգեցնում են խմբի վերացմանը: Հրեաները, հայերը, կաթոլիկները և բողոքականներն անցյալում ոչնչացվել են միայն այն պատճառով, որ նրանք տվյալ կրոնական և ազգային խմբերին էին պատկանում: Վերաբերմունքն անհատական հրեայի, հայի, կաթոլիկի կամ բողոքականի նկատմամբ էական չէ»⁵³:

Դիտավորության հանգամանքի մասին են փաստում նաև թուրքական ռազմական ատյանի արձանագրությունները: Ռազմադաշտային դատարանների կայացրած մի շարք դատավճիռներում կարևորվել են կանխամտածվածության և ցեղասպանական դիտավորության գույզ գործոնները՝ որպես կենտրոնական իշխանությունների կողմից հայերի զանգվածային կոտորածների գլխավոր բնութագրիչներ⁵⁴: Ինչպես նշում է Վահագն Դադրյանը, Իթթիհաթի առաջնորդներն ապավինում էին կուսակցությունը «քողարկելու» մարտավարությանը: Կենտրոնական ծրագրի կատարումն ապահովվել և ուղղորդվել է բանավոր և գաղտնի պատվերների և հրահանգների միջոցով: Այս կարգադրությունները, որոնք ուղարկվում էին կողավորված շղթաներով, միշտ ուղեկցվում էին «ոչնչացնել» հրահանգով⁵⁵:

52 Daniel David Ntanda Nsereko, "Genocide: A Crime against Mankind," in *Substantive and Procedural Aspects of International Criminal Law: The Experience of International and National Courts*, vol. 1, ed. Kirk Gabrielle MacDonald and Swaak Q. Goldman Olivia (Hague, London Boston: Kluwer law international, 2010), 124-125.

53 *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 2, The Truman Doctrine, the Marshall Plan, and the U.N. Action on Genocide, March 29, 1948, 1, 2.

54 Վահագն Դադրյան, *Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր* (Երևան, ԵՊՀ հրատ., 2012), 36:

55 Vahakn Dadrian, "Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications," *Yale Journal of International Law* 14, no. 2 (1989): 300.

Եթե օսմանյան իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու դիտավորություն չլիներ, ապա հարկ չէր լինի ոչնչացնել Հայոց ցեղասպանությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը: Այնինչ այդ փաստաթղթերը միտումնավոր ոչնչացվեցին: 1919թ. Ստամբուլում երիտթուրքական կառավարության դատավարությունում դատախազները պնդում էին, որ առաջին համաշխարհային պատերազմում պարտության առջև կանգնած երիտթուրքական կառավարությունը «մաքրում» է իր արխիվները: Ոչնչացված փաստաթղթերի թվում էին ինչպես Ներքին գործերի նախարարության փաստաթղթերի զգալի մասը, այնպես էլ Միություն և առաջադիմություն կուսակցության և Հատուկ կազմակերպության թղթերը, որոնք կարևոր նշանակություն էին ունեցել հայ ժողովրդի բնաջնջման գործում⁵⁶: Եվ պատահական չէ, որ ժխտողականները, ի վիճակի չլինելով հայերին բնաջնջելու մտադրության մասին վկայող փաստաթղթերի ոչնչացման հարցի շուրջ փաստերի վրա խարսխված հիմնավորումներ ներկայացնելու, ընդամենը ենթադրություններ են առաջ քաշում, թե առաջին համաշխարհային պատերազմի ավարտին փաստաթղթերի ոչնչացումը պարզապես պայմանավորված է եղել ռազմական գաղտնիքները թշնամիներից պաշտպանելու անհրաժեշտությամբ⁵⁷:

Օսմանյան իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու մտադրությունը և ցեղասպանության հարցը կասկածի տակ առնելու համար ժխտողականների կողմից հիմնականում առաջ է քաշվում այն պնդումը, թե Նայիմ էֆենդու հուշագրությունները և Թալեթաֆ փաշայի հեռագրերը⁵⁸ կեղծված փաստաթղթեր են⁵⁹: Նրանց այս պնդումը հեռու է իրականությունից. Թաներ Աքչամն իր «Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide»⁶⁰ («Սպանության հրամաններ. Թալեթաֆ փաշայի հեռագրերը և Հայոց ցեղասպանությունը») գրքում, ցույց տալով ժխտողականների կողմից առաջ քաշվող թեզերի կեղծ լինելը, փաստերի հիման վրա սպացուցում է, որ Նայիմ էֆենդու հուշագրությունները և Թալեթաֆ փաշայի՝ սպանությունների հրամաններն իրական են, ինչը փաստում է օսմանյան իշխանությունների՝ հայերին ոչնչացնելու մտադրության առկայության մասին:

Ցեղասպանական դիտավորության կարևոր ապացույցներից մեկն էլ գալիս է 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին Միություն և առաջադիմություն կուսակցության կող-

56 Օսմանյան արխիվների փաստաթղթերի ոչնչացման մասին ավելի մանրամասն տե՛ս Taner Akçam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 9-20.

57 Armenian Claims and Historical Facts: Questions and Answers (Ankara: Center for Strategic Research, 2005), 33-38, <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/ArmenianClaimsandHistoricalFacts.pdf>; Sinasi Orel, Sureyya Yuca, *The Talat Pasha Telegrams: Historical Fact or Armenian Fiction?* (Nicosia: K. Rustem and Bros., 1986), 276.

58 Արամ Աստուկյանը Հալեպում եղած ժամանակ բռնագաղթի տնօրինության թուրք քարտուղար Նայիմ բեյից ձեռք է բերել Հայոց ցեղասպանության մասին մի շարք պաշտոնական-պետական վավերագրեր, որոնք հրապարակել է «Այն սև օրերուն...» (1918) և «Նայիմ բեյի հուշերը» (1920 թ. ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունները, իսկ հայերեն հրատարակությունը՝ 1921 թ. «Մեծ ոճիրը») գրքերում:

59 Michael M. Gunter, "What Is Genocide? The Armenian Case," *Middle East Quarterly* 20, no. 1 (2013): 41.

60 Taner Akçam, *Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide* (Cham: Palgrave Macmillan, 2018), 261.

մից հրապարակված օրենքներից, որոնք թույլ են տվել, որ պետությունը բռնագրավի լքված տները և գույքը և ստեղծի լուծարման հանձնաժողովներ՝ տնօրինելու և հաստատելու համար: Սա ևս ապացուցում է, որ նրանք գործել են հատուկ դիտավորությամբ, որ հայերն այլևս երբեք իրենց բնակության վայրեր չեն վերադառնա⁶¹:

Այսպիսով, մարդկության դեմ ուղղված հանցագործություն և ցեղասպանության հանցագործություն հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Եվ միջազգային իրավունքում այս հանցագործությունների ի հայտ գալու և սահմանման գործում իր էական նշանակությունն է ունեցել Հայոց ցեղասպանության իրագործումը, նշված հանցագործությունները միաժամանակ ցայտուն դրսևորվում են Հայոց ցեղասպանության օրինակում:

Narek M. Poghosyan

PhD

RELATIONSHIP BETWEEN THE CRIME AGAINST HUMANITY AND GENOCIDE AND ITS MANIFESTATION ON THE EXAMPLE OF THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

Key words: crime against humanity, genocide, Raphael Lemkin, Hersch Lauterpacht, Nuremberg trials, intention to destroy the group, Armenian genocide.

The article discusses the features and the relationship between genocide and crime against humanity. The term crime against humanity was officially used for the first time in 1915 regarding the Armenian Genocide and was internationally defined in the Nuremberg Charter.

During the Nuremberg trials a Polish lawyer of a Jewish origin Raphael Lemkin proposed to include the term genocide in the court proceedings. It should be mentioned that by creating the term genocide Raphael Lemkin has also referred to the Armenian Genocide. Within the Nuremberg trials Lemkin did not succeed in promoting its new concept, and only on December 9, 1948 the United Nations General Assembly adopted the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

The well-established facts show that the Ottoman Empire committed crimes against humanity and genocide against the Armenians. Therefore, the article analyzes the manifestation of these two crimes on the example of the Armenian Genocide. The significance of the Armenian Genocide is revealed in the development of the concepts of crimes against humanity and genocide.

61 Geoffrey Robertson, "Armenia and the G-word: The Law and the Politics," in *The Armenian Genocide Legacy*, ed. Alexis Demirdjian (New York: Palgrave Macmillan, 2016), 72.

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ГЕНОЦИДОМ И ПРЕСТУПЛЕНИЕМ ПРОТИВ ЧЕЛОВЕЧЕСТВА, ЕГО ПРОЯВЛЕНИЕ НА ПРИМЕРЕ ГЕНОЦИДА АРМЯН

РЕЗЮМЕ

Ключевые слова: преступление против человечества, геноцид, Рафаэль Лемкин, Герш Лаутерпахт, Нюрнбергский процесс, намерение уничтожить группу, Геноцид армян.

Рассматриваются особенности и взаимосвязь между геноцидом и преступлением против человечества. Понятие преступления против человечества впервые было официально использовано в 1915 году в отношении Геноцида армян и было утверждено на международном уровне в уставе Нюрнбергского трибунала.

Во время судебных процессов в Нюрнберге юрист Рафаэль Лемкин предложил включить в судебное разбирательство термин геноцид, который также использовался для обозначения Геноцида армян, но не добился успеха. Однако 9 декабря 1948 года Генеральная Ассамблея ООН приняла конвенцию «О предупреждении преступления геноцида и наказании за него».

Факты показывают, что правительство Османской империи совершило преступления против человечества и геноцид против армян. Поэтому в статье анализируется проявление этих двух преступлений на примере Геноцида армян. Определяется роль Геноцида армян при создании концепции геноцида и преступления против человечества.

REFERENCES

Anumyan, Meline. Հանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունը (1919-1921 թթ. և 1926 թ.) [Recognition and Condemnation: Young Turk Trials]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2013.

Dadryan, Vahakn. Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր [The Armenian Genocide as a Dual Problem of National and International Law]. Yerevan: Yerevani petakan hamalsarani hratarakchutyun, 2012.

Qoch'aryan, Vigen. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում [The Armenian Genocide in International Legal Documents]. Yerevan: Heghinakayin hratarakut'yun, 2014.

Vardanyan, Vladimir. Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները [The Legal Issues of Recognition, Condemnation and Overcoming the Consequences of the Armenian Genocide]. Yerevan: Yerevani petakan hamalsarani hratarakchutyun, 2017.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՒՆԻՆԻՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՐԻՏԵՐԻ ԿՈՆՍՏԱԿՏԻ ՕՐՎԱ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ՄԵՐՕՐՅԱ ՎԻՃԱԿԸ
(ՄԱՍ 2)**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Մեծ եղեռն, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ապրիլի 24:

**Ճանապարհի դեպի հիշատակի օրվա նշում
Խորհրդային Հայաստանում. 24 ապրիլի 1965 թ.**

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումը պայմանավորված էր ոչ միայն «ճնհալի» շնորհիվ հասարակության լայն շերտերի մեջ տեղ գտած փոփոխություններով, այլև Հայաստանի ղեկավարների քաղաքական կամքի գործոնով: 1960 թ. դեկտեմբերի վերջին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում Յակով Զարոբյանը (1908-1980): Նա իր գերդաստանի ճակատագրով (1914 թ. գաղթել է ծննդավայր Արդվինից և ուտքով հասել Դոնի Ռոստով. մինչև 1949 թ. ապրել է Հայաստանից դուրս) է զգացել Մեծ եղեռնի արհավիրքները: Նրա առաջին քայլերից էին ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի առջև Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հարգելու նպատակով միջոցառումների անցկացման անհրաժեշտության հարցի բարձրացման նախապատրաստությունը և համապատասխան նախագծերի կազմումը: Զարոբյանը նպատակ ուներ ոչ միայն բավարարելու հայ ժողովրդի վաղուց հասունացած ոգեղեն հիշատակի պահանջները, այլև լուծելու ռազմավարական նշանակության խնդիրներ: Երբ Եղեռնի 50-ամյակը ոգեկոչելու թույլտվություն ստանալու համար ՀԿԿ կենտկոմը դիմեց Մոսկվա, ԽՍՀՄ կենտկոմի քաղքյուրոն հարցի քննարկման համար կազմեց հատուկ հանձնաժողով, որը թեպետ բավական դժկամ, բայց և այնպես համաձայնեց թույլատրել նշել Եղեռնի 50-ամյակը¹:

Պետք է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք, որն էական նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության գործոնը խորհրդային և, դրանով իսկ, նաև միջազգային հանրությանը ներկայացնելու առումով: Բանն այն է, որ Խորհրդային Հայաստանի կուսակցական ղեկավարությունը, փորձելով իր վերադասի՝ ԽՍՀՄ կենտկոմի հավանությունը ստանալ «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումներ» անցկացնելու մասին, հմտորեն օգտագործեց հայկական Սփյուռքի գործոնը և խնդիրը տեղափոխեց գաղափարախոսական ոլորտ:

1 Տե՛ս Ավագ Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ փարեյիցը և Երկրորդ Հանրապետությունը* (Երևան, «Նորավանք», 2015), 9: Հարցի շուրջ մանրամասն տե՛ս նաև Никита Я. Заробян, Яков Заробян и его эпоха (Ереван: изд-во РАУ, 2008); Նիկիտա Զարոբյան, Արմեն Գրիգորյան, «1965-ի նոսրիկոնը», <http://imyerevan.com/hy/society/view/2263> (23 ապրիլի 2013 թ.), դիտվել է 04.01.2019:

Մասնավորապես ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի՝ ԽՍՀՄ կենտկոմին 1964 թ. դեկտեմբերին ուղղված նամակում² շեշտվում էր, որ «սիյուրքահայ հետադեմ ուժերը» (նկատի ունենալով թերևս «Դաշնակցություն» կուսակցությանը) հայտարարում են, որ «Խորհրդային Հայաստանում հայերի գանգվածային բնաջնջման տարեդարձերը ոչ մի ձևով չեն նշվում», պնդում են. «... իբր մեր երկրում հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, և որ իբր դրանով մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է»: Եվ եզրակացվում է. «...նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը ԽՍՀՄ լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել»: Առաջարկվում էր. «...այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարևան երկրների հետ և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա, և հետապնդի նպատակ, որպեսզի *ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի* (ընդգծումն իմն է – Հ.Մ.)»: Ահա այս վերջին ձևակերպումը շատ գաղափարախոսական, շատ խորհրդային և համընդունելի դրույթ էր, որն առանձնապես հաճախ էր օգտագործվում Հայրենական մեծ պատերազմի ու նրա առանձին դրվագների բնութագրման համար: Մյուս կողմից, այս ձևակերպումը ցուցիչ էր այն բանի, որ Հայոց ցեղասպանությունը դուրս էր բերվում զուտ հայկական ողբերգություն լինելու դրույթից և դրվում համաշխարհային պատմության հարթության մեջ³:

Մյուս կարևոր գաղափարախոսական կանխադրույթը, որն առկա էր վերոհիշյալ նամակում առանձին կետի ձևով, հետևյալն էր. «Երևանում կանգնեցնել *առաջին համաշխարհային պատերազմում* զոհված հայ նահատակներին նվիրված կոթող: Կոթողը պետք է խորհրդանշի *հայ ժողովրդի վերածնունդը* լընդգծումներն իմն են – Հ.Մ.)»⁴: Այստեղ օգտագործված «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը ոչ միայն զուտ ժամանակագրական ցուցիչի դեր էր կատարում, այլև խնդիր էր դնում երևույթը տեղափոխել «համաշխարհային» հարթություն: Մյուս կողմից, խորհրդային գաղափարախոսությունը, հետևելով լենինյան բնութագրումներին, տասնամյակներ շարունակ Առաջին աշխարհամարտը ներկայացնում էր իբրև «իմպերիալիստական պատերազմ»⁵: Իսկ աշխարհում հենց Խորհրդային Միությունն էր, որ, ղեկա-

2 Մանրամասն տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և խմբագիր՝ Ավագ Հարությունյան (Երևան, «Գիտություն», 2005), 37-40:

3 Հարություն Մարության, «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)», *ՊԲՀ*, 3 (2014), 65-66:

4 Հուշարձանի կառուցման որոշումների և ընթացքի մասին մանրամասն տե՛ս Ամատունի Վ. Իրաբյան, «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1 (2008), 292-296:

5 Մանրամասն տե՛ս Л. Федоров, «В. И. Ленин и И. В. Сталин о Первой империалистической войне», *Военно-исторический журнал*, 1 (1939), 133-137. Հմմտ. օրինակ. Вторая империалистическая война началась. Политическое управление РККА (В помощь пропагандисту РККА) (М., 1938).

վարելով «համաշխարհային սոցիալիզմի» ճամբարը, բոլոր հնարավոր միջոցներով դիմակայում էր «համաշխարհային իմպերիալիզմին»⁶:

Հաջորդ էական պահն այն էր, որ որևէ բնութագրմամբ չէր նշվում հայերին «գոհված հայ նահատակներ» դարձնողների մասին. կարևորն այն էր, որ դա տեղի էր ունեցել «առաջին համաշխարհային պատերազմի» ժամանակ: Այս տեսանկյունից բնութագրական է, որ ՀԿԿ կենտկոմի նախագահության և Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի ներհանրապետական ընդգրկում ունեցող որոշումներում⁷ արդեն «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը չի հանդիպում:

Ոչ պակաս կարևոր շեշտադրում էր «հայ ժողովրդի վերածնունդ» ձևակերպումը, քանի որ խորհրդային գաղափարախոսությունը տասնամյակներ շարունակ քարոզում էր, որ հենց խորհրդային կարգերի հաստատումը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից ու պայմաններ ստեղծեց նրա իրական «վերածննդի» համար:

Եթե ընդհանրացնենք, ապա պետք է ամրակայել, որ դիտարկվող նամակի հիմնական դրույթներն իրականում ուղենիշային ձևակերպումներ էին: Դա այն մարտավարական օրինակներից է, որ երբ պետք է դրական լուծումների ակնկալիքով Հայոց ցեղասպանության խնդիրը ներկայացնել հարցին ոչ շատ տեղյակ քաղաքական (տվյալ դեպքում՝ նաև կուսակցական) վերնախավին, ապա պետք է «խոսել» այդ վերնախավի համար հասկանալի և ընդունելի, տվյալ դեպքում՝ «խորհրդային գաղափարախոսության» լեզվով՝ մասնավորապես դուրս բերելով հարցը էթնիկական հակամարտության ոլորտից⁸:

1965 թ. ապրիլի 24-ը նշվեց երկու մակարդակով՝ ժողովրդական և պետական-կուսակցական: Այդ օրը՝ երեկոյան, Երևանի օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի և Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էին ՀԽՍՀ ողջ ղեկավարությունը, Վազգեն Ա Կաթողիկոսը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միմիայն ՀԿԿ կենտկոմի հատուկ հրավիրատոմսերով: Հնչեցին ելույթներ՝ մոտավորապես հետևյալ շեշտադրումներով. հայ ժողովուրդն առաջին անգամ արժանավայել նշում է Մեծ եղեռնի տարելիցը, բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը. դատապարտման է արժանի ոչ թե Թուրքիայի աշխատավոր ժողովուրդը, այլ ցեղասպանության քաղաքականությունը և այն գործադրողները. միայն խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը փրկեցին հայ ժողովրդին իսպառ բնաջնջումից. Եղեռնի տարելիցը նշվում է ոչ թե ողբով ու լացով, այլ Հայաստանի վերածննդի պայմաններում, նրա բեղուն ներկայի և առավել շքեղ ապագայի գիտակցությամբ, այն համոզմամբ,

Խորհրդային պատմագիտության մեջ ուղենիշային էր գնահատվում Վ. Ի. Լենինի ձևակերպումն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, որն այնուհետև պետք է հանգեցնի հեղափոխության: Մանրամասն տե՛ս, օրինակ, «Предисловие». В кн.: В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 26 (М.: Изд-во политической литературы, 1969), VII–XXVII.

6 Մարտիան, «Թանգարան և հուշարձան», 67:

7 Տե՛ս, օրինակ, Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, 48, 60, 64:

8 Մարտիան, «Թանգարան և հուշարձան», 67:



Լուս. 1. Ցույց Լենինի հրապարակում: Ցուցարարների ձեռքին պլակատ է Մասիսների ուրվանկարով և «Արդար լուծեք Հայոց հարցը» գրությամբ: Երևան, 24 ապրիլի 1965 թ.: ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 1, թպ 6, ֆի 23, լուս. 7:

որ ոչ մի ուժ, սոցիալիստական հասարակարգից բացի, չի բերի հայ ժողովրդին այդ լուսավոր ապագան⁹:

1965 թ. ապրիլի 24-ին՝ առավոտյան ժամը 10-ին, տասնյակ հազարավոր սևազգեստ երիտասարդներ հավաքվում են Լենինի հրապարակում չարտոնված հանրահավաքի, ձեռքներին պաստառներ՝ «2.000.000» (Եղեռնի զոհերի թիվը), «Հատուցեք հողերը», «Արդար լուծեք հայոց հարցը», «Ազատե՛ք 7 հայրենասերներին» և այլն (լուս. 1), ինչպես նաև՝ Դանիել Վարուժանի և Կոմիտասի մեծադիր դիմանկարները, անընդհատ վանկարկվում էր «Հո-դե-րը, հո-դե-րը»: Տարածվում են ԽՄԿԿ ԿԿ-ին, ԽՍՀՄ կառավարությանը և խորհրդարանին ուղղված թոռուցիկներ, որտեղ խնդրում էին խորհրդային ղեկավարությանը վերացնել ազգային հարցում անհատի պաշտամունքի տարիներին ընդունված բոլոր հակահայկական անարդար որոշումները և արդարացի լուծում տալ հայ ժողովրդի պահանջներին, մասնավորապես Հայաստանին հանձնել Դարաբաղը, Նախիջևանը և Խորհրդային Միության պատմականորեն հայաբնակ մյուս հողերը, ներգաղթած հայերին տեղավորել Նախիջևանում, քանի որ բնակչության խտությունը հանրապետությունում հասել է տագնապալի,

⁹ Մանրամասն տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 43-45:

ճակատագրական մակարդակի, ազատել յոթ հայրենասերներին, արագացնել հայերի ներգաղթը¹⁰: Այդ պահանջները հենց հրապարակում հանձնվում են Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Այլ թոռուցիկներում գրված էր. «Կոչ հայ ժողովրդին. Հայ ժողովուրդ, հիշի՛ր, ապրիլի 24-ը Մեծ եղեռնի օրն է: Բոլորս սգո երթի», ինչպես նաև «Կորչեն թրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանում», «Վերադարձրեք մեր հողերը», «Ազատություն արևմտահայերին»¹¹: Լենինի հրապարակից ցուցարարները հայրենասիրական կոչերով քաղաքի փողոցներով երթ են կազմակերպում դեպի Պոլիտեխնիկական ինստիտուտ և Երևանի պետական համալսարան՝ կոչ անելով ուսանողներին միանալ երթին: Ապա ժողովուրդն ուղղվում է դեպի Կոմիտասի պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Յեղասպանության զոհ դարձած մեծ երգահանին: Այստեղ ելույթ են ունենում մտավորականության ներկայացուցիչներ (մասնավորապես Սիլվա Կապուտիկյանը և Պարույր Սևակը), երիտասարդներ: Դրանից հետո մարդիկ վերադառնում են Օպերայի հրապարակ: Օպերային թատրոնի շենքում սկսվում է պաշտոնական ժողովը: Քիչ անց մի խումբ երիտասարդներ փորձում են մուտք գործել շենքի դահլիճ: Հանդիպելով իրավապահ մարմինների դիմադրությանը՝ նրանք քարեր են շարում օպերայի շենքի վրա՝ ջարդելով ապակիները: Իրավապահները ստիպված շենք ներխուժողների վրա պոմպերով սառը ջուր են բաց թողնում, բայց ապարդյուն. մոտ երկու հարյուր ցուցարարներ ներխուժում են Օպերայի շենք, ապա և նիստի անցկացման վայր «Հողերը մե՛րն են, մե՛րը» բացականշություններով: Հանդիսավոր նիստը ձախողվում է: Հանրապետության ղեկավարությունը հեռանում է, մնում է միայն կաթողիկոսը, ով հանդարտության կոչեր է անում: Այդ և հաջորդ օրը մի քանի տասնյակ մարդ ձերբակալվում է, սակայն նրանց դեմ քրեական գործեր չեն հարուցվում, և նրանք ազատ են արձակվում, քանի որ նրանց գործողությունները որակվում են որպես խուլիգանություն: Ապրիլի 25-ի կեսօրին օպերային թատրոնի տարածքն արդեն մաքրվել էր, նոր ապակիները՝ տեղադրվել, այնպես որ հաջորդ օրը Մոսկվայից ժամանած հատուկ հանձնաժողովը որևէ հետք չի տեսնում: Սակայն մի քանի ամիս անց Յակով Զարոբյանն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և աշխատանքի նշանակվում Մոսկվայում¹²:

10 Օրվա իրադարձությունների մանրամասն նկարագրությունը տե՛ս, օրինակ՝ Մկրտիչ Արմեն, «Ջեկուցագիր Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին», *Գրական թերթ* (Երևան), 6 սեպտեմբերի 1991 թ. (թիվ 25/2428): Սիլվա Կապուտիկյան, *Էջեր փակ գգրոցներից* (Երևան, «Ապոլոն» հրատ., 1997), 60, 77: Haig Sarkissian, “50th Anniversary of the Turkish Genocide as Observed in Yerevan,” *The Armenian Review* 19, no. 4 (1966): 23-28. Նվարդ Բորյան, «Ինչպես է նշվել Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և ինչպես հնարավոր դարձավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը», *Հայկական աշխարհ* (Երևան), 24 ապրիլի 2007 թ., <http://www.armworld.am/detail.php?paperid=1493&pageid=50725&lang>, դիտվել է 04.01.2019: Никита Я. Заробян, *Яков Заробян и его эпоха*, 123-140: Զարոբյան, Գրիգորյան, «1965-ի ուրիկոնը»: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 47-59:

11 Տե՛ս «Մեծ Եղեռնի յիսնամեակին. Տոնակատարությունները Երեւանի մէջ. Պաշտօնական հաւաքոյթներ, եւ ժողովրդական համախմբումներ ու ցոյցեր», Կարօ Գէորգեան, *Ամենուն տարեկիրքը 1966*, ԺԳ տարի (Պէլյուրթ, 1966), 316:

12 Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 58-59:

1965 թ. ապրիլի 24-ի երևանյան¹³ հուժկու շարժումը քանդեց պաշտոնական լուռության պատնեշը, ու հայ ժողովուրդն իրավունք ստացավ բարձրաձայն խոսելու իրեն պատուհասած 20-րդ դարի ամենամեծ ողբերգություններից մեկի՝ Հայոց Մեծ եղեռնի մասին, գրվեցին գիտական հետազոտություններ, 1915-ի դեպքերի մասին հրատարակվեցին գրքեր ու փաստաթղթեր, իսկ պետականորեն կազմակերպված ու իրականացված ցեղասպանության փաստը վերջապես իր տեղը գտավ հայոց պատմության դասագրքերում: Բացի դրանից, սա այն եզակի դեպքերից էր, երբ իշխանությունն ու ժողովուրդը, չնայած տարբեր դիրքերից, պայքարում էին մեկ ընդհանուր գործի համար: Պայքարեցին ու հասան իրենց նպատակին¹⁴:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը

Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը 1965 թ. փետրվարի 15-ին ընդունում է համապատասխան որոշում: Մեկ ամսից հրապարակված մրցանակաբաշխության պայմանների մեջ շեշտվում է, որ կոթողը պետք է մարմնավորի «ստեղծագործող հայ ժողովրդի մաքառումներով լի կյանքը, վերապրելու, առաջադիմելու անսպառ կենսունակությունը, նրա ներկան ու պայծառ ապագան՝ ի հավերժացումն 1915 թ. Մեծ եղեռնի միլիոնավոր նահատակների անմար հիշատակի»¹⁵: Կարծում եմ, որ հուշարձանի համար նախատեսված տեղանքը՝ Ծիծեռնակաբերդի բարձունքը, պատահական չէր ընտրված: Որոշում կայացնողները թերևս հետևել էին Երևանի՝ 1924 թ. գլխավոր հատակագծի հեղինակ Ալեքսանդր Թամանյանի մտահղացմանը՝ քաղաքն իր հիմնական ճարտարապետական համալիրներով ուղղել դեպի Արարատ: Ընտրված տեղանքը նույնպես ուղղված էր դեպի Մասիսները, դեպի Արևմտյան Հայաստան:

1965 թ. հունիսի սկզբին ժյուրիի կողմից ընտրված նախագիծը (ճարտարապետներ Արթուր Թարխանյան, Սաշուր Քալաշյան) ուներ «պարզ ու հասկանալի լուծում... խոնարհված խաչքարաձև քարերը խորհրդանշում են սուզը զոհվածների հիշատակին, իսկ վերասլաց կոթողը՝ վերածնունդ»¹⁶: Հուշահամալիրի շինարարությունն ավարտվում է ռեկորդային կարճ ժամանակահատվածում՝ երկուսուկես տարում: Սաշուր Քալաշյանի վկայությամբ. «Ամեն շաբաթ-կիրակի Հայաստանի շրջաններից, գյուղերից սեփական նախաձեռնությամբ մարդիկ էին ավերորումներով

13 Այդ օրը տեղի են ունենում Մոսկվայի հայության հավաք հայկական գերեզմանատանը և հոգեհանգստյան պատարագ՝ եկեղեցում: Հաջորդ տարի կազմակերպվում է շուրջ 10.000 մարդկանց մասնակցությամբ երթ դեպի Թորքաի դեսպանության շենք, ինչպես և պատարագ եկեղեցում: Մանրամասն տե՛ս Վարդան Հայկազյան, Ցեղասպանության տարեկիցի նշումը Մոսկվայում. – Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 140-153: Vahagn N. Dadrian, “The Events of April 24 in Moscow – How They Happened and Under What Circumstances,” *The Armenian Review* 20, no. 2 (1967): 9-26:

14 Զարոբյան, Գրիգորյան, «1965-ի ռուբիկոնը»:

15 Վիրաբյան, «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը», 293:

16 Նույն տեղում, 296: Տե՛ս նաև Վարազդատ Հարությունյան, «Ինչպես ընտրվեց Եղեռնի զոհերի հուշահամալիրի նախագիծը», *Ազգ* (Երևան), 27 մայիսի 2006 թ., Զ:

գալիս, ասում էին. «Մենք այսինչ գյուղից ենք, մեր նախնիները եկել են Արևմտյան Հայաստանի այսինչ նահանգից, ուզում ենք շարաթորյակ անել, ասե՛ք՝ ինչ անենք»: Գործ շար կար, ու էդ մարդիկ հաճույքով, թևերը քշած՝ քար էին տեղափոխում կամ շինարարական աղբ թափում: Իսկ երբ անելու բան չէր լինում, սկսում էին հայրենասիրական երգեր երգել»¹⁷: Գործն արագ և «անաղմուկ» անելու խնդիր էր դրված, որպեսզի հանկարծ Մոսկվան չփոխեր իր որոշումը:

Վերջապես, 1967 թ. նոյեմբերի 29-ին տասնյակ հազարավոր քաղաքացիների ներկայությամբ հանդիսավոր պայմաններում Ծիծեռնակաբերդում բացվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի գլխավորությամբ ներկա էին ՀԽՍՀ կուսակցական-պետական ողջ ղեկավարությունը, մտավորականության սերուցքը: Միջոցառումը հեռուստատեսությամբ և ուղիղով հեռարձակվում էր հանրապետությունով մեկ: Գաղափարախոսներն ինչպես միշտ, այս անգամ էլ փորձել էին համատեղել անհամատեղելին. հուշարձանը բացեցին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 47-րդ տարեդարձի օրը՝ դրանով իսկ համազգային աղետը եզրափակելով համաժողովրդական վերածննդով¹⁸:

Հուշահամալիր տանող ճանապարհներն անցնում են ընդարձակ զբոսայգու միջով: Բուն հուշահամալիրը զբաղեցնում է մոտ կես հեկտար տարածք և բաղկացած է երեք հիմնական կառույցներից՝ հուշապատ, հավերժության սրահ/հիշատակի դահլիճ, «Վերածնվող Հայաստան» հուշայուն: Հարյուր տասը մետր երկարությամբ հուշապատի վրա 2002 թ. փորագրվել են Օսմանյան կայսրության այն բնակավայրերի անունները, որտեղ տեղի են ունեցել հայերի ջարդերը (լուս. 2): Երեսուն մետր տրամագծով շրջանաձև դամբարանն ունի դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե պիլոններ, որի առանցքում վառվող անմար կրակը խորհրդանշում է Եղեռնի զոհերի հիշատակի հավերժությունը: Քառասուն մետրանոց հուշապունը կյանքի խորհրդանիշ հանդիսացող ծիլ-ցողունի քարե մարմնավորումն է՝ բաղկացած միմյանց շարունակություն կազմող երկու թերթերից և խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը (լուս. 3): Գտնվելով բարձունքի վրա և առանձնանալով քաղաքային միջավայրից՝ հուշահամալիրը միևնույն ժամանակ ներդաշնակության մեջ է շրջակա միջավայրի, մասնավորապես պարզորոշ երևացող Արարատ

17 «Ծիծեռնակաբերդ. Հուշակոթողի մասին միֆերն ու իրական պատմությունները», <https://web.archive.org/web/20151026130642/http://newmag.am/2015/genocide-monument/> (15 ապրիլի 2015 թ.), դիտվել է 04.01.2019: Հուշահամալիրի նախագծման, շինարարության ընթացքի մանրամասն պատմությունը տե՛ս Սաշուր Քալաշյան, Ինչպես ստեղծվեց հուշահամալիրը, *Ճարտարապետություն, շինարարություն*, 4-5 (2015), 14-21 և «Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը. 40 տարի անց վերհիշում են շինարարները. Զրույցը տեղի է ունեցել 2005 թ. ապրիլին Եղեռնի հուշահամալիրի մոտ», *Ճարտարապետություն, շինարարություն*, 4-5 (2015), 22-23:

18 Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 33-36: Առկա է մեկ այլ վկայություն. «Եղեռնի հուշահամալիրի բացման օրը՝ 1967 թ. նոյեմբերի 29-ին, «Երբիմշին» տրեստի վարպետների անունից ելույթ պետք է ունենար Վրեժ Արքահամյանը: Երբ կարդացին նրա անունը, այն անսպասելի ավելոծում առաջացրեց հավաքվածների մեջ. 60-70 հազարանոց բազմությունը, բռունցքները բարձրացրած, սկսեց վանկարկել. – Վր՛ժ-րե՛ժ, վր՛-րե՛ժ, վր՛-րե՛ժ...»: Տե՛ս «Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը», 24:



Լուս. 2. Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիրի հուշապատը, փորագրված որոշ բնակավայրերի (տարածաշրջանների) անվանումների (Խնուս, Դեբջան, Բայազետ, Սասուն, Բիթլիս, Մուշ) ներքևում ծաղիկներ են դրված: Երևան, 25 ապրիլի 2019 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 3. Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիրը. հուշապատ, հուշարահ, վերածննդի կոթող: Երևան, 11 ապրիլի 2012 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

լեռան պատկերի հետ: Փաստորեն հայ ինքնության երկու կարևորագույն՝ բնության կերտած և ձեռակերտ տարրեր ի մի են բերված մեկ վայրում: Այս շարքում թերևս պետք է տեղադրել նաև հուշարձանի բարձունքից բացվող երևանյան համայնապատկերը՝ խորհրդանիշը ցեղասպանության արհավիրքները վերապրած ու վեր հասնած հայության: Այցելուների վրա խորհրդային մոդեռնիզմի ոճով կառուցված այս հուշարձանի ազդեցությունը պայմանավորված է նախ՝ նրա զուսպ, դեկորատիվ հավելումներից զերծ ծավալատարածական կերպարով, ապա՝ նրանում մշտապես հնչող հոգևոր երաժշտության թախծոտ մեղեդիներով: Այդ առումով այն ճարտարապետության և երաժշտության համադրության եզակի նմուշներից է համաշխարհային ճարտարապետության մեջ, որը ցույց է տալիս քարարվեստի անսահմանափակ հնարավորությունները՝ հակիրճ, խիստ ու ազդու ձևերով կերտելու կատարյալ ստեղծագործություն¹⁹: 1995 թ. հուշահամալիրի տարածքում կառուցվում է թանգարան: Այն 2015 թ. ընդարձակվում է, բայց և այնպես ծավալատարածական առումով որևէ ազդեցություն չունի հուշահամալիրի վրա:

Պետք է սկստել, որ 1960-ական թվականների առաջին կեսից Խորհրդային Միությունում սկսեցին կառուցվել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ հուշարձանային համալիրներ, ինչպես օրինակ՝ Ստալինգրադյան ճակատամարտի հերոսներին նվիրված հուշահամալիրը Վոլգոգրադում (1959-67), Անհայտ զինվորի հուշարձանը Մոսկվայի Կարմիր հրապարակում (1966-67) և այլուր: Մեր կարծիքով Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանային համալիրը (1965-67), նաև Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրը (1968, ամբողջացումը՝ 1978) այսպես թե այնպես տեղավորվում են հուշային՝ մեմորիալ, հենց այդ տարիներին սկսված կառուցումների շարքում²⁰:

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումը հայ եկեղեցու կողմից

1964 թ. օգոստոսի 17-ին հրապարակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակը «Ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ», որով հրահանգվում է առաջիկա 1965 թվականը հռչակել եկեղեցու և համայն հայ ժողովրդի համար «ազգային սուգի և աղօթքի տարի»: Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ապրիլի 24-ին պետք է տեղի ունենան կրոնական հատուկ արարողություններ և հոգեհանգստյան պաշտոններ, բոլոր գաղութներում կազմակերպվեն համազգային հուշի և հարգանքի հանդի-

19 Լևոն Լաճիկյան, *Ճարտարապետի կյանքի գործը*, 24 հունիսի 2014 թ., <https://www.civilnet.am/news/2014/06/24/%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE-%D5%A8/233151>, դիտվել է 04.01.2019: Հուշահամալիրի արվեստագիտական վերլուծությունը հանգամանորեն ներկայացված է հետևյալ աշխատության մեջ. Карен Бальян, *Мемориал Егерн* (Екатеринбург: Изд-во Tatlin, 2015) (серия: Архитектура советского модернизма: Шедевр).

20 Տե՛ս Հարություն Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը: Հարություն 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, «Գիտություն», 71): Հմմտ. Наталья Конрадова, Анна Рылева, «Герои и жертвы: Мемориалы Великой Отечественной», *Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре*, 40-41 (2004), 138, 139.

սավոր հավաքություններ, դասախոսություններ, տարվա ընթացքում հրապարակվեն ուսումնասիրություններ, գրական-գեղարվեստական գործեր և այլն²¹:

1965 թ. ապրիլի 24-ին Մայր աթոռում Եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ արտասահմանյան երկրներից ժամանած հազարավոր ուխտավորների ներկայությամբ տեղի են ունենում հանդիսություններ: Վազգեն Ա-ն պատարագ է մատուցում, կատարվում է հոգեհանգիստ՝ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում տեղի է ունենում Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկերի օրհնություն, որի կառուցումը պետք է ավարտվեր 1965 թ. հոկտեմբերին²²: Արարողության ավարտին ճառով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը: Իր խոսքում նա մասնավորապես նկատում է. «Իզուր չի անցել մեր նահատակների թափված արյունը: Նրանք *մեռան*, որ մենք *սպրենք* և *սպրեցնենք* նրանց *անունն* ու *գործը*, *երազն* ու *պատգամը*, մեր և գալոց հայ սերունդների սրտերում: Փա՛ռք իր նահատակությունը հաղթության վերածող մեր շինարար, մեր արդար ու մեր խաղաղասեր ժողովրդին»²³: Ապրիլի 25-ին Մայր տաճարում հանդիսավոր պատարագ է մատուցվում, ապա վեհարանի հանդիսասրահում գումարվում է հուշ-ցերեկույթ՝ նվիրված ապրիլյան եղեռնի հիսունամյակին²⁴: 1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն կաթողիկոսը ողջ հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ Մայր տաճարի հյուսիսային կողմում բացում է Եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակն անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված է. «Խաչքար Ադոթի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի²⁵ երկրորդ երեսի վրա փորագրված են Շատախի, Վանի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եղեսիայի, Ջեյթունի, Սասունի և Սարդարապատի անունները²⁶, այսինքն՝ այն վայրերի, որտեղ տեղ են գտել ինքնապաշտպանական մարտեր, իսկ Սարդարապատի ճակատամարտում թուրքական բանակը պարտվել էր ու նահանջել (լուս. 4, 5):

21 Մանրամասն տե՛ս «Ամենայն Հայոց հայրապետի կոնդակը ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի*, Ը-Թ (1964), 3-5: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 60-67:

22 Մանրամասն տե՛ս «Հանդիսություններ Մայր Աթոռում ապրիլյան եղեռնի հիսունամյակի առթիվ», *Էջմիածին, 1915-1965*, Ե-Ձ-Է (1965), 106-110:

23 Նույն տեղում, էջ 110:

24 Նույն տեղում, էջ 110-113:

25 1965 թ. նոյեմբերի 18-ին հուշարձան-խաչքարի ներքո թաղման կարգով ամփոփվում է Դեր-Չորից բերված եղեռնի նահատակների աճյուններով ապակեպատ արկղ: Մանրամասն տե՛ս «Մեծ եղեռնի նահատակների աճյուններ Դեր-Չորից», *Էջմիածին. 1915-1965*, ԺԱ-ԺԲ (1965), 80-81:

26 Տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 63, 66:



Լուս. 4. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների» (տեսքը ճակատից): Էջմիածին, 4 ապրիլի 2009 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 5. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների» (տեսքը հետևի կողմից, դրվագ արձանագրությամբ): Էջմիածին, 1 ապրիլի 2013 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

Մեծ եղեռնի հիշատակի օրվա նշումների առանձնահատկությունները Սփյուռքում

Ապրիլի 24-ի լայնորեն նշվող Սփյուռքի հայկական համայնքներում պայմանավորված է մեկ կարևորագույն հանգամանքով. *դասական Սփյուռքը ցեղասպանության ծնունդ է*: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությունը հանգեցրեց արևմտահայության ճնշող մեծամասնության ֆիզիկական ոչնչացման: Իսպառ վերացան հազարավոր գերդաստաններ ու տոհմեր: Վերապրողները շատ չէին, բայց կային: Եվ ձևավորված հայկական Սփյուռքում վերապրողներից շատերը, նոր ընտանիքներ կազմելով, փորձեցին յուրովի «վերակենդանացնել» օսմանյան յաթաղանին զոհ գնացած իրենց ծնողներին, քույրերին ու եղբայրներին՝ զավակներին տալով զոհված հարազատների անունները: Վերապրողների ստեղծած բազմանդամ ընտանիքներն ինչ-որ չափով մոռացության կորստից փրկեցին հազարավոր տոհմանուններ: Վերապրողներն իրենց նորաստեղծ ընտանիքներով փաստորեն իրականացրին յուրատեսակ *ազգածություն*, վերստեղծեցին արևմտահայոց նոր տիեզերքը: Ու այդ կերպ նրանք կարծես թե իրենց վրա վերցրին արարչի, դեմիուրգի գործառույթներ: Այս մոտեցումը՝ ցեղասպանությունը՝ որպես տիեզերածություն և ազգածություն հայկական Սփյուռքի համար, գիտական շրջանառության մեջ է դրել Արմեն Պետրոսյանը²⁷:

1965 թ. ապրիլի 24-25-ին Սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներում հանդիսավորությամբ նշվում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը: Կարելի է ասել, որ որակական անցում է կատարվում սգահանդեսների մշակույթից դեպի հիշատակման այլ մակարդակ:

Հատկապես տպավորիչ էր հիշատակի օրվա նշումը Մերձավոր Արևելքի ամենահայաշատ գաղութում՝ Լիբանանում: Բեյրութում ապրիլի 24-ին՝ շաբաթ օրը, յուրաքանչյուր համայնք իր եկեղեցում նշում է նահատակների հիշատակը հոգևոր արարողություններով՝ պատարագով ու հոգեհանգստյան պաշտոններով: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ին, քաղաքի հայությունը՝ շուրջ 85.000 հոգի (նրանց թվում և Հայաստանի Առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը), հավաքվում է քաղաքի ամենամեծ հավաքավայրում՝ մարզական ավանում (լուս. 6): Համազգային հանդիսությունը ղեկավարում են Լիբանանի հայ-առաքելական, հայ-կաթոլիկ և հայ-բողոքական եկեղեցիների առաջնորդները՝ հայկական երեք կուսակցությունների, երկրի պետական գործիչների մասնակցությամբ (լուս. 7, 8): Այդ օրերի մամուլում, նաև հնչող ելույթներում, նահատակների հիշատակը հարգելուց գառ, հատկապես կարևորվում է հայության միասնականության խնդիրը: Այսպես, ապրիլի 25-ի իր խոսքում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ն մասնավորապես նշում է. «Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակի համազգային այս ոգեկոչումը թող ծաղկեցնէ հայ ժողովուրդին կեանքը, թող զօրացնէ ու ջերմացնէ անոր հոգին և թող սկզբնաւորութիւն մը ըլլայ հայ ժողովուրդի ազգային ձգտումներուն և պատմական իրաւունքներուն հետապնդման և իրա-

27 Մանրամասն տե՛ս Արմեն Պետրոսյան, «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածություն», *Հայացք Երևանից. Հայագիտական: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն* (Երեւան), 4 (1997), 50, 51:

ՈԳԵԿՈԶՈՒՄԻՆ ԻՄԱՍՏԸ

Այսօր, խորհուրդներով ու խոհերով
գերազանցապես յուզուած՝ ամբողջ հայ
ժողովուրդը ոտքի է, խոնարհելու իր գը-
լուխը մէկ միլիոնէն աւելի՝ Նահատակնե-
րու յիշատակին առջև:

Այս օր, Նահ Թառութիւնն է հայ ժո-
ղովուրդին, որ սրբաբեկ Նահատակներու
անիւններէն յառնեցաւ, Հայ ողբի անժա-
նութիւնը իրարու աւետելու հա-
մար:

Ենթան տարիներ առաջ Թուրքիոյ
կողմէ կատարուած անժարկիւային սոճիբին
և այսօրուան միլե տարիները հայութեան
համար անցած ու մտացուած օրեր չեղան:
Նոյն ճանապարհին վրայ հ. սակ նեղեց
ներկայ հայութիւնը, անհուն ժառանգու-
թի մանտօրեայ ապրումներով:

Անոր հայրենի հողերը օտնակոխ մը
նացին Թուրքին, որ անպատեհի սոճիբը
գործեց ու Նահատակները անթաղ են մին-
չև այսօր:

Անոր իրաւունքները չվերականգնե-
ցան ցարգ: Սակայն այսօր, Նահատակնե-
րու ժառանգորդ չորս ու կէս միլիոն հա-
յեր այդ իրաւունքներուն տէրը կը հա-
ղթանան և միակամ ուխտակներն են
հայկական դատը հետապնդելու:

Հայկական Դատը պատմական հոլո-
գոթով և միջազգային առեաններով լուծ-
ւած, բայց թրջական արիւնստ օտարով
սովոր կը մնայ, Հայոց հայրենի հողերը
պէտք է օգտագործուին, ու պիտի ազա-
տագործուին միջազգային խնդրին վրայ ծան-
րացած անարդարութիւնը վերադնելու և
Սերձուար Արևելքին խաղաղութիւն պար-
զեկելու համար:

Պատմական այս ճշմարտութիւնը ըմ-
բռնելի եղաւ շատ յաճախ միջազգային
կենտրոն վարող ուժերուն, բայց անըմ-
բռնելի մնաց միայն Թուրքին: Սակայն

պատմութիւնը քաղաքական իր ճանապար-
հը ունի, ու մենք կը կարծենք թէ
Թուրքիան ուշ կամ կանխա քաղաքական
իրադարձութիւններու հարկադրանքին
տակ՝ օր մը պիտի ըմբռնէ իր օխակներն
ու պիտի հարկադրուի ճանչնալ հայ ժո-
ղովուրդի իրաւունքները:


Արգ, այսօր, երբ ամբողջական հայ
ժողովուրդը, հին ու նոր սերունդներով,
ցլուխը կը խոնարհէ իր մէկ միլիոն Նա-
հատակներու անշիրիմ անիւններուն առ-
ջև, ու ինքզինքը իրաւատէրը կը հաշ-
կէ բունգորուուած հայրենի հողերուն,
այդ ԿԱՄԻՆ համապատասխան արժանա-
ւորութեամբ, լրջութեամբ և գիտակցու-
թեամբ պիտի կատարէ այն յուշանշակ-
օրը, որուն նմանը արձանագրուած չէ հա-
մայխարհային պատմութեան էջերուն
մէջ:

Խօսքս ուղղելով հայ հայրերուն և
մայրերուն, հայ պատանիներուն և պար-
մանուհիներուն, պիտի օգտէ որ ըլլօրը
իրենց կեցուածքով, ասուած քայլերով
ու խօսքերով ծանր վեհութիւնը զգան մէկ
միլիոն Նահատակներու սուգին, ու իրենց
աչքերը յառնեն այն ՎԱՐՊԱՍԵՎՈՎ ԱՐԵՍ-
ՆՅԱՅԻՆ, որ պիտի ծագի օր մը, աւելի փա-
ռահողորէն, փարատելով այն սուգը, որ
կ'ապրինք այսօր ցեղովին:

Ազգային վերածնունդի այդ գեղա-
զանց նպատակը նայեցան և աւելի լրջու-
թիւն և արժանաւար կեցուածք կը պա-
հանջէ մեզմէ, ու մենք ըլլօրս սրբաբեկ
մեր խոհուն և վճռական նկարագրէրը յայտ-
նարբելլ Ապրիլիան Եղեռնի այս Երես-
նամակի օգեկոչումին:

Ոգի, վճռական կամք և ծանրախոս
հսկիւն միեմուլուած պատկերը պիտի
ըլլան մեր քաղաքական գործելակերպին:
Կ. ՍԱՍՈՒՆԻ

Լուս. 6. Կարո Սասունու հեղինակած «Ոգեկոչումին իմաստը» հոդվածը: «Ազդակ» օրաթերթ (Պեկրոյթ), 24 ապրիլի 1965 թ., թիվ 42 (10087):



Լուս. 7. «Ազդակ» օրաթերթի 1965 թ. ապրիլի 26-ի համարի (թիվ 43/10088) առաջին էջը (դրվագ):

գործման ճամբուն վրայ: Պետք է հետապնդել մեր արդար և սուրբ դատը միասնական ճիգերով և ներդաշնակ գործակցությամբ: Միութեան մեջն է որ մեր ոյժերը կը բազմապատկուին և մեր ձայնը կը դառնայ զօրատր և լսելի աշխարհին համար: Եկած է ահա ժամանակը, որ մոռանք մեր ներքին դաւանական կամ գաղափարական վեճերը և ժամանակատր տարակարծությունները, որոնք խորթ են և վնասակար մեր ազգային գերագույն շահերուն, և աշխատինք մնայուն ու յարաճուն կեանքի և գործի վերածել համազգային մեր այս գործակցութիւնը: ...*Հայ ժողովուրդ, գիւրջիդ միշտ և մի մոռնար, որ ազգեր կան, որոնք կը ծնին մեռնելու համար, և ազգեր ալ կան, որոնք կը մեռնին ծնելու համար. Հայ ազգը անոնցմէ է, որ գիւրէ մեռնիլ ծնելու համար. մեր նահապարակները մեռան որպէս զի մենք ծնինք և Հայրութիւնը ապրի յաւիտեան լընդգծումն իմն է – Հ.Մ.]: Փառք մեր նահատակներուն: Փառք մեր վերածնած Հայ ժողովրդին»²⁸: Խորեն Ա-ն խոսում էր ոչ միայն լիբանանահայության, այլև բովանդակ հայության միասնակա- նության անհրաժեշտության մասին: Դրա վկայություններից էր այն, որ ապրիլի 24-25- ին հիշատակի արարողություններ են տեղի ունենում աշխարհի բազմաթիվ հայաշատ երկրներում/քաղաքներում, այդ թվում՝ Հալեպում, Դամասկոսում, Հոմսում, Լաթաքիա- յում, Քուվեյթում, Կահիրեում, Նիկոսիայում, Նյու Յորքում, Բոստոնում, Լոնդոնում, Փարիզում, Մարսելում, Երևանում, Մոսկվայում, Հունաստանում և Հարավային Ամե- րիկայում: Ամենուրեք հայությունն իր բողոքի ձայնն է բարձրացնում թուրքական իշխա- նությունների դեմ, որոնք չէին ընդունում հայերի զանգվածային կոտորածների փաստը և բնավ չէին մտածում ներողության և կամ արդարության վերականգնման մասին²⁹:*

28 «Վեհափառի խօսքը մարգարանի յուշատօնին», *Ազդակ*, 27 ապրիլի 1965 թ. (թիվ 44/10089):

29 Բնութագրական է, որ «Ազդակ»-ի՝ 1965 թ. ապրիլի 24-ի համարում տպագրվեց Կոնրադ Ադե- նաուերի գրավոր հայտարարությունը, որում նա վերստին ընդունում էր Գերմանիայի մեղակցություն- նը Հոլոքոստին: Հոդվածը վերնագրված էր՝ «Թ-ուրքիան Ատենաուեր մը չունեցա»:

ԽՕՍԲ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Երէկ, Կիրակի 25 Ապրիլին, Պէյրուքի Մարզական Աւանին մէջ, հասարեայ հարգապահութեամբ և ամենալուրջ ու երկիւղած մթնոլորտի մէջ հասարակեցաւ համազգային միասնական ոգեկոչումը Ապրիլեան Եղեռնի Նահատակներու փառապանծ յիշատակին:

Տասնեակ—հազարներով Հայ ժողովուրդը իր գիտակից և հոգեհաղորդ մասնակցութեամբ անգամ մը եւս փաստեց իր քաղաքակիրթ և հոգեկան բարձր արժանիքներու տէր ազգ մը ըլլալու պատուաբեր վարկն ու համբաւը յաչո Լիբանանեան Հայրենիքին Պետական Իշխանութեանց, Լիբանանցի ազնուական ժողովուրդին և տար մամուլի ներկայացուցիչներուն:

Մենք հոգեւին հրճուեցանք երբ երէկ, յետ միջօրէին, մեզի այցելող պետական բարձրաստիճան անձնակազմի անդամները, մասնաւորապէս Վահագնաւ Լախաբաչիին՝ Պր. Շարլ Հելուի անձնական ներկայացուցիչ Տիար Ժորժ Հայմարի և Ն. Վ. Վարչապետ Հատ Հիւսէյն Ուէյնի, որոնք յայտնելէ ետք իրենց ցաւակցութիւնները Հայ ժողովուրդին Եղեռնի Յիշատակի տարիքով, ջերմ գնահատանքով արտայայտուեցան և վկայեցին մեր ժողովուրդի քաղաքացիական խոր գիտակցութեան և օրինակելի կեցուածքին մօտին:

Մենք, և մեզի զօրժակից կեդրոնական Գործադիր Յանձնախումբը, խորապէս կը գնահատենք Մեր օրինակելի ժողովուրդի և մասնաւորապէս իր երիտասարդական հաղթակերպութիւններու զեղեցիկ օգին և կը յայտնենք որ իր պատմութեան արժանի բարձրութեան վրայ մնայ ու աւաւել եւս բարձրանայ Հայ Ազգը ի Սփիւս աշխարհի:

Թող միշտ ամուր և անխախտ մնայ մեր ժողովուրդին մէջ միասնականութեան այս նուիրական օգին:

Թող Նահատակներուն խնկելի յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան:

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ԻԳՆԱՏԻՈՍ—ՊԵՏՐՈՍ ԺՁ. ՊԱԹԱՆԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԿ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ
ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐՁ. ԱՐԵՒԵԼԻՔԻ
ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

26 Ապրիլ 1965

ՅԻՄՆԱՄԵԱԿԸ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Լուս. 8. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի, Հայոց Կաթողիկէ պատրիարքի, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցու նախագահի ստորագրությամբ լույս տեսած «Խօսք գնահատանքի» հրատարակումը: «Ազդակ» օրաթերթ (Պէյրուք), 27 ապրիլի 1965 թ., թիվ 44 (10089):



Լուս. 9. Դրվագ «Ազդակ» օրաթերթից: 24 ապրիլի 1965 թ., թիվ 42 (10087):

«Ի՞նչն էր հիշվում» և «ինչպե՞ս էր հիշվում» շարքում բնութագրական էր ոչ միայն կորուստների շեշտադրումը: Այսպես, «Ազդակի» ապրիլի 24-ի համարում երկու հարակից էջերի պարագծով մեկ «Յարգանք մեր անմահ նահատակներուն» վերնագրի ներքո տեղադրվում են 50 տարի առաջ արքայազն և նահատակված 61 հայ մտավորականների սկարները: Մինչդեռ էջերի միջնամասում Հայոց ցեղասպանության հինգ գլխավոր պատասխանատուների սկարներն էին՝ «Հայ ժողովրդի ոճրապարտ դահիճները» վերտառությամբ, իսկ կողքը՝ «Հայ ժողովուրդի վրիժառու բազուկները» վերնագրի ներքո՝ վեց հայրենասերների լուսանկարները, որոնք իրականացրին դահիճների սկատմամբ կայացրած մահվան դատավճիռները (լուս. 9): Այսինքն՝ առաջ է քաշվում այն միտքը, որ հայոց սկատմամբ իրականացրած ոճրագործությունների պատասխանատուներն ի վերջո ստանում են իրենց արժանի պատիժը:

Արդար դատաստանի, արդար հատուցման անհրաժեշտության և անխուսափելիության գաղափարը թերևս այն հիմնական գործոններից էր, որ տարիներ անց ծնունդ է տալիս «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին»: 1975 թ. հունվարին տեղի է ունենում ՀԱՀԳԲ-ի ծնունդն ազդարարող վրիժառուական զինված պայքարի առաջին գործողությունը: Հետագա տարիներին (մինչև 1984 թ.) զինված պայքարի բիրտ ձևերի հիմնական թիրախներն էին տարբեր երկրների թուրքական ներկայացուցչությունների պատասխանատու աշխատակիցները, թուրքական օդանավային ընկերությունների գրասենյակները, ինչպես նաև այն արտասահմանյան կազմակերպությո-

յունները, որոնք ֆինանսական կամ ռազմական օժանդակություն էին տրամադրում թուրքական պետությանը: Պայքարի այս ուղղության հիմնական նպատակն էր համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության փաստին, ստիպել Թուրքիային ընդունել այն, բարձրացնել հայրենագրկված արևմտահայության և Արևմտահայաստանի ճակատագրի հարցը³⁰:

Աշխարհի բազմաթիվ երկրներում ապրիլի 24-ը նշվում է նաև քայլաբարձվող դեպի Թուրքիայի դեսպանություն կամ հյուպատոսարան և դրա դիմաց անցկացվող բողոքի ցույցով, երբեմն և թուրքական դրոշ այրելով:

Ապրիլի 24-ի նշումը մեծ հանդիսավորությամբ ու քաղաքական ակտիվությամբ է իրականացվում ԱՄՆ-ի հայաշատ համայնքներում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայոց ցեղասպանության հիշողությունը նշանակալի դեր է խաղում ԱՄՆ-ի հայ համայնքի քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքում³¹: Հայոց ցեղասպանության իրողության ճանաչմանն ուղղված քայլերն ամերիկահայության մեջ գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների լոբբիստական գործունեության հիմնական առանցքներից են, եթե ոչ ամենահիմնականը: Դրա ամենավաղ ցուցիչներից են ԱՄՆ-ի նախագահների ամենամյա ապրիլքսանչորսյան ուղերձները երկրի հայ քաղաքացիներին, որոնց մեջ, սակայն, չի օգտագործվում «ցեղասպանություն» բառը³²: Համայնքի դերի գիտակցումը շատ հաճախ պայմանավորված է լինում նրանով, թե իրենց գործունեության արդյունքում քաղաքային, նահանգային կամ դաշնային մակարդակի այս կամ այն քաղաքական գործիչը կամ կազմակերպություններն ինչպես արտահայտվեցին կամ ինչ քայլեր ձեռնարկեցին ի պաշտպանություն հայոց պահանջների արդարացիության: ԱՄՆ-ի դատական համակարգերը ժամանակ առ ժամանակ հնարավորություն են ընձեռում Յեղասպանության զոհերի ժառանգներին իրավական հարթություն տեղափոխելու իրենց պահանջները, ինչը նույնպես մեծ արձագանք է զբաղում համայնքի ներսում, ընդհանրապես համայն հայության մեջ: ԱՄՆ-ի տարածքում կան Հայոց ցեղասպանությանը նվիրված շուրջ երկու տասնյակ փոքր ու մեծ հուշարձաններ³³, դրանց մի մասի մոտ ամեն տարվա ապրիլին կայանում են հիշատակի միջոցառումներ: ԱՄՆ-ում է գործում Ցեղասպանության դասավանդման նախագիծը (Genocide Education Project), որը թերևս եզակի է իր բնույթով: Տեղի համալսարաններում կան հայկական ամբիոններ, որոնց գործունեությունը մի որոշակի մասով ուղղված է Հայոց ցեղասպանության հետազոտմանը:

30 Տե՛ս Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը*, 276-277:

31 Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը», *Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում. գիտաժողովի նյութեր*, խմբ.՝ Արամ Սիմոնյան, Պոլ Հայտոսյան, Անդրանիկ Տազեյան, Յուրի Ավետիսյան (Երևան, ԵՊՀ հրատ., 2013), 42-54:

32 Հարցի շուրջ տե՛ս, օրինակ՝ Մուրեն Չոլյան, *ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խոստանալիղ դիսկուրսի իմաստաբանական վերլուծություն)* (Երևան, «Լիմուշ» հրատ., 2015):

33 Դրանց քանակով ԱՄՆ-ը զիջում է լոկ Հայաստանի Հանրապետությանը, Ֆրանսիային ու Ռուսաստանի Դաշնությանը: Հմմտ. *Ցալի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ* (Երևան, 2010):

Այստեղ պարբերաբար կազմակերպվում են գիտաժողովներ Հայկական հարցի տարբեր եզրերի շուրջ: Մի խոսքով, ԱՄՆ-ի հայ համայնքի *հայկական* ինքնության ձևավորման ու պահպանման մեջ Հայոց ցեղասպանության հիշողությունն ունի խիստ նշանակալի դերակատարություն: Մեր համոզմամբ ԱՄՆ-ի՝ սփյուռքահայության մեջ առկա Հայոց ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը բավականին ակտիվ և արդեն ոչ միայն «ազգապահպան», այլ նաև «*ազգասարեղծ*» գործոնի դերակատարություն ունի:

ԱՄՆ-ում ապրիլի 24-ի հիշատակի արարողություններն անց են կացվում ինչպես զանգվածային քայլարշավներով, այնպես էլ համայնքների ու հայազգի անհատ բարերարների միջոցներով կառուցված հուշարձանների մերձակայքում: Սակայն հուշարձանները մեր գնահատմամբ առավելապես ուղղված են համայնքի անդամներին, և դրանց քարոզչական արժեքը երկրի քաղաքացիների համար համեմատաբար ցածր է: Հուշարձանի միջոցով Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է կամ հուշարձանի վրա առկա գրությամբ, կամ հայազգի մարդկանց հետ անձնական շփումների և կամ գրքերից, մամուլից ու համացանցից տեղեկատվությունը քաղելու ճանապարհով: Հուշարձանի համեմատ զգալիորեն մեծ է թանգարանի քարոզչական արժեքը³⁴:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա հետագա նշումները Խորհրդային Հայաստանում, հիշատակի օրվա ամրագրումը օրենքով

Եղեռնի զոհերի 60-ամյակի առթիվ Հայաստանի կուսակցական ղեկավարության ներկայացմամբ և Մոսկվայից ստացված թույլտվությամբ հանրապետության կուսակցական-պետական ղեկավարությունը 1975 թ. ապրիլի 24-ին՝ առավոտյան ժամը 10-ին, ծաղկեպսակներ դրեց Ցեղասպանության զոհերի հուշարձանի անմար կրակին, խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը հանդես եկավ հեռուստատեսությամբ, իսկ ժամը 19-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով Ցեղասպանության զոհերի հիշատակը հարգվեց մեկ րոպե լռությամբ³⁵:

1985 թ. հունվարին Կ. Դեմիրճյանը դիմում է ԽՄԿԿ կենտկոմ՝ ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով որպես «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով: Սակայն Քաղբյուրոն մերժում է այդ խնդրանքը: 1987 թ. նմանատիպ երկրորդ խնդրանքն էլ է մերժվում: Նույն հարցի շուրջ 1988 թ. սեպտեմբերին դիմում է նաև ՀԿԿ կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը: Այս անգամ պատասխանը դրական էր, քանի որ Հայաստանում թափ էր հավաքում Ղարաբաղյան շարժումը, և անկում էր ապրում Մոսկվայի դերակատարությունը³⁶: 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խոր-

34 Հարցի մանրամասն քննարկումը տե՛ս Մարության, «Թանգարան և հուշարձան»:

35 Տե՛ս «Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ», *ՊԲՀ* 2 (1975), 79-80: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 126:

36 Մանրամասն տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 128-133:

հուրդն ընդունում է օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» և ապրիլի 24-ը հայտարարում «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր» (1989 թ.-ից այն ոչ աշխատանքային օր է)³⁷: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացվում է առաջարկություն հայերի՝ 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին, որը մնում է անպատասխան:

Ղարաբաղյան շարժումը և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա բովանդակային փոփոխությունը

1980-ական թվականների կեսերին ԽՄԿԿ ղեկավարության կողմից հռչակված վերափոխումների, դեմոկրատացման և հրապարակայնության քաղաքականությունը Հայաստանում մի քանի տարի անց դրսևորվեց Ղարաբաղյան շարժմամբ, որն ավելի ճիշտ կլինի անվանել «Հայկական հեղափոխություն», քանի որ այն իր արդյունքներով հանգեցրեց հեղափոխական բնույթի վերափոխումների հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում³⁸:

Շարժման սկիզբը (1988 թ. փետրվարի 20) պայմանավորված էր Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի գերազանցապես հայաբնակ ինքնավար մարզի բնակչության պահանջով մարզը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին վերամիավորելու խնդրի շուրջ: Որպես հիմնական փաստարկ՝ առաջ էր քաշվում Ստալինի ճնշմամբ 1921 թ. պատմականորեն անարդարացի որոշման ընդունումը Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան տարածաշրջանային միավորի կողմից: 1988 թ. փետրվարին Երևանում սկսվեցին զանգվածային հավաքներ, որոնք, ժամանակ անց ընդգրկելով հայաստանյան հասարակության ամենալայն շերտերը, հայտնի դարձան «Ղարաբաղյան շարժում» ձևակերպմամբ (1988 թ. փետրվար – 1990 թ. օգոստոս):

Ի պատասխան առաջ քաշված իրավական պահանջների՝ Ադրբեջանի մայրաքաղաքից 25-30 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988 թ. փետրվարի 27-29-ին խորհրդային զորամիավորումների առկայությամբ տեղի ունեցան զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում դաժանորեն սպանվեցին հայ ազգության 26 քաղաքացի (պաշտոնական տվյալներով): Հայերին ծեծում էին, խոշտանգում, բռնաբարում, դուրս նետում պատուհաններից, սպանում ամրանաձողերով ու դանակներով, կտրատում կացիների հարվածներով, գլխատում, այրում խարույկներում... Այս գործողությունները, սակայն, ՏԱՍՄ-ի պաշտոնական հաղորդագրության մեջ ներկայացվում էին այսպես. «...մի խումբ խուլիգանական տարրեր անկարգություններ են հրահրել: Տեղ են գտել սանձարձակության ու բռնության դեպքեր»³⁹: Սումգայիթում հայերի կոտորածը ԽՍՀՄ դատախազության կողմից ևս որակվեց

37 *Գրական թերթ* (Երևան), 28 ապրիլի 1989 թ. (թիվ 18):

38 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները», *Համբարձում Գալստյան, Չուղարկված նամակներ* (Երևան, 2013), էջ 9-17: Տե՛ս նաև՝ Մարության, *Հայ ինքնության պարկերազրությունը*, 313:

39 «Сообщение», *Правда*, 1 марта 1988 (61/25413). «Հաղորդագրություն», *Գրական թերթ*, 4 մարտի 1988 թ. (10/2378):

որպես «խուլիգանական տարրերի գործողություններ», «սպանություններ խուլիգանական բնույթի մղումներից»: Մինչդեռ, ինչի մասին վկայում են բազմաթիվ փաստեր, հայերի ջարդերը կազմակերպված էին նախօրոք և իրականացվում էին որոշակի ծրագրի համաձայն: Դրանց նպատակն էր շրջափակել դարաբաղյան հնարավոր լուծումը, ահաբեկել հայերին ու մասնավորապես միութենական իշխանություններին՝ նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով և հարկադրել նրանց հրաժարվել Ղարաբաղի հարցի արդարացի լուծումից⁴⁰:

Մուսֆայիթյան դեպքերը հայության մեջ վերստին արթնացրին նաև 1915 թ. ցեղասպանության մասին «նիբիոլ» հիշողությունը: Այդ ժամանակվանից Շարժման մեջ ցեղասպանության թեման աստիճանաբար ձեռք բերեց գերակայող ուղղություն: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, թե ինչպես 1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում իրականացված ցեղասպանության և 1988-1990 թթ. Ադրբեջանում ցեղասպանություն որակված իրադարձությունների՝ որպես ցեղասպանություն ճանաչմանը, այն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտմանը, հնարավոր մեղավորների մատնանշմանը, նրանց նկատմամբ տարվող դատավարությանը գնահատական տալուն ուղղված պայքարը բերում էր ժողովրդական զանգվածների քաղաքական հասունության աճի, դարերի և տասնամյակների ընթացքում ձևավորված կարծրատիպերի փոփոխման, անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացին, իսկ ապագա ցեղասպանություններից խուսափելու նպատակով գիտակցվում էր հասարակության մեջ արմատական քաղաքական վերափոխումների անհրաժեշտությունը⁴¹: Այս ամենն իր յուրահատուկ դրսևորումն էր ունենում ապրիլքսանչորսյան քայլերթերում տարվող և ցեղասպանության հուշահամալիր բերվող ցուցապատատներում:

Շարժման տարիներին ցեղասպանության հիշողության գործոնը դարձավ այն շարժիչ ուժը, որը հնարավորություն ընձեռեց քայլ առ քայլ փոխելու հին կարծրատիպերը և պատկերացումները, ձևափոխելու հին արժեքների վրա հենված ինքնությունը և աստիճանաբար ձևավորելու նոր ինքնություն, իրականացնելու ժողովրդավարական վերափոխումներ: Այսինքն՝ այն գործոնը (ցեղասպանության հիշողություն), որը երբեմն մեկնաբանվում է իբրև «անցյալի կապանքներից» ազատվելն ու այդպիսով հայության իրական առաջընթացը խոչընդոտող «հետադիմական» միջոց, հայաստանյան իրականության մեջ դարձավ առաջադիմության ամենակարևոր խթանիչը: Այս երևույթի արդյունքներից մեկն էլ այն էր, որ *արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշն իր տեղը զիջեց մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով*: Այլ կերպ ասած, Հայաստանում հաղթահարվեց զոհի բարդույթը, ինչի հետևանքն ու արդյունքը Հայաստանի անկախության հռչակումն էր և Արցախի ազատագրության համար մղվող պայքարի հաջողությունը⁴²:

40 Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, 125:

41 Նույն տեղում, էջ 308:

42 Նույն տեղում, էջ 308-309: Տե՛ս նաև՝ Հարություն Մարության, Ցեղասպանության զոհի բարդույթի հաղթահարումը Ղարաբաղյան շարժման տարիներին, *Վէմ համահայկական հանդես* 1 (2013), 154-164:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա նշումը հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համատեքստում

1968 թ. ապրիլի 24-ին ժողովուրդը դուրս եկավ ոչ թե մայրաքաղաքի կենտրոնական փողոցներ ու հրապարակներ, այլ կազմակերպված շարասյուներով շարժվեց դեպի քաղաքի ծայրամասը, որպեսզի ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնի ցեղասպանության զոհերի հուշարձանին: Այդպիսով, 1965 թ. ապրիլի 24-ի գանգվածային ելույթները հաջորդ տարիներին ձևափոխվեցին ոչ պաշտոնապես թույլատրված սգո երթերի: 1970-ականների կեսերից այդ երթերը փաստորեն գլխավորում էին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները, ովքեր վաղ առավոտյան առաջին ծաղկեպսակն էին դնում հուշարձանին՝ դրանով իսկ (ինչպես նաև Լոռիյան բուպեով) պետական հնչեղություն տալով Մեծ եղեռնի զոհերի հիշատակի սգատոնին: Այս երթերի ժամանակ զգացմունքների գրավոր և պատկերային հրապարակավ դրսևորումների բացակայությունը (ծաղկեպսակներից զատ) մասամբ լրացվում էին սգո երթի առանձին մասնակիցների բանավոր ստեղծագործություններով. մարդիկ կարդում կամ արտասանում էին հայրենասիրական, ինչպես նաև անմիջականորեն ցեղասպանություն թեմային առնչվող բանաստեղծություններ, հատվածներ պոեմներից և այլն:

Մեր համոզմամբ արդեն կես դար շարունակ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր իրականացվող ամենամյա երթերում և հիշատակի ծեսերում ակնառու դրսևորվում է հուշահամալիրի՝ որպես գերեզմանոց ընկալումը⁴³: Նախ՝ նկատենք, որ Ծիծեռնակաբերդի բարձունքին դեռևս 1920-ական թթ., ինչպես և Ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանի կառուցման աշխատանքների ընթացքում, հայտնաբերվել են ուշ բրոնզի դարի գերեզմաններ՝ դամբարաններ: Պաշտոնական մեկնաբանություններում հավերժական կրակով հիշատակի սրահը նույնպես ներկայացվում է որպես դամբարան: Հուշահամալիրի ճարտարապետներից Սաշուր Քալաշյանի ներկայացմամբ հուշահամալիրի առջևի «պատվանդանը [հարթակը - Հ.Մ.] նախագծվում էր որպես տապան 1,5 միլիոն զոհերի համար, որոնք չունեցան գերեզման»: Հետաքրքիր է, որ ՀԿԿ կենտկոմի նախագահությանը դեռևս 1964 թ. հուլիսին ուղղված մի քանի ճանաչված մտավորականների նամակում Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցումն առաջարկվում էր իրականացնել «բնակչության միջոցների հաշվին»: Նկատենք, որ հայոց մեջ գերեզմանոցը ևս ավանդույթի ուժով բարեկարգվում էր համայնքի անդամների հանգանակությունների կամ պարզապես համայնքի (այլ ոչ պետական) բյուջեի հաշվին:

43 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով)», *Հայ ժողովրդական մշակույթ XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի*, խմբ.՝ Դերենիկ Վարդումյան, Սարգիս Հարությունյան, Սուրեն Հոբոյան (Երևան, 2006), 172-180: Арутюн Марутян, «Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа», *Этнографическое обозрение* 3 (2008), 119-128: Նույնի՝ *Հայ ինքնության պարկերագրությունը*, 72-78: Նույնի՝ «Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համատեքստում», *Ճարտարապետություն, շինարարություն* 4 (2009), 8-12: Նույնի՝ «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *ՊՐՀ* 2 (2011), 42-44:

Հայոց եկեղեցական տոնացույցը ենթադրում է, որ ամեն տաղավար տոնին հաջորդում է Մեռելոց, երբ մարդիկ, մասնավորապես ովքեր հենց այդ տարի են կորցրել իրենց հարազատին կամ բարեկամին, այցելում են գերեզմանոց նրա շիրիմին: Սակայն տարվա մեջ կա մեկ ավանդական սգատոն (սեպտեմբերի 14-ին նախորդող կամ հաջորդող կիրակի օրը)՝ Սբխեչ, Սուրբ Խաչ կամ Խաչվերաց, երբ այցելությունը գերեզմանոց ցանկալի (պարտադիր) էր հանգուցյալ ունեցող բոլոր մարդկանց համար: Այդ օրը գերեզմանոցում ավանդաբար կատարվող արարողություններից մեկը քահանայի գերեզմանօրհներքն է: Այս առումով բնութագրական է, որ Եղեռնի զոհերի հուշարձան ևս մարդիկ այցելում են, որպես կանոն, տարին մեկ անգամ որոշակի գրանցված օր (ապրիլի 24-ին), և այն ուղեկցվում է հայոց եկեղեցու հովվապետի յուրատեսակ գերեզմանօրհներքով՝ «Հայր մերի» աղոթասացությամբ հավերժական կրակի մոտ:

Ոչ մեծ բնակավայրերում թաղման թափորը, որպես կանոն, ուղևորվում է գերեզմանոց, որքան էլ այն հեռու լինի, ոտքով: Այդ սովորույթն ինչ-որ չափով, հատկապես ավանդապահ գյուղերում, պահպանվել է նաև մեր օրերում: Նույն կերպ և Եղեռնի զոհերի հուշահամալիրի պարագայում այցելությունն իրականացվում է ոտքով, նման պահանջ է դրվում անգամ արտասահմանյան պատվիրակությունների առջև, ու միայն բացառիկ դեպքերում, երբ այցելուն ֆիզիկապես խիստ դժվարանում է (ինչպես Հոռմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդի դեպքում էր), նա մոտենում է հուշարձանին ավտոմեքենայով: Եկատենք, որ որոշ գյուղերում դեռևս պահպանվում է մեքենայով հանգստարան-գերեզմանոցի տարածք չմտնելու սովորույթը:

Գերեզմանոցում մարդիկ ծաղիկներ են դնում հանգուցյալի շիրիմին, իսկ Եղեռնի զոհերի հուշահամալիրում՝ հավերժական կրակի շուրջը (լուս. 10) կամ ծաղկեպսակներ՝ հուշարձանի՝ դեպի կենտրոն խոնարհված բազալտե պիլոններին: Ընդհանրապես շիրիմին թե հավերժական կրակի շուրջը ծաղիկ դնելը կառուցվածքային առումով թերևս համազոր է հանգուցյալի հետ խորհրդանշական կապի մեջ մտնելուն, լայն առումով՝ անցյալն ու անցավորներին հիշելուն, չմոռանալուն, ինչը երբեմն դրսևորվում է նաև այլ կերպ՝ տապանաքարին ձեռքով հպվելով կամ էլ այն համբուրելով: Հայերի մեջ ընդունված է, որ հուղարկավորության ընթացքում գերեզմանոցում՝ գերեզմանի փոսի մոտ, դնում են հանգուցյալի նկարը, որն արարողության ավարտին հետ են տանում: 1988 թ. ապրիլի 24-ին Եղեռնի զոհերի հավերժական կրակի մոտ շրջան կազմած պահվեցին, ապա ծաղիկների խրճերի մեջ դրվեցին ոչ միայն Մեծ եղեռնի զոհ հայ մի քանի մտավորականների, այլև Սումգայիթի զոհերի մեծադիր լուսանկարները: Այդ օրը, ինչպես վավերագրական կադրերն են վկայում, մի քանի կանայք սգալով լաց էին լինում հուշարձանի կրակի մոտ, ինչպես կսգային հանգուցյալի գերեզմանի մոտ: Լուսանկարներն այդպես մնացին շուրջ երկու շաբաթ, ապա հանվեցին:

Եթե գերեզմանոցում դրված ծաղկեպսակները երիզող ժապավենները հավաքում էր հանգուցյալի «տերը» ու 7 կամ 40 օր անց դնում գերեզմանաթմբի մեջ, ապա Եղեռնի զոհերի հուշահամալիրում այդ ժապավենները հավաքում են մերձակայքում գտնվող «հանգուցյալի տիրոջ»՝ նաև հուշահամալիրի հսկողությունն ու պահպանությունն իրականացնող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակիցները ու պահպանում թանգարանի ստորգետնյա պահոցներում:



Լուս. 10. Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան, անմար կրակի մոտ: Երևան, 24 ապրիլի 2016 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 11. Մարդկանց երթը դեպի Ցեղասպանության զոհերի հուշարձան: Երևան, 24 ապրիլի 2018 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, հարյուր հազարավոր մարդիկ այցելում են Եղեռնի զոհերի հուշարձան (լուս. 11): Ճանապարհին նրանք միշտ չէ, որ լուռ են և միշտ չէ, որ պահպանվում է սգավորի պահվածքը. նրանք զրուցում են ամենատարբեր թեմաների շուրջ և, որպես կանոն, միայն հուշարձանի անմիջական մոտակայքում են լուռ: Նկատենք, որ նմանատիպ պահվածք է նաև առօրեական թաղման թափոռներում. այստեղ հաճախ հանդիպում են մարդիկ, ովքեր ամիսներ կամ անգամ տարիներ միմյանց չեն տեսել, նրանք կիսվում են նորություններով, զրուցում են կենցաղային թեմաներից, կատակներ են անում, հիշում անցած-գնացած օրերը, երբեմն էլ հիշում են հանգուցյալի այս կամ այն արարքները: Գրեթե նույնն է պահվածքը նաև հագուստի պարագայում. երկու դեպքում էլ մարդիկ (հատկապես միջին և բարձր տարիքի) գերադասում են կրել մուգ գույնի, համեմատաբար զուսպ, աչք չծակող զգեստներ, չնայած վերջին տարիներին զգեստի գույնը կարծես թե այնքան էլ էական չէ:

Հանգուցյալի տանը հոգեհանգստի ժամանակ հնչում է ձայնագրված երաժշտություն, հաճախ հրավիրվում են երաժիշտներ կենդանի կատարման համար: Նմանատիպ երևույթներ տեղ են գտել նաև ցեղասպանության զոհերի հուշահամալիրի տարածքում. մի քանի տարի հուշարձանի մերձակայքում նվագախմբի կամ երգչախմբի ելույթներ էին կազմակերպվում: Նկատենք, որ գերեզմանոցում ևս ինչպես թաղման, այնպես էլ հիշատակի օրերին ընդունված է «կենդանի» երաժշտության կատարումը (դուդուկ, զուռնա, կլառնետ, դիոլ, դրանց ուղեկցությամբ երգելը) շիրիմի մոտ:

Հայոց ավանդական գերեզմանոցներում կամ դրանց մերձակայքում, որպես կանոն, լինում են մատուռներ, փոքր եկեղեցիներ: Ցեղասպանության զոհերի հուշահամալիրի տարածքում մատուռ չկա, սակայն այդ «բացթողումը» կարծես թե գիտակցվել է եկեղեցու կողմից, և 2005 թ. ապրիլի 24-ին հուշարձանի մերձակայքում Մայր Աթոռի կողմից տեղադրվեց մի հուշաքար՝ հետևյալ արձանագրությամբ. «Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առթիվ, Ծիծեռնակաբերդի նվիրական այս բարձունքին համազգային ընծայաբերությամբ ընդգծումն իմն է - Հ. Մ.] կառուցվելու է մատուռ-սրբատեղի ի հիշատակ բյուրավոր նահատակների: Օրհնություն մեկ և կես միլիոն անմեղ զոհերի լույս հոգիներին»:

Հայերենում «գերեզմանատուն» բառի հոմանիշներից է «հանգստարան» եզրաբառը, որը բացատրվում է որպես «մեռելների հանգստի տեղ», ուստի և անհրաժեշտ էր նկատվում չխաթարել ննջեցյալների հանգիստը նրանց անմիջական հարևանությամբ աշխարհիկ շինությունների կամ աղմկոտ զվարճանքի վայրերի տեղակայմամբ: Ժամանակին հասարակության կողմից մեծ ընդդիմության արժանացավ Ծիծեռնակաբերդի տարածքում մարզահամերգային համալիրի կառուցման մասին որոշումը, ապա և կառուցումը. այդ երևույթն ընկալվում էր որպես սրբապղծություն: Երկար տարիներ քննադատվում էր Ցեղասպանության հուշահամալիրի սկզբնամասում տեղակայված «Հավանա» ռեստորանի գործունեությունը:

1988 թ. ապրիլի 24-ին Յեղասպանության հուշահամալիրի մաս կազմող հուշապատից մոտ 50 մ հեռավորության վրա տեղադրվեց Սումգայիթի ջարդերի զոհերին նվիրված խաչքար՝ 26 փոքր խաչերով, որոնք խորհրդանշում էին պաշտոնապես հայտարարված 26 հայագոհի զոհերին: Խաչքարը հուշահամալիր բերվեց մարդկանց ուսերի վրա: Այն մեր կարծիքով ավելի շուտ խորհրդանշում էր գերեզմանոցային խաչքար, քան թե խաչքար-հուշարձան: Խաչքարն անմիջապես հեղեղվեց ծաղիկներով ու ծաղկեպսակներով: Այստեղ ծաղիկներ են դրվում ոչ միայն ապրիլի 24-ին, այլ նաև փետրվարի 27-29-ի միջակայքում՝ կոտորածների տարելիցներին: Շուտով Սումգայիթի զոհերին նվիրված խաչքարի կողքին հայտնվեցին երկու այլ խաչքարեր՝ նվիրված «1988 թ. արցախյան գոյամարտի Գանձակի նահատակներին» և 1990 թ. Բաքվի հայության հունվարյան ջարդերի զոհերին: Որպես կանոն, երեք հուշարձան միմյանցից հինգ-վեց մետր հեռավորության վրա չեն դրվում: Յեղասպանության հուշահամալիրի այս հատվածն ավելի շուտ աղբրեջանահայության կոտորածների զոհերին նվիրված փոքր կենտոսաֆային գերեզմանոց է հիշեցնում (լուս. 12):

Յեղասպանության կամ ընդհանրապես զոհերի հուշարձանների՝ որպես գերեզմանոց ընկալելու դրսևորումներից մեկն էլ այն է, որ 1990-92 թթ. Յեղասպանության զոհերի հուշարձանի մերձակայքում հողարկավորվեցին հայ-աղբրեջանական կոիվների



Լուս. 12. Սումգայիթի, Բաքվի և Գանձակի զոհերին նվիրված խաչքար-հուշարձաններ Յեղասպանության հուշահամալիրի տարածքում: Երևան, 24 ապրիլի 2016 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 13. Հայոց ցեղասպանության զոհերի հուշապատի մոտ 1990-1992 թթ. հուղարկավորված հայ-ադրբեջանական ընդհարումների հինգ զոհերի գերեզմանները: Երևան, 24 ապրիլի 2011 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

հինգ զոհեր (լուս. 13): Երանցից առաջին երկուսը 1990 թ. հունվարին Նախիջևանի սահմանում (Երասխավանի հատված, հունվարի 18-21) ադրբեջանցիների հարձակումը հետ մղելիս զոհված *Մուխես Գորգիսյանը* («Ազգային ինքնորոշում միավորում» կազմակերպության վարչության անդամ) և *Երվանդ Սաղումյանն* (ինքնապաշտպանական առաջին մարտերի մասնակից) էին: Դրանից ընդամենը մեկ շաբաթ հետո՝ հունվարի 28-ին, ինչպես նշվում է պաշտոնական հաղորդագրության մեջ, Երևանում «...զինվորական ստորաբաժանումը, առանց պետական իշխանության հանրապետական մարմինների համաձայնության, անց է կացրել ռազմական տեխնիկայի առգրավման գործողություն, որի ընթացքում զենք է գործադրվել, և զոհվել է «Աստրո» արտադրական միավորման բանվոր Է. Մարկոսյանը»⁴⁴: *Էրոսարդ Մարկոսյանը* նույնպես հուղարկավորվում է հուշահամալիրի տարածքում: Այստեղ ավելի քան մեկ տարի անց հողին հանձնված մյուս ազատամարտիկը ՄՈՒՇ-ի (ինքնուրույն գործող 19 ջոկատների միավորում՝ Միավորված ուժերի շտաբի) ընդհանուր հրամանատար, բազմաթիվ ինքնապաշտպանական մարտերի մասնակից, 1991 թ. մայիսի 4-ին Մուսես գյուղի մատույցներում զոհված *Մուշեղ Մխոյանն* (Վոժո) էր: Եվս ավելի քան մեկ տարի անց այստեղ հուղարկավորվեց հինգերորդ ազատամարտիկը՝ 1989-1990 թթ.

44 Տե՛ս «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունում», *Երեկոյան Երևան*, 1 փետրվարի 1990 թ.:

«Մասունցի Դավիթ» կամավորական ջոկատի շտաբի պետ, ապա «Մասնա ծներ» ջոկատի հրամանատար *Սամվել Գևորգյանը*: Շա, կրակն իր վրա վերցնելով, կյանքի գնով փրկել էր շրջապատման մեջ ընկած «Նաիրի» ջոկատի տղաներին (1992 թ. հուլիսի 3):

Նկատենք, որ արդեն այդ ժամանակ՝ 1992 թ. մայիսի 26-ին, հաստատվել էր «Եռաբլուր» պանթեոնի՝ որպես գերեզմանատան կարգավիճակը, ու թերևս այս հանգամանքը նպաստեց, որ Յեղասպանության հուշահամալիրի տարածքում այլևս թաղումներ չկատարվեցին: Եթե առաջին երկու հուղարկավորություններն ինչ-որ կերպ կարելի է կապել Բաքվում հայության՝ ցեղասպանություն ընկալվող զանգվածային կոտորածների հետ ժամանակային իմաստով համընկնելուն, ապա մյուս թաղումները, ինչպես մեզ է թվում, կապվում էին այդ ժամանակաշրջանի իրողությունների հետ, որի բնութագրական գծերից էր մինչև ութ տասնյակ կամավորական ջոկատների⁴⁵ ազդեցության համեմատաբար բարձր մակարդակը, ինչը պայմանավորված էր այն փաստով, որ նրա՛նք էին ապահովում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը: Չմոռանանք, որ Հայկական բանակի կազմավորման օր է համարվում 1992 թ. հունվարի 28-ը, երբ որոշում ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին»⁴⁶: Այսինքն՝ Հայաստանի նորաստեղծ Հանրապետության իշխանությունների կազմակերպչական ձեռնարկումների և անտղղակի, բայց ակտիվ միջամտությունն էր, որ կատարեց Յեղասպանության հուշահամալիրի տարածքում թաղումներ կատարելու գործընթացը⁴⁷:

Հայոց մեջ ավանդույթ է, որ հուղարկավորությունից հետո գերեզմանի մոտ խորհրդանշական, իսկ հանգուցյալի տանն արդեն տասնյակ, երբեմն նաև հարյուրավոր մարդկանց հոգեհաց է մատուցվում: Նմանատիպ մի երևույթի ակնատես եղանք 2005 և 2006 թթ. ապրիլի 24-ին (նաև մի քանի տարի անց), երբ մի կին դեպի հուշարձան տանող ճանապարհի միջնամասում զանազան խորտիկներով ու զովացուցիչ ըմպելիքներով սեղան էր բացել, կից տեղադրված պաստառին էլ գրված էր. «Հարգելի հայրենակիցներ. անմեղ զոհերի հիշատակին մատուցվում է *անվճար հոգեհանգստի հաց* Սիլվա Եղիազարյանի կողմից», ու նշված էին նրա հեռախոսահամարները: Բնութագրական է այս համատեքստում «անվճար» բառի առկայությունը: Քաղաքային կենցաղում հոգեհացը կապ չունի ինչ-ինչ վճարումների հետ:

45 ՀՀ պաշտպանության նախարարություն. պատմական ակնարկ, <http://www.mil.am/hy/68/71/288>, դիտվել է 04.01.2019:

46 Նույն տեղում: Այստեղ նշված էր, որ Հայոց բանակի կազմավորման առաջին փուլն ավարտվում է 1992 թ. մայիսին, երբ Պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին գորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

47 Նկատենք, որ նման երևույթներ տեղ են գտել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի մի շարք այլ հուշարձանների տարածքներում նույնպես: Հարցի շուրջ տե՛ս Հարություն Մարության, «Գերեզմանոցային մշակույթի դրսևորումները հայոց հուշարձանային համալիրներում (20-րդ դարի վերջ – 21-րդ դարի սկիզբ)», զեկուցում կարդացված *Թաղման ծեսը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (Հայկական լեռնաշխարհ և Հարավային Կովկաս)* գիտաժողովում, կազմակերպված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2018 թ. մայիսի 21-24-ին (անտիպ):

Մինչդեռ գյուղական իրականության մեջ, որտեղ ընդունված է համայնքի ակտիվ դրամական օգնությամբ (ինչն անգամ գրանցվում է հատուկ տետրակներում) օժանդակել հանգուցյալի հարազատներին հոգալու թաղման ծախսերը, հոգեհացին, որպես կանոն, մասնակցում են այն մարդիկ, որոնք այս կամ այն չափով մասնակցել են դրամական հանգանակությանը: Մեզ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ, որոնք ի վիճակի չեն եղել դրամ տալու, խուսափել են հոգեհացին մասնակցելուց:

Վերջապես, հայոց մեջ ընդունված է շիրիմների առջև ինչ-ինչ երդումներ ու խոստումներ տալ: Պատմական հիշողության բանավոր փոխանցման նման երևույթի ակնատես եղանք 2005 թ. ապրիլի 25-ին, երբ մի շարք դպրոցների ուսուցիչներ ծնողների ուղեկցությամբ հուշահամալիր էին բերել ցածր դասարանների աշակերտների: Երեխաները հավերժական կրակի մոտ արտասանում էին «Հայր մեր»-ը, հայրենասիրական բանաստեղծություններ ու խոստանում չմոռանալ, վառ պահել անմեղ զոհերի հիշատակը:

Այսպիսով, բերված օրինակները վկայում են, որ Ցեղասպանության զոհերի հուշահամալիր ամենամյա քայլերթերում միավորվում են կոլեկտիվ հիշողությունն ու թաղման ծիսակարգը՝ վերածվելով ազգային ինքնության յուրատեսակ դրսևորման:

2000 թվականից ի վեր ամեն տարվա ապրիլի 23-ին Երևանում անց է կացվում ջահերով երթ, որը սկսվում է Ազատության հրապարակում Թուրքիայի դրոշի այրումով և այդ կրակից առաջին ջահը վառելով: Այդ երթերի կազմակերպիչը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության երիտասարդական թևն է, և մասնակիցների մեծ մասը նույնպես երիտասարդներ են: Հնչող կարգախոսները գերազանցապես պահանջատիրական են, երթն ուղղվում է դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ ուղեկցվելով հայրենասիրական երգերի կատարմամբ⁴⁸:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ որպես քաղաքական գործոն

1965-ին՝ Մեծ եղևնի 50-ամյակին, ցեղասպանության հիշողության մեջ ստեղծվեց *նոր դրակ*. կարելի է ասել, որ այն դարձավ համաժողովրդական սեփականություն, դարձավ գործոն Հայության ներսում ու «Հայ դատի» հանձնախմբերի և այլ կառույցների ձևավորմամբ ընտրեց աշխարհին ճանաչելի դառնալու ուղին, նաև հաստատուն տեղ գրավեց հայոց ինքնության մեջ:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին արդեն ոչ թե Մեծ եղևնի, այլ Հայոց ցեղասպանության հիշողությունն է շարունակում մնալ իբրև հայկական ինքնության կարևորագույն դրսևորումներից մեկը: Այդ հիշողությունն այն եզակի գործոններից է, որ միավորում է հայկական տարբեր քաղաքական ուժերը՝ դառնալով ոչ միայն ազգապահպան, այլ նաև ազգաստեղծ գործոն: Հայոց ցեղասպանությունը ճանաչված է

48 Տե՛ս, օրինակ՝ Էլեն Բաբայան, *Վերասպրաճների երթ*, <http://imyerevan.com/hy/society/view/10466>, 21 ապրիլի 2015 թ.: <https://armeniasputnik.am/photo/20170423/7101404/armenia-jaherov-yert.html>, 23 ապրիլի 2017 թ., դիտվել են 04.01.2019:

աշխարհի տասնյակ պետությունների գործադիր և օրենսդիր մարմինների, տարաբնույթ միջազգային կազմակերպությունների կողմից: Ճանաչումների մի զգալի մասը, որպես կանոն, տեղի է ունենում ապրիլի 24-ին կամ դրան մոտ օրերին: Պաշտոնական ճանաչումների թիվն ավելի մեծ կլիներ, եթե այդ գործընթացը կապված չլիներ համաշխարհային քաղաքականության խնդիրների հետ, այսինքն՝ ճանաչման խնդիրը ոչ այնքան գիտական, որքան քաղաքական հարթության մեջ է: Այսպես, տարբեր պետությունների ղեկավարներ ուղղակիորեն և անուղղակիորեն պարբերաբար կոչ են անում Թուրքիային ամերեակելու իր պատմության մութ էջերի հետ, երբեմն էլ՝ միջպետական հարաբերությունների լարվածության հետևախորքին հիշեցնում են Թուրքիային Հայոց ցեղասպանության իրողության գործոնի հնարավոր օգտագործման մասին, այսինքն՝ այն օգտագործում են որպես քաղաքական ճնշման միջոց:

Եթե 1965-ին ստեղծված «Հայ դատի» հանձնախմբերը կուսակցական մարմիններ էին, ապա 2015-ին ընդառաջ ստեղծված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը» միավորում է Հայաստանի և Սփյուռքի տարբեր քաղաքական, աշխարհիկ և հոգևոր ուժերին: Այդ մարմնի կողմից 2015 թ. հունվարի 29-ին ընդունված Հռչակագիրն առաջին հերթին կոչված է աշխարհին ցույց տալու Հայության միակամությունը, միասնությունը Հայոց ցեղասպանության խնդիրների բարձրացման և լուծման ուղղությամբ առաջ շարժվելու հարցում⁴⁹: Համահայկական՝ պետական կառույցների կամ միջազգային հասարակական կազմակերպությունների մակարդակով ձեռնարկվում են քայլեր Ցեղասպանության հետևանքների վերացման գործն իրավական հարթություն տեղափոխելու ուղղությամբ⁵⁰: Այս ամենը նույնպես նոր որակի դրսևորումներ են: Օրինակներից մեկն էլ «Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման հայ քաղաքական կուսակցություններու միացեալ մարմինի» ստեղծումն է, որի կարգախոսն է. «Ապրիլ 24-ը օրն է անարդարութեան եւ իրաւազրկման դէմ պայքարի, օրն է իրաւունքի եւ հատուցման պահանջի»⁵¹:

Հայաստանը ձեռնարկում է որոշակի քայլեր ցեղասպանությունների դեմ պայքարի հարցում միջազգային հարթակ դուրս գալու ուղղությամբ: Այսպես, Երևանում 2015 և 2016 թթ. ապրիլի 23-ին անցկացվեցին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» առաջին և երկրորդ գլոբալ ֆորումները: Հայաստանի առաջարկով ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 28-րդ նստաշրջանում 2015 թ. մարտին կոնսենսու-

49 <http://www.president.am/en/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>, դիտվել է 04.01.2019:

50 Հարցի քննարկումը տե՛ս, օրինակ՝ Alfred de Zayas, Jermaine O. McCalpin, Ara Papian, Henry C. Theriault, *Resolution with Justice. Reparations for the Armenian Genocide. The Report of the Armenian Genocide Reparations Study Group*, March 2015, <http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2015/03/20150331-ArmenianGenocideReparations-CompleteBooklet-FINAL.pdf>; Harutyun Marutyan, “Boundaries/Borders of the Armenian Claims and Possibilities of Inter National Dialogue,” in *141 Days in Action. January 19th Initiative, 048-058* (Yerevan, United in Rights, 2017), 048-058, https://www.academia.edu/34036583/Harutyun_Marutyan-Boundaries-Borders_of_the_Armenian_Claims_and_possibilities_of_Inter_National_Dialogue-2017-Engl.pdf

51 Տե՛ս «Զարթոսք», «Ազդակ», «Արարատ» օրաթերթերի՝ 2015 թ. ապրիլի 24-ի միացյալ համարը:

սով ընդունվել է Հայաստանի նախաձեռնած Ցեղասպանության կանխարգելման բանաձևը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2015 թ. սեպտեմբերի 11-ին ընդունեց բանաձև, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր⁵²:

2015 թ. մարտին պաշտոնապես մեկնարկեց «Ավրորա» համաշխարհային մարդասիրական նախաձեռնությունը՝ համանուն մրցանակի տրամադրմամբ: Այդ մրցանակի հիմքում Հայոց ցեղասպանության տարիների խիզախության և գոյապայքարի ոգեշնչող պատմություններն են:

Մեծ եղեռնից 100 տարի անց՝ 2015 թվականի ապրիլի 23-ին, Հայ առաքելական Սուրբ եկեղեցու եպիսկոպոսաց դասի որոշմամբ ՆՍՕՏՏ Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի կոնդակով սրբադասվեցին Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած բոլոր նահատակները՝ ավելի քան մեկուկես միլիոն մարդ: Հայտարարվեց, որ «Մեր սուրբ նահատակների հիշատակն այլևս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն»⁵³:

Հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ձեռնարկների ու միջոցառումների մի զգալի մասն ուղղված էր աշխարհին և Թուրքիային: Սա օրինաչափ էր, և ակնկալվում էր, որ այդպես էլ պետք է լինի: Սակայն Ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է, ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Դրանցից մեկը վերաբերում է հիշատակի օրվա խորհրդին⁵⁴:

52 Բնութագրական է, որ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ գլոբալ ֆորումը անցկացվեց Երևանում 2018 թ. դեկտեմբերի 9-11-ը:

53 Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը՝ որպես մշակութային երևույթ», *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ*, 1: *Հայ ժողովրդական մշակույթ*, XVII: *Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում*, խմբ. Հարություն Մարության, Թամար Հայրապետյան, Սուրեն Հոբոսյան (Երևան, ՀԱԻ հրատ., 2018), 54-64: Հոդվածում առաջ է քաշվում այն տեսակետը, որ սրբադասման պարագայում փաստորեն շեշտադրվում է կրոնական գործոնը, և այդ կերպ երևույթը մասնավորեցնելով՝ նվազեցվում է ազգային, էթնիկական գործոնը, նաև՝ Ցեղասպանության քաղաքական արժեքը: Ցեղասպանությունը փաստորեն հավասարեցվում է «կրոնասպանության», մինչդեռ այն շատ ավելի ընդգրկուն երևույթ է:

54 Առաջարկությունների փաթեթին առաջին անգամ բարձրաձայնվել է 2013 թ. մարտին-ապրիլին, առանձին հրապարակման ձևով լույս է տեսել 2014 թ.: Տե՛ս Յարութին Մարութեան, Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամեակի նշմանն ընդառաջ, *Ազգայն սայրիլեան բացառիկ* 2014, 17-24: Տե՛ս նաև Հարություն Մարության, Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը, *Ցեղասպանագիտական հանդես* 3(1-2) (2015) [«Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը. Ցեղասպանություն, գաղթականներ և մարդասիրական օգնություն» միջազգային գիտաժողովի նյութեր. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2014 թ. ապրիլի 21-22], 76-80:

Հայոց ցեղասպանությանն առնչվող ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեշտադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումը», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը, մեր համոզմամբ, ուզում ենք դա թե ոչ, բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի գոյատևմանը նպաստելուն⁵⁵:

Մինչդեռ Հայոց ցեղասպանության ու մասնավորապես Առաջին աշխարհամարտի տարիներին առկա էին նաև այլ իրողություններ: Պատերազմի սկզբից ի վեր Արևմտյան և Կովկասյան ճակատներում կռվող հայազգի զինվորների թիվը կազմում էր մոտ 300 հազ. մարդ: Ձևավորվեցին յոթ հայկական կամավորական ջոկատներ՝ իրենց կազմում ունենալով վեց հազար հոգի: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ստեղծվեց հայերից բաղկացած Արևելյան լեգեոնը (ավելի քան հինգ հազար զինվոր), որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոն:

Հայոց ցեղասպանության տարիներն Օսմանյան կայսրությունում նշանավորվեցին նաև հայերի մի շարք ինքնապաշտպանական կռիվներով: Նախ՝ նշենք քաղաքներն ու խոշոր բնակավայրերը՝ Շատախ/Թաղ (1915 թ. ապրիլի 1-մայիսի 14), Վան (1915 թ. ապրիլի 7 – մայիսի 3), Շապին-Գարահիսար (1915 թ. հունիսի 2-29), Մուշ (1915 թ. հունիսի 26-29), Ֆընտըճազ (հուլիսի 6 – 26/օգոստոսի 3), Ուրֆա (1915 թ. սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 23), Հաճըն (1920 թ. ապրիլի 1 – հոկտեմբերի 15), Այնթապ (1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվարի 8): Գավառներից՝ Գավաշ (Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 3 – մայիսի 11, Փեսանդաշտ (Շատախի գավառ, Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 14 – մայիսի 10, Յոզղատ գավառի (Անկարայի նահանգ) հայկական գյուղեր՝ 1915-1917 թթ., Սասուն՝ 1915 թ. ապրիլ – օգոստոս, Մուսա լեռ (1915 թ. օգոստոսի 7 – սեպտեմբերի 12), Խնուս գավառի հայկական գյուղեր (1915 թ. մայիս), Խոտորջուրի գավառ (1918 թ. հունվարի 20 – մայիս)⁵⁶:

Վերոբերյալից հետևում է, որ որոշ վայրերում հայերը դիմադրել են շատ կարճ, այլ տեղերում՝ շաբաթներ և ամիսներ շարունակ, կազմակերպված ու չկազմակերպված, զինված ու շատ քիչ զենք-զինամթերքով: Երևույթը շատ բազմադեմ է, գնահատականները՝ տարբեր, սակայն հստակ է մեկ բան. հայ քաղաքացիական բնակչությունը ոչ քիչ դեպքերում հենց այնպես չի կոտորվել, չի «մորթվել ոչխարների նման», ինչպես երբեմն հնչում է հարցից անտեղյակ, առավելապես ոչ մասնագիտական շրջանակներում, տարբեր խավերի ներկայացուցիչների առօրյա խոսքուզուրուցում: «Ոչխարի նման մորթվող ժողովուրդը» չէր կարող 1918 թ. մայիսին՝ դեռևս Առաջին համաշխարհ-

55 Անդրադարձ երևույթի պատճառներին տե՛ս Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը*, 63-66, 70-72:

56 Ինքնապաշտպանությունների մասին ընդհանրացնող բնույթի աշխատություններից տե՛ս Ռուբեն Սահակյան, *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* (Երևան, «Գիտություն», 2005): Նույնի՝ *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* (Երևան, «Հայ Դատ» հիմնադրամ հրատ., 2010): Էդիկ Մինասյան, Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ., *Հայկական բանակ* 1-2 (2015), 88-134: Հարություն Մարության, «Ապրիլի 24-ի վերաիմաստավորումը», 9 օգոստոսի 2015 թ., <http://boon.am/harutyun-marutyun/>, դիտվել է 04.01.2019:

հային պատերազմը չավարտված, պետականության բացակայության պայմաններում, բռունցքվել և հաղթական ինքնապաշտպանական ճակատամարտ մղել Մարդարապատում և Ապարանում, դիմակայել Դարաքիլիսայում՝ այդ կերպ արևելահայությանը փրկելով սպասվող ցեղասպանությունից:

Սակայն հայկական իրականության մեջ արդեն շուրջ մեկ դար պաշտոնական թեանապաշտոն նշվում է «Հայոց ցեղասպանության զոհերի» հիշատակը: Տասնամյակներ շարունակ հենց միայն նմա՛ն շեշտադրումն իր հետևից բերում է նաև թերարժեքության բարդությունների դրսևորումներ հատկապես երիտասարդության մեջ, հնչում են կարծիքներ ցեղասպանության հիշողությունը որպես բեռ ընկալելու մասին, երբեմն էլ որոնվում են քայլեր՝ ուղղված դրանից «ազատվելուն»:

Անցել է ավելի քան հարյուր տարի: Ունենք Ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական կռիվների իրողությունը, ունենք շուրջ երեսնամյա ազգային պետականություն, արցախյան հաղթանակների գործոնը: Կարծում եմ՝ վաղուց ժամանակն է վերաիմաստավորելու հիշողության օրվա խորհուրդը, ձևափոխելու այն, իրականացնելու առնվազն շեշտադրումների փոփոխություն և շրջանառության մեջ դնելու ապրիլի 24-ի այլ բանաձևում. «Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակի օր»⁵⁷:

57 Առաջարկվող ձևակերպումը ենթակա է խմբագրման: Տարբերակներից մեկը կարող է լինել հետևյալը. «Հայոց ցեղասպանության հիշատակի օր. զոհեր, դիմադրողներ, վերապրողներ»:

Harutyun T. Marutyan
Doctor of Sciences (History)

FORMATION, DEVELOPMENT AND CURRENT STATE OF THE ARMENIAN GENOCIDE VICTIMS REMEMBRANCE DAY (PART 2)

SUMMARY

Key words: Armenian Genocide, Armenian Genocide Victims Remembrance Day, Armenian Genocide Victims Memorial, April 24.

On April 24, 1965, Armenians both in the Soviet Armenia and Diaspora commemorated the 50th anniversary of *Mets Yeghern*. In the Soviet Armenia this became possible not only due to the changes within the wide circles of the society after the Khrushchev Thaw but also because of the political will of the Armenian authorities, namely, Yakov Zarobyan, the First Secretary of the Armenian Communist Party. The decision of the Central Committee of the Communist Party of the Soviet Union was preceded by a long sequence of preparatory work, among which was a letter addressed to the authorities of Moscow in December 1964. Thanks to some ideological statements there, the Armenian Genocide has been moved from the level of a solely Armenian tragedy to the level of the world history.

The commemoration of the 50th anniversary of *Mets Yeghern* took place on two levels: people and state/party. The mass demonstration, peoples' march, the distribution of leaflets and intrusion to the Opera building were the sure indicators of a national outbreak. Thanks to a position of the Armenian authorities no mass persecution against the participants was followed. The commemoration of April 24, 1965 in Yerevan broke the wall of official silence and revealed the truth about one of the greatest tragedies of the 20th century to the wide public. It gave rise to scholarly researches, publication of books and archival records relating to the events of 1915 and resulted in the inclusion of the 1915 Genocide into the textbooks. Finally, it was a unique case when the authorities and people were fighting for the same cause even though from the opposite ends. They fought and reached their goal. One of the evidences of this fight was the construction of the Memorial during 2,5 years, which immediately took its place among the symbols of the Armenian identity. It has been 50 years since that people are organizing annual April 24th marches to the Memorial.

On April 24-25, 1965 in different parts of Diaspora Remembrance Day of the Victims of *Mets Yeghern* was solemnly commemorated. It can be stated, that the solemn commemoration of April 24, 1965 in different communities of the Armenian Diaspora displayed the qualitative transition from the culture of mourning to another level of commemoration ceremonies. Particularly, the idea that the perpetrators of the Armenian Genocide are finally getting/should get their worthy punishment/ assessment was present.

On the eve of April 24, many memorials are being built in different corners of the world. On April 24, 1975, for the first time the authorities of the Soviet Armenia officially paid tribute to the memory of *Mets Yeghern* victims by visiting the Genocide Memorial. At 7pm a Moment of Silence in the memory of the Genocide victims was announced on the television and radio. On November 22, 1988, the Supreme Council of the Armenian SSR adopted the law on the “Condemnation of the Armenian Genocide of 1915 in the Ottoman Turkey” and recognized April 24 the “Remembrance Day of the Victims of the Armenian Genocide.”

During the Karabakh Movement or the Armenian Revolution (February 20, 1988 – August 23, 1990) the change in the essence of the Remembrance Day has occurred: it became the day of presenting political demands on different issues of social life. The article details the commemoration of the Remembrance Day of the Genocide victims in the context of the commemorative rituals of the Armenian people.

In 1965, during the commemoration of the 50th anniversary of *Mets Yeghern*, the memory of Genocide attained a new status. It can be stated that it became a pan-national “property,” a feature for the whole Armenians. The Genocide memory became a constituent part of the Armenian identity and through the efforts of *Hay Dat* and other similar organizations became known to the world. On the centennial of the Armenian Genocide not the memory of *Mets Yeghern* but the memory of Armenian Genocide still remains as one of the most important manifestations of the Armenian identity. This memory is one of the unique elements which unite different political forces and started influencing not only the preservation but also the formation of a nation. Executive and legislative bodies of more than twenty-five countries as well as various international organizations have now recognized the Armenian Genocide. The vast majority of recognitions as a rule happen on or around April 24. More than hundred years have passed since the Armenian Genocide. It is high time to reconsider the concealed meaning of the Remembrance Day, transform it, and at least change its emphasis by putting another wording for April 24 into circulation: “*Remembrance Day of the Victims of the Armenian Genocide and the Heroes of the Self-defense Battles.*”

Արտյոն Մարտյան
доктор исторических наук

ФОРМИРОВАНИЕ И ТРАНСФОРМАЦИЯ ДНЯ ПАМЯТИ ЖЕРТВ ГЕНОЦИДА АРМЯН (ЧАСТЬ 2)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, день памяти жертв геноцида, мемориал жертв геноцида, 24 апреля.

24 апреля 1965 г. армянский народ в Советской Армении и во всем мире отметил 50-летие *Մեզ, Եզերն* / Геноцида армян. Это событие было обусловлено не только изменениями, которые произошли в широких слоях общества благодаря “хрущевской оттепели”, но и политической воле руководства Армении, в частности, первого секретаря ЦК КП Армении Якова Заробяна. Разрешению, полученному от Политбюро ЦК КПСС, предшествовала длительная подготовительная работа: в частности, в декабре 1964 г. высшему руководству страны в Москву было направлено письмо. Рядом идеологических положений, изложенных в нем, Геноцид армян выносился за рамки сугубо армянской трагедии и ставился в плоскость всемирной истории.

Մեզ, Եզերն отмечался на двух уровнях – народном и государственно-партийном. Шествие, митинг, в которых принимали участие десятки тысяч людей, распространение листовок, вторжение людей в зал Оперы – все это неоспоримые показатели народного протеста. Благодаря позиции руководства Армении, на нарушителей порядка не было оказано массового силового давления. События 24 апреля 1965 г. в Ереване разрушили официальное молчание и донесли до широких слоев общества историю одной из самых больших трагедий 20-го века, начались научные исследования, стали публиковаться книги, документы, касающиеся событий 1915 г., факт геноцида наконец занял свое место в учебниках истории армянского народа. Кроме того, это был один из тех единичных случаев, когда власть и народ с разных позиций боролись за одно общее дело и достигли своей цели. Свидетельством этого был также тот факт, что почти за два с половиной года был построен Мемориал жертв геноцида, который сразу нашел свое место в ряду символов армянской идентичности. Начиная с 1967 г., уже более 50-ти лет, 24 апреля происходит ежегодное шествие людей к мемориалу.

24-25 апреля 1965 г. во многих армянских общинах Диаспоры были торжественно отмечены днями памяти жертв *Մեզ, Եզերն*. Можно сказать, что произошел качественный переход от культуры траурных мероприятий к иному уровню поминания. В частности, была выдвинута мысль, что преступления, совершенные по отношению к армянам, получают/должны получить достойное наказание/оценку.

В разных городах мира к 24 апреля сооружаются многочисленные памятники. Руководство Советской Армении 24 апреля 1975 года впервые официально почтило память жертв Геноцида, посетив Мемориал жертвам Геноцида. В 7 часов вечера в республике была объявлена минута молчания. 22 ноября 1988 г., спустя более семи десятилетий со времени Геноцида, Верховный Совет Армянской ССР принял закон “Об осуждении Геноцида армян 1915 года в Османской империи”.

Во время Карабахского движения или Армянской революции (20 февраля 1988 – 23 августа 1990) происходит трансформация содержания дня памяти: оно становится более широким, выражающим политические требования, касающиеся разных вопросов общественной жизни. В статье подробно рассматривается отмечание дня памяти жертв Геноцида в контексте армянских ритуалов памяти.

В 1965 г., к 50-летию *Мец Егерна*, в памяти о Геноциде появилось *новое качество*: она стала общенародным достоянием, фактором формирования комиссий “Ай дата” и других структур для достижения признания со стороны различных стран мира, а также заняла прочное место в армянской идентичности. И в 100-летие Геноцида армян память уже не о *Мец Егерне*, а о Геноциде армян продолжает оставаться одним из важнейших проявлений армянской идентичности. Это один из тех единичных факторов, который объединяет различные армянские политические силы и играет важную роль не только в сохранении, но и в формировании новых диаспоральных наций. Геноцид армян признали исполнительные и законодательные органы более двадцати пяти государств, различные международные организации. Это, как правило, происходит или 24 апреля или в близкие к нему дни.

Прошло более ста лет со времени Геноцида. Давно наступило время переосмыслить значение дня памяти, по крайней мере, ввести в оборот иную формулировку дня 24 апреля: “*День памяти жертв Геноцида армян и героев самооборонительных сражений*”.

REFERENCES

Armen, Mkrtich'. «Ձեկուցագիր Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին» [Report to the Central Committee of the Communist Party of Armenia], *Grakan t'ert'* (Yerevan), September 6, 1991 (25/2428);

«Եղևնի զոհերի հուշարձանի մոտ» [At the Monument to the Victims of Yeghern], *Patmbanasirakan handes* 2 (1975): 79-80;

Babalyan, Elen. *Վերապրածների երթ* [March of Survivors], <http://imyerevan.com/hy/society/view/10466>, April 21, 2015; <https://armeniasputnik.am/photo/20170423/7101404/armenia-jaherov-yert.html>, April 23, 2017;

Boryan, Nvard. «Ինչպես է նշվել Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և ինչպես հնարավոր դարձավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը» [How was

Commemorated the 50th Anniversary of the Armenian Genocide and How became Possible the Construction of the Tsitsernakaberd Memorial], *Haykakan ashkharh*, April 24, 2007, <http://www.armworld.am/detail.php?paperid=1493&pageid=50725⟨>

«Վեհափառի խօսքը մարգաւանի յուշատօնին» [Catholicos Speech at the Commemorations in the Stadium], *Azduk* (Beirut), April 27, 1965 (44/10089);

«Հանդիսություններ Մայր Աթոռում սպրիլյան եղենի հիսնամյակի առթիվ» [Festivities in the Holy See on the Occasion of 50th Anniversary of the April Yeghern], *Ejmiadzin: 1915-1965*, 5-7 (1965): 106-110;

Harut'yunyan, Avag (ed. and compiler). *Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և կոթերի ժողովածու)* [The 50th Anniversary of the Armenian Genocide and Soviet Armenia (Collection of Documents and Materials)], Yerevan: Gitut'yun, 2005;

Harut'yunyan, Avag. *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic], Yerevan: Noravanq, 2015;

Harut'yunyan, Varazdat. «Ինչպես ընտրվեց Եղենի զոհերի հուշահամալիրի նախագիծը» [How was Chosen the Plan for the Yeghern Victims Memorial], *Azg* (Yerevan), May 27, 2006, 6;

Haykazyan, Vardan. «Ցեղասպանության տարեկիցի նշումը Մոսկվայում» [Commemoration of the 50th Anniversary of Genocide in Moscow] in *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic], Yerevan: Noravanq, 2015, 140-153;

«Հաղորդագրություն» [Information], *Grakan t'ert'* (Yerevan), March 4, 1988 (10/2378);

Qalashyan, Sashur. «Ինչպես ստեղծվեց հուշահամալիրը» [How the Memorial was Created], *Chartarapetut'yun, shinararut'yun* 4-5 (2015): 14-21;

Kaputikyan, Silva. *Էջեր փակ գրոցներից* [Pages from Closed Shelves]. Yerevan: Apollon, 1997;

Lachikyan, Levon. *Ճարտարապետի կյանքի գործը* [The Matter of Life of the Architect], April 24, 2015, <https://www.civilnet.am/news/2014/06/24/%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8/233151;>

Marut'yan, Harut'yun. «Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով)» [The Monument as Cemetery (on the Example of Armenian Genocide Memorial)], *Hay zhoghovrdakan mshakuyt' XIII. Nyu'ter hanrapetakan gitakan nstashrjani*, edited by Derenik Vardumyan, Sargis Harut'yunyan, Suren Hobosyan. Yerevan: Gitutyun, 2006, 172-180;

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Marut'yan, Harut'yun. «Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համաստեքսում» [The Genocide Memorial in the Context of the Commemorative Rituals of the Armenian People], *Chartarapetut' yun, shinararut' yun* 4 (2009): 8-12;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of Armenian Genocide and Jewish Holocaust Memory], *Patma-banasirakan handes* 2 (2011): 24-46;

Marut'yan, Harut'yun. «Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը» [The Centenary Old Genocide Memory and the Process of Formation of the “American-Armenian nationality”], *Haykakan inqnu't' yan khndirnerë 21-rd darum: gitazhoghovi nyu't'er*, ed. by Aram Simonyan, Pol Haydostian, Andranik Dakessian, Yuri Avetisyan. Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 2013, 43-54;

Marut'yan, Harut'yun. «Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները» [Main Peculiarities of the Karabagh Movement or the Armenian Revolution (1988-1990)] in Hambardzum Galstyan, Chugharkvats namakner, compiled by Harutyun Marutyun. Yerevan: Gasprint, 2013: 9-17;

Marut'yan, Harut'yun. «Ցեղասպանության զոհի բարդույթի հաղթահարումը Ղարաբաղյան շարժման տարիներին» [The Overcoming of Genocide Victim Image in the Years of the Karabagh Movement], *Vem Hamahaykakan handes* 1 (2013): 154-164;

Marut'yan, Harut'yun. «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)» [Museum and Monument (Comparative Analysis of Armenian and Jewish Experience)], *Patmabanasirakan Handes* 3 (2014): 58-79;

Marut'yan, Harut'yun. «Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամեակի նշմանն ընդառաջ» [Suggestions towards the 100th Commemoration of the Armenian Genocide], *Azduk aprilyan bats'arik*, 2014, 17-24;

Marut'yan, Harut'yun. «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը» [The Phenomenon of Self-defense during the Years of the Armenian Genocide and the Problem of Reformulation of the Memory Day], *Ts'eghaspanagitakan handes* 3(1-2) (2015): 76-80 [“The Caucasian Frontline of the First World War: Genocide, Refugees and Humanitarian Assistance.” Proceedings of the International Conference, The Armenian Genocide Museum-Institute, Yerevan, April 21-22, 2014];

Marut'yan, Harut'yun. «Ապրիլի 24-ի վերաիմաստավորումը» [The Reinterpretation of April 24], August 9, 2015, <http://boon.am/harutyun-marutyun/>

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը՝ որպես մշակութային երևույթ» [Canonization of the Martyrs of the Armenian Genocide as a Cultural Event], *Hnagitut' yan yev azgagrut' yan instituti ashkhatut' yunner*, 1. *Hay zhoghovrdakan mshakuyt', XVII. Avandakanë yev ardiakanë hayots' mshakuyt'um*, edited by Harut'yun Marut'yan, T'amar Hayrapetyan, Suren Hobosyan. Yerevan: HAI, 2018, 54-64;

Ցալի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Minasyan, Edik. «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ.» [The Self Defense Battles of Armenians in 1915], *Haykakan banak* 1-2 (2015): 88-134;

ՀՀ պաշտպանության նախարարություն. պատմական ակնարկ [Ministry of Defence of Republic of Armenia], <http://www.mil.am/hy/68/71/288>;

Petrosyan, Armen. «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն» [The Armenian Genocide as a Nationborning], *Hayatsq Yerevanits': Hayagitakan. Razmavarakan yev azgayin hetazotut' yunneri haykakan kentron*. Vol. 3, no. 4 (1997): 43-54;

«Մեծ եղեռնի նահատակների աճյուններ Դեր-Ջորից» [Remains of the Victims of Mets Yeghern from Der-Zor], *Ejmiadzin: 1915-1965*, 11-12 (1965): 80-81;

Sahakyan, Rouben. *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* [The Genocide of Western Armenians and Self Defense Battles]. Yerevan: Gitut'yun, 2005;

Sahakyan, Rouben. *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* [Self Defense Battles in Western Armenia in 1915 and Armenian Revolutionary Federation]. Yerevan: Hay Dat, 2010;

«Ծիծեռնակաբերդ. Հուշակոթողի մասին միֆերն ու իրական պատմությունները» [Swallows' Fortress: The Myths and Real Stories about the Memorial], April 15, 2015, <https://web.archive.org/web/20151026130642/http://newmag.am/2015/genocide-monument/>;

«Ամենայն Հայոց հայրապետի կոնդակը ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ» [The Kontakion of the Catholicos of All Armenians regarding the 50th Anniversary of Mets Yeghern], *Ejmiadzin* 7-9 (1964): 3-5;

«Մեծ Եղեռնի յիսնամյակին. Տոնակատարությունները Երեանի մէջ. Պաշտօնական հասարկություն, եւ ժողովրդական համախմբումներ ու ցոյցեր» [To the 50th Anniversary of the Mets Yeghern: Commemorations in Yerevan, Official Ceremonies, Peoples' Gatherings and Demonstrations] in Karo Georgian, *Amenun taregirqè*, Beirut, 1966;

«Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը. 40 տարի անց վերհիշում են շինարարները. Զրույցը տեղի է ունեցել 2005 թ. ապրիլին, Եղեռնի հուշահամալիրի մոտ» [When the Tsitsernakaberd Monument was Constructed: 40 Years Later the Builders Remember: The Conversation Took Place in April 2005, Near by the Memorial to Yeghern], *Chartarape-tut' yun, shinararut' yun* 4-5 (2015): 22-23;

Virabyan, Amatuni. «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն» [The Odyssey of the Memorial of Mets Yeghern: the National Monument and Soviet Reality], *Banber Hayastani archivneri* 1 (2008): 292-296;

Zarobyan, Nikita and Grigoryan, Armen. *1965-ի ռուբիկոնը* [Rubikon of 1965], <http://imyerevan.com/hy/society/view/2263>;

Zolyan, Suren. ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խուսանալիղ դիսկուրսի իմաստա-գործարանական վերլուծություն) [American Presidents on the Armenian Genocide (the Semantic and Pragmatic Analysis of the “Evasionist” Discourse)]. Yerevan: Limush, 2015.

Balyan, Karen. *Мемориал Егерн* [The Eghern Memorial]. Ekaterinburg: Tatlin Press, 2015.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Նարինե Ս. Հակոբյան, միջազգայնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածներ:

Էլ. հասցե՝ hakobyan.narine@genocide-museum.am

Narine S. Hakobyan, international relations specialist, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation, junior researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields - Armenian massacres of 1894-1896.

E-mail: hakobyan.narine@genocide-museum.am

Нарине С. Акопян, специалист по международным отношениям, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян”. Младший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян”.

Область исследований – массовые убийства армян в 1894-1896 годах.

Электронная почта: hakobyan.narine@genocide-museum.am

Սուրեն Ա. Մանուկյան, պատմ. գիտ. թեկն., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Ցեղասպանագիտության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության ոճրագործներ, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ. հասցե՝ manukyan.suren@genocide-museum.am

Suren A. Manukyan, PhD in History, orientalist, Head of the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation, and Head of the Department of Genocide Studies at Institute of Armenian Studies, Yerevan State University.

Research fields – genocide perpetrators studies, comparative genocide studies.

E-mail: manukyan.suren@genocide-museum.am

Сурен А. Манукян, канд. ист. наук, востоковед, заведующий Отдела сравнительного изучения геноцида Фонда “Музей-Институт Геноцида армян,” заведующий Отдела сравнительного геноцидоведения Института арменоведения Ереванского государственного университета.

Область исследований – изучение преступников, виновных в осуществлении геноцида, сравнительное изучение геноцидов.

Электронная почта: manukyan.suren@genocide-museum.am

Ռոբերտ Ա. Սուրիասյան, ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ասպիրանտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության ժամանակ տեղահանությունների պատմություն:

Էլ. հասցե՝ robertsukiasyan@yahoo.com

Robert A. Sukiasyan, MA in Genocide Studies, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – deportation history of the Armenian Genocide.

E-mail: robertsukiasyan@yahoo.com

Роберт А. Сукиасян, геноцидовед, аспирант Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – история депортаций во время Геноцида армян.

Электронная почта: robertsukiasyan@yahoo.com

Ինեսա Գ. Ստեփանյան, միջազգայնագետ/ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքական Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթը մահսուսա) գործունեության համեմատական վերլուծություն, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ հասցե՝ stepanyan.inesa@genocide-museum.am

Inessa G. Stepanyan, international relations specialist/genocide scholar, junior researcher at the Department of the Comparative Genocide Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research field: comparative analysis of the activities of the Turkish Special Organization (Teşkilât-ı Mahsusa), comparative genocide studies.

E-mail: stepanyan.inesa@genocide-museum.am

Инесса Г. Степанян, специалист по международным отношениям/геноцидовед, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян,” младший научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований - сравнительный анализ деятельности турецкой специальной организации (Тешкилят-и махсуса), сравнительное изучение геноцидов.

Электронная почта: stepanyan.inesa@genocide-museum.am

Նարեկ Մ. Պողոսյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, Բանգլադեշի ցեղասպանություն, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ հասցե՝ poghosyan92@bk.ru

Narek M. Poghosyan, PhD in History, researcher at the Comparative Genocide Studies Department at the Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research field: the study of the Armenian Genocide by Raphael Lemkin, Bangladesh Genocide, Comparative genocide studies.

E-mail: poghosyan92@bk.ru

Нарек М. Погосян, канд. ист. наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, геноцид в Бангладеше, сравнительное изучение геноцидов.

Электронная почта: poghosyan92@bk.ru

Հարություն Տ. Մարության, պատմ. գիտ. դոկտոր, ազգագրագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության հիշողություն, ազգային ինքնություն, կոլեկտիվ և պատմական հիշողություն, Ղարաբաղյան շարժում, պատկերագրություն, հայոց ենթաէթնիկ խմբեր, հայ ավանդական մշակույթ:

Էլ. հասցե՝ admidirector@genocide-museum.am

Harutyun T. Marutyan, Doctor of Sciences (History), social/cultural anthropologist, Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation, Head researcher at the Institute of Archaeology and Ethnography of National Academy of Sciences of Armenia.

Research fields – Armenian Genocide memory, national identity, collective and historical memory, Karabakh movement, iconography, sub-ethnic groups of Armenians, Armenian traditional culture.

E-mail: admidirector@genocide-museum.am

Арутюн Т. Марутян, доктор ист. наук, этнограф, директор Фонда «Музей-Институт Геноцида армян», главный научный сотрудник Института археологии и этнографии Национальной Академии наук Армении.

Область исследований – память и национальная идентичность, коллективная и историческая память, Карабахское движение, иконография, субэтнические группы армян, армянская традиционная культура.

Электронная почта: admidirector@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարելոհճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվագն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ու՜մ պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ *Ցեղասպանագիտական հանդեսի* տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը, պաշտոնը և աշխատավայրը, էլ. փոստի հասցեն:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Աստիճաբար պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի ազգանուն, անուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝
Antonian, Aram. Մեծ ոճիրը [The Great Crime]. Boston: Pahak, 1921

Հղումներ

10. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition-ի*:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:
2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.
3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146. Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և

գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը:
Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ (ebook)

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle. Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը:
Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը:
Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.

2. Վերժինե Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու* (Երևան, ԵԳՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность”. От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и*

выступления участников V Международной научно-практической конференции (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներնրերի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով(երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:
Օր.՝

1. Dadrian, “Ottoman Archives,” 471.
2. Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:
3. Манукян, “Наказание за верность,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier):
Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
2. Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը:
Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.
2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.
6. Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”; որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով: Իսկ եթե նման կրկնություններով հատվածները բուն տեքստից հանել ու վերջում դնել, որպես ընդհանրացնող ձևակերպում:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “*King Lear* and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «*Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆանել Լեմկինի կողմից*» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը: Օր.՝

1. Rutz, “*King Lear*,” 158.
2. Պողոսյան, «*Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը*», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը (երկար վերնագրերի դեպքում կրճատ):
Օր.

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

11. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային սամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան սամակ հեղինակին, 1 օգոստոս 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային սամակ հեղինակին, 15 մարտ 2017 թ.:

12. Ամսաթվերի գրելաձև

1. Իսոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ *3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:*
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ *25.01.2019:*
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ *31 հունվարի 2019 թ.:* Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

13. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ë ë
Թ թ - T' t'
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Ծ ծ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ յ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ ց - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Գ գ - Q q
Եվ և Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեր, թուղթը՝ օֆսեր,
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
6 (2)**

Երևան 2019

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, պատմագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պազմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիոսահաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”)

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic Universtiy, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор истории, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусахаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазманя, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ կյուրերն արտահայտում են հեղինակների մտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

«Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Նարինե Ս. Հակոբյան

Համիդյան կոտորածները և կիլիկիահայությունը (1895-1896 թթ.)..... 9

Սուրեն Ա. Մանուկյան

Հանցակցությունը որպես համախմբող գործոն.

Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ24

Ռոբերտ Ա. Սուրիսյան

Հասան Չելեբի. Սերասպրիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ53

Ինեսա Գ. Ստեփանյան

Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքուստի

հիմնական իրազործողների հարցի շուրջ 69

Նարեկ Մ. Պողոսյան

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և

ցեղասպանության փոխադարձ կապն ու դրսևորումը

Հայոց ցեղասպանության օրինակում 88

Հարություն Տ. Մարության

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը,

զարգացումները, մերօրյա միճակը (Մաս 2)..... 103

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 143

CONTENT

ARTICLES

Narine S. Hakobyan <i>The Hamidian Massacres and the Cilician Armenians (1895-1896)</i>	9
Suren A. Manukyan <i>Complicity as Factor for Coherence: On the Issue of Motives of the Kurdish Involvement in the 1894-96 Massacres of Armenians</i>	24
Robert A. Sukiasyan <i>Hasan Celebi: A Station on the Deportation Route of Sebastia</i>	53
Inessa G. Stepanyan <i>On the Issue of the Main Perpetrators of the Armenian Genocide and the Jewish Holocaust</i>	69
Narek M. Poghosyan <i>Relationship Between the Crime Against Humanity and Genocide and its Manifestation on the Example of the Armenian Genocide</i>	88
Harutyun T. Marutyan <i>Formation, Development and Current State of the Armenian Genocide Victims Remembrance Day (Part 2)</i>	103
ABOUT THE AUTHORS	143

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Нарине С. Акопян <i>Гамидовская резня и киликийские армяне (1895-1896).....</i>	<i>9</i>
Сурен А. Манукян <i>Соучастие в преступлении как связующий фактор: о мотивации вовлечения курдов в массовую резню армян в 1894-1896 гг.</i>	<i>24</i>
Роберт А. Сукиасян <i>Хасан Челеби. Об одном перевалочном пункте на пути депортации из провинции Себастья.....</i>	<i>53</i>
Инесса Г. Степанян <i>К вопросу об основных исполнителях Геноцида армян и Еврейского холокоста ..</i>	<i>69</i>
Нарек М. Погосян <i>Взаимосвязь между геноцидом и преступлением против человечества, его проявление на примере Геноцида армян</i>	<i>88</i>
Арутюн Т. Марутян <i>Формирование и трансформация дня памяти жертв Геноцида армян (Часть 2)</i>	<i>103</i>
ОБ АВТОРАХ	<i>143</i>

**ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(1895-1896 թթ.)**

Բանալի քառեր՝ Արևմտյան Հայաստան, համիդյան կոտորածներ, Կիլիկիա, Ադանայի նահանգ, Հալեպի նահանգ, իսլամացում:

Հոդվածը նվիրված է 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ժամանակ Կիլիկիայի շրջանում Օսմանյան կայսրության վարած հակահայկական քաղաքականությանը: Չնայած խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ ժամանակակից հայաստանյան պատմագրությունը հակված է այն տեսակետին, որ Կիլիկիան գերծ է մնացել համիդյան սարսափներից, սակայն այդ դեպքերի մանրագնին հետազոտությունն այլ բան է վկայում: Մույն աշխատանքում հարցը քննարկվում է՝ հիմնվելով երկու կարևոր սկզբունքի վրա: Նախ՝ պատմական «Կիլիկիա» հասկացությունն ընդգրկում է ոչ միայն օսմանյան Ադանայի վիլայեթը, այլ նաև Հալեպի վիլայեթի որոշ շրջաններ: Երկրորդ՝ թուրքերի հակահայկական քաղաքականությունը դիտարկվում է ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի առումով: Հիմնվելով տարբեր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա՝ քննության են առնվում այդ տարիներին կիլիկիահայության դեմ ուղղված հալածանքները, մասնավորապես դրանց կազմակերպման, իրականացման, ինչպես նաև պետությունների ներգրավվածության հարցերը: Սկզբնաղբյուրների մանրամասն և ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում թուրքական իշխանություններն Ադանայի վիլայեթում կողոպուտ և սպանություններ են իրականացրել Հաճընի շրջակա հայկական գյուղերում: Ավելին, դրանք ավելի մեծ ուժգնությամբ են դրսևորվել Հալեպի վիլայեթում՝ Այնթապում, Մարաշում ու դրանց շրջակա գյուղերում: Կոտորածներին ակտիվորեն մասնակցել են տեղական իշխանությունների, կանտնավոր բանակի, ոստիկանական ուժերի ներկայացուցիչները, մուսուլման մոլեռանդ հոգևորականները, բանտերից ազատ արձակված հանցագործները, տեղացի մուսուլմաններից բաղկացած անկանոն ջոկատները և անգամ հարկահավաքները: Տեղի են ունեցել նաև բռնի իսլամացման դեպքեր:

Կիլիկիայում հակահայկական քաղաքականության դրսևորումների բազմաթիվ օրինակների քննարկումը որոշ մտահոգությունների տեղիք է տալիս այդ դեպքերի վերաբերյալ ավանդական մեկնաբանությունների հետ կապված: Այս հոդվածը փաստում է, որ չնայած Ադանա քաղաքում և որոշ շրջաններում հակահայկական քաղաքականության համեմատաբար մեղմ դրսևորումներին՝ Կիլիկիայում համիդյան քաղաքականությունը ինչպես հետապնդած նպատակներով, այնպես էլ իրագործման մեթոդներով նույնական էր 1895-1896 թթ. ամբողջ Օսմանյան կայսրությունում տարվող հակահայկական քաղաքականությանը:

Օսմանյան տիրապետության տակ հայտնվելու ժամանակներից սկսած՝ պատմական Կիլիկիան վարչական տարատեսակ փոփոխությունների է ենթարկվել: XIX դարի 90-ականներին այն ընդգրկում էր Ադանայի նահանգը (վիլայեթ) և Հալեպի նահանգի

մի մասը (Մարաշի և Այնթապի շրջանները)¹: Կիլիկիայի մեծագույն մասը զբաղեցնում էր Ադանայի նահանգը, որը բաղկացած էր Ադանայի, Մերսինի, Իչելի ու Պայասի սանջակներից, 15 կազաններից և 1.632 գյուղերից²: Իսկ Հալեպի վիլայեթը կազմված էր Հալեպի, Մարաշի, Ուրֆայի սանջակներից, 26 կազաններից ու 3.450 գյուղերից³: Թեև Ուրֆան դուրս էր Կիլիկիայի սահմաններից, սակայն Կիլիկիային բավական մոտ գտնվելը և ընդհանուր պատմական զարգացումը հաշվի առնելով՝ Ուրֆայի դեպքերը ևս քննարկում ենք Կիլիկիայում կատարվող իրադարձությունների համատեքստում: Ինչ վերաբերում է մինչև կոտորածները Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակին, ապա պատմաբան Գրիգոր Գալուստյանը նշում է. «Կիլիկիոյ բնակչութիւնը Սիսուանի մէջ 1885-ին կը տրուի իբրեւ 15.000 տուն կամ 75.000 հոգի: Այս թիւը հաւանաբար Հայոց թիւն էր»⁴: Ըստ որոշ տվյալների Ադանայի վիլայեթում ապրում է 403.440 բնակիչ, որից 168.990-ը քրիստոնյաներ են, որոնց մեջ առաջին տեղը թվաքանակով զբաղեցնում են հայերը՝ 97.450⁵: Մեկ այլ աղբյուրում տրված է հայկական վեց նահանգների ազգաբնակչության համեմատական ցուցակը, որը, ինչպես նշվում է թերթում, 1880 թ. վեց պետությունների կողմից ներկայացվել է Բարձր դռանը: Այդ ցուցակում ընդգրկված է նաև Հալեպի նահանգը, որի համաձայն՝ միայն Հալեպի նահանգի հայության թիվը կազմում էր 80.000⁶:

Համիդյան կոտորածները սկսվելուց քիչ անց դրա նկատմամբ սարսափը տարածվեց նաև Կիլիկիայում: Թերևս տեղին է մեջբերել Գևորգ Սարաֆյանի գրքից էհետջի Ն. Մանուկյանի դիտարկումը, որի համաձայն. «Մահուան ու ջարդի այդ ուրուականը, ամբողջ Տաճկահայաստանի քաղաք ու գիւղերը տարածունիլ էտք, սրարշաւ հասած էր Կիլիկեան Հայաստանի հայաշատ քաղաքներու եւ գիւղերու դռները»⁷: Այս առումով

1 Կիլիկիայի վարչական բաժանման մասին մանրամասն տե՛ս Համբարձում Առաքելեան, *Ձէյթուն, տրեղագրական, ազգագրական եւ վարչական* (Թիֆլիզ, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1896), 34:

2 Տե՛ս Kemal H. Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 210-211; «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքի համաձայն ևս՝ «Ադանայի վիլայեթը վարչականապէս բաժանուած է 4 սանջակի կամ գավառի (Ադանայի, Իչ-իլի, Քոզանի և Ջերեյի-Բերեթէթի)», տե՛ս *Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ*, Մատենադարան «Արաքս»-ի (Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894), 38, իսկ Գալուստեանի աշխատության մեջ նշվում է. «Ատանայի նահանգը կը պարունակէ հինգ գաւառներ: 1. Ատանա, որ ունի Գարա Իսալու, եւ Համիտիլէ գաւառակները, 2. Մերսին, որ ունի Տարսոն գաւառակը, 3. Ճէպլէի Պերեթէթ, որ ունի Իպահիլէ, Բայաս, Օսմանիլէ, Խասսա եւ Պահճէ գաւառակները, 4. Գօզան-Սիս, որ ունի Գարս-իւլ-Գատրիէ, Հաճին եւ Պիլան-քէյ (Ֆէթէ) գաւառակները, 5. Իչիլի կամ Սելեւկիա (Սիլիֆքէ), որ ունի Արմենակ, Մուրթ, Կիլիսար եւ Անամուր գաւառակները», տե՛ս Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ձէյթուն* (Ե. Ե. Լոնկ Այլընտ Սիթի, «Կոչնակ», 1988), 16:

3 Տե՛ս Karpat, *Ottoman Population 1830-1914*, 210-211; Առաքելեան, *Ձէյթուն*, 35-36; Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 31: 1910-1913 թթ. վիլայեթից անջատվում և անկախ սանջակներ են դառնում նախ՝ Ուրֆան, ապա՝ Մարաշը: Տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (New York and London: New York University Press, 1983), 30:

4 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 16:

5 *Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ*, 19:

6 «Հայկական վեց նահանգների ազգաբնակչութեան համեմատական ցուցակը», *Մշակ* (Թիֆլիս), 10 լուսնիսի 1895, թիւ 66, 3:

7 Գէորգ Սարաֆեան, *Պարսկութիւն Անթապի հայոց*, Ա հատոր (Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1953), 606:

հետաքրքիր է հասկանալ, թե ինչ էր կատարվում Կիլիկիայում այդ նույն ժամանակ:

Հալեպի վիլայեթում սպանություններ են տեղի ունեցել Հալեպում, Այնթապում⁸, Մարաշում⁹, Ուրֆայում¹⁰ ու դրանց շրջակա գյուղերում, Բիրեջիկում¹¹, ինչպես նաև Քիլիսում¹²: Իսկ Ադանայի վիլայեթում կողոպուտ և սպանություններ են տեղի ունեցել Հաճընի շրջակա հայկական գյուղերից Բանլըզում, Քեոթինում¹³:

Ընդհանուր առմամբ Կիլիկիայի՝ Հալեպ և Ադանա նահանգների վերոնշյալ բնակավայրերում սպանություններն ու ավերածությունները տեղի են ունեցել 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում:

8 Այնթապում կոտորածը տեղի է ունեցել 1895 թ. նոյեմբերի 6-ին: Տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Ասորեսի հայոց*, 901:

9 Մարաշի կոտորածը տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին՝ Այնթապի կոտորածից տասներեք օր հետո, չնայած այնտեղ դեռևս հոկտեմբերի վերջերին էին սկսվել հուզումները, որոնց ընթացքում սպանվել էր 50 հոգի, և վիրավորվել 300-ը: Տե՛ս Edwin Bliss, *Turkey and the Armenian Atrocities: A Reign of Terror. From Tartar Huts to Constantinople Palaces. Centuries of Oppression-Moslem and Christian-Sultan and Patriarch-Broken Pledges Followed by Massacre and Outrage* (New York: Edgewood Publishing, Hibbard & Young, 1896, Reprinted, Fresno: Meshag Publishing, 1982), 457.

10 Ուրֆայում թուրքերի կողմից առաջին հարձակումը տեղի ունեցավ 1895 թ. հոկտեմբերին: Քանի որ հայկական թաղամասն առանձնացված էր ու գտնվում էր բլրի վրա, ուստի հայերին հաջողվեց դիմադրել և չթողնել թուրքերին մտնել հայկական թաղամաս: Չնայած դրան՝ թուրքերը կոտորեցին շուկայի մոտակայքում և թուրքական թաղամասում գտնվող մի շարք հայերի: Այնուհետև տեսնելով, որ հայերի դիմադրությունը հնարավոր չէ կոտրել, թուրքական կառավարությունը դիմեց խորամանկության՝ հայտարարելով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերը և թուրքերը լցված են վրեժխնդրությամբ միմյանց նկատմամբ, անհրաժեշտ է զինաթափել երկու կողմերին՝ հետագա բախումներից և արյունահեղություններից խուսափելու համար: Այս համոզվելով, որ հայերն անզեն են և այլևս չեն կարող դիմադրել, անցան հարձակման: Մանրամասն տե՛ս Bedros Der Bedrossian, *Autobiography and Recollections*, trans. Tamar Der-Ohannessian, ed. Vahan Janjigian (Philadelphia, 2005), 26-28; Նիկողոս Գազանճեան, *Յուշագրություն Եդեսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսանարարն եւ եղեռնը* (Երեւան, «Չանգակ-97», 2004), 37-63:

11 Բիրեջիկում կոտորածը տեղի էր ունեցել 1896 թ. հունվարի 1-ին: Տե՛ս Augustine Williams and M. S. Gabrielian, *Bleeding Armenia: It's History of Horrors* (Chicago: Publishers' Union, 1896), 395-396.

12 1895 թ. նոյեմբերի 6-ին տեղի ունեցավ Այնթապի կոտորածը: Այդ նույն ժամանակ թուրքերը պատրաստվում էին հարձակվելու Քիլիսի վրա, սակայն անհայտ պատճառներով կոտորածը հետաձգվեց: Քիլիսում հայերի կոտորածը տեղի ունեցավ 1896 թ. մարտի 8-ին: Տե՛ս Ալիշան Պայրամեան, *Կիլիզա. հայկական Քիլիս, Պատմական Ուրուագիծ (վաղ միջնադարէն մինչև 1922 թ.)* (Երևան, «Չանգակ-97», 2001), 184:

13 Այս գյուղերի բնակչությունը, պաշարվելով 5.000 մուսուլմանների և չերքեզների կողմից, մասամբ կոտորվում է, մասամբ՝ կրոնափոխ լինում, իսկ որոշ մասին էլ հաջողվում է ապաստան գտնել Հաճընում: Տե՛ս Յակոբ Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիղերը* (Lou Անճէլըս, Քալիֆօրնիա, 1942), 68-72: Քրդերի կողմից հարձակման է ենթարկվել նաև Շահր քաղաքը, որի 800 բնակիչներին նույնպես հաջողվում է փախչել Հաճըն: Տե՛ս Johannes Lepsius, *Armenia and Europe: An Indictment*, trans. Harris Rendel (London: Hodder and Stoughton, 1897), 313.

Հայերի դեմ ուղղված հալածանքների կազմակերպվածության հարցը և տարբեր խմբերի մասնակցությունը դրանց

Համիդյան կոտորածների նախապես կազմակերպված լինելու մասին Լեփսիուսն իր «Հայաստանը և Եվրոպան» գրքի նախաբանում գրում է. «Այս տարվա մայիսին՝ Անատոլիա¹⁴ և Սիրիա կատարած իմ ճամփորդության ընթացքում, ես չհանդիպեցի մի մուսուլմանի, ով վերջին մի քանի ամիսներին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված կոտորածի և թալանի վերաբերյալ իր դատողություններում չգար այն ակնհայտ եզրակացության, որ այդ ամենը կազմակերպած էր կառավարության կողմից և արտահայտում էր սուլթանի կամքը»¹⁵:

Համիդյան կոտորածների վերաբերյալ Լեփսիուսի ընդհանրական դիտարկումը կիրառելի է նաև Կիլիկիայի պարագայում: Կիլիկիայում դեպքերի ուսումնասիրությունը հաստատում է դրանում պետության ներգրավվածությունը, ավելին՝ հենց վերջինիս կողմից դրա կազմակերպված լինելը¹⁶:

«Արմենիա» թերթի Կիլիկիայի թղթակիցը ևս նշում է. «Այս կողմեր խղճամիտ թիրքեր այժմ բաց է ի բաց կը յայտնեն որ այս ամեն աղիտից, սարսափելի ջարդերու և ատերմանց ու ասարառութեանց բուն իսկ թելադրիչը Սուլթան Համիտն էր, այն 19-րդ դարու սուկալի դահիճն քրիստոնեայ Հայոց»¹⁷: Կոտորածներին ակտիվորեն մասնակցել են տեղական իշխանությունների, կանոնավոր բանակի, ոստիկանական ուժերի ներկայացուցիչները, մուսուլման մոլեռանդ հոգևորականները, բանտերից ազատ արձակված հանցագործները, տեղացի մուսուլմաններից բաղկացած անկանոն ջոկատները և անգամ հարկահավաքները: Սպանություններին մասնակցել են նաև թուրք կանայք, ովքեր քաջալերում էին իրենց տղամարդկանց, ինչպես նաև սպանվողների ձայնը խեղդելու համար երգում էին տոնական երգեր¹⁸:

Կոտորածների իրականացման կարգը բոլոր վայրերում գրեթե նույնն էր: Զինված ամբոխը իշխանությունների աջակցությամբ հանկարծակի հարձակվում է հայերի վրա, կողոպտում, այնուհետև «ոչխարի պես կոտորում»¹⁹: Խոշոր բնակավայրերում ջարդը տևել է երեք օր, իսկ փոքր բնակավայրերում՝ մեկ օր: Այսպես, Տիգրան Յ.

14 Անատոլիան տարածվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք, տե՛ս *Հայ ժողովրդի պայքարություն*, հատոր I (Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, 1971), 9:

15 Lepsius, *Armenia and Europe*, 15.

16 Կիլիկիայում տեղի ունեցածը համիդյան կոտորածների անբաժան մասն է: Համիդյան կոտորածներն իրենց հերթին ազգային հարցում Արդուլ Համիդի որդեգրած հետադիմական քաղաքականության հետևանքն էին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացված Հայոց ցեղասպանության հետ դրա առնչության մասին պատմագրության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Մեր տեսակետն այս հարցում այն է, որ համիդյան կոտորածները համարել Հայոց ցեղասպանության սկիզբ այնքան էլ համոզիչ չէ: Համիդյան կոտորածների վերաբերյալ մեր տեսական եզրակացություններն առավել մանրամասն կներկայացվեն հատուկ տեսական հարցերին նվիրված մեկ այլ հոդվածում, ինչպես նաև մեր առենախոսության մեջ:

17 Զարեհ, «Կիլիկիա», *Արմենիա* (Մարսել), 20 յունուարի /1 փետրուարի 1896, թիվ 52, 2:

18 Lepsius, *Armenia and Europe*, 21.

19 Նույն տեղում, 15:

Տարագճյանը նշում է, որ Կ.Պոլսից Բիրեջիկի և այլ հայաբնակ քաղաքների քաղաքապետներին հեռագիր է ուղարկվել հետևյալ բովանդակությամբ. «Քսանչորս ժամ ջարդելն ետք խաղաղութիւն ըրէք»²⁰: Բազմաթիվ վայրերում (Այնթապ, Բիրեջիկ, Ուրֆա) կառավարությունը զինաթափում էր հայերին՝ զինելով մուսուլման բնակչությանը²¹:

Մարաշում իրականացված կոտորածին օսմանյան բանակի արաբական զորքը ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունեցել, այլ նաև ղեկավարել է հարձակումը: Այս մասին է փաստում ամերիկացի մի միսիոներ, ով նշում է, որ Մարաշի վրա հարձակումը գլխավորել է օսմանյան բանակի արաբական զորքը²²: Կոտորածին օսմանյան բանակի արաբական զորքի մասնակցության հանգամանքի մասին է փաստում Նատմի Թ-ոփալյանը, ում վկայությամբ. «Մարաշի Ֆոտնուս ավանում հարձակումը սկսել էին օսմանյան բանակի արաբական զորքերը: Մյուս զորաբաժանումները քաշվել էին մոտակա բլուրները: Իսկ զինվորներին հետևում էր տեղացի մուսուլմաններից բաղկացած ամբոխը, որոնց հիմնական նպատակը թալանելն էր»²³: Այնթապում կանոնավոր բանակը ևս իր մասնակցությունն է ունեցել կոտորածին՝ սկսելով և ավարտելով այն շեփորի ազդանշանի ներքո²⁴: Մինչդեռ թուրքական կառավարությունը կանոնավոր բանակի առկայությունը, ինչպես ժամանակին համիդիե գնդի ստեղծումը, բացատրում էր հայերի պաշտպանության անհրաժեշտության հանգամանքով:

Քիլիսում կայմակամն ու պետական պատասխանատու պաշտոն գրադեցնող այլ մարդիկ ջարդի իրականացման գործողությունները նախապատրաստելուց հետո տարբեր պատրվակներով մեկնել էին քաղաքից՝ ջարդի պատասխանատվությունն իրենց վրա չվերցնելու համար²⁵: Անտիոքի Քեսաբ գյուղում ևս կանոնավոր զորքը շրջապատեց հայերին և ստիպեց զինաթափ լինել՝ հակառակ դեպքում սպառնալով սրի քաշել²⁶:

Կոտորածներին քրդական ջոկատների ակտիվ ներգրավվածության մասին հիշատակումներ կան միսիոներների և ականատես-վերապրողների գրեթե բոլոր վկայություններում: Օրինակ՝ թուրքերի և քրդերի կողմից իրականացված վայրագությունների մասին պատկերացում կազմելու համար մեջբերենք ականատես-վերապրողի հետևյալ տողերը. «Տաճիկ խուժանը եւ կիրթ ու մարգուած զինուորը մարտիններով, դաշոյններով, սրեալ երկաթեայ տապար եւ երկաթեայ ծոածայր պաստօններով զարդարուած կը յարձակէին հայոց տուներու վրայ, կանանց մեռեալներուն և վիրա-

20 Տե՛ս Տիգրան Յ. Տարագճեան, *Հօրս յիշատակները* (Թորոնթօ, 1995), 10:

21 George H. Filian, *Armenia and Her People: or, The Story of Armenia by an Armenian* (Hartford, CT: American Publishing Co., 1896), 287.

22 Մակրամասն տե՛ս Stanley E. Kerr, *Personal Experiences with American Near East Relief, 1919-1922* (Albany: State University of New York Press), 1973, 5.

23 Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny* (Massachusetts: Baika, 1986), 5.

24 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 478.

25 Համբարձում Պերպերեան եւ Խորէն Աւագ քնյ. Ներսէսեան, *Յուշամարեան Քիլիսի հայոց (սկիզբէն մինչեւ 1968 թուականը)* (Պէյրոս, «Սեան», 1969), 70-71:

26 «Կոտորածներ եւ անկարգութիւններ Թիւրքիայի մէջ», *Արմէնիա* (Մարսել), 29 նոյեմբերի/11 դեկտեմբերի 1895, թիվ 38, 3:

տրեալներու հոնչինը եւ աղաղակները, մանկաց եւ տղայոց սարսափը երկինք եւ երկիր կը դողացնէին»²⁷:

Կոտորածներին մասնակցել են նաև մուսուլման հոգևորականները: Դ-ա են փաստում բազմաթիվ վկայություններ: Այսպես, օրինակ, Հալեպում Պորտուգալիայի հյուպատոսը Կ.Պոլսում Իտալիայի դեսպանին գրում է, որ Ուրֆայից եկած մի քանի անձանց ցուցմունքների համաձայն՝ Ուրֆայում կոտորածը սկսել է մոլլա Սեիդ Ահմեդը՝ մորթելով մեկ հայի՝ ծիսական ռուսնավորի տողեր արտասանելով, որը մուսուլմանները կարդում են մատաղ անելիս: Դեսպանը նաև նշում է, որ այդ նույն Սեիդ Ահմեդը դեռևս դեկտեմբերի 26-ին Կալա Բուսնայի հրապարակում հավաքել է երևելի մուսուլմանների և կոչ արել կոտորել, բնաջնջել բոլոր հայերին²⁸: Այն, որ կոտորածի մեկնարկը տվել է կրոնական Սեիդ Իտալիը, փաստում է նաև Ուրֆայի ջարդերի ակնաստես-վերապրող Նիկողոս Գազանճյանը՝ նշելով, որ վաղ առավոտյան խուժանը հավաքվել էր Ուլու Շամի մզկիթում, և Սեիդ Իտալի կրոնականն արտասանում էր իր գրգռիչ ճառը. «Օ՛ն, Գուրանը այսպես կը հրամայէ. «Ով որ կեատուր մը մեռցնէ, անիկա արքայութեան մէջ 40 յաւերժահարսեր պիտի ունենայ՝ իբրև վարձատրութիւն իր բարի գործին»: Ձեր փափաքը կատարուած է: Մեր սուլթանը ազատ կը ձգէ ձեզ, որ այս անօրէններուն հաշիւը մաքրէք ...»²⁹:

Իսկ Ջելալ անունով շէյխը Ուրֆայում հանուն իր կրոնի միայնակ մորթում է 100 մանկահասակ տղա երեխայի³⁰:

Հայերի բռնի իսլամացման դեպքեր

Բռնի իսլամացումը ևս հակահայկական քաղաքականության դրսևորումներից էր: Բիրեջիկում իրենց հարազատների դիակների մոտ և սպառնալիքի ներքո իսլամ ընդունեց 4.300 հոգի³¹, իսկ հրաժարվողներին սպանեցին: Այս ամենի հետևանքով Բիրեջիկում ոչ մի քրիստոնյա չմնաց, իսկ եկեղեցին վերածվեց մզկիթի³²: Ուրֆայում իսլամացվել է 500³³, Ադանայում և նրա շրջակայքում՝ 900 հայ³⁴: Այսպես, Ուրֆայում տեղի ունեցածի մասին մասնավորապես կարդում ենք. «...Արինն ու կոտորածը կը սկսին առանց արգելքի: Առջի օրուան պէս՝ տուները կը մտնեն եւ, երբ կը հանդիպին ներքնասենեակները պահուրտածներու, կ'ըսեն. «Իսլամացի՛ր, բան չենք ըներ»: Բայց իսլամութիւն ընդունի կամ ոչ, կը պառկեցնեն եւ սուրով ու տապարներով մարմինը կտոր կտոր կ'ը-

27 Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի յուշերը* (Երևան, «Աստարես», 2013), 193:

28 Մկրտիչ Ներսիսյան, Ռուբեն Սահակյան, *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և կրթության ժողովածու* (Երևան, «Հայաստան», 1991), 147:

29 Գազանճեան, *Յուշագրութիւն Եղևկոյ 1895-ի ջարդէն*, 56:

30 Hans-Lukas Kieser, "Ottoman Urfa and Its Missionary Witnesses," in *Armenian Tigranaker/Diarbekir and Edessa/Urfa*, ed. Richard G. Hovhannisian (Costa Mesa, California: Mazda Publishers, 2006), 406.

31 Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ, Отдѣль II (Москва, 1898), 120.

32 Մանրամասն տե՛ս Filian, *Armenia and Her People*, 292-294:

33 Братская помощь, 120.

34 Նույն տեղում:

նեն: Եթե պատահի, որ խուժանը չկարենայ տուն մտնել եւ մտածէ, որ ներսը մարդ կայ՝ տունը կրակի կու տայ ու կ'անցնի»³⁵:

Բռնի իսլամացման հարկադրանքը չընդունելը սովորաբար ավարտվում էր մահով: Սակայն պետք է նշել, որ եղել են դեպքեր, երբ իրենց գոյությունը պահպանելու համար հայերն իրենք են առաջարկել կրոնափոխ լինել: Այդպիսի դեպքեր են գրանցվել, օրինակ՝ Ջիրհում³⁶ և Էհնեշում³⁷:

Վայրագությունների այլ ձևեր

Ուշագրավ է, որ Կիլիկիայում հակահայկական քաղաքականությունն ուղեկցվել է նաև հայ երևելիների ձերբակալություններով: Այսպես, հայ մեծահարուստների և այլ ազդեցիկ մարդկանց ձերբակալությունների դեպքեր են գրանցվել Հալեպում, Այնթապում³⁸, Մարաշում, Քիլիսում³⁹: Վայրագություններ են արվել նաև թույլ և անպաշտպան խմբերի՝ երեխաների, աղջիկների և կանանց նկատմամբ: Բռնաբարությունների ձևերից մեկն էլ մանկահասակ աղջիկների փորը ճեղքելն էր⁴⁰: Մարաշում գրանցվել է հայ կանանց և աղջիկների հրապարակային անարգման դեպք: Անթիվ երեխաներ մահացան սովից, և նրանց մարմինները հոշոտեցին շները⁴¹: Ուրֆայում առաջին հարձակման ժամանակ թուրքերն այլանդակեցին բազմաթիվ կանանց: Կանանցից խլելով նորածին երեխաներին՝ նետում էին գետը⁴²: Ալբիստանի Յարփուզ, Ինդերունի Կոկիսոն շրջաններում ևս կանանց և աղջիկներին անարգեցին և անպատվեցին, շատերին սպանեցին կամ ստիպեցին կրոնափոխ լինել, իսկ գեղեցիկ կանանց և աղջիկներին Ալբիստանի և Յարփուզի բեյերն ու չերքեզների ղեկավարը որպես ավար կիսեցին միմյանց միջև և տարան իրենց հարեմները⁴³:

35 Գազանճեան, *Յուշագրություն Եդեսիոյ 1895-ի ջարդէն*, 59:

36 Կոտորածներից մի քանի տարի հետո հայերը վերադառնում են իրենց դավանանքին: Մանրամասն տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 604:

37 Էհնեշում հայերը (գյուղի հայ բնակչության թիվը մոտավորապես 400 էր) հասկանալով, որ իրենց գյուղում ևս կոտորածն անխուսափելի է, որոշում են դիմել ինքնապաշտպանության, բայց գիտակցելով այդ որոշման իրականացման անհնարիությունը՝ հետևում են Ջիրհնի օրինակին՝ որոշելով դավանափոխ լինել: Նրանք խնդրագիր են ուղարկում Ուրֆայի գավառապետին, ով էլ իր հերթին ընդառաջում է էհնեշցիների խնդրանքին և թուրք զինվորներ ուղարկում, որպեսզի պաշտպանեն նրանց: Սակայն մինչ այդ թուրքերն ու քրդերը թալանել էին տները, սպանել հայ երիտասարդների: Ինչպես նշվում է Գևորգ Սարաֆյանի գրքում. «Ահա այդ նսեմացնող միջոցով Էհնեշի հայությունը քիչ զոհով կ'ազատի 1895-ի ջարդերէն» (տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 605-608): Բայց հարկ է նշել, որ հետագայում՝ 1909 թ. կոտորածի ժամանակ, էհնեշցիք իրենց համար դիմադրության՝ ինքնապաշտպանության շտրիկ վերկվեցին կոտորածից (մանրամասն տե՛ս Սարաֆեան, *Պատմություն Անթեպի հայոց*, 605-618):

38 Հայք (Նիո Եորթ), 1 մայիսի 1896, թիւ 5, 71:

39 Պերպլերեան, Ներսէսեան, *Յուշանարեան Քիլիսի հայոց*, 87:

40 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 749:

41 Lepsius, *Armenia and Europe*, 277.

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում:

Թուրքական բանակը քրդերի և չերքեզների ուղեկցությամբ թալանեց և կողոպտեց նաև Փալասի երեք հայկական գյուղերը, ավերեց ագարակները, ժողովրդի մի մասը անանարդկային կտտանքներից սպանվեց, իսկ մյուս մասը հազիվ փախուստի դիմեց դեպի Չոք-Մարզվան⁴⁴:

Միս քաղաքում թուրքերը հայերից մեկի երեսը մուր են քսում, ապա նստեցնում ավանակի վրա և քաղաքում պտտեցնում, այնուհետև այնքան են ծեծում, որ հասցնում են կիսամեռ վիճակի⁴⁵: Չոք-Մարզվանի Օգերլի հայաբնակ գյուղում տեղացի թուրքերը հարձակվում են հայերի վրա, գնդակահարում երկու հայի, ևս երեքի սպանում դաշույնով և փայտով: Ինչպես նշում է թղթակիցը, այս դեպքը տեղի էր ունեցել կառավարության պաշտոնյաների ներկայությամբ⁴⁶: Պելենում մեծերի հրամանով մուսուլման տղաները ծեծում են հայ դպրոցական երեխաների⁴⁷:

Թուրքերը նաև հպարտանում էին հայերի հանդեպ իրենց կատարած վայրագություններով: Այսպես, ամերիկացի մի միսիոներ, ով չի նշում իր անունը, մեջբերում է մի թուրքի խոսք, ով պարծենում էր, որ սպանել է 147 հայի⁴⁸:

Ֆրանսիացի դիվանագետների գեկուցագրերը պարզորոշ վկայում են, որ լայն տարածում էր գտել նաև ստրկավաճառությունը: Այդ հարցի շուրջ 1896 թ. նոյեմբերի 10-ին դեսպան Կամբոնին հավաստի տեղեկություններ է հաղորդում Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս Պոնյոնը. «Ես հենց նոր տեղեկացա, որ Դիարբեքիբում, Ուրֆայում և այն վայրերում, որտեղ կոտորածներ են արձանագրվել, առևանգված երիտասարդ հայ աղջիկները մի քանի ամսից ի վեր գրեթե հրապարակայնորեն վաճառվում են Հալեպի Բար-Ներաբի թաղամասում: Անհնար է նշել վաճառված երիտասարդ աղջիկների սույնիսկ մոտավոր թիվը... Ի դեպ, գրեթե հավաստի է, որ իշխանությունը, որին հայտնի է քրիստոնյա ստրուկների վաճառքը, ոչինչ չի անում դրան ընդդիմանալու համար»⁴⁹:

Դրա հետ մեկտեղ իշխանությունները, մի կողմից կազմակերպում էին այս վայրագությունները, մյուս կողմից աշխատում էին խնամքով թաքցնել դրանք, ինչպես նաև պատասխանատվությունը բարդել հայերի վրա: Այսպես, օրինակ՝ Ուրֆայում և շատ այլ վայրերում հայերին ստիպեցին հոչակագիր ստորագրել և ջարդերի պատասխանատվությունը վերցնել իրենց վրա⁵⁰: Բացի դրանից, թուրքական կառավարությունն ամեն կերպ նվազեցնում էր զոհերի թիվը, օրինակ՝ Մարաշում 1.393-ի փոխարեն ներկայացնում էր 30, Այնթապում 1.000-ի փոխարեն՝ 100⁵¹:

44 Անահ, «Չոք-Մարզուանի հերոսական կռիւները», *Հւշակ* (Լօնդօն), 15 յունվարի 1896, թիւ 1, 3:

45 Աներկիւղ, «Քաղաքական վերջին դէպքերը», *Հւշակ*, 1 դեկտեմբերի 1895, թիւ 22, 180:

46 *Նույն տեղում*:

47 *Նույն տեղում*:

48 St' u Kerr, *Personal Experiences*, 5:

49 St' u Վարուժան Պողոսյան, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) (Երևան, «Գիտություն», 2005), 34:

50 Kieser, "Ottoman Urfa and its Missionary Witnesses," 405.

51 Lepsius, *Armenia and Europe*, 69.

Մարդկային, նյութական և մշակութային կորուստներ

Համիդյան կոտորածների տարիներին Կիլիկիայի հայաբնակ գավառները, քաղաքներն ու գյուղերն ունեցան նյութական, ինչպես նաև մշակութային անդառնալի կորուստներ: Զգալի հարված հասցվեց հայկական եկեղեցիներին, վանքերին ու կրթական հաստատություններին: Այսպես, Նաոմի Թոփալյանի վկայությունը տեղեկություն է տալիս այն մասին, թե ինչպես էին զինվորների կողմից կրակի մատնվել Մարաշում գտնվող աղջիկների քոլեջը և Մարաշի հոգևոր ճեմարանը⁵²: Մեկ այլ վկայությունից՝ Տեր Ղևոնդ քահանայի, պարզ է դառնում, որ այրել են Մարաշում գտնվող Ս. Գևորգ եկեղեցին իր շրջակա բոլոր տներով, Սուրբ Կարապետ եկեղեցին ամբողջությամբ, Սուրբ Սարգիս եկեղեցին⁵³: Նույն աղբյուրն ահա այսպես է նկարագրում տեղի ունեցածը. «...Երբ մեր բնակարանին տանիքն էի, տեսայ արգ Պաշը ամերիկեան միսիոնարանց Աստուածաբանական վարժարանը կ'այրէր... Տեսարանը ահռելի էր, խեղճ հայերուն տուները կը մտնէին, ինչ որ կայ տան մէջ, կահ կարասի եւ գոյք, ամէնը կը կողոպտէին, կը յափշտակէին, տան տէրը կը սպաննէին, կը մեռցնէին, կը խողխողէին: Աշխարհիս ընդհանուր ազգաց տարեգրութեան եւ պատմութեան մէջ երբեք նախընթաց չունեցող ոճրագործութիւն մը: Ընել տուողն ալ ոչ թէ վայրագ եւ խաժամով ամբոխը, այլ Օսմանեան անխիղճ եւ անաստուած տէրութիւնն էր»⁵⁴:

Եկեղեցիների ավերումը բազմաթիվ վայրերում զուգակցվել է հայության ոչնչացմամբ: Այսպես, օրինակ՝ Ուրֆայում մոտ 3.000 հայեր ապաստան գտան եկեղեցում⁵⁵: Եվ չնայած նրանց դիմադրությանը՝ մուսուլման խուժանին հաջողվեց կրակի մատնել եկեղեցին և այնտեղ ապաստանած բնակչությանը⁵⁶: Բիրեչիկում թուրքերը հայոց եկեղեցին թալանելուց, կողոպտելուց և ամեն ինչ ջարդուփշուր անելուց հետո սպանում են վարդապետին, այնուհետև դիակը եկեղեցու տանիքից ցած նետում⁵⁷: Մուսուլմաններից կազմված ամբոխը հարձակվել է նաև Աստիոքի հայկական եկեղեցու վրա⁵⁸: Մերսինում Ֆրանսիայի հյուպատոս Սումմարիպայի՝ Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին հաղորդած տեղեկությունից իմանում ենք, որ «Միսիսում զինված բնակիչները, որոնց հետևել են բնակավայրի զինվորները և զափթիե-

52 Տե՛ս Getsoyan Topalian, *Dust to Destiny*, 5:

53 Տե՛ս Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տէր Ղևոնդ քահանայի յուշերը*, 202:

54 *Նույն տեղում*, 192: Այս վկայության մեջ բավական մանրամասն են ներկայացվում ինչպես մշակութային, այնպես էլ նյութական կորուստները:

55 Տե՛ս Արամ Սահակեան, *Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները* (Պէյրութ, «Ատլաս», 1955), 411-412:

56 Տե՛ս Գազանճեան, *Յուշագրութիւն Եղևսիոյ 1895-ի ջարդէն*, 59-62:

57 Տե՛ս Տարագճեան, *Հօրս յիշատակները*, 12:

58 *Armenians at the Twilight of the Ottoman Era, News reports from the International Press*, compiled and ed. Vosgan Mekhitarian, Vahan Ohanian. Volume 1 (New York: Genocide Documentation & Research Center, 2011), 258.

ները, մուտք են գործել հայկական եկեղեցի, ոտնահարել սուրբ գրքերը, պղծել սուրբ սափորները, հանել քահանայի գլխարկը, որը լցրել են աղբով և մերկացրել նրա կնոջը»⁵⁹: Իսկ Ենիջե-Կալեում կրակի մատնեցին անգամ ֆրանցիսկյանների վանքը⁶⁰: Միս քաղաքում էլ այրեցին հայերին պատկանող ագարակները⁶¹:

Որոշ վայրերում կոտորածը, կողոպուտն ու թալանը վերջացնելուց հետո մուսուլման ամբոխը կրակի էր մատնում այն ամենը, ինչ չէին կարողանում իրենց հետ տանել: Այսպես, թուրքերն ամբողջությամբ կրակի են մատնում Էնգերլի և Օջալի գյուղերը: Իսկ Նաջարի գյուղում կողոպուտի ենթարկվեց հայերին պատկանող 75 տուն: Եվ այդ ամենը տեղի է ունենում կանոնավոր բանակի ներկայությամբ⁶²:

«Դրոշակ» թերթի թղթակիցը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Այնթապում թուրքերի կողմից իրականացված թալանի և ավերածությունների մասին. «... 10.000-ի չափ պաշիպոզուկներ շրջապատած էին Պապիկեանց տունը (քաղաքին նշանաւոր հայ ընտանիքն է), որոնց առաջնորդներն էին Պէյի օղան գտնուած մարդիկը: 600-ի չափ մարդիկ, բոլորը զինուած նաճախներով, կը կոտորէին Ալայ Պէյի թաղին դռները: 800-ի չափ մարդիկ ալ Տափախանէի թաղը պաշարեր էին, որոնք նույնպէս զինուած էին ատրճանակներով ու կացիներով: Չորս ժամուան մէջ ասարտեցին այս թաղերը, մէջը գտնուած հայերն ալ սպաննեցին: Պապիկեանց տունը այրեցին, Պապիկեան Աբրահամ երիտասարդն ալ մէջը հրոյ ճարակ ընելով»⁶³: Ինչպես նշում է ակննատես-վերապրող Մելքոն Տեր Մելքոնյանը. «Հայը տարիներ շարունակ կը տքնէր, կը չարչարուէր եւ իր արդար աշխատանքին փոխարէն խնայողութիւն մը կ'ապահովէր իր ապագային համար: Եվ ահա, օր մը, թուրքը կուգար եւ կը տանէր տարիներու տքնաջան աշխատանքին պտուղը...»⁶⁴:

Ինչպես նշում է «Արմէնիա» թերթի՝ Կիլիկիայի թղթակիցը. «Կիլիկիոյ մէջ չմնաց, ո՛չ մէկ քաղաք, ո՛չ մէկ գիւղ որ թալուած ու այրուած չըլլայ. Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Մալաթիա, Կիւրին, Էլպիստան իրենց շրջանակներով աներեցան բոլորովին...»⁶⁵:

Համիդյան կոտորածների հետևանքով Կիլիկիայում հայ գոհերի ճշգրիտ թվաքանակը դժվար է որոշել: Այդուհանդերձ, պահպանված տեղեկությունների համաձայն՝ մարդկային կորուստների պատկերը հետևյալն է. Մարաշում՝ մոտավորապես

59 Տե՛ս Պողոսյան, *Հայոց ցեղասպանության առաջին փուլը*, 30:

60 «Կոտորածներ եւ թշուառութիւններ Թիւրքիաի մէջ», *Արմէնիա*, 9 դեկտեմբերի/21 դեկտեմբերի 1895, թիւ 41, 3:

61 «Կիլիկիա», *Արմէնիա*, 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

62 Warner, Gabrielian, *Bleeding Armenia*, 389.

63 Տե՛ս Գարօ, «Կոտորածներ, Նամակներ Կիլիկիայից, IV», *Դրոշակ (Վիեննա)*, 15 մայիսի 1896, թիւ 13, 102:

64 Տե՛ս Մելքոն Տեր Մելքոնեան, *Կեանքի եւ մահուան միջև*, Բ տպագրութիւն (Պէյրուք, «Մշակ», 1974), 15:

65 «Կիլիկիա», *Արմէնիա*, 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

1.000 սպանված, 500-ից ավելի վիրավոր⁶⁶, Բիրեջիկում՝ 3.400 սպանված⁶⁷, Հալեպում՝ 1.000⁶⁸, Ուրֆայում՝ 8.000⁶⁹, Այնթապում զոհերի թիվն էր 283, իսկ վիրավորներինը՝ 150⁷⁰, Քիլիսում՝ 216⁷¹, Մերսինում՝ 15 սպանված, 40 հոգի վիրավոր⁷²: Հալեպի վիլայեթում ընդհանուր առմամբ՝ 23.652 սպանված⁷³: Իսկ Ադանայի վիլայեթում, ինչպես նշվում է «Կիլիկիոյ մէջ վաւերական տեղեկագրում», 1895-1896 թթ. ջարդերը համատարած բնույթ չեն կրել. «*Բայց պարեղ եւս պակաս եղած չեն՝ կողոպուտի, սպաննութեան, կրօնաւիրութեան դեպքեր, որոնց ընդհանուր հաշուելչիոր եղած է 86 մեռեալ, 146 վիրատրեալ, 5 առեանգեալ, 114 կրօնաւիրիս, 125 բանտարկեալ, ընդամենը 576 անձ, իսկ նիթական վնասը եղած է 1,392.590 Օսմն. ոսկեդրամ*»⁷⁴:

Վերոնշյալ թվերը փաստում են, որ Կիլիկիայի հիմնական մասը կազմող Ադանայի նահանգում սպանություններն ու հակահայկական բռնությունների մյուս դրսևորումներն իրենց ծավալով չեն կարող համեմատվել Օսմանյան կայսրության հայաշատ մյուս բնակավայրերում իրականացված զանգվածային կոտորածների հետ, և համիդյան կոտորածները Կիլիկիայում և մասնավորապես նշված նահանգում Օսմանյան կայսրության այլ շրջանների համեմատությամբ «թույլ են արտահայտված», ինչն էլ մեր կարծիքով թերևս մասնագիտական գրականության մեջ ընդունված այն տեսակետի արտացոլումն է, համաձայն որի՝ Կիլիկիան հիմնականում զերծ է մնացել համիդյան կոտորածներից⁷⁵: Սակայն եթե Կիլիկիան ընդունում ենք իր պատմական սահմաններով, ապա հարկ է նշել, որ չնայած Ադանա նահանգը զերծ մնաց զանգվածային

66 Տե՛ս Գալուստեան, *Մարտշ կամ Գերմանիկ*, 747: Այստեղ ևս սպանվածների ընդհանուր թվի հետ կապված տարբեր տվյալներ են հանդիպում: Այսպես, Մարաշից մի միսիոների հաղորդած տեղեկությունների համաձայն, սպանված մարդկանց թիվը 3.500-ից պակաս չէր կարող լինել, նույնիսկ հասնում էր 4.000-ի: Տե՛ս Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 460-461.

67 *Братская помощь*, 56.

68 Հայկազ Մ. Պողոսյան, *Ձեյթունի պայամությունը 1409-1921 թթ.* (Երևան, «Հայաստան», 1969), 331:

69 Տե՛ս G. R. Berridge, *Gerald Fitzmaurice (1865-1939), Chief Dragoman of the British Embassy in Turkey* (Leiden, Boston: Martinus Nijhoff Publishers, 2007), 27: Տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում Ուրֆայի զոհերի թվի վերաբերյալ. ըստ միսիոներուի Կորինա Շաթրքի տեղեկության՝ 3.500-4.000, «Ուրֆայի կոտորածն», *Հայր* (Նի Եորք), 1 մարտի 1896, թիւ 3, 42:

70 Տե՛ս Գարո, «Կոտորածներ, Եամակներ Կիլիկիայից, III», *Դրօշակ*, 15 մայիսի 1896, թիւ 13, 102: Այնթապում ևս սպանվածների թվի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում, բայց ավելի հաճախ հանդիպում է 300 թիվը: Տե՛ս նաև Rendel J. Harris and Helen B.Harris, *Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia* (London: James Nisbet & Co., 1897), 32; Սարաֆեան, *Պայամություն Անթեպի հայոց*, 923: Հանդիպած աղբյուրների մեջ միայն Լեփսիոսն է տալիս 1.000 թիվը (Lepsius, *Armenia and Europe*, 306):

71 Lepsius, *Armenia and Europe*, 14.

72 «Կոտորածներ Կիլիկիայի մէջ», *Արմէնիա* (Մարսել), 21 փետրուարի / 29 մարտի 1896, թիւ 61, 2:

73 Lepsius, *Armenia and Europe*, 328:

74 Բիզանդի Եղիպեան, *Ադանայի հայոց պայամություն* (Անթիլիաս-Լիբնան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970), 175:

75 Տե՛ս Ռուբեն Գասպարյան, *Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.–1921 թ.)* (Երևան, «Գիտություն», 2005), 37:

կոտորածներից⁷⁶, այդուհանդերձ այդտեղ ևս եղել է հստակ նպատակային դրսևորված հակահայկական քաղաքականություն: Իսկ Հալեպի նահանգում (Հալեպ, Այնթապ, Մարաշ, Ենիշե-Կալե, Ալբիստան, Քիլիս, Չեյթուն, Ուրֆա, Բիրեջիկ) տեղի են ունեցել նաև սպանություններ, որոնց ընդհանուր թիվը, ինչպես արդեն նշել ենք, կազմել է 23 652⁷⁷: Այսպիսով, հողվածի շրջանակներում հետազոտված կյուրը թույլ է տալիս ևս մեկ անգամ փաստել, որ Կիլիկիան ևս անմասն չի մնացել համիդյան զանգվածային կոտորածներից:

Narine S. Hakobyan

THE HAMIDIAN MASSACRES AND THE CILICIAN ARMENIANS (1895-1896)

SUMMARY

Key words: Western Armenia. Hamidian massacres, Cilicia, Adana province, Aleppo province, Islamization.

This paper is devoted to the investigation of the anti-Armenian policy of 1895-1896 in Cilicia region of the Ottoman Empire. While current Armenian historiography credits the claim that Cilicia avoided the Hamidian massacres, a thorough investigation of this event reveals another thing yet to be learned. The paper leads the discussion on the topic based on two important and somehow neglected principles. First, the notion of “Historical Cilicia” is not only the Ottoman vilayet of Adana, but also some parts of Aleppo province. Second, the Ottoman anti-Armenian policy is being viewed in terms of both content and patterns of implementation. Based on the information provided by various primary sources, the paper discusses the main elements of the persecutions against the Cilician Armenians, particularly those related to the planning, organization, implementation, and involvement of the state. A detailed analysis of primary and secondary sources proves that from October 1895 to January 1896 the Turkish authorities carried out both killings of the Armenians and plunder of their properties in Adana province, particularly in the villages adjacent to Hadjin. Moreover, the same policy with more intensity was carried out in the towns of Ainteb, Marash and the surrounding villages of Aleppo province. The anti-Armenian policy included different forms of violence, such as killings, forced conversion into Islam, pillage and

76 Ադանա նահանգի Մերսին, Տարսոն, Ադանա քաղաքները սպանություններից զերծ մնացին ամերիկյան և ֆրանսիական ռազմանավերի ժամանման շնորհիվ: Նահանգում ջարդը սկսելու սպառնալիքը կրկնվել է 3 անգամ, բայց նավերի հրամանատարի շնորհիվ վալին չկարողացավ այն սկսելու հրաման տալ: Սակայն Ադանայի շրջակա 20 գյուղերում, Փայասի շրջակա 16 գյուղերում կողոպուտն ու թալանը դրսևորվեցին մեծ ուժգնությամբ: Վալին նույնիսկ նախաձեռնեց նահանգով շրջագայություն, և յուրաքանչյուր գյուղից նրա հեռանալուց հետո անմիջապես սկսվում էր թալանը: Չնայած դրան՝ նա ավելի վստահորեն էր համոզում ֆրանսիական «Լիևուս» ռազմանավի հրամանատարին, որ կարգը ոչ մի տեղ չի խախտվել: Տե՛ս Братская помощь, 1898, 141-142.

77 Johannes, *Armenia and Europe*, 328:

marked with an active participation of local Ottoman officials, regular army, gendarmerie, criminals released from the prisons, local Muslims irregulars and even tax collectors.

The character and scale of anti-Armenian actions raise concern about the traditional narrative on the events in Cilicia. This article argues that the atrocities against the Armenians in Cilicia, even with some “weak” manifestation in Adana, were identical to those carried out in the whole Ottoman Empire in terms of pursued goals and methods of implementation.

Нарине С. Акопян

ГАМИДОВСКАЯ РЕЗНЯ И КИЛИКИЙСКИЕ АРМЯНЕ (1895-1896)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Западная Армения, гамидовская резня, Киликия, провинция Адана, провинция Алеппо, исламизация.

Статья посвящена антиармянской политике осуществляемой в Киликии в 1895-1896 гг. В то время как нынешняя армянская историография считает, что Киликия избежала Гамидовской резни, тщательное расследование этого вопроса показывает совсем иное. Работа обсуждает проблему на основе двух важных принципов. Во-первых, понятие “Историческая Киликия” включает в себя не только османскую провинцию Адана, но и часть вилайета Алеппо. Во-вторых, антиармянская политика Турции рассматривается как с точки зрения содержания, так и формы реализации. Основываясь на различных первоисточниках, рассматриваются случаи преследования киликийских армян в те годы, в частности, вопросы, связанные с их организацией и осуществлением, а также участие в них государственных структур. Детальный и тщательный анализ источников показывает, что с октября 1895 года по январь 1896 года турецкие власти осуществляли как убийства армян, так и грабеж их имущества в провинции Адана, особенно в армянских деревнях, прилегающих к Хаджин. Более того, такая же политика, хотя и более интенсивная, проводилась в городах Айнтаб, Мараш и окрестных селах провинции Алеппо. Антиармянская политика отмечалась активным участием местных турецких чиновников, регулярной армии, жандармерии, преступников, освобожденных из тюрьмы, нерегулярных действий местных мусульман и даже сборщиков налогов включая в себя различные формы насилия, такие как убийства, насильственное обращение в ислам, грабежи.

Многочисленные обсуждения по поводу характера и масштаба антиармянских действий вызывают обеспокоенность в связи традиционным повествованием о событиях в Киликии. В статье утверждается, что зверства против армян в Киликии, даже с некоторым «слабым» проявлением в Адане, были идентичны тем, которые совершались во всей Османской империи с точки зрения преследуемых целей и методов осуществления.

REFERENCES

Anah, Չօք-Մարզուանի հերոսական կռիւները [Heroic Battles of Chok-Marzvan]. *Hnchak* (London), 15 January 1896, no. 1.

Anerkiugh, Քաղաքական վերջին դէպքերը [The Last Political Events]. *Hnchak* (London), 1 December 1895, no. 22.

Araqelian, Hambardzum. Զէյթուն, տեղագրական, ազգագրական եւ վարչական [Zeitun: Topography, Ethnography and Administration]. Tiflis: Hovhannes Martirosian tparan, 1896.

Կիլիկիա [Cilicia]. *Armenia* (Marseille), 21 February/29 March 1896, no. 61.

Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ [Cilicia: An Attempt of Geographical Description]. Saint Petersburg: I. Libermann tparan, 1894.

Հայկական վեց նահանգների ազգաբնակչութեան համեմատական ցուցակը [Comparative List of the Populations of the Armenian Six Provinces]. *Mshak* (Tiflis), 10 June 1895, No 66.

Garo, Կոտորածներ, Նամակներ Կիլիկիայից, IV [Massacres, Letters from Cilicia, IV]. *Droshak* (Vienna), 15 May 1896, no. 13.

Gasparyan, Ruben H. Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.) [Armenian Massacres in Cilicia (90-s of XIX century – 1921)]. Yerevan: Gitutyun, 2005.

Ghazanchian, Nikoghos. Յուշագրութիւն Եդեսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսամարտը եւ եղեռնը [Memoirs From the Massacre of Edessa in 1895 to the Self Defence and the Genocide in 1915]. Yerevan: Zangak-97, 2004.

Հայր [Haik] (New York), 1 May 1896, no 5.

Kalousdian, Krikor H. Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988.

«Ուրֆայի կոտորած» [Massacre of Urfa]. *Haiq* (New York), 1 March 1896, no 3.

Կոտորածներ եւ թշուառութիւններ Թիւրքիայի մէջ [Massacres and Disasters in Turkey]. *Armenia* (Marseille), 9 December/21 December 1895, no. 41.

Կոտորածներ եւ անկարգութիւններ Թիւրքիայի մէջ [Massacres and Unrests in Turkey]. *Armenia* (Marseille), 29 November/11 December 1895, no 38.

Nersisyan, Mkrtich G. and Sahakyan, Ruben G. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու [Armenian Genocide in Ottoman Empire: Collection of Documents and Materials]. Yerevan: Hayastan, 1991.

Ter Melqonyan, Melqon. Կեանքի եւ մահուան միջև [Between Life and Death], Second Edition. Beirut: Mshak, 1974.

Payramian, Alishan A. Կիլիկա. հայկական Քիլիս, Պատմական Ուրուագիծ (վաղ միջնադարէն մինչև 1922 թ.) [Ciliza, Armenian Kilis: Historical Sketch (from Early Medieval Period to 1922)]. Yerevan: Zangak-97, 2001.

Perperean, Hambardzum and Nersesean, Khoren. Յուշամատենան Քիլիսի հայոց (սկիզբէն մինչև 1968 թուականը) [Houshamadian of Armenian Kilis: From the Beginning to 1968]. Beirut: Sevan, 1969.

Poghossian, Hakob P. Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը [The History of Hadjin and the Surrounding Villages of Gozan-Tagh]. Los Angeles, CA: Compatriotic Union of Hadjin, 1942.

Poghosyan, Haykaz M. Չեյթունի պատմությունը 1409-1921 թթ. [The History of Zeitun, 1409-1921]. Yerevan: Hayastan, 1969.

Poghosyan, Varuzhan. Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ [The First Stage of the Armenian Genocide by the Assessment of French Historiography and Public Opinion (XIX Century – Beginning of the Twentieth Century)]. Yerevan: Gitutyun, 2005.

Sahakyan, Aram. Դիւագւսական Ուրֆան և իր հայորդիները [Heroic Urfa and its Armenian Sons]. Beirut, 1955.

Sarafian, Kevork A. Պատմություն Անթապի հայոց [Armenian History of Aintab (Two Volumes)], Volume 1. Los Angeles, California, 1953.

Taragjian, Tigran Y. Հօրս յիշատակները [My Father's Memoirs]. Toronto, 1995.

Ter-Ghevondyan, Vahan. Մարաշի Տէր Գեւոնտ քահանայի յուշերը [Memoirs of Der Ghevont Priest from Marash]. Yerevan: Antares, 2013.

Հայ ժողովրդի պատմություն [The History of the Armenia People], Volume 1. Yerevan: Haykakan SSH Gitut'yunneri akademiya, 1971.

Yeghiayan, Puzant. Ադանայի հայոց պատմություն [History of Armenians of Adana]. Antelias-Lebanon: House of the Armenian Catholicosate of Cilicia, 1970.

Zareh, Կիլիկիա [Cilicia]. *Armenia* (Marseille), 20 January/1 February 1896, no 52.

Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ, Отдѣлъ II [Fraternal Help for the Suffering Armenians in Turkey], Volume II. Moscow, 1898.

**ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԽՄԲՈՂ ԳՈՐԾՈՆ.
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1894-96 ԹԹ.
ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ ՔՐԴԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Բանալի բառեր՝ 1894-96 թթ. հայկական կոտորածներ, քրդեր, համիդիե, հանցակցություն, Հայոց ցեղասպանություն:

Հոդվածում քննության են առնվում քրդական համիդիե հեծելազորի ստեղծման խնդիրը, նաև 1894-96 թթ. հայկական կոտորածներին քրդերի մասնակցության ձևերը, չափերը և պատճառները՝ օգտագործելով քրեագիտության և սոցիալական հոգեբանության մեջ կիրառվող «համախմբման, միասնության տեսությունները»: Ընդունված է քրդերին համարել հայ բնակչության դեմ օգտագործվող կոյր գործիք Օսմանյան կայսրության ձեռքում: Սա լայնորեն տարածված կարծիք է ոչ միայն հայ պատմագրության, այլև ընդհանրապես ցեղասպանագիտության մեջ: Իհարկե, այն հիմնավոր է, սակայն չի կարող լինել կոտորածին քրդերի լայնածավալ մասնակցության միակ բացատրությունը: Զանգվածային սպանություններին քրդերի ներգրավմամբ Օսմանյան կայսրությունը լուծում էր ևս մեկ, թերևս ոչ պակաս կարևոր խնդիր: Քրդերին դարձնելով հանցակից, ներառելով նրանց Արևմտյան Հայաստանի հայերին էթնիկ գտման ենթարկելու թուրքերի նախագծի մեջ՝ Բարձր դուռը մշտապես անհնազանդ և անհանգիստ քրդերին ամուր կապում էր կայսրության քաղաքականության և ճակատագրի հետ:

Հայ-քրդական՝ երկար դարեր ձգվող հարաբերություններում մշտապես եղել են խնդիրներ, որոնք առավել ցայտուն և ընդգրկուն արտահայտվեցին 19-րդ դարում, և որոնց զարգացումն ու խորացումը բերեցին նախ՝ համիդյան կոտորածներին, ապա՝ Հայոց ցեղասպանությանը քրդերի ակտիվ մասնակցությանը:

Այլ ժողովուրդների օգտագործումը զանգվածային ոչնչացումների և ցեղասպանությունների իրականացման ժամանակ համընդհանուր ֆենոմեն է: Այսպես, Հոլոքոստի տարիներին նացիստները լայնորեն ներգրավում էին Եվրոպայի ժողովուրդների ներկայացուցիչներին օկուպացված տարածքներում հրեաների ոչնչացման գործընթացում: Լեհերը, լիտվացիները, ուկրաինացիները, հոլանդացիները և բազմաթիվ այլ ժողովուրդներ ներքաշվեցին սպանության այս հորձանուտի մեջ՝ խրախուսվելով նացիստական հանցագործների կողմից կամ փորձելով օգտագործել պահը՝ տեղի հրեա բնակչության հետ սեփական հին հաշիվները մաքրելու համար¹:

1 Michael Curtis, *Verdict on Vichy: Power and Prejudice in the Vichy France Regime* (New York: Arcade Pub., 2002); Peter Davies, *Dangerous Liaisons: Collaboration and World War Two* (Harlow: Pearson Education, 2004); *Collaboration and Resistance During the Holocaust: Belarus, Estonia, Latvia, Lithuania*, ed. David Gaunt, Paul A. Levine, and Laura Palosuo (Bern: Peter Lang, 2004); Gerhard Hirschfeld, *Nazi*

Հայոց ցեղասպանության ընթացքում նույն գործառույթը վերապահված էր քրդերին, ինչպես նաև չերքեզներին: Նրանք դարձան երիտթուրքերի գործիքներից մեկը, որով իրականացվեց հայերի բնաջնջումն Օսմանյան կայսրությունում: Սակայն քրդերի այս դերակատարությունը սովորաբար ներկայացվում է որպես լոկ կայսրության ձեռքում կույր գործիք լինելու հետևանք: Սա տարածված կարծիք է ոչ միայն հայկական պատմագրության, այլ նաև ցեղասպանագիտության մեջ ընդհանրապես²: Իհարկե, այս կարծիքը հիմնավոր է, և կայսրությունն օգտագործում էր քրդերին, սակայն, ամենայն հավանականությամբ, դա քրդերի՝ նման մեծ չափերի հասնող մասնակցության միակ բացատրությունը չէ: Հայկական կոտորածները շոշափելի, զգալի օգուտներ էին բերում քրդերին, ովքեր ոչ պակաս շահագրգռված էին կատարվող ոճրագործությամբ:

Եվ բացի դրանից, օսմանյան պետությունը լուծում էր ևս մեկ, միգուցե ոչ պակաս կարևոր, քան քրդերի միջոցով հայերի աճող ազդեցությունը կոտրելու խնդիր: Քրդերին մեղակից դարձնելով այս մեծ ոճրին՝ Կ. Պոլիսը նրանց կապում էր կայսրության ռազմակառքին՝ քրդական երբեմնի կիսաանկախ վիճակը ներառելով ընդհանուր պետական քաղաքականության և ճակատագրի մեջ: Այս հանցագործության մեջ ներգրավելու միջոցով քրդական ինքնությունը համապետական ինքնության մեջ ձուլելու վարկածի քննարկումը լինելու է հողվածի առանցքային խնդիրը:

Քրդական խնդիրն օսմանյան քաղաքականության մեջ 19-րդ դարում

19-րդ դ. Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթները բազմաթիվ ժողովուրդների բնակության խճանկար էին, երբ խմբերից ոչ մեկը չուներ բացարձակ մեծամասնություն: Ամենայն հավանականությամբ, իրենց քանակով հայերն այս տարածքներում երկրորդ էթնիկ խումբն էին քրդերից հետո³: Թուրքերը, ինչպես

Rule and Dutch Collaboration: The Netherlands under German Occupation, 1940-1945 (Oxford, New York and Hamburg: Berg Publishers, 1988); *The Unknown Black Book: The Holocaust in the German-Occupied Soviet Territories*, ed. Joshua Rubenstein, Ilya Altman (Bloomington, IN: Indiana University Press, 2010).

2 Leo Kuper, *Genocide: Its Political Use in the Twentieth Century* (New Haven and London: Yale University Press, 1981), 109; Michael Mann, *The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing* (New York: Cambridge University Press, 2005), 114-115; Taner Akcam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan books, 2006), 180; Taner Akcam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 147, 397; Eric D. Weitz, *A Century of Genocide: Utopias of Race and Nation* (Princeton: Princeton University Press, 2005), 6.

3 Stephan H. Astourian, *The Silence of the Land: Agrarian Relations, Ethnicity, and Power, Question of Genocide, Armenians and Turks at the End of the Ottoman Empire* (ed. by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, and Norman M. Naimark) (New York: Oxford University Press, 2011), 58; *The Armenian Question before the Peace Conference 1919, A Memorandum Presented Officially by the Representatives of Armenia to the Peace Conference at Versailles, on February 26th, 1919* <https://archive.org/details/armenianquestion00pari/page/n4>, դիտվել է 17.04.2019; *Armenia and Kurdistan* (London: H.M. Stationery Office, 1920).

նաև այլ ավելի փոքր խմբեր, օրինակ՝ վրացիները, լազերը, թուրքմանները, ասորիները և հակոբիկյանները, զգալիորեն զիջում էին այս երկու գերիշխող խմբերին⁴:

Դարեր շարունակ հիմնականում հայերով բնակեցված այս շրջանների ժողովրդագրական պատկերը հետզհետե փոխվել էր: Քրդական բնակչության կշիռն ավելացել էր, ինչը նաև ուղղորդված ժողովրդագրական ինժեներիայի արդյունք էր: Օսմանյան կայսրությանը ձեռնտու էր գրեթե նույնաքանակ երկու մեծ խմբի հետ գործ ունենալ իր արևելյան սահմանների մոտ, քանի որ միշտ հնարավորություն էր ստեղծվում, նրանց միջև հակասություններն օգտագործելով, թուլացնելու երկու համայնքն էլ, ինչից Կ.Պոլիսը միշտ օգտվում էր:

19-րդ դարում հայ-քրդական հարաբերություններն ապրում էին լարվածության աճի մի շրջան, երբ միահյուսվում էին տարբեր խնդիրներ և հակասություններ, բախվում էին իրարամերժ շահեր և արժեհամակարգեր: Հիմնական լարումն անցնում էր հետևյալ գծերով՝ կրոնական իրողություններից բխող լարվածություն, տնտեսական մրցակցություն և հողային հարց, աշխարհաքաղաքական զարգացումների նկատմամբ վերաբերմունք, ինչպես նաև տարբերվող պատկերացումներ կայսրության ապագայի վերաբերյալ:

Արևմտյան Հայաստանը գտնվում էր քրդական փաստացի իշխանության տակ, ու թեև օսմանյան իշխանությունները շարունակ քայլեր էին ձեռնարկում՝ ուժեղացնելու պետության վարչական կառավարման աստիճանն այս տարածքներում, սակայն մինչև 19-րդ դարի 40-ական թթ. այն պարզ անվանական էր: Քրդական վերնախավը մշտապես փորձում էր օգտվել օսմանյան պետության տնտեսական և քաղաքական իրավիճակի բարդություններից, պատերազմներում պարտություններից՝ մեծացնելու համար արդեն իսկ գոյություն ունեցող ինքնիշխանությունը:

Կայսրության հանդեպ քրդերի խնդրահարույց հավատարմությունը պարզ տեսանելի էր ամբողջ 19-րդ դարում Օսմանյան կայսրության դեմ բռնկվող քրդական հուզումներում: Առաջինը 1805 թ. ապստամբեց Սուլեյմանիայի բարբան ցեղի առաջնորդ Աբդուրրահման փաշան, դրան հետևեցին 1812 թ. նրա որդի Ահմեդ փաշայի, 1815 թ. Վանի և Բայազեթի փաշայությունների քրդերի ապստամբությունները⁵, 1818 և 1820 թթ. զազաների և 1822 թ. հակակառավարական ելույթները, հատկապես զորեղ էին Ռևանդուզի, Հեքյարիի, Սինջարի և Դիարբեքիրի՝ 1828-39 թթ., Բադրխանի՝ 1843-1848 թթ. ապստամբությունները, 1854 թ. Եզդինշիրի ապստամբությունը, Վանի, Մուշի և Բիթլիսի շրջաններում մոթեկանի, ուաշքոթանի և սալիքի ցեղերի հակակառավարական ելույթները 1878 թ. աշնանը և Օբեյդուլլայի՝ 1880 թ. ապստամբությունը⁶:

4 Donald Bloxham, *The Great Game of Genocide, Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford: Oxford University Press, 2005), 39.

5 Василий Никитин, *Курды* (М.: Прогресс, 1964), 285.

6 Կարո Սասունի, *Քյուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները /ԺԵ դարեն մինչև մեր օրերը/* (Պեյրութ, «Համազգային», 1969), 84; Hakan Özoğlu, “Nationalism” and Kurdish Notables in the Late Ottoman–Early Republican Era,” *International Journal of Middle East Studies* 33, no. 3 (2001): 390.

Մինչև 1850-60-ականները օսմանյան իշխանությունները քրդական ելույթներին ի պատասխան պատժիչ գործողություններ էին իրականացնում, որոնք աչքի էին ընկնում սանձարձակ բռնություններով և դաժանություններով: Երզնկայում (4-րդ բանակ) և Մոսուլում (5-րդ բանակ) տեղակայված գինվորական ուժերն իսկական սարսափի խորհրդանիշ էին դարձել քրդերի համար⁷: Յուրաքանչյուր ելույթից հետո մեծ աշիրեթապետությունները մասնատվում էին ու թուլանում, և հների փոխարեն առաջ էին քաշվում նորերը, որոնք իրենց բարձրացումով պարտական էին միայն սուլթանին: «Շարք մի շրջաններ, որոնք մեկ գորավար ցեղապետի կենթարկվելին, բաժանվեցին քանի մը ցեղապետներու միջև, որոնք իրենց նոր իրավունքներից ոգևորված, մեկը մյուսին դեմ կը լարվեին: Այս լարված դավադրական ցանցը իրական շահ մը կապահովեր թրքական կառավարութեան, որ ինքզինքը սկսած էր ապահով զգալ քրդական նոր բռնկումները»⁸: Այսպիսով, կայսրությունը մշտապես փորձում էր գտնել նոր դասավորվածություն՝ սեփական շահերը տվյալ տարածքներում առավելապես ապահովելու համար:

Կայսրության նկատմամբ քրդերի հավատարմության պակասը դրսևորվեց նաև 19-րդ դ. տեղի ունեցած երեք ռուս-թուրքական պատերազմների ժամանակ (1828-29 թթ., 1853-56 թթ. և 1877-78 թթ.) իրենց պահվածքում: 1828-29 թթ. պատերազմի ժամանակ նրանք «դավաճանեցին» Օսմանյան կայսրությանը՝ ոչ միայն բոլոր միջոցներով խուսափելով մասնակցությունից⁹, այլև նույնիսկ թշնամու՝ ռուսների հետ բանակցությունների մեջ մտան¹⁰: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ, ցանկանալով մոբիլիզացնել կայսրության մուսուլմանական բնակչությանը, սուլթանը ջիհադ հայտարարեց, բայց այն առանձնապես չազդեց քրդերի վրա. նրանք կամ բացահայտ խուսափում էին ռազմաճակատում դուրս գալ ռուսների դեմ, կամ էլ առաջին իսկ լուրջ բախումից հետո դիմում էին փախուստի և նույնիսկ զենքն ուղղում թուրքական զորքի դեմ¹¹:

Հայկական բնակչությունը նույնպես որոշակի համակրանք էր դրսևորում Ռուսական կայսրության նկատմամբ, սակայն երկու փոքրամասնությունների այս նույն վերաբերմունքը լրիվ տարբեր հետևանքներ ունեցավ: Քրդերի այս «դավաճանական» պահվածքի արդյունքում Օսմանյան կայսրությունը սկսեց սիրաշահել քրդերին՝ փորձելով նրանց սեփական խաղի մեջ ներգրավել: Իր հերթին հայերի «անհավատարիմ» կեցվածքը հանգեցրեց լայնամասշտաբ կոտորածների, իսկ ավելի ուշ նաև բնաջնջելու քաղաքականության:

7 Սասունի, *Քյուրք ազգային շարժումները*, 124:

8 Նույն տեղում, 97:

9 Michael Eppel, "The Demise of the Kurdish Emirates: The Impact of Ottoman Reforms and International Relations on Kurdistan during the First Half of the Nineteenth Century," *Middle Eastern Studies* 44, no. 2 (2008): 247.

10 Василий Потто, *Кавказская война*, т. 4 (М.: Центрполиграф, 2007), 41, 54; Վահան Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին* (Երևան, «Հայաստան», 1989), 72:

11 Նույն տեղում, 118:

1860-ականներին տեղի է ունենում քրդերի նկատմամբ օսմանյան կառավարության վերաբերմունքի կտրուկ շրջադարձ¹²: Լեոն գրում է. «Օսմանյան կառավարությունը փոխանակ պատժող և ճնշող հանդիսանալու, ինչպես եղել էր մինչ այդ, ընդգրկում էր սիրաշահել-գրավելու քաղաքականությունը և այդպիսով ոչ միայն անվասա դարձնելու այս ռազմիկ տարրը, այլև պատերազմի դեպքում իր կողմն ունենալու համար: Իսկ սիրաշահելու ամենալավ միջոցներից մեկն էր՝ թույլ տալ քրդերին, որ շահագործեն հայ երկրագործ ժողովրդին, ինչպես իրենք կկամենան»¹³:

Քրդերի նկատմամբ վերաբերմունքը մեղմելուն զուգահեռ, կոշտանում է հայերի հանդեպ դիրքորոշումը: Դրիմի պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ հայերն ունեին ռուսական կողմնորոշում: Այս պարագայում կայսրությանը սպառնացող երևույթն արմատախիլ անելու համար պետք էր ավելի սրել հայ-քրդական հարաբերությունները: Դրա միջոցներից մեկը քրդերի մեջ այն տեղեկատվության տարածումն էր, թե հայերը, բրիտանացիների և ռուսների հետ համագործակցելով, ցանկանում են տիրել Արևմտյան Հայաստանին, թագավորություն ստեղծել այնտեղ՝ քշելով քրդերին¹⁴:

Հակահայկական, ինչպես նաև ընդհանրապես հակաքրիստոնեական քաղաքականությունը լիովին համապատասխանում էր 19-րդ դարի վերջում սուլթան Աբդուլ Համիդի որդեգրած պանիսլամիզմի քաղաքականության հետ¹⁵: Այն փաստացի ոչ թե կրոնական, այլ քաղաքական ծրագիր էր¹⁶: Քրդական ազնվականության փոխարեն առաջին պլան են դուրս գալիս հոգևոր առաջնորդները՝ շեյխերը, որոնք նախկինում լոկ ցեղապետի խորհրդականներ էին, իսկ այժմ իրենց ձեռքում էին կենտրոնացրել ցեղերի տնտեսական ներուժը և քաղաքական իշխանությունը¹⁷: Ընդգծվում էր առաջին հերթին քրդերի իսլամական, կրոնական ինքնությունը, ինչը, ըստ հայտնի թուրքագետ Ցուրխերի, միակ միջոցն էր 1877-78 թթ. աղետալի պատերազմից հետո առաջարկելու արևմտյան լիբերալ գաղափարներին համարժեք հավասարակշիռներ¹⁸:

Սուլթանը սկսեց Արևմտյան Հայաստան ուղարկել մոլլաների և սեյիդների, որոնք մզկիթներում բորբոքում էին քրդական զանգվածների կրոնական աստվությունը հայերի հանդեպ: Այնուհետև նա բարձրակարգ շքանշաններ ու զինվորական կոչումներ շնորհեց քուրդ ցեղապետներին: Այսպես, օրինակ, սուլթանը Բադրխանի որդուն՝

12 Օրինակ, Բեդրխանն ու նրա տոհմը ոչ միայն չպատժվեցին բարձրացված ապստամբությունը ճնշելուց հետո, այլև նույնիսկ շնորհների արժանացան:

13 Լեո, *Թուրքիայի յեղափոխության գաղափարաբանությունը*, հ. Ա (Փարիզ, տպագրություն Պահրի եղբայր, 1934), 41; Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 122:

14 Eppel, “The Demise of the Kurdish Emirates,” 256; Լեո, *Ասլայից* (Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925), 36; *Մշակ* (Թիֆլիս), 5/17 օգոստոսի 1880 թ., 3:

15 Christopher J. Walker, *Armenia: The Survival of a Nation* (New York: St. Martin's Press, 1980), 133.

16 Wilfrid Scawen Blunt, *My Diaries* (New York, 1932), 190 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 133.

17 Özoğlu, “Nationalism” and Kurdish Notables,” 384.

18 Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey* (New York: Oxford University Press, 1961), 174–82; Stanford J. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*. Vol. 2 (Cambridge: Cambridge University Press, 1977), 172–272 հղված է ըստ Erik-Jan Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building. From the Ottoman Empire to Atatürk's Turkey* (London & NY: I.B.Tauris & Co Ltd, 2010), 68, 74.

Բահրի բեյին, սուլթանական գվարդիայի հրամանատարի աստիճան և երկրորդ կարգի «Մեջիդիե» շքանշան, ինչպես նաև ֆերիկի (գեներալի) կոչում շնորհեց՝ նրան ուղարկելով Արևմտյան Հայաստան «հատուկ հանձնարարությամբ»¹⁹:

Կայսրության «քրդական քաղաքականության» հաջորդ դրսևորումը համիդիե ջոկատների ստեղծումն էր:

Համիդիե ջոկատների ստեղծումը

1890 թ. նոյեմբերին թուրքական թերթերում պաշտոնական հաղորդում հրապարակվեց հիմնականում քրդերով²⁰ համարված ռազմական ստորաբաժանումներ ստեղծելու մասին, որոնց շնորհվեց սուլթան Աբդուլ Համիդի անունը՝ Hamidiye Asiret Suvari Alaylari (համիդյան ցեղային հեծելազորի զորագնդեր), բաժանվեց համազգեստ ու զենք²¹: Համիդյան հեծելազորի կազմավորման գաղափարը մեծապես ոգեշնչված էր ռուսական կազակական ջոկատների օրինակով²²: Գաղափարի հեղինակը Շաքիր փաշան էր, ով հետագայում դառնալու էր Անատոլիայում բարենորոգումների իրականացման գերագույն կոմիսար, իսկ գնդերի կազմավորման գործը հանձնարարվեց Արևմտյան Հայաստանում տեղակայված չորրորդ բանակի մուշիր (մարշալ) Ջեքի փաշային²³: Հեծելազորի հիմնական նպատակը պետք է լիներ ռուսական ու պարսկական սահմանների պաշտպանությունն ուժեղացնելը²⁴, ինչը միանգամից առաջացրեց ռուսական կողմի դժգոհությունը և բերեց Ռուսաստանի դեսպանի բողոքին առ այն, որ դա կարող է լինել խաղաղության խաթարման պատճառ²⁵:

Համիդիե ջոկատների մեջ ներգրավվածությունն օժտում էր որոշակի առանձնանորիններով՝ կառավարության հովանավորությամբ, օրենքի առաջ որոշակի անձեռնմխելիությամբ, նրանց նվիրաբերում էին հողեր, համիդիեների անդամների ընտանիքներն ազատվում էին հարկերից, ինչպես նաև համիդիեում ներգրավվածն ազատվում էր կանոնավոր բանակային ծառայությունից²⁶: Քրդերը փաստացի դարձան օսմանյան

19 *Մշակ*, 10 (22) սեպտեմբերի 1880 թ., 3:

20 Շատ փոքր թվով ներգրավվեցին նաև այլ մուսուլման ժողովուրդներ՝ կարափափախներն ու չերքեզները, թույլատրվեց կազմել առանձին գնդեր՝ իրենց առաջնորդներով: Տե՛ս Ա-դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները* (Երևան, «Կուլտուրա», 1912), 249:

21 Edwin M. Bliss, *Turkey and the Armenian Atrocities. A Reign of Terror* (Philadelphia: Hubbard Publishing co., 1896), 97; Turkey, No 1 (1892), *Great Britain. Foreign Office. Further Correspondence Respecting the Conditions of the Population in Asiatic Turkey* (London: Printed for Her Majesty's Stationery Office (H.M.S.O.), 1892), 16.

22 Mesut Uyar and Edward J. Erickson, *A Military History of the Ottomans: from Osman to Atatürk* (Oxford: Praeger Security International, 2009), 240.

23 Владимир Минорский, *Курды, Заметки и впечатления* (Петроград: тип. В. Ф. Киршбаума, 1915), 11.

24 Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134.

25 *Հւշակ* (Լոստոն), 12 դեկտեմբերի 1890 թ., 4:

26 Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellions, 1880–1925* (Austin, Texas: University of Texas Press, 1989), 9; Архив Внешней политики России (АВПР), ф. Миссия в Персии, 1913, д.69, л.169-170 հղված է ըստ Ստեփան Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը* (Երևան, «Հայաստան», 1991), 88:

բանակի մաս: Իսկ այն հանգամանքը, որ մեկ համիդիեական ջոկատ ամեն տարի պետք է պահակային ծառայություն իրականացնել մայրաքաղաքում, ավելացնում էր նրա հեղինակությունը²⁷:

Հրամանի համաձայն՝ յուրաքանչյուր հեծելազորային գունդ պետք է իր շարքերում ունենար 512-ից 1.052 զինվոր: Մոտավորապես չորս տարում ձևավորվեցին շուրջ երեսուն գնդեր²⁸ 43.730 հեծյալ զինվորներով: 1908 թ. գնդերի թիվը հասավ 65-ի²⁹: Գնդերը հաճախ միավորում էին նույն աշիրեթի անդամներին, և դրանք գլխավորում էին աշիրեթների պետերը, որոնք ստանում էին զինվորական կոչումներ³⁰: Համիդիե գնդերի համալրման ընթացքում օգտագործվեց մի հնարք, որը մեծ տարածում գտավ Հայոց ցեղասպանության տարիներին. խոսքը բանտերից հանցագործներին ազատ արձակելու և նրանց սպանությունների մեջ ներգրավելու մասին է³¹: Օրինակ, Վանի գավառում հայտնի ավազակ Թ-աֆյուրը համիդիե մի գունդ ստեղծեց՝ այն համալրելով բանտերից ազատ արձակված մարդասպաններով³²: Նույնը կրկնվեց նաև Ամասիայում, որտեղ բանտերից ազատ արձակված ոճրագործ չերքեզներից 1.500-հոգանոց համիդիե գունդ կազմվեց³³:

Համիդիե գնդերի ստեղծումը ցույց էր տալիս, որ սուլթանը վերջնականապես որոշել էր հենվել այս տարածաշրջանում քրդական ցեղերի վրա: Դա պատահական չէր. Հայկական հարցի ակտիվացումից հետո Կ.Պոլիսը տենդագին փնտրում էր այն համայնքը, որի քաղաքական լոյալությունը հնարավոր կլիներ շահել: Մինչ այդ 19-րդ դարի ամբողջ ընթացքում անընդհատ կրկնվող քրդական ապստամբությունները ճնշելու քաղաքականությանը եկավ փոխարինելու քրդերին սիրաշահելու և օսմանյան համընդհանուր իսլամական համայնքի մեջ նրանց համաձուլելու ռազմավարությունը:

Որպես այս քաղաքական տեղաշարժի արտացոլում՝ սուլթանի հրամանով Արևմտյան Հայաստանի և Քրդստանի ազդեցիկ քուրդ ցեղապետերը (նաև որոշ արաբ, կարափափախ և թուրքմեն առաջնորդներ) հրավիրվեցին մայրաքաղաք³⁴: 1891 թ. գարնանը քուրդ ցեղապետերը սուլթանի իրադեհի³⁵ հիման վրա Տրապիզոնից հատուկ շոգենավով տեղափոխվեցին Կ.Պոլիս՝ նշելու Սելանիկ տունը: Ճանապարհ-

27 George H. Hepworth, *Through Armenia on Horseback* (New York: E.P.Dutton & Company, 1898), 229.

28 *Great Britain. Foreign Office. Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey: 1892-1893* (London, 1896). Turkey, No. 3 (1896), հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134.

29 Uyar and Erickson, *A Military History of the Ottomans*, 240.

30 *Great Britain. Foreign Office, Turkey*, No 1 (1892), 16.

31 Դրա մասին տե՛ս, օրինակ՝ Մուրեն Մանուկյան, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք (VIII): Պալմություն, քաղաքականություն, մշակույթ* (Երևան, «Չանգակ-97», 2012), 342-349:

32 Arshak Safrastian, *Kurds and Kurdistan* (The Harvill Press Ltd: London, 1948), 66-67.

33 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 91:

34 Uyar and Erickson, *A Military History of the Ottomans*, 203-204.

35 Իրադե (թուրքերեն՝ կամք, ցանկություն) – Օսմանյան կայսրությունում այսպես էր անվանվում սուլթանի անունից հրապարակվող հրամանագիրը:

հին նրանց հանգստի, սննդի, հագուստի և մնացած բոլոր կարիքներն ապահովվեցին սուլթանի անձնական միջոցներով: Կայսերական թիկնապահները «Դիանա» շոգենավով ընդառաջ գնացին ցեղապետերին և նրանց արժանավայել մեծարելով՝ հասցրին մայրաքաղաք: Այնտեղ քրդական զգեստներ հագած, մեկական սրով ու խենչավով զինված՝ նրանք կառքերով շրջում էին քաղաքի գանազան մասերում, հյուրասիրվում թանկագին օտարերկրյա հյուրերի նման³⁶: Նրանց ընդունեց անձամբ սուլթանը և ընծաներ ու իրենց ստորաբաժանումների համար տարբերանշաններ շնորհեց, որոնք կրում էին հերթական համար և տողեր Ղուրանից³⁷:

Համիդիե գնդերի կազմակերպումը պետք է ավարտին հասցնեք քրդերին թուրքական պետականությանը կապելու գործընթացը: Նախկինում անհնազանդ քրդերը պետք է դառնային օսմանյան միասնականության կարևոր երաշխիքներից մեկը, առավել ևս, որ Աբդուլ Համիդ II-ը քայլեր ձեռնարկեց երկրի զարգացումը պանիսլամիզմի գաղափարական հենքի վրա խարսխելու ուղղությամբ: Այս ընթացքում նաև թուլացվում էին խոշոր և անհնազանդ աշիրեթները, տրոհվում ու մանրացվում: Համիդիե գնդերի հրամանատարներ էին նշանակվում ազդեցություն չունեցող, աննշան մարդիկ, ինչն առաջացնում և ուժեղացնում էր քրդական առաջնորդների ներքին հակամարտությունը³⁸: Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանլիսի, Խնուսի, Վարդուվայի շրջաններում հասնանցի, ջիրբանցի, ջըռըքցի, բըլըքցի քրդերը իրար հետ կռվում էին համիդիեում ղեկավար դիրքի «աստիճանի մեծության, փառասիրության» համար³⁹:

Համիդիե գնդերը գրագետ սպաներով ապահովելու նպատակով 1892 թ. Կոստանդնուպոլսում և 6-րդ բանակային կորպուսի կենտրոն Բաղդադում բացվեցին «աշիրեթային դպրոցներ»⁴⁰: Այս միջոցառումների մի ամբողջ համակարգի նպատակներ էին հռչակվում քոչվոր քրդերին քաղաքակրթելը և նրանց հորդաները կարգապահ դարձնելը⁴¹: Մակայն դա նույն, ավելի համապարփակ և համընդգրկուն խնդրի փուլերից մեկն էր: Դպրոցներում ուսանող քուրդ և արաբ աշակերտներին Թուրքիայի նկատմամբ հավատարմություն էին ներարկում⁴²:

Իհարկե, եղան նաև անխուսափելի շեղումներ: Բազմաթիվ անհնազանդ ցեղեր դարձան էլ ավելի անկախ ու ինքնագլուխ՝ հաճախ հրաժարվելով կառավարությանը հարկեր մուծելուց⁴³: Մի շարք ցեղեր էլ (օրինակ՝ Դիարբեքիրում և Բիթլիսում) իրենց հերթին չընդգրկվեցին համիդիեի համակարգի մեջ, իսկ Դերսիմում մերժումները

36 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 89:

37 *Great Britain. Foreign Office, Turkey, No 1 (1892), 19, 37; Hepworth, Through Armenia on Horseback, 226.*

38 Սասունի, *Քյուրդր ազգային շարժումները*, 157:

39 *Հւշակ*, 20 նոյեմբերի 1894 թ., 102:

40 Минорский, *Курды*, 11.

41 *Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году* (Москва: Разсвѣтъ, 1896), 163.

42 Минорский, *Курды*, 11.

43 Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 212:

համատարած էին⁴⁴: Թուրք-իրանական սահմանամերձ շրջանների մի շարք քրդական ցեղեր համիդիե գնդերի մեջ չմտնելու համար տեղափոխվեցին Իրան⁴⁵:

Սակայն ընդհանուր առմամբ համիդիե ջոկատների համակարգի ստեղծումը թույլ տվեց Օսմանյան կայսրությանն ուժեղացնել քրդական ցեղերի կապը կենտրոնական իշխանության հետ, և որպես դրա ամրապնդման հաջորդ քայլ՝ նրանց թույլատրվեց բացահայտ ու անթաքույց թիրախավորել հայկական բնակչությանը: Իհարկե, հայկական բնակչության կողոպուտը և ճնշումը քրդական ցեղերի կողմից նոր երևույթներ չէին, սակայն հիմա դա օրինականացվում էր պետական իշխանության իրավունքով, որի մաս էին կազմում արդեն քրդական զինված ջոկատները: Ինչպես գրում է այս տարիներին Օսմանյան կայսրությունով ճամփորդած Ջորջ Հեփվորդը, «քրդերը շատ ոգևորված էին սուլթանի գործողություններով և ավելի քան հպարտ՝ համագգեստ կրելու համար»⁴⁶:

Այսպիսով, համիդիեների ստեղծումը քրդերին որոշակիորեն մոտեցրեց Օսմանյան կայսրությանը, նրանց ընդգրկեց պետական ծառայության մեջ և բանակին մատակարարեց նոր կանտնավոր «խաֆիֆ սուվարի» թեթև հեծելազորով⁴⁷:

Հայկական բնակչության նկատմամբ բռնաճնշումները՝ որպես համիդիե հեծելազորի գործառույթներից մեկը

Ստեղծումից հետո համիդիե գնդերը ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում ստանձնեցին ռազմառոտիկանական գործառույթ: Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, ապօրինի տուրքերը, կողոպուտը, թալանն ու տարատեսակ կամայականություններն ընդունեցին աներևակայելի մեծ ծավալ: Ցանկացած դիմադրություն «հավասարազոր էր սուլթանի դեմ խոտվության»⁴⁸ և բերում էր արյան մեջ դաժան ճնշման⁴⁹: «Նրանց կողմից կատարված վայրագություններն աննկարագրելիորեն սարսափելի էին: Որևէ մեկի նկատմամբ ողորմածություն չեն ցուցաբերում... Յուրաքանչյուր տարբեր չափի ավերածություններ ամենուրեք իրականացվել են թուրքերի օժանդակությամբ, իսկ երբ թուրքական կառավարությունն իսկապես ձգտել է կանխել հարձակումները, դա արել է հեշտությամբ»⁵⁰:

44 Ahmad Madhar Kamal, *Kurdistan during the First World War*, trans. Ibrahim Ali Maher (London: Saqi Books, 1994), 55 հղված է ըստ Zardykhan Zharmukhamed, "Ottoman Kurds of the First World War Era: Reflections in Russian Sources," *Middle Eastern Studies* 42, no.1 (2006): 73.

45 АВІР, Полятархив, 1889-1894, հղված է ըստ Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 212-213:

46 Hepworth, *Through Armenia on Horseback*, 225.

47 Минорский, *Курды*, 11.

48 *Положение армян*, 161.

49 John A.R. Marriott, *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy* (Oxford: Oxford University Press, 1951), 399.

50 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 98.

Այսպիսով, բացահայտվում էր համիդիե ջոկատների ստեղծման ևս մեկ նպատակ, որը սահմանապահ գործունեությունից պակաս կարևոր չէր կայսերական արքունիքի համար: Լեոն այս առումով գրում է. «Որքան և այս ձեռնարկությունը քողարկվում էր պատերազմական ընդհանուր նկատառումներով, ոչ ոքի համար գաղտնիք չէր մնում, որ համիդիե գնդերի կազմակերպման ամենագլխավոր, եթե ոչ միակ, շարժառիթն է նրանց միջոցով հայերին զսպելը»⁵¹: Էրզրումում գլխավոր հյուպատոս Ա. Դեննետը նույնպես հաղորդում էր, որ համիդիե գնդերի կազմակերպման նպատակն է քրդերին օգտագործել՝ կայսրության արևելյան նահանգներում քրիստոնյա բնակչության ազատագրական միտումները ճնշելու համար⁵²: Սա ընդհանուր տեսակետ էր նաև անգլիացի ու ֆրանսիացի քաղաքական գործիչների ու դիվանագետների շրջանում: Օրինակ, 1895 թ. հուլիսի 26-ին Չեստերում տեղի ունեցած միտինգի ժամանակ Վ. Գլադստոնը հայտարարում էր. «Սուլթանը և Կ.Պոլսի կառավարությունը ֆորմալ ձևով հավաքագրեցին ոչ մի ռազմական կարգապահություն չունեցող մարդկանց, նրանցից կազմեցին կեղծ հեծելազորային գնդեր և այնուհետև արձակեցին նրանց՝ լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը»⁵³: Ավելին, դա չէին թաքցնում նաև իրենք՝ քրդերը: Թուրքիայում Բրիտանիայի հյուպատոս Հենսթոնն Էրզրումից գրում էր, որ քրդերից շատերը «բացահայտորեն հաստատում են, որ նրանք նշանակվել են՝ ճնշելու հայերին, և որ նրանք հավաստիացում են ստացել, որ պատասխանատվության չեն կանչվի դատարանի առջև քրիստոնյաների դեմ գործած ցանկացած բռնության համար»⁵⁴: Ընդհակառակը, դատարանները բացահայտ պաշտպանում էին հայերի դեմ իրականացվող կամայականությունները: Համիդիե զինվորը փաստացի միապետ էր իր գործերում: Չկար որևէ օրենք, որը նա ստիպված կլիներ հարգել, նա ուներ անսահմանափակ իրավունքներ, կարող էր անել ինչ-որ ցանկանար, իսկ եթե տեսականորեն քաղաքացիական կամ ռազմական դատարանը կանչեր նրան պատասխանատվության գողության կամ սպանության համար, Չեքի փաշան կազատեր նրան⁵⁵:

Բերենք անպատժելիության մի քանի օրինակ: «Դրոշակը» հաղորդում է. «Մուշում թափառական քիլուները օր ցերեկով օսմանեան զօրանոցէն մարթինի հրացան կ'տանան և շուկայէն զոռոգութեամբ անցնելով՝ առանց քաշուելու կ'ըսեն. «այս բոլորը ֆլլահներու (հայերու) համար է»: Իսկ Ալաշկերտում. «քրդերն ու թուրքերը, կառավարությունէն ստացած արտոնություններէն սիրտ առնելով, անասելի գազանություններ կընեն: Քրդական անկանոն գորքերը գյուղէ ի գյուղ շրջելով բարբարոսություններ ի գործ կը դնեն, կհափշտակեն տներու մեջ եղած-չեղածը, զարնելով ու անարգելով

51 Լեո, *Անցյալից*, 103:

52 АБПР, ф.30, оп.517, д.1571, л.5, հղված է ըստ Բայբորդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 207:

53 *Facts about Armenia: Sassoon as reported by a native, Mr. Gladstone's speech, and Dr. Dillon's article on Armenia* (New York: E. Scott, 1895), 17-18.

54 FO 424-169, 21, FO 424/169, 30 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 134; Peter Balakian, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response* (New York: Harper Perennial, 2004), 50; *Great Britain. Foreign Office, Turkey*, No. 1 (1892), 23.

55 Hepworth, *Through Armenia on Horseback*, 232.

կհեռանան»⁵⁶: Մոտ երկու տասնյակ քրդեր, հարձակվելով Դերսիմի Շորտա գյուղի վրա, կողոպտում են, մի քանիսին վիրավորում և մեկ հոգու սպանում: «Տեղական կառավարությանը լուր է տրվում... Իզուր են ջանում խեղճ հայերը, քանի որ կառավարությունը չի կարող քրդերի վրա բռնություն բանեցնել: Մանավանդ, երբ սպանվողը հայ էր, բողոքներին երբեք կարևորություն չէր տրվում...»⁵⁷:

Իշխանությունները հայկական գյուղերում հետևողականորեն տեղակայում էին համիդիե գնդեր՝ նաև հայերին տնտեսապես հյուծելու նպատակով: Բացի բացահայտ թալանից, քրդական հեծելազորի հրամանատարները հաճախ դրամով վարկավորում էին մշտապես կարիքի մեջ գտնվող հայերին՝ որպես երաշխիք ընդունելով նրանց անասունները, տներն ու բերքը, աստիճանաբար դառնում էին այդ գյուղերի տերերը՝ աղաներ: Չկարողանալով պարտքերը վերադարձնել՝ հայերը ստիպված էին կատարել տարբեր տեսակի աշխատանքներ, իրենց լավագույն ձիերին հանձնել քրդերին և նույնիսկ տալ իրենց աղջիկներին⁵⁸: Տնտեսական կյանքը դժվարացնում էր նաև անվտանգության ցածր մակարդակը: Նույնիսկ մոտ բնակավայրերի միջև հաղորդակցությունը խիստ դժվարացել էր, անվտանգ երթևեկելը համիդիե հեծելազորի պատճառով անհնար էր դարձել⁵⁹:

Վիլայեթների իշխանություններն աշխատում էին հնարավորինս գործ չունենալ համիդիեների հետ, և սա իր հետ բերում էր ոչ միայն հայերի դժգոհությունը: 1900թ. գարնանը Վասպուրականի հարյուրավոր թուրք գյուղացիների կողմից մի բողոք ուղարկվեց Վանի վալիին համիդիեների վայրագությունների մասին: Երբ կառավարությունը հրաժարվեց քայլեր ձեռնարկելուց դրանք կանխելու ուղղությամբ, Վանի թուրքերը պատրաստեցին նաև Բարձր դռանն ուղղված մի հանրագիր՝ նույն պահանջներով՝ դրանք չկատարելու դեպքում ցանկանալով ստանալ այլ բնակչության վայրեր գաղթելու հնարավորություն: Հայդերա աշիրեթի պետերը, համիդիե հրամանատար Հուսեյն փաշան, Հաջի Խեյմուր և Էմին փաշաները տեսնելով, որ խնդիրը բարդանում է, հանգստացրին թուրքերին՝ խոստանալով դադարեցնել նրանց դեմ գործողությունները⁶⁰: Որոշ տեղերում հուսահատության եզրին հասած տեղական բնակչության և համիդիե գնդերի միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ: Օրինակ, 1900 թ. արաբական շամմար ցեղը զինված հակահարված տվեց Իբրահիմ փաշայի համիդիե գնդերին⁶¹:

Այսպիսով, անմիջապես բացահայտ գործադրվեց քրդական համիդիե ջոկատների ստեղծման մեկ այլ նպատակ՝ մշտական ճնշման տակ պահել հայկական

56 «Լուրեր Տաճկահայաստանից», *Դրոշակ* (Վիեննա), փետրվար 1892 թ., 5:

57 *Հւշակ*, 12 դեկտեմբերի 1890 թ., 6-7:

58 АВГПР, ф. Посольство в Константинополе, 1907, д. 4087, лл. 76-79 հղված է ըստ Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 92:

59 Նույն տեղում:

60 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 232-233:

61 Նույն տեղում, 234:

բնակչությանը՝ հնարավորինս թուլացնելով նրանց նաև տնտեսապես: Քրդերին նաև տրվում էին կայսրության հետ լավ հարաբերություններ պահելու, նրա կողմից հովանավորվելու առավելությունները: Հանցանքները քողարկելու, դրանք չնկատելու և փաստացի օրինականացնելու քաղաքականությունը Կ.Պոլսի կողմից քրդերին հանցակցության միջոցով կայսրությանն առավել ամուր կապերով միացնելու առաջին փորձն էր:

Հայկական կոտորածները և քրդերի դերակատարումը

1894-96 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցան հայ բնակչության զանգվածային, լայնամասշտաբ կոտորածներ, որին զոհ գնացին կայսրության մոտ 200-300 հազար հայ քաղաքացիներ: Կոտորածները նախաձեռնվեցին որպես պատասխան Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսից հետո միջազգային դիվանագիտական օրակարգ մտնելու և հայերի հետևողական պահանջների Աբդուլ Համիդ II-ին՝ ի կատար ածել այդ պայմանագրից բխող Օսմանյան կայսրության պարտավորությունները⁶²: Սակայն ո՛չ օսմանյան կառավարությանն ուղղված խնդրագրերը, ո՛չ եվրոպական տերություններին հղած բողոքներն ու պահանջները կյանքի կոչելու իրենց իսկ կողմից հայտարարված բարենորոգումները, օգուտ չտվեցին: Օսմանյան կառավարությունը ձգձգում էր բարենորոգումների իրականացումը, իսկ Արևմուտքն այս հարցն օգտագործում էր ընդամենը որպես տնտեսական ու քաղաքական նպատակներով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց:

1894-96 թթ. կոտորածները սուլթանի կողմից հայերին պատժելու փորձ էին՝ բարեփոխումներ պահանջելու և եվրոպական տերություններին դիմելու չտեսնված հանդգնության համար⁶³: Բացի դրանից, նվազեցվում էր հայկական ժողովրդագրական կշիռն Արևմտյան Հայաստանում: Հարյուր հազարավոր հայեր ոչնչացվեցին, տասնյակ հազարավորներն էլ արտագաղթեցին երկրից, քանի որ զրկվել էին գոյության համար անհրաժեշտ ամեն ինչից: Կոտորածները նաև հարվածեցին հայերի տնտեսական աճող ներուժին:

Քրդերն իրենց հերթին ակտիվորեն մասնակցեցին այս ջարդերին:

62 Համաձայն 1878 թ. հուլիսի 1-ին ստորագրված Բեռլինի պայմանագրի հոդված 61-ի. «Բարձր դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերթեզնդներից և քրդերից: Բարձր դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը»: Այսպիսով, համիդի ջոկատների ստեղծումը ուղղակիորեն Բեռլինի դաշնագրի խախտում էր, քանի որ այն ոչ թե ապահովում էր հայերի անվտանգությունը չերթեզնդներից և քրդերից, այլ ընդհակառակը՝ ստեղծում էր քրդերի կողմից հարուցվող խնդիրների ևս մեկ օջախ:

63 Vahakn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (New York: Berghahn Books, 2003), 146.

Սասունի կոտորածը

Դեռ 1891-94 թթ. Սասունում սուլթանը փորձեց քրդերին ներքաշել հայերի կոտորածների մեջ: Կառավարության հրահանգով Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան հորդորում էր քրդական ցեղապետերին ու շեյխերին, որպեսզի նրանք աշիրեթներին ոտքի հանեն կիսասանկախ կարգավիճակ ունեցող Սասունի հայկական բնակավայրերի դեմ: 1891-1894 թթ. ընթացքում սասունցիները համառորեն դիմադրում և մի քանի պատասխան հակահարված էին հասցնում: Այսպես, 1893 թ. հունիսին նրանք հետ մղեցին քուրդ ցեղապետ Հուսեյնի ջոկատի հարձակումը, ով ձերբակալվեց եվրոպական տերությունների ճնշման ներքո, սակայն շուտով ազատ արձակվեց, իսկ հետո սուլթանի ձեռքից ստացավ շքանշան, փաշայի տիտղոս և գեներալի կոչում⁶⁴: Հաճախ Սասունում բնակվող քրդերը միանում էին հայերին, եկվոր քրդերի դեմ պայքարում՝ իրենց երկրամասից քշելու համար⁶⁵: Հայերին օգնելու կամ կոտորելու հողի վրա նույնիսկ ներքրդական արյունալի բախումներ են տեղի ունենում Մանազկերտում և Մուշում⁶⁶:

1894 թ. ամռանը Սասունը պաշարման օղակի մեջ վերցվեց: Չորրորդ զորաբանակի հրամանատար Չեքի փաշան Բիթլիսի կուսակալի մոտ հատուկ խորհրդակցություն հրավիրեց օսմանյան բարձրաստիճան կառավարական և զինվորական ներկայացուցիչների ու բազմաթիվ քրդական ազդեցիկ ցեղապետերի մասնակցությամբ (բազարանցոց, որշկոտանցոց, խարըկանցոց, Փէնջարի, Ծովասարի վրա բնակվող խարզանցոց Բշերեկի մեծ աշիրեթապետը, Բելիկցոց պետերը, Խոյթի Բոնալիփի բոլոր իշխանները, մողըկանցի, խէչանցի գլխավորները, բազըկանցոց, ժանըրգանցոց, խըկանցոց, խեյանցոց և Սլիվանիկի բոլոր ցեղապետերը և հյուսիսային բերդերու համիդիների Բեհմեդդին փաշան), որի ընթացքում հաջողվեց հայերի դեմ գործողություն իրականացնելու շուրջ համախմբել քրդական տարբեր ցեղերի, և որոշվեց Սասունի շարժումները խեղդել արյան մեջ: Հրաման տրվեց բոլոր քուրդ ցեղերին անհապաղ հավաքվել և հարձակվել Սասունի վրա: Միայն Բուլանըլիսի հայդարանցիք 300 հեծյալներով ներկայացան⁶⁷: Հայ գործիչներից ոմանք՝ Դամադյանը, Ռուբեն Շիշմանյանը (Երզնկացի քեռին), փորձեցին քրդերի հետ փոխըմբռնման եզրեր գտնել և նրանց չեզոք դիրքս ապահովել, բայց ապարդյուն⁶⁸:

Չեքի փաշայի 12- հազարանոց բանակը ստացավ կառավարությունից օժանդակ ուժեր Դիարբեքիից, Բիթլիսից, Մուշից, Էրզրումից, Խարբերդից, անգամ Հալեպից ու

64 *Turkey, N 1 (1896)*, Part 1 (London: H.M.S.O., 1896), 2, հղվում է ըստ *Հայոց պայքարություն*, հ. III. Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես – XIX դ. վերջ), գիրք առաջին (XVII դ. երկրորդ կես – 1918 թ.) (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Չանգակ-97», 2010), 516:

65 АВІР, Посольство в Константинополе, д. 3176, л. 24-25, *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов*, ред. М. Г. Нерсисян (Ереван: Айастан, 1983), 25; «Վերջին լուր», *Հնչակ*, 25 հուլիս 1892 թ., 62:

66 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 105:

67 «Սասնոյ ապստամբութիւնը եւ կոտորածը», *Դրօշակ*, նոյեմբեր 1894, 2; Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 375:

68 Բայբորդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 217:

Բաղդադից, որին միացան նաև համիդիե գնդերը՝ Բեհաեդդին փաշայի, Մահմադ էլ Աղասիի և այլ հրամանատարների գլխավորությամբ⁶⁹: Սասունը դարձավ այն վայրը, որտեղ փորձարկվելու էին համիդիե գնդերի մարտունակությունը և նրանց նվիրվածությունը սուլթանին:

Սասունի հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց, սակայն ուժերն անհավասար էին: Թուրքական և քրդական զորքերն ավերեցին շրջանի 40-ից ավելի հայկական գյուղեր, կոտորեցին ավելի քան 10 հազար մարդ: Հազարավոր երեխաներ և կանայք առևանգվեցին քրդերի և թուրքերի կողմից: Քրդերի և զորքերի դաժանություններն աննկարագրելի էին⁷⁰: Սպանությունները զանգվածային էին և առանց տարբերակելու զոհերի սեռն ու տարիքը: «Նրանք բոլորը անողոք սպանվեցին մղձավանջային արարածների, սև հագած զինվորների և սպիտակներով քրդերի կողմից: Չինվորները, քրդերը և գապթիները⁷¹ հետապնդում էին հայերին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին, և խոցում ու սպանում առանց տարիքի կամ սեռի խտրության, բոլոր նրանց, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը»⁷²:

Հրամայված էր ոչնչացնել ամենքին և ամեն ինչ: Անկախ այն բանից, մարդիկ հավատարի՞մ են եղել, վճարե՞լ են հարկերը, թե՞ ոչ: Գյուղերից մեկի քահանան և երևելիները գնացին թուրք սպայի հետ հանդիպման՝ վճարած հարկային անդորրագրերով՝ որպես իրենց հավատարմության ապացույց և առհավատչյա, ողորմություն հայցելով, սակայն գյուղը շրջապատված էր, և բոլորին սրախողխող արեցին⁷³:

Այս գործողությունների համար Ջեքի փաշան սուլթանից շքանշան ստացավ, իսկ քրդական չորս ցեղապետերը կառավարության կողմից պարգևատրվեցին մետաքսյա դրոշներով⁷⁴:

Մայիսյան բարենորոգումների ծրագիրը և քրդերը

Սասունի կոտորածները միջազգային լայն արձագանք ստացան: Մամուլը լիքն էր տեղեկություններով, հոդվածներով. եվրոպական քաղաքներում նույնիսկ հանրահավաքներ կազմակերպվեցին՝ Թուրքիային դատապարտելու համար⁷⁵: Այն նաև առիթ հանդիսացավ, որպեսզի մեծ տերությունները վերջապես անդրադառնան Բեռլինի՝ 1878 թ. կոնգրեսի 61-րդ հոդվածից բխող իրենց պարտավորություններին: Կ.Պոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի դեսպաններն ընդհանուր առմամբ համաձայնություն են տալիս Մեծ Բրիտանիայի կողմից հիմնականում Հայոց Պատրիարքարանի առաջարկ-

69 Turkey, N 1 (1896), Part 1 (London: H.M.S.O., 1896), 2.

70 *Геноцид армян в Османской империи*, 25-57; «Սասնոյ սպատամբութիւնը եւ կոտորածը», *Դրօշակ*, նոյեմբեր, 1894 թ., 2-4:

71 Ժանդարմները:

72 Turkey, no. 1 (1895), part 1, p. 171 հղվում է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 141:

73 “The Armenian Crisis in Turkey,” *Woman’s Journal*, April 6 (1895): 106, հղվում է ըստ Balakian, *Burning Tigris*, 56.

74 *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, գիրք 1 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981), 519:

75 Լեո, *Անցյալից*, 104:

ների հիման վրա մշակված բարենորոգումների մի ծրագրի, որը և 1895 թ. մայիսի 11-ին սուլթանի կառավարությանը ներկայացվեց:

Ծրագրում հայաբնակ վեց վիլայեթներում (Էրզրում, Բիթլիս, Վան, Սվլազ, Մամուրեթ-ուլ-Ազիզ (Խարբերդ), Դիարբեքիր) վարչական, ֆինանսական և դատաստանական կազմակերպության մեջ, բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ առանձին գլուխներից բացի, կար 9-րդ գլուխը, որը կոչվում էր «Վերահսկողություն քրդերի վրա»: 24-րդ հոդվածում նշվում էր, որ յուրաքանչյուր նահանգում պետք է ստեղծվի մի առանձին պաշտոն՝ Աշիրեթ-Մեմսուրի թափառական քրդերին հսկելու համար: Պաշտոնյան օժտվում էր լայն լիազորություններով և պահակախմբով: «...Եթե նրանք որևէ չարագործություն անեն գյուղացիների սեփականության դեմ կամ որևէ զրկանք հասցնեն գյուղացիներին, այդ օրից սկսած կարգելվի նրանց որևէ տեղափոխություն կամ քոչ»⁷⁶: Փորձ էր արվում նաև քրդերին նստակյաց կյանքի և երկրագործության ընտելացնելու՝ նրանց որոշ հողեր հատկացնելով. «...այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատվելը չի կարող որևէ վնաս հասցնել նստակյաց ազգաբնակչության բարեկեցության և խաղաղությանը»⁷⁷: 10-րդ գլուխը վերաբերում է հենց «Համիդիե հեծելագործ»-ին: Ըստ առաջարկի՝ այն կարող է «գործածվել և բանակել միայն կանոնավոր զորքի գնդերի հետ միասին... Սովորական ժամանակներում, երբ համիդիե հեծելագունդը ծառայության մեջ չէ, չպետք է կրի ո՛չ նշանագգեստ և ո՛չ էլ զենք»⁷⁸:

Սակայն այս ծրագիրը մյուսների նման չիրագործվեց, քանի որ Աբդուլ Համիդը Հայկական հարցի վերաբերյալ բոլոր հնարավոր քննարկումները կանխելու համար հայտարարեց, որ չի ցանկանում սահմանափակվել իր կայսրության միայն մի մասում, այսինքն՝ հայկական վեց վիլայեթներում վարչական բարենորոգումներ իրականացնելով, այլ դրանք ուզում է տարածել կայսրության բոլոր վիլայեթների վրա⁷⁹: Նա 1895 թ. օգոստոսին թուրքական կառավարության ծրագիր առաջ քաշեց, որը փաստացի մայիսյան բարենորոգումների ծրագրի մերժում էր⁸⁰:

Հայկական կոտորածների բնույթը և հետևանքները

Կառավարության թողտվության պայմաններում քրդական ասպատակությունները շարունակվում էին: Փաստացի քրդերին տրված էր գործողությունների բացարձակ ազատություն: Բերենք ընդամենը մեկ օրինակ Բուլանըլիսի Շեյխ-Աղուբ գյուղի վրա նրանց կատարած հարձակումից և թալանից: Համիդիե հեծյալները գալիս մտնում էին հայ գյուղացիների տները և վերցնում էին այն ամենը, ինչ ցանկանում էին: Եթե տան տերը ուզում էր հետ ստանալ գողացվածը, ապա պարտավոր էր վճարել և թալանած

76 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ Ջոն Կիրակոսյան (Երևան, «Հայաստան», 1972), 144:

77 Նույն տեղում, 143:

78 Նույն տեղում, 144:

79 Նույն տեղում, 148:

80 Turkey, N 1 (1896), *Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty's Consular Officers in Asiatic Turkey* (London: H.M.S.O., 1896), 98-100.

ապրանքը հետ գնել քրդերից: 1894 թ. ամռանը համիդիները գյուղից երկու հարյուր ոչխար ընտրեցին ու տարան: Գյուղացիները բողոքեցին, և կառավարությունը երեսունի չափ զինվոր և ոստիկան ուղարկեց՝ ոչխարներին հետ բերելու համար, սակայն համիդիները կրակ բացեցին նրանց վրա, և զինվորները չհամարձակվեցին պատասխան կրակ բացել՝ պատճառաբանելով, որ հրաման չունեն կրակելու, իսկ եթե կրակեն, և նրանցից մեկը սպանվի, փրկություն չի լինի⁸¹:

Երբ 1895 թ. սեպտեմբերի 18-ին հայերը փորձեցին բարենորոգումների խափանման հարցը նորից բարձրաձայնել և Կ.Պոլսում մի քանի հազարանոց թափորով շարժվեցին դեպի Բարը Ալի հրապարակ՝ իրենց հետ տանելով պահանջագրեր ապօրինություններին վերջ դնելու վերաբերյալ, նրանց ճանապարհը կտրող թուրքական ոստիկանությունը հրահրեց արդեն իսկ պատրաստված, մահակներով զինված թուրք և քուրդ խուժանի հարձակումը ցուցարարների վրա⁸²: Մի քանի օրվա ընթացքում Կ.Պոլսում կոտորվեց 2.000 հայ: Կ.Պոլսի ջարդերն ազդանշան էին գավառներում հայերի զանգվածային կոտորածների: Դրանք նաև ցույց տվեցին, որ եվրոպական տերությունները չեն պատրաստվում որևէ քայլ ձեռնարկել՝ սահմանափակվելով ձևական բողոքի նոտաներով:

Հայկական ջարդերը ներառեցին բոլոր վեց վիլայեթները՝ Սվազը, Խարբերդը, Դիարբեքիրը, Էրզրումը, Վանը և Բիթլիսը, ինչպես նաև Անկարայի (Կեսարիան շրջակայքով), Հալեպի, Տրապիզոնի վիլայեթները և Իզմիրի անկախ սանջակը: Հայաբնակ միակ վիլայեթը, որ գերծ մնաց ջարդերից, Ադանան (բացառությամբ Պայասի և Չոք-Մարգվանի՝ Դորթոլի) էր: Տեղի ունեցավ մեծ և փոքր չափերի հասնող *սոգրոմ*ների մի ամբողջ շարք Օսմանյան կայսրության տարածքով մեկ: Սպանություններն իրականացվում էին ամենադաժան ձևերով՝ ոչ միայն սառը զենքով, այլ նաև կենդանի այրելով և խեղդամահ անելով⁸³:

Մեծ տերությունները միայն նոյեմբերի կեսերին համաձայնության եկան՝ համատեղ գործողություն իրականացնելու, և դեկտեմբերի 12-16-ը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմանավերը մտան Դարդանել: Սա ժամանակավորապես դադարեցրեց հայկական կոտորածների առաջին փուլը:

1896թ. օգոստոսի 14 (26)-ին Կ.Պոլսում մի խումբ հայ երիտասարդներ գրավեցին «Բանկ Օտոմանը»՝ փորձելով միջազգային հանրության ուշադրությունն ուղղել դեպի հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները և ստիպել սուլթանին միջոցներ ձեռնարկել կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներ իրականացնելու ուղղությամբ: Սակայն դրամատան գրավումն ընդամենը առիթ դարձավ՝ մայրաքաղաքում հայերի կոտորածները վերսկսելու համար, որոնց մի քանի օրվա ընթացքում զոհ գնաց ավելի քան 10 հազար մարդ: Կոտորածները դուրս եկան մայրաքաղաքի սահմաններից և տարածվեցին Արևմտյան Հայաստանի սահանգներում:

81 «Պոլսանըզ Շելխ-Աղուպ գիլի բնակչաց կրած հարստահարությանց նկարագրութենէն մի թերթ», *Հւշակ*, 15 հունիսի 1895 թ., 67:

82 Edwin Pears, *Life of Abdul Hamid* (London: Constable & Company Ltd, 1917), 253-254.

83 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 121-163.

Քրդերն ակտիվորեն մասնակցեցին կոտորածների և թալանի բոլոր փուլերին Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Այսպես, Ուրֆայում կոտորածները սկսվեցին քուրդ շեյխ մոլլա Սայիդ Ահմեդի կողմից մի հայ տղամարդու ծիսական սպանությունից, երբ վերջինիս պատկեցրին գետնին և գլուխը կտրեցին⁸⁴:

Խնուսում բոլոր չարագործություններ անողները համիդիե խմբերն էին, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 150-400 հոգուց, որոնք մերթընդմերթ, միացած կանոնավոր զորքին, ցերեկով հարձակումներ էին գործում: Յուրաքանչյուր գյուղի թալանը տևում էր 3-4 օր: Ընդ որում այդ ամենն անում էին բացահայտ՝ հայտարարելով. «Շաքիր փաշան թագավորի անունից հրաման է տվել քրդերին, թե հայերի գլուխներ կտրեք և նրանց ունեցվածքը կողոպտեցեք»: Իսկ քրդերի գործողությունների դեմ հայերի գանգատին կայմակամը պատասխանում է. «Ձեր վրա քրդերի հարձակման ժամանակ մի՛ դիմադրեք, որովհետև թագավորի հրամանն է»⁸⁵:

Մի ականատես էլ վկայում է Խարբերդից. «Մենք մեկ շաբաթ կամ տաս օր շրջապատված էինք դաշտում այրվող գյուղերի պատնեշով: Աստիճանաբար կրակի և դաժան չարագործների պատը մոտեցավ քաղաքին: Հարձակումը նախատեսվում էր կիրակի, նոյեմբերի 10-ին, քաղաքում որոշ խմբեր հարձակում գործեցին, բայց զինվորները քշեցին նրանց: Ներխուժող քրդերը, ռեզիստները (քրդերի տեսքով քողարկված թուրք զինվորները) դրան պատրաստ չէին: Երկուշաբթի՝ նոյեմբերի 11-ին, հարձակումը սկսվեց Հուսեյնի գյուղում (քաղաքից մի փոքր հեռավորության վրա գտնվող գյուղ), որտեղ 200 մարդ սպանվեց, և շատերը վիրավորվեցին, ապա շարժվեցին դեպի Սինամուղ կիրճ (քարքարոտ մի բարձունք՝ հին ամրոցի ավերակներով), իսկ հետո՝ քաղաքի արևելյան հատված⁸⁶:

Նոյեմբերի 5-ին տեղի ունեցած Բալուի դաժանությունները նկարագրվում էին հետևյալ կերպ. «Շուկան և 50 կամ 60 տներ թալանվել են զինվորների և քրդերի կողմից: Հետո կառավարական տեղալը (բրոքեր) հրամայեց, որ մարդիկ խանութներ բացեն երեք մեղիջիղների (արծաթե դուլար) տուգանքի սպառնալիքով: Ասաց, որ ամեն ինչ անցել է, և այլևս ոչ մի վտանգ չի սպառնում: Քրդերը նորից եկան, բայց քշվեցին դեպի գյուղեր, որոնք թալանեցին: Շեյխը և նրա որդին քարոզում էին քրիստոնյաների դեմ... Շեյխի որդին ասաց, որ ծարավ է հայերի արյան համար, և հապաղելն անմտություն է: Նա հայտարարեց, որ պետք է անձամբ 43 մարդ սպանի: Նոյեմբերի 11-ին քրդերը հանկարծակի հայտնվեցին և սկսեցին սպանել: Միայն երկու հայեր դիմադրեցին: Մահացածների թիվը գնահատվում է 1200-2000: Մատուռը ավերվեց, տնակն ու դպրոցը վերածվեցին քարակույտերի: Վերապրածները մահանում են սովից: Ոչ մի նպաստ չի թույլատրվում: Բալուի շուրջ քառասունչորս գյուղեր ամբողջովին թալանված են, մոտ յոթը՝ հրդեհված: Խոշմաթից 20-30 կանայք եկել են բացարձակապես մերկ: Շատերը խոշտանգված են»⁸⁷:

84 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 108:

85 Նույն տեղում, 110:

86 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 428-429.

87 Նույն տեղում, 441:

Մարդինից մի ականատես նշում էր, որ Դիարբեքիում խռովությունը սկսվեց նոյեմբերի 1-ին՝ ուրբաթօրյա աղոթքից հետո, և «...դրսից եկած քրդերը ձիավարելով թալանեցին և կրակի տվեցին շուկայի խանութները և հարևանությամբ գտնվող տները»: Ավելի ուշ. «...քրդերին դուրս քշեցին քաղաքից և քաղաքի դարպասները փակեցին նրանց առջև, նրանք ուշադրությունը տեղափոխեցին դեպի գյուղեր: Մեկը մյուսի հետևից գրավվեցին, թալանվեցին և շատ դեպքերում այրվեցին, կոտորածներն ընդհանուր առմամբ կախված էին գյուղերի կողմից դիմադրության աստիճանից»: Դիարբեքիից մինչև Բիթլիսի նահանգի Սիրտի սահման քրիստոնյաների բոլոր գյուղերն ավերվեցին: Քրդերը համատորեն պնդում էին, որ քրիստոնյաների կոտորածի հրաման կար, սակայն Մարդինի քրիստոնյաները կաշառել են կառավարությանը՝ թաքցնելու այն և պաշտպանելու հայերին: Երբ քրդերը հասկացան, որ կառավարությունն ու քաղաքը միասնական պաշտպանական միավոր են կազմել, նրանք նահանջեցին և հարձակման ալիքը տարածեցին արևելք՝ ճանապարհին վերցնելով Նիսիբիսը և մոտ քսան քրիստոնյա գյուղեր: Վերջիններից շատերը նույնպես այրվել են: Միոյատը, ինչպես նաև Մարդինը դիմադրեց բոլոր հարձակումներին⁸⁸: Նկատվում էր մարտավարական որոշակի նմանություն: Քրդերին չէին թողնում քաղաք մտնել, կամ առաջին իսկ հարձակումից հետո նրանք դուրս էին մղվում քաղաքից և նրանց՝ սպանելու ամբողջ ձգտումը տեղափոխվում էր շրջակա գյուղերի վրա:

Քրդերն ակտիվորեն մասնակցեցին Վանում հայերի դիմադրությունը կոտրելուն: Քաղաքի վրա հարավից հարձակվել էին Նորատուզից, Խոշաբից, Աղբակից եկած քուրդ ամբոխն ու համիդիե հեծյալները: Իսկ հյուսիսային կողմից գրոհում էին չամսիկցի, թակուրացի, մուկուրցի, մըլանցի քուրդ համիդեականները՝ Սաադեդդին փաշայի հրամանատարությամբ: Արևմտյան կողմից թուրքերին միացել էին Ոստանից, Գավաշից, Կարճկանից և Շատախից եկած քրդական հրոսակալամբերը⁸⁹: 1896 թ. հունիսի 3-8-ը տեղի ունեցած Վանի ինքնապաշտպանության թե՛ մարտերն ավարտվեցին պայմանավորվածությամբ, որ ինքնապաշտպանության կազմակերպիչները կթողնեն Թուրքիան և թուրքական զորքերի ուղեկցությամբ կհեռանան Իրան: Մոտ հազար տղամարդ՝ Վանի երիտասարդության սերուցքը, սահմանի մոտ կոտորվեց քրդական ցեղերի ակտիվ մասնակցությամբ⁹⁰: Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ նահանջող զինվորներին շրջապատում և կոտորում են Խանասորի դաշտում դարանակալած Շարաֆ բեկի⁹¹ հրամանատարության տակ գտնվող քրդական հրոսակալամբերը, իսկ

88 Նույն տեղում, 475-476:

89 *Հայ ժողովրդի պայքարություն*, հ. 3, գիրք 1, 560:

90 Balakian, *The Burning Tigris*, 61; Ռաֆիկ Հովհաննիսյան, «Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 7 (1976), 58-66:

91 1897 թ. հուլիսին ՀՅԴ Կովկասի շրջանային բյուրոյի որոշմամբ իրականացվում է Խանասորի արշավանքը, որը վրեժխնդրության գործողություն էր Վանից նահանջած զինվորների ոչնչացման համար: Թիբախը մագրիկ ցեղն էր: Թեև ցեղապետ Շարաֆին հաջողվում է փախչել, սակայն ցեղը մեծ կորուստներ է տալիս (մանրամասն տե՛ս Համլետ Գևորգյան, *Նիկոլ Դուման* (Երևան, «Հրագրան», 2002), 58-107, Հովիկ Գրիգորյան, *Հայ ազապագրական պայքարի մարտավարությունը 1895-98* (Երևան, «Նոյյան տապան», 2002), 62-58, Միքայել Վարանդեան, *Հ. Յ. Դաշնակցության պայքարություն* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1992), 149-156:

Պետոյի և Մարտիկի գլխավորությամբ սահանջող խումբը Չուխ-Կետուկում և Գարահիսար լեռան լանջերին ոչնչացվում է համիդեականների կողմից⁹²:

Խոսելով քրդերի մասնակցության մասին՝ պետք է շեշտել, որ այն զանգվածային էր և չէր սահմանափակվում միայն համիդիե ջոկատների կամ զենք կրելու ընդունակ տղամարդկանց մասնակցությամբ: Օրինակ, Մարաշից ականատեսը նկարագրում է. «...ամենասարսափելին քուրդ և թուրք կանանց ոգևորված լու-լու-լու գոչուններն էին, որոնցով նրանք քաջալերում էին իրենց տղամարդկանց հարձակման»⁹³:

Նման զանգվածային մասնակցությունը չի կարելի բացատրել միայն կայսրության շահերին համապատասխան քրդերին օգտագործելու հանգամանքով: Քրդերը գործում էին առաջին հերթին սեփական հետաքրքրությունների ծիրում: Ջարդի օրերին սուլթանը և իր կառավարությունը քրդերին ներշնչում էին, որ բնաջնջելով հայությանը՝ նրանք կարող են դառնալ և՛ Քրդստանի, և՛ Արևմտյան Հայաստանի լիիրավ տերը⁹⁴: Դիլլոնը դա համարում է գոյություն ունեցող ծրագիր, որ առաջարկվել է կայսրության որոշ բարձրագույն պաշտոնյաների կողմից՝ դուրս մղել հայերին սահմանային շրջաններից և նրանց փոխարինել մահմեդականներով⁹⁵: Համիդյան կոտորածների հետևանքով տասնյակ հազարավոր հայեր հեռացան Արևմտյան Հայաստանից, իսկ նրանց լքված գյուղերն արագորեն լրացվեցին քրդերով և չերքեզներով: Ա-Դ-ն գրում է, որ Հայոց Ձորում քրդերը հաստատվեցին գլխավորապես 1896 թ. կոտորածներից հետո: Խոշաք և Ոստան գավառակներում. «...կես դար առաջ ապրում էին բավականին մեծ թվով հայեր, այժմ... նրանց տեղը բռնել են... քուրդ տարրերը»: Մշո դաշտի 21 գյուղերում 1889 թ. 117, իսկ 20-րդ դարի սկզբում արդեն 554 քրդական տնտեսություն կար: Բազմաթիվ շրջաններ՝ ժամանակին հայերով բնակեցված, կա՛մ ամայացել են, կա՛մ դարձել քրդաբնակ ու թուրքաբնակ բնակավայրեր⁹⁶: 1893 թ. օգոստոսի 20-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարարին Թիֆլիսից գրված նամակում շարադրվում է. «45 թուրքահայ ընտանիք անցնում են սահմանը և հաստատվում Կարսի մարզում, և պատճառաբանում դա թուրքական իշխանությունների քաղաքականությամբ, երբ հայերը բռնի կերպով դուրս են մղվում սահմանային գոտուց, և իրենց հողերի վրա բնակեցվում են քրդերը»⁹⁷:

Կոտորածները նաև տնտեսական շահ ապահովեցին քրդական որոշ ցեղերի համար: 1890-ական թվականների ջարդերից հետո օսմանյան կառավարությունը երկրից հեռացած հայերի հողերը և գույքը փոխանցեց քրդերին: Հայերի համատարած հողագրկումը բերում էր նրանց տեղում քրդական վերնախավի տիրույթների ընդլայնման և նորերի առաջացման⁹⁸:

92 «Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից», *Դրոշակ*, 15 օգոստոսի 1896 թ., 139:

93 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 451, 452.

94 Սասունի, *Քյուրյր ազգային շարժումները*, 159:

95 *Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне* (Москва: Разсвѣтъ, 1896), 6.

96 Ա-Դ-ն, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 183, հղված է ըստ *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 6 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981), 276:

97 АВІР, Полятархив, д. 3431, л. 307-308, հղված է ըստ *Геноцид армян в Османской империи*, 23:

98 Քրդերի հարձակումների և կամայականությունների հետևանքով հայկական գյուղերի դատարկ-

Թեև 1890-ական թթ. քրդերը հիմնականում ներգրավվեցին հայերի կոտորածներում, սակայն առանձին ցեղապետերի (օրինակ՝ Ջեզիրեից հյուսիս բնակվող քրդական ցեղերի առաջնորդ Մուստաֆա աղան, Մոկսի քրդերի ցեղապետ Մուրթուլլա բեյը, Հուսեյն փաշան ադիլջևագում, Հաջի խանը Նորդուզում, Իբրահիմ փաշան Շեիրիվերանում և այլն⁹⁹) գլխավորությամբ գործող ցեղեր չմասնակցեցին կոտորածներին և երբեմն հայերին վերցրին իրենց պաշտպանության տակ:

Ռիչարդ Տերմենը դա բացատրում է այն հանգամանքով, որ. «...բազմաթիվ քրդական պետեր գիտակցում էին, որ հայերի ոչնչացումը իր հետ կրեթի հողագործության և արդյունաբերության լրիվ անկում, ինչի պատճառով նրանք ոչ միայն չէին կոտորում իրենց շրջաններում ապրող հայերին, այլև հակառակը, նրանց պաշտպանում էին զինվորական քրդերից»¹⁰⁰: Քրդերը միշտ էլ թալանել են քրիստոնյա գյուղերը, բայց երբեք ոչ այդպիսի չափերով և վայրագությամբ, քանի որ միշտ գիտակցել են, որ քրիստոնյաներին ամբողջությամբ քայքայելը հակասում է իրենց իսկ շահերին, քանի որ այդպես իրենք սպանում են ոսկե ձվեր ածող սագին¹⁰¹:

Համիդյան կոտորածներին մասնակցած ոճրագործները չէին պատժվում: Ավելին, սուլթանը մերժեց Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայ բնակչության դահիճ, հայգերանլի ցեղի առաջնորդ Հուսեյն փաշային դատի տալու դեսպանների պահանջը¹⁰²: Ընդհակառակը, նա պարգևատրվեց ոսկե մեդալով: Սուլթանական պարգևների ու շքանշանների արժանացան նաև ջարդերի ժամանակ «աչքի ընկած» այնպիսի քուրդ ֆեոդալներ, ինչպիսիք էին Էմին փաշան, Հաջի Խեյմուր փաշան, Դարվազ խանը և ուրիշներ¹⁰³: Սակայն միաժամանակ որոշ ցուցադրական պատժամիջոցներ իրականացվեցին՝ Եվրոպայի աչքում պատասխանատվությունը կառավարության վրայից հանելու համար: Մի քանիսից թալանած ավարը հետ վերցվեց և չնչին գներով վերադարձվեց հայ տերերին: Կառավարությունը հրահանգում է Ալա բեկին անձամբ գնալ այն քրդերի վրա, որ ավերել են Մասունը: Ալա բեկը 200 ձիավորով նախ՝ գնաց ջիբրաջի ցեղերի վրա, բայց նրանք հրաժարվեցին որևէ բան վերադարձնելուց: Ալա բեկը դիմեց հասնանցոց ցեղին, որոնց առաջնորդ Ֆաթի փաշան բերվեց Խնուս և բանտարկվեց՝ հետագայում 400 ոսկի կաշառքով միայն ազատվելով: Ցեղապետերի մի մասն էլ, ինչպես օրինակ՝ Աղամի աղան, ազատվեցին, քանի որ սպառնացին, որ կբացահայտեն դեսպաններին, որոնք սուլթանի դրդմամբ մասնակցել են հայկական կոտորածներին¹⁰⁴:

ման և քրդերի ձեռքն անցնելու բազմաթիվ դեպքերի մասին տե՛ս օրինակ՝ *Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне*, 37-42:

99 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 227-228:

100 Ричард Термен, *Отчет о полевой поездке 1907 в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах* (Тифлис: тип. Штаба Кавк. воен. окр., 1909), 51.

101 *Great Britain. Foreign Office*, no. 2, 288 հղված է ըստ Walker, *Armenia: The Survival of a Nation*, 170-171:

102 Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 230:

103 АВГР, Посольство в Константинополе, 1897, д. 3516, лл. 1-4, 9, 11, 12, հղված է ըստ Բայրուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 231:

104 «Մասունի կոիւր», *Դրոշակ*, հունվար, 1895 թ., 6-7:

Հանցակցությունը որպես համախմբման մակարդակի բարձրացման գործոն

Հանցակցությունը հաճախ դառնում է խմբի անդամների միջև կապերի ամրապնդման կարևորագույն գործոն: Մասնակցելով ծանր հանցագործության իրականացմանը՝ հանցագործները ձեռք են բերում համախմբվածության ավելի ամուր մակարդակ, սկսում են նույնականացնել միմյանց և դառնում են առավել մտերիմ: Սա բավականին հիմնավորված պնդում է քրեագիտության և սոցիալ-հոգեբանության որոշ տեսությունների մեջ¹⁰⁵:

Հայտնի քրեագետ, Սենթ Լուիսի Միսսուրիի, հետազայում Արիզոնայի համալսարանների պրոֆեսոր Սթոք Դեբերն իր առաջարկած էսկալասիայի հիպոթեզում նշում է, որ խմբի համախմբվածությունը (cohesiveness) և հանցավորությունը կարող են փոխադարձաբար ամրապնդվել: Բռնությունը և սպառնալիքը կարող են մեծացնել համախմբումը, ինչն իր հերթին հանգեցնում է հետագա բռնության ավելացման: Այսպիսով, նա նկատում է, որ հանցավորությունն ավելացնում է հանցախմբի միասնությունը, համերաշխությունը՝ նրա անդամներին միավորելով միասնական թշնամու դեմ, ընդգծելով փոխադարձ կախվածությունը միմյանցից¹⁰⁶:

Պատահական չէ, որ այս գործիքը կիրառվում է գաղտնի կամ հանցավոր շատ խմբերի կողմից նոր անդամների անդամակցության ժամանակ, երբ կարիք է լինում ապահովել նոր գործընկերների ոչ միայն ներառումը սեփական համակարգ, այլ նաև նրանց կապի ամրապնդումն արդեն իսկ գոյություն ունեցող համայնքի հետ:

Այս պարագայում, օրինակ, կարելի է հիշել 19-րդ դարի վերջին Ռուսաստանում գործող «Ժողովրդական պատիժը» կազմակերպության կողմից իրականացված մի գործողություն, որը պատմության մեջ մնաց որպես «ուսանող Իվանովի սպանություն»: Հեղափոխական կազմակերպության ստեղծող և առաջնորդ Սերգեյ Ենչանը հեղափոխության վերջնական նպատակներին հասնելու ճանապարհին ծայրահեղ միջոցների կիրառման կողմնակից էր: Արտերկրում ծանոթանալով հայտնի հեղափոխական գաղափարախոսներ Մ. Բակունինի, Ն. Օգարյովի և Ա. Գերցենի հետ՝ նա 1869 թ. ստեղծում է գաղտնի, անլեգալ գործող մի խմբակ, որի հիմքում խիստ կարգապահությունն էր և իր մենիշխանության վրա հիմնված բռնապետությունը¹⁰⁷: 1869 թ. նոյեմբերի 21-ին Ենչանը կազմակերպում է Պետերբուրգի Պետրովյան ակադեմիայի ուսանող Ի. Իվանովի խմբակային սպանությունը, որն իրականացվեց իր սեփական իշխանության դեմ ընդվզման բացառման, նաև խմբի մյուս անդամներին կազմակերպության հետ ավելի ամուր կապով միացնելու համար¹⁰⁸:

105 Karine Descormiers and Raymond R. Corrado, "The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites," *Deviant Behavior* 37, no. 11 (2016): 1357; Scott H. Decker, "Collective and Normative Features of Gang Violence," *Justice Quarterly* 13 (1996): 243–264; James D Vigil, "Group Processes and Street Identity: Adolescent Chicano Gang Members," *Ethos* 16 (1988): 421–445.

106 Decker, "Collective and Normative Features of Gang Violence," 263.

107 Елена Перевалова, "С. Г. Нечаев и «нечаевское дело» в оценке газеты «Московские ведомости»,» <http://www.mediascope.ru/1596>, դիտվել է 11.10.2018:

108 П. Аврич, Бакунин и Нечаев, <https://history.wikireading.ru/277709>, դիտվել է 15.10. 2018:

Այս համախմբման համար կատարված ծիսական սպանության (երբեմն իրական, երբեմն սիմվոլիկ) գաղափարը լայնորեն տարածված էր նաև ինիցիացիայի՝ ներքսածության¹⁰⁹ ընթացքում: Ներքսածությունն ինքն իր գործողությամբ հենց համախմբվածության մեծ աստիճան հաղորդելու հիմնական նպատակ ունի: Է. Հոբսբաունը նշում է. «...մարդուն հատուկ խմբի մեջ ինիցիացիային շրջապատող հանդիսավոր արարողությունը կոչված էր ցույց տալու իր բացարձակ տարբերությունը մյուս խմբերից և ամենաուժեղ հնարավոր կապերով նրան կապել տվյալ խմբի հետ: Այն ներառում էր խորհրդավոր վախ ներշնչելու, թեկնածուին փորձելու բաղադրիչ, որը ծանոթացնում էր նրան խմբի գաղտնիքներին և իր բարձրակետին էր հասնում ինչ-որ հատուկ ձևով՝ հանդիսավոր հայտարարության, սովորաբար երդման և որոշ արարողության միջոցով, որն իր հերթին խորհրդանշում էր խմբի մեջ թեկնածուի ներառումը»¹¹⁰:

Գաղտնի կազմակերպություններում ներքսածության ծեսերն ունեն կենտրոնական դեր¹¹¹, ինչպես նաև դրանք կարևոր են հանցավոր խմբերի համար:

Այսպես, կանադական Սայմոն Ֆրեյզերի համալսարանի գիտնականներ Ռայմոնդ Քորրադոն և Կարինե Դեսքորմյերսը երիտասարդական հանցախմբեր ներքսածության, ներգրավման ծեսերի հետազոտության ընթացքում ուսումնասիրեցին հանցավոր խմբերի 54 մասնակիցների ներգրավման գործընթացի համատեքստը և բնույթը: Հարցազրույցները և հետազոտությունն իրականացվել էին Կանադայի, Բրիտանական Կոլումբիա նահանգի Վիկտորիա և Բրնսաբի բնակավայրերում 1998-2012 թթ.: Այդ ընթացքում բացահայտվեց ներքսածության երեք ձև՝ սեփական անձի նկատմամբ իրականացվող բռնության գործողություն (ego violent event), հանցագործության իրականացում և մյուսների հանդեպ ընդգծված բռնություն: Հանցախմբի անդամները պարտավոր էին որոշակի հանցավոր, բռնության գործողության միջով անցնել՝ հանցախումբ ներգրավվելու համար¹¹²: Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Իրվինգ Սպերգելը նշում է. «Ըստ հանցախմբի սովորության, խմբավորման անդամ դառնալու ծեսերը տարբեր են լինում՝ սկսած մեծ քանակի ալկոհոլ օգտագործելուց, թմրանյութերի օգտագործումից կամ վաճառքից, խմբի այլ անդամների հետ կովելուց, խանութից գողություն կատարելուց մինչև հակառակորդ բանդայի անդամին գնդակահարելը: Կանանցից կարող են պահանջել սեռական հարաբերություն ունենալ խմբի տղամարդկանցից մեկի հետ

109 Ներքսածություն բառը կիրառվում է որպես initiation բառի թարգմանություն, որպես խմբի մաս կազմելու համար որոշակի ծեսի, գործողությունների մի համակարգի նկարագրություն: Հայերեն բառերի համար շնորհակալ ենք Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս Դավիթ Իսաջանյանին:

110 Eric J. Hobsbawm, *Primitive Rebels: Studies in Archaic Forms of Social Movement in the 19th and 20th Centuries* (New York: Norton, 1959), 154 հղվում է ըստ Joel Best and Mary M. Hutchinson, "The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse," *Justice Quarterly* 13 (1996): 395.

111 Georg Simmel, *The Secret Society*, in *The Sociology of Georg Simmel*, ed. by K.H. Wolff (New York: Free Press, 1950), 345-76 հղված է ըստ Best and Hutchinson, "The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse," 395.

112 Descormiers and Corrado, "The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites," 1341.

կամ մենամարտել կանանց խմբավորման առաջնորդի կամ հիմնական անդամներից մեկի հետ¹¹³:

Լուս Անջելեսի հանցախմբերն ուսումնասիրող Ս.Դեկերը նաև ավելացնում է, որ նոր անդամներն ունեին ընտրություն՝ կամ՝ ենթարկվել ծիսական ծեծի, կամ՝ «զնալ առաքելության»: Գնալ առաքելության նշանակում էր, որ նոր անդամները պետք է ներգրավվեին բռնության գործողության մեջ, սովորաբար հակառակորդի հանցախմբերի անդամների դեմ¹¹⁴: Հանցախմբի նոր անդամներից կարող էին պահանջել մասնակցել զինված կողոպուտի, մեքենայից կրակոցներ արձակելու գործողության, հարձակումների, բռնաբարության կամ նույնիսկ սպանության, թմրամիջոցներ տեղափոխելուն: Նման գործողությունների թիրախ կարող էին դառնալ ինչպես մրցակից հանցախմբերի անդամները, այնպես էլ անմեղ մարդիկ¹¹⁵: Թեև Բեսթը և Հաթչինսոնը իրենց հետազոտության մեջ պնդում են, որ պատահական անցորդների նկատմամբ բռնությունն ընդամենը քաղաքային առասպել է¹¹⁶, սակայն հանդիպում են նաև նման օրինակներ:

Նման օրինակ կարող է լինել 2007 թ. սեպտեմբերին Լոնդոնում Յասին Աբդիրահմանի սպանությունը: 22-ամյա երիտասարդը հարձակման ենթարկվեց բեյսբոլի փայտերով, կտորած շերտով և դանակներով զինված դիմակավորված երիտասարդների խմբի կողմից և հետագայում հիվանդանոցում մահացավ ստացված վնասվածքներից: Ավելի ուշ պարզվեց, որ նա թիրախավորվել էր որպես MDP կոչվող հանցախմբի անդամակցության ծիսակարգի՝ ներքսածության մաս:

Ըստ վկաններից մեկի՝ Մոհամեդ Ավեյսի. «...հանցախմբին անդամակցելու համար պետք էր վնաս հասցնել ինչ-որ մեկին՝ ապացուցելու համար խմբի անդամ դառնալուն արժանի լինելը»: Եվ զոհ դարձած Յասինը պատահական զոհ էր, ընդամենը թիրախավորվեց որպես ինիցիացիայի՝ ներքսածության մաս¹¹⁷:

Իհարկե, ցեղասպանագիտության մեջ այս ասպեկտն ուսումնասիրված չէ, սակայն կարծում ենք, որ այդ ոլորտի զարգացումը հեռանկար ունի: Այս հոդվածում քրդե-

113 Irving A. Spergel, *The Youth Gang Problem: A Community Approach* (New York: Oxford University Press, 1995), 91, հղված է ըստ Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 390.

114 Scott H. Decker and Barrick Van Winkle, *Life in the Gang: Family, Friends, and Violence* (Cambridge: Cambridge University Press, 1996), 255 հղված է ըստ Descormiers and Corrado, “The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites,” 1343.

115 Նույն տեղում, 347-348:

116 Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 383–404 հղված է ըստ Descormiers and Corrado, “The Right to Belong: Individual Motives and Youth Gang Initiation Rites,” 1343.

117 “Armed Gang Kill Innocent Student as Part of ‘Gang Initiation,” <https://www.dailymail.co.uk/news/article-481350/Armed-gang-kill-innocent-student-gang-initiation.html>, դիտվել է 13.10.2018; Paul Cheston, “12-year-old Boy Who Took Part in Gang Killing of Innocent Student,” <https://www.standard.co.uk/news/12-year-old-boy-who-took-part-in-gang-killing-of-innocent-student-6762073.html>, դիտվել է 13.10.2018; Andy Bloxham, “Teenager Responsible for Notting Hill Carnival Stabbing was Spared Jail Two Years ago,” <https://www.telegraph.co.uk/news/uknews/crime/8913959/Teenager-responsible-for-Notting-Hill-Carnival-stabbing-was-spared-jail-two-years-ago.html>, դիտվել է 13.10.2018; “Student’s Killer Posed on Website,” http://news.bbc.co.uk/2/hi/uk_news/england/london/8010810.stm, դիտվել է 13.10.2018:

րի ներգրավման մի շարք պատճառների շարքում առաջարկում ենք քննել նաև այս վարկածը, քանի որ Օսմանյան կայսրությունն ուներ բոլոր հնարավոր ռեսուրսները՝ հայերի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու սեփական միջոցներով, ինչը բազմիցս արել է քրդական ապստամբությունների ժամանակ: Հնարավոր է, որ տվյալ մարտավարությունը կիրառվել է, քանի որ նշված ժամանակահատվածում Կ.Պոլիսը տեսանելի ջանքեր էր գործադրում՝ լուծելու մի հստակ խնդիր՝ ներգրավելու տերության արևելյան վիլայեթներում մեծ կշիռ ունեցող քրդական ցեղերին օսմանյան միասնական քաղաքականության մեջ, և «համատեղ գործած հանցագործությունը» համախմբման լավագույն լուծումներից էր:

Հայկական կոտորածներին քրդերի ներգրավման պատճառները

Օսմանյան կայսրությունը, քրդերին ներգրավելով հայերի դեմ իրականացվող շարունակական բռնաճնշումների, ունեցվածքի թալանի և զանգվածային սպանությունների մեջ, համիդիե հեծելազորային ջոկատներ ստեղծելով, մի քանի խնդիր էր լուծում:

Նախ՝ այն ընդհանուր առմամբ լուծում էր Պարսկաստանի հետ սահմանի պաշտպանության խնդիրը՝ այն ավելի ամրապնդելով: Սակայն հռչակված նպատակից բացի, վերոնշյալը թույլ տվեց լուծել այլ, միգուցե ավելի կարևոր խնդիրներ:

Համիդիե գնդերն ավելի ուժեղացրին ճնշումը հայկական ազգաբնակչության նկատմամբ: Դա կարևոր էր՝ կասեցնելու համար 19-րդ դարի հայկական ազգայնականության վերելքը, որը լիովին տեղավորվում էր ժամանակի եվրոպական ազգայնականության ալիքի մեջ: Մեկը մյուսի հետևից Եվրոպայում ստեղծվում էին ազգային պետություններ, և հենց ազգային չափորոշիչն էր դառնում հանրության համախմբման գլխավոր ցուցիչը և գրավականը: Այս երևույթը տեղի էր ունենում նաև Օսմանյան կայսրության տարբեր ազդեցիկ էթնիկ (արաբական, քրդական) խմբերի բուրժուազիայի ձևավորման ձևով¹¹⁸: Հենց այս շրջանում են ծնունդ առնում հայկական առաջին կուսակցությունները և որպես առաջնային նպատակ՝ կարևորվում է հայկական բարեփոխումներ իրականացնելու գաղափարը: Այս զարգացումները չափազանց վտանգավոր էին կայսրության համար: Մեկը մյուսի հետևից տարբեր ժողովուրդների մոտ ազգայնականության ծաղկումը բերում էր փոքրամասնությունների անկախությանը և անջատմանն օսմանյան պետությունից: Քրդական մշտական ճնշումը կոչված էր վիժեցնելու այդ գործընթացն արևելյան նահանգներում՝ հետևողականորեն թուլացնելով հայկական համայնքի ներուժը:

Սրա հետ սերտորեն կապված է քրդերի կողմից հայկական տնտեսությանը հասցվող հարվածների քաղաքականությունը՝ երկակի հարկահանությունը, հայ գյուղացիների անպատիժ թալանը, հայկական հողերի փոխանցումը քրդերին, ամբողջական գյուղերի դատարկումը և այնտեղ քրդերի և չերքեզների բնակեցումը, ինչը հետզհետե հյուծում էր հայկական տնտեսական հնարավորությունները:

118 Fatma M. Göçek, *Rise of the Bourgeoisie, Demise of Empire: Ottoman Westernization and Social Change* (New York: Oxford University Press, 1996), 134–37, համեմատության համար տե՛ս Simon Payaslian, *The History of Armenia, From the Origins to the Present* (New York: Palgrave Macmillan, 2007), 117.

Վերջապես քրդական համիդիե գնդերի ստեղծման շնորհիվ նրանց ներառելով պետական ծառայության մեջ և տալով ցանկացած հանցանք իրականացնելու ազատություն՝ Օսմանյան կայսրությունը բացառում էր հայ-քրդական հնարավոր դաշինքը, ինչի հավանականությունը սարսափեցնում էր Բարձր դռանը, առավել ևս, որ այս շրջանում հայկական շրջանակներն ակտիվ աշխատանք էին տանում այդ ուղղությամբ՝ փորձելով քաղաքակրթելու միջոցով քրդերի հետ խաղաղ համակեցության եզրեր գտնել: Դրա վիժեցման ձևերից մեկն էլ քրդերին հայկական անկախ պետականության ստեղծման ուրվականով սպառնալն էր:

Քրդերին ներգրավելով հայերի սպանության մեջ և նրանց ձեռքերով սև գործն անելով՝ Կ.Պոլիսը հնարավորություն էր ստանում հետագայում ամբողջ մեղքը բարդելու «վերահսկողությունից դուրս եկած վայրի քոչվորների» վրա¹¹⁹՝ խուսափելով արտաքին աշխարհի քննադատությունից և հեղինակության կորստից:

Օսմանյան կայսրության համար ոչ կանոնավոր ուժերի օգտագործումը՝ «սև աշխատանքը» կատարելու համար, ավանդական քաղաքականություն էր,¹²⁰ և համիդիեների օգտագործումը 1894-96 թթ. սրա վառ դրսևորումն էր: Կան դեպքեր, որ ջարդերի ժամանակ պատասխանատվությունն ամբողջությամբ քրդերի վրա բարդելու նպատակով թուրքական զորքերը հաճախ գործում էին քրդական տարազով¹²¹:

Սակայն կարևորագույն խնդիրը հավանաբար քրդերին Օսմանյան կայսրության հետ կապելու հրամայականն էր: Քրդերը երբեք հավատարիմ չեն եղել կայսրությանը, նրանք միշտ խնդիրներ են առաջացրել իշխանությունների համար, որոնք միշտ նրանց դեմ գորք են ուղարկվել և արյուն թափել¹²²: Վ. Ֆ. Մինորսկին նշում է, օրինակ, որ նույնիսկ երբ քրդերը հրաժարվում էին հայերի ջարդերին մասնակցելուց, դա անում էին, քանի որ դրա մեջ տեսնում էին միայն կառավարության շահը: Ըստ նրա՝ քրդերը երբեք աչքի չեն ընկել թուրքական հայրենասիրությամբ¹²³: 19-րդ դարի ամբողջ ընթացքում գրեթե անդադար տեղի էին ունենում քրդական ապստամբություններ և հուզումներ, որոնց ընթացքում քրդական ապստամբ առաջնորդներն արտաքին ուժերի օժանդակությանն էին ապավինում: Համիդիե հեծելազորի մեջ ներգրավելով քրդական վերնախավին՝ Կ.Պոլիսը սկսում էր քրդերի մեջ տարածել օսմանյան հայրենասիրությունը՝ ներգրավելով նախկին ազատատենչ ու չենթարկվող ժողովրդին կայսերական կառավարման համակարգ: Արդյունքները տապալորիչ էին: Մի քանի տարում համազգեստ ստացած քրդական բազմաթիվ ցեղեր դարձան կայսեր ամենահավատարիմ հպատակները:

119 British Foreign Office Archive, FO 424/178, p. 299 cited in Robert Graves, *Storm Centres of the Near East: Personal Memories, 1879-1929* (UK: Hutchinson and co., 1975), 145-47.

120 Մանրամասն տե՛ս James J. Reid, *Crisis of the Ottoman Empire* (Stuttgart: Steiner, 2000):

121 Bravley E.A. Hodgetts, *Round about Armenia* (London: Sampson Low, Marston and Company, 1896), 100; АВГР, Посольство в Константинополе, д. 3135, д. 3176, л. 70-77, 79-82, *Геноцид армян в Османской империи*, 32, 45:

122 Herworth, *Through Armenia on Horseback*, 225:

123 Минорский, *Курды*, 30:

Կայսրության հետ քրդերի կապերի ամրապնդման առումով շատ կարևոր էր նրանց հանցագործության մեղսակից դարձնելը: Նրանք թուրքերի հետ դառնում էին միասնական սախագծի՝ հայերից Արևմտյան Հայաստանը մաքրելու մասը: Ցեղասպանագիտության մեջ դա հայտնի ֆենոմեն է, երբ ոճրագործ վարչակարգերը կարիք են զգում սեփական քաղաքականության համար հնարավորինս լայն համակիրների հենարան ստեղծել և ներգրավում են հասարակության տարբեր շերտերի զանգվածային կոտորածների մեջ¹²⁴: Միաժամանակ նրանք ամուր թելերով կապում են¹²⁵ ցեղասպանության մասնակիցներին իշխանությունների հետ: Օսմանյան կայսրությունն ակտիվորեն ներգրավեց քրդերին սպանությունների մեջ՝ ոչ միայն նրանց որպես հայերին ոչնչացնելու գործիք օգտագործելու համար, այլև քրդերին կայսրության մեծ հանցանքին մեղսակից դարձնելով՝ ավելի ամուր կապեր ստեղծելու համար:

Suren A. Manukyan
PhD

COMPLICITY AS FACTOR FOR COHERENCE.
ON THE ISSUE OF MOTIVES OF THE KURDISH INVOLVEMENT
IN THE 1894-96 MASSACRES OF ARMENIANS

SUMMARY

Key words: Armenian massacres of 1894-96, Kurds, Hamidiye, complicity in crime, Armenian Genocide.

The paper is an attempt to cover the issue of the creation of Hamidian cavalry and the forms, scale, and causes of Kurdish participation in the massacres of Armenians in 1894-96. Using cohesion theories known in criminology and social psychology, an attempt is made to utilize them to explain some new motivations for the involvement of the Kurds in the process of violent settling of the Armenian issue. The role of the Kurds is usually interpreted as being a blind instrument in the hands of the Empire against the Armenian population. This is a prevalent concept not only in Armenian historiography but also in genocide studies. Unquestionably, this has ground, but it probably cannot be an entire explanation for such large-scale Kurdish participation. The Armenian massacres brought tangible and significant benefits for the Kurds, who were personally engaged in the ongoing crime. Furthermore, by encouraging the Kurds in the murder campaign,

124 *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, ed. Dinah L. Shelton (Detroit: Macmillan Library Reference, 2004), 792.

125 Տարբեր խմբերում ներգրավելու՝ ինիցիացիայի, այդ խմբի ամբողջությամբ պահպանելու համար հանցագործության օգտագործման մասին տե՛ս, օրինակ՝ Best and Hutchinson, “The Gang Initiation Rite as a Motif in Contemporary Crime Discourse,” 383-404:

the Ottoman Empire solved another, crucial purpose. Turning Kurds into a complicity of crime by affiliation with the Turks to a joint project of ethnic cleansing of Western Armenia, Sublime Porte strongly bonded the troublesome, usually disloyal Kurds with the policy and fate of the Empire.

Տյւրէն Ա. Մանուկյան
кандидат исторических наук

**СОУЧАСТИЕ В ПРЕСТУПЛЕНИИ КАК СВЯЗУЮЩИЙ ФАКТОР.
О МОТИВАЦИИ ВОВЛЕЧЕНИЯ КУРДОВ В МАССОВУЮ РЕЗНЮ АРМЯН
В 1894-1896 ГГ.**

РЕЗЮМЕ

Ключевые слова: резня армян 1894-1896 гг., курды, гамидие, соучастие в преступлении, Геноцид армян.

В статье рассматриваются проблемы создания курдской кавалерии Гамидие, формы, размеры и причины участия курдов в массовых убийствах армян в 1894-1896 гг. Посредством применения теории повышения сплоченности, известной в криминалистике и социальной психологии, автор пытается объяснить некоторые новые мотивации вовлечения курдов в процесс насильственного разрешения армянского вопроса. Обычно курдов представляют слепым инструментом в руках империи, использованным против армянского населения. Это мнение сложилось не только в армянской историографии, но и вообще в геноцидологии. Конечно, подобное представление обосновано, однако это не может быть единственным объяснением столь широкомасштабного участия курдов в резне. Массовое истребление армян положительно сказалось на курдах, которые сами были не менее заинтересованы в преступлении. Кроме того, вовлекая курдов в процесс массовых убийств, Османская империя решала другую, возможно, не менее важную проблему. Превратив курдов в соучастников преступления, включив их в совместный с турками проект этнической чистки Западной Армении от армян, Высокая Порта связывала беспокойных и не всегда лояльных курдов с политикой и судьбой империи.

REFERENCES

A-Do, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները [The Vilayets of Van, Bitlis and Erzerum]. Yerevan: Kultura, 1912.

Հայոց պատմություն [Armenian History]. Vol. III. Issue I. Yerevan: Zangak-97, 2010.

Bayburdyan, Vahan. Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին [Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire in the 19th and the beginning of the 20th century]. Yerevan: “Hayastan,” 1989.

Gevorgyan, Hamlet. Նիկոլ Դուման [Nikol Duman], Yerevan: “Hrazdan,” 2002.

Grigoryan, Hovik. Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-98 [The Tactics of Armenian Liberation Movement in 1895-98]. Yerevan: Noyyan tapan, 2002.

Հայ ժողովրդի պատմություն [History of Armenian People]. Yerevan: HSSH GA hrat., 1981.

Hovhannisyanyan, Rafik. Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը [1896 Van Self-Defense], *Lraber hasarakakan gitutyunneri* 7 (1976): 58-66:

Kirakosyan, John (ed.). Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) [Armenia in the Documents of the International Diplomacy and Soviet Foreign Policy (1828-1923)]. Yerevan: “Hayastan,” 1972.

Leo, Անցյալից [From the Past]. Tiflis: Khorhrdayin Kovkas, 1925.

Leo, Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը [The Ideology of the Turkish Armenian Revolution]. Vol. I. Paris: Pahari eghbarts publishing, 1934.

Manukyan, Suren. «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ» [The Issue of the Usage of the Criminals in the Perpetration of the Armenian Genocide]. *Merdzavor Arevelk (VIII): Patmutyun, Qakhaqakanutyun, Mshakuyt.* Yerevan: Zangak-97, 2012.

Poghosyan, Stepan. Քրդերը և Հայկական հարցը [The Kurds and the Armenian Question]. Yerevan: Hayastan, 1991.

Sasuni, Karo. Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերությունները /ԺԵ դարն մինչև մեր օրերը/ [The Kurdish National Movements and Armenian-Kurdish Relations (from 15th Century to Our Days)]. Beirut: Hamazgayin, 1969.

Հւշակ [The Bell]. London, 1890.

Դրոշակ [The Flag]. Vienna, 1895.

Մշակ [The Farmhand]. Tiflis, 1880.

Varandean, Mikayel. Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն [History of the AR Dashnaksutyun]. Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1992.

Архив Внешней политики России (АВПР), Политархив [Archive of the Foreign Policy of Russia (AVPR), Political Archive], 1889-1894.

Архив Внешней политики России (АВПР), Политархив, фонд Посольство в Константинополе [Archive of the Foreign Policy of Russia (AVPR), Political Archive, section Embassy in Constantinople].

Архив Внешней политики России (АВРП), Политархив, фонд Миссия в Персии [Archive of the Foreign Policy of Russia (AVRP), section Mission in Persia], 1913.

Avrich, Paul. Бакунин и Нечаев [Bakunin and Nechayev], <https://history.wikireading.ru/277709>.

Minorskiĭ, Vladimir. Курды: Заметки и впечатления [The Kurds, Notes and Impressions]. Petrograd: Типография В. О. Kirshbauma, 1915.

Nersisyan, Mkrtich (ed.). Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов [Genocide of Armenians in the Ottoman Empire. Compilation of Documents and Materials]. Yerevan: “Hayastan,” 1983.

Nikitin, Vasiliy. Курды [The Kurds]. Moscow: Progress, 1964.

Perevalova, Yelena. С. Г. Нечаев и «нечаевское дело» в оценке газеты «Московские ведомости» [S. G. Nechayev and the Case of Nechayev in the Assessment of the Newspaper “Moskovskiye vedomosti”]. <http://www.mediascope.ru/1596>.

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году [The Plight of the Armenians in Turkey before the Interference of the Great Powers in 1895]. Moscow: Razsvet, 1896.

Положение дел в Турецкой Армении и Турецкие зверства в Сасуне [The Plight of Turkish Armenia and Turkish Cruelties in Sasun]. Moscow: Razsvet, 1896

Potto, Vasiliĭ. Кавказская война [The Caucasus War]. Vol. 4, Issue 2. Saint-Petersburg, 1889.

Termen, Richard. Отчет о полевой поездке 1907 в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах [Report on Field Tour to Van, Bitlis and Diarbekir Vilayets in 1907]. Tiflis: Shtab Kavkazskogo voennogo okruga, 1909.

ՀԱՍԱՆ ՉԵԼԵՔԻ.

ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԻ ԿԱՅԱՆԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, վեց վիլայեթներ, Սեբաստիա, Խարբերդ, Հասան Չելեքի, տեղահանություն, տղամարդկանց կոտորած, թալան, օտար ականատես:

Հայոց ցեղասպանության իրագործման հիմնական բաղադրիչներից մեկի՝ բռնի տեղահանությունների միջոցով հայ բնակչությունն արմատախիլ արվեց սեփական բնաշխարհից և ոչնչացվեց սիրիական անապատների ճանապարհին: Այս ճանապարհի երկայնքով *Թեշ-քիլայթը մահուտե*-ի կողմից կազմակերպվել էին հստակ և առանձին գործառույթներ իրար մեջ բաժանած անցումային կայաններ, որտեղ իրականացվում էին նախապես մշակված գործողություններ՝ թալան, տարատեսակ բռնություններ և ոչնչացում:

Հոդվածում քննարկվում են այդ կայաններից մեկում՝ Հասան Չելեքիում տեղի ունեցած գործողությունները՝ հայկական քարավանների թալանը և ոչնչացման գործընթացը՝ հիմնվելով գլխավորապես հայկական արխիվային¹, գրքային², մամուլի³, հուշերի հավաքածուների⁴, գիտական ամսագրերի⁵ ու հետազոտությունների⁶ տեղեկությունների և

1 Archives De La Bibliothèque Nubar, Fonds Aram Andonian (այսուհետև՝ BNu/Fonds A. Andonian), Matériaux pour l'histoire du genocide, Dossier 49, *Massacres et déportations à Sebaste* (14 pièces, 190 ff. rv.), AA/MHG/P.i.1/2-49; Ա. Հ., *Սեբաստիա*, Հայկանույշ Չառացյան, «Սրվազ», Վարդանուշ Գասանյան, «Պարություն Վարդանուշ Գասանյանի սիվասցի», Հեղինե Պեկեան, «Ամսախալի հայ տարագրեալները», BNu/Fonds A. Andonian, P.J.1/3, fi le 6, Amasia: Սեպուհ Լուսարարյան, «Մի կյանքի պարություն», ՀՅԹԻ, Ձեռագիր հուշագրությունների բաժին, գ. 127, գ.128, գ.129; Սուրեն Սարգսյան, «Պարություն կարմիր, սև էջեր, սալանայական գործեր, եղենդ», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, թղթապանակ 121/2; Օհաննես Ալեքսանդրեանի հուշերը 1915 թ. եղենի մասին (ձեռագիր), Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 439, գ.3, գ.115:

2 Կարապետ Գարիկեան, *Եղեննապարտում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, (Պոպըն, «Հայրենիք», 1924); Փայլածու Գաբունյան, *Ցաւակ* (Նի Եօրք, «Արմենիա», 1922); Եղուարդ Ա. Բագույան, *Եղեննաքաղ որաներ* (Պէրոթ, «Shirak Press», 1968); Գաբրիել Միմոնեան, *Յուշամարեան պոնտական Ամսախոյ* (Վենետիկ, ա.հ, 1966); Վահան Համբարձումյան, *Գիւղաշխարհ. Պարունական, ազգագրական ուսումնասիրություն* (Փարիզ, «Տարոն», 1927); Սարգիս Ս. Տեմիրճեան, *Չորս տարուան քառասունք, Եղոկացի (Թորաթ) օր. Թեփերիկ Չարգեանի արտոյի կեանքէն* (Նի Եօրք, «Հայկ», 1920); Լևոն Վարդան, «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան», *Հայկազեան հայագիտական հանդէս* ԺԵ (1995), 499-519:

3 Շահէն Տէրաթեան, «Արինի ճամբէ. Դէպի Գողգոթան», *Հայրենիք* 11 no. 298 (1950); 1 no. 323 (1953); Վահան Չուգարզեան, «Բզքտուած Սեբաստիան», *Երիտասարդ Հայաստան* (Շիրակ), 11 հոկտեմբեր 1919:

4 Վերծին Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականաբեւ վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011); *Հուշագրական ծառանգություն*, ՀՀՈՒ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, հատոր 14, (Երևան, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ», 2011); Լևոն Մեսրոպ, *Աղէր եւ վերածնունդ* (Փարիզ, «Արաքս», 1952):

5 Յակոբ Քոսեան, «Գանտիտա Գոյումճեան. Աքոթի ճամբան (1915)», *Հանդէս ամսօրեայ* 1 no. 12 (2015), 345-483:

6 Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete history* (London, New York: I.B. TAURIS,

գիտական արդյունքների վրա, որոնց տրամադրած տվյալները համադրվել են օտար ականատեսների⁷ և օսմանյան փաստաթղթերի⁸ հաղորդած տվյալների հետ: Հողվածում ներկայացվել են Հասան Չելեբի կայանում տեղի ունեցած հիմնական գործողությունների ուրվագիծը, դրանց հաջորդականությունը: Այդ գործողությունները պայմանականորեն բաժանվել են երեք համակարգված փուլերի. թալան և կանանց նկատմամբ բռնություններ, տղամարդկանց հայտնաբերում և ձերբակալում, տղամարդկանց բանտարկություն և սպանել:

Հասան Չելեբի գյուղը և ճանապարհային կայանը տեղակայված էին Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառի Արդա սանջակում՝ Արաբկիր քաղաքից մոտ 52 կմ հարավ-արևմուտք՝ Մալաթիա-Սեբաստիա ճանապարհին⁹: Գյուղն ուներ թուրքական և քրդական 200 տուն բնակչություն¹⁰: Այն հաջորդում էր Սեբաստիա և Խարբերդ վիլայեթների սահմանագլխին տեղակայված Քոթթու խան անունը կրող կայանին՝ նախատեսված որպես թալանի և կոտորածի կայան, ոչնչացման համար թիրախավորելով գլխավորապես հասարակական դիրք զբաղեցնող տղամարդկանց: Հասան Չելեբիում արդեն հիմնական թիրախ էին չափահաս տղամարդիկ՝ անկախ հասարակական դիրքից: Տարագրության այս փուլերն անցած հատուկենտ ծպտված տղամարդկանց, կանանց և երեխաների համակարգային ոչնչացման կամ ուժացման համար արդեն նախագծված էին հաջորդող՝ Հեքիմ Խան, Հասան Պատիկ, Ֆոնջլար կայանները:

Տեղահանությունների երթուղիների համատեքստում Հասան Չելեբին հանգուցային կայան էր ինչպես Սեբաստիա քաղաքի 15 քարավանների և վիլայեթի այլ բնակավայրերի հայերի, այնպես էլ հարակից շրջանների տարագրյալների համար: Կայանը մի քանի հիմնական երթուղիների մաս էր կազմում: Դրանցից մեկը՝ նախատեսված Սեբաստիա քաղաքի և շրջակա բնակավայրերի համար, սկսվում էր Սեբաստիա քաղաքում և ձգվում դեպի Թեջիր խան, Մաղարա, Կանգալ, Ալաջա խան, Քոթթու խան, իսկ արդեն Խարբերդի վիլայեթում հասնում Հասան Չելեբի, շարունակվում դեպի Հեքիմ խան, Հասան Պատրիկ, Ֆոնջլար և ձգվում հարավ: Սեբաստիայի վիլայեթի հյուսիս-արևմտյան մասի և հարակից շրջանների համար նախատեսված մյուս երթուղին անցել է Սամսուն, Մարգվան, Ամասիա, Եվդոկիա, Շարգըշլա, Կան-

2011); Սեպուհ Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918)* (Կ.Պոլիս, Հայաստան գրատան հրատ., 1921):

7 Երուսաղ Քասունի, *Քննական ակնարկ «Միշրների հերոլդ»-ի 1915-1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանության և վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն* (Պեյրուֆ, Մ.Ա.Հ.Ա.Ե. միութեան հրատարակչական գրասենեակ, 2012):

8 Clark University, Digital Commons, The Krikor Guerguerian Archive, “03 Captain Fazil Bey III,” https://commons.clarku.edu/pd_fazil_bey/3, դիտվել է 06.05.2019:

9 Թադևոս Խ. Հակոբյան, Ստեփան Տ. Մելիք-Բախշյան, Հովհաննես Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատոր 3 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1991), 370:

10 Տե՛ս Ա. հ., *Սեբաստիա*, 124:

գալ, Քյոթու խան հետագծով և նաև Հասան Չելեբի կայանով: Վերոնշյալ երկու երթուղիներին միացել է նաև երրորդ երթուղին, որը սկսվելով մերձսևծովյան բնակավայրերից՝ Օրդուից և Կիրասունից, շարունակվել է դեպի Շապին Գարահիսար, Սուշեհիր, Չառա, Հաֆիզ, Սերաստիա քաղաք, միավորվել Կանգալ, Քյոթու խան երթուղուն և հասել Հասան Չելեբի կայան: Ինչպես մյուս կայանների պարագայում, այստեղ նույնպես հայերի դեմ գործողություններին ներգրավված էին օսմանյան պետական և երիտթուրքական կուսակցական մարմինները:

Անցնող քարավանների թալանի ու սպանությունների պատասխանատուները *Թեշքիլաթը մահուտե*-ի ներկայացուցիչներն էին, ժանդարմերիան, տեղական իշխանությունները և այլ պետական կառույցների պաշտոնյաներ:

1914 թ. մարտի 27-ից Արդայի կայանակամի պաշտոնը զբաղեցրել է Վասիֆ բեյը, ում 1915 թ. հուլիսի 23-ին փոխարինել է Ասիմ բեյը¹¹: Կայանի հանցագործություններն իրականացվել և առաջնորդվել են ժանդարմների պաշտոնով ծպտված անձանց կողմից: Նշված ժամանակահատվածում Արդա սանջակի ժանդարմերիայի հրամանատարը Ալի Չավուչն էր, որը նաև կառավարել է Հեքիմ խան անցումային կայանի գործողությունները: Հասան Չելեբիում բուն գործողություններն իրականացնողներից էին Մուխթար Միրզան, որի գործունեության ոլորտի մասին տեղեկություններ չկան, և առևտրական Ուլաշոլու Իբրահիմօղլու Հյուսեինը: Վերջիններս պատասխանում էին սպանությունների և մեծ ծավալներով ապրանքների գողության համար: Նրանք նաև կասկածվում էին բռնաբարությունների մեջ¹²: Հյուսնի էֆենդին՝ Աջըրդաղի վիճակագրական ծառայության պետը, մասնակցել է Հասան Չելեբի – Հեքիմ խան կայանների միջև տեղի ունեցած բռնաբարություններին և թալանին¹³: Դատելով կայանում տեղի ունեցած գործողությունները վերահսկող և իրականացնող անձանց կազմից՝ կարող ենք եզրակացնել, որ այդ գործողությունների կազմակերպումը և իրագործումը տեղի են ունեցել պետական և կուսակցական մարմինների կարևորագույն օղակների ներգրավմամբ:

Առաջին փուլ. թալան և կանանց նկատմամբ բռնություններ

Հասան Չելեբի հասնելուն պես տարագրյալների քարավաններին տեղավորում էին մոտակա լեռների ստորոտներում՝ ձորի մեջ, գետի եզրերին¹⁴: Քարավանների՝ ճամբար խփելուց հետո գյուղի բնակչությունը հազարի հասնող խմբերով առևտուր անե-

11 Այս փոփոխությունն անսպասելի էր, քանի որ այն իրականացվեց սանջակի տարածքով հայ տասնյակ քարավանների անցման կարևոր շրջափուլում: Ըստ Ռայմոնդ Գևորգյանի՝ տեղի ունեցածը կարող էր պայմանավորված լինել Վասիֆ բեյի՝ հրամանների կատարման անբավարար խստությամբ, սակայն հեղինակն ավելի հավանական է համարում, որ խնդիրը քարավաններից ձեռք բերված գողոնի «անարդար» վերաբաշխումն էր, տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide*, 418:

12 Տե՛ս Guerguerian, “03 Captain Fazil Bey III,” 235:

13 Տե՛ս նույն տեղում, 246:

14 Տե՛ս ՀԱԱ ֆ. 439, ց. 3, գ. 115, տե՛ս նաև՝ Րազուպեան, *Եղեռնաքաղ որսններ*, 72; Քօսեան, «Գանարիտա Գույունճեան», 400; Տէրտէրեան, «Արիւնի ճամբէս», 72; Լուսարարյան, *Մի կյանքի պարմություն*, 164; Գաբրանեան, *Ցասակ*, 65:

լու պատրվակով մտնում էր տարագրյալների շարքեր: Այցելությունների հիմնական նպատակը, ըստ վերապրողներից մեկի, հետախուզական բնույթ էր կրում՝ թալանի թիրախները պարզելու համար¹⁵: Կայանի շուրջ ծավալվող գործողությունների այս փուլում ուշադրության կենտրոնում էին հայտնվում կանայք և աղջիկները, որոնց զգուշացնում էին սպանդի սպառնալիքի մասին և փրկության դիմաց պահանջում ոսկի ու գոհարեղեն¹⁶: Սերաստիայի չորրորդ քարավանից մի հղի կնոջից պահանջել են ոսկի, սակայն, կասկածելով, որ վերջինս կարող էր կույ տված լինել այն, ճեղքել են նրա որովայնը՝ այդպես էլ չհայտնաբերելով փնտրածը¹⁷: Գործընթացն ուղեկցվել է կանանց ու աղջիկների բռնաբարություններով¹⁸ ու հափշտակություններով¹⁹: Այս վտանգներից պաշտպանվելու համար կանայք փորձել են ծալտվել՝ դեմքներին հող, ցեխ, մոխիր քսելով, սակայն ապարդյուն²⁰: Այսպիսով, այս փուլի բնորոշ հատկանիշները թալանը և կանանց նկատմամբ կիրառված բռնություններն են, որոնք շատ հաճախ զուգահեռ էին տեղի ունենում: Այս գործողությունները ոչ միայն շահութաբեր էին դրանք իրականացնողների համար, այլև թուլացնում և սպառում էին քարավանի վերապրելու միջոցները:

Երկրորդ փուլ. տղամարդկանց հայտնաբերում և ձերբակալում

Երկրորդ փուլում սկսվել է կայանի հիմնական գործառույթի իրականացումը՝ տղամարդկանց առանձնացումը: Ըստ հրահանգի՝ հարկավոր էր հայտնաբերել քարավանի բոլոր տղամարդկանց և ձերբակալել: Գործընթացը կազմակերպվում էր ժանդարմերիայի և գյուղի քուրդ բնակչության համագործակցությամբ: Զինված քրդերը²¹, ժանդարմների հրամանով և գործակցությամբ²², խուզարկել են քարավանները²³ և ձերբակալել²⁴, ըստ տարբեր աղբյուրների, 8²⁵, 10²⁶, 9-12²⁷ տարեկանից մինչև

15 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պայրմություն*, 164:

16 Տե՛ս նույն տեղում:

17 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 171-172:

18 Տե՛ս Տերտերեան, «Արիևի ճամբէս», 78:

19 Տե՛ս Պեկեան, «Անասիայի հայ տարագրեալները», տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 227, 234:

20 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 171-172:

21 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնապատում*, 171, տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիևի ճամբէս», 72; Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 227, 237:

22 Տե՛ս Տերտերեան, «Արիևի ճամբէս», 72:

23 Տե՛ս Սիմոնեան, *Յուշանամուսն*, 670, տե՛ս նաև՝ Հուշագրական ժառանգություն, 191:

24 Տե՛ս Քուեան, «Գանադիպա Գոյումնեան», 400, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պայրմություն*, 168; Բագուպեան, *Եղեռնաքաղ որաներ*, 74; Գաբտանեան, *Յասակ*, 65; Հուշագրական ժառանգություն, 212:

25 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնապատում*, 184:

26 Տե՛ս Գասմանեան, «Պայրմություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

27 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիտաշխարհ*, 223:

75²⁸, 80²⁹ տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդկանց: Գործողություն իրականացնողներն անցնում էին բոլոր ընտանիքների առջևով, մտնում վրաններ և փնտրում տղամարդկանց³⁰: Թաքնված տղամարդկանց բացահայտելու նպատակով խոշտանգում էին կանանց³¹, ապա, գնդակահարության սպառնալիքով, տղամարդկանց կանանցից գատում³²: Գիտակցելով տղամարդկանց սպառնացող վտանգը՝ տարագրյալները դիմում էին թաքնվելու տարբեր հնարքների: Կանայք փորձում էին թաքցնել տղամարդկանց կտորեղենների³³, վերմակների³⁴, կառքերի³⁵ ու կարպետների տակ կամ նստում էին նրանց վրա³⁶: Ժանդարմներին և քրդերին մոլորեցնելու համար, թե իբր իրենց ամուսիններին արդեն ձերբակալել են, կանայք ցուցադրաբար ողբում էին, ինչը որոշ դեպքերում արդյունավետորեն կանխում էր խուզարկումները³⁷:

Տղամարդկանց թաքնվելու ամենատարածված հնարքներից մեկը կանանց հագուստով ծալվելն էր³⁸: Ոմանք փոքր երեխաների գրկած³⁹ նույնիսկ ձևացնում էին, թե իբր կերակրում են⁴⁰: Այս եղանակով կայանից փրկվել են պրոֆեսորներ Ռուբեն Ռագուպյանը, Սենեքերիմ Դալոնջյանը, Համբարձում Պլեջյանը⁴¹ և անգամ հոգևորականներ⁴²: Որոշ հուշագրություններում արձանագրված են տղամարդկանց փախուստի հաջողված դեպքեր⁴³: Կան նաև դեպքեր, երբ տղամարդիկ մտածել են փախուստի մասին, սակայն չեն փախել, ապա ձերբակալվել և սպանվել են⁴⁴: Պահպանված են նաև տղամարդկանց թաքնվելու փորձերի մասին տեղեկություններ: Հասան Չելեբիի լեռնային լանդշաֆտը թաքնվելու հնարավորություններ էր ընձեռում, ինչից օգտվելով՝

28 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 178:

29 Տե՛ս նույն տեղում, 181:

30 Տե՛ս նույն տեղում, 178, տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

31 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

32 Տե՛ս Չուգարզեան Վահան, «Բզբոտուած Սերաստիան», *Երիտասարդ Հայաստան* (Շիրակո), 11 հոկտեմբեր 1919:

33 Տե՛ս Համբարձումյան, *Գիղաշխարհ*, 234; տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիւնի ճամբէս. Դէպի Գողգոթան», 72:

34 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 191:

35 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 177, տե՛ս նաև՝ Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

36 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պարմություն*, 170-171:

37 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 178, տե՛ս նաև՝ Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

38 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 198, 200, տե՛ս նաև՝ Գասմանեան, «Պարմություն Վարդանուշ Գասմանեանի», 172; Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 95:

39 Տե՛ս Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի*, 96:

40 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

41 Տե՛ս Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի*, 96:

42 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 191, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիղաշխարհ*, 223:

43 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

44 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72-73: Ալեքսանդրեան, ՀԱԱ, ֆ.439, ց.3, գ.115:

տղամարդիկ թաքնվում էին շրջակայքի ձորակներում⁴⁵: Սակայն քրդերի կողմից հայտնաբերվելուց հետո թաքնվածները հանձնվում էին ժանդարմներին⁴⁶: Սուրբ Սարգիս եկեղեցու քարավանից տղամարդկանց ազատ արձակելու համար պահանջվել է հինգ ոսկի լիրա կաշառք, որը չտրամադրելու դեպքում վերջիններիս սպառնում էր բանտարկություն⁴⁷:

Կաշառքի արդյունավետ կիրառման դեպքերից⁴⁸ բացի (օրինակ, երբ մի քանի կին, քուրդ մյուդիիրին կաշառելով, ազատել են մի քանի տասնյակ տղամարդկանց⁴⁹)՝ կային դեպքեր, երբ կաշառքի մուծումը չէր փրկում ձերբակալվածներին⁵⁰, կամ կաշառք էր գանձվում արդեն սպանված բանտարկյալներին ազատելու համար⁵¹: Ակնկալվող գումարից քիչ տրամադրվող կաշառքը նույնպես բավարար չէր ձերբակալվածների կյանքը փրկելու համար⁵²:

Ըստ Հայկանույշ Չառացյանի վկայության, Սուրբ Սարգիս եկեղեցու թաղի տղամարդկանց ոտքերը կապել և պայտել էին, ձեռքերը՝ գամել⁵³, իսկ կանանց կանգնեցնում էին խարույկի շուրջ և նրանց աչքի առջև ստորացուցիչ կերպով ծեծում և այրում էին տղամարդկանց⁵⁴, իսկ կանանց պարտադրում հետևել այդ տեսարանին⁵⁵:

Չնայած գործողությունների անթաքույց հանցավոր բնույթին՝ օտար ականատեսի ներկայությամբ փորձեր էին կատարվում դրանց տալու պաշտոնական ձև: Օրինակ՝ մի քրդի բազկին կարել էին կարմիր կտոր և տվել արտոնություն թալանելու ու կեղեքելու որպես ժանդարմ⁵⁶:

Տղամարդկանց գատումից և բանտարկությունից հետո որոշ դեպքերում քարավանին ստիպում էին շարունակել ճանապարհը⁵⁷: Եղել են նաև դեպքեր, երբ քարավանը պահել են մի քանի օր և շարունակել խուզարկությունները, ձերբակալություններն ու թալանը⁵⁸: Հասան Չելեբին լքելուց հետո քարավանի վրա էին հարձակվում քրդեր և

45 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 176:

46 Տե՛ս Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 75:

47 Տե՛ս Չառացյան, «Սըվազ», տե՛ս նաև՝ Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 199:

48 Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200, տե՛ս նաև՝ *Անբասարանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան*, 179; Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 73:

49 Գասմանեան, «Պատմություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

50 Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 171, տե՛ս նաև՝ Տերտերեան, «Արիւնի ճամբէս», 72:

51 Տե՛ս Համբարձումյան, *Գիւղաշխարհ*, 237:

52 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 191:

53 Տե՛ս Չառացյան, «Սըվազ», 114:

54 Տե՛ս նույն տեղում:

55 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200:

56 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

57 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 178: *Հուշագրական ժառանգություն*, 191, 212:

58 Տե՛ս Տերտերեան «Արիւնի ճամբէս», 72-78, տե՛ս նաև՝ Քոսեան, «Գանդիպա Գոյումճեան», 400-403:

կողոպտում արքայազններին ու գյուղում մնացած սայլերը⁵⁹: Սեբաստիայի Սուրբ Գևորգ թաղի քարավանի կանաչ գյուղը լքելիս լսել են սպանությունների աղաղակներ և փորձել են վերադառնալ ամուսինների մոտ, ինչը նրանց արգելվել է, իսկ դիմադրողները սպանվել են⁶⁰: Հայտնի է նաև դեպք, երբ քարավանն ընդդիմանալով մնացել է գյուղում⁶¹:

Վերը նշված բացառություններով և ամեն քարավանի առանձնահատկություններով հանդերձ, կարող ենք պնդել, որ այս փուլի հիմնական գործառույթը տղամարդկանց առանձնացումն ու ձերբակալումն էր, ինչն ուղեկցվել է թալանով՝ ուղղակի կամ կաշառքի միջոցով:

Երրորդ փուլ. տղամարդկանց բանտարկություն և սպանո

Ըստ Հասան Չելեբիի կառավարչի՝ կայան հասած քարավանների տղամարդկանց սպանությունները նախատեսված էին կայսրության բարձրագույն *իրապրևուլ*⁶² և շելխու-իսլամի շարիական *ֆեթվայուլ*⁶³:

Ձերբակալված տղամարդկանց բանտարկում էին գյուղի հրապարակում գտնվող շինություններում, որտեղ նաև տեղակայված էր կառավարչի գրասենյակը, որը համակարգում էր կայանի գործառույթները: Ըստ վկայությունների կարելի է տարբերակել երկու առանձին շինություններ. մեկը՝ պանդոկանման⁶⁴, մյուսը՝ ընդարձակ, խարխուլ գոմ⁶⁵: Ըստ հուշագիրներից մեկի՝ շինությունները կարող էին տեղավորել 40-50 մարդ, սակայն այնտեղ միանգամից բանտարկում էին 150-ից ավելի տղամարդկանց⁶⁶: Սրահների տարողունակությունը և մարդկանց քանակի խիստ անհամապատասխանությունը ստեղծում էին կյանքի համար վտանգավոր պայմաններ՝ հանգեցնելով շնչահեղձության, ուշաթափության և մահվան: Հատկանշական է, որ բանտարկության համար նախատեսված շինությունների հսկողությունը վստահված էր երկու անգեն պահակների⁶⁷: Բանտարկվածներն օդի պակասից շնչահեղձ էին լինում⁶⁸: Ըստ Սեբաստիայի Պեքմեզ-Սոխախ թաղի քարավանի մեջ եղած Սեպուհ Լուսարարյանի՝ տղամարդկանց բանտարկության պայմաններն այնքան անտանելի էին, որ բանտարկյալներն աղերսում էին գնդակահարություն, միայն թե դուրս գային

59 Տե՛ս Ջառացյան, «Մըվազ», 114:

60 Տե՛ս Չուգաբզեան, «Բզբրուած Սեբաստիան»:

61 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 181:

62 Իրատէ - կայսերական հրամանագիր:

63 Ֆեթվա - կրոնական բարձրագույն անձի վճիռ: Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 186:

64 Տե՛ս ՀԱԱ ֆ.439, ց.3, գ.115, տե՛ս նաև՝ Գաբրուանեան, *Ցաւակ*, 65:

65 Տե՛ս Գասմանեան, «Պատմություն Վարդանուշ Գասմանեանի», 172, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174; Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

66 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 180, տե՛ս նաև՝ Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

67 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174:

68 Տե՛ս նույն տեղում, 172-173:

շնչելու⁶⁹: Եղել է դեպք, երբ տղամարդիկ այս պայմաններում, առանց սննդի և ջրի, ոտքի վրա մնացել են մեկ օր⁷⁰: Ջուր տալու և ուշքի բերելու նպատակով նվաղողներին հատ-հատ հանում էին դուրս: Բացի այդ, արձանագրված է դեպք, երբ բանտարկյալներին դուրս բերելուց հետո հաց և ջուր է բաժանվել⁷¹: Գրանցվել են նաև բանտարկվածների կողմից դռները կոտրելու և դիմադրություն ցույց տալու փորձեր⁷²: Ըստ մեկ վկայության՝ ուշագնացների թիվը երբ աճել է, բոլորին հանել են դուրս և նստեցրել բանտի պատի տակ⁷³: Որոշակի ժամանակ պահելուց հետո տղամարդկանց դուրս էին բերում՝ ներկայացնելու կառավարչին: Թեև ժանդարմները փորձում էին բանտարկյալներին հերթով դուրս բերել, նրանց խտության և ճնշվածության պատճառով մարդկային խմբերն անկանոն դուրս էին պրծնում⁷⁴ և շտապում մոտակա առվակի (իրականում արտաքնոցի) կեղտոտ ջուրը խմելու⁷⁵: Բանտարկված տղամարդկանց դուրս բերելուց հետո նրանց տանում էին մոտակա շինության՝ կառավարչական շենքի մոտ, որտեղ պետք է ներկայանային զինված քրդերով շրջապատված կառավարչին⁷⁶:

Կառավարչի հետ հանդիպումը, փաստորեն, արքայալների՝ մահից խուսափելու վերջին հնարավորությունն էր: Այդ հնարավորությունից օգտվելով՝ տղամարդիկ աղերսում էին փրկություն⁷⁷: Այս եղանակով են փրկվել Սեբաստիայի Պեքմեզ-Մոխախ թաղի քարավանի տղամարդիկ: Կառավարիչն առաջարկել է խմբի ավագներին՝ Ազգային հիվանդանոցի տեսուչ Մանուկ Էֆենդի Հեքիմյանին, նրա եղբայր Միհրանին և ևս մի քանի մարդու յուրաքանչյուրի համար վճարել հինգական ոսկի փրկագին: Այս պայմանավորվածության արդյունքում փրկագնով ազատվել է 18-20 մարդ, ևս 15-20 տղամարդկանց ազատ են արձակել առանց փրկագնի⁷⁸:

Գրանցվել է դեպք, երբ կեսգիշերին հաղորդվել է, թե իբր խղճահարությունից դրդված՝ Հասան Չելեբի գյուղի կառավարիչը հրամայել է տղամարդկանց ազատ արձակել և ի պատասխան պահանջել փրկագինը, որ իր ընտրած 2-3 հայերի միջոցով պետք է հաջորդ օրը ստանար: Տարագրյալները, իրար աջակցելով, հավաքել են գումարը և փոխանցել⁷⁹: Սակայն հաջորդ օրվա երեկոյան մի խումբ զինված քրդեր մի քանի փուլով կրկին բանտարկել են նրանց⁸⁰:

69 Տե՛ս նույն տեղում, 172:

70 Տե՛ս *Հուշագրական ժառանգություն*, 212:

71 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

72 Տե՛ս Գաբրիելեան, *Եղեռնապատում*, 180:

73 Տե՛ս Գաբրիելեան, *Ցասակ*, 66:

74 Տե՛ս Գաբրիելեան, *Եղեռնապատում*, 181:

75 Տե՛ս նույն տեղում:

76 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

77 Տե՛ս Գաբրիելեան, *Եղեռնապատում*, 181, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 173:

78 Տե՛ս նույն տեղում:

79 Տե՛ս նույն տեղում, 165:

80 Տե՛ս նույն տեղում, 169-170:

Առավել մեծ թվով ներում է շնորհվել Սեբաստիա քաղաքից մեկնած վերջին քարավանների տղամարդկանց՝ ներկայացնելով դա որպես կայսերական ներում⁸¹, որը, սակայն, չէր տարածվում որոշ աչքի ընկնող տղամարդկանց վրա⁸²: Ըստ Հովհաննես Ալեքսանդրյանի վկայության, որը չի տալիս եղելության մանրամասները, իր քարավանից բանտարկված շուրջ 50 տղամարդու ազատ են արձակել⁸³: Փրկության այս վերջին հնարավորությունից հետո տղամարդկանց այլ վայր տեղափոխելու պատրվակով հանել են, գույգ-գույգ կապել⁸⁴ և առաջնորդել դեպի նախապես պատրաստված սպանդի տեղանք՝ լեռ, ապա հարթավայրի միջով՝ ձորի եզր⁸⁵: Տղամարդկանց ոչնչացման գործընթացի այս փուլը հիմնականում տեղի էր ունենում կեզգիշերից հետո⁸⁶: Խմբին ուղեկցում էին զինված ժանդարմներ և պահապան զինվորներ⁸⁷, երբեմն՝ նաև զինված գյուղացիներ⁸⁸: Նախանշված վայրին մոտենալիս ուղեկցող ժանդարմներն օդ էին կրակում, այսպիսով նշան տալիս տեղանքում դարանակալած և հարձակման սպասող քրդերին⁸⁹: Ազդանշանին հաջորդում էր քրդերի հարձակումը, որոնց խմբերում ներառված էին նաև կանայք⁹⁰:

Խմբին առաջնորդում են դեպի անդունդի եզրի ժայռերի մոտ, մերկացնում են, թալանում, դանակահարում, կացնահարում⁹¹ կամ գնդակահարում⁹² և վերջում շարտում են ձորը⁹³: Նման մի դիպվածի ժամանակ, երբ Սեբաստիայի Պեքմեզ-Սոխայն թաղի քարավանից մնացել են 8-10 գույգ իրար կապված երիտասարդներ, մոտեցել է մի զինվորական համազգեստով ձիավոր և իր մոտ կանչելով թրքախոս ջարդարարներից մեկին՝ հիշեցրել անչափահասներին խնայելու հրահանգի մասին և պատանիներից ստանալով իսլամանալու խոստում՝ ազատել նրանց⁹⁴: Սպանությունների այս վերջին փուլը տևել է 3-4 ժամ⁹⁵ և ուղեկցվել մարմնի մասնատումներով, գլխատումներով

81 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 186:

82 Տե՛ս նույն տեղում:

83 Տե՛ս ՀԱԱ ֆ.439, ց.3, գ.115, 23:

84 Տե՛ս Գամանեան, «Պատմություն Վարդանուշ Գամանեանի», 172:

85 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 200, տե՛ս նաև՝ Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 174; Գաբտանեան, *Ցաւակ*, 66; *Հուշագրական ժառանգություն*, 212:

86 Տե՛ս Քօսեան, «Գանդիլիս Գոյումենեան», 401, տե՛ս նաև՝ Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 175; Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 326:

87 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66, տե՛ս նաև՝ *Հուշագրական ժառանգություն*, 212:

88 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

89 Տե՛ս Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 175, 181:

90 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 175:

91 Տե՛ս Սարգսյան, «Պատմության կարմիր, սև էջեր», 91, տե՛ս նաև՝ Համբարձումյան, *Գիւղաշխարհ*, 223; *Հուշագրական ժառանգություն*, 212:

92 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

93 Տե՛ս Լուսարարյան, *Մի կյանքի պատմություն*, 175:

94 Տե՛ս նույն տեղում, 176:

95 Տե՛ս Գաբտանեան, *Ցաւակ*, 66:

և այլ ծայրահեղ դաժանություններով⁹⁶: Սպանություններն իրագործած քրդերը գողացել են ընդհուպ մինչև սպանվածների արյունոտված հագուստները և դրանք հագած կամ ձեռքներում բռնած՝ վերադարձել գյուղ⁹⁷: Ըստ այս փուլը վերապարծի բառացի վկայության՝ մի զինված քուրդ հայտարարել է, որ բոլոր տղամարդկանց՝ որպես իսլամի թշնամիներ, պիտի խողխողեն, իսկ ով վճարեր մեկ⁹⁸ կամ երկու ոսկի⁹⁹՝ գնդակի գինը, կգնդակահարվեր: Երբ առավոտյան Գոչխասրի քարավաններից մեկի կանայք ցանկություն են հայտնել այցելելու իրենց ամուսիններին գումար և սնունդ տալու համար, նրանց հաղորդել են, որ տղամարդիկ սպանվել են լեռան հետևում և կանանց ծեծելով վռնդել են¹⁰⁰:

Եղել են զանգվածային սպանությունից մազապուրծ եղած և կացնահարումից¹⁰¹ կամ այլ խոշտանգումներից ծանր վիրավորվածներ, որոնք հետագայում միացել են քարավանին¹⁰²: Ըստ մեկ վերապրողի՝ հետևում են մնացել նաև այլ ծանր վիրավորներ, որոնք ի վիճակի չեն եղել դուրս գալու դիակների տակից¹⁰³, սակայն փրկվածները չեն համարձակվել վերջիններիս իրենց հետ տեղափոխել¹⁰⁴:

Հայտնի է նաև կանանց զանգվածային բանտարկության դեպք, երբ Սամսոնի քարավաններից մեկի տղամարդկանց սպանությունից հետո հավաքել են շուրջ 100 կանանց և բանտարկել մի տան մեջ, խուզարկել և թալանել: Ինչպես վերը նկարագրված գործընթացում, կանանց նույնպես կուտակել են նրանց քանակի հետ անհամատեղելի փոքրիկ սենյակում՝ առանց բնական կարիքների գոհացման թույլտվության: Կառավարական մի պաշտոնյա կանանց առաջարկել էր ազատել բանտարկությունից, եթե վերջիններս իսլամ ընդունեն¹⁰⁵: Ընդունողներին ազատել են, իսկ հրաժարվողներին՝ շուրջ 35 հոգի, որոնցից 6-7-ը՝ կաթոլիկ մայրապետներ, իջեցրել են ձոր, որպեսզի սպանեն, սակայն չեն սպանել՝ պատճառաբանելով սուլթանական ներումով¹⁰⁶: Գյուղի կառավարչի հետ քարավանի գեղեցիկ կանանցից մեկի հետ ամուսնանալու պայմանով քարավանին տրվել են Մալաթիա անվտանգ հասնելու երաշխիքներ¹⁰⁷: Մինչ այդ

96 Տե՛ս Գասմանեան, «Պարսկություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

97 Տե՛ս նույն տեղում, 172, տե՛ս նաև՝ Պեկեան, «Ամասիայի հայ փորագրեալները»; Գաբունեան, Ցաւակ, 66:

98 Տե՛ս Լուսարարյան, Մի կյանքի պարսկություն, 175:

99 Տե՛ս Ակունի, Միջին մը հայերու շարդի, 96:

100 Տե՛ս Ա. հ., Սեքսադիա, 124:

101 Տե՛ս Գաբիկեան, Եղեռնապարտում, 179, տես նաև՝ Սարգսյան, «Պարսկության կարմիր, սև էջեր», 91; Համբարձումյան, Գիւղաշխարհ, 223; Բազումյան, Եղեռնաքաղ որաներ, 81; Սվազյան, Հայոց ցեղասպանություն, 326:

102 Տե՛ս Հուշագրական ժառանգություն, 212:

103 Տե՛ս Գաբիկեան, Եղեռնապարտում, 184:

104 Տե՛ս Գասմանեան, «Պարսկություն Վարդանուշ Գասմանեանի», 172:

105 Տե՛ս Գաբունեան, Ցաւակ, 67:

106 Տե՛ս նույն տեղում, 67-68:

107 Տե՛ս նույն տեղում, 68-70:

այս կանանց քարավանը արդեն լքել էր կայանը, և խումբը վերադարձել է իջևանած վայր, ապա միացել հաջորդ քարավանին¹⁰⁸:

Հասան Չելեբի կայանում տեղի ունեցած սպանությունների ծավալներն ամփոփելու համար ներկայացնենք ձերբակալված և սպանված տղամարդկանց քանակի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած տվյալները: Ըստ Կարապետ Գաբրիլյանի՝ Սեբաստիա քաղաքի 15 քարավաններից յուրաքանչյուրից այստեղ սպանվել է 300-500 տղամարդ¹⁰⁹: Պեքմեզ-Սոխախի թաղի քարավանից, որի մեջ էր Կարապետ Գաբրիլյանը, կայանում սպանվել է 300 մարդ¹¹⁰ և 300-ից ավելի՝ Սեբաստիայից դուրս եկած երրորդ քարավանից¹¹¹: Նույնքան էլ սպանվել են Սեբաստիայի Սարը-Շելյս թաղի քարավանից¹¹²: Մայր եկեղեցու թաղի քարավանից բանտարկվել է մինչև 500 մարդ¹¹³, որոնցից շուրջ 300-ը¹¹⁴ սպանվել է: Սամսոնի քարավաններից մեկից, որի մեջ էր Փայլածու Գաբրուանյանը, ձերբակալվել և սպանվել է 100-ից ավելի տղամարդ¹¹⁵: Ըստ մի քանի վկայության՝ նույնչափ սպանվել են Ամասիայի քարավաններից մեկից¹¹⁶: Ըստ մի անստորագիր վկայության՝ Գոչիսար գյուղից սպանվել են 100-200¹¹⁷, Ամասիայի մեկ այլ քարավանից, ըստ Հեղինե Բեկյանի՝ 200 հոգի¹¹⁸:

Մայր եկեղեցու թաղի քարավանի պարագան

Հասան Չելեբի կայանում հատուկ թիրախավորվել են նաև Սեբաստիա քաղաքի հարուստները¹¹⁹: Սրա ցցուն դրսևորումներից են օգոստոսի առաջին օրերին կայան ժամանած Սեբաստիայի Մայր եկեղեցու թաղի քարավանի հետ տեղի ունեցած դեպքերը: Այս թաղը Սեբաստիայի հայաբնակ մեծ թաղերից էր, և հարուստ գերդաստանները մեծ մասամբ այստեղից էին: Այստեղ էին բնակվում հայ բարերարները, քահանաները, ուսուցիչները, ազգային գործիչները, և բնական է, որ նման համբավ ունեցող թաղի քարավանը պետք է հատուկ թիրախավորման ենթակա լիներ¹²⁰: Քարավանի շուրջ 500 տղամարդկանց բանտարկել են և ազատ արձակելու համար պահանջել 500 ոսկի, ինչը բավարարվել է: Այնուհետև, առանց ելքի հրամանին սպա-

108 Տե՛ս Լուսարայան, *Մի կյանքի պատմություն*, 177:

109 Տե՛ս Գաբրիլեան, *Եղեռնասպալում*, 170:

110 Տե՛ս նույն տեղում, 179:

111 Տե՛ս նույն տեղում, 190:

112 Տե՛ս նույն տեղում, 186:

113 Տե՛ս նույն տեղում, 184:

114 Տե՛ս նույն տեղում, 185:

115 Տե՛ս Գաբրուանեան, *Յաւակ*, 66:

116 Տե՛ս Սիմոնեան, *Յուշամարեան*, 670:

117 Տե՛ս Ա. հ., *Սեբաստիա*, 124:

118 Տե՛ս Պեկեան, «Ամասիայի հայ տարագրեալները», 0008 շրջ.:

119 Տե՛ս Ակունի, *Միտոն մը հայերու ջարդի*, 96, տե՛ս նաև՝ Լևոն Մեսրոպ, *Աղէր եւ վերածնունդ*, 272:

120 Տե՛ս Գաբրիլեան, *Եղեռնասպալում*, 183-184:

սելու՝ քարավանը ճամփա է ընկնել¹²¹: Գումարը ստանալուց և տղամարդկանց որոշ մասին բաց թողնելուց հետո կառավարիչը նորից է փորձել ձերբակալել նույն տղամարդկանց, սակայն տեսնելով, որ քարավանն արդեն մեկնում էր, հետ է կանգնել այդ քայլից¹²²: Հասան Չելեբիից դուրս գալուց 2-3 ժամ անց քարավանը կրկին կանգնեցրել են, սկսել են թալանել և ձերբակալել տղամարդկանց: Շատերին հաջողվել է թաքնվել: Ձերբակալել են 400-ից ավելի տղամարդկանց և բանտարկել մոտակայքում գտնվող մի խանում¹²³՝ կրկին պահաջելով կաշառք՝ երկուական ոսկի: Շատերը վճարել են գումարով, մնացածը՝ թանկարժեք առարկաներով, ինչից հետո մոտ 100 տղամարդու ժամանակավորապես ազատ են արձակել: Մնացածին՝ շուրջ 300 տղամարդու, վերը նկարագրված եղանակներով սպանել են մոտակա ձորում¹²⁴:

Մերի Գրեֆենի ներկայության հանգամանքը

Մերի Գրեֆենը 1902 թ. Սերաստիայում գործունեություն ծավալած նշանավոր ամերիկացի միսիոներուհի է, ով գրառվել է կրթական և հասարակական հայանպաստ գործունեությամբ, տնօրինել է Սերաստիայի աղջկանց վարժարանը¹²⁵: Գրեֆենը Կարինում պայքարել է բռնկված տիֆի համաճարակի դեմ¹²⁶: Հայ բնակչության զանգվածային տարագրության սկզբին վերադարձել է Սերաստիա և փորձել աջակցել հայ աքսորյալներին¹²⁷: Տեսնելով դպրոցի ուսուցիչների և աշակերտների բռնագաղթը՝ դիմել է կուսակալ Մուամմերին և ստանալով խմբերին ուղեկցելու և խնամելու արտոնություն¹²⁸, քարավանների կարիքները հոգալու համար միացել է նրանց¹²⁹:

Հուլիսի 11-ին Մերի Գրեֆենի քարավանը հասել է Հասան Չելեբի: Կայանում գտնվող նախորդ քարավանը քրդերը քարկոծելիս են եղել, սակայն Մերի Գրեֆենի հայտնվելուց հետո նման վերաբերմունքի դրսևորումները դադարել են դադարել է¹³⁰: Կայանի կառավարիչն անձամբ է ներկայացել Գրեֆենի քարավան և հավաքել տղամարդկանց՝ ասելով, թե կայմակամը ցանկություն է հայտնել արձանագրել նրանց անունները, որից հետո տղամարդիկ շուտով պիտի վերադառնային¹³¹:

121 Տե՛ս նույն տեղում, 184:

122 Տե՛ս նույն տեղում, 184-185:

123 Խան - իջևանատուն:

124 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնապատում*, 185:

125 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 208:

126 Տե՛ս նույն տեղում, 208-209:

127 Տե՛ս նույն տեղում, 100:

128 Տե՛ս նույն տեղում, 209:

129 Տե՛ս նույն տեղում, 398:

130 Տե՛ս Տեմիրճեան, *Չորս տարուան տառապանք*, 12-13:

131 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

Հաջորդ օրը տարված տղամարդկանցից մեկը վերադարձել է և պատմել, որ բոլորը հարկադրված էին հանձնել իրենց ամբողջ ունեցվածքը¹³²: Գրանկից հետո ձերբակալությունները վերսկսվել են. ձերբակալվել են նախորդ գիշերը խույս տված տղամարդիկ: Այս ձերբակալումից հետո Մերի Գրեֆենը դիմել է կառավարչին և ամերիկյան կառավարության անունից սպառնացել՝ պահանջելով ազատել տղամարդկանց¹³³: Նրան ի պատասխան՝ կառավարիչն ասել է, որ տղամարդիկ հետ են ուղարկվել Սերաստիա, սակայն ճանապարհին հանդիպած գյուղացիները հաղորդել են, որ նրանք սպանվել են¹³⁴: Այսպիսով, օտար ականատեսի ներկայությունը զսպել է այն դաժանությունները և հախուռն թալանը, ինչին ենթարկվել էին նախորդ քարավանները: Բացի այդ, փորձ է կատարվել տղամարդկանց ձերբակալությանը տալ «օրինական» տեսք: Արդյունքում՝ այս փուլի ընթացքում քարավանի մի հատվածը խուսափել է բռնություններից, իսկ տղամարդկանց սպանություններն իրականացնելու համար կայանի պատասխանատուները ստիպված են եղել դիմել այնպիսի մեթոդների, որոնցով սպանությունների մասին տեղեկությունն առժամանակ կթաքցվեր օտար վկայից:

Եզրակացություններ

1. Օսմանյան փաստաթղթերի և վերապրողների վկայությունների վերլուծությունը բերում է այն համոզման, որ կայանի գործունեությունը կազմակերպված է եղել քաղաքական և կրոնական բարձրագույն իշխանությունների ցուցումներով:

2. Հասան Չելեբի կայանում տեղի ունեցած գործողությունները կարելի է բաժանել երեք փուլի, ըստ որոնց՝ կայանի առաջին գործառնությունը թալանը և կանանց նկատմամբ կիրառվող բռնություններն էին, որին հաջորդում էին տղամարդկանց հայտնաբերումն ու ձերբակալումը, ապա կայանում (կամ դրանից ոչ հեռու) տղամարդիկ զանգվածաբար բանտարկվում և սպանվում են:

3. Հասան Չելեբի գյուղում իրականացված գործողությունների համակարգային բնույթը, դրանց ծավալը և արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ այն Սերաստիա վիլայեթի և հարակից շրջանների չափահաս հայ տղամարդկանց ոչնչացնելու հիմնական կայանն է եղել:

4. Ոչնչացումը դյուրացնելու և մեղքի բաժինը կիսելու համար գործողություններում ներգրավվել է նաև քուրդ բնակչությունը, որին շահագրգռել են հարստացմամբ: Սպանությունները քրդերի միջոցով կատարելն ազատում էր նաև սպանությունների իրագործման համար անհրաժեշտ ծախսերից: Սպանությունները հիմնականում իրականացվում էին ծայրահեղ դաժանությամբ՝ սառը զենքով: Գնդակահարության միջոցով արագ մահվան համար նույնիսկ պահանջվում էր կաշառք:

5. Քարավաններից մեկում օտար ականատես, ԱՄՆ քաղաքացի միսիոներուհի Մերի Գրեֆենի ներկայությունը ոչ լիարժեք, սակայն որոշակի կերպով ոճրագործների համար զսպող հանգամանք է եղել:

132 Տե՛ս նույն տեղում, 57:

133 Տե՛ս Գաբիկեան, *Եղեռնասպարում*, 191:

134 Տե՛ս Քասունի, *Քննական ակնարկ*, 57:

HASAN CELEBI: A STATION ON THE DEPORTATION ROUTE OF SEBASTIA

Key words: Armenian Genocide, six vilayets, Sebastia, Kharberd, Hasan Celebi, deportation, massacre of men, robbery, foreign witnesses.

SUMMARY

The paper examines one of the transitional stations – Hasan Chelebi – used during the deportations of the Armenian population of Sebastia in the context of the Armenian Genocide. Using mainly Armenian archival, press sources, collections of memoirs as well as secondary sources, and by combining them with the information provided by foreign witnesses and the Ottoman documents the paper presents the outline of the main functions and the sequence of the transitional station, the behavior of the victim and perpetrator groups and the implemented actions. Based on the systematic nature of the actions the paper reveals the main mission of the station, which is the extermination of the male population of Sebastia vilayet and the surrounding areas. The Kurdish population of the surrounding areas of Hasan Chelebi took part in the extermination and looting. The presence of the foreign witness Mary Graffam in the deportation caravan had a somewhat restraining influence. The testimonies of the survivors demonstrate that the actions undertaken at the station were implemented under the instructions of the higher political and religious authorities.

Роберт А. Сукиасян

ХАСАН ЧЕЛЕБИ. ОБ ОДНОМ ПЕРЕВАЛОЧНОМ ПУНКТЕ НА ПУТИ ДЕПОРТАЦИИ ИЗ ПРОВИНЦИИ СЕБАСТИЯ

Ключевые слова: Геноцид армян, шесть вилайетов, Себастиа, Харберд, Хасан Челеби, депортация, массовые убийства мужчин, грабеж, иностранные очевидцы.

РЕЗЮМЕ

В статье рассматривается одна из перевалочных станций, использовавшихся во время депортации армянского населения Себастии в контексте Геноцида Армян – перевалочная станция Хасан Челеби. Используя в основном армянские архивные материалы, источники в прессе, сборники воспоминаний и вторичные источники, в сочетании с информацией, предоставленной иностранными очевидцами и османскими документами, в статье дается описание основных функций и порядка работы перевалочной станции, поведения жертв и преступников и предпринятых ими

действий. Основываясь на систематичности характера проводимых мероприятий, в статье раскрывается основная задача станции: уничтожение мужского населения Себастьянского вилайета и прилегающих территорий. Курдское население близлежащих районов Хасан Челеби участвовало в уничтожении и разграблении. Присутствие иностранного очевидца Мэри Грэффэм в караване депортации оказало некоторое сдерживающее влияние. Рассказы выживших жертв свидетельствуют о том, что действия, предпринятые на станции, осуществлялись по указанию высших политических и религиозных деятелей.

REFERENCES

Aknuni, Sepuh. *Միլիոն մը հայերու ջարդի անբողջական պատմությունը (1914-1918)* [*Complete History of Massacres of Millions of Armenians (1914-1918)*]. Constantinople: Hayastan gratun, 1921.

Chugasëzean, Vahan. «Բզրոնած Սեբաստիան» [Torned Sebastia]. *Eritasard Hayastan* (Chicago), 11 October 1919.

Gabikyan, Karapet. *Եղեռնապատում. Փոքրն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիայի* [*Eghernapatum of the Poqr Hayiq and the New Big Capital Sebastia*]. Boston: Hayreniq, 1924.

Gabtanean, Paylat'su. *Ցաւակ* [*Pain*]. New York: Armenia, 1922.

Gasmanyanyan, Vardanush. *Պատմություն Վարդանուշ Գասանյանի սիվասցի* [*History of Vardanush Gasmanyanyan from Sivas*]. BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

Hakobyan, Tadevos, Meliq-Bakhshyan, Step'an and Barseghyan, Hovhannes. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3* [*Vocabulary of Toponyms in Armenia and Neighboring Territories*]. Yerevan: Yerevan State University, 1991.

Hambarts'umyan, Vahan. *Գիղաշխարհ. Պատմական, ազգագրական ուսումնասիրություն* [*Village World: Historical, Ethnographic Study*]. Paris: Taron, 1927.

Հուշագրական ժառանգություն [*Legacy of Memoirs*]. HCHU Himnadrami gitakan usumnasirutyunner, Vol. 14. Yerevan: Foundation on Research of Armenian Architecture, 2011.

Lusararyan, Sepuh. *Մի կյանքի պատմություն* [*A History of One Life*]. Armenian Genocide Museum-Institute, Section of Handwritten memoirs, file 127, 128, 129.

Օհաննես Ալեքսանդրեանի հուշերը 1915 թ. եղեռնի մասին [*Memoirs of Ohannes Aleksanyan on 1915 yeghern*]. National Archives of Armenia, section 439, f. 3, file 115:

Mesrop, Levon. *Աղէր և վերածնունդ* [*Catastrophe and Renaissance*]. Paris: Araks, 1952.

Pekean, Heghine. *Ամասիայի հայ փախազրեակները* [*Armenian Exiles of Amasia*]. Nu/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

Qasuni, Yervand. *Քննական ակնարկ «Միշրների հերըլդ»-ի 1915-1918 թթ. հայ ժողովրդի գեղասպանության և վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն* [A Critical Overview of Testimonies on 1915-1918 Armenian Genocide and Renaissance by Missionary Herald]. Beirut: M.A.H.A.E., 2012.

Qosean, Hakob. «Գանտիտա Գոյումճեան. Աքսորի ճամբան (1915)» [Gantita Guyumchean: An Exile Route (1915)]. *Hande's ams' rea* 1 no. 12 (2015), 345-483:

Ragupean, Eduard. *Եղեռնաբաղ դրաներ* [Reaped by Yeghern]. Beirut: Shirak Press, 1968.

Sargsyan, Suren. *Պատմության կարմիր, սև էջեր, սաբասայական գործեր, եղեռնը* [Red, Black Pages of History, Demon Affairs, Yeghern]. Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia, Archives, file no. 121/2.

Simonean, Gabriel. *Յուշանարեան պոնտական Ամասիոյ* [Memory Book of Pontus Amasia]. Venice, 1966.

Svazlyan, Verjine. *Հայոց գեղասպանություն. ակնմարտի վերապրողների վկայություններ* [Armenian Genocide: Testimonies of Witness Survivors]. Yerevan: Gitut'yun, 2011.

Temirchyan, Sargis. *Չորս տարուան տառապանք, Եդրկացի (Թոքսար) օր. Թէփերիկ Չալրգեանի քսորի կեանքէն* [Four Years of Sufferings, Teperik Chalgean's (from Tokat) Exile Life]. New York: Hayk, 1920.

Terteryan, Shahen. «Արիւնի ճամբէս. Դէպի Գողգոթան» [My Bloody Way: To Golgotha]. *Hayreniq* 11 no. 298 (1950), 1 no. 323 (1953).

Vardan, Levon. *Անբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան* [Accusatory Reports of Sebastia]. *Haykazyan hayagitakan handes* (1995): 499-519.

Zarat'syan, Haykanush. *Սրվազ* [Sivas]. BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 6, Amasia.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԵԻՑ ՀՈԼՈՔՈՍԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի քառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հրեից հոլոքոստ, իրագործողներ, հասարակություն, բանակ, հանցագործներ, ոստիկանություն, գաղտնի կազմակերպություն, Թեշ-քիլաթը մահուսա, գերմանական Էսէս:

Հողվածում Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի համեմատության շրջանակներում ներկայացվում են երկու ցեղասպանությունների իրագործման մեխանիզմները: Առանձին-առանձին ներկայացվում են ցեղասպանական ծրագրում ներգրավված բոլոր խմբերը: Առաջինը հասարակությունն է, որի ներգրավվածությունը ցեղասպանության իրականացմանը հնարավորություն էր տալիս իշխանություններին՝ խնայելու սեփական ուժերը և ցեղասպանական գործողությունները քողարկելու ժողովուրդների բախումների անվան ներքո: Հատկանշական է, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ, անկախ դրդապատճառներից, մեծ է եղել տարբեր ժողովուրդների, իսկ հրեաների պարագայում նաև պետությունների, ցուցաբերած աջակցությունը համապատասխանաբար՝ օսմանյան և նացիստական իշխանություններին: Ներկայացված երկրորդ խումբը բանակն էր, որի մասնակցությունը կարևոր էր հատկապես հայ տղամարդկանց գինաթափումը և հավաքագրումն իրականացնելու, իսկ հոլոքոստի պարագայում՝ հրեաներին հայտնաբերելու համար: Գործում էր մեկ ամբողջական համակարգ, որը ներառում էր իրար շաղկապված մի քանի ռազմական կամ կիսառազմականացված կառույցներ: Քննարկվում է նաև ոստիկանության մասնակցությունը, որը, լինելով օրենքի պաշտպան, ինքն էր խախտում օրենքը, ինչպես նաև օգտագործում այդ նույն օրենքը՝ արդարացնելու իր գործողությունները: Օգտագործվում էին նաև բանտերից ազատ արձակված հանցագործները, որոնք մի կողմից համալրում էին ռազմականացված ինստիտուտների շարքերը, մյուս կողմից օգտագործում էին իրենց փորձառությունը սպանություններ իրականացնելու գործում:

Գաղտնի կազմակերպությունները (Թեշքիլաթը մահուսա¹ և գերմանական Էսէս) դարձան երկու ցեղասպանությունների գլխավոր իրագործողները, որոնք ոչ միայն օժանդակեցին ցեղասպանության ծրագրի իրագործմանը, այլև ստանձնեցին դրա իրագործման պատասխանատվությունը: Ակնհայտ է, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործել է ամբողջական, փոխկապակցված համակարգ:

Ցեղասպանությունները, անկախ իրենց իրականացման ժամանակաշրջանից, դրդապատճառներից, իրագործման մեխանիզմներից և հետապնդման նպատակներից, հանգեցնում են մեծաթիվ մարդկային, տնտեսական և/կամ դրանցից բխող այլ կորուստների: Սա նշանակում է, որ նման ընդգրկուն հանցագործություն իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ: Դրանք են՝ հասարակության անհատ անդամներ, պետական համա-

1 Թուրքերեն Teşkilât-ı Mahsusa, որ թարգմանաբար նշանակում է հատուկ կազմակերպություն: Այսուհետ կօգտագործենք՝ Թեշքիլաթը մահուսա կամ Հատուկ կազմակերպություն:

կարգի տարբեր կառույցներ, ռազմականացված կամ կիսառազմականացված կազմակերպություններ և այլն, ինչն էլ հանցագործությանը հաղորդում է զանգվածային բնույթ: Ցեղասպանության իրագործման զանգվածայնության վառ նկարագրություն է Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Հալի Մենթեշեի այն խոստովանությունը, որ Անատոլիայում շատ քիչ են թուրքերը, ովքեր արքայի հետ կապ չունեն²:

Գոյություն ունի մեծաքանակ գրականություն՝ նվիրված զանգվածային սպանություններին ու ցեղասպանություններին, որոնց մեծ մասը վերաբերում է դրդապատճառների վերհանմանը և առաջնորդներին, ովքեր կազմակերպում և լեզվախմբացնում են զանգվածային սպանությունները և ցեղասպանությունը: Կան մի շարք աշխատություններ, որոնք քննության են առնում փաստացի սպանություններն իրագործողներին և նրանց՝ ցեղասպանության իրագործման մեջ ներգրավվելու խնդիրները³: Ցեղասպանության իրագործման մեխանիզմների ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր հետազոտող, փորձելով բացահայտել դրանց իրականացման պատճառները, նախևառաջ պետք է քննարկի «գործիքակազմը» և գործադրված մեթոդները: Քանի որ ուսումնասիրության առումով առաջ քաշված խնդիրները չափազանց ընդգրկուն են, տվյալ հոդվածում անդրադարձ է կատարվում լոկ ցեղասպանության իրականացման «գործիքակազմի» մաս կազմող՝ հասարակության շարքային անդամներին և պետական կառույցների որոշ ստորաբաժանումների:

Ցեղասպանությունների իրագործմանը հասարակության լայն ընդգրկվածություն հնարավոր է լինում ապահովել դեռևս նախապատրաստական փուլում՝ թիրախավորված խմբի դեմ ուղղված քարոզչության միջոցով:

Ցեղասպանություններում քարոզչության դերի մասին ցեղասպանագետներ Ֆրենք Չոքը և Քուրթ Յոնասոնը հայտնում են այն տեսակետը, որ ցեղասպանություն կատարելու համար հանցագործը նախ՝ պետք է հակաքարոզչություն իրականացնի՝ թիրախավորված խմբին արժեզրկելու, ապամարդկայնացնելու համար՝ դրանով իսկ

2 Арсен Авакян, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* (Ереван: НАН РА Музей-Институт Геноцида Армян, 2013), 121.

3 Փաստացի սպանություններ իրագործողների մասին տե՛ս, օրինակ, Christopher Browning, *Ordinary men. Reserve Policie Battalion 101 and the Final Solution in Poland* (London: Penguin Books, 2001); Daniel Goldhagen, *Hitler's Willing Executioners. Ordinary Germans and the Holocaust* (New York: Vintage Books, 1996); Dona J. Maier, "Women Leaders in the Rwanda Genocide: When Women Choose To Kill," *Universitas* 8 (2012-2013): 1-20; Reva N. Adler, Cyanne E. Loyle and Judith Globberman, "A Calamity in the Neighborhood: Women's Participation in the Rwandan Genocide," *Genocide Studies and Prevention: An International Journal*, 2, no. 3 (2007): 209-232; Kerrilee Hollows and Katarina Fritzon, "Ordinary Men" or "Evil Monsters"? An Action Systems Model of Genocidal Actions and Characteristics of Perpetrators," *Law and Human Behavior*, 36, no. 5 (2012): 458-467: Հայոց ցեղասպանության համատեքստում տվյալ խնդրի վերաբերյալ տե՛ս Ավազյան, *Геноцид армян*; Հասմիկ Գրիգորյան, *Հանգվածները և զանգվածային բնույթի իրադրությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017); Սուրեն Մանուկյան, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII (2012), 342-350:

օտարելով տվյալ խմբին գերադասվող խմբից⁴: Այդուհանդերձ, հեղինակները նշում են, որ նույնիսկ այսպիսի անմարդկային և անողոք քարոզչությունից հետո զանգվածային սպանություն իրագործելու համար պահանջվում են հարկադրանք և կենտրոնացված վերահսկողություն⁵:

Այնուամենայնիվ, քարոզչությունը գուցե անհրաժեշտ, սակայն միակ գործիքը չէ. կարևորագույն հարցը մնում է այն, թե ինչպես է մարդը, անկախ այն բանից հասարակության շարքային անդամ է, թե՞ պետական համակարգի ներկայացուցիչ, դառնում մարդասպան, հատկապես ցեղասպանություն իրագործող: Մշակութաբան, ցեղասպանագետ Հասմիկ Գրիգորյանն իր ուսումնասիրության մեջ, անդրադառնալով «ովքե՞ր են ցեղասպանություն իրագործողները, և որո՞նք են նրանց դրդապատճառները» հարցադրումներին, նշում է, որ դրանք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել Հրեից հոլոքոստի օրինակով⁶: Եվ հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ տվյալ հոդվածում փորձել է տրված հարցը քննարկել Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի համեմատական վերլուծության ճանապարհով:

Քննարկվող հարցադրումների վերաբերյալ առկա են երկու հիմնական մոտեցումներ, որոնք առաջ են քաշել ամերիկացի պատմաբաններ, Հրեից հոլոքոստի պատմության մասնագետներ Քրիստոֆեր Բրաունինգը և Դանիել Գոլդհագենը⁷: Հեղինակների տեսակետերն առանձին գլխով մանրամասն քննության են առնված Հ. Գրիգորյանի վերոնշյալ աշխատության մեջ: Հեղինակը վերլուծում է ամերիկացի հետազոտողների իրարամերժ մոտեցումները Հոլոքոստի իրագործմանը ներգրավվելու հարցի շուրջ, այսինքն, երբ այն պայմանավորված է իրավիճակային հանգամանքով, առանց որևէ գաղափարախոսական նախատրամադրվածության (Ք. Բրաունինգ), և երբ այն պայմանավորված է գաղափարախոսությամբ՝ հակահրեականությամբ (Դ. Գոլդհագեն):

Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այս բանավեճի արդյունքում գիտնականների մի մասը ցեղասպանության իրագործումը կապում էր գաղափարախոսության հետ, իսկ մյուս մասը հերքում էր այն⁸: Եթե, օրինակ, Բենիամին Վոլենտինոն կարծում էր, որ գաղափարախոսությամբ առաջնորդվում են հիմնականում առաջնորդները կամ վերնախավի անդամներ⁹, ապա Թիմոթի Վիլյամսն այն կարծիքին էր, որ ցեղասպանությունների իրագործման հիմքում ընկած է երկու գլխավոր դրդապատճառ՝ «ատելություն» և «գաղափարախոսություն», որոնք թեև տարբեր հասկացություններ են, բայց երբեմն հաջողությամբ փոխազդում և լրացնում են

4 Frank Chalk and Kurt Jonassohn, *The History and Sociology of Genocide, Analyses and Case Studies* (New Haven & London: Yale University Press, 1990), 28.

5 Նույն տեղում:

6 Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 14:

7 Browning, *Ordinary men; Goldhagen, Hitler's Willing Executioners*.

8 Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

9 Benjamin Valentino, *Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century* (Ithaca New York: Cornell University Press, 2004), 31, հղվում է ըստ Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

միմյանց. «Մինչ *հնագույն արեւլություն* հասկացությունը որպես դրդապատճառ լայնորեն մերժվում է ակադեմիական շրջանակներում, ցեղասպան վերնախավը գործածում է որոշ գաղափարներ՝ թիրախային խմբի նկատմամբ ատելություն սերմանելու համար՝ դրանով իսկ գաղափարապես օրինականացնելով ցեղասպանության գործընթացը և իր վրայից թոթափելով մեղադրանքի հնարավոր սպառնալիքը»¹⁰:

Ընդհանուր առմամբ ներկայացնելով շրջանառության մեջ գոյություն ունեցող մոտեցումները ցեղասպանություններին հասարակության տարբեր շերտերի մասնակցության դրդապատճառների վերաբերյալ՝ փորձենք ներկայացնել ցեղասպանությունների իրականացման ամբողջական շղթան՝ առանձին-առանձին անդրադառնալով դրա բաղկացուցիչ օղակներին: Քանի որ յուրաքանչյուր խումբ կարող է դառնալ նաև որպես առանձին ուսումնասիրության թեմա, այստեղ համառոտ ներկայացվում են լոկայն հիմնական սոցիալական խմբերը, որոնք ակտիվորեն մասնակցել են և՛ Հայոց ցեղասպանության, և՛ Հրեից հոլոքոստի իրագործմանը՝ մասնավորապես անդրադարձ կատարելով որոշ ընդհանրությունների և տարբերությունների, որոնք կարող են հող նախապատրաստել հետագա համեմատական ուսումնասիրությունների համար:

Հասարակության անդամներ (հարևան կամ այլ ժողովուրդներ): Պատմագիտության, մասնավորապես ցեղասպանագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ ցեղասպանություն իրագործած երկրի ժողովուրդը, հասարակությունն ունեն մեղքի իրենց մեծ բաժինը¹¹: Այդ նույն ժողովուրդը կարող է աջակցել և ներգրավվել ցեղասպանական ծրագրի իրականացման մեջ, կարող է փրկել թիրախային խմբի ներկայացուցիչներին նույնիսկ իր կյանքին սպառնացող վտանգի առկայության պարագայում կամ անկողմնակալ մնալ կատարվող իրադարձություններից:

Հասարակության անդամների մասնակցությունը դրսևորվում է ինչպես համակարգված՝ ռազմականացված կառույցներում գործելով, այնպես էլ իրավիճակի դրդմամբ՝ անհատապես:

Հայոց ցեղասպանությանը հասարակության մասնակցության ձևերի հարցն իր ժամանակին քննարկվում էր պետական մակարդակով և ցեղասպանական ծրագրի կարևոր տարրերից էր, որի մասին փաստում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «10 պատվիրաններ» անունով փաստաթուղթը, որը ստեղծվեց՝ ավելի հեշտացնելու իշխանությունների գործը, քանզի էապես խորացրեց հայերի նկատմամբ մուսուլման բնակչության հակակրանքը և ատելությունը¹²:

Թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ Հրեից հոլոքոստի դեպքում հիմնական շարժիչ ուժը իշխանությունների ծավալած քարոզչությունն էր, որն իրականացվում էր մի քանի ուղղություններով:

10 Timothy Williams, “The Complexity of Evil: a Multi-Faceted Approach to Genocide Perpetration,” *Zeitschrift für Friedens-und Konfliktforschung* 3, no. 1 (2014): 76, հղվում է ըստ Գրիգորյան, *Չանգվածները և զանգվածային բռնությունները*, 33:

11 Միկոլայ Հովհաննիսյան, *Արաբական երկրների պայքարություն*: Հատոր II, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918 (Երևան, «Չանգակ-97», 2004):

12 Vahakn Dadrian, “The Secret Young-Turk Ittihadist Conference and Decision for the World War I Genocide of the Armenians,” *Holocaust and Genocide Studies* 7, no. 2 (1993): 173-201.

Առաջին հերթին աշխատանք էր տարվում հասարակ ժողովրդի կամ պոստնեցիալ մարդասպանների շրջանում: Այստեղ գործում էր հետևյալ ծրագիրը. գոհ խումբը դառնում էր մեղադրանքների թիրախ, արժեզրկվում էր և օտարվում ընդհանուր հասարակական արժեքային համակարգից: Սա հայերի և հրեաների նկատմամբ այլ ժողովուրդների մեջ առկա հակակրանքը խորացնելու, ատելություն սերմանելու նպատակ ուներ: Առաջացած հակահայկական և հակահրեական մթնոլորտում ավելի դյուրին կլիներ պետության քաղաքացիներին ուղղորդել իշխանությունների հետ համագործակցության և ներքաշել զանգվածային սպանություններ իրականացնելու անմիջական գործընթացի մեջ:

Քարոզչության հիմք էին ծառայում մի շարք հանգամանքներ: Օրինակ՝ քաղաքական, որն իթթիհատականները շահարկում էին Հայոց ցեղասպանության պարագայում՝ հայերին մեղադրելով պատերազմի ժամանակ Ռուսաստանին աջակցելու և Օսմանյան կայսրությանը դավաճանելու մեջ¹³: Հակահայ քարոզչության համար օսմանյան իշխանություններն ակտիվ շահարկում էին նաև 1915 թ. կայսրության մի շարք վայրերում հայերի ինքնապաշտպանական մարտերը՝ դրանք ներկայացնելով որպես ըմբոստություն օսմանյան վարչակարգի դեմ¹⁴: Ջանքեր էին գործադրվում նաև կայսրության այլ ժողովուրդների մեջ առկա հակահայ տրամադրությունները բորբոքելու ուղղությամբ:

Հայոց ցեղասպանությանն ակտիվ մասնակցություն ունեցան քրդերը, չերքեզները, ինչպես նաև որոշ վաչկատուն արաբական ցեղեր¹⁵: Քրդերը և չերքեզները գործում էին ոչ միայն հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsusa)¹⁶ շրջանակներում, այլ նաև սեփական նախաձեռնությամբ: Չերքեզներն ակտիվ էին հատկապես Ռասուլ-Ալևում ապաստանած հայերին բնաջնջելու գործում¹⁷: Արևմտյան Հայաստանի տարածքում հատկապես մեծ էր քուրդ բնակչության մասնակցությունը հայերի բնաջնջմանը: Քրդերին հայերի դեմ օգտագործելու նպատակով երիտթուրքական կառավարությունը հրահրում էր հայերի և քրդերի միջև առկա հողային «վեճը», որն ավելի էր թեժացել 1908թ. սահմանադրության հռչակումից հետո¹⁸: Քրդերի մեծ մասը ներգրավված էր սկզբում «համիդիե» խմբերում, այնուհետև՝ դրա հիմքով ստեղծված Թեշվիլայթ մահսուսայի շարքերում:

13 Ահմեդ Ռեֆիկ, *Երկու կոմիսյոնե՝ երկու ոճիր* (Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ, 1997), 51:

14 Մաթոյան Տիգրան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հողորոսպ. համեմատական փորձ* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 140:

15 Նույն տեղում, 110:

16 Teşkilât-ı Mahsusa-ն Օսմանյան կայսրության զինված ուժերի ստորաբաժանում էր, որը զբաղվել է հակահետախուզությամբ: Ենթարկվում էր կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշային: Հիմնական գործառույթը հայերի տեղահանությունները և ջարդերն իրականացնելն էր: Ավելի մանրամասն տե՛ս «Հատուկ կամ գաղտնի կազմակերպություններ» ենթագլխում:

17 Մաթոյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հողորոսպ*, 110:

18 Մանրամասն տե՛ս Վահան Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում* (Երևան, «Հայաստան», 1989):

Հասարակության մասնակցության հիմնական շարժիչ ուժ էր նաև սեփական շահը, որը դրդում էր այլ ժողովուրդների մասնակցել իրենց հարևանների կոտորածներին և տիրանալ նրանց ունեցվածքին: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս պարագայում ևս կարմիր թելով տարվում էր կրոնական գործոնը: Ակտիվ շրջանառվում էր այն թեզը, համաձայն որի՝ անհավատ հայերը տիրացել են մահմեդական ժողովրդի ունեցվածքին: Որոշ շրջաններում, ինչպես օրինակ՝ Տիգրանակերտի նահանգում, կրոնավորների կողմից հայտարարվում էր. «Գյավուրների ունեցվածքը, կյանքը և կինը հալալ է իսլամին»¹⁹:

Հասարակության ներգրավմանը նպաստեցին կառավարության կողմից քուրդ և մուսուլման բնակչությանը տրված թալանի, կողոպուտի արտոնությունները: «Գյուղերում մուսուլման բնակչությունը բավարարված է նրանով, որ հարստացել է հայերի հաշվին», - Բեռնում գեկուցել էր Շվեյցարիայում Ռուսաստանի պատվիրակը՝ ավելացնելով, որ հայ փախստականներն իրենց ավելի լավ են զգում նոր հաստատված վայրերում, քան նախկինում²⁰:

Այսպիսով, օսմանյան իշխանությունների ջանքերով ի հայտ եկան բոլոր նպաստավոր շարժառիթները՝ հասարակությանն անմիջական մասնակից դարձնելու համար:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության, որում ներգրավվեցին Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովուրդները, Հոլոքոստի ժամանակ ընդունված է համարել, որ գերմանացիներին օժանդակում էին հարևան երկրները և ժողովուրդները: Կարծիք կա, որ հատկապես մեծ էր աջակցությունը Գերմանիայի օկուպացրած տարածքներում: Օրինակ՝ Մերձբալթիկայում հակահրեական միջոցառումների ժամանակ մեծ օգնություն են ցուցաբերել լիտվացի կամավորականները, լատվիական օժանդակ ուստիկանությունը, ուկրաինացի ազգայնականները և այլն²¹: Մերձբալթիկայում գործող հիմնական ուժը Վալտեր Շոախլեքերի ղեկավարած «А» այնզաղխումբն էր, որի անդամների թիվը կազմում էր մոտ 990 հոգի²²: Այստեղ գերմանացիներին մեծ աջակցություն ցուցաբերեցին ինչպես տեղաբնիկները, այնպես էլ այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Ռուս պատմաբան Իլյա Ալտմանը շեշտում է, որ հասարակության մասնակցությունը Մերձբալթիկայում աննախադեպ էր. «Հատկապես այս տարածքներում էր, որ հրեաների նկատմամբ նացիստական ցեղասպանությունն առաջին անգամ զանգվածային բնույթ ստացավ»²³:

Հիմնվելով մի շարք վկայությունների վրա՝ Ալտմանը հանգում է այն եզրակացության, որ Մերձբալթիկայում հրեաների սպանություններն իրականացրել են ոչ այնքան

19 Թ. Մկրտիչեան, *Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրդերու գազանութիւնները* (Գահիրե, 1919), 47:

20 Авакян, *Геноцид армян*, 122:

21 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 110-111:

22 Григорий Смирин, “Холокост: кто и как убивал евреев в Латвии,” <https://baltnews.lv/uzvara/20150318/1013645714.html>, դիտվել է 13.11.2018:

23 Илья Альтман, “Холокост и Еврейское Сопротивление на Оккупированной Территории СССР, Уничтожение евреев в Прибалтике,” http://jhistory.nfurman.com/shoa/hfond_100.htm, դիտվել է 13.11.2018:

գերմանացիները, որքան տեղի ժողովուրդները²⁴: Իսկ ինչ վերաբերում է հասարակության անդամների մասնակցության դրդապատճառներին, ապա դրանք դեռևս վերջնականապես հստակեցված չեն: Որոշ դեպքերում դա եղել է քսենոֆոբիայի²⁵ արդյունքում, վրեժխնդրության պատճառով, որի հիմքում իբրև թե հրեաների համագործակցությունն էր խորհրդային իշխանությունների հետ, հրեաների ունեցվածքի հանդեպ նախանձը կամ շատ դեպքերում՝ հակահրեական դրսևորումների անպատժելիության արդյունքում ստեղծված ամենաթողության մթնոլորտը²⁶:

Գերմանացիներին մեծ օգնություն էին ցուցաբերում նաև ուկրաինացի ազգայնականները, ինչպես նաև ուկրաինական օմանդակ ոստիկանությունը²⁷:

Մեծ էր աջակցությունը նաև մահմեդական ժողովուրդների կողմից: Մահմեդականների հետ գերմանացիների սերտ համագործակցությունը պայմանավորված էր Գերմանիայի համար չափազանց կարևոր մի քանի գործոններով՝ միջուկային զենքի արտադրությամբ, հրթիռաշինության ոլորտում համագործակցությամբ և իսլամական ծայրահեղականության հետագա ակտիվացմամբ, որոնք, սակայն, չիրականացան 1945թ. Երրորդ ռայխի փլուզման հետևանքով²⁸: 1942 թ. Էսէս-ի²⁹ կազմում սկսեցին ձևավորվել առաջին մահմեդական ջոկատները³⁰: 1944 թ. Հիտլերի մտերիմ ընկեր, գերմանական գաղտնի գործակալ, Երուսաղեմի մուֆտի³¹ ալ-Հուսեյնի օրհնությամբ կազմավորվեց Էսէս-ի մահմեդական «Նոր-Թուրքեստան» («Ново-Туркестан»)՝ ջոկատը: Նույն թվականին 11.000 արբանացիներից կազմվեց «Սկանդերբերգ» («Скандерберг»)՝ ջոկատը, որի առաջին առաքելությունը եղավ Պրիշտի-նայի 300 հրեաներին համակենտրոնացման ճամբար ուղարկելը³⁴:

24 Նույն տեղում:

25 Քսենոֆոբիա կամ այլատյացություն՝ ատելություն օտար, անծանոթ, արտասովոր և ուրիշների համար անընկալելի երևույթների նկատմամբ: Այն կարող է հանգեցնել մի շարք ազգային, կրոնական կամ սոցիալական տարբեր ներկայացուցիչների միջև պայքարի:

26 Альтман, “Холокост и Еврейское Сопротивление”.

27 Круглов Александр, “Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.,” *Голокост і сучасність* 5 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip5/vip5_3.htm#15_gu, դիտվել է 13.11.2018:

28 Шимон Бриман, “Мусульмане в СС,” *Голокост і сучасність* 4 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip4/vip4_3.htm#14_gol, դիտվել է 13.11.2018:

29 Էսէս (գերմ.՝ SS (էսէս), Schutzstaffeln-ի՝ պահնորդական ջոկատներ), արտոնյալ ռազմականացված կազմակերպություն ֆաշիստական Գերմանիայում:

30 Бриман, “Мусульмане в СС”.

31 Մուֆտին (արաբ.՝ մուֆտի, աֆտի – կարծիք արտահայտել) իսլամի սուննի ուղղության մեջ բարձրագույն հոգևոր անձն է, ով կարող է կրոնական ու կրոնաիրավական հարցերում պարզաբանումներ տալ ու հարկ եղած դեպքում ընդունել յուրօրինակ որոշումներ:

32 Կազմավորվել է նացիստական Գերմանիայի զինված ուժերի արևելյան «Թուրքմենստանի լեգեոն»-ի շրջանակներում: Լեգեոնում ներգրավված էին Կենտրոնական Ասիայի թրքալեզու ժողովուրդները՝ ուզբեկներ, թուրքմեններ, թաթարներ, դազախներ և այլն:

33 Վաֆֆեն-Էսէս-ի 21-րդ լեռնահրաձգային դիվիզիա (գերմ.՝ Waffen-Gebirgs-Division der SS “Skanderbeg” (albanische Nr.1)):

34 Бриман, “Мусульмане в СС”.

Հրեաներին իրենց երկրներից արտաքսելու կամ հենց իրենց տարածքում սպանելու գործում նացիստական Գերմանիային օգնել են մի շարք երկրներ՝ Հունգարիան, որտեղից ավելի քան 400.000 հրեաների արտաքսեցին Աուշվից (Օսվենցիում)³⁵, Նորվեգիան, որի 1.800 հրեաներից 800-ին ևս ուղարկեցին Աուշվից, Ռումինիան, Խորվաթիան, Սլովակիան և Ֆրանսիան³⁶:

Ամփոփելով պետք է նշենք, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ, անկախ դրդապատճառներից, մեծ է եղել տարբեր ժողովուրդների, իսկ հրեաների պարագայում նաև պետությունների, ցուցաբերած աջակցությունը համապատասխանաբար՝ թուրքական և նացիստական իշխանություններին: Կարևոր է այն հանգամանքը, որ հասարակության ներգրավվածությունը հնարավորություն էր տալիս իշխանություններին խնայելու սեփական ուժերը, ինչպես նաև հետագայում ցեղասպանական գործողությունները ներկայացնել որպես քաղաքացիական պատերազմ կամ ժողովրդի միջև բախումներ:

Բանակ. Օսմանյան կայսրության բանակը մշտապես ներգրավված է եղել իշխանությունների ցեղասպանական գործողություններում: Բանակը մասնակցություն է ունեցել թե՛ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին, թե՛ 1909 թ. Ադանայի և Հալեպի կոտորածներին և իհարկե Մեծ եղեռնի տարիներին հայերի տեղահանությունների և բնաջնջման գործընթացին: Օրինակ, Ադանայի կոտորածների ընթացքում այդ դեպքերի մասին մի թուրք զինվոր իր նամակում գրում է. «Արդեն 40 օր է, ինչ մենք դուրս ենք եկել Էդիրնեից (Ադրիանապոլիս), ուղղվել դեպի Գալիպոլի, այնտեղից՝ Մերսին, ապա՝ Ադանա: Այստեղ մենք սպանել ենք 30.000 այդ անհավատ շներից, որոնց արյունով են ողողվել Ադանայի փողոցները»³⁷:

Օսմանյան բանակին աջակցություն են ցուցաբերել քրդական ավազակախմբերը, չերքեզները, Կովկասից գաղթած մուհաջիրները³⁸: Այս մասին փաստում են վերապրածների վկայությունները: Վանից Մահիլ Մկոյանը և Նիո Խաչոյանը պատմում են, որ 1915 թ. ապրիլին՝ այլուր գյուղի շրջափակումից հետո, երբ բնակչությունը հավատացել էր հակառակորդի այն խոստմանը, որ զենքերը հանձնելու դեպքում կոտորածներ չեն լինի, թուրքական զորքը և քրդերը հրկիզել են ողջ գյուղը³⁹: Մուշի գավառակի

35 Համակենտրոնացման ճամբար և մահվան ճամբար (գերմ.՝ Konzentrationslager Auschwitz), որ գործել է 1940-1945 թթ. օկուպացված Լեհաստանի Օսվենցիում քաղաքում: Գերմանացիներն անվանել են Աուշվից, իսկ լեհերը՝ Օսվենցիում:

36 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 118:

37 Dadrian Vahakn, “The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians: A Study in Historical Continuities,” *Journal of Political and Military Sociology* 20, no. 2 (1992): 274.

38 Մուհաջիրները մուսուլման գաղթականներ են: Մինչև 630 թ. Մեքքայի գրավումը մուհաջիր էին կոչվում այն մուսուլմանները, ովքեր, հեթանոսների հալածանքներից փրկվելով, լքել են հարազատ քաղաքը և գաղթել են սկզբից՝ Եթովպիա, իսկ հետո՝ Մադինա: Մուհաջիր են անվանում նաև այն մուսուլմաններին, ովքեր հավատը փրկելու համար գաղթել են այլ երկրներից:

39 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, փաստաթղթերի ժողովածու, հատոր I, Վանի նահանգ, կազմ.՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 118:

Խսազյուղից Դավիթ Գրիգորյանը պատմում է, թե ինչպես են մուհացիրները նախ՝ թալանել իրենց, իսկ հետո՝ սեփականացրել տեղի հայ բնակչության ունեցվածքը⁴⁰:

Հանրահայտ է, որ չնայած Հայոց ցեղասպանության տարիներին օսմանյան բանակային ուժերն առավելապես կենտրոնացած էին տարբեր ռազմաճակատներում, այնուամենայնիվ նրանք ևս անմասն չմնացին ծրագրի իրականացման գործընթացից: Չմոռանանք, որ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Էնվերը օսմանյան բանակի գլխավոր հրամանատարն էր:

Բանակային ստորաբաժանումների մասնակցությունը մեծապես նպաստում էր ծրագրի արդյունավետությանը, որը պայմանավորված էր բանակային ստորաբաժանումների կողմից քաղաքացիների մասնակցության կազմակերպումով⁴¹: Բանակային ուժերն այքի ընկան հատկապես 1915-1916 թթ. օսմանյան բանակ զորակոչված 18-45 տարեկան շուրջ 100.000 հայ տղամարդկանց ոչնչացման գործում⁴²:

Հայոց ցեղասպանությանն օսմանյան բանակի ներգրավվածության վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Թուրքական բանակի մեղսակցությունը փաստարկված է գերմանական և եվրոպական բազմաթիվ աղբյուրներով, ինչպես օրինակ՝ դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենի, շվեդ միսիոներուհի Ալմա Յոհանսոնի, ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի և այլոց վկայություններում: Դրա մասին է փաստում նաև բանակային ստորաբաժանումների մասնակցության վերաբերյալ Էնվերի հատուկ հրամանը, որն ուղղված էր հայ արական սեռի բնակչության ոչնչացմանը՝ 5 տարեկան երեխաներից սկսած մինչև մեծահասակներ: Եթե դիտարկենք հրամանում ներառված երեք կետերը, պարզ է դառնում, որ Էնվերի նպատակը հայ ժողովրդին տղամարդկանցից՝ պայքարող ուժից զրկելն էր: Այս հրամանը հստակ և մասնավոր ամրագրում էր բանակի գործառույթները, որոնք պետք է իրականացվեին և հաստատվեին համապատասխան զեկույցներով՝ հրամանը ստանալուց 48 ժամվա ընթացքում⁴³:

Օսմանյան բանակը գործում էր հիմնականում ճակատային հատվածում, որտեղ անմիջական հարվածի տակ էր Վանի, Մուշի և Բիթլիսի հայությունը: Վանում, չնայած հայ բնակչության կազմակերպած ինքնապաշտպանությանը, Ջևդեթի ղեկավարած զորքը ծավալուն կոտորած իրականացրեց, որի հետևանքով դրան ականատես գերմանացի սպայի վկայությամբ ոչնչացվեց շուրջ 200 գյուղ, և սպանվեց 26.000 բնակիչ⁴⁴:

Բանակի հետ էր համագործակցում նաև Հայոց ցեղասպանության իրագործմանն ակտիվ մասնակցություն ունեցած Թեշքիլաթը մահուսան: Հատուկ կազմակերպության շարքերը համալրած բանտերից ազատ արձակված հանցագործները մարզ-

40 Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հատոր II, Բիթլիսի նահանգ, կազմ.՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 246:

41 Dadrian, "The Role of the Turkish Military," 265:

42 Մաթոսյան, Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ, 106:

43 Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեթի փաշա (Երևան, «Արևիկ», 1990), 232-233:

44 Авакян, Геноцид армян, 123:

վում էին ռազմական նախարարության օգնությամբ⁴⁵, իսկ Թեշքիլաթը մահուսայի ջոկատներն իրենց հերթին առաջնորդվում էին բանակի գործող կամ պահեստի սպաների կողմից⁴⁶:

Անդրադառնանք նաև գերմանական բանակին, որը ևս մեծ դերակատարություն ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրեա և սլավոն բնակչության ոչնչացման գործում: Գերմանական բանակի դերակատարությունը պայմանավորված էր հակահրեական գործողությունների նկատմամբ բարձրագույն հրամանատարության դրական վերաբերմունքով⁴⁷:

Գերմանական բանակն ակտիվ մասնակցություն էր ունենում հասկապես բնակչությանը բնակավայրերից գնդակահարության վայրեր տեղափոխելու և վերահսկողություն սահմանելու գործում: Ստորև տրվում է գերմանական զինված ուժերի գերագույն հրամանատարության՝ 1942 թ. դեկտեմբերի 16-ի հույժ գաղտնի հրամանը. «...բանակն իրավունք ունի և պարտավոր է ավազակախմբերի դեմ պայքարում կիրառել ցանկացած միջոց... նույնիսկ կանանց և երեխաների նկատմամբ, եթե դա նպաստում է հաջողությանը...»⁴⁸:

Հրեից հողորստի դեպքում ևս գերմանական բանակն ակտիվ համագործակցում էր նացիստական գաղտնի կազմակերպության՝ Էսէս-ի (պահնորդական ջոկատներ) հետ: Եթե մինչև 1940 թ. Էսէս-ի անդամները կամավոր հիմունքներով էին հավաքագրվում, ապա դրանից հետո գորակոչվածները կազմում էին բոլոր ծառայողների մեկ երրորդը⁴⁹:

Այսպիսով, երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործում էր մեկ ամբողջական համակարգ, որը ներառում էր իրար շաղկապված մի քանի ռազմական կամ կիսառազմականացված կառույցներ:

Բանտերից ազատ արձակված հանցագործներ: Ինչպես իրավամբ նշում է թուրքագետ Արսեն Ավագյանը, մեկուկես միլիոն մարդու բնաջնջումը բավականին մեծ խնդիր էր, որպեսզի հնարավոր լիներ լուծել միայն Թեշքիլաթը մահուսայի ուժերով⁵⁰: Թերևս հենց այդ բարդությամբ էր պայմանավորված, որ Հատուկ կազմակերպության շարքերը համալրվեցին քրեական հանցագործներով: Բեհաեդդին Շաքիրն այս առնչությամբ գրել է. «Ես կը կարծեմ, որ մեզի յարմար մարդիկը գտած եմ. ըսե՛մ, թե՛ ուր գտայ, – բանտերու մեջ... Եթե՛ ասոնք արձակել տալով մեզի ենթարկենք եւ խումբերու բաժնենք, կը կարծեմ որ շատ լաւ մասնատր կազմակերպութիւն մը ստեղ-

45 Ռեֆիկ, *Երկու կոմիսյոն՝ երկու ոճիր*, 33:

46 Vahakn Dadrian, *The Role of the Special Organization in the Armenian Genocide during the World War* (Oxford and Providence: Berg Publishers, 1993), 19.

47 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հողորստը*, 107-108:

48 *Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками*, сборник материалов, том 3, ред. Роман Руденко (М.: Госюриздат, 1958), 347.

49 *СС в действии. Документы о преступлениях СС*, пер. А. Лягушкина, В. Размерова (М.: Светотон, 2000), 15.

50 Авакян, *Геноцид армян*, 120.

ծած կըլլանք»⁵¹: Այս մասին կան բազմաթիվ վկայություններ: Օրինակ՝ Յոզեֆի կառավարիչ Ջեմալը ռազմական դատարանում վկայում է, որ բանտերի կալանավոր ոճրագործներն օգտագործվել են՝ հայերի կոտորածներն իրականացնելու համար⁵²:

Այսպես, Հատուկ կազմակերպության շարքերը համալրվեցին այդ նպատակով բանտերից ազատ արձակված հանցագործներով, որոնք իրենց փորձառությունը պետք է հաղորդեին կազմակերպության մյուս անդամներին: Որոշ տվյալներով 1915 թ. մարտի սկզբներից սկսած՝ բանտերից ազատ են արձակվել՝ 249 հանցագործներ Անկարայի կենտրոնական բանտից, ևս 65-ը՝ Յոզեֆի բանտից, որոնցից 51-ը՝ մարդասպան⁵³:

Նացիստներն իրենց ծրագրերն իրականացնելիս ևս օգտագործել են բանտերից ազատ արձակված հանցագործների: Համակենտրոնացման ճամբարները հսկող Տոտենկոպֆի⁵⁴ ստորաբաժանումներում ներգրավված են եղել բանտերից ազատ արձակված 6.000 հոգի, որոնք աչքի են ընկել իրենց դաժան արարքներով: Մեկ այլ օրինակում Չաքսենհաուզեն համակենտրոնացման ճամբարի պարետը Աուշվից համակենտրոնացման ճամբարի կառուցման ժամանակ՝ 1940 թ. մայիսին, առաջին պարետ Ռուդոլֆ Հեսին տրամադրել է 30 հանցագործ⁵⁵:

Պետք է նշել, որ երկու ցեղասպանությունների հեղինակներն էլ, հանցագործներին բանտերից ազատելով, նպատակ ունեին ոչ միայն գաղտնի կառույցները համալրելու, այլև հաշվի էին առել նրանց փորձառու մարդասպան լինելու կարևոր հանգամանքը: Սա կարևոր էր նաև նրանով, որ, այսպիսով, զինվորական ուժերը չէին զբաղվի հայ և հրեա բնակչության ցեղասպանության իրագործումով՝ խնդրի լուծումը թողնելով փորձառու մարդասպաններին, իսկ ամբողջ ուժերը կկենտրոնացնեին պատերազմի վրա:

Ոստիկանություն և ժանդարմերիա: Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի իրականացման գործում կարևոր դերակատարություն են ունեցել նաև ոստիկանությունը և ժանդարմերիան:

Արսեն ավագյանը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ ոստիկանության ներգրավվածության աստիճանը գնահատում է հետևյալ կերպ. «Եթե օսմանյան բանակի անմիջական մասնակցությունը ոչնչացմանը սահմանափակ էր, ապա ժանդարմերիան ամենասակտիվ մասնակցությունն է ունեցել ինչպես հայ ժողովրդի տեղահանության, այնպես էլ ոչնչացման բուն գործընթացում»⁵⁶:

51 Բիֆաթ Մելլան Չատե, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծայրերը եւ իթթիհարի հայաջինջ ծրագիրները* (Երևան, ԿՓՀ Ֆաքսիմիլ հրատ., 1990), 116:

52 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ492-Մ494, հղվում է ըստ՝ Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պարմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին*, հատոր II, գիրք I (Երևան, «Հայաստան», 2011), 454:

53 Նույն տեղում:

54 Գերմ. «Totenkompf» նշանակում է «Մեռած գլուխ»: Հիմնական գործառույթը համակենտրոնացման ճամբարներում հրեաների ոչնչացումն էր:

55 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 104:

56 Авакян Арсен, *Геноцид 1915 г.: Механизмы принятия и исполнения решений* (Ереван, «Гитутюн», 1999), 102.

Ոստիկանության և ժանդարմերիայի գործողությունները ղեկավարում էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան: Նրանց հիմնական պարտականությունը հայ տարագիրների քարավաններն ուղեկցելն էր, սակայն շատ դեպքերում ոստիկանությունը ստանձնում էր նաև դահիճի պարտականությունը: Հարկ է նշել, որ Թալեաթի հրահանգով վարչական աշխատողները բոլոր հայերին պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով պետք է խումբ-խումբ օրը երկու անգամ ոստիկան-զինվորների հսկողությամբ որոշված տեղն ուղարկեին⁵⁷: Ոստիկանները, համաձայն հրահանգների, պետք է հայերին հանձնեին իրենց սպասող Հատուկ կազմակերպության անդամներին կամ խմբերին՝ չեթեներին,⁵⁸ և վերադառնալիս, իսկ չեթեներն էլ իրենց հերթին պետք է սպանեին հայերին մինչև վերջին մարդը⁵⁹:

Գրան գուգահեռ կամ դրանից առաջ ոստիկանությանը կարգված էին հայկական թաղամասերի խուզարկությունը և զենքերի առգրավումը: Չենքերի հավաքագրումն ուղեկցվում էր խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններով, թալանով, սպանություններով: Ձերբակալվածների նկատմամբ գործի էր դրվում «բաստինադո»⁶⁰ պատժանքը. բարակ ճիպոտով հարվածում էին զոհի կրունկներին⁶¹: Ինչպես նշում է ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն. «Գրանցված են դեպքեր, երբ զենք թաքցնելու մեղադրանքով մերկացնում էին կանանց և ծեծում դավար ճիպոտներով: Նման ծեծի էին ենթարկում նույնիսկ հղի կանանց...»⁶²:

Բացարձակ անպատժելիության պայմաններում ոստիկաններն ու ժանդարմներն ամենատարբեր բռնությունների և նվաստացումների էին ենթարկում հայ կանանց և աղջիկներին՝ մերկացնելով, ծաղրուծանակի ու սեռական բռնությունների ենթարկելով: Հայոց ցեղասպանության վերապրող Հ. Խաչատրյանն իր հուշերում պատմում է, թե ինչպես են ոստիկանները դոմաշենցիների արքայի ճանապարհին 15 հայ կանանց և աղջիկների ստիպել մերկ պարել, իսկ այնուհետև սեռական բռնությունների են ենթարկել⁶³:

Ոստիկանական ուժերի մասնակցությունը Հայոց ցեղասպանության ծրագրի իրագործմանը դրսևորվեց հիմնականում երկու տարբերակով՝ ոստիկանների և ժանդարմերիայի հրամանատարների կողմից կոտորածի և բռնագաղթի կազմակերպումով, ինչպես նաև հայ տղամարդկանց ձերբակալություններին, ժողովրդի տեղահանություններին, կողոպուտին, սպանություններին մասնակցությամբ⁶⁴:

57 Պողոսյան, Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 460:

58 Չեթեն՝ թուրքական ոչ կանոնավոր զորքի զինվոր, որը զբաղվում էր թալանով և սպանություններով: Չեթեներ՝ ավազակային խմբեր:

59 Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 460:

60 Կտտանքի տեսակ է, որ կիրառվում է հատկապես Արևելքում:

61 Հենրի Մորգենթաուն, *Դեսպան Հենրի Մորգենթաունի պատմությունը*, թարգմ. Լիլիթ Թութալյան (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 230:

62 Նույն տեղում:

63 ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թալ. 158:

64 Գրիգորյան, *Չանգվածները և զանգվածային բռնությունները*, 111:

Ինչ վերաբերում է գերմանական ոստիկանությանը, ապա պետք է նշել, որ 1936 թ. ոստիկանության կանոնավոր գործերը և անվտանգության ոստիկանության գործերն անցել էին Էսէս-ի ղեկավար Հիմլերի ենթակայության տակ⁶⁵: Սա նշանակում է, որ ոստիկանությունն ամբողջովին «նվիրվել» էր հրեաների ոչնչացման գործին: Ոստիկանությունն իրականացնում էր գոհերին հայտնաբերելու, հսկելու, ուղեկցելու գործառնությունը:

Նյուրնբերգյան դատավարության փաստաթղթերի ժողովածուում նշվում է, որ գրեթե չկան Գերմանիայի ոստիկանության կամ արևմուտքի օկուպացված տարածքների վերաբերյալ գերմանական ոստիկանության ղեկավարության կամ նրանց անմիջական ենթակաների կողմից տրված հստակ հրամաններ: Սակայն դա չի ազատում ոստիկանությանը պատասխանատվությունից, քանզի այն եղել է ազգային-սոցիալիստական գաղափարախոսության անմիջական կրողը և հետևորդը, գործել է բացառապես նացիստական կառավարության նպատակների իրագործման համար⁶⁶:

Ոստիկանությունն իրականացնում էր զանգվածային ձերբակալություններ՝ առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու կամ հիմնավորման՝ դրանով իսկ խախտելով մարդու իրավունքները: Իսկ արդեն կալանավայրերում ձերբակալվածներին ենթարկում էին դաժան ծեծի և փորձությունների՝ ընդհուպ հասցնելով մահվան ⁶⁷:

Հրեաների ոչնչացմանը մասնակցություն ունեցավ ոչ միայն գերմանական ոստիկանությունը, մասնակցում էին նաև հարևան երկրների ոստիկանական ուժերը: Հատկապես ակտիվ գործեցին Սլովակիայի և Հունգարիայի ժանդարմերիաները⁶⁸: Այս ոստիկանությունների աջակցությունը պայմանավորված էր երկու կառավարությունների փոխհամագործակցությամբ: Ըստ դրա՝ գերմանական կայսրությանը օգնություն ցուցաբերելու դիմաց Գերմանիան պարտավորվել էր ապահովել Սլովակիայի անկախության և տարածքային ամբողջականության անվտանգությունը⁶⁹:

Այսպիսով, դիտարկելով նաև ոստիկանական ուժերի մասնակցությունը ցեղասպանությունների իրագործմանը, պարզ է դառնում, որ երկու ցեղասպանությունների դեպքում էլ գործել է ամբողջական, փոխկապակցված համակարգ: Լինելով օրենքի պաշտպան՝ ոստիկանությունն ինքն էր խախտում օրենքը, ինչպես նաև օգտագործում այդ նույն օրենքը՝ արդարացնելու իր գործողությունները:

Հատուկ կամ գաղտնի կազմակերպություններ: Հաշվի առնելով այն կարևոր փաստը, որ թե՛ Օսմանյան կայսրությունը և թե՛ նացիստական Գերմանիան գտնվում էին պատերազմական իրավիճակում, նրանց անհրաժեշտ էր այլընտրանքային ուժի կիրառում, որը լիովին կլծվեր բռնությունների իրականացման բուն գործընթացին: Ինչպես նաև հետագայում կազատեր իշխանություններին հայ և հրեա ժողովուրդների բնասջման պատասխանատվությունից:

65 СС в действии, 9.

66 Нюрнбергский процесс, *Сборник материалов*, том 1, второе издание, ред. Константин Горшенин, Роман Руденко, Иона Никитченко (М.: Госюриздат 1954), 226.

67 Նույն տեղում:

68 Մաթոնյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 109-110:

69 *Нюрнбергский процесс*, 336:

Իթթիհատականները և նացիստներն այդ հարցի լուծումը գտան համապատասխանաբար Թեշքիլաթը մահսուսայի և գերմանական Էսէս-ի ստեղծման միջոցով: Սրանք երկուսն էլ, չնայած իրենց կիսառազմական բնույթին, գործում էին կուսակցական մարմինների կարգադրությամբ: Սա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ հայերի և հրեաների բնաջնջման ծրագրի հեղինակները պատկանում էին իթթիհատական և նացիստական կուսակցությունների շրջանակներին: Բեհաեդդին Շաքիրը, Նազըմը, Զիա Գյոքալփը կենտրոնական կոմիտեի անդամներ էին՝ հայտնի իրենց պանթուրքիստական գաղափարներով և հայատյացությամբ: Էսէս-ի բարձրագույն ղեկավարն ու նրա տեղակալներ Հայդրիխը, Կալտենբրունները նացիստներ էին և հակահրեաներ⁷⁰:

Այսպես, օսմանյան գործող իշխանությունների հետագա ծրագրերը քննարկելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեում 1914 թ. մայիսին հրավիրվում է խորհրդակցություն: Այն վարում էր «Երեքի գործադիր կոմիտեն»⁷¹, որի կազմում էին կուսակցության նշանավոր գործիչներ Բեհաեդդին Շաքիրը, դոկտ. Նազըմը և կրթության նախարար ալի Շուքրին: Հենց այդ ժամանակ էլ կուսակցության քարտուղար Բեհաեդդին Շաքիրն ընդգծում է ավելի կենտրոնացված ռազմական ուժի անհրաժեշտությունը: Շաքիրն առաջարկում է ստեղծել մի օղակ, որն անմիջականորեն կպատկանի կուսակցությանը և կիրականացնի իշխանությունների կողմից մշակված ծրագրերը. «... ներկայ պարագային ո՛չ բանակէն, ո՛չ ալ ժողովուրդէն կրնանք օգուտ մը սպասել: Մեզի մասնաւոր ուժ մը, մեր գործունէութեան անկախութիւնը պաշտպանելիք ուժ մը, զինեալ ուժ մը պէտք է: Այս ուժը ուզուած կողմը զրկելու իրաւունքն ալ մեզի պատկանելու է...»⁷²:

Արդեն իսկ լավ պատկերացնելով այդ օղակի կարգավիճակը և գործառույթները՝ նա այդ մասին զեկուցում է նաև կուսակցական ընկերներին: Արդյունքում ձևավորվում է Հատուկ կազմակերպության քաղաքացիական մասնաճյուղը, որը ղեկավարում էր Բեհաեդդին Շաքիրը:

1914 թ. օգոստոսի 2-ին՝ Գերմանիայի հետ գաղտնի պայմանագիր կնքելու օրը, Իթթիհատի կենտկոմը լսում է Հատուկ կազմակերպության հարցը և որոշում այն ծառայեցնել համախառնական և համաթուրքական նպատակների իրականացմանը⁷³: Թեշքիլաթի ղեկավար մարմնում տեղեր հատկացվեցին կուսակցական, վարչական-նստիկանական աշխատողներին, ինչպես նաև բանակային գործիչներին⁷⁴:

1913-1914 թթ. մշակվեց համապարփակ ծրագիր Թեշքիլաթը մահսուսայի և կառավարության համագործակցության վերաբերյալ, իսկ գործում ընդգրկվեցին Թալեաթը, Ջավիդը, Իբրահիմը, ալի Շուքրին, Բեհաեդդին Շաքիրը, Նազըմը, Հասան

70 Նույն տեղում, 98:

71 Հատուկ հանձնաժողով, որ ստեղծվել է 1915 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանությունը և կոտորածը կազմակերպելու համար:

72 Բիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը*, 113-114:

73 Պողոսյան, Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն*, 450:

74 Նույն տեղում:

Ֆեհմին, աղա օղլու Ահմեդը, Չիա Գյոքալփը և այլք⁷⁵:

Թեշքիլաթը մահուսայի արևելյան նահանգների բաժանմունքը գտնվում էր կենտրոնական կոմիտեի անմիջական հսկողության ներքո, իսկ հայերի տեղահանության և ջարդերի ժամանակ կոմիտեի հսկողության տակ էին անցել նաև կազմակերպության այն ստորաբաժանումները, որոնք ուղարկվել էին կովկասյան ռազմաճակատ⁷⁶:

Թեշքիլաթը մահուսայի անդամների ընդհանուր թիվը կազմել է 30-34 հազար, որի զգալի մասը բանտերից ազատ արձակված հանցագործներ են եղել: 1914 թ. նոյեմբերին Բալքքեսիրի⁷⁷ տեսուչ Մուսայից Միդիաստ Շյուքրիին հղած նամակում գրված է. «... սրանից մեկ շաբաթ առաջ ներքին գործերի մինիստրությունից մի հրաման եկավ, որ իմ լիվայի⁷⁸ մեջ գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մարդկանցից մոտ երկու հարյուր հոգի հավաքեն և ուղարկեն Կովկասում չեթեություն⁷⁹ անելու համար...»⁸⁰:

Հրեից հոլոքոստի պարագայում ցեղասպանության ծրագրի գործադրումը՝ հրեաների հայտնաբերումը, տեղափոխումը և սպանությունը, վստահված էր գաղտնի կազմակերպությանը: Այս դեպքում դրանք Էսեւ-ի տարբեր ստորաբաժանումներն էին: Էսեւ-ի գործերը ստեղծվեցին ֆաշիստական կուսակցության երկու հիմնական ռազմական կազմակերպությունների՝ գրոհային (ՍԱ) և պահնորդական ջոկատների (Էսեւ) հիման վրա: Այլ տվյալներով Էսեւ-ը ստեղծվել է 1925 թ., երբ ՍԱ-ի անդամներից Հիտլերը ստեղծեց մի ջոկատ, որի նպատակը նացիստական կուսակցության անդամների անվտանգությունն ապահովելն էր⁸¹: Պահնորդական ջոկատներն ավելի մեծ ճանաչում են ձեռք բերում 1929 թ., երբ Հիտլերն Էսեւ-ի ղեկավար (ռայխսֆյուրեր) է նշանակում Հայնրիխ Հիմլերին: Այդ ժամանակ Էսեւ-ի անդամների թիվը կազմում էր ընդամենը 280, իսկ 1933 թ.՝ արդեն 52.000 հոգի⁸²:

1934 թ. Հիտլերի հատուկ որոշմամբ Էսեւ-ն իր մատուցած ծառայությունների համար նացիստական կուսակցության համակարգում բարձրացվում է անկախ կազմակերպության կարգավիճակի⁸³: Ավելի ուշ՝ 1938 թ., բացի «Կայսերական անվտանգության գլխավոր վարչությունից», ստեղծվում են նաև Էսեւ-ին ենթակա ստորաբաժանումներ՝ «Վաֆֆեն-էսեւ»-ը, որի թվաքանակը պատերազմի վերջում արդեն հասել էր 580.000-ի⁸⁴:

75 Նույն տեղում:

76 Dadrian, *The Role of the Special Organization*, 7:

77 Բալքքեսիր (թուրք.՝ Balıkesir), Բուրսայի նահանգի Գարասի գավառի կենտրոնը:

78 Լիվա կամ սանջակ՝ համարժեք է գավառին:

79 Թալան և ավազակային հարձակումներ իրականացնել:

80 *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դաբարավարության փաստաթղթերի*, կազմ.՝ Ավետիս Փափազյան, լամբ.՝ Ռուբեն Սահակյան (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988), 99:

81 *CC в действии*, 14.

82 Նույն տեղում:

83 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 97:

84 Նույն տեղում, 102:

Հարկ է նշել, որ այս դեպքում ևս Էսէս-ի գորքերը համալրվեցին բանտերից ազատ արձակված հանցագործներով: Ինչպես արդեն նշել ենք Թեշքիլաթը մահուսայի պարագայում, այստեղ ևս հաշվի էին առնվում հանցագործների փորձառությունը և անգթությունը:

Ինչպես տեսանք, երկու ցեղասպանությունների ժամանակ էլ գործի էր դրվել ամբողջ ուժային համակարգը, ինչպես նաև ստեղծվել էին հատուկ կազմակերպություններ, որոնք լիովին լծվել էին հայերի և հրեաների բնաջնջման ծրագրին:

Այսպիսով, ուսումնասիրելով համեմատության մեջ դրված երկու ցեղասպանությունների իրականացման «գործիքակազմը», գալիս ենք այն եզրակացության, որ թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ Հրեից հոլոքոստի ժամանակ գործադրվել են մի շարք ուժեր և որ ամենակարևորն է՝ երկու գաղտնի կազմակերպություններ, որոնք ըստ էության ցեղասպանական ծրագրի գլխավոր դերակատարներն էին և պատասխանատուները:

Inessa G. Stepanyan

ON THE ISSUE OF THE MAIN PERPETRATORS OF THE ARMENIAN GENOCIDE AND THE JEWISH HOLOCAUST

SUMMARY

Key words: Armenian Genocide, Jewish Holocaust, perpetrators, society, army, police, criminals, secret organizations, Teşkilati Mahsusa, Nazi SS.

The article presents and compares the means and methods used to carry out the Armenian Genocide and the Jewish Holocaust. All social groups, involved in the genocidal process, are presented separately. Among them the society, whose involvement has enabled the authorities to save their own forces and hide the genocidal act under the guise of national clashes. It is noteworthy that in the case of both genocides, regardless of the motives, there was a huge support coming from different nations to the Turkish and Nazi authorities. In the case of Jews there was also a support coming from the states.

The next group presented was the army, whose participation was crucial in the process of disarmament and recruitment of the Armenian abled-bodied men, as well as in searching for Jews during the Holocaust. There was a one comprehensive system that included several military or semi-militarized structures connected to each other.

The role of police was presented as being a law defender himself, violated the laws and used that same law to justify its actions. It was evident that a complex and interconnected system was functioning during the both genocides. Also criminals released from the prisons, on the one hand, filled up the ranks of the paramilitary institutions, and on the other, carried out the killings more easily and with experience. Another important feature here was that the armed forces would be free from the problems of the Armenian and Jewish population and would concentrate all their forces on the war.

The focus of the article is on secret organizations (Teşkilat-i Mahsusa and Nazi SS) that became the main perpetrators of the two genocides and not only supported but also took the main responsibility of the implementation of the genocidal program.

Инесса Г. Степанян

К ВОПРОСУ ОБ ОСНОВНЫХ ИСПОЛНИТЕЛЯХ ГЕНОЦИДА АРМЯН И ЕВРЕЙСКОГО ХОЛОКОСТА

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост евреев, исполнители, общество, армия, полиция, преступники, секретные организации, Тешкилят-и-Махсуса, немецкий СС.

Представлены механизмы осуществления Геноцида армян и Холокоста евреев посредством сравнения двух геноцидов. Выделены все компоненты, включенные в геноцидальную программу.

Общество, участие которого дало возможность властям сохранить свои собственные силы и скрыть геноцидальные действия под прикрытием народных столкновений. Независимо от мотивов, в обоих случаях, турецким и нацистским властям была оказана большая поддержка со стороны населения, а в случае евреев также со стороны государств.

Армия, участие которой имело решающее значение для разоружения и мобилизации армянских мужчин, а также для поиска евреев в случае Холокоста. Сработала одна целая система, которая включала несколько связанных друг с другом военных или полумилитаризованных структур.

Полиция, которая будучи правозащитником, сама нарушала закон, используя его для оправдания своих действий. В случае двух геноцидов функционировала комплексная взаимосвязанная система.

Преступники, освобожденные из тюрем, с одной стороны пополняли ряды военизированных структур, а с другой – применяли свой опыт в осуществлении убийств.

Секретные организации (Тешкилят-и-Махсуса и немецкий СС) стали главными исполнителями двух геноцидов, которые не только поддержали, но и взяли на себя ответственность за осуществление программы геноцида.

REFERENCES

Antonyan, Aram. *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոլորիտները և Թալատի փառաքան* [The Great Crime: The Latest Armenian Massacres and Talaat Pasha]. Yerevan: “Arevik” hrat., 1990.

Bayburdyan, Vahan. *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում* [Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire]. Yerevan: “Hayastan”, 1989.

Grigoryan, Hasmik. *Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* [Masses and Mass Violence: Participation of the Muslim Population of the Ottoman Empire in the Armenian Genocide]. Yerevan: Gitut’yun, 2017.

Mat’osyan, Tigran. *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. Համեմատական փորձ* [The Armenian Genocide and the Jewish Holocaust. Attempt of Comparision]. Yerevan: HH GAA Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, 2005.

Morgent’au, Henri. *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը* [The Story of Ambassador Henry Morgenthau], trans. Lilit’ T’ut’khalyan. Yerevan: HH GAA Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, 2012.

R’efik, Ahmed. *Երկու կոմիտե՛ն՝ երկու ոճիր* [Two Committees, Two Crimes]. Yerevan: HH Gitut’yunneri azgayin akademia, Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-institut, Arevelagitut’yan institut, 1997.

Hovhannisyanyan, Nikolay. *Արաբական երկրների պատմություն. հ. 2, Օսմանյան փրկապետության շրջան. 1516-1918* [History of the Arab Countries, Vol. II, Period of Ottoman Occupation]. Yerevan: Zangak-97, 2004.

Mkrtich’ean, T’. *Տիգրանակերտի նահանսագի ջարդերը և քիւրդերու գազանությունները* [The Pogroms of Tigranakert Province and the Atrocities of Kurds], Gahiré, 1919.

Poghosyan, Step’an and Poghosyan, Karo. *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին* [History of the Armenian Question and the Armenian Genocide, The Armenian Question in 1908-14]. Yerevan: “Hayastan”, 2011.

Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի [The Armenian Genocide According to the Young Turks’ Trial Documents], compiled by Avetis P’ap’azyan. Yerevan: Haykakan SSH GA hrat., 1988.

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հ. I. Վանի նահանգ [The Armenian Genocide in Ottoman Turkey. Testimonies of the Survivors. Documents, Vol. I, Van Province], compiled by Amatuni Virabyan, Gohar Avagyan, ed. Amatuni Virabyan. Yerevan: Hayastani azgayin arkhiv, 2012.

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հ. II. Բիթլիսի նահանգ [The Armenian Genocide in Ottoman Turkey. Testimonies of the Survivors. Vol. II, Bitlis Province], compiled by Amatuni Virabyan, Gohar Avagyan, ed. Amatuni Virabyan. Yerevan: Hayastani azgayin arkhiv, 2012.

Zaté, Rifat’ Mévlan. *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհայի հայաջինջ ծրագիրները* [The Dark Folds of the Ottoman Revolution and Ittihadist’s Program of Annihilation of Armenians]. Yerevan: KP’H Faqsimal hrat., 1990.

Avakian, Arsen. *Геноцид 1915 г.: Механизмы принятия и исполнения решений* [Genocide of 1915: Mechanisms for Making and Executing Decisions]. Yerevan: Gitutiun, 1999.

Avakian, Arsen. *Геноцид Армян: Механизмы принятия и исполнения решений* [Armenian Genocide: Mechanisms of Making and Executing Decisions]. Yerevan: NAN RA, Muzei-Institut Genotsida Armian, 2013.

Al'tman, Il'ia. “Холокост и Еврейское сопротивление на оккупированной территории СССР, Уничтожение евреев в Прибалтике” [Holocaust and Jewish Resistance in the Occupied Territory of the USSR, The extermination of the Jews in the Baltic States] http://jhistory.nfurman.com/shoa/hfond_100.htm.

Briman, Shimon. “Мусульмане в СС” [Muslims in the SS], *Kholokost i souchastnost'*, № 4 (2002) http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip4/vip4_3.htm#l4_gol.

Kruglov, Aleksandr. “Сколько евреев было истреблено в Киеве осенью 1941 г.” [How many Jews were exterminated in Kiev in the fall of 1941], *Kholokost I souchastnost'*, № 5 (2002), http://www.holocaust.kiev.ua/bulletin/vip5/vip5_3.htm#l5_gu.

Нюрнбергский процесс. Сборник материалов [The Nuremberg Process. Documents, Vol. 1. 2nd edition], ed. Konstantin Gorshenin, Roman Rudenko, Iona Nikitchenko, Moscow: Gosiurizdat, 1954.

Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками [The Nuremberg trial over the main German war criminals, V. 3], ed. Roman Andreevich Rudenko, Vol. 3, Moscow: Gosiurizdat, 1958.

Smirin, Grigorii. “Холокост: кто и как убивал евреев в Латвии” [Holocaust: Who and How Killed Jews in Latvia], *Baltnews.lv*, 18.03.2015, <https://baltnews.lv/uzvara/20150318/1013645714.html>.

СС в действии. Документы о преступлениях СС [SS in Action. Documents on the Crimes of SS], trans. A. Liagushkina, V. Razmerova. Moscow: Svetoton, 2000.

**ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊՆ ՈՒ ԴԻՄԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՒՄ**

Բանալի բառեր՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ցեղասպանություն, Ռաֆայել Լեմկին, Հերշ Լաուտերպախտ, Նյուրնբերգյան դատավարություն, խմբին ոչնչացնելու մտադրություն, Հայոց ցեղասպանություն:

Հողվածում քննարկվում են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության առանձնահատկությունները և փոխադարձ կապը: Մարդկության դեմ ուղղված հանցագործություն (Crime against humanity) եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված և միջազգայնորեն սահմանվել Նյուրնբերգյան դատավարության կանոնադրության մեջ, երբ նացիստական պատերազմական հանցագործները կանգնած էին դատարանի առաջ: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ էլ իրավագետ Ռաֆայել Լեմկինն առաջարկեց դատավարության փաստաթղթեր ընդգրկել ցեղասպանություն (Genocide) եզրույթը, որը ստեղծելիս վերջինս նկատի էր ունեցել նաև Հայոց ցեղասպանությունը: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Լեմկինը հաջողության չհասավ, և միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրագործվել է թե՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն և թե՛ ցեղասպանություն: Ուստի հողվածում վերլուծվում է այս երկու հանցագործությունների դրսևորումը Հայոց ցեղասպանության օրինակում: Ի հայտ է բերվում Հայոց ցեղասպանության նշանակությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության և ցեղասպանության հայեցակարգի ստեղծման հարցում:

Ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ հասկացություններն իրենց վերջնական ձևակերպումը ստացան 1940-ական թթ.: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները սերտորեն կապված են ցեղասպանություն հանցագործության հայեցակարգի հետ, սակայն ավելի ընդգրկուն են, քանի որ սերտորեն են քաղաքացիական բնակչության լայն զանգվածների վրա հարձակումները, իսկ ցեղասպանություն հանցագործությունը սահմանափակվում է ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերի ոչնչացմամբ: Այս երկու հանցագործությունների հայեցակարգերի ձևավորման համար իր ժամանակին առկա են եղել որոշակի պատմական նախադրյալներ, որոնց մեջ կարևոր է հասկանալ, թե ինչ դեր է ունեցել Հայոց ցեղասպանությունը:

Ստորև քննարկելու ենք ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների փոխկապակցվածությունը և դրանց դրսևորումը Հայոց ցեղասպանության օրինակում: Հետազոտության մեջ խնդիր ենք դրել՝ ցույց տալու պաշտոնական Թուրքիայի քաղաքականությանը սպասարկող ժխտողականների կողմից առաջ քաշվող այն թեզերի սնանկությունը, թե 1915 թ. Օսմանյան կայսրությունը հայերի նկատմամբ որևէ հանցագործություն չի իրագործել:

Ցեղասպանություն (genocide) եզրույթի համեմատությամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություն (crime against humanity) եզրույթը շրջանառության մեջ է դրվել ավելի վաղ՝ առնվազն XVIII դարի կեսերից: Արտահայտության հեղինակն ամենայն հավանականությամբ Վոլտերն է: Այն հաճախ էր օգտագործվում Ֆրանսիայում (երբեմն՝ crimes de lèse humanité): Խոսելով համընդհանուր դատապարտման ենթակա գործողությունների մասին, ինչպիսիք են, օրինակ, գողությունը և սպանությունը՝ Վոլտերն ասում էր, թե մարդկության դեմ կատարված հանցագործությունները պետք է պատժվեն: Իտալացի իրավաբան, մեծ փիլիսոփա Չեզարե Բեկարիան, ընդհակառակը, գտնում էր, որ չափից ավելի խիստ պատիժները կարող են վիրավորանք լինել մարդկության դեմ, մարդկության դեմ հանցագործություն: Եզրույթը միաժամանակ օգտագործվում էր նաև Անգլիայում¹:

«Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» արտահայտության՝ տարիներ շարունակ կիրառման մասին է վկայում նաև այն, որ Ֆրանսիայի Ազգային ժողովի քննարկումների ժամանակ հեղափոխական Մաքսիմիլիան Ռոբեսպիերը Լյուդովիկոս 16-րդ թագավորին անվանում էր «criminel envers l'humanité», այսինքն՝ մարդկության դեմ հանցագործություն կատարած անձ²: Հետագայում՝ 19-րդ դարում, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, անտարակույս, կապված էին ստրկության և ստրկավաճառության հետ³:

Այս եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվեց 1915թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված: Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում նշվում էր. «Գրեթե մեկ ամիս է, ինչ Հայաստանում քրդերը և թուրքերը օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ օժանդակությամբ զանգվածային ջարդերի են ենթարկում հայերին: Նման ջարդեր են տեղի ունեցել սպրիլին (նոր տոմարով) Էրզրումում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանին հարակից շուրջ հարյուր գյուղերի բնակիչներ սպանվել են: Այդ քաղաքում հայկական թաղամասերը շրջափակված են և հարձակումների են ենթարկվում քրդերի կողմից: Միևնույն ժամանակ կոստանդնուպոլսյան օսմանյան կառավարությունը հետապնդումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը: Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ

1 William Schabas, *Unimaginable Atrocities: Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals* (Oxford: Oxford University Press, 2012), 51-52.

2 William Schabas, *Genocide in International Law: The Crime of Crimes* (Cambridge: Cambridge University Press, 2009), 20.

3 Schabas, *Unimaginable Atrocities*, 52.

ուղղված Թուրքիայի այդ նոր հանցագործությունները՝ դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր դռանը, որ իրենք պատասխանատվության են ենթարկելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին»⁴:

«Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը, ինչպես վերևում նշեցինք, միջազգայնորեն սահմանվեց Նյուրնբերգյան դատավարության ժամանակ: Այս եզրույթն ընտրվել է ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Ռոբերտ Ջեքսոնի կողմից, ով Նյուրնբերգյան դատավարության ժամանակ ԱՄՆ-ի գլխավոր դատախազն էր և ամերիկյան պատվիրակության ղեկավարը Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ ձևակերպվել է միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությունը: Ջեքսոնն այդ հարցով խորհրդակցել էր միջազգային իրավունքի մասնագետ Հերշ Լաուտերպայստի հետ⁵: Լոնդոնի կոնֆերանսի վերջին օրերին՝ 1945 թ. հուլիսին, ամերիկյան կողմից գլխավոր բանակցող Ռոբերտ Ջեքսոնն առաջարկեց դաժանությունները, հալածանքները և տեղահանությունները որակել որպես մարդկության դեմ կատարվող հանցագործություններ: Նա կոնֆերանսի ընթացքում նշում էր, որ այդ գաղափարի հեղինակն անգլիացի իրավագետ Հերշ Լաուտերպայստն է, ով Քենդրիջի համալսարանի հանրային իրավունքի ամբիոնի նախագահն էր⁶: 1945 թ. Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունները տալիս են այդ եզրույթի սահմանումը: Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության 6-րդ հոդվածը, որն ընդունվել էր 1945 թ. օգոստոսի 8-ի Լոնդոնի կոնֆերանսում, սահմանում էր՝ տրիբունալը կունենա իրավասություն երեք կարգի՝ պատերազմական, խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ⁷: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունը Միջազգային ռազմական տրիբունալի 6-րդ հոդվածի c կետում (Article 6(c) of the Charter of the International Military Tribunal) սահմանվում էր հետևյալ կերպ. «Պատերազմից առաջ կամ պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակչության սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, տեղահանությունը և նրանց դեմ գործադրված այլ անմարդկային գործողություններ կամ քաղաքական, ռասայական, կրոնական շարժառիթներով հալածանքները, կամ դրանց հետ կապված ցանկացած հանցագործություն ենթակա են տրիբունալի իրավասությանը՝ անկախ այն բանից, այդ գործողությունները տվյալ պետության ներքին օրենսդրության խախտո՞ւմ են, թե՛ ոչ»⁸:

4 Վիգեն Քոչարյան, *Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում* (Երևան, հեղ. հրատ., 2014), 8:

5 David Luban, “A Theory of Crimes Against Humanity”, *Yale Journal of International Law*, vol. 29, no. 3 (2004): 86.

6 Schabas, *Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals*, 51.

7 Dinah L. Shelton, *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, vol. 1 (New York: Thomson Gale, 2005, vol. 1), 211.

8 Nuremberg Charter (Charter of the International Military Tribunal), London, 8 August 1945, <https://ghum.kuleuven.be/ggs/events/2013/springlectures2013/documents-1/lecture-5-nuremberg-charter.pdf>, դիտվել է 07.05.2017:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ իրավագետ Ռաֆայել Լեմկին էլ առաջարկում էր դատավարության փաստաթղթեր ընդգրկել ցեղասպանություն (genocide) եզրույթը: Եթե Լաուտերպախտը «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը կիրառելու առաջարկության հեղինակն էր, ապա Լեմկինը ցեղասպանություն (genocide) եզրույթի ստեղծողն էր: Ցեղասպանություն (genocide) եզրույթը նա կազմել էր 1944 թ. հրապարակված «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ: Այն կազմված էր հունարեն *genos* (ոռսա, ցեղ) և լատիներեն *cide* (սպանել) բառերից⁹: Միջազգային բնույթի առաջին փաստաթուղթը, որում օգտագործվում էր «ցեղասպանություն» (genocide) եզրույթը, 1945 թ. հոկտեմբերի 18-ի Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի մեղադրական եզրակացությունն էր¹⁰, որում ցեղասպանությունը դեռևս չէր ճանաչվում որպես առանձին սահմանված հանցագործություն: Եվ միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան¹¹:

Հարմանալի զուգադիպությամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություն և ցեղասպանություն հասկացություններն առաջ քաշող Լաուտերպախտն ու Լեմկինը սովորել են Լվովի Յան Կազիմիրի համալսարանում, որը շատ հայտնի էր իր իրավունքի դպրոցով: Եվ որևէ փաստ չկա, որ նրանք միմյանց ճանաչում էին Լվովում ուսանելու տարիներից¹²: Նրանց երկուսին էլ համալսարանում ուսուցանել է քրեական իրավունքի պրոֆեսոր Ջուլիոս Մակարնիչը, և նրանք մեծ հետաքրքրություն ունեին քրեական իրավունքի նկատմամբ¹³: Միջազգային իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունեցած այս մարդկանց ճանապարհները հավանաբար խաչվեցին 1940-ական և 1950-ական թթ., երբ Լեմկինը Ցեղասպանության կոնվենցիայի անխնայ քարոզիչն էր, իսկ Լաուտերպախտը Արդարադատության միջազգային դատարանի դատավոր էր¹⁴:

Նրանց գաղափարները համաշխարհային արձագանք ունեցան: Ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ հասկացությունները զարգացել են կողք կողքի և կապվում են անհատի ու խմբի սպանության հետ¹⁵: Բրիտանացի իրա-

9 Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress* (Washington, D.C.:Carnegie Endowment for International Peace, 1944), 79.

10 Indictment presented to the International Military Tribunal in Nuremberg, 18 October, 1945, 12, http://www.cvce.eu/content/publication/2003/10/31/6b56300d-27a5-4550-8b07-f71e303ba2b1/publishable_en.pdf, դիտվել է 10.05.2017:

11 Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա, http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf, դիտվել է 06.05.2017:

12 Ana Filipa Vrdoljak, "Human Rights and Genocide: The Work of Lauterpacht and Lemkin in Modern International Law," *The European Journal of International Law* 20, no. 4 (2010):1168.

13 Michael G. Karnavas, Book Review – East West Street: On the Origins of Genocide and Crimes Against Humanity, by Philippe Sands, <http://michaelgkarnavas.net/blog/2016/12/29/book-review-east-west-street/>, դիտվել է 10.05.2017:

14 Schabas, *Justice, Politics, and Rights at the War Crimes Tribunals*, 51.

15 Philippe Sands, *East West Street: On the Origins of "Genocide" and "Crimes Against Humanity"* (London: Weidenfeld & Nicolson, 2016), 378.

վունքի պրոֆեսոր և միջազգային իրավունքի մասնագետ Ֆիլիպ Սանդսը *The Atlantic* պարբերականին տված հարցազրույցում առանձնացնում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության միջև եղած տարբերությունները. «Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կենտրոնանում են մեծ թվով անհատների սպանության վրա: Մեծ թվով անհատների համակարգված, զանգվածային սպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է: Ցեղասպանությունն այլ ուղղություն ունի: Ցեղասպանությունը բնորոշվում է ոչ թե որպես անհատների սպանություն, այլ խմբերի ոչնչացում: Այլ կերպ ասած՝ մեծ թվով անհատների ոչնչացում, ովքեր կազմում են մի խմբի մաս: Այս ձևով երկու հասկացությունները տարբեր նպատակներ ունեն: Մեկը նպատակ ունի պաշտպանել անհատին, իսկ մյուսի նպատակն է պաշտպանել խումբը»¹⁶:

Լատուերպախտը կենտրոնացած էր անհատի վրա՝ որպես պարբերական սպանությունների թիրախ: Իսկ Լեմկինը կենտրոնանում էր խմբի վրա՝ որպես թիրախ, այսինքն՝ որոշակի խմբի անդամ անհատների սպանությունների վրա, որոնք կատարվում էին խումբը ոչնչացնելու դիտավորությամբ¹⁷: Լեմկինն այն տեսակետն էր առաջ քաշում, որ մարդիկ սպանվում կամ վնասվում են, քանի որ ազգային, կրոնական կամ էթնիկական խմբի անդամներ են: Իսկ Լատուերպախտի կարծիքով մարդիկ անհատական են, և նրանք պետք է պաշտպանվեն անհատապես, այլ ոչ թե որպես որոշակի խմբի անդամներ: Լատուերպախտի համար վտանգավոր էր Լեմկինի՝ խմբերի պաշտպանության գաղափարը, որը կստիպեր ստեղծել այնպիսի պայմաններ, թե Լեմկինը փորձում է պաշտպանել բոլորին, այսինքն՝ մի խմբին մեկ այլ խմբից¹⁸:

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության հայեցակարգերն առաջ քաշող հեղինակների՝ Լեմկինի և Լատուերպախտի տարակարծությունների պատճառով այս երկու հանցագործությունների փոխհարաբերություններն այդպես էլ մնացին խնդրահարույց: Եվ քանի որ այս հասկացություններն ունեն բազմաթիվ ընդհանուր հատկանիշներ, եղան մասնագետներ, օրինակ՝ չեխ իրավաբան Էզոն Շվեյլը, ովքեր խորհուրդ տվեցին դրանք միավորել¹⁹, սակայն ցեղասպանության հայեցակարգի կողմնակից Ռաֆայել Լեմկինի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգի հիմնական պաշտպան Հերշ Լատուերպախտի միջև ընթացած պայքարն արհեստականորեն բաժանեց նման հանցագործությունների միասնական հայեցակարգը՝ վտանգելով դրանց հետագա կանխարգելումը և դատապարտումը²⁰:

16 Robert Coalson, "What's the Difference Between 'Crimes Against Humanity' and 'Genocide?' Bosco Ntaganda has been charged with the first. Here's what it means," <https://www.theatlantic.com/international/archive/2013/03/whats-the-difference-between-crimes-against-humanity-and-genocide/274167/>, դիտվել է 10.05.2017:

17 Karnavas, "Book Review – East West Street."

18 Coalson, "What's the Difference Between 'Crimes Against Humanity' and 'Genocide?'"

19 Filipa, "Human Rights and Genocide," 1192.

20 Վլադիմիր Վարդանյան, *Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները* (Երևան: ԵՊՀ հրատ., 2017), 54:

Հատկանշական է, որ ցեղասպանություն հանցագործությունը նկարագրելու համար համապատասխան եզրույթ փնտրելիս Լեմկինը դիտարկել էր նաև «Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» (Crime against humanity) եզրույթը և այն համարել ոչ նպատակահարմար: Նա գտնում էր, թե «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթն անորոշ է և ոչ ճշգրիտ. այդ եզրույթի ամնչությունը պատերազմի հետ բացառում է դրա կիրառումն այն զանգվածային սպանությունների նկատմամբ, որոնք կատարվել են ոչ պատերազմական պայմաններում՝ որպես օրինակ բերելով հրեաների և մյուս փոքրամասնությունների նկատմամբ հանցագործությունները Գերմանիայում նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը 1939 թ.²¹: Խնդիրն այն է, որ սկզբնական շրջանում այս հանցագործությամբ էին բնորոշում պատերազմի ընթացքում տեղի ունեցած գործողությունները: «Նյուրնբերգյան տրիբունալը կոչվում էր ռազմական տրիբունալ: Բացի ռազմական նվաճողական պատերազմի նախապատրաստությունից, նացիստները պատժվեցին նաև պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար, որոնք տեղի էին ունեցել ագրեսոր պետության կողմից սեփական քաղաքացիական բնակչության նկատմամբ ագրեսիվ պատերազմի ժամանակ կամ կապված պատերազմի հետ: Այսպիսով, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ըստ էության, պատերազմական հանցագործություններ են կամ պատերազմի ժամանակ տեղի ունեցած հանցագործություններ»²², – նշում էր Լեմկինը:

Նա կարծում էր, որ, ի տարբերություն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ցեղասպանություն հանցագործությունը կարող է իրագործվել ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև խաղաղ պայմաններում²³: Մյուս կողմից՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթը չափազանց տարողունակ էր ու համընդգրկուն. որոշակի խմբի անդամների սպանությունն այն բազմաթիվ հանցանքների ձևերից մեկն էր, որն ընդգրկվում է «մարդկության դեմ ուղղված հանցագործության» սահմանման մեջ²⁴:

Լեմկինը հույս ուներ, որ Նյուրնբերգյան դատավարության ընթացքում «ցեղասպանություն» հասկացությունը կընդգրկվի հիմնական պատերազմական հանցագործների դեմ մեղադրական եզրակացության մեջ²⁵: Սակայն նրա հաջողությունը լիակատար չէր, չնայած նրան, որ եզրույթն օգտագործվում էր մեղադրական եզրակացություն-

21 Dan Eshet, “Totally Unofficial: Raphael Lemkin and the Genocide Convention” in *The Making History Series* ed. Adam Strom & the Facing History and Ourselves Staff (Brookline: Facing History and Ourselves, 2007), 19.

22 *American Jewish Historical Society* (hereinafter AJHS), P-154, Raphael Lemkin Collection, Box 6, Folder 9, Notes on Relation of the Genocide Convention and the Nuremberg Law, Notes relating to the Resolution on Genocide of November 21, 1947, 1.

23 *AJHS*, P-154, Raphael Lemkin Collection, Box 6, Folder 9, Notes on the relation of the Genocide Convention and the Nuremberg Law, Memorandum, undated, 1.

24 Eshet, *Totally Unofficial: Raphael Lemkin and the Genocide Convention*, 19.

25 Marc Daniel Segesser, Myriam Gessler, “Raphael Lemkin and the International Debate on the Punishment of War Crimes (1919–1948),” *Journal of Genocide Research* 7 (4): 463.

ների և դատավարության ավարտական փաստարկումների մեջ, «ցեղասպանությունը» չէր ճանաչվում որպես առանձին սահմանված հանցագործություն: Լեմկինը դժգոհ էր Նյուրնբերգյան դատավարությունից, որ ցեղասպանության փոխարեն որպես առանձին հանցագործություն էր ճանաչվում մարդկության դեմ ուղղված հանցագործությունը:

Հետագայում Լեմկինի վրդովմունքն իր արտահայտությունը գտավ ՄԱԿ-ի տեղեկագրի (United Nations Bulletin)՝ Նյուրնբերգյան դատավարության քննադատությանն ուղղված հոդվածում: Նա պնդում էր, թե Նյուրնբերգյան դատավարությունը հիմնականում զբաղվել է մարդկության դեմ ուղղված հանցագործություններով, որոնք տեղի են ունեցել նվաճողական պատերազմների ժամանակ, իսկ ցեղասպանությունն ընդգրկում է այդպիսի հանցագործությունները խաղաղ պայմաններում²⁶: Լեմկինի ակնկալիքներն արդարացան միայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին, երբ ընդունվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում մինչ այժմ գոյություն չունի հատուկ միջազգային կոնվենցիա: Այս հանցագործությունը մնում է ներառված միջազգային դատարանների և տրիբունալների կանոնադրություններում: Թերևս մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասով հատուկ կոնվենցիայի բացակայությունը պայմանավորված է կառավարությունների մտահոգությամբ, որ իրենց քաղաքական ղեկավարները և ռազմական, հետախուզական, ոստիկանական ուժերում բարձրաստիճան պաշտոնյաները և ամենից առաջ պետության գլուխները կարող են պատասխանատվության ենթարկվել նման կոնվենցիայի դրույթներով, եթե այն գոյություն ունենա²⁷:

Մեծ թվով անձանց համակարգված սպանությունը հանցագործություն է, մարդկության դեմ ուղղված հանցագործություն, բայց դրա՝ ցեղասպանություն հանցագործություն լինելը կախված է մարդասպանների մտադրությունից: Ցեղասպանություն հանցագործությունը բաղկացած է երկու տարրից՝ մտադրությունից և գործողությունից: Մտադրվածությունը հնարավոր է անմիջապես ապացուցել հայտարարությունների կամ հրամանների առկայության դեպքում: Բայց ավելի հաճախ մտադրությունը երևում է համակարգված գործողությունների առկայությունից: Ինչ էլ որ լինի հանցագործության շարժառիթը (հողի հափշտակում, ազգային անվտանգություն, տարածքային ամբողջականություն և այլն), եթե հանցագործները գործողություններ են իրականացնում խմբին կամ խմբի մի մասին ոչնչացնելու մտադրությամբ, ապա մենք գործ ունենք ցեղասպանություն հանցագործության հետ²⁸:

26 William Korey, *An Epitaph for Raphael Lemkin* (New York: Jacob Blaustein Institute for the Advancement of Human Rights, 2001), 27.

27 Cherif Bassiouni, “Crimes Against Humanity: The Case for a Specialized Convention,” *Washington University Global Studies Law Review*. 9, no. 4 (2010): 584.

28 Ցեղասպանության իրավական սահմանումը տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.preventgenocide.org/genocide/officialtext-printerfriendly.htm>, դիտվել է 05.05.2017:

Ստացվում է, որ մարդկության դեմ ուղղված հանցագործություններից ցեղասպանության տարբերակող հատկանիշը ցեղասպանության մտավոր տարրն է, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական խմբին մասնակի կամ ամբողջությամբ ոչնչացնելու մտադրությունը: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում նման մտադրություն չի պահանջվում²⁹: Խմբին ոչնչացնելու մտադրության առկայությունը ցեղասպանությունն առանձնացնում է մյուս միջազգային հանցագործություններից, և այդ պատճառով այն համարվում է առանձնակի ծանրության հանցագործություն և հիշատակվում է որպես հանցագործությունների հանցագործություն (*cime of crimes*)³⁰:

Ինչ վերաբերում է մարդկության դեմ ուղղված հանցագործությանը, ապա այն պահանջում է ապացույց, որ հանցանքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության դեմ լայն տարածում գտած կամ համակարգված հարձակումների մաս (*committed as part of widespread or systematic attack against a civilian population*)³¹:

Ցեղասպանություն հանցագործության տարրերը բավարարում են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների պահանջները, և ցեղասպանությունն ի սկզբանե համարվում էր մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ կատարված ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերին ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու դիտավորությամբ³²: Յուրաքանչյուր ցեղասպանություն կարող է լինել մարդկության դեմ ուղղված հանցագործություն, բայց մարդկության դեմ ուղղված ոչ բոլոր հանցագործությունները կարող են լինել ցեղասպանություն:

Չնայած այն տեսակետներին, թե ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության ծանր տեսակ է, այնուհանդերձ սրանք լիովին առանձին հանցագործություններ են³³, ինչի ապացույցն է այն հանգամանքը, որ հատուկ միջազգային տրիբունալները, որոնք ստեղծվել էին՝ հետաքննելու Ռուանդայի և Հարավսլավիայի իրադարձությունները, ցեղասպանությանը և մարդկության դեմ ուղղված հանցագործությանը վերաբերվել են որպես լիովին առանձին հանցագործությունների³⁴: Սակայն, ինչպես արդեն նշվեց, սա չի ենթադրում, որ միևնույն ժամանակ չեն կարող տեղի ունենալ և՛ ցեղասպանություն, և՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Այսպես, օրինակ, Ռադիսլավ Կրստիչի գործով Հարավսլավիայի տրիբունալի դատական պալատը նրան դատապարտեց ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործության և պատերազմական հանցագործությունների համար: Դատարանը

29 Yusuf Aksar, *Implementing International Humanitarian Law: From the Ad Hoc Tribunals to a Permanent International Criminal Court* (London and New York: Routledge, 2004), 205.

30 Robert Cryer, Håkan Friman, Darryl Robinson and Elizabeth Wilmshurst, *An Introduction to International Criminal Law and Procedure* (Cambridge: Cambridge University Press, 2010), 203.

31 Bassiouni Cherif, *Crimes against Humanity: Historical Evolution and Contemporary Application* (Cambridge: Cambridge University Press, 2011), 458.

32 Cryer et al, *An Introduction to International Criminal Law*, 234.

33 John Quigley, *The Genocide Convention: An International Law Analysis* (The Ohio State University: Ashgate Publishing Limited, 2006), 13.

34 Նույն տեղում:

Կրտսիչին դատապարտեց քառասունվեց տարվա ազատազրկման երեք մեղադրանքներով՝ առանց տարբերակելու, թե քանի տարի է տրվում այդ հանցագործություններից յուրաքանչյուրի համար³⁵:

Պաշտոնական Թուրքիայի քաղաքականությանը սպասարկող ժխտողականները գտնում են, որ ոչ միայն Հայոց ցեղասպանություն տեղի չի ունեցել, այլև Թուրքիան երբևէ հայերի նկատմամբ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ չի կատարել³⁶: Տարատեսակ կեղծ փաստարկներ բերելով՝ նրանք պնդում են, որ ընդամենը տեղի է ունեցել հայերի տեղահանություն՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից³⁷: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրագործվել է թե՛ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, որի արդյունքում տեղի է ունեցել քաղաքացիական բնակչության ոչնչացում, և թե՛ ցեղասպանություն:

Ինչպես արդեն նշել ենք, մարդկության դեմ ուղղված հանցագործություն եզրույթն առաջին անգամ պաշտոնապես օգտագործվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության իրողության հետ կապված: Ուշագրավ է, որ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովն Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին առաջարկել էր համատեղ հայտարարության մեջ ընդգրկել «Բրիտանոնության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը, սակայն Ֆրանսիայի արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեն չէր համաձայնվել այդ եզրույթի կիրառման հետ: Նա մտավախություն ուներ, որ այդ ձևակերպումը կարող էր վիրավորական լինել Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային տիրապետության տակ գտնվող մահմեդականների համար: Ուստի նա առաջարկեց «Բրիտանոնության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը փոխարինել «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» տարբերակով, որն ընդունվեց Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների կողմից և տեղ գտավ համատեղ հայտարարության մեջ³⁸:

Բրիտանացի պաշտոնյաներն օգտագործում էին «Կապույտ գրքում» առկա փաստերը՝ ներկայացնելու, որ Օսմանյան կայսրությունում հայազգի քաղաքացիների կոտորածները մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են: «Կապույտ գրքի» համաձայն. «Կ.Պոլսում գտնվող թուրք նախարարները և նրանց գործընկերներն անմիջականորեն և անձամբ պատասխանատու են, սկզբից մինչև վերջ, 1915 թ. Մերձավոր Արևելքն ավերած հսկայական հանցագործության համար»³⁹:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո փորձ կատարվեց՝ պատժելու առա-

35 Նույն տեղում:

36 Morillon Report Regarding Turkey's Progress Towards Accession no. 217, November 15, 2000, http://www.mfa.gov.tr/morillon-report-regarding-turkey_s-progress-towards-accession_br_no_217--november-15_-2000.en.mfa, դիտվել է 12.05.2017:

37 Edward J. Erickson, "The Armenian Relocations and Ottoman National Security: Military Necessity or Excuse for Genocide?" *Middle East Critique* 20, no. 3 (2011): 297.

38 Antonio Cassese, *Cassese's International Criminal Law* (Oxford: Oxford University Press, 2013), 84.

39 Michelle Tusan, "Crimes against Humanity": Human Rights, the British Empire, and the Origins of the Response to the Armenian Genocide," *The American Historical Review* 119, no. 1 (2014): 62.

ջին համաշխարհային պատերազմի օսմանյան ռազմական հանցագործներին: 1919-1920 թթ. Օսմանյան կայսրությունում նախնական ռազմական տրիբունալ էր ստեղծվել՝ հույների և հայերի ցեղասպանությունն իրագործած ռազմական հանցագործներին պատժելու համար: Արդեն 1919 թ. հունվարին Օսմանյան կայսրությունում բրիտանական հանձնակատար, ծովակալ Սոմերսեթ Գուգ-Քալթորփը խոսում էր «մարդկության դեմ հանցագործությունների մեղավորներին դատելու» մասին⁴⁰: Քալթորփը պնդում էր, որ հայերի կոտորածների համար՝ որպես պատերազմական հանցագործությունների մեղավորներ գերմանացի սպաները նույնպես պետք է պատասխանատվություն կրեն. «Եթե դաշնակիցները որոշեն դատարան բերել նրանց, ովքեր վերջին պատերազմի ժամանակ մեղավոր են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրականացման հարցում, ես ցանկանում եմ նշել, որ Լիման ֆոն Սանդերսի անունը պետք է հիշատակվի»⁴¹:

Եվ 1919 թ. գարնանը օսմանյան կառավարությունը բրիտանական հետևողական ճնշման տակ ձերբակալեց ավելի քան 100 բարձրաստիճան կասկածյալների, այդ թվում՝ բարձրաստիճան այրերի՝ նախարարների, նահանգապետների և զինվորականների⁴²: Իսկ 1919 թ. մայիսի 26-ին բրիտանացիները ձերբակալեցին քառասունմեկ կասկածյալի, ավելի ուշ մի քանիսը ևս ձերբակալվեցին, և վերջիվերջո 1920 թ. օգոստոսին բրիտանացիների կողմից հարյուր տասնութ ռազմական հանցագործներ էին ներկայվել Մալթա՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրագործման համար դատարանի առաջ կանգնելու»⁴³: Փորձ կատարվեց Մալթայում ստեղծել միջազգային տրիբունալ, սակայն թուրքերը խճճեցին հետաքննությունները և խեղաթյուրեցին վավերագրական ապացույցները, այնպես որ նրանց կատարած աշխատանքից ոչ մի բան չէր կարող օգտագործվել միջազգային դատական ատյանի կողմից⁴⁴: Ի վերջո, Մեծ Բրիտանիան թուրք ռճագործներին փոխանակում է անգլիացի ռազմագերիների հետ⁴⁵: Այդպես էլ միջազգային տրիբունալ չձևավորվեց, սակայն եթե այն ստեղծվեր, ապա բոլոր հիմքերն առկա էին նրանում մարդկության դեմ ուղղված հանցագործություն հասկացությունը վերջնականապես միջազգայնորեն ամրագրելու համար, իսկ այդ խնդրի լուծումն անկատար չէր մնա մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը՝ Նյուրնբերգյան դատավարության իրականացումը:

40 Jonathan Gary Bass, *Stay the Hand of Vengeance: The Politics of War Crimes Tribunals* (Princeton and Oxford: Princeton University Press, 2000), 131.

41 Tusan Michelle, *Smyrna's Ashes: Humanitarianism, Genocide, and the Birth of the Middle East* (Berkeley, Los Angeles and London: University of California Press, 2012), 131.

42 Նույն տեղում, էջ 130:

43 Tianshu Zhang, "The Forgotten Legacy: Chin's Post-Second World War Trials of Japanese War Criminals, 1946–1956," in *Historical Origins of International Criminal Law: Volume I*, ed. Morten Bergsmo, Wui Cheah Ling, Yi Ping (Brussels: Torkel Opsahl Academic EPublisher, 2014), 275.

44 Allen Daniel Butler, *Shadow of the Sultan's Realm: The Destruction of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East* (Washington: Potomac Books Inc, 2011), 211.

45 Մելինե Անույան, *Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունը (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 67:

Վերջիվերջո Ստամբուլում երիտթուրքերի դատապարտման չորս դատական գործընթացների արդյունքում երեք ցածր դասի պաշտոնյաներ մահապատժի ենթարկվեցին «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» համար, և առաջին անգամ այդ եզրույթն օգտագործվեց միջազգային վարույթներում՝ Հայոց ցեղասպանությունը նկարագրելու համար⁴⁶: Այս քրեական դատավարությունները հանգեցրին միջազգային իրավունքում նոր իրավական հայեցակարգի՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման: Ստամբուլյան քրեական դատավարությունների շարքը կատարեց այն քրեաիրավական պան դերը, որի հիման վրա «մարդկության դեմ ուղղված հանցագործություններ» նոր եզրույթը ներառվեց նոր ձևավորվող միջազգային քրեական իրավունքում⁴⁷:

1920 թ. օգոստոսին ստորագրված Սևրի պայմանագրով ևս նախատեսվում էր մարդկության դեմ հանցագործությունների համար պատասխանատու անձանց քրեական հետապնդում: Սակայն Սևրի պայմանագիրն այդպես էլ չվավերացվեց և փոխարինվեց Լոզանի պայմանագրով, որը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին դրույթներ չէր նախատեսում⁴⁸:

Օսմանյան կայսրությունն իր հայ բնակչության նկատմամբ իրականացրել է նաև ցեղասպանություն հանցագործությունը, ինչն ակնհայտ է հայկական բնակչությանը՝ որպես առանձին խմբի ոչնչացնելու դիտավորությունից: Հատկանշական է, որ Ռաֆայել Լեմկինը ցեղասպանություն եզրույթը ստեղծելիս նկատի է ունեցել նաև Հայոց ցեղասպանությունը⁴⁹: Նա իր «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագրի» «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում հատուկ անդրադարձել է Օսմանյան կայսրությունում հայերին ոչնչացնելու դիտավորության առկայությանը⁵⁰: Իսկ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վերաբերյալ իր անտիպ ուսումնասիրություններից մեկում նշել է. «Թուրքերը, ովքեր մասնակցում էին 1.2 մլն հայերի ոչնչացմանը, մեղավոր են ցեղասպանության համար, նրանք գործել են հայ ազգին ոչնչացնելու մտադրությամբ»⁵¹:

46 Tusan, *Smyrna's Ashes*, 130.

47 Dadrian Vahagn, Akçam Taner, *Judgment At Istanbul: The Armenian Genocide Trials* (New York/Oxford: Berghahn Books, 2011), 3.

48 Ավելի մանրամասն տե՛ս Cherif Bassiouni, *Crimes against Humanity in International Criminal Law* (The Hague/London/Boston: Kluwer Law international, 1999), 67-68.

49 1949 թ. CBS հեռուստաընկերության ծրագրերից մեկին տված հարցազրույցում Ռաֆայել Լեմկինը նշում է. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև այն շատ անգամ տեղի ունեցավ: Այն տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ կոշտ վերաբերմունքի արժանացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատժվեցին»: “Lemkin&Les Arméniens,” <https://www.youtube.com/watch?v=WutF5OVgaNk>, դիտվել է 01.06.2017:

50 Տե՛ս *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 85-98.

51 *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, The Convention for the Prevention and Punishment of Genocide, undated, 2.

«Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածում նշված են այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Կոնվենցիան առնչվում է մեծ թվով անձանց հետ, և խմբի մասնակի ոչնչացման դեպքում սպանված անձանց թիվը տվյալ տարածքում ապրող ամբողջ խմբի մեջ պետք է լինի էական: Էական դրակումը խմբի նշանակալի հատվածն է, ինչպիսիք են մտավորականությունը և ղեկավարությունը, որի ոչնչացումը հանգեցնում է խմբի քանակական և որակական ուժերի զգալի կրճատման⁵²: Այսպես, Հայոց ցեղասպանության դեպքում հատուկ դիտավորության մասին են վկայում ոչ միայն հայության էական հատվածի՝ 1.5 մլն բնակչության ոչնչացումը, այլև հայության մտավորականության և ղեկավար հատվածի սպանությունը:

Լեմկինն իր անտիպ թղթերից մեկում հատուկ ընդգծում է. «1.2 մլն հայեր ոչնչացվեցին: 1916 թ. նրանք ներկայացնում էին հայ ժողովրդի զգալի մասը, բայց ոչ ամբողջ հայ ժողովուրդը: Այս խոսքերն արդեն հաստատում են երկրորդ հոդվածը («Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի)՝ ցույց տալու համար, որ հանցագործները մտադիր են եղել ոչնչացնել խմբին: Ոչնչացումը նշանակում է այնպիսի գործողությունների իրականացում, որոնք հանգեցնում են խմբի վերացմանը: Հրեաները, հայերը, կաթոլիկները և բողոքականներն անցյալում ոչնչացվել են միայն այն պատճառով, որ նրանք տվյալ կրոնական և ազգային խմբերին էին պատկանում: Վերաբերմունքն անհատական հրեայի, հայի, կաթոլիկի կամ բողոքականի նկատմամբ էական չէ»⁵³:

Դիտավորության հանգամանքի մասին են փաստում նաև թուրքական ռազմական ատյանի արձանագրությունները: Ռազմադաշտային դատարանների կայացրած մի շարք դատավճիռներում կարևորվել են կանխամտածվածության և ցեղասպանական դիտավորության գույզ գործոնները՝ որպես կենտրոնական իշխանությունների կողմից հայերի զանգվածային կոտորածների գլխավոր բնութագրիչներ⁵⁴: Ինչպես նշում է Վահագն Դադրյանը, Իթթիհաթի առաջնորդներն ապավինում էին կուսակցությունը «քողարկելու» մարտավարությանը: Կենտրոնական ծրագրի կատարումն ապահովվել և ուղղորդվել է բանավոր և գաղտնի պատվերների և հրահանգների միջոցով: Այս կարգադրությունները, որոնք ուղարկվում էին կողավորված շղթաներով, միշտ ուղեկցվում էին «ոչնչացնել» հրահանգով⁵⁵:

52 Daniel David Ntanda Nsereko, "Genocide: A Crime against Mankind," in *Substantive and Procedural Aspects of International Criminal Law: The Experience of International and National Courts*, vol. 1, ed. Kirk Gabrielle MacDonald and Swaak Q. Goldman Olivia (Hague, London Boston: Kluwer law international, 2010), 124-125.

53 *AJHS*, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 2, The Truman Doctrine, the Marshall Plan, and the U.N. Action on Genocide, March 29, 1948, 1, 2.

54 Վահագն Դադրյան, *Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր* (Երևան, ԵՊՀ հրատ., 2012), 36:

55 Vahakn Dadrian, "Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications," *Yale Journal of International Law* 14, no. 2 (1989): 300.

Եթե օսմանյան իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու դիտավորություն չլիներ, ապա հարկ չէր լինի ոչնչացնել Հայոց ցեղասպանությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը: Այնինչ այդ փաստաթղթերը միտումնավոր ոչնչացվեցին: 1919թ. Ստամբուլում երիտթուրքական կառավարության դատավարությունում դատախազները պնդում էին, որ առաջին համաշխարհային պատերազմում պարտության առջև կանգնած երիտթուրքական կառավարությունը «մաքրում» է իր արխիվները: Ոչնչացված փաստաթղթերի թվում էին ինչպես Ներքին գործերի նախարարության փաստաթղթերի զգալի մասը, այնպես էլ Միություն և առաջադիմություն կուսակցության և Հատուկ կազմակերպության թղթերը, որոնք կարևոր նշանակություն էին ունեցել հայ ժողովրդի բնաջնջման գործում⁵⁶: Եվ պատահական չէ, որ ժխտողականները, ի վիճակի չլինելով հայերին բնաջնջելու մտադրության մասին վկայող փաստաթղթերի ոչնչացման հարցի շուրջ փաստերի վրա խարսխված հիմնավորումներ ներկայացնելու, ընդամենը ենթադրություններ են առաջ քաշում, թե առաջին համաշխարհային պատերազմի ավարտին փաստաթղթերի ոչնչացումը պարզապես պայմանավորված է եղել ռազմական գաղտնիքները թշնամիներից պաշտպանելու անհրաժեշտությամբ⁵⁷:

Օսմանյան իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու մտադրությունը և ցեղասպանության հարցը կասկածի տակ առնելու համար ժխտողականների կողմից հիմնականում առաջ է քաշվում այն պնդումը, թե Նայիմ էֆենդու հուշագրությունները և Թալատ փաշայի հեռագրերը⁵⁸ կեղծված փաստաթղթեր են⁵⁹: Նրանց այս պնդումը հեռու է իրականությունից. Թաներ Աքչամն իր «Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide»⁶⁰ («Սպանության հրամաններ. Թալատ փաշայի հեռագրերը և Հայոց ցեղասպանությունը») գրքում, ցույց տալով ժխտողականների կողմից առաջ քաշվող թեզերի կեղծ լինելը, փաստերի հիման վրա ապացուցում է, որ Նայիմ էֆենդու հուշագրությունները և Թալատ փաշայի՝ սպանությունների հրամաններն իրական են, ինչը փաստում է օսմանյան իշխանությունների՝ հայերին ոչնչացնելու մտադրության առկայության մասին:

Ցեղասպանական դիտավորության կարևոր ապացույցներից մեկն էլ գալիս է 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին Միություն և առաջադիմություն կուսակցության կող-

56 Օսմանյան արխիվների փաստաթղթերի ոչնչացման մասին ավելի մանրամասն տե՛ս Taner Akçam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 9-20.

57 Armenian Claims and Historical Facts: Questions and Answers (Ankara: Center for Strategic Research, 2005), 33-38, <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/ArmenianClaimsandHistoricalFacts.pdf>; Sinasi Orel, Sureyya Yuca, *The Talat Pasha Telegrams: Historical Fact or Armenian Fiction?* (Nicosia: K. Rustem and Bros., 1986), 276.

58 Արամ Աստուկյանը Հալեպում եղած ժամանակ բռնագաղթի տնօրինության թուրք քարտուղար Նայիմ բեյից ձեռք է բերել Հայոց ցեղասպանության մասին մի շարք պաշտոնական-պետական վավերագրեր, որոնք հրապարակել է «Այն սև օրերուն...» (1918) և «Նայիմ բեյի հուշերը» (1920 թ. ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունները, իսկ հայերեն հրատարակությունը՝ 1921 թ. «Մեծ ոճիրը») գրքերում:

59 Michael M. Gunter, "What Is Genocide? The Armenian Case," *Middle East Quarterly* 20, no. 1 (2013): 41.

60 Taner Akçam, *Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide* (Cham: Palgrave Macmillan, 2018), 261.

մից հրապարակված օրենքներից, որոնք թույլ են տվել, որ պետությունը բռնագրավի լքված տները և գույքը և ստեղծի լուծարման հանձնաժողովներ՝ տնօրինելու և հաստատելու համար: Սա ևս ապացուցում է, որ նրանք գործել են հատուկ դիտավորությամբ, որ հայերն այլևս երբեք իրենց բնակության վայրեր չեն վերադառնա⁶¹:

Այսպիսով, մարդկության դեմ ուղղված հանցագործություն և ցեղասպանության հանցագործություն հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Եվ միջազգային իրավունքում այս հանցագործությունների ի հայտ գալու և սահմանման գործում իր էական նշանակությունն է ունեցել Հայոց ցեղասպանության իրագործումը, նշված հանցագործությունները միաժամանակ ցայտուն դրսևորվում են Հայոց ցեղասպանության օրինակում:

Narek M. Poghosyan

PhD

RELATIONSHIP BETWEEN THE CRIME AGAINST HUMANITY AND GENOCIDE AND ITS MANIFESTATION ON THE EXAMPLE OF THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

Key words: crime against humanity, genocide, Raphael Lemkin, Hersch Lauterpacht, Nuremberg trials, intention to destroy the group, Armenian genocide.

The article discusses the features and the relationship between genocide and crime against humanity. The term crime against humanity was officially used for the first time in 1915 regarding the Armenian Genocide and was internationally defined in the Nuremberg Charter.

During the Nuremberg trials a Polish lawyer of a Jewish origin Raphael Lemkin proposed to include the term genocide in the court proceedings. It should be mentioned that by creating the term genocide Raphael Lemkin has also referred to the Armenian Genocide. Within the Nuremberg trials Lemkin did not succeed in promoting its new concept, and only on December 9, 1948 the United Nations General Assembly adopted the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

The well-established facts show that the Ottoman Empire committed crimes against humanity and genocide against the Armenians. Therefore, the article analyzes the manifestation of these two crimes on the example of the Armenian Genocide. The significance of the Armenian Genocide is revealed in the development of the concepts of crimes against humanity and genocide.

61 Geoffrey Robertson, "Armenia and the G-word: The Law and the Politics," in *The Armenian Genocide Legacy*, ed. Alexis Demirdjian (New York: Palgrave Macmillan, 2016), 72.

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ГЕНОЦИДОМ И ПРЕСТУПЛЕНИЕМ ПРОТИВ ЧЕЛОВЕЧЕСТВА, ЕГО ПРОЯВЛЕНИЕ НА ПРИМЕРЕ ГЕНОЦИДА АРМЯН

РЕЗЮМЕ

Ключевые слова: преступление против человечества, геноцид, Рафаэль Лемкин, Герш Лаутерпахт, Нюрнбергский процесс, намерение уничтожить группу, Геноцид армян.

Рассматриваются особенности и взаимосвязь между геноцидом и преступлением против человечества. Понятие преступления против человечества впервые было официально использовано в 1915 году в отношении Геноцида армян и было утверждено на международном уровне в уставе Нюрнбергского трибунала.

Во время судебных процессов в Нюрнберге юрист Рафаэль Лемкин предложил включить в судебное разбирательство термин геноцид, который также использовался для обозначения Геноцида армян, но не добился успеха. Однако 9 декабря 1948 года Генеральная Ассамблея ООН приняла конвенцию «О предупреждении преступления геноцида и наказании за него».

Факты показывают, что правительство Османской империи совершило преступления против человечества и геноцид против армян. Поэтому в статье анализируется проявление этих двух преступлений на примере Геноцида армян. Определяется роль Геноцида армян при создании концепции геноцида и преступления против человечества.

REFERENCES

Anumyan, Meline. Հանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունը (1919-1921 թթ. և 1926 թ.) [Recognition and Condemnation: Young Turk Trials]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2013.

Dadryan, Vahakn. Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր [The Armenian Genocide as a Dual Problem of National and International Law]. Yerevan: Yerevani petakan hamalsarani hratarakchutyun, 2012.

Qoch'aryan, Vigen. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում [The Armenian Genocide in International Legal Documents]. Yerevan: Heghinakayin hratarakut'yun, 2014.

Vardanyan, Vladimir. Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները [The Legal Issues of Recognition, Condemnation and Overcoming the Consequences of the Armenian Genocide]. Yerevan: Yerevani petakan hamalsarani hratarakchutyun, 2017.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՒՆՆԵՐԻ ՀԻՇՍԱԿԻ ՕՐՎԱ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ՄԵՐՕՐՅԱ ՎԻՃԱԿԸ
(ՄԱՍ 2)**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Մեծ եղեռն, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ապրիլի 24:

**Ճանապարհի դեպի հիշատակի օրվա նշում
Խորհրդային Հայաստանում. 24 ապրիլի 1965 թ.**

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումը պայմանավորված էր ոչ միայն «ճնհալի» շնորհիվ հասարակության լայն շերտերի մեջ տեղ գտած փոփոխություններով, այլև Հայաստանի ղեկավարների քաղաքական կամքի գործոնով: 1960 թ. դեկտեմբերի վերջին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում Յակով Զարոբյանը (1908-1980): Նա իր գերդաստանի ճակատագրով (1914 թ. գաղթել է ծննդավայր Արդվինից և ուտքով հասել Դոնի Ռոստով. մինչև 1949 թ. ապրել է Հայաստանից դուրս) է զգացել Մեծ եղեռնի արհավիրքները: Նրա առաջին քայլերից էին ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի առջև Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հարգելու նպատակով միջոցառումների անցկացման անհրաժեշտության հարցի բարձրացման նախապատրաստությունը և համապատասխան նախագծերի կազմումը: Զարոբյանը նպատակ ուներ ոչ միայն բավարարելու հայ ժողովրդի վաղուց հասունացած ոգեղեն հիշատակի պահանջները, այլև լուծելու ռազմավարական նշանակության խնդիրներ: Երբ Եղեռնի 50-ամյակը ոգեկոչելու թույլտվություն ստանալու համար ՀԿԿ կենտկոմը դիմեց Մոսկվա, ԽՍՀՄ կենտկոմի քաղքյուրոն հարցի քննարկման համար կազմեց հատուկ հանձնաժողով, որը թեպետ բավական դժկամ, բայց և այնպես համաձայնեց թույլատրել նշել Եղեռնի 50-ամյակը¹:

Պետք է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք, որն էական նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության գործոնը խորհրդային և, դրանով իսկ, նաև միջազգային հանրությանը ներկայացնելու առումով: Բանն այն է, որ Խորհրդային Հայաստանի կուսակցական ղեկավարությունը, փորձելով իր վերադասի՝ ԽՍՀՄ կենտկոմի հավանությունը ստանալ «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումներ» անցկացնելու մասին, հմտորեն օգտագործեց հայկական Սփյուռքի գործոնը և խնդիրը տեղափոխեց գաղափարախոսական ոլորտ:

1 Տե՛ս Ավագ Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ փարեյիցը և Երկրորդ Հանրապետությունը* (Երևան, «Նորավանք», 2015), 9: Հարցի շուրջ մանրամասն տե՛ս նաև Никита Я. Заробян, Яков Заробян и его эпоха (Ереван: изд-во РАУ, 2008); Նիկիտա Զարոբյան, Արմեն Գրիգորյան, «1965-ի նոսրիկները», <http://imyerevan.com/hy/society/view/2263> (23 ապրիլի 2013 թ.), դիտվել է 04.01.2019:

Մասնավորապես ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի՝ ԽՍՀՄ կենտկոմին 1964 թ. դեկտեմբերին ուղղված նամակում² շեշտվում էր, որ «սփյուռքահայ հետադեմ ուժերը» (նկատի ունենալով թերևս «Դաշնակցություն» կուսակցությանը) հայտարարում են, որ «Խորհրդային Հայաստանում հայերի գանգվածային բնաջնջման տարեդարձերը ոչ մի ձևով չեն նշվում», պնդում են. «... իբր մեր երկրում հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, և որ իբր դրանով մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է»։ Եվ եզրակացվում է. «...նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը ԽՍՀՄ լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել»։ Առաջարկվում էր. «...այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարևան երկրների հետ և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա, և հետապնդի նպատակ, որպեսզի *ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի* (ընդգծումն իմն է – Հ.Մ.)»։ Ահա այս վերջին ձևակերպումը շատ գաղափարախոսական, շատ խորհրդային և համընդունելի դրույթ էր, որն առանձնապես հաճախ էր օգտագործվում Հայրենական մեծ պատերազմի ու նրա առանձին դրվագների բնութագրման համար։ Մյուս կողմից, այս ձևակերպումը ցուցիչ էր այն բանի, որ Հայոց ցեղասպանությունը դուրս էր բերվում զուտ հայկական ողբերգություն լինելու դրույթից և դրվում համաշխարհային պատմության հարթության մեջ³։

Մյուս կարևոր գաղափարախոսական կանխադրույթը, որն առկա էր վերոհիշյալ նամակում առանձին կետի ձևով, հետևյալն էր. «Երևանում կանգնեցնել *առաջին համաշխարհային պատերազմում* զոհված հայ նահատակներին նվիրված կոթող։ Կոթողը պետք է խորհրդանշի *հայ ժողովրդի վերածնունդը* լընդգծումներն իմն են – Հ.Մ.)»⁴։ Այստեղ օգտագործված «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը ոչ միայն զուտ ժամանակագրական ցուցիչի դեր էր կատարում, այլև խնդիր էր դնում երևույթը տեղափոխել «համաշխարհային» հարթություն։ Մյուս կողմից, խորհրդային գաղափարախոսությունը, հետևելով լենինյան բնութագրումներին, տասնամյակներ շարունակ Առաջին աշխարհամարտը ներկայացնում էր իբրև «իմպերիալիստական պատերազմ»⁵։ Իսկ աշխարհում հենց Խորհրդային Միությունն էր, որ, դեկա-

2 Մանրամասն տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և խմբագիր՝ Ավագ Հարությունյան (Երևան, «Գիտություն», 2005), 37-40:

3 Հարություն Մարության, «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)», *ՊԲՀ*, 3 (2014), 65-66:

4 Հուշարձանի կառուցման որոշումների և ընթացքի մասին մանրամասն տե՛ս Ամատունի Վիրաբյան, «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1 (2008), 292-296:

5 Մանրամասն տե՛ս Л. Федоров, «В. И. Ленин и И. В. Сталин о Первой империалистической войне», *Военно-исторический журнал*, 1 (1939), 133-137. Հմմտ. օրինակ. Вторая империалистическая война началась. Политическое управление РККА (В помощь пропагандисту РККА) (М., 1938).

վարելով «համաշխարհային սոցիալիզմի» ճամբարը, բոլոր հնարավոր միջոցներով դիմակայում էր «համաշխարհային իմպերիալիզմին»⁶:

Հաջորդ էական պահն այն էր, որ որևէ բնութագրմամբ չէր նշվում հայերին «գոհված հայ նահատակներ» դարձնողների մասին. կարևորն այն էր, որ դա տեղի էր ունեցել «առաջին համաշխարհային պատերազմի» ժամանակ: Այս տեսանկյունից բնութագրական է, որ ՀԿԿ կենտկոմի նախագահության և Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի ներհանրապետական ընդգրկում ունեցող որոշումներում⁷ արդեն «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը չի հանդիպում:

Ոչ պակաս կարևոր շեշտադրում էր «հայ ժողովրդի վերածնունդ» ձևակերպումը, քանի որ խորհրդային գաղափարախոսությունը տասնամյակներ շարունակ քարոզում էր, որ հենց խորհրդային կարգերի հաստատումը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից ու պայմաններ ստեղծեց նրա իրական «վերածննդի» համար:

Եթե ընդհանրացնենք, ապա պետք է ամրակայել, որ դիտարկվող նամակի հիմնական դրույթներն իրականում ուղենիշային ձևակերպումներ էին: Դա այն մարտավարական օրինակներից է, որ երբ պետք է դրական լուծումների ակնկալիքով Հայոց ցեղասպանության խնդիրը ներկայացնել հարցին ոչ շատ տեղյակ քաղաքական (տվյալ դեպքում՝ նաև կուսակցական) վերնախավին, ապա պետք է «խոսել» այդ վերնախավի համար հասկանալի և ընդունելի, տվյալ դեպքում՝ «խորհրդային գաղափարախոսության» լեզվով՝ մասնավորապես դուրս բերելով հարցը էթնիկական հակամարտության ոլորտից⁸:

1965 թ. ապրիլի 24-ը նշվեց երկու մակարդակով՝ ժողովրդական և պետական-կուսակցական: Այդ օրը՝ երեկոյան, Երևանի օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի և Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էին ՀԽՍՀ ողջ ղեկավարությունը, Վազգեն Ա Կաթողիկոսը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միմիայն ՀԿԿ կենտկոմի հատուկ հրավիրատոմսերով: Հնչեցին ելույթներ՝ մոտավորապես հետևյալ շեշտադրումներով. հայ ժողովուրդն առաջին անգամ արժանավայել նշում է Մեծ եղեռնի տարելիցը, բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը. դատապարտման է արժանի ոչ թե Թուրքիայի աշխատավոր ժողովուրդը, այլ ցեղասպանության քաղաքականությունը և այն գործադրողները. միայն խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը փրկեցին հայ ժողովրդին իսպառ բնաջնջումից. Եղեռնի տարելիցը նշվում է ոչ թե ողբով ու լացով, այլ Հայաստանի վերածննդի պայմաններում, նրա բեղուն ներկայի և առավել շքեղ ապագայի գիտակցությամբ, այն համոզմամբ,

Խորհրդային պատմագիտության մեջ ուղենիշային էր գնահատվում Վ. Ի. Լենինի ձևակերպումն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, որն այնուհետև պետք է հանգեցնի հեղափոխության: Մանրամասն տե՛ս, օրինակ, «Предисловие». В кн.: В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 26 (М.: Изд-во политической литературы, 1969), VII–XXVII.

6 Մարտիան, «Թանգարան և հուշարձան», 67:

7 Տե՛ս, օրինակ, Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, 48, 60, 64:

8 Մարտիան, «Թանգարան և հուշարձան», 67:



Լուս. 1. Ցույց Լենինի հրապարակում: Ցուցարարների ձեռքին պլակատ է Մասիսների ուրվանկարով և «Արդար լուծեք Հայոց հարցը» գրությամբ: Երևան, 24 ապրիլի 1965 թ.: ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 1, թպ 6, ֆի 23, լուս. 7:

որ ոչ մի ուժ, սոցիալիստական հասարակարգից բացի, չի բերի հայ ժողովրդին այդ լուսավոր ապագան⁹:

1965 թ. ապրիլի 24-ին՝ առավոտյան ժամը 10-ին, տասնյակ հազարավոր սևագգեստ երիտասարդներ հավաքվում են Լենինի հրապարակում չարտոնված հանրահավաքի, ձեռքներին պաստառներ՝ «2.000.000» (Եղեռնի զոհերի թիվը), «Հատուցեք հողերը», «Արդար լուծեք հայոց հարցը», «Ազատե՛ք 7 հայրենասերներին» և այլն (լուս. 1), ինչպես նաև՝ Դանիել Վարուժանի և Կոմիտասի մեծադիր դիմանկարները, անընդհատ վանկարկվում էր «Հո-դե-րը, հո-դե-րը»: Տարածվում են ԽՄԿԿ ԿԿ-ին, ԽՍՀՄ կառավարությանը և խորհրդարանին ուղղված թռուցիկներ, որտեղ խնդրում էին խորհրդային ղեկավարությանը վերացնել ազգային հարցում անհատի պաշտամունքի տարիներին ընդունված բոլոր հակահայկական անարդար որոշումները և արդարացի լուծում տալ հայ ժողովրդի պահանջներին, մասնավորապես Հայաստանին հանձնել Դարաբաղը, Նախիջևանը և Խորհրդային Միության պատմականորեն հայաբնակ մյուս հողերը, ներգաղթած հայերին տեղավորել Նախիջևանում, քանի որ բնակչության խտությունը հանրապետությունում հասել է տագնապալի,

9 Մանրամասն տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 43-45:

ճակատագրական մակարդակի, ազատել յոթ հայրենասերներին, արագացնել հայերի ներգաղթը¹⁰: Այդ պահանջները հենց հրապարակում հանձնվում են Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Այլ թողոցիկներում գրված էր. «Կոչ հայ ժողովրդին. Հայ ժողովուրդ, հիշի՛ր, ապրիլի 24-ը Մեծ եղեռնի օրն է: Բոլորս սգո երթի», ինչպես նաև «Կորչեն թրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանում», «Վերադարձրեք մեր հողերը», «Ազատություն արևմտահայերին»¹¹: Լենինի հրապարակից ցուցարարները հայրենասիրական կոչերով քաղաքի փողոցներով երթ են կազմակերպում դեպի Պոլիտեխնիկական ինստիտուտ և Երևանի պետական համալսարան՝ կոչ անելով ուսանողներին միանալ երթին: Ապա ժողովուրդն ուղղվում է դեպի Կոմիտասի պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Յեղասպանության զոհ դարձած մեծ երգահանին: Այստեղ ելույթ են ունենում մտավորականության ներկայացուցիչներ (մասնավորապես Սիլվա Կապուտիկյանը և Պարույր Սևակը), երիտասարդներ: Դրանից հետո մարդիկ վերադառնում են Օպերայի հրապարակ: Օպերային թատրոնի շենքում սկսվում է պաշտոնական ժողովը: Քիչ անց մի խումբ երիտասարդներ փորձում են մուտք գործել շենքի դահլիճ: Հանդիպելով իրավապահ մարմինների դիմադրությանը՝ նրանք քարեր են շարում օպերայի շենքի վրա՝ ջարդելով ապակիները: Իրավապահները ստիպված շենք ներխուժողների վրա պոմպերով սառը ջուր են բաց թողնում, բայց ապարդյուն. մոտ երկու հարյուր ցուցարարներ ներխուժում են Օպերայի շենք, ապա և նիստի անցկացման վայր «Հողերը մե՛րն են, մե՛րը» բացականշություններով: Հանդիսավոր նիստը ձախողվում է: Հանրապետության ղեկավարությունը հեռանում է, մնում է միայն կաթողիկոսը, ով հանդարտության կոչեր է անում: Այդ և հաջորդ օրը մի քանի տասնյակ մարդ ձերբակալվում է, սակայն նրանց դեմ քրեական գործեր չեն հարուցվում, և նրանք ազատ են արձակվում, քանի որ նրանց գործողությունները որակվում են որպես խուլիգանություն: Ապրիլի 25-ի կեսօրին օպերային թատրոնի տարածքն արդեն մաքրվել էր, նոր ապակիները՝ տեղադրվել, այնպես որ հաջորդ օրը Մոսկվայից ժամանած հատուկ հանձնաժողովը որևէ հետք չի տեսնում: Սակայն մի քանի ամիս անց Յակով Զարոբյանն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և աշխատանքի նշանակվում Մոսկվայում¹²:

10 Օրվա իրադարձությունների մանրամասն նկարագրությունը տե՛ս, օրինակ՝ Մկրտիչ Արմեն, «Ջեկուցագիր Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին», *Գրական թերթ* (Երևան), 6 սեպտեմբերի 1991 թ. (թիվ 25/2428): Սիլվա Կապուտիկյան, *Էջեր փակ գգրոցներից* (Երևան, «Ապոլոն» հրատ., 1997), 60, 77: Haig Sarkissian, “50th Anniversary of the Turkish Genocide as Observed in Yerevan,” *The Armenian Review* 19, no. 4 (1966): 23-28. Նվարդ Բորյան, «Ինչպես է նշվել Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և ինչպես հնարավոր դարձավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը», *Հայկական աշխարհ* (Երևան), 24 ապրիլի 2007 թ., <http://www.armworld.am/detail.php?paperid=1493&pageid=50725&lang>, դիտվել է 04.01.2019: Никита Я. Заробян, *Яков Заробян и его эпоха*, 123-140: Զարոբյան, Գրիգորյան, «1965-ի ուրիկոնը»: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 47-59:

11 Տե՛ս «Մեծ Եղեռնի յիսնամեակին. Տոնակատարությունները Երեւանի մէջ. Պաշտօնական հաւաքոյթներ, եւ ժողովրդական համախմբումներ ու ցոյցեր», Կարօ Գէորգեան, *Ամենուն տարեգիրքը 1966*, ԺԳ տարի (Պէլյուրթ, 1966), 316:

12 Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 58-59:

1965 թ. ապրիլի 24-ի երևանյան¹³ հուժկու շարժումը քանդեց պաշտոնական լռության պատնեշը, ու հայ ժողովուրդն իրավունք ստացավ բարձրաձայն խոսելու իրեն պատուհասած 20-րդ դարի ամենամեծ ողբերգություններից մեկի՝ Հայոց Մեծ եղեռնի մասին, գրվեցին գիտական հետազոտություններ, 1915-ի դեպքերի մասին հրատարակվեցին գրքեր ու փաստաթղթեր, իսկ պետականորեն կազմակերպված ու իրականացված ցեղասպանության փաստը վերջապես իր տեղը գտավ հայոց պատմության դասագրքերում: Բացի դրանից, սա այն եզակի դեպքերից էր, երբ իշխանությունն ու ժողովուրդը, չնայած տարբեր դիրքերից, պայքարում էին մեկ ընդհանուր գործի համար: Պայքարեցին ու հասան իրենց նպատակին¹⁴:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը

Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը 1965 թ. փետրվարի 15-ին ընդունում է համապատասխան որոշում: Մեկ ամսից հրապարակված մրցանակաբաշխության պայմանների մեջ շեշտվում է, որ կոթողը պետք է մարմնավորի «ստեղծագործող հայ ժողովրդի մաքառումներով լի կյանքը, վերապրելու, առաջադիմելու անսպառ կենսունակությունը, նրա ներկան ու պայծառ ապագան՝ ի հավերժացումն 1915 թ. Մեծ եղեռնի միլիոնավոր նահատակների անմար հիշատակի»¹⁵: Կարծում եմ, որ հուշարձանի համար նախատեսված տեղանքը՝ Ծիծեռնակաբերդի բարձունքը, պատահական չէր ընտրված: Որոշում կայացնողները թերևս հետևել էին Երևանի՝ 1924 թ. գլխավոր հատակագծի հեղինակ Ալեքսանդր Թամանյանի մտահղացմանը՝ քաղաքն իր հիմնական ճարտարապետական համալիրներով ուղղել դեպի Արարատ: Ընտրված տեղանքը նույնպես ուղղված էր դեպի Մասիսները, դեպի Արևմտյան Հայաստան:

1965 թ. հունիսի սկզբին ժյուրիի կողմից ընտրված նախագիծը (ճարտարապետներ Արթուր Թարխանյան, Սաշուր Քալաշյան) ուներ «պարզ ու հասկանալի լուծում... խոնարհված խաչքարաձև քարերը խորհրդանշում են սուզը զոհվածների հիշատակին, իսկ վերասլաց կոթողը՝ վերածնունդ»¹⁶: Հուշահամալիրի շինարարությունն ավարտվում է ռեկորդային կարճ ժամանակահատվածում՝ երկուսուկես տարում: Սաշուր Քալաշյանի վկայությամբ. «Ամեն շաբաթ-կիրակի Հայաստանի շրջաններից, գյուղերից սեփական նախաձեռնությամբ մարդիկ էին ավերորումներով

13 Այդ օրը տեղի են ունենում Մոսկվայի հայության հավաք հայկական գերեզմանատանը և հոգեհանգստյան պատարագ՝ եկեղեցում: Հաջորդ տարի կազմակերպվում է շուրջ 10.000 մարդկանց մասնակցությամբ երթ դեպի Թորքաի դեսպանության շենք, ինչպես և պատարագ եկեղեցում: Մանրամասն տե՛ս Վարդան Հայկազյան, Ցեղասպանության տարեկիցի նշումը Մոսկվայում. – Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 140-153: Vahagn N. Dadrian, “The Events of April 24 in Moscow – How They Happened and Under What Circumstances,” *The Armenian Review* 20, no. 2 (1967): 9-26:

14 Զարոբյան, Գրիգորյան, «1965-ի ռուբիկոնը»:

15 Վիրաբյան, «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը», 293:

16 Նույն տեղում, 296: Տե՛ս նաև Վարազդատ Հարությունյան, «Ինչպես ընտրվեց Եղեռնի զոհերի հուշահամալիրի նախագիծը», *Ազգ* (Երևան), 27 մայիսի 2006 թ., Զ:

գալիս, ասում էին. «Մենք այսինչ գյուղից ենք, մեր նախնիները եկել են Արևմտյան Հայաստանի այսինչ նահանգից, ուզում ենք շարաթորյակ անել, ասե՛ք՝ ինչ անենք»: Գործ շար կար, ու էդ մարդիկ հաճույքով, թևերը քշած՝ քար էին տեղափոխում կամ շինարարական աղբ թափում: Իսկ երբ անելու բան չէր լինում, սկսում էին հայրենասիրական երգեր երգել»¹⁷: Գործն արագ և «անաղմուկ» անելու խնդիր էր դրված, որպեսզի հանկարծ Մոսկվան չփոխեր իր որոշումը:

Վերջապես, 1967 թ. նոյեմբերի 29-ին տասնյակ հազարավոր քաղաքացիների ներկայությամբ հանդիսավոր պայմաններում Ծիծեռնակաբերդում բացվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի գլխավորությամբ ներկա էին ՀԽՍՀ կուսակցական-պետական ողջ ղեկավարությունը, մտավորականության սերուցքը: Միջոցառումը հեռուստատեսությամբ և ուղիղորդ հեռարձակվում էր հանրապետությունով մեկ: Գաղափարախոսներն ինչպես միշտ, այս անգամ էլ փորձել էին համատեղել անհամատեղելին. հուշարձանը բացեցին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 47-րդ տարեդարձի օրը՝ դրանով իսկ համազգային աղետը եզրափակելով համաժողովրդական վերածննդով¹⁸:

Հուշահամալիր տանող ճանապարհներն անցնում են ընդարձակ զբոսայգու միջով: Բուն հուշահամալիրը զբաղեցնում է մոտ կես հեկտար տարածք և բաղկացած է երեք հիմնական կառույցներից՝ հուշապատ, հավերժության սրահ/հիշատակի դահլիճ, «Վերածնվող Հայաստան» հուշայուն: Հարյուր տասը մետր երկարությամբ հուշապատի վրա 2002 թ. փորագրվել են Օսմանյան կայսրության այն բնակավայրերի անունները, որտեղ տեղի են ունեցել հայերի ջարդերը (լուս. 2): Երեսուն մետր տրամագծով շրջանաձև դամբարանն ունի դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե պիլոններ, որի առանցքում վառվող անմար կրակը խորհրդանշում է Եղեռնի զոհերի հիշատակի հավերժությունը: Քառասուն մետրանոց հուշապունը կյանքի խորհրդանիշ հանդիսացող ծիլ-ցողունի քարե մարմնավորումն է՝ բաղկացած միմյանց շարունակություն կազմող երկու թերթերից և խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը (լուս. 3): Գտնվելով բարձունքի վրա և առանձնանալով քաղաքային միջավայրից՝ հուշահամալիրը միևնույն ժամանակ ներդաշնակության մեջ է շրջակա միջավայրի, մասնավորապես պարզորոշ երևացող Արարատ

17 «Ծիծեռնակաբերդ. Հուշակոթողի մասին միֆերն ու իրական պատմությունները», <https://web.archive.org/web/20151026130642/http://newmag.am/2015/genocide-monument/> (15 ապրիլի 2015 թ.), դիտվել է 04.01.2019: Հուշահամալիրի նախագծման, շինարարության ընթացքի մանրամասն պատմությունը տե՛ս Սաշուր Քալաշյան, Ինչպես ստեղծվեց հուշահամալիրը, *Ճարտարապետություն, շինարարություն*, 4-5 (2015), 14-21 և «Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը. 40 տարի անց վերհիշում են շինարարները. Զրույցը տեղի է ունեցել 2005 թ. ապրիլին Եղեռնի հուշահամալիրի մոտ», *Ճարտարապետություն, շինարարություն*, 4-5 (2015), 22-23:

18 Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 33-36: Առկա է մեկ այլ վկայություն. «Եղեռնի հուշահամալիրի բացման օրը՝ 1967 թ. նոյեմբերի 29-ին, «Երբիմշին» տրեստի վարպետների անունից ելույթ պետք է ունենար Վրեժ Արքահամյանը: Երբ կարդացին նրա անունը, այն անսպասելի ավելոծում առաջացրեց հավաքվածների մեջ. 60-70 հազարանոց բազմությունը, բռունցքները բարձրացրած, սկսեց վանկարկել. – Վր՛ժ-րե՛ժ, վր՛-րե՛ժ, վր՛-րե՛ժ...»: Տե՛ս «Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը», 24:



Լուս. 2. Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիրի հուշապատը, փորագրված որոշ բնակավայրերի (տարածաշրջանների) անվանումների (Խնուս, Դեբջան, Բայազետ, Սասուն, Բիթլիս, Մուշ) ներքևում ծաղիկներ են դրված: Երևան, 25 ապրիլի 2019 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 3. Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիրը. հուշապատ, հուշարահ, վերածննդի կոթող: Երևան, 11 ապրիլի 2012 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

լեռան պատկերի հետ: Փաստորեն հայ ինքնության երկու կարևորագույն՝ բնության կերտած և ձեռակերտ տարրեր ի մի են բերված մեկ վայրում: Այս շարքում թերևս պետք է տեղադրել նաև հուշարձանի բարձունքից բացվող երևանյան համայնապատկերը՝ խորհրդանիշը ցեղասպանության արհավիրքները վերապրած ու վեր հասնած հայության: Այցելուների վրա խորհրդային մոդեռնիզմի ոճով կառուցված այս հուշարձանի ազդեցությունը պայմանավորված է նախ՝ նրա զուսպ, դեկորատիվ հավելումներից զերծ ծավալատարածական կերպարով, ապա՝ նրանում մշտապես հնչող հոգևոր երաժշտության թախծոտ մեղեդիներով: Այդ առումով այն ճարտարապետության և երաժշտության համադրության եզակի նմուշներից է համաշխարհային ճարտարապետության մեջ, որը ցույց է տալիս քարարվեստի անսահմանափակ հնարավորությունները՝ հակիրճ, խիստ ու ազդու ձևերով կերտելու կատարյալ ստեղծագործություն¹⁹: 1995 թ. հուշահամալիրի տարածքում կառուցվում է թանգարան: Այն 2015 թ. ընդարձակվում է, բայց և այնպես ծավալատարածական առումով որևէ ազդեցություն չունի հուշահամալիրի վրա:

Պետք է սկստել, որ 1960-ական թվականների առաջին կեսից Խորհրդային Միությունում սկսեցին կառուցվել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ հուշարձանային համալիրներ, ինչպես օրինակ՝ Ստալինգրադյան ճակատամարտի հերոսներին նվիրված հուշահամալիրը Վոլգոգրադում (1959-67), Անհայտ զինվորի հուշարձանը Մոսկվայի Կարմիր հրապարակում (1966-67) և այլուր: Մեր կարծիքով Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանային համալիրը (1965-67), նաև Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրը (1968, ամբողջացումը՝ 1978) այսպես թե այնպես տեղավորվում են հուշային՝ մեմորիալ, հենց այդ տարիներին սկսված կառուցումների շարքում²⁰:

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումը հայ եկեղեցու կողմից

1964 թ. օգոստոսի 17-ին հրապարակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակը «Ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ», որով հրահանգվում է առաջիկա 1965 թվականը հռչակել եկեղեցու և համայն հայ ժողովրդի համար «ազգային սուգի և աղօթքի տարի»: Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ապրիլի 24-ին պետք է տեղի ունենան կրոնական հատուկ արարողություններ և հոգեհանգստյան պաշտոններ, բոլոր գաղութներում կազմակերպվեն համազգային հուշի և հարգանքի հանդի-

19 Լևոն Լաճիկյան, *Ճարտարապետի կյանքի գործը*, 24 հունիսի 2014 թ., <https://www.civilnet.am/news/2014/06/24/%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE-D5%A8/233151>, դիտվել է 04.01.2019: Հուշահամալիրի արվեստագիտական վերլուծությունը հանգամանորեն ներկայացված է հետևյալ աշխատության մեջ. Карен Бальян, *Мемориал Егерн* (Екатеринбург: Изд-во Tatlin, 2015) (серия: Архитектура советского модернизма: Шедевр).

20 Տե՛ս Հարություն Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը: Հարություն 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, «Գիտություն», 71): Հմմտ. Наталья Конрадова, Анна Рылева, «Герои и жертвы: Мемориалы Великой Отечественной», *Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре*, 40-41 (2004), 138, 139.

սավոր հավաքություններ, դասախոսություններ, տարվա ընթացքում հրապարակվեն ուսումնասիրություններ, գրական-գեղարվեստական գործեր և այլն²¹:

1965 թ. ապրիլի 24-ին Մայր աթոռում Եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ արտասահմանյան երկրներից ժամանած հազարավոր ուխտավորների ներկայությամբ տեղի են ունենում հանդիսություններ: Վազգեն Ա-ն պատարագ է մատուցում, կատարվում է հոգեհանգիստ՝ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում տեղի է ունենում Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի օրհնություն, որի կառուցումը պետք է ավարտվեր 1965 թ. հոկտեմբերին²²: Արարողության ավարտին ճառով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիսյանը: Իր խոսքում նա մասնավորապես նկատում է. «Իզուր չի անցել մեր նահատակների թափված արյունը: Նրանք *մեռան*, որ մենք *սպրենք* և *սպրեցնենք* նրանց *անունն* ու *գործը*, *երազն* ու *պատգամը*, մեր և գալոց հայ սերունդների սրտերում: Փա՛ռք իր նահատակությունը հաղթության վերածող մեր շինարար, մեր արդար ու մեր խաղաղասեր ժողովրդին»²³: Ապրիլի 25-ին Մայր տաճարում հանդիսավոր պատարագ է մատուցվում, ապա վեհարանի հանդիսասրահում գումարվում է հուշ-ցերեկույթ՝ նվիրված ապրիլյան եղեռնի հիսունամյակին²⁴: 1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն կաթողիկոսը ողջ հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ Մայր տաճարի հյուսիսային կողմում բացում է Եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակն անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված է. «Խաչքար Ադոթի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի²⁵ երկրորդ երեսի վրա փորագրված են Շատախի, Վանի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եղեսիայի, Ջեյթունի, Սասունի և Սարդարապատի անունները²⁶, այսինքն՝ այն վայրերի, որտեղ տեղ են գտել ինքնապաշտպանական մարտեր, իսկ Սարդարապատի ճակատամարտում թուրքական բանակը պարտվել էր ու նահանջել (լուս. 4, 5):

21 Մանրամասն տե՛ս «Ամենայն Հայոց հայրապետի կոնդակը ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի*, Ը-Թ (1964), 3-5: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 60-67:

22 Մանրամասն տե՛ս «Հանդիսություններ Մայր Աթոռում ապրիլյան եղեռնի հիսունամյակի առթիվ», *Էջմիածին, 1915-1965*, Ե-Ձ-Է (1965), 106-110:

23 Նույն տեղում, էջ 110:

24 Նույն տեղում, էջ 110-113:

25 1965 թ. նոյեմբերի 18-ին հուշարձան-խաչքարի ներքո թաղման կարգով ամփոփվում է Դեր-Չորից բերված եղեռնի նահատակների աճյուններով ապակեպատ արկղ: Մանրամասն տե՛ս «Մեծ եղեռնի նահատակների աճյուններ Դեր-Չորից», *Էջմիածին. 1915-1965*, ԺԱ-ԺԲ (1965), 80-81:

26 Տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 63, 66:



Լուս. 4. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների» (տեսքը ճակատից): Էջմիածին, 4 ապրիլի 2009 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 5. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների» (տեսքը հետևի կողմից, դրվագ արձանագրությամբ): Էջմիածին, 1 ապրիլի 2013 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

Մեծ եղեռնի հիշատակի օրվա նշումների առանձնահատկությունները Սփյուռքում

Ապրիլի 24-ի լայնորեն նշվող Սփյուռքի հայկական համայնքներում պայմանավորված է մեկ կարևորագույն հանգամանքով. *դասական Սփյուռքը ցեղասպանության ծնունդ է*: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությունը հանգեցրեց արևմտահայության ճնշող մեծամասնության ֆիզիկական ոչնչացման: Իսպառ վերացան հազարավոր գերդաստաններ ու տոհմեր: Վերապրողները շատ չէին, բայց կային: Եվ ձևավորված հայկական Սփյուռքում վերապրողներից շատերը, նոր ընտանիքներ կազմելով, փորձեցին յուրովի «վերակենդանացնել» օսմանյան յաթաղանին զոհ գնացած իրենց ծնողներին, քույրերին ու եղբայրներին՝ զավակներին տալով զոհված հարազատների անունները: Վերապրողների ստեղծած բազմանդամ ընտանիքներն ինչ-որ չափով մոռացության կորստից փրկեցին հազարավոր տոհմանուններ: Վերապրողներն իրենց նորաստեղծ ընտանիքներով փաստորեն իրականացրին յուրատեսակ *ազգածություն*, վերստեղծեցին արևմտահայոց նոր տիեզերքը: Ու այդ կերպ նրանք կարծես թե իրենց վրա վերցրին արարչի, դեմիուրգի գործառույթներ: Այս մոտեցումը՝ ցեղասպանությունը՝ որպես տիեզերածություն և ազգածություն հայկական Սփյուռքի համար, գիտական շրջանառության մեջ է դրել Արմեն Պետրոսյանը²⁷:

1965 թ. ապրիլի 24-25-ին Սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներում հանդիսավորությամբ նշվում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը: Կարելի է ասել, որ որակական անցում է կատարվում սգահանդեսների մշակույթից դեպի հիշատակման այլ մակարդակ:

Հատկապես տպավորիչ էր հիշատակի օրվա նշումը Մերձավոր Արևելքի ամենահայաշատ գաղութում՝ Լիբանանում: Բեյրութում ապրիլի 24-ին՝ շաբաթ օրը, յուրաքանչյուր համայնք իր եկեղեցում նշում է նահատակների հիշատակը հոգևոր արարողություններով՝ պատարագով ու հոգեհանգստյան պաշտոններով: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ին, քաղաքի հայությունը՝ շուրջ 85.000 հոգի (նրանց թվում և Հայաստանի Առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը), հավաքվում է քաղաքի ամենամեծ հավաքավայրում՝ մարզական ավանում (լուս. 6): Համազգային հանդիսությունը ղեկավարում են Լիբանանի հայ-առաքելական, հայ-կաթոլիկ և հայ-բողոքական եկեղեցիների առաջնորդները՝ հայկական երեք կուսակցությունների, երկրի պետական գործիչների մասնակցությամբ (լուս. 7, 8): Այդ օրերի մամուլում, նաև հնչող ելույթներում, նահատակների հիշատակը հարգելուց գառ, հատկապես կարևորվում է հայության միասնականության խնդիրը: Այսպես, ապրիլի 25-ի իր խոսքում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ն մասնավորապես նշում է. «Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակի համազգային այս ոգեկոչումը թող ծաղկեցնէ հայ ժողովուրդին կեանքը, թող զօրացնէ ու ջերմացնէ անոր հոգին և թող սկզբնաւորութիւն մը ըլլայ հայ ժողովուրդի ազգային ձգտումներուն և պատմական իրաւունքներուն հետապնդման և իրա-

27 Մանրամասն տե՛ս Արմեն Պետրոսյան, «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածություն», *Հայացք Երևանից. Հայագիտական: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն* (Երեւան), 4 (1997), 50, 51:

ՈԳԵԿՈԶՈՒՄԻՆ ԻՄԱՍՏԸ

Այսօր, խորհուրդներով ու խոհերով
գերազանցապես յուզուած՝ ամբողջ հայ
ժողովուրդը ոտքի է, խոնարհելու իր գը-
լուխը մէկ միլիոնէն աւելի՝ Նահատակնե-
րու յիշատակին առջև:

Այս օր, Նահ Թառութիւնն է հայ ժո-
ղովուրդին, որ սրբաբեկ Նահատակներու
անիւններէն յառնեցաւ, Հայ ողբի անժա-
նութիւնը իրարու աւետելու հա-
մար:

Ենթան տարիներ առաջ Թուրքիոյ
կողմէ կատարուած անժարկիւային սոճիբին
և այսօրուան միլի տարիները հայութեան
համար անցած ու մտաբուած օրեր չեղան:
Նոյն ճանապարհին վրայ հ. սակ նեղեց
ներկայ հայութիւնը, անհուն թառապան-
քի մտնտերեայ ապրումներով:

Անոր հայրենի հողերը օտնակոխ մը
նացին թուրքին, որ անպատեհի սոճիբը
գործեց ու Նահատակները անթաղ են մին-
չև այսօր:

Անոր իրաւունքները չվերականգնե-
ցան ցարգ: Սակայն այսօր, Նահատակնե-
րու ժառանգորդ չորս ու կէս միլիոն հա-
յեր այդ իրաւունքներուն տէրը կը հա-
ղթանան և միակամ ուխտակներն են
հայկական դատը հետապնդելու:

Հայկական Դատը պատմական հոլո-
գոթով և միջազգային ասեաններով լուծ-
ւած, բայց թրքական արիւնստ օտարով
սովոր կը մնայ, Հայոց հայրենի հողերը
պէտք է օգտագործուին, ու պիտի ազա-
տագործուին միջազգային խնդին վրայ ծան-
րացած անարդարութիւնը վերացնելու և
Սերձաւոր Արևելքին խաղաղութիւն պար-
զեկելու համար:

Պատմական այս ճշմարտութիւնը ըմ-
բռնելի եղաւ շատ յաճախ միջազգային
կենտրոն վարող ուժերուն, բայց անըմ-
բռնելի մնաց միայն թուրքին: Սակայն

պատմութիւնը քաղաքական իր ճանապար-
հը ունի, ու մենք կը կարծենք թէ
Թուրքիան ուշ կամ կանխա քաղաքական
իրադարձութիւններու հարկադրանքին
տակ՝ օր մը պիտի ըմբռնէ իր օխակներն
ու պիտի հարկադրուի ճանչնալ հայ ժո-
ղովուրդի իրաւունքները:


Արգ, այսօր, երբ ամբողջական հայ
ժողովուրդը, հին ու նոր սերունդներով,
ցլուխը կը խոնարհէ իր մէկ միլիոն Նա-
հատակներու անշիրիմ անիւններուն առ-
ջև, ու ինքզինքը իրաւատէրը կը հաշ-
կէ բունգորուուած հայրենի հողերուն,
այդ ԿԱՄԻՆ համապատասխան արժանա-
ւորութեամբ, լրջութեամբ և գիտակցու-
թեամբ պիտի կատարէ այն յուշանշան-
օրը, որուն նմանը արձանագրուած չէ հա-
մայխարհային պատմութեան էջերուն
մէջ:

Խօսքս ուղղելով հայ հայրերուն և
մայրերուն, հայ պատանիներուն և պար-
մանուհիներուն, պիտի օւղէի որ ըստ
իրենց կեցուածքով, ասեւած քայլերով
ու խօսքերով ծանր վեհութիւնը զգան մէկ
միլիոն Նահատակներու սուգին, ու իրենց
աչքերը յառն այն ՎԱԿԱՅԱՅՈՎՈՎ ԱՐՏԱ-
ՆՅԱՅԻՆ, որ պիտի ծագի օր մը, աւելի փա-
ռահողորէն, փարատելով այն սուգը, որ
կ'ապրինք այսօր ցեղովին:

Ազգային վերածնունդի այդ գեյա-
զանց նպատակը նայնքան և աւելի լրջու-
թիւն և արժանաւոր կեցուածք կը պա-
հանջէ մեզմէ, ու մենք ըստ օր սրբաբեկ
մեր խոհուն և վճռական նկարագրէրը յայտ-
նարբելի Ապրիլիան նշեալին այս Երես-
նամակի օգեկոչումին:

Ոգի, վճռական կամք և ծանրախոս
հսկիւն միեւնուելուած պատկերը պիտի
ըլլան մեր քաղաքական գործելակերպին:
Կ. ՍԱՍՈՒՆԻ

Լուս. 6. Կարո Սասունու հեղինակած «Ոգեկոչումին իմաստը» հոդվածը: «Ազդակ» օրաթերթ (Պեկրոյթ), 24 ապրիլի 1965 թ., թիվ 42 (10087):



Լուս. 7. «Ազդակ» օրաթերթի 1965 թ. ապրիլի 26-ի համարի (թիվ 43/10088) առաջին էջը (դրվագ):

գործման ճամբուն վրայ: Պետք է հետապնդել մեր արդար և սուրբ դատը միասնական ճիգերով և ներդաշնակ գործակցությամբ: Միութեան մեջն է որ մեր ոյժերը կը բազմապատկուին և մեր ձայնը կը դառնայ զօրատր և լսելի աշխարհին համար: Եկած է ահա ժամանակը, որ մոռանաք մեր ներքին դաւանական կամ գաղափարական վեճերը և ժամանակատր տարակարծությունները, որոնք խորթ են և վնասակար մեր ազգային գերագույն շահերուն, և աշխատինք մնայուն ու յարաճուն կեանքի և գործի վերածել համազգային մեր այս գործակցութիւնը: ...*Հայ ժողովուրդ, գիւրջիդ միշտ և մի մոռնար, որ ազգեր կան, որոնք կը ծնին մեռնելու համար, և ազգեր ալ կան, որոնք կը մեռնին ծնելու համար. Հայ ազգը անոնցմէ է, որ գիւրէ մեռնիլ ծնելու համար. մեր նահապարակները մեռան որպէս զի մենք ծնինք և Հայրութիւնը ապրի յաւիտեան լընդգծումն իմն է – Հ.Մ.]: Փառք մեր նահատակներուն: Փառք մեր վերածնած Հայ ժողովրդին»²⁸: Խորեն Ա-ն խոսում էր ոչ միայն լիբանանահայության, այլև բովանդակ հայության միասնակա- նության անհրաժեշտության մասին: Դրա վկայություններից էր այն, որ ապրիլի 24-25- ին հիշատակի արարողություններ են տեղի ունենում աշխարհի բազմաթիվ հայաշատ երկրներում/քաղաքներում, այդ թվում՝ Հալեպում, Դամասկոսում, Հոմսում, Լաթաքիա- յում, Քուվեյթում, Կահիրեում, Նիկոսիայում, Նյու Յորքում, Բոստոնում, Լոնդոնում, Փարիզում, Մարսելում, Երևանում, Մոսկվայում, Հունաստանում և Հարավային Ամե- րիկայում: Ամենուրեք հայությունն իր բողոքի ձայնն է բարձրացնում թուրքական իշխա- նությունների դեմ, որոնք չէին ընդունում հայերի զանգվածային կոտորածների փաստը և բնավ չէին մտածում ներողության և կամ արդարության վերականգնման մասին²⁹:*

28 «Վեհափառի խօսքը մարգարանի յուշատօնին», *Ազդակ*, 27 ապրիլի 1965 թ. (թիվ 44/10089):
 29 Բնութագրական է, որ «Ազդակ»-ի՝ 1965 թ. ապրիլի 24-ի համարում տպագրվեց Կոնրադ Ադե- նաուերի գրավոր հայտարարությունը, որում նա վերստին ընդունում էր Գերմանիայի մեղակցություն- նը Հոլոքոստին: Հոդվածը վերնագրված էր՝ «Թուրքիան Առեւտուր մը չունեցա»:

ԽՕՍԲ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Երէկ, Կիրակի 25 Ապրիլին, Պէյրուքի Մարզական Աւանին մէջ, հասարեայ հարգապահութեամբ և ամենալուրջ ու երկիւղած մթնոլորտի մէջ հասարակեցաւ համազգային միասնական ոգեկոչումը Ապրիլեան Եղեռնի Նահատակներու փառապանծ յիշատակին:

Տասնեակ—հազարներով Հայ ժողովուրդը իր գիտակից և հոգեհաղորդ մասնակցութեամբ անգամ մը եւս փաստեց իր քաղաքակիրթ և հոգեկան բարձր արժանիքներու տէր ազգ մը ըլլալու պատուաբեր վարկն ու համբաւը յաջև Լիբանանեան Հայրենիքին Պետական Իշխանութեանց, Լիբանանցի ազնուական ժողովուրդին և տար մամուլի ներկայացուցիչներուն:

Մենք հոգեւին հրճուեցանք երբ երէկ, յետ միջօրէին, մեզի այցելող պետական բարձրաստիճան անձնաւորութիւնները, մասնաւորապէս Վահագնաւ Խառփահին՝ Պր. Շարլ Հելուի անձնական ներկայացուցիչ Տիար Ժորժ Հայմարի և Ն. Վ. Վարչապետ Հատ Հիւսէյն Ուէյնի, որոնք յայտնելէ ետք իրենց ցաւակցութիւնները Հայ ժողովուրդին Եղեռնի Յիշատակի տախթով, ջերմ գնահատանքով արտայայտուեցան և վկայեցին մեր ժողովուրդի քաղաքացիական խոր գիտակցութեան և օրինակելի կեցուածքին մօտին:

Մենք, և մեզի զօրծակից կեդրոնական Գործադիր Յանձնախումբը, խորապէս կը գնահատենք Մեր օրերցեալ ժողովուրդի և մասնաւորապէս իր երիտասարդական հաղթակերպութիւններու զեղեցիկ օգին և կը յայտնենք որ իր պատմութեան արժանի բարձրութեան վրայ մնայ ու աւաւել եւս բարձրանայ Հայ Ազգը ի Սփիւսս աշխարհի:

Թող միշտ ամուր և անխախտ մնայ մեր ժողովուրդին մէջ միասնականութեան այս նուիրական օգին:

Թող Նահատակներուն խնկելի յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան:

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ԻԳՆԱՏԻՈՍ—ՊԵՏՐՈՍ ԺՁ. ՊԱԹԱՆԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ
ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐՁ. ԱՐԵՒԵԼԻՔԻ
ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

26 Ապրիլ 1965

ՅԻՄՆԱՄԵԱԿԸ
ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Լուս. 8. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի, Հայոց Կաթողիկէ պատրիարքի, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցու նախագահի ստորագրոյթամբ լույս տեսած «Խօսք գնահատանքի» հրատարակումը: «Ազդակ» օրաթերթ (Պէլրոս), 27 ապրիլի 1965 թ., թիվ 44 (10089):



Լուս. 9. Դրվագ «Ազդակ» օրաթերթից: 24 ապրիլի 1965 թ., թիվ 42 (10087):

«Ի՞նչն էր հիշվում» և «ինչպե՞ս էր հիշվում» շարքում բնութագրական էր ոչ միայն կորուստների շեշտադրումը: Այսպես, «Ազդակի» ապրիլի 24-ի համարում երկու հարակից էջերի պարագծով մեկ «Յարգանք մեր անմահ նահատակներուն» վերնագրի ներքո տեղադրվում են 50 տարի առաջ արքայազն և նահատակված 61 հայ մտավորականների նկարները: Մինչդեռ էջերի միջնամասում Հայոց ցեղասպանության հինգ գլխավոր պատասխանատուների նկարներն էին՝ «Հայ ժողովրդի ոճրապարտ դահիճները» վերտառությամբ, իսկ կողքը՝ «Հայ ժողովուրդի վրիժառու բազուկները» վերնագրի ներքո՝ վեց հայրենասերների լուսանկարները, որոնք իրականացրին դահիճների նկատմամբ կայացրած մահվան դատավճիռները (լուս. 9): Այսինքն՝ առաջ է քաշվում այն միտքը, որ հայոց նկատմամբ իրականացրած ոճրագործությունների պատասխանատուներն ի վերջո ստանում են իրենց արժանի պատիժը:

Արդար դատաստանի, արդար հատուցման անհրաժեշտության և անխուսափելիության գաղափարը թերևս այն հիմնական գործոններից էր, որ տարիներ անց ծնունդ է տալիս «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին»: 1975 թ. հունվարին տեղի է ունենում ՀԱՀԳԲ-ի ծնունդն ազդարարող վրիժառուական զինված պայքարի առաջին գործողությունը: Հետագա տարիներին (մինչև 1984 թ.) զինված պայքարի բիրտ ձևերի հիմնական թիրախներն էին տարբեր երկրների թուրքական ներկայացուցչությունների պատասխանատու աշխատակիցները, թուրքական օդանավային ընկերությունների գրասենյակները, ինչպես նաև այն արտասահմանյան կազմակերպությո-

յունները, որոնք ֆինանսական կամ ռազմական օժանդակություն էին տրամադրում թուրքական պետությանը: Պայքարի այս ուղղության հիմնական նպատակն էր համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության փաստին, ստիպել Թուրքիային ընդունել այն, բարձրացնել հայրենագրկված արևմտահայության և Արևմտահայաստանի ճակատագրի հարցը³⁰:

Աշխարհի բազմաթիվ երկրներում ապրիլի 24-ը նշվում է նաև քայլաբարձվող դեպի Թուրքիայի դեսպանություն կամ հյուպատոսարան և դրա դիմաց անցկացվող բողոքի ցույցով, երբեմն և թուրքական դրոշ այրելով:

Ապրիլի 24-ի նշումը մեծ հանդիսավորությամբ ու քաղաքական ակտիվությամբ է իրականացվում ԱՄՆ-ի հայաշատ համայնքներում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայոց ցեղասպանության հիշողությունը նշանակալի դեր է խաղում ԱՄՆ-ի հայ համայնքի քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքում³¹: Հայոց ցեղասպանության իրողության ճանաչմանն ուղղված քայլերն ամերիկահայության մեջ գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների լոբբիստական գործունեության հիմնական առանցքներից են, եթե ոչ ամենահիմնականը: Դրա ամենավաղ ցուցիչներից են ԱՄՆ-ի նախագահների ամենամյա ապրիլքսանչորսյան ուղերձները երկրի հայ քաղաքացիներին, որոնց մեջ, սակայն, չի օգտագործվում «ցեղասպանություն» բառը³²: Համայնքի դերի գիտակցումը շատ հաճախ պայմանավորված է լինում նրանով, թե իրենց գործունեության արդյունքում քաղաքային, նահանգային կամ դաշնային մակարդակի այս կամ այն քաղաքական գործիչը կամ կազմակերպություններն ինչպես արտահայտվեցին կամ ինչ քայլեր ձեռնարկեցին ի պաշտպանություն հայոց պահանջների արդարացիության: ԱՄՆ-ի դատական համակարգերը ժամանակ առ ժամանակ հնարավորություն են ընձեռում Յեղասպանության զոհերի ժառանգներին իրավական հարթություն տեղափոխելու իրենց պահանջները, ինչը նույնպես մեծ արձագանք է զբաղում համայնքի ներսում, ընդհանրապես համայն հայության մեջ: ԱՄՆ-ի տարածքում կան Հայոց ցեղասպանությանը նվիրված շուրջ երկու տասնյակ փոքր ու մեծ հուշարձաններ³³, դրանց մի մասի մոտ ամեն տարվա ապրիլին կայանում են հիշատակի միջոցառումներ: ԱՄՆ-ում է գործում Ցեղասպանության դասավանդման նախագիծը (Genocide Education Project), որը թերևս եզակի է իր բնույթով: Տեղի համալսարաններում կան հայկական ամբիոններ, որոնց գործունեությունը մի որոշակի մասով ուղղված է Հայոց ցեղասպանության հետազոտմանը:

30 Տե՛ս Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը*, 276-277:

31 Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը», *Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում. գիտաժողովի նյութեր*, խմբ.՝ Արամ Միմոնյան, Պոլ Հայտոսյան, Անդրանիկ Տազեյան, Յուրի Ավետիսյան (Երևան, ԵՊՀ հրատ., 2013), 42-54:

32 Հարցի շուրջ տե՛ս, օրինակ՝ Մուրեն Չոլյան, *ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խոստանալիղ դիսկուրսի իմաստաբանական վերլուծություն)* (Երևան, «Լիմուշ» հրատ., 2015):

33 Դրանց քանակով ԱՄՆ-ը զիջում է լոկ Հայաստանի Հանրապետությանը, Ֆրանսիային ու Ռուսաստանի Դաշնությանը: Հմմտ. *Ցալի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ* (Երևան, 2010):

Այստեղ պարբերաբար կազմակերպվում են գիտաժողովներ Հայկական հարցի տարբեր եզրերի շուրջ: Մի խոսքով, ԱՄՆ-ի հայ համայնքի *հայկական* ինքնության ձևավորման ու պահպանման մեջ Հայոց ցեղասպանության հիշողությունն ունի խիստ նշանակալի դերակատարություն: Մեր համոզմամբ ԱՄՆ-ի՝ սփյուռքահայության մեջ առկա Հայոց ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը բավականին ակտիվ և արդեն ոչ միայն «ազգապահպան», այլ նաև «*ազգասարեղծ*» գործոնի դերակատարություն ունի:

ԱՄՆ-ում ապրիլի 24-ի հիշատակի արարողություններն անց են կացվում ինչպես զանգվածային քայլարշավներով, այնպես էլ համայնքների ու հայազգի անհատ բարերարների միջոցներով կառուցված հուշարձանների մերձակայքում: Սակայն հուշարձանները մեր գնահատմամբ առավելապես ուղղված են համայնքի անդամներին, և դրանց քարոզչական արժեքը երկրի քաղաքացիների համար համեմատաբար ցածր է: Հուշարձանի միջոցով Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է կամ հուշարձանի վրա առկա գրությամբ, կամ հայազգի մարդկանց հետ անձնական շփումների և կամ գրքերից, մամուլից ու համացանցից տեղեկատվություն քաղելու ճանապարհով: Հուշարձանի համեմատ զգալիորեն մեծ է թանգարանի քարոզչական արժեքը³⁴:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա հետագա նշումները Խորհրդային Հայաստանում, հիշատակի օրվա ամրագրումը օրենքով

Եղեռնի զոհերի 60-ամյակի առթիվ Հայաստանի կուսակցական ղեկավարության ներկայացմամբ և Մոսկվայից ստացված թույլտվությամբ հանրապետության կուսակցական-պետական ղեկավարությունը 1975 թ. ապրիլի 24-ին՝ առավոտյան ժամը 10-ին, ծաղկեպսակներ դրեց Ցեղասպանության զոհերի հուշարձանի անմար կրակին, խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը հանդես եկավ հեռուստատեսությամբ, իսկ ժամը 19-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով Ցեղասպանության զոհերի հիշատակը հարգվեց մեկ րոպե լռությամբ³⁵:

1985 թ. հունվարին Կ. Դեմիրճյանը դիմում է ԽՄԿԿ կենտկոմ՝ ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով որպես «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով: Սակայն Քաղբյուրոն մերժում է այդ խնդրանքը: 1987 թ. նմանատիպ երկրորդ խնդրանքն էլ է մերժվում: Նույն հարցի շուրջ 1988 թ. սեպտեմբերին դիմում է նաև ՀԿԿ կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը: Այս անգամ պատասխանը դրական էր, քանի որ Հայաստանում թափ էր հավաքում Ղարաբաղյան շարժումը, և անկում էր ապրում Մոսկվայի դերակատարությունը³⁶: 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խոր-

34 Հարցի մանրամասն քննարկումը տե՛ս Մարության, «Թանգարան և հուշարձան»:

35 Տե՛ս «Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ», *ՊԲՀ* 2 (1975), 79-80: Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 126:

36 Մանրամասն տե՛ս Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը*, 128-133:

հուրդն ընդունում է օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» և ապրիլի 24-ը հայտարարում «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր» (1989 թ.-ից այն ոչ աշխատանքային օր է)³⁷: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացվում է առաջարկություն հայերի՝ 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին, որը մնում է անպատասխան:

Ղարաբաղյան շարժումը և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա բովանդակային փոփոխությունը

1980-ական թվականների կեսերին ԽՄԿԿ ղեկավարության կողմից հռչակված վերափոխումների, դեմոկրատացման և հրապարակայնության քաղաքականությունը Հայաստանում մի քանի տարի անց դրսևորվեց Ղարաբաղյան շարժմամբ, որն ավելի ճիշտ կլինի անվանել «Հայկական հեղափոխություն», քանի որ այն իր արդյունքներով հանգեցրեց հեղափոխական բնույթի վերափոխումների հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում³⁸:

Շարժման սկիզբը (1988 թ. փետրվարի 20) պայմանավորված էր Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի գերազանցապես հայաբնակ ինքնավար մարզի բնակչության պահանջով մարզը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին վերամիավորելու խնդրի շուրջ: Որպես հիմնական փաստարկ՝ առաջ էր քաշվում Ստալինի ճնշմամբ 1921 թ. պատմականորեն անարդարացի որոշման ընդունումը Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան տարածաշրջանային միավորի կողմից: 1988 թ. փետրվարին Երևանում սկսվեցին զանգվածային հավաքներ, որոնք, ժամանակ անց ընդգրկելով հայաստանյան հասարակության ամենալայն շերտերը, հայտնի դարձան «Ղարաբաղյան շարժում» ձևակերպմամբ (1988 թ. փետրվար – 1990 թ. օգոստոս):

Ի պատասխան առաջ քաշված իրավական պահանջների՝ Ադրբեջանի մայրաքաղաքից 25-30 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988 թ. փետրվարի 27-29-ին խորհրդային զորամիավորումների առկայությամբ տեղի ունեցան զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում դաժանորեն սպանվեցին հայ ազգության 26 քաղաքացի (պաշտոնական տվյալներով): Հայերին ծեծում էին, խոշտանգում, բռնաբարում, դուրս նետում պատուհաններից, սպանում ամրանաձողերով ու դանակներով, կտրատում կացիների հարվածներով, գլխատում, այրում խարույկներում... Այս գործողությունները, սակայն, ՏԱՍՄ-ի պաշտոնական հաղորդագրության մեջ ներկայացվում էին այսպես. «...մի խումբ խուլիգանական տարրեր անկարգություններ են հրահրել: Տեղ են գտել սանձարձակության ու բռնության դեպքեր»³⁹: Սումգայիթում հայերի կոտորածը ԽՍՀՄ դատախազության կողմից ևս որակվեց

37 *Գրական թերթ* (Երևան), 28 ապրիլի 1989 թ. (թիվ 18):

38 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները», *Համբարձում Գալստյան, Չուղարկված նամակներ* (Երևան, 2013), էջ 9-17: Տե՛ս նաև՝ Մարության, *Հայ ինքնության պարկերազրությունը*, 313:

39 «Сообщение», *Правда*, 1 марта 1988 (61/25413). «Հաղորդագրություն», *Գրական թերթ*, 4 մարտի 1988 թ. (10/2378):

որպես «խուլիգանական տարրերի գործողություններ», «սպանություններ խուլիգանական բնույթի մղումներից»: Մինչդեռ, ինչի մասին վկայում են բազմաթիվ փաստեր, հայերի ջարդերը կազմակերպված էին նախօրոք և իրականացվում էին որոշակի ծրագրի համաձայն: Դրանց նպատակն էր շրջափակել դարաբաղյան հնարավոր լուծումը, ահաբեկել հայերին ու մասնավորապես միութենական իշխանություններին՝ նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով և հարկադրել նրանց հրաժարվել Ղարաբաղի հարցի արդարացի լուծումից⁴⁰:

Մուճգայիթյան դեպքերը հայության մեջ վերստին արթնացրին նաև 1915 թ. ցեղասպանության մասին «նիբիող» հիշողությունը: Այդ ժամանակվանից Շարժման մեջ ցեղասպանության թեման աստիճանաբար ձեռք բերեց գերակայող ուղղություն: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, թե ինչպես 1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում իրականացված ցեղասպանության և 1988-1990 թթ. Ադրբեջանում ցեղասպանություն որակված իրադարձությունների՝ որպես ցեղասպանություն ճանաչմանը, այն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտմանը, հնարավոր մեղավորների մատնանշմանը, նրանց նկատմամբ տարվող դատավարությանը գնահատական տալուն ուղղված պայքարը բերում էր ժողովրդական զանգվածների քաղաքական հասունության աճի, դարերի և տասնամյակների ընթացքում ձևավորված կարծրատիպերի փոփոխման, անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացին, իսկ ապագա ցեղասպանություններից խուսափելու նպատակով գիտակցվում էր հասարակության մեջ արմատական քաղաքական վերափոխումների անհրաժեշտությունը⁴¹: Այս ամենն իր յուրահատուկ դրսևորումն էր ունենում ապրիլքսանչորսյան քայլերթերում տարվող և ցեղասպանության հուշահամալիր բերվող ցուցապատատներում:

Շարժման տարիներին ցեղասպանության հիշողության գործոնը դարձավ այն շարժիչ ուժը, որը հնարավորություն ընձեռեց քայլ առ քայլ փոխելու հին կարծրատիպերը և պատկերացումները, ձևափոխելու հին արժեքների վրա հենված ինքնությունը և աստիճանաբար ձևավորելու նոր ինքնություն, իրականացնելու ժողովրդավարական վերափոխումներ: Այսինքն՝ այն գործոնը (ցեղասպանության հիշողություն), որը երբեմն մեկնաբանվում է իբրև «անցյալի կապանքներից» ազատվելն ու այդպիսով հայության իրական առաջընթացը խոչընդոտող «հետադիմական» միջոց, հայաստանյան իրականության մեջ դարձավ առաջադիմության ամենակարևոր խթանիչը: Այս երևույթի արդյունքներից մեկն էլ այն էր, որ *արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշն իր տեղը զիջեց մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով*: Այլ կերպ ասած, Հայաստանում հաղթահարվեց զոհի բարդույթը, ինչի հետևանքն ու արդյունքը Հայաստանի անկախության հռչակումն էր և Արցախի ազատագրության համար մղվող պայքարի հաջողությունը⁴²:

40 Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, 125:

41 Նույն տեղում, էջ 308:

42 Նույն տեղում, էջ 308-309: Տե՛ս նաև՝ Հարություն Մարության, Ցեղասպանության զոհի բարդույթի հաղթահարումը Ղարաբաղյան շարժման տարիներին, *Վէմ համահայկական հանդես* 1 (2013), 154-164:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա նշումը հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համատեքստում

1968 թ. ապրիլի 24-ին ժողովուրդը դուրս եկավ ոչ թե մայրաքաղաքի կենտրոնական փողոցներ ու հրապարակներ, այլ կազմակերպված շարասյուներով շարժվեց դեպի քաղաքի ծայրամասը, որպեսզի ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնի ցեղասպանության զոհերի հուշարձանին: Այդպիսով, 1965 թ. ապրիլի 24-ի զանգվածային ելույթները հաջորդ տարիներին ձևափոխվեցին ոչ պաշտոնապես թույլատրված սգո երթերի: 1970-ականների կեսերից այդ երթերը փաստորեն գլխավորում էին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները, ովքեր վաղ առավոտյան առաջին ծաղկեպսակն էին դնում հուշարձանին՝ դրանով իսկ (ինչպես նաև Լոռիյան բուպեով) պետական հնչեղություն տալով Մեծ եղեռնի զոհերի հիշատակի սգատոնին: Այս երթերի ժամանակ զգացմունքների գրավոր և պատկերային հրապարակավ դրսևորումների բացակայությունը (ծաղկեպսակներից զատ) մասամբ լրացվում էին սգո երթի առանձին մասնակիցների բանավոր ստեղծագործություններով. մարդիկ կարդում կամ արտասանում էին հայրենասիրական, ինչպես նաև անմիջականորեն ցեղասպանություն թեմային առնչվող բանաստեղծություններ, հատվածներ պոեմներից և այլն:

Մեր համոզմամբ արդեն կես դար շարունակ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր իրականացվող ամենամյա երթերում և հիշատակի ծեսերում ակնառու դրսևորվում է հուշահամալիրի՝ որպես գերեզմանոց ընկալումը⁴³: Նախ՝ նկատենք, որ Ծիծեռնակաբերդի բարձունքին դեռևս 1920-ական թթ., ինչպես և Ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանի կառուցման աշխատանքների ընթացքում, հայտնաբերվել են ուշ բրոնզի դարի գերեզմաններ՝ դամբարաններ: Պաշտոնական մեկնաբանություններում հավերժական կրակով հիշատակի սրահը նույնպես ներկայացվում է որպես դամբարան: Հուշահամալիրի ճարտարապետներից Սաշուր Քալաշյանի ներկայացմամբ հուշահամալիրի առջևի «պատվանդանը [հարթակը - Հ.Մ.] նախագծվում էր որպես տապան 1,5 միլիոն զոհերի համար, որոնք չունեցան գերեզման»: Հետաքրքիր է, որ ՀԿԿ կենտկոմի նախագահությանը դեռևս 1964 թ. հուլիսին ուղղված մի քանի ճանաչված մտավորականների նամակում Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցումն առաջարկվում էր իրականացնել «բնակչության միջոցների հաշվին»: Նկատենք, որ հայոց մեջ գերեզմանոցը ևս ավանդույթի ուժով բարեկարգվում էր համայնքի անդամների հանգանակությունների կամ պարզապես համայնքի (այլ ոչ պետական) բյուջեի հաշվին:

43 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով)», *Հայ ժողովրդական մշակույթ XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի*, խմբ.՝ Դերենիկ Վարդումյան, Սարգիս Հարությունյան, Սուրեն Հոբոյան (Երևան, 2006), 172-180: Арутюн Марутян, «Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа», *Этнографическое обозрение* 3 (2008), 119-128: Նույնի՝ *Հայ ինքնության պարկերագրությունը*, 72-78: Նույնի՝ «Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համատեքստում», *Ճարտարապետություն, շինարարություն* 4 (2009), 8-12: Նույնի՝ «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *ՊՐՀ* 2 (2011), 42-44:

Հայոց եկեղեցական տոնացույցը ենթադրում է, որ ամեն տաղավար տոնին հաջորդում է Մեռելոց, երբ մարդիկ, մասնավորապես ովքեր հենց այդ տարի են կորցրել իրենց հարազատին կամ բարեկամին, այցելում են գերեզմանոց նրա շիրիմին: Սակայն տարվա մեջ կա մեկ ավանդական սգատոն (սեպտեմբերի 14-ին նախորդող կամ հաջորդող կիրակի օրը)՝ Սբխեչ, Սուրբ Խաչ կամ Խաչվերաց, երբ այցելությունը գերեզմանոց ցանկալի (պարտադիր) էր հանգուցյալ ունեցող բոլոր մարդկանց համար: Այդ օրը գերեզմանոցում ավանդաբար կատարվող արարողություններից մեկը քահանայի գերեզմանօրհներքն է: Այս առումով բնութագրական է, որ Եղեռնի զոհերի հուշարձան ևս մարդիկ այցելում են, որպես կանոն, տարին մեկ անգամ որոշակի գրանցված օր (ապրիլի 24-ին), և այն ուղեկցվում է հայոց եկեղեցու հովվապետի յուրատեսակ գերեզմանօրհներքով՝ «Հայր մերի» աղոթասացությամբ հավերժական կրակի մոտ:

Ոչ մեծ բնակավայրերում թաղման թափորը, որպես կանոն, ուղևորվում է գերեզմանոց, որքան էլ այն հեռու լինի, ոտքով: Այդ սովորույթն ինչ-որ չափով, հատկապես ավանդապահ գյուղերում, պահպանվել է նաև մեր օրերում: Նույն կերպ և Եղեռնի զոհերի հուշահամալիրի պարագայում այցելությունն իրականացվում է ոտքով, նման պահանջ է դրվում անգամ արտասահմանյան պատվիրակությունների առջև, ու միայն բացառիկ դեպքերում, երբ այցելուն ֆիզիկապես խիստ դժվարանում է (ինչպես Հոռմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդի դեպքում էր), նա մոտենում է հուշարձանին ավտոմեքենայով: Եկատենք, որ որոշ գյուղերում դեռևս պահպանվում է մեքենայով հանգստարան-գերեզմանոցի տարածք չմտնելու սովորույթը:

Գերեզմանոցում մարդիկ ծաղիկներ են դնում հանգուցյալի շիրիմին, իսկ Եղեռնի զոհերի հուշահամալիրում՝ հավերժական կրակի շուրջը (լուս. 10) կամ ծաղկեպսակներ՝ հուշարձանի՝ դեպի կենտրոն խոնարհված բազալտե պիլոններին: Ընդհանրապես շիրիմին թե հավերժական կրակի շուրջը ծաղիկ դնելը կառուցվածքային առումով թերևս համազոր է հանգուցյալի հետ խորհրդանշական կապի մեջ մտնելուն, լայն առումով՝ անցյալն ու անցավորներին հիշելուն, չմոռանալուն, ինչը երբեմն դրսևորվում է նաև այլ կերպ՝ տապանաքարին ձեռքով հպվելով կամ էլ այն համբուրելով: Հայերի մեջ ընդունված է, որ հուղարկավորության ընթացքում գերեզմանոցում՝ գերեզմանի փոսի մոտ, դնում են հանգուցյալի նկարը, որն արարողության ավարտին հետ են տանում: 1988 թ. ապրիլի 24-ին Եղեռնի զոհերի հավերժական կրակի մոտ շրջան կազմած պահվեցին, ապա ծաղիկների խրճերի մեջ դրվեցին ոչ միայն Մեծ եղեռնի զոհ հայ մի քանի մտավորականների, այլև Սումգայիթի զոհերի մեծադիր լուսանկարները: Այդ օրը, ինչպես վավերագրական կադրերն են վկայում, մի քանի կանայք սզալով լաց էին լինում հուշարձանի կրակի մոտ, ինչպես կսգային հանգուցյալի գերեզմանի մոտ: Լուսանկարներն այդպես մնացին շուրջ երկու շաբաթ, ապա հանվեցին:

Եթե գերեզմանոցում դրված ծաղկեպսակները երիզող ժապավենները հավաքում էր հանգուցյալի «տերը» ու 7 կամ 40 օր անց դնում գերեզմանաթմբի մեջ, ապա Եղեռնի զոհերի հուշահամալիրում այդ ժապավենները հավաքում են մերձակայքում գտնվող «հանգուցյալի տիրոջ»՝ նաև հուշահամալիրի հսկողությունն ու պահպանությունն իրականացնող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակիցները ու պահպանում թանգարանի ստորգետնյա պահոցներում:



Լուս. 10. Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան, անմար կրակի մոտ: Երևան, 24 ապրիլի 2016 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 11. Մարդկանց երթը դեպի Ցեղասպանության զոհերի հուշարձան: Երևան, 24 ապրիլի 2018 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, հարյուր հազարավոր մարդիկ այցելում են Եղեռնի զոհերի հուշարձան (լուս. 11): Ճանապարհին նրանք միշտ չէ, որ լուռ են և միշտ չէ, որ պահպանվում է սգավորի պահվածքը. նրանք զրուցում են ամենատարբեր թեմաների շուրջ և, որպես կանոն, միայն հուշարձանի անմիջական մոտակայքում են լուռ: Նկատենք, որ նմանատիպ պահվածք է նաև առօրեական թաղման թափոռներում. այստեղ հաճախ հանդիպում են մարդիկ, ովքեր ամիսներ կամ անգամ տարիներ միմյանց չեն տեսել, նրանք կիսվում են նորություններով, զրուցում են կենցաղային թեմաներից, կատակներ են անում, հիշում անցած-գնացած օրերը, երբեմն էլ հիշում են հանգուցյալի այս կամ այն արարքները: Գրեթե նույնն է պահվածքը նաև հագուստի պարագայում. երկու դեպքում էլ մարդիկ (հատկապես միջին և բարձր տարիքի) գերադասում են կրել մուգ գույնի, համեմատաբար զուսպ, աչք չծակող զգեստներ, չնայած վերջին տարիներին զգեստի գույնը կարծես թե այնքան էլ էական չէ:

Հանգուցյալի տանը հոգեհանգստի ժամանակ հնչում է ձայնագրված երաժշտություն, հաճախ հրավիրվում են երաժիշտներ կենդանի կատարման համար: Նմանատիպ երևույթներ տեղ են գտել նաև ցեղասպանության զոհերի հուշահամալիրի տարածքում. մի քանի տարի հուշարձանի մերձակայքում նվագախմբի կամ երգչախմբի ելույթներ էին կազմակերպվում: Նկատենք, որ գերեզմանոցում ևս ինչպես թաղման, այնպես էլ հիշատակի օրերին ընդունված է «կենդանի» երաժշտության կատարումը (դուդուկ, զուռնա, կլառնետ, դիոլ, դրանց ուղեկցությամբ երգելը) շիրիմի մոտ:

Հայոց ավանդական գերեզմանոցներում կամ դրանց մերձակայքում, որպես կանոն, լինում են մատուռներ, փոքր եկեղեցիներ: Ցեղասպանության զոհերի հուշահամալիրի տարածքում մատուռ չկա, սակայն այդ «բացթողումը» կարծես թե գիտակցվել է եկեղեցու կողմից, և 2005 թ. ապրիլի 24-ին հուշարձանի մերձակայքում Մայր Աթոռի կողմից տեղադրվեց մի հուշաքար՝ հետևյալ արձանագրությամբ. «Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առթիվ, Ծիծեռնակաբերդի նվիրական այս բարձունքին համազգային ընծայաբերությամբ ընդգծումն իմն է - Հ. Մ.] կառուցվելու է մատուռ-սրբատեղի ի հիշատակ բյուրավոր նահատակների: Օրհնություն մեկ և կես միլիոն անմեղ զոհերի լույս հոգիներին»:

Հայերենում «գերեզմանատուն» բառի հոմանիշներից է «հանգստարան» եզրաբառը, որը բացատրվում է որպես «մեռելների հանգստի տեղ», ուստի և անհրաժեշտ էր նկատվում չխաթարել ննջեցյալների հանգիստը նրանց անմիջական հարևանությամբ աշխարհիկ շինությունների կամ աղմկոտ զվարճանքի վայրերի տեղակայմամբ: Ժամանակին հասարակության կողմից մեծ ընդդիմության արժանացավ Ծիծեռնակաբերդի տարածքում մարզահամերգային համալիրի կառուցման մասին որոշումը, ապա և կառուցումը. այդ երևույթն ընկալվում էր որպես սրբապղծություն: Երկար տարիներ քննադատվում էր Ցեղասպանության հուշահամալիրի սկզբնամասում տեղակայված «Հավանա» ռեստորանի գործունեությունը:

1988 թ. ապրիլի 24-ին Յեղասպանության հուշահամալիրի մաս կազմող հուշապատից մոտ 50 մ հեռավորության վրա տեղադրվեց Սումգայիթի ջարդերի զոհերին նվիրված խաչքար՝ 26 փոքր խաչերով, որոնք խորհրդանշում էին պաշտոնապես հայտարարված 26 հայագզի զոհերին: Խաչքարը հուշահամալիր բերվեց մարդկանց ուսերի վրա: Այն մեր կարծիքով ավելի շուտ խորհրդանշում էր գերեզմանոցային խաչքար, քան թե խաչքար-հուշարձան: Խաչքարն անմիջապես հեղեղվեց ծաղիկներով ու ծաղկեպսակներով: Այստեղ ծաղիկներ են դրվում ոչ միայն ապրիլի 24-ին, այլ նաև փետրվարի 27-29-ի միջակայքում՝ կոտորածների տարելիցներին: Շուտով Սումգայիթի զոհերին նվիրված խաչքարի կողքին հայտնվեցին երկու այլ խաչքարեր՝ նվիրված «1988 թ. արցախյան գոյամարտի Գանձակի նահատակներին» և 1990 թ. Բաքվի հայության հունվարյան ջարդերի զոհերին: Որպես կանոն, երեք հուշարձան միմյանցից հինգ-վեց մետր հեռավորության վրա չեն դրվում: Յեղասպանության հուշահամալիրի այս հատվածն ավելի շուտ ադրբեջանահայության կոտորածների զոհերին նվիրված փոքր կենտոսաֆային գերեզմանոց է հիշեցնում (լուս. 12):

Յեղասպանության կամ ընդհանրապես զոհերի հուշարձանների՝ որպես գերեզմանոց ընկալելու դրսևորումներից մեկն էլ այն է, որ 1990-92 թթ. Յեղասպանության զոհերի հուշարձանի մերձակայքում հողարկավորվեցին հայ-ադրբեջանական կոնֆլիկտի



Լուս. 12. Սումգայիթի, Բաքվի և Գանձակի զոհերին նվիրված խաչքար-հուշարձաններ Յեղասպանության հուշահամալիրի տարածքում: Երևան, 24 ապրիլի 2016 թ.:
Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:



Լուս. 13. Հայոց ցեղասպանության զոհերի հուշապատի մոտ 1990-1992 թթ. հուղարկավորված հայ-ադրբեջանական ընդհարումների հինգ զոհերի գերեզմանները: Երևան, 24 ապրիլի 2011 թ.: Լուսանկարը՝ Հարություն Մարությանի:

հինգ զոհեր (լուս. 13): Երանցից առաջին երկուսը 1990 թ. հունվարին Նախիջևանի սահմանում (Երասխավանի հատված, հունվարի 18-21) ադրբեջանցիների հարձակումը հետ մղելիս զոհված *Մուխես Գորգիսյանը* («Ազգային ինքնորոշում միավորում» կազմակերպության վարչության անդամ) և *Երվանդ Սաղումյանն* (ինքնապաշտպանական առաջին մարտերի մասնակից) էին: Դրանից ընդամենը մեկ շաբաթ հետո՝ հունվարի 28-ին, ինչպես նշվում է պաշտոնական հաղորդագրության մեջ, Երևանում «...զինվորական ստորաբաժանումը, առանց պետական իշխանության հանրապետական մարմինների համաձայնության, անց է կացրել ռազմական տեխնիկայի առգրավման գործողություն, որի ընթացքում զենք է գործադրվել, և զոհվել է «Աստրո» արտադրական միավորման բանվոր Է. Մարկոսյանը»⁴⁴: *Էրոսարդ Մարկոսյանը* նույնպես հուղարկավորվում է հուշահամալիրի տարածքում: Այստեղ ավելի քան մեկ տարի անց հողին հանձնված մյուս ազատամարտիկը ՄՈՒՇ-ի (ինքնուրույն գործող 19 ջոկատների միավորում՝ Միավորված ուժերի շտաբի) ընդհանուր հրամանատար, բազմաթիվ ինքնապաշտպանական մարտերի մասնակից, 1991 թ. մայիսի 4-ին Մուսես գյուղի մատույցներում զոհված *Մուշեղ Մխոյանն* (Վոժո) էր: Եվս ավելի քան մեկ տարի անց այստեղ հուղարկավորվեց հինգերորդ ազատամարտիկը՝ 1989-1990 թթ.

44 Տե՛ս «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունում», *Երեկոյան Երևան*, 1 փետրվարի 1990 թ.:

«Մասունցի Դավիթ» կամավորական ջոկատի շտաբի պետ, ապա «Մասնա ծներ» ջոկատի հրամանատար *Սամվել Գևորգյանը*: Շա, կրակն իր վրա վերցնելով, կյանքի գնով փրկել էր շրջապատման մեջ ընկած «Նաիրի» ջոկատի տղաներին (1992 թ. հուլիսի 3):

Նկատենք, որ արդեն այդ ժամանակ՝ 1992 թ. մայիսի 26-ին, հաստատվել էր «Եռաբլուր» պանթեոնի՝ որպես գերեզմանատան կարգավիճակը, ու թերևս այս հանգամանքը նպաստեց, որ Յեղասպանության հուշահամալիրի տարածքում այլևս թաղումներ չկատարվեցին: Եթե առաջին երկու հուղարկավորություններն ինչ-որ կերպ կարելի է կապել Բաքվում հայության՝ ցեղասպանություն ընկալվող զանգվածային կոտորածների հետ ժամանակային իմաստով համընկնելուն, ապա մյուս թաղումները, ինչպես մեզ է թվում, կապվում էին այդ ժամանակաշրջանի իրողությունների հետ, որի բնութագրական գծերից էր մինչև ութ տասնյակ կամավորական ջոկատների⁴⁵ ազդեցության համեմատաբար բարձր մակարդակը, ինչը պայմանավորված էր այն փաստով, որ նրա՛նք էին ապահովում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը: Չմոռանանք, որ Հայկական բանակի կազմավորման օր է համարվում 1992 թ. հունվարի 28-ը, երբ որոշում ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին»⁴⁶: Այսինքն՝ Հայաստանի նորաստեղծ Հանրապետության իշխանությունների կազմակերպչական ձեռնարկումների և անտղղակի, բայց ակտիվ միջամտությունն էր, որ կատարեց Յեղասպանության հուշահամալիրի տարածքում թաղումներ կատարելու գործընթացը⁴⁷:

Հայոց մեջ ավանդույթ է, որ հուղարկավորությունից հետո գերեզմանի մոտ խորհրդանշական, իսկ հանգուցյալի տանն արդեն տասնյակ, երբեմն նաև հարյուրավոր մարդկանց հոգեհաց է մատուցվում: Նմանատիպ մի երևույթի ակնատես եղանք 2005 և 2006 թթ. ապրիլի 24-ին (նաև մի քանի տարի անց), երբ մի կին դեպի հուշարձան տանող ճանապարհի միջնամասում զանազան խորտիկներով ու զովացուցիչ ըմպելիքներով սեղան էր բացել, կից տեղադրված պաստառին էլ գրված էր. «Հարգելի հայրենակիցներ. անմեղ զոհերի հիշատակին մատուցվում է *անվճար հոգեհանգստի հաց* Սիլվա Եղիազարյանի կողմից», ու նշված էին նրա հեռախոսահամարները: Բնութագրական է այս համատեքստում «անվճար» բառի առկայությունը: Քաղաքային կենցաղում հոգեհացը կապ չունի ինչ-ինչ վճարումների հետ:

45 ՀՀ պաշտպանության նախարարություն. պատմական ակնարկ, <http://www.mil.am/hy/68/71/288>, դիտվել է 04.01.2019:

46 Նույն տեղում: Այստեղ նշված էր, որ Հայոց բանակի կազմավորման առաջին փուլն ավարտվում է 1992 թ. մայիսին, երբ Պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին գորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

47 Նկատենք, որ նման երևույթներ տեղ են գտել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի մի շարք այլ հուշարձանների տարածքներում նույնպես: Հարցի շուրջ տե՛ս Հարություն Մարության, «Գերեզմանոցային մշակույթի դրսևորումները հայոց հուշարձանային համալիրներում (20-րդ դարի վերջ – 21-րդ դարի սկիզբ)», զեկուցում կարդացված *Թաղման ծեսը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (Հայկական լեռնաշխարհ և Հարավային Կովկաս)* գիտաժողովում, կազմակերպված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2018 թ. մայիսի 21-24-ին (անտիպ):

Մինչդեռ գյուղական իրականության մեջ, որտեղ ընդունված է համայնքի ակտիվ դրամական օգնությամբ (ինչն անգամ գրանցվում է հատուկ տետրակներում) օժանդակել հանգուցյալի հարազատներին հոգալու թաղման ծախսերը, հոգեհացին, որպես կանոն, մասնակցում են այն մարդիկ, որոնք այս կամ այն չափով մասնակցել են դրամական հանգանակությանը: Մեզ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ, որոնք ի վիճակի չեն եղել դրամ տալու, խուսափել են հոգեհացին մասնակցելուց:

Վերջապես, հայոց մեջ ընդունված է շիրիմների առջև ինչ-ինչ երդումներ ու խոստումներ տալ: Պատմական հիշողության բանավոր փոխանցման նման երևույթի ակնատես եղանք 2005 թ. ապրիլի 25-ին, երբ մի շարք դպրոցների ուսուցիչներ ծնողների ուղեկցությամբ հուշահամալիր էին բերել ցածր դասարանների աշակերտների: Երեխաները հավերժական կրակի մոտ արտասանում էին «Հայր մեր»-ը, հայրենասիրական բանաստեղծություններ ու խոստանում չմոռանալ, վառ պահել անմեղ զոհերի հիշատակը:

Այսպիսով, բերված օրինակները վկայում են, որ Ցեղասպանության զոհերի հուշահամալիր ամենամյա քայլերթերում միավորվում են կոլեկտիվ հիշողությունն ու թաղման ծիսակարգը՝ վերածվելով ազգային ինքնության յուրատեսակ դրսևորման:

2000 թվականից ի վեր ամեն տարվա ապրիլի 23-ին Երևանում անց է կացվում ջահերով երթ, որը սկսվում է Ազատության հրապարակում Թուրքիայի դրոշի այրումով և այդ կրակից առաջին ջահը վառելով: Այդ երթերի կազմակերպիչը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության երիտասարդական թևն է, և մասնակիցների մեծ մասը նույնպես երիտասարդներ են: Հնչող կարգախոսները գերազանցապես պահանջատիրական են, երթն ուղղվում է դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ ուղեկցվելով հայրենասիրական երգերի կատարմամբ⁴⁸:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ որպես քաղաքական գործոն

1965-ին՝ Մեծ եղևնի 50-ամյակին, ցեղասպանության հիշողության մեջ ստեղծվեց *նոր դրակ*. կարելի է ասել, որ այն դարձավ համաժողովրդական սեփականություն, դարձավ գործոն Հայության ներսում ու «Հայ դատի» հանձնախմբերի և այլ կառույցների ձևավորմամբ ընտրեց աշխարհին ճանաչելի դառնալու ուղին, նաև հաստատուն տեղ գրավեց հայոց ինքնության մեջ:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին արդեն ոչ թե Մեծ եղևնի, այլ Հայոց ցեղասպանության հիշողությունն է շարունակում մնալ իբրև հայկական ինքնության կարևորագույն դրսևորումներից մեկը: Այդ հիշողությունն այն եզակի գործոններից է, որ միավորում է հայկական տարբեր քաղաքական ուժերը՝ դառնալով ոչ միայն ազգապահպան, այլ նաև ազգաստեղծ գործոն: Հայոց ցեղասպանությունը ճանաչված է

48 Տե՛ս, օրինակ՝ Էլեն Բաբայան, *Վերասպրաճների երթ*, <http://imyerevan.com/hy/society/view/10466>, 21 ապրիլի 2015 թ.: <https://armeniasputnik.am/photo/20170423/7101404/armenia-jaherov-yert.html>, 23 ապրիլի 2017 թ., դիտվել են 04.01.2019:

աշխարհի տասնյակ պետությունների գործադիր և օրենսդիր մարմինների, տարաբնույթ միջազգային կազմակերպությունների կողմից: Ճանաչումների մի զգալի մասը, որպես կանոն, տեղի է ունենում ապրիլի 24-ին կամ դրան մոտ օրերին: Պաշտոնական ճանաչումների թիվն ավելի մեծ կլիներ, եթե այդ գործընթացը կապված չլիներ համաշխարհային քաղաքականության խնդիրների հետ, այսինքն՝ ճանաչման խնդիրը ոչ այնքան գիտական, որքան քաղաքական հարթության մեջ է: Այսպես, տարբեր պետությունների ղեկավարներ ուղղակիորեն և անուղղակիորեն պարբերաբար կոչ են անում Թուրքիային ամերեակելու իր պատմության մութ էջերի հետ, երբեմն էլ՝ միջպետական հարաբերությունների լարվածության հետևախորքին հիշեցնում են Թուրքիային Հայոց ցեղասպանության իրողության գործոնի հնարավոր օգտագործման մասին, այսինքն՝ այն օգտագործում են որպես քաղաքական ճնշման միջոց:

Եթե 1965-ին ստեղծված «Հայ դատի» հանձնախմբերը կուսակցական մարմիններ էին, ապա 2015-ին ընդառաջ ստեղծված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը» միավորում է Հայաստանի և Սփյուռքի տարբեր քաղաքական, աշխարհիկ և հոգևոր ուժերին: Այդ մարմնի կողմից 2015 թ. հունվարի 29-ին ընդունված Հռչակագիրն առաջին հերթին կոչված է աշխարհին ցույց տալու Հայության միակամությունը, միասնությունը Հայոց ցեղասպանության խնդիրների բարձրացման և լուծման ուղղությամբ առաջ շարժվելու հարցում⁴⁹: Համահայկական՝ պետական կառույցների կամ միջազգային հասարակական կազմակերպությունների մակարդակով ձեռնարկվում են քայլեր Ցեղասպանության հետևանքների վերացման գործն իրավական հարթություն տեղափոխելու ուղղությամբ⁵⁰: Այս ամենը նույնպես նոր որակի դրսևորումներ են: Օրինակներից մեկն էլ «Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման հայ քաղաքական կուսակցություններու միացեալ մարմինի» ստեղծումն է, որի կարգախոսն է. «Ապրիլ 24-ը օրն է անարդարութեան եւ իրաւազրկման դէմ պայքարի, օրն է իրաւունքի եւ հատուցման պահանջի»⁵¹:

Հայաստանը ձեռնարկում է որոշակի քայլեր ցեղասպանությունների դեմ պայքարի հարցում միջազգային հարթակ դուրս գալու ուղղությամբ: Այսպես, Երևանում 2015 և 2016 թթ. ապրիլի 23-ին անցկացվեցին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» առաջին և երկրորդ գլոբալ ֆորումները: Հայաստանի առաջարկով ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 28-րդ նստաշրջանում 2015 թ. մարտին կոնսենսու-

49 <http://www.president.am/en/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>, դիտվել է 04.01.2019:

50 Հարցի քննարկումը տե՛ս, օրինակ՝ Alfred de Zayas, Jermaine O. McCalpin, Ara Papian, Henry C. Theriault, *Resolution with Justice. Reparations for the Armenian Genocide. The Report of the Armenian Genocide Reparations Study Group*, March 2015, <http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2015/03/20150331-ArmenianGenocideReparations-CompleteBooklet-FINAL.pdf>; Harutyun Marutyan, “Boundaries/Borders of the Armenian Claims and Possibilities of Inter National Dialogue,” in *141 Days in Action. January 19th Initiative, 048-058* (Yerevan, United in Rights, 2017), 048-058, https://www.academia.edu/34036583/Harutyun_Marutyan-Boundaries-Borders_of_the_Armenian_Claims_and_possibilities_of_Inter_National_Dialogue-2017-Engl.pdf

51 Տե՛ս «Զարթոսք», «Ազդակ», «Արարատ» օրաթերթերի՝ 2015 թ. ապրիլի 24-ի միացյալ համարը:

սով ընդունվել է Հայաստանի նախաձեռնած Ցեղասպանության կանխարգելման բանաձևը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2015 թ. սեպտեմբերի 11-ին ընդունեց բանաձև, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր⁵²:

2015 թ. մարտին պաշտոնապես մեկնարկեց «Ավրորա» համաշխարհային մարդասիրական նախաձեռնությունը՝ համանուն մրցանակի տրամադրմամբ: Այդ մրցանակի հիմքում Հայոց ցեղասպանության տարիների խիզախության և գոյապայքարի ոգեշնչող պատմություններն են:

Մեծ եղեռնից 100 տարի անց՝ 2015 թվականի ապրիլի 23-ին, Հայ առաքելական Սուրբ եկեղեցու եպիսկոպոսաց դասի որոշմամբ ՆՍՕՏՏ Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի կոնդակով սրբադասվեցին Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած բոլոր նահատակները՝ ավելի քան մեկուկես միլիոն մարդ: Հայտարարվեց, որ «Մեր սուրբ նահատակների հիշատակն այլևս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն»⁵³:

Հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ձեռնարկների ու միջոցառումների մի զգալի մասն ուղղված էր աշխարհին և Թուրքիային: Սա օրինաչափ էր, և ակնկալվում էր, որ այդպես էլ պետք է լինի: Սակայն Ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է, ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Դրանցից մեկը վերաբերում է հիշատակի օրվա խորհրդին⁵⁴:

52 Բնութագրական է, որ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ գլոբալ ֆորումը անցկացվեց Երևանում 2018 թ. դեկտեմբերի 9-11-ը:

53 Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը՝ որպես մշակութային երևույթ», *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ*, 1: *Հայ ժողովրդական մշակույթ*, XVII: *Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում*, խմբ. Հարություն Մարության, Թամար Հայրապետյան, Սուրեն Հոբոսյան (Երևան, ՀԱԻ հրատ., 2018), 54-64: Հոդվածում առաջ է քաշվում այն տեսակետը, որ սրբադասման պարագայում փաստորեն շեշտադրվում է կրոնական գործոնը, և այդ կերպ երևույթը մասնավորեցնելով՝ նվազեցվում է ազգային, էթնիկական գործոնը, նաև՝ Ցեղասպանության քաղաքական արժեքը: Ցեղասպանությունը փաստորեն հավասարեցվում է «կրոնասպանության», մինչդեռ այն շատ ավելի ընդգրկուն երևույթ է:

54 Առաջարկությունների փաթեթին առաջին անգամ բարձրաձայնվել է 2013 թ. մարտին-ապրիլին, առանձին հրապարակման ձևով լույս է տեսել 2014 թ.: Տե՛ս Յարութին Մարութեան, Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամեակի նշմանն ընդառաջ, *Ազգայն սայրիլեան բացառիկ* 2014, 17-24: Տե՛ս նաև Հարություն Մարության, Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը, *Ցեղասպանագիտական հանդես* 3(1-2) (2015) [«Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը. Ցեղասպանություն, գաղթականներ և մարդասիրական օգնություն» միջազգային գիտաժողովի նյութեր. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2014 թ. ապրիլի 21-22], 76-80:

Հայոց ցեղասպանությանն առնչվող ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեշտադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումը», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը, մեր համոզմամբ, ուզում ենք դա թե ոչ, բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի գոյատևմանը նպաստելուն⁵⁵:

Մինչդեռ Հայոց ցեղասպանության ու մասնավորապես Առաջին աշխարհամարտի տարիներին առկա էին նաև այլ իրողություններ: Պատերազմի սկզբից ի վեր Արևմտյան և Կովկասյան ճակատներում կռվող հայազգի զինվորների թիվը կազմում էր մոտ 300 հազ. մարդ: Ձևավորվեցին յոթ հայկական կամավորական ջոկատներ՝ իրենց կազմում ունենալով վեց հազար հոգի: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ստեղծվեց հայերից բաղկացած Արևելյան լեգեոնը (ավելի քան հինգ հազար զինվոր), որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոն:

Հայոց ցեղասպանության տարիներն Օսմանյան կայսրությունում նշանավորվեցին նաև հայերի մի շարք ինքնապաշտպանական կռիվներով: Նախ՝ նշենք քաղաքներն ու խոշոր բնակավայրերը՝ Շատախ/Թաղ (1915 թ. ապրիլի 1-մայիսի 14), Վան (1915 թ. ապրիլի 7 – մայիսի 3), Շապին-Գարահիսար (1915 թ. հունիսի 2-29), Մուշ (1915 թ. հունիսի 26-29), Ֆընտըճագ (հուլիսի 6 – 26/օգոստոսի 3), Ուրֆա (1915 թ. սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 23), Հաճըն (1920 թ. ապրիլի 1 – հոկտեմբերի 15), Այնթապ (1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվարի 8): Գավառներից՝ Գավաշ (Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 3 – մայիսի 11, Փեսանդաշտ (Շատախի գավառ, Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 14 – մայիսի 10, Յոզղատ գավառի (Անկարայի նահանգ) հայկական գյուղեր՝ 1915-1917 թթ., Սասուն՝ 1915 թ. ապրիլ – օգոստոս, Մուսա լեռ (1915 թ. օգոստոսի 7 – սեպտեմբերի 12), Խնուս գավառի հայկական գյուղեր (1915 թ. մայիս), Խոտորջուրի գավառ (1918 թ. հունվարի 20 – մայիս)⁵⁶:

Վերոբերյալից հետևում է, որ որոշ վայրերում հայերը դիմադրել են շատ կարճ, այլ տեղերում՝ շաբաթներ և ամիսներ շարունակ, կազմակերպված ու չկազմակերպված, զինված ու շատ քիչ զենք-զինամթերքով: Երևույթը շատ բազմադեմ է, գնահատականները՝ տարբեր, սակայն հստակ է մեկ բան. հայ քաղաքացիական բնակչությունը ոչ քիչ դեպքերում հենց այնպես չի կոտորվել, չի «մորթվել ոչխարների նման», ինչպես երբեմն հնչում է հարցից անտեղյակ, առավելապես ոչ մասնագիտական շրջանակներում, տարբեր խավերի ներկայացուցիչների առօրյա խոսքուզուրուցում: «Ոչխարի նման մորթվող ժողովուրդը» չէր կարող 1918 թ. մայիսին՝ դեռևս Առաջին համաշխարհ-

55 Անդրադարձ երևույթի պատճառներին տե՛ս Մարության, *Հայ ինքնության պարկերագրությունը*, 63-66, 70-72:

56 Ինքնապաշտպանությունների մասին ընդհանրացնող բնույթի աշխատություններից տե՛ս Ռուբեն Սահակյան, *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* (Երևան, «Գիտություն», 2005): Նույնի՝ *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* (Երևան, «Հայ Դատ» հիմնադրամ հրատ., 2010): Էդիկ Մինասյան, Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ., *Հայկական բանակ* 1-2 (2015), 88-134: Հարություն Մարության, «Ապրիլի 24-ի վերաիմաստավորումը», 9 օգոստոսի 2015 թ., <http://boon.am/harutyun-marutyun/>, դիտվել է 04.01.2019:

հային պատերազմը չավարտված, պետականության բացակայության պայմաններում, բռունցքվել և հաղթական ինքնապաշտպանական ճակատամարտ մղել Մարդարապատում և Ապարանում, դիմակայել Դարաքիլիսայում՝ այդ կերպ արևելահայությանը փրկելով սպասվող ցեղասպանությունից:

Սակայն հայկական իրականության մեջ արդեն շուրջ մեկ դար պաշտոնական թեանապաշտոն նշվում է «Հայոց ցեղասպանության զոհերի» հիշատակը: Տասնամյակներ շարունակ հենց միայն նմա՛ն շեշտադրումն իր հետևից բերում է նաև թերարժեքության բարդությունների դրսևորումներ հատկապես երիտասարդության մեջ, հնչում են կարծիքներ ցեղասպանության հիշողությունը որպես բեռ ընկալելու մասին, երբեմն էլ որոնվում են քայլեր՝ ուղղված դրանից «ազատվելուն»:

Անցել է ավելի քան հարյուր տարի: Ունենք Ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական կռիվների իրողությունը, ունենք շուրջ երեսնամյա ազգային պետականություն, արցախյան հաղթանակների գործոնը: Կարծում եմ՝ վաղուց ժամանակն է վերաիմաստավորելու հիշողության օրվա խորհուրդը, ձևափոխելու այն, իրականացնելու առնվազն շեշտադրումների փոփոխություն և շրջանառության մեջ դնելու ապրիլի 24-ի այլ բանաձևում. «Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակի օր»⁵⁷:

57 Առաջարկվող ձևակերպումը ենթակա է խմբագրման: Տարբերակներից մեկը կարող է լինել հետևյալը. «Հայոց ցեղասպանության հիշատակի օր. զոհեր, դիմադրողներ, վերապրողներ»:

Harutyun T. Marutyan
Doctor of Sciences (History)

FORMATION, DEVELOPMENT AND CURRENT STATE OF THE ARMENIAN GENOCIDE VICTIMS REMEMBRANCE DAY (PART 2)

SUMMARY

Key words: Armenian Genocide, Armenian Genocide Victims Remembrance Day, Armenian Genocide Victims Memorial, April 24.

On April 24, 1965, Armenians both in the Soviet Armenia and Diaspora commemorated the 50th anniversary of *Mets Yeghern*. In the Soviet Armenia this became possible not only due to the changes within the wide circles of the society after the Khrushchev Thaw but also because of the political will of the Armenian authorities, namely, Yakov Zarobyan, the First Secretary of the Armenian Communist Party. The decision of the Central Committee of the Communist Party of the Soviet Union was preceded by a long sequence of preparatory work, among which was a letter addressed to the authorities of Moscow in December 1964. Thanks to some ideological statements there, the Armenian Genocide has been moved from the level of a solely Armenian tragedy to the level of the world history.

The commemoration of the 50th anniversary of *Mets Yeghern* took place on two levels: people and state/party. The mass demonstration, peoples' march, the distribution of leaflets and intrusion to the Opera building were the sure indicators of a national outbreak. Thanks to a position of the Armenian authorities no mass persecution against the participants was followed. The commemoration of April 24, 1965 in Yerevan broke the wall of official silence and revealed the truth about one of the greatest tragedies of the 20th century to the wide public. It gave rise to scholarly researches, publication of books and archival records relating to the events of 1915 and resulted in the inclusion of the 1915 Genocide into the textbooks. Finally, it was a unique case when the authorities and people were fighting for the same cause even though from the opposite ends. They fought and reached their goal. One of the evidences of this fight was the construction of the Memorial during 2,5 years, which immediately took its place among the symbols of the Armenian identity. It has been 50 years since that people are organizing annual April 24th marches to the Memorial.

On April 24-25, 1965 in different parts of Diaspora Remembrance Day of the Victims of *Mets Yeghern* was solemnly commemorated. It can be stated, that the solemn commemoration of April 24, 1965 in different communities of the Armenian Diaspora displayed the qualitative transition from the culture of mourning to another level of commemoration ceremonies. Particularly, the idea that the perpetrators of the Armenian Genocide are finally getting/should get their worthy punishment/ assessment was present.

On the eve of April 24, many memorials are being built in different corners of the world. On April 24, 1975, for the first time the authorities of the Soviet Armenia officially paid tribute to the memory of *Mets Yeghern* victims by visiting the Genocide Memorial. At 7pm a Moment of Silence in the memory of the Genocide victims was announced on the television and radio. On November 22, 1988, the Supreme Council of the Armenian SSR adopted the law on the “Condemnation of the Armenian Genocide of 1915 in the Ottoman Turkey” and recognized April 24 the “Remembrance Day of the Victims of the Armenian Genocide.”

During the Karabakh Movement or the Armenian Revolution (February 20, 1988 – August 23, 1990) the change in the essence of the Remembrance Day has occurred: it became the day of presenting political demands on different issues of social life. The article details the commemoration of the Remembrance Day of the Genocide victims in the context of the commemorative rituals of the Armenian people.

In 1965, during the commemoration of the 50th anniversary of *Mets Yeghern*, the memory of Genocide attained a new status. It can be stated that it became a pan-national “property,” a feature for the whole Armenians. The Genocide memory became a constituent part of the Armenian identity and through the efforts of *Hay Dat* and other similar organizations became known to the world. On the centennial of the Armenian Genocide not the memory of *Mets Yeghern* but the memory of Armenian Genocide still remains as one of the most important manifestations of the Armenian identity. This memory is one of the unique elements which unite different political forces and started influencing not only the preservation but also the formation of a nation. Executive and legislative bodies of more than twenty-five countries as well as various international organizations have now recognized the Armenian Genocide. The vast majority of recognitions as a rule happen on or around April 24. More than hundred years have passed since the Armenian Genocide. It is high time to reconsider the concealed meaning of the Remembrance Day, transform it, and at least change its emphasis by putting another wording for April 24 into circulation: “*Remembrance Day of the Victims of the Armenian Genocide and the Heroes of the Self-defense Battles.*”

Արտյոն Մարտյան
доктор исторических наук

ФОРМИРОВАНИЕ И ТРАНСФОРМАЦИЯ ДНЯ ПАМЯТИ ЖЕРТВ ГЕНОЦИДА АРМЯН (ЧАСТЬ 2)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, день памяти жертв геноцида, мемориал жертв геноцида, 24 апреля.

24 апреля 1965 г. армянский народ в Советской Армении и во всем мире отметил 50-летие *Մեզ, Եզերն* / Геноцида армян. Это событие было обусловлено не только изменениями, которые произошли в широких слоях общества благодаря “хрущевской оттепели”, но и политической воле руководства Армении, в частности, первого секретаря ЦК КП Армении Якова Заробяна. Разрешению, полученному от Политбюро ЦК КПСС, предшествовала длительная подготовительная работа: в частности, в декабре 1964 г. высшему руководству страны в Москву было направлено письмо. Рядом идеологических положений, изложенных в нем, Геноцид армян выносился за рамки сугубо армянской трагедии и ставился в плоскость всемирной истории.

Մեզ, Եզերն отмечался на двух уровнях – народном и государственно-партийном. Шествие, митинг, в которых принимали участие десятки тысяч людей, распространение листовок, вторжение людей в зал Оперы – все это неоспоримые показатели народного протеста. Благодаря позиции руководства Армении, на нарушителей порядка не было оказано массового силового давления. События 24 апреля 1965 г. в Ереване разрушили официальное молчание и донесли до широких слоев общества историю одной из самых больших трагедий 20-го века, начались научные исследования, стали публиковаться книги, документы, касающиеся событий 1915 г., факт геноцида наконец занял свое место в учебниках истории армянского народа. Кроме того, это был один из тех единичных случаев, когда власть и народ с разных позиций боролись за одно общее дело и достигли своей цели. Свидетельством этого был также тот факт, что почти за два с половиной года был построен Мемориал жертв геноцида, который сразу нашел свое место в ряду символов армянской идентичности. Начиная с 1967 г., уже более 50-ти лет, 24 апреля происходит ежегодное шествие людей к мемориалу.

24-25 апреля 1965 г. во многих армянских общинах Диаспоры были торжественно отмечены днями памяти жертв *Մեզ, Եզերն*. Можно сказать, что произошел качественный переход от культуры траурных мероприятий к иному уровню поминания. В частности, была выдвинута мысль, что преступления, совершенные по отношению к армянам, получают/должны получить достойное наказание/оценку.

В разных городах мира к 24 апреля сооружаются многочисленные памятники. Руководство Советской Армении 24 апреля 1975 года впервые официально почтило память жертв Геноцида, посетив Мемориал жертвам Геноцида. В 7 часов вечера в республике была объявлена минута молчания. 22 ноября 1988 г., спустя более семи десятилетий со времени Геноцида, Верховный Совет Армянской ССР принял закон “Об осуждении Геноцида армян 1915 года в Османской империи”.

Во время Карабахского движения или Армянской революции (20 февраля 1988 – 23 августа 1990) происходит трансформация содержания дня памяти: оно становится более широким, выражающим политические требования, касающиеся разных вопросов общественной жизни. В статье подробно рассматривается отмечание дня памяти жертв Геноцида в контексте армянских ритуалов памяти.

В 1965 г., к 50-летию *Мец Езерна*, в памяти о Геноциде появилось *новое качество*: она стала общенародным достоянием, фактором формирования комиссий “Ай дата” и других структур для достижения признания со стороны различных стран мира, а также заняла прочное место в армянской идентичности. И в 100-летие Геноцида армян память уже не о *Мец Езерне*, а о Геноциде армян продолжает оставаться одним из важнейших проявлений армянской идентичности. Это один из тех единичных факторов, который объединяет различные армянские политические силы и играет важную роль не только в сохранении, но и в формировании новых диаспоральных наций. Геноцид армян признали исполнительные и законодательные органы более двадцати пяти государств, различные международные организации. Это, как правило, происходит или 24 апреля или в близкие к нему дни.

Прошло более ста лет со времени Геноцида. Давно наступило время переосмыслить значение дня памяти, по крайней мере, ввести в оборот иную формулировку дня 24 апреля: “*День памяти жертв Геноцида армян и героев самооборонительных сражений*”.

REFERENCES

Armen, Mkrtich'. «Ձեկուցագիր Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին» [Report to the Central Committee of the Communist Party of Armenia], *Grakan t'ert'* (Yerevan), September 6, 1991 (25/2428);

«Եղևնի զոհերի հուշարձանի մոտ» [At the Monument to the Victims of Yeghern], *Patmbanasirakan handes* 2 (1975): 79-80;

Babalyan, Elen. *Վերապրածների երթ* [March of Survivors], <http://imyerevan.com/hy/society/view/10466>, April 21, 2015; <https://armeniasputnik.am/photo/20170423/7101404/armenia-jaherov-yert.html>, April 23, 2017;

Boryan, Nvard. «Ինչպես է նշվել Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և ինչպես հնարավոր դարձավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը» [How was

Commemorated the 50th Anniversary of the Armenian Genocide and How became Possible the Construction of the Tsitsernakaberd Memorial], *Haykakan ashkharh*, April 24, 2007, <http://www.armworld.am/detail.php?paperid=1493&pageid=50725⟨>

«Վեհափառի խօսքը մարգաւանի յուշատօնին» [Catholicos Speech at the Commemorations in the Stadium], *Azduk* (Beirut), April 27, 1965 (44/10089);

«Հանդիսություններ Մայր Աթոռում սպրիլյան եղենի հիսնամյակի առթիվ» [Festivities in the Holy See on the Occasion of 50th Anniversary of the April Yeghern], *Ejmiadzin: 1915-1965*, 5-7 (1965): 106-110;

Harut'yunyan, Avag (ed. and compiler). *Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և կոթերի ժողովածու)* [The 50th Anniversary of the Armenian Genocide and Soviet Armenia (Collection of Documents and Materials)], Yerevan: Gitut'yun, 2005;

Harut'yunyan, Avag. *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic], Yerevan: Noravanq, 2015;

Harut'yunyan, Varazdat. «Ինչպես ընտրվեց Եղենի զոհերի հուշահամալիրի նախագիծը» [How was Chosen the Plan for the Yeghern Victims Memorial], *Azg* (Yerevan), May 27, 2006, 6;

Haykazyan, Vardan. «Ցեղասպանության տարեկիցի նշումը Մոսկվայում» [Commemoration of the 50th Anniversary of Genocide in Moscow] in *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic], Yerevan: Noravanq, 2015, 140-153;

«Հաղորդագրություն» [Information], *Grakan t'ert'* (Yerevan), March 4, 1988 (10/2378);

Qalashyan, Sashur. «Ինչպես ստեղծվեց հուշահամալիրը» [How the Memorial was Created], *Chartarapetut'yun, shinararut'yun* 4-5 (2015): 14-21;

Kaputikyan, Silva. *Էջեր փակ գրոցներից* [Pages from Closed Shelves]. Yerevan: Apollon, 1997;

Lachikyan, Levon. *Ճարտարապետի կյանքի գործը* [The Matter of Life of the Architect], April 24, 2015, <https://www.civilnet.am/news/2014/06/24/%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8/233151;>

Marut'yan, Harut'yun. «Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով)» [The Monument as Cemetery (on the Example of Armenian Genocide Memorial)], *Hay zhoghovrdakan mshakuyt' XIII. Nyu'ter hanrapetakan gitakan nstashrjani*, edited by Derenik Vardumyan, Sargis Harut'yunyan, Suren Hobosyan. Yerevan: Gitutyun, 2006, 172-180;

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Marut'yan, Harut'yun. «Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համաստեքսում» [The Genocide Memorial in the Context of the Commemorative Rituals of the Armenian People], *Chartarapetut' yun, shinararut' yun* 4 (2009): 8-12;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of Armenian Genocide and Jewish Holocaust Memory], *Patma-banasirakan handes* 2 (2011): 24-46;

Marut'yan, Harut'yun. «Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը» [The Centenary Old Genocide Memory and the Process of Formation of the “American-Armenian nationality”], *Haykakan inqnu't' yan khndirnerë 21-rd darum: gitazhoghovi nyu't'er*, ed. by Aram Simonyan, Pol Haydostian, Andranik Dakessian, Yuri Avetisyan. Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 2013, 43-54;

Marut'yan, Harut'yun. «Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները» [Main Peculiarities of the Karabagh Movement or the Armenian Revolution (1988-1990)] in Hambardzum Galstyan, Chugharkvats namakner, compiled by Harutyun Marutyun. Yerevan: Gasprint, 2013: 9-17;

Marut'yan, Harut'yun. «Ցեղասպանության զոհի բարդոյթի հաղթահարումը Ղարաբաղյան շարժման տարիներին» [The Overcoming of Genocide Victim Image in the Years of the Karabagh Movement], *Vem Hamahaykakan handes* 1 (2013): 154-164;

Marut'yan, Harut'yun. «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)» [Museum and Monument (Comparative Analysis of Armenian and Jewish Experience)], *Patmabanasirakan Handes* 3 (2014): 58-79;

Marut'yan, Harut'yun. «Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամեակի նշմանն ընդառաջ» [Suggestions towards the 100th Commemoration of the Armenian Genocide], *Azduk aprilyan bats'arik*, 2014, 17-24;

Marut'yan, Harut'yun. «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը» [The Phenomenon of Self-defense during the Years of the Armenian Genocide and the Problem of Reformulation of the Memory Day], *Ts'eghaspanagitakan handes* 3(1-2) (2015): 76-80 [“The Caucasian Frontline of the First World War: Genocide, Refugees and Humanitarian Assistance.” Proceedings of the International Conference, The Armenian Genocide Museum-Institute, Yerevan, April 21-22, 2014];

Marut'yan, Harut'yun. «Ապրիլի 24-ի վերաիմաստավորումը» [The Reinterpretation of April 24], August 9, 2015, <http://boon.am/harutyun-marutyun/>

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը՝ որպես մշակութային երևույթ» [Canonization of the Martyrs of the Armenian Genocide as a Cultural Event], *Hnagitut' yan yev azgagrut' yan instituti ashkhatut' yunner*, 1. *Hay zhoghovrdakan mshakuyt', XVII. Avandakanë yev ardiakanë hayots' mshakuyt'um*, edited by Harut'yan Marut'yan, T'amar Hayrapetyan, Suren Hobosyan. Yerevan: HAI, 2018, 54-64;

Ցալի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Minasyan, Edik. «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ.» [The Self Defense Battles of Armenians in 1915], *Haykakan banak* 1-2 (2015): 88-134;

ՀՀ պաշտպանության նախարարություն. պատմական ակնարկ [Ministry of Defence of Republic of Armenia], <http://www.mil.am/hy/68/71/288>;

Petrosyan, Armen. «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն» [The Armenian Genocide as a Nationborning], *Hayatsq Yerevanits': Hayagitakan. Razmavarakan yev azgayin hetazotut'yunneri haykakan kentron*. Vol. 3, no. 4 (1997): 43-54;

«Մեծ եղեռնի նահատակների աճյուններ Դեր-Ջորից» [Remains of the Victims of Mets Yeghern from Der-Zor], *Ejmiadzin: 1915-1965*, 11-12 (1965): 80-81;

Sahakyan, Rouben. *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* [The Genocide of Western Armenians and Self Defense Battles]. Yerevan: Gitut'yun, 2005;

Sahakyan, Rouben. *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* [Self Defense Battles in Western Armenia in 1915 and Armenian Revolutionary Federation]. Yerevan: Hay Dat, 2010;

«Ծիծեռնակաբերդ. Հուշակոթողի մասին միֆերն ու իրական պատմությունները» [Swallows' Fortress: The Myths and Real Stories about the Memorial], April 15, 2015, <https://web.archive.org/web/20151026130642/http://newmag.am/2015/genocide-monument/>;

«Ամենայն Հայոց հայրապետի կողմակը ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ» [The Kontakion of the Catholicos of All Armenians regarding the 50th Anniversary of Mets Yeghern], *Ejmiadzin* 7-9 (1964): 3-5;

«Մեծ Եղեռնի յիսնամյակին. Տոնակատարությունները Երեանի մէջ. Պաշտօնական հասարկություն, եւ ժողովրդական համախմբումներ ու ցոյցեր» [To the 50th Anniversary of the Mets Yeghern: Commemorations in Yerevan, Official Ceremonies, Peoples' Gatherings and Demonstrations] in Karo Georgian, *Amenun taregirqè*, Beirut, 1966;

«Երբ կառուցվում էր Ծիծեռնակաբերդի հուշարձանը. 40 տարի անց վերհիշում են շինարարները. Զրույցը տեղի է ունեցել 2005 թ. ապրիլին, Եղեռնի հուշահամալիրի մոտ» [When the Tsitsernakaberd Monument was Constructed: 40 Years Later the Builders Remember: The Conversation Took Place in April 2005, Near by the Memorial to Yeghern], *Chartarape-tut'yun, shinararut'yun* 4-5 (2015): 22-23;

Virabyan, Amatuni. «Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն» [The Odyssey of the Memorial of Mets Yeghern: the National Monument and Soviet Reality], *Banber Hayastani archivneri* 1 (2008): 292-296;

Zarobyan, Nikita and Grigoryan, Armen. *1965-ի ռուբիկոնը* [Rubikon of 1965], <http://imyerevan.com/hy/society/view/2263>;

Zolyan, Suren. ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խուսանալիղ դիսկուրսի իմաստա-գործարանական վերլուծություն) [American Presidents on the Armenian Genocide (the Semantic and Pragmatic Analysis of the “Evasionist” Discourse)]. Yerevan: Limush, 2015.

Balyan, Karen. Мемориал Егерн [The Eghern Memorial]. Ekaterinburg: Tatlin Press, 2015.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Նարինե Ս. Հակոբյան, միջազգայնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածներ:

Էլ. հասցե՝ hakobyan.narine@genocide-museum.am

Narine S. Hakobyan, international relations specialist, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation, junior researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields - Armenian massacres of 1894-1896.

E-mail: hakobyan.narine@genocide-museum.am

Нарине С. Акопян, специалист по международным отношениям, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян”. Младший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян”.

Область исследований – массовые убийства армян в 1894-1896 годах.

Электронная почта: hakobyan.narine@genocide-museum.am

Սուրեն Ա. Մանուկյան, պատմ. գիտ. թեկն., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Ցեղասպանագիտության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության ոճրագործներ, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ. հասցե՝ manukyan.suren@genocide-museum.am

Suren A. Manukyan, PhD in History, orientalist, Head of the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation, and Head of the Department of Genocide Studies at Institute of Armenian Studies, Yerevan State University.

Research fields – genocide perpetrators studies, comparative genocide studies.

E-mail: manukyan.suren@genocide-museum.am

Сурен А. Манукян, канд. ист. наук, востоковед, заведующий Отдела сравнительного изучения геноцида Фонда “Музей-Институт Геноцида армян,” заведующий Отдела сравнительного геноцидоведения Института арменоведения Ереванского государственного университета.

Область исследований – изучение преступников, виновных в осуществлении геноцида, сравнительное изучение геноцидов.

Электронная почта: manukyan.suren@genocide-museum.am

Ռոբերտ Ա. Սուրիասյան, ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ասպիրանտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության ժամանակ տեղահանությունների պատմություն:

Էլ. հասցե՝ robertsukiasyan@yahoo.com

Robert A. Sukiasyan, MA in Genocide Studies, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – deportation history of the Armenian Genocide.

E-mail: robertsukiasyan@yahoo.com

Роберт А. Сукиасян, геноцидовед, аспирант Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – история депортаций во время Геноцида армян.

Электронная почта: robertsukiasyan@yahoo.com

Ինեսա Գ. Ստեփանյան, միջազգայնագետ/ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքական Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթը մահսուսա) գործունեության համեմատական վերլուծություն, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ հասցե՝ stepanyan.inesa@genocide-museum.am

Inessa G. Stepanyan, international relations specialist/genocide scholar, junior researcher at the Department of the Comparative Genocide Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research field: comparative analysis of the activities of the Turkish Special Organization (Teşkilât-ı Mahsusa), comparative genocide studies.

E-mail: stepanyan.inesa@genocide-museum.am

Инесса Г. Степанян, специалист по международным отношениям/геноцидовед, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян,” младший научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований - сравнительный анализ деятельности турецкой специальной организации (Тешкилят-и махсуса), сравнительное изучение геноцидов.

Электронная почта: stepanyan.inesa@genocide-museum.am

Նարեկ Մ. Պողոսյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լենկինի կողմից, Բանգլադեշի ցեղասպանություն, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ հասցե՝ poghosyan92@bk.ru

Narek M. Poghosyan, PhD in History, researcher at the Comparative Genocide Studies Department at the Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research field: the study of the Armenian Genocide by Raphael Lemkin, Bangladesh Genocide, Comparative genocide studies.

E-mail: poghosyan92@bk.ru

Нарек М. Погосян, канд. ист. наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, геноцид в Бангладеше, сравнительное изучение геноцидов.

Электронная почта: poghosyan92@bk.ru

Հարություն Տ. Մարության, պատմ. գիտ. դոկտոր, ազգագրագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության հիշողություն, ազգային ինքնություն, կոլեկտիվ և պատմական հիշողություն, Ղարաբաղյան շարժում, պատկերագրություն, հայոց ենթաէթնիկ խմբեր, հայ ավանդական մշակույթ:

Էլ. հասցե՝ admidirector@genocide-museum.am

Harutyun T. Marutyan, Doctor of Sciences (History), social/cultural anthropologist, Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation, Head researcher at the Institute of Archaeology and Ethnography of National Academy of Sciences of Armenia.

Research fields – Armenian Genocide memory, national identity, collective and historical memory, Karabakh movement, iconography, sub-ethnic groups of Armenians, Armenian traditional culture.

E-mail: admidirector@genocide-museum.am

Арутюн Т. Марутян, доктор ист. наук, этнограф, директор Фонда «Музей-Институт Геноцида армян», главный научный сотрудник Института археологии и этнографии Национальной Академии наук Армении.

Область исследований – память и национальная идентичность, коллективная и историческая память, Карабахское движение, иконография, субэтнические группы армян, армянская традиционная культура.

Электронная почта: admidirector@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարելոհճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվագն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ու՜մ պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ *Ցեղասպանագիտական հանդեսի* տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը, պաշտոնը և աշխատավայրը, էլ. փոստի հասցեն:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Աստիճանային պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի ազգանուն, անուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝
Antonian, Aram. Մեծ ոճիրը [The Great Crime]. Boston: Pahak, 1921

Հղումներ

10. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition-ի*:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:
2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.
3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146. Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և

գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը:
Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ (ebook)

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle. Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը:
Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը:
Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.

2. Վերժինե Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու* (Երևան, ԵԳՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность”. От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и*

выступления участников V Международной научно-практической конференции (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներնրերի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով(երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:
Օր.՝

1. Dadrian, “Ottoman Archives,” 471.
2. Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:
3. Манукян, “Наказание за верность,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier):
Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
2. Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը:
Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.
2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.
6. Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”; որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով: Իսկ էջե նման կրկնություններով հատվածները բուն տեքստից հանել ու վերջում դնել, որպես ընդհանրացնող ձևակերպում:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեգեր և ատենախոսություններ

Թեգերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեգի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “*King Lear* and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «*Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆանել Լեմկինի կողմից*» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեգի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը: Օր.՝

1. Rutz, “*King Lear*,” 158.
2. Պողոսյան, «*Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը*», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը (երկար վերնագրերի դեպքում կրճատ):
Օր.

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

11. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային սամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան սամակ հեղինակին, 1 օգոստոս 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային սամակ հեղինակին, 15 մարտ 2017 թ.:

12. Ամսաթվերի գրեկան

1. Իսոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովածնով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ *3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:*
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ *25.01.2019:*
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ *31 հունվարի 2019 թ.:* Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

13. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ë ë
Թ թ - T' t'
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Ծ ծ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ յ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ ց - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Գ ք - Q q
Եվ և Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեր, թուղթը՝ օֆսեր,
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է

